Bzhdhkakanut'iwn bazhaneal yerkus harots. Hator 1. I veray azgi azgi khot'ut'eants ew notsin patchaṙats, nshanats ew khnamatarutèants / R.M. Tēr Petrosean.

Contributors

Tēr-Petrosean, Rēstēn Mikʿayēl.

Publication/Creation

Venice : Saint Lazar, 1822.

Persistent URL

https://wellcomecollection.org/works/tz5kmwh4

License and attribution

This work has been identified as being free of known restrictions under copyright law, including all related and neighbouring rights and is being made available under the Creative Commons, Public Domain Mark.

You can copy, modify, distribute and perform the work, even for commercial purposes, without asking permission.

Wellcome Collection
183 Euston Road
London NW1 2BE UK
T +44 (0)20 7611 8722
E library@wellcomecollection.org
https://wellcomecollection.org





509111/B

A 225 565/563

TER-PETROSEAN, R.M.

Brskakanutiwn

Vol I (only)

Venice 1822

Digitized by the Internet Archive
in 2018 with funding from
Wellcome Library

https://archive.org/details/b29335346

TĒR PETROSEAN (Rēstēn Mik'ayēl)

[Bzhshkakanut'iwn bazhaneal yerkus hators. Hator I. I veray azgi azgi khot'ut'eants ew notsin patcharats,nshanats ew khnamatarut'eants]

On medicine divided into two volumes. Vol.I, On the various types of illnesses, and their causes,signs and cures. Venice : Saint Lazar, 1822. 400 p.

NB. The second volume contained the Dictionary of Medical terms. This is the first edition. The book was reprinted in 1832(see Nersessian,No. 469/470.

The seal on the title page belongs to : Matenadaran Antonean Miabanut'ean [Library of the Antonean Congregation]

P:T:Q.

P'okhadreal i Hromay....Kostandnupolsoy 1871 [Transfered to Roman ... in Constantinople in 1871]

The book was transfered from the Armenian Catholic Antonian Congregation to the Roman Catholic ... in Constantinople in 1871

ԲԺՇԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱԺԱՆԵԱԼ ՑԵՐԿՈՒՍ ՀԱՏՈՐՍ

Ընդհանրական աշխատասիրութեամբ Պարոն Մուքաձէլի Թէոտէն Բժշկի Նգիպտացւոյն Բդեշխին, և յատուկ ծախիւք Հեղինակին տպագրեալ։

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Ի վերայ աղգի աղգի խօթութեանց և նոցին պատճառաց, նշանաց և խնամատարութեանց։

Ի ՎԻԵՆՆԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1822

WELLCOME
LIBRARY
INSTITUTE

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ

Ամենիմաստ ինքնագոյ արարչապետ՝ տիեզերասփիւռ գոյիցս եղելութեց, ըխորախորհուրդ և անշննական իւրոյին իմաստութեն՝ գերահրաշ ցուցեալ սխրա. լի և զխնամողօրէն զիւրն տեսչութիւն, քառեակ վայելչութիւ եղանակօք պճնա. զարդեալ ճոխացոյց զայս հողանիւթեայ օթարանիս կազմուած, և զամ ըս ամէ հո. լովումն ամանակաց ընթացից։ Սկզբնս. ծագ տածողութեամբ զգարնանագեղ զուարճութի յառոյգ բարգաւաճ սնունդ դալարեցուցեալ, ընդ տնկասաղարթ ա. ճելութեն՝ զամառնային զյորդեռանդն տապոյ զջերմութի՝ վարսաւորացն յուռ. թի հովանեօք միշտ զովացուցանելով, խնամ կալաւ պտղաւէտ արգասեօք 'ի բեղնաւորութիւն մրգաց և գեղագեղ ծաղկանց, բուսոց, և արմտեաց շահե. կանաց՝ զաշնանայնոյ բերան բարեբերս ատոքացուցանել, որով և զյաջորդական հանդերձանաց խնամեալ զպէտս՝ դադար

հանգստեան 'ի ցրտասառոյցն պահու 'ի վերայ ածել երկրածնացս։ Իսկ բոլորիցն դերաղանց՝ զբանականս կենդանի զմարդ, որ բանականութենն մասամբ 'ի հանգուն-նատիպն պատկեր գոյացեալ հաստչին, 'ի քառեակ տարերաց սքանչելահրաշ ինն պայմանաւ արարչագործեալ, և միանգամայն քառեակ խառնուածոցն բաղադրութեամբ 'ի կենսական սքանչելարուեստ զօրութի հաստատեալ, բիւրազգի կատարելութեաբ զարդու նրբաշնին մակացուեց զգեստաւորեալ պճնազարդեաց, և 'ի մի բան բովանդակել ախորժեալ, * Զոքը մի քան զհրեշտակս խոնարհ արար ॥ ըստ դաւթականն ձայնի։

Եւ արդ՝ ո՞ ոք՝ թէև 'ի տիմարագունից անտի բնութենն սակի անգէտ եղելոց՝ զայսպիսօրէն զմիօրինակ հետևողութի տեսեալ զեղանակաց, և զսքանչելահրաշ արարչագործութի բացատիայլ նկատեալ զարարչապետին, ըստ գիւտ իշխեսցէ դնել ճարտարարուեստ կազմութես, անպիտան վարկուցեալ զյոքնապիսի զպիտեան զայս այլազանութի եղելոցս։ Մէ՛ զոք յիրաւի է կարծել բնաւ։ Զ.ին զի իմացականս բնութիւն սքանչելարուեստ պայմանաւ յօրինեալ, 'ի նշմարել երբէք ուրեք զիւրն վերնական կիրս ըստ մասին կենսականի, եթէ՛ 'ի սակս այլազան յարատիոփոխ շարժման տարերցն,

եթէ խառնուածոցն անբարեխառնութիւն
աղագաւ, և կամ եթէ գործարանացն
խանգարման պատահելով, ինքնին յաջո-
ղակ է արդարև անդստին 'ի ոնապարդև
ձրից բանականութիւնն մասին՝ նրբաշնին
խուզմամբ հետազօտեալ զվրիպակս բը-
նութեան բացայայտ ճանաչել, և միան-
գամայն ըստ տարազու մշակականն ար-
հեստի՝ զառյիւրեանց զանբեր, կամ ըզ-
դաժանաբոյս եկամուտս բնութեանն 'ի
բաց սրբեալ, և զբնաւորականսն դար-
մանեալ, և արուեստիւ խնամարկեալ,
զորէն քաջիմաստ ուղղչի՝ սեփական կա-
նոնօք կազմ յօրինեալ, անդրէն հաստա-
տեալ 'ի ընիկն իւր պայման։ Եւ ահա գի-
տութի այսօրինակ՝ իբր արարչութեանն
գործակից՝ Բժշկականութիւն առձայնի
յիմաստնոց. որ ըստ պետին բնախօսից
արիստոտէլի, անշուշտ կոչի քոյր փիլիսո-
փայութե, վասն փոփոխակի առ միմեանս
նպաստաւորելոյ սոցա, զորմէ և մեր բան-
քըս են ստանօր։ Խոստովանիմք ապա-
քէն՝ իբր անհնարին ինն գոլ ընդ կոպա-
րաւ և սահմանաւ բովանդակել զայսր
ճարտարարուեստ գիտութե զպիտեա-
նութենն, զգերապատուութենն, և ըզ-
դրուատիցն փաստս իրաւացիս՝ ըստ պարտ-
ուպատշաճ արժանեացն, զայն և եթէ շատ
համարեալ առ տեղեաւս, զի նախնի
բնախօսք և փիլիսոփայք, գրեթէ համ-

օրէն 'ի մի բերան դրուատանօք համ-
բաւեցին զսա, և զուգահաւասար ար-
ժանապատուութիւն գոլ հաստատեցին ը-
փիլիսոփայութեն բնականի։

Այլ սակայն աւաղս աստանօր կար-
դալ յիրաւի է յետին ժամանակի ծնը-
դոցս. յորում ըստ յաձախել մեղաց և
անկարգութեց՝ մինչ դեռ ըստ նմին չա-
փու առաւելեալ տիրեցին 'ի մարդկային
բնութիւնս բիւրազգի ախտք և խօթուիք,
ոչ նոյնպէս փոյթ եղև յետնոցս՝ որպէս
նախնականացն մերոց, 'ի պատուի ունել
զբժշկականութեն կենցաղօգուտ և զկա-
րևոր կրթականութիւն։ Առաւելապէս
նուազեալս յայսմ տեսանեմք զարամեան
մեր համազգիս՝ քան զօտարածինս հա-
մայն, առ որս գտանին յոլովակերպ մա-
տեանք, և համալսարանք յարքունուստ
կուռուցեալք 'ի պէտս ուսանողաց այսր
կարևորագոյն մակացութեն. որ և օր քան
զօր ձոխապաճոյճ հանդիսանայ նորանոր
ճարտարիմաստ հնարիւք՝ յարանց կորո-
վամտաց և քաջաբանից։ Իսկ առ մերազ-
նեայս նուազութի գոլով ջանից և աշ-
խարհաշէն նպաստից, չքաւորութի բա-
ղում գտանի այսր կենցաղօգուտ մակա-
ցութեն, և նմին պատշաճեալ մատենից.
թէպէտև զպատճառսն մանրախոյզ հե-
տազօտութիւն զմտաւ ածեալ, մարթ է
ըստ իրաց ինչ անբասիր կացուցանել

զազգս ասքանագեան. որովհետև քաջայայտ է ամենայն ումեք, եթէ մեծագոյն մասն գրեանց մերոց և իմաստաբուղխ մատենից առանդելոց 'ի մեր նախնեաց չէ՛ 'ի միջի. է՝ զի հրակիզութիւն, և է՝ զի յափշտակութիւն, և կողոպտմամբ թշնամեաց անյայտ լեալ կորեան 'ի ինաս և 'ի մեծ սրտաբեկութիւն ազգիս։ Այլ մեք աստէն թէպէտև քաջ ճանաչեմք զանձինս անբաւականութիւն 'ի ձեռնամուխ լինել յայսպիսի գործ բազմաշխատ և դժուարամատոյց, բայց յաղթեալք 'ի սաստկութենէ սիրոյ ընիկ հայրենեացս, ձեռն 'ի գործ մատչիմք յօժարափոյթ յառաջիկայդ գործողութիւն, եդեալ մեզ կէտ նպատակի անվրէպ յուսով զմեծագոյն շահ և զօգուտ ազգիս հայկազնեան. զորոյ ինչ ինչ 'ի կարևոր գիտելեաց պատշաճ վարկանիմք ծանուցանել սակաւուք ընթերցասիրացդ։

Ա. 'Ի յօրինել մեր զբժշկարանս՝ ընտրելի դատեցաք ճառել նախ զկարևորագոյն և զգլխաւոր ախտից, և ապա զորոց քաջ զփորձ առեալ էաք. այլ միշտ զհամառօտն կալեալ զճանապարհ, զանց արարաք խօսել զբազում ևս ախտից։ Այլ որք միանգամ յօժարափոյթ, և ուշադիր մտօք հրահանգին յանդուլ ընթերցանութի՛ վերոգրեալ ախտից, որք իբր դուռն են հասարակաց առ մնացեալ

ախտս, անշուշտ է ապաքէն՝ զի նոյն իսկ բնութիւն առաջնորդէ նոցա 'ի քաջածանութիւն այլոցն մնացելոց։

Բ. Յընթացս բանից ճահոդագոյն վարկաք առնուլ 'ի կիր զգովելի ոչ ոմանց դերահռչակ և կորովամիտ հեղինակաց, ուրոյն ուրոյն բացատրութիւնս ճառել նախ զզիարդն ախտից, ապա զպատճառաց, զնշանաց, զինամատարութեանց, զդեղոց, և զկառավարութեանց նոցին. և այս վասն երկուց պատճառաց։ Առաջին՝ սակս դիւրաւ ըմբռնողութեան մտաց վերծանողացդ զպարագայս հանգամանաց ախտից։ Երկրորդ՝ զի ուշադրութիւն 'ի միտ առեալ զիսկութիւն նշանաց և պատճառաց, և անվրէպ դատողութիւն բացորոշեալ, չգործիցեն ինչ վրիպակս 'ի դարմանատրութեան ախտիցն. քանզի յոլովք յախտաժետաց վայրապար զրաւին 'ի կենաց՝ սակս պակասութեան այսորիկ կարևորագոյն ուշադրութեան, և բացորոշ դատողութեան։

Գ. Որովհետև դերահռչակ մանկացութիս այս բժշկական, ըստ մեծի մասին հիմնեալ է 'ի քաջածանութիւն իսկական պատճառաց կենսական բնութեան, սմին իրի կարևոր համարեցաք յընթացս գրութեանս զննել փոքր 'ի շատէ և զզիարդն երևելի գործարանացս բնութեան, որպիսի են՝ սիրտն, թոքն, ուղեղն,

լեարդն, փայծաղն ևն. և միանգամայն ձառեցաք ինչ ինչ զեղանակէ քաջ զննութիւն, և նկատման զարկի բազկի, որպէս ունիս տեսանել 'ի հատ. Բ. 'ի բառն Բուլսուս։

Դ. Օ չափ, զքանակութի, զընութի, զներգործութի, և զեղանակ գործածութեան իւրաքանչիւր դեղորէից ամենայն զգուշութիւն, և փորձառութիւն եդաք բացայայտ առաջի, զմտաւ ածեալ մեր, և քաջ զփորձ առեալ, եթէ 'ի վրիպակաց որք գործին յայսոսիկ պարագայս, բազում անգամ և բազում ուրեք յառաջագային բազմապիսի անտեղութիւնք, և՝ ուրեք երբէք մահու արկած փոխանակ բժշկութիւն. սմին իրի մեծի ուշադրութիւն պէտք են յայսմ մասին։

Ե. Ըստ մտաց մեծանուն և քաջահմուտ հեղինակաց՝ 'ի դիպուածս իւրաքանչիւր տեսակաց ախտի, բազում անգամ յաւելմամբ գրգռման՝ պատճառի 'ի բնութեաս չափազանց ուժեղուն, որում յաջորդէ տարապայման թուլութիւն կամ տկարութի ջղաց և բոլոր մարմնոյ. սմին իրի նրբաշնին հետազօտութիւնք նկատել և որոշել արժան է զայսոսիկ պարագայս. զի եթէ տարապայման թուլութին 'ի բնութիւն ախտակրին՝ պատճառեալ ի՞ց յառաւելութէ գրգռմանն, որպէս պատահի յոլով անգամ 'ի չափազանց գործ-

ածութիւն գրգռիչ և զօրացուցիչ դեղոր-
էից, յայնժամ փոյթ ունել արժան է
թուլացուցիչ և զովացուցիչ դեղորէիւք
նուազել զայն, և բարեխառնել. քանզի
բազում անգամ 'ի հարևանցի ուշադրու-
թէ այդորիկ կարևորագոյն և նրբագոյն
պարագայի, բազմապատիկ վրիպակք և
յոդնազան խառնակուէք 'ի վեր երևին։

Ղ. Յօգուտ և 'ի դիւրութի վերծա-
նողաց՝ բազմաժամանակեայ աշխատուէ
և հոգւով չափ վաստակօք գուն գործե-
ցաք 'ի լոյս ընծայել և զբառարան ինն
ըստ կարի Ճոխագոյն անուանց՝ բուսոց,
հանքաց, հեղանիւթ ոգեաց, օդային,
ցամաքային, և ջրային կարևոր կենդա-
նեաց ոմանց, և ինչ ինչ անդամոց և
ախտից, և այս 'ի քառեակ բարբառս՝ 'ի
լատինական, յիտալական, 'ի գաղղիա-
կան, և յանգղիական. և ուրեք ուրեք
յաւելաք 'ի վերայ ոմանց բառից նա և
զյունականն, զարաբացւոց, զպարսկա-
կանն, զտաճկականն, և զՀայկականն. և
միանգամայն եդաք առաջի իւրաքանչիւր
բառից զծանօթութի, զանուութի, և ըզ-
ներգործական զօրութի նոցին բացայայտ
ինն ոճիւ։

Է. Յառաւել դիւրութի ուսումնասէր
հետազօտաց՝ կարևոր դատեցաք հաւա-
քել ուրոյն բառարանաւ ըստ այբուբե-
նից զբառս արտաքոյս, կամ պարսկա-

կանս, կամ տաճկականս, և զնշանակութիս նոցա 'ի բառարան լատինական անուանցն առաքել. որպէս զի տեղեակքն այսոցիկ արևելեան լեզուաց գիտասցեն՝ թէ արևմտեայք որո՛վ անուամբ կոչեն զիւրաքանչիւր բժշկական գիտելիս։

Ա.յսչափ ինչ ըստ պահանջելոյ Յառաջաբան ծանօթութեանց համառօտիւ յայտ արարեալ զնպատակ և զտարազ գրուածոցս, ցանկամբ 'ի դուզնաքեայ մերոցս վաստակոց՝ յոլովագոյնս շտեմարանել արդիւնս օգտաշահս յանձանձիր ընթերցանութէ մտաւոր վերծանողաց։

Ոնէ 'ի ցաւելի՝ մարդոյ բընութիւն,
Կարէօք հասանէ՝ ախտից բընութիւն,
Կարեւոր ապա՝ և այն գիտութիւն,
Որ անուն և գործ՝ է Ընդընկութիւն։
Այ՛ որ գործնական՝ ևելի դարմանոյ,
Կամ պէսական՝ դիայն պէղեակ գոյ.
Այլ որ խընամոտ՝ բուժել է մարմնոյ,
Պայս և պայն գուլայ՝ ունել մեծարգոյ։
Ընծարեա՛ ՚ի բծիղկ՝ հընարամայէ Ոնէր,
Որ ինչ 'է տո պէտս՝ յանէն առնուլ 'է կէր։
Այլ ելիկ բծիղկ՝ ելիկ ախտակէր,
'է Տեառնէ յուսալ՝ խընդրէ նոյն գէր։

ՅՈՒՅՑԱԿ

ԳԼԽՈՑ ԵՒ ՅՕԴՈՒԱԾՈՑ

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ։

Էրէ։

ԳԼ. Ա. 'Ի վերայ Տենդից ընդհանրապէս, յօդ. ա. 1
'Ի վերայ զանազան տեսակաց տենդից. 3
Կառավարութիւն տենդից ընդհանրապէս. 4
Յօդ. Բ. 'Ի վերայ ընդհատ տենդից. 5
Պատճառք և նշանք ընդհատ տենդից. 6
Կառավարութիւնք և դարմանք ընդհատ տենդից. 7
Խնամատարութիւնք և դարմանք 'ի վերայ ընդհատ տենդից 'ի չափահասս. 8
Կառավարութիւնք և դարմանք 'ի վերայ ընդհատ տենդից 'ի տղայս և 'ի մանկունս. 13
Հնարք 'ի կիր արկանելիք 'ի դիպուածս ընդհատ տենդից. 14
Յօդ. Գ. 'Ի վերայ չարաբար տենդից. 15
Յօդ. Դ. 'Ի վերայ անընդհատ կամ շարունակ և սուր տենդի, և պատճառաց նորին. 21
Նշանք անընդհատ տենդի. 22
Խրատք և կառավարութիւնք անընդհատ տենդի. 23
Դարմանք և դեղք անընդհատ տենդի. 24
Կառավարութիւնք 'ի դիպուածս անընդհատ տենդի. 28
Յօդ. Ե. 'Ի վերայ ջղական կամ չարախտավատ տենդի, և պատճառք նորին. 30
Նշանք ջղական տենդի. 31
Կառավարութիւնք և դեղորայք ջղական տենդի. 33
Յօդ. Զ. 'Ի վերայ թուլական տենդի. 38
Պատճառք և նշանք տենդիս. 38
Կառավարութիւնք 'ի դիպուածս թուլական տենդի. 39
Կարևոր դեղորայք ընդէմ թուլական տենդի. 40

Յօդ. Է. 'Ի վերայ ստամոքսական տենդի. 41
Պատճառք և նշանք անընդհատ ստամոքսա-
կան և մաղձային տենդի. 42
Պատճառք և նշանք մաղձային տենդի. 43
'Նշանք որդնեռաց տենդի. 44
Կառավարութիւնք և դեղորայք ստամոքսա-
կան կամ մաղձային տենդի. 45
Կառավարութիւնք և դեղորայք անընդհատ
մաղձային տենդի. 47
Յօդ. Ը. 'Ի վերայ ջղային դանդաղ տենդի. 49
Պատճառք ջղային դանդաղատենդի. 49
'Նշանք ջղային դանդաղատենդի. 50
Կառավարութիւնք 'ի դիպուածս ջղային դան-
դաղատենդի. 51
Դեղորայք վասն ջղային դանդաղատենդի. 52
Բարառնութիւն տենդի. 54
ԳԼ. Բ. Յօդ. Ա. 'Ի վերայ ընդհանուր բոր-
բոքմանց կամ տապմանց. 55
Յօդ. Բ. 'Ի վերայ բորբոքման ուղղոյ. 56
Պատճառք և նշանք բորբոքման ուղղոյ. 57
Կառավարութիւնք 'ի դիպուածս բորբոքման
ուղղոյ. 58
Դեղորայք վասն բորբոքման ուղղոյ. 59
Յօդ. Գ. Յաղագս բորբոքման կամ ախտից ա-
չաց. 60
Պատճառք բորբոքման կամ ախտից աչաց. 61
'Նշանք բորբոքման աչաց. 62
Կանոն և կառավարութիւն 'ի դիպուածս բոր-
բոքման աչաց. 62
Դեղորայք 'ի դիպուածս բորբոքման աչաց. 63
Դեղորայք և խնամատարութիւնք զկնի ան-
ցանելոյ բորբոքման աչաց. 64
Յօդ. Դ. Յաղագս բորբոքման կամ ցաւոց ա-
կանջաց. 65
Պատճառք և նշանք բորբոքման ականջաց. 65
Դեղորայք և հնարք բորբոքման ականջաց. 66
Յօդ. Ե. Յաղագս բորբոքման լեզուի. 67
Պատճառք և նշանք բորբոքման լեզուի. 68
Կառավարութիւնք և դեղորայք բորբոքման
լեզուի. 68
Յօդ. Զ. Յաղագս բորբոքման որկրոյ, կամ
փողոցաւութիւն. 70

Յօդ. ՃԾ. Պատճառք բորբոքման կոկորդի կամ որկորոյ. 70
Նշանք բորբոքման որկորոյ. 71
Խնամատարութիւնք և կառավարութիւնք բորբոքման որկորոյ. 72
Դեղորայք բորբոքման որկորոյ. 74
Յօդ. Ը. Յաղագս չար փողացաւութեան, կամ քաղցկեղային սխտի կոկորդի. 76
Պատճառք և նշանք չար փողացաւոյ. 77
Դեղորայք և խնամատարութիւնք չար փողացաւոյ. 78
Յօդ. Թ. Յաղագս հասարակ կամ սուտ փողացաւոյ. 79
Նշանք հասարակ փողացաւոյ. 79
Կառավարութիւնք և դեղորայք փողացաւոյ. 80
Հնարք առ'ի խափանել զվերադարձումն սխտից փողացաւութեան. 81
Յօդ. Ի. 'Ի վերայ բորբոքման թոքոց և լանջամաշկի. 81
Պատճառք բորբոքման թոքոց. 82
Նշանք բորբոքման թոքոց. 83
Դարմանք և դեղորայք յաղագս բորբոքմանցս ուրոյն ուրոյն. 84
Դեղորայք և խնամատարութիւն բորբոքման լանջամաշկի. 89
Հնարք և դեղորայք բորբոքման մկանացն կրծոյ և ստորին որովայնի. 89
Դեղորայք և հնարք բորբոքմանցս՝ յորս գոն և նշանք ջղային տենդի. 91
Դեղորայք յաղագս պալարին որ երևի 'ի թոքս զկնի բորբոքմանն. 92
Յօդ. Ժ. Յաղագս բորբոքման սրտի. 93
Նշանք բորբոքման սրտի կամ սրտակրանաց. 93
Կառավարութիւնք և դեղորայք բորբոքման սրտի կամ սրտակրանաց. 94
Յօդ. ԺԱ. Յաղագս բորբոքման ստոծանւոյ, և պատճառաց նորին. 94
Նշանք և դարմանք բորբոքման ստոծանւոյ. 95
Յօդ. ԺԲ. Յաղագս բորբոքման ստամոքսի, և պատճառք նորին. 96
Նշանք բորբոքման ստամոքսի. 97

Կառավարութիք, խնամք և դեղորայք 'ի բորբոքման ստամոքսի. 98
Յօդ. ԺԸ. Յաղագս բորբոքման փորոտեաց կամ ստորին որովայնի, և պատճառք նորին. 100
Նշանք բորբոքման փորոտեաց. 101
Կառավարութիք և դեղորայք 'ի բորբոքման փորոտեաց կամ ստորին որովայնի. 102
Խրատք ընդհանրապէս վրայ բորբոքման փորոտեաց կամ ստորին որովայնի. 105
Յօդ. ԺԲ. Յաղագս բորբոքման լերդի, պատճառք և նշանք նորին. 107
Կառավարութիք և դեղորայք 'ի բորբոքման լերդի. 109
Յօդ. ԺԳ. Յաղագս բորբոքման փայծեղան և պատճառք նորին. 111
Նշանք բորբոքման փայծեղան. 112
Կառավարութիք և դեղորայք ախտիս. 113
Յօդ. ԺԴ. Յաղագս բորբոքման երիկամանց, և պատճառք նորին. 113
Նշանք բորբոքման երիկամանց. 114
Կառավարութիք և դեղորայք վասն բորբոքման երիկամանց. 116
Դեղորայք վասն խղխայթեալ կամ բացեալ պուլարի. 117
Յօդ. ԺԵ. Յաղագս բորբոքման փամփշտոյ. 118
Պատճառք և նշանք բորբոքմանն. 119
Կառավարութիք և դեղորայք ախտիս. 120
Յօդ. ԺԶ. Յաղագս բորբոքման արգանդի, և պատճառք նորին. 120
Նշանք բորբոքման արգանդի. 121
Խնամատարութի և դեղորայք 'ի դիպուածս բորբոքման արգանդի. 122
ԳԼ. Գ. Յաղագս զանազան տեսակաց խթից. 124
Յօդ. Ը. Յաղագս փքական կամ քամիական խթի. 124
Պատճառք և նշանք ախտիս. 125
Խնամատարութիք և կառավարութիք ախտիս. 126
Յօդ. Ը. Յաղագս մաղձային խթի. 127
Նշանք և խնամատարութիք ախտիս. 128
Հնարք և կառավարութիք 'ի վերայ ախտիս. 129
Յօդ. Գ. Յաղագս խթի արգանդեան. 129

Նշանք և խնամատարութիւնք ախտիս. 130
Յօդ. Գ. Յաղագս ջղային խթի. 131
Նշանք և խնամատարութիւնք և դեղորայք ախտիս. 132
Կառավարութիւնք և իրատք պիտանիք վասն ախտիս ընդհանրապէս. 135
ԳԼ. Դ. Յաղագս սաստիկ հոսման միզի. 136
Պատճառք և նշանք ախտիս. 136
Դեղորայք վասն սաստիկ հոսման միզի. 137
Կառավարութիւնք 'ի կերակուրս. 138
ԳԼ. Ե. Յաղագս անժուժութիւն կամ անժուժկալութիւն միզի, և պատճառքն. 139
Խնամատարութիւնք և դեղորայք ախտիս. 140
ԳԼ. Զ. Յաղագս անմիզութիւն կամ միզարգելութիւն. 141
Նշանք միզարգելութիւն. 141
Պատճառք, դեղորայք և խնամատարութիւնք միզարգելութիւն. 142
Ընդհանուր կառավարութիւն վասն արգելման միզի յորպիսի և ինչ պատճառէ յառաջ եկեալ. 144
ԳԼ. Է. Յաղագս ախտից աւազոյ և քարի երիկամանց. 145
Պատճառք այսր աւազոյ և քարի. 145
Նշանք աւազոյ և քարի. 146
Կառավարութիւնք և դեղորայք վասն ախտից աւազոյ և քարի. 147
ԳԼ. Ը. Յաղագս զանազան տեսակաց ջրգողութեանց. 149
Յօդ. Ա. Յաղագս պատճառաց անազարքա անուանեալ ջրգողութիւն, և յաղագս պատճառաց ջրգողութիւն որովայնի. 150
Մասնաւոր պատճառք և նշանք անազարքայի. 151
Սեպհական նշանք ջրգողութիւն որովայնի. 152
Խնամատարութիւն և կառավարութիւն վասն ջրգողութեանց, եթէ ըստ պատահման ինչ հանդիպեալ, և ենթակայն ինչ բարեկազմ. 154
Դարմանք և դեղորայք վասն այսպիսի ջրգողութեանց. 155
Կառավարութիւնք և դեղորայք ջրգողութեանց յորժամ 'ի վերայ գան ըստ պատահման. 157

Յօդ. Բ. Յաղագս Ջրգողութեան կրծոց. 160
Նշանք և խնամատարութեան և դեղորայք
Ջրգողութեան կրծոց. 161
Յօդ. Գ. Յաղագս Ջրգողութեան գլխոյ կամ ուղղոյ. 163
Պատճառք և նշանք Ջրգողութեան. 163
Դեղորայք Ջրգողութեան գլխոյ. 164
Յօդ. Դ. Յաղագս Ջրգողութեան մանաւորք ինչ
պարկի. 165
Նշանք Ջրգողութեան. 166
Կառավարութիւնք և դեղորայք ախտիս. 168
Գլ. Թ. Յաղագս դալկան. 170
Պատճառք և նշանք դալկան. 171
Խնամատարութիւնք վասն դալկան. 172
Դեղորայք վասն դալկան. 173
Գլ. Ժ. Յաղագս Թոքախտութեան. 175
Յօդ. Ա. Պատճառք Թոքախտութեան. 175
Նշանք Թոքախտութեան. 176
Կառավարութիւն Թոքախտութեան. 177
Դեղորայք և կառավարութիւնք 'ի զանազան
աստիճանս Թոքախտութեան. 179
Յաղագս արկածեան Թոքախտութեան. 180
Յօդ. Բ. Յաղագս Ջրային Թոքախտութեան. 181
Կառավարութիւն և դեղորայք ախտիս. 182
Գլ. ԺԱ. Յաղագս շնչարգելութեան. 183
Պատճառք շնչարգելութեան. 183
Նշանք այսորիկ ախտի. 184
Խնամատարութիւնք և դեղորայք վասն շնչար-
գելութեան. 185
Հնարք առ 'ի արգելուլ զգալուստ շնչարգե-
լութեց. 187
Գլ. ԺԲ. Յաղագս հիւանդութեց կանանց ընդ-
հանրապէս. 188
Յօդ. Ա. Յաղագս դաշտանի կամ յաղագս սա-
մային հոսմանց. 188
Յօդ. Բ. Յաղագս առաջին երևման դաշտանի. 189
Նշանք և կառավարութիւնք 'ի գիպուածս
յայս. 190
Եղանակն որով պարտ է վարել 'ի ժամանա-
կի դաշտանի. 191
Յօդ. Գ. Յաղագս արգելականութեան դաշ-
տանի. 192
Կառավարութիւնք և դեղորայք 'ի գիպուածս

արգելման դաշտանի յաւաջ եկելոյ 'ի զանազան պատճառաց. 192
Զգուշութիւնք վասն արգելման դաշտանի. 195
Յօդ. Դ. Յաղագս տժգունութեան, և յաղագս միապակար քաղցու. 195
Նշանք տժգունութեան ախտի. 196
Նշանք միապակար քաղցու. 197
Դեղերայք տժգունութեան և միապակար քաղցու. 197
Յօդ. Ե. Յաղագս չափազանց դաշտանի. 198
Պատճառք, նշանք և դեղերայք չափազանց դաշտանի. 198
Յօդ. Զ. Յաղագս ինչ ինչ գիտելեաց 'ի վերայ դաշտանի. 199
Յօդ. Է. Յաղագս ախտի հոսման սպիտակագոյն հիւթոց. 201
Նշանք այսր հոսման. 201
Պատճառք, խնամատարութիւն և դեղերայք ախտիս. 202
Յօդ. Ը. Յաղագս ամլութեան, և պատճառաց նորին. 203
Դեղերայք վասն ամլութեան. 204
Յօդ. Թ. Յաղագս վիժման և անցուցման զաւակի. 204
Պատճառք և նշանք վիժման. 205
Զի՞նչ պարտ իցէ առնել, յորժամ 'ի նշանաց գուշակի վիժումն. 206
ԳԼ. ԺԳ. Յաղագս ընդհանուր ախտի ջղաց. 206
Պատճառք և նշանք ախտիս 'ի հասարակի. 207
Խրատք, կառավարութիւնք, և դեղերայք ընդհանրապէս վասն հաստատութեան ջղաց. 209
Դեղերայք 'ի հանդարտեալ զջիղս. 213
ԳԼ. ԺԴ. Յաղագս ախտի ջղային դժուարամարսութեան, և պատճառք նորին. 217
Նշանք ջղային դժուարամարսութեան. 218
Խնամատարութիւնք ջղային դժուարամարսութեան. 219
Դեղերայք վասն ախտիս. 220
ԳԼ. ԺԵ. Յաղագս անդամալուծութեան կամ կաթուածի. 222
Պատճառք անդամալուծութեան. 223
Նշանք բարեյաջողք 'ի դիպուածս ախտիս. 223

Յօդ. ԺԱ. Յաղագս խնամատարութեան ընդհանուր անդամալուծութեան յուժեղս. 224
Յաղագս նոյն խնամատարութեան 'ի տկարս. 224
Յօդ. ԺԲ. Յաղագս խնամատարութեան անդամալուծութեան որ 'ի միանուն մասինոյ. 226
Յօդ. ԺԳ. Յաղագս խնամատարութեան տեղական անդամալուծութեան կամ կիսակաթուածի. 226
ԳԼ. ԺԶ. Յաղագս ախտի լուսնոտութեան կամ վերնոտութեան. 228
Պատճառք և նշանք ախտիս. 229
Կառավարութիւնք վասն լուսնոտութեան. 230
Դեղորայք վասն ախտիս յամենայն հասակի. 231
Դարման 'ի ժամանակի, յորում յարատևէ բորբոքումն. 231
Դարման զկնի փարատելոյ բորբոքմանն. 232
ԳԼ. ԺԷ. Յաղագս ախտից սևամաղձութեան, և կատաղութեան կամ մոլեգնութեան. 234
Պատճառք ախտիցս. 234
Նշանք ախտիցս. 235
Կանոնք և կառավարութիւնք այսոցիկ ախտից. 236
Դեղորայք վասն սևամաղձութեան. 237
Դեղորայք վասն ախտի մոլեգնութեան. 239
ԳԼ. ԺԸ. Յաղագս ախտի փքախտութեան, կամ փքոտութեան. 239
Պատճառք ախտիս. 240
Դեղորայք ընդդէմ փքախտութեան. 241
Դեղորայք ընդդէմ փքախտութենն, յոր զոյգ գտանին և զանազան ախտք. 243
Խնամատարութիւնք վասն փքաժեռաց. 244
ԳԼ. ԺԹ. Յաղագս զանազան աստիճանաց ուշագնացութեան, կամ նուազման և կամ թալկացման սրտի. 244
Ուշագնացութեան պատճառեալ յառատուէ արեան, և դեղորայք նորին. 245
Ուշագնացութեան 'ի նուազութէ արեան կամ 'ի տկարութէ. 246
Ուշագնացութեան յերիսակ հատանելոյ, 'ի փքախողականէ և 'ի լուծողականէ. 246
Ուշագնացութեան յանմաքրութէ ստամոքսի. 247
Նոյնն պատճառեալ 'ի հոտոյ. 247
Նոյնն պատճառեալ 'ի ծննդեան. 248

ԳԼ. Ի. Յաղագս գլխացաւութեան կամ ցաւոց գլխոյ. 248
Պատճառք զանազան կերպի ցաւոց գլխոյ. 249
Նշանք գլխացաւութեան. 250
Կառավարութի ցաւոց գլխոյ. 251
Յօդ. ա. Յաղագս դեղորէից գլխացաւութեան պատճառելոյ յառաջուէ արեան, 'ի ջերմ և 'ի մաղձային խառնուածոց. 251
Յօդ. բ. Յաղագս դեղորէից գլխացաւութեան պատճառելոյ յապականեալ ջրոյ, և ն. 252
Յօդ. գ. Յաղագս դեղորէից գլխացաւութեան պատճառելոյ յարդելմանէ լորձունաց ուրնգացն. 252
Յօդ. դ. Յաղագս դեղորէից աբգաբ անուանեալ գլխացաւութեան. 253
Յօդ. Ե. Յաղագս դեղորէից գլխացաւութեան պատճառելոյ 'ի գաղղիական և 'ի սքօռպուութիական ախտից. 254
Յօդ. Զ. Յաղագս դեղորէից գլխացաւութեան առթելոյ 'ի սաստիկ աշխատանաց և 'ի ջերմութենէ. 254
Յօդ. Է. Յաղագս դեղորէից գլխացաւութեան պատճառելոյ 'ի հանդային և 'ի մեստաղային դողորշեաց. 255
Յօդ. Ը. Յաղագս դեղորէից պարբերական գլխացաւութեան. 256
ԳԼ. ԻԱ. Յաղագս ատամնացաւութեան, և պատճառք նորին. 256
Դեղորայք ընդդէմ ցաւոց ատամանց. 257
ԳԼ. ԻԲ. Յաղագս ցնցական ախտի երախայից կամ տղայոց. 258
Յօդ. ա. Յաղագս պատճառաց արկածեան ախտի ցնցականի. 258
Դեղորայք վնասոցիկ ախտից. 259
Յօդ. բ. Յաղագս էական ախտի ցնցականի 'ի վերայ տղայոց, և դեղորայք նորին. 261
ԳԼ. ԻԳ. Յաղագս հեծկլատանաց. 261
Պատճառք հեծկլատանաց. 262
Դեղորայք ընդդէմ կարճատև հեծկլատանաց. 262
Դեղորայք ընդդէմ արկածեան և ըմբոստ ձայնեալ հեծկլատանաց. 263

ԳԼ. ԻԴ. Յաղագս զանազան տեսակաց հազից. 264
Յօդ. ա. Յաղագս հազի կրծոց կամ լանջաց. 265
Պատճառք և նշանք այսորիկ հազի. 265
Դեղորայք ընդդէմ հազի կրծոց, յորում գտանին 'ի միասին և զանազան դի-
պուածք. 266. 267
Յօդ. բ. Յաղագս հազի ստամոքսի, և նշանք նորին. 268
Դեղորայք վասն ստամոքսական հազի. 269
Յօդ. գ. Յաղագս ջղական կամ ցնցական հազի. 270
Նշանք, կառավարութիւնք և դեղորայք 'ի դիպուածս հազիս. 270
Յօդ. դ. Յաղագս սրկածեան հազի. 271
ԳԼ. ԻԵ. Յաղագս պնդութեան կամ կալուածոյ որովայնի, և պատճառք նորին. 272
Խնամատարութիւն և դեղորայք սխտիս. 273
ԳԼ. ԻԶ. Յաղագս զանազան տեսակի յօդուա-
ծացաւութեան. 274
Յօդ. ա. Յաղագս բորբոքողական յօդուածացա-
ւութեան, և պատճառք նորին. 275
Նշանք սխտիս այսորիկ. 276
Կառավարութիւնք և դեղորայք սխտիս. 278
Յօդ. բ. Յաղագս երկարատև յօդուածացա-
ւութեան. 280
Դարմանք և դեղորայք սխտիս. 281
Կարևոր նպաստք ըմբռնելոցն սխտիս. 283
ԳԼ. ԻԷ. Յաղագս սխտի յօդացաւութեան. 284
Յօդ. ա. Յաղագս կանոնաւորեալ յօդացաւու-
թեան, և պատճառք նորին. 284
Նշանք սխտիս. 285
Խնամատարութիւն և դեղորայք սխտիս. 288
Դեղորայք զկնի դիւրանալոյ սխտիս. 290
Հնարք՝ որով մարթի է արգելուլ զվերա-
դարձումն սխտի յօդացաւութեան. 290
Յօդ. բ. Յաղագս անկանոն յօդացաւութեան, և յաղագս նշանաց նորին. 292
Դարմանատարութիւնք և դեղորայք այսր տե-
սակի յօդացաւութեան. 293
ԳԼ. ԻԸ. 'Ի վերայ որովայնալուծութեան կամ փոր-
հարութեան, և պատճառք նորին. 295
Նշանք որովայնալուծութեան. 296
Մասնաւոր նշանք ազգի ազգի որովայնա-

լուծութեաց, և խնամատարութիւնք նոցին. 297
ԳԼ. ԻԹ. 'Ի վերայ արիւնուռչտ փորհարութեան կամ արիւնախառն որովայնալուծութեան. 306
Պատճառք և նշանք այսր ախտի. 307
Կառավարութիւնք 'ի դիպուածս ախտիս. 310
Հնարք և դեղորայք այսորիկ ախտի. 311
ԳԼ. Լ. Յօդ. ա. Յաղագս թանչից կամ թթախտութեան. 314
Պատճառք ախտիս. 315
Դարման և խնամատարութիւն ախտիս. 316
Որոմ եղանակաւ պարտ է դադարեցուցանել զհոսումն արեան 'ի ռնգացն. 318
Յօդ. բ. Յաղագս չոր կամ կոյր թանչից. 320
ԳԼ. ԼԱ. Յօդ. ա. 'Ի վերայ թքման և փսխման արեան. 322
Մասնաւոր պատճառք և նշանք թքման արեան. 323
Խնամատարութիւնք և դեղորայք վասն թքման արեան. 324
Յօդ. բ. 'Ի վերայ փսխման արեան. 327
Պատճառք փսխման արեան. 328
Նշանք, խնամատարութիւնք և դեղորայք վասն փսխման արեան. 329
ԳԼ. ԼԲ. 'Ի վերայ միզման արեան. 331
Պատճառք միզման արեան. 332
Զանազան նշանք՝ որովք մարթ է գուշակել զհոսումն արեան որ և իցէ ընդերաց կամ մասանց. 333
Խնամատարութիւն և դեղորայք ընդդէմ միզման արեան. 334
ԳԼ. ԼԳ. 'Ի վերայ զգայումն կամ ժայթքման և կամ փսխման. 336
Ընդհանուր պատճառք փսխման. 337
Ընդհանուր և մասնաւոր նշանք և դեղորայք փսխման պատճառելոյ 'ի զանազան դիպուածոց. 338
ԳԼ. ԼԴ. 'Ի վերայ կորեկային ախտի. 341
Պատճառք և նշանք կորեկային ախտի. 342
Կառավարութիւնք և դեղորայք վասն ախտիս. 343
ԳԼ. ԼԵ. 'Ի վերայ սրտախօթութեան. 344
Պատճառք և նշանք սրտախօթութեան. 345

Խրատք և կառավարութիւնք 'ի դիպուածս յայս. 346
ԳԼ. ԼԶ. 'Ի վերայ սքօռպուլթօ ախտին. 348
Պատճառք սքօռպուլթօ ախտին. 348
Նշանք սքօռպուլթօ ախտին. 349
Կառավարութիւնք և դեղորայք սքօռպուլթօ ախտին. 350
ԳԼ. ԼԷ. Յօդ. ա. Յաղագս դադարմանց կամ խցանաց խուլական ուռուցից, և յաղագս քաղցկեղի. 352
Պատճառք և նշանք խցանաց խուլական ուռուցից. 353
Խնամատարութիւնք 'ի դիպուածս խցանաց. 355
Դեղորայք վասն խցանաց զանազան դիպուածոց. 356
Յօդ. բ. Յաղագս քաղցկեղի. 357
Պատճառք այսորիկ ախտի. 358
Նշանք ախտին քաղցկեղի. 359
Խնամատարութիւնք և դեղորայք վասն ախտին քաղցկեղի. 360
ԳԼ. ԼԸ. 'Ի վերայ գաղղիական ախտի, և 'ի վերայ հոսմանց, եղնդոյ և գաղղիական խոցից եւն. 363
ա. 'Ի վերայ ժահրալից հոսման, և նշանք նոր. 364
Կառավարութիւնք 'ի դիպուածս հոսմանս. 365
Դեղորայք՝ յորժամ ախտս լինի 'ի թեթև աստիճանի. 366
Դեղորայք եթէ ի՞նչ 'ի ծայրագոյն աստիճանի. 368
Երկրորդ աստիճան ժահրալից հոսմանն. 369
Երրորդ և վերջին աստիճան նոյն հոսմանն. 372
բ. 'Ի վերայ վավաշ եղնդոց, և դարմանք նորին. 374
գ. 'Ի վերայ խոցից կամ վիրաց առթելոց 'ի վավաշ ախտէ, և դարմանք նորին. 375
դ. 'Ի վերայ վավաշածին դժուարամիզութիւն, և զանազան նշանք նորին. 377. 378.
Է. Յաղագս նշանաց գաղղիական ախտի. 379
Ը. 'Ի վերայ դարմանատարութեաց և դեղորէից այսորիկ ախտի. 381
Է. 'Ի վերայ գլխաւոր տրամադրութեանց և կերպից, որով մարթ է դարման տանիլ

ախատիս, և եղանակն 'ի գործ արկանելոյ զանդիկն ևն. 382
Ը. 'Ի վերայ կերպի 'ի կիր արկանելոյ զանլոյծ անդիկն ընդ փաղաղիչ անդկի. 383
Թ. 'Ի վերայ կերպի և չափու 'ի գործ արկանելոյ զանլոյծ անդիկն ընդ գրեխի. 384
Ժ. 'Ի վերայ կերպի 'ի գործ արկանելոյ զանդիկն ճանապարհաւ օծանելեաց. 386
ԺԱ. 'Ի վերայ կերպի և չափու 'ի գործ արկանելոյ զանդիկն փաղաղիչ. 387
ԺԲ. Խրատք ընդհանուրք 'ի վերայ կառավարութեան գաղղիական ախատին. 389
ԺԳ. Յաղագս բորբոքման և ուռուցի ամորձեաց. և կառավարութիւնք նորին պատճառելոյ 'ի զանազան ախտից. 391. 393
ԳԼ. Խ. 'Ի վերայ ախտի սերմնակաթութեան. 393
Նշանք սերմնակաթութեան. 394
Կառավարութիւն և դեղորայք սերմնակաթութեան պատճառելոյ 'ի զանազան ախտէ. 395. 397
ԳԼ. ԽԱ. 'Ի վերայ ուլչէռէ անուանեալ վիրաց, և դարմանք նորին. 398
Ներքին և արտաքին նպաստք և դարմանք 'ի դիպուածս վիրիս. 399
Վախճան բժշկականութեան ոտանաւորաւ. 400

Խօսեցաւ սողոմոն զփայտից, զեզևնափայտէն մինչև ցուպայն, որ յորմն ելանէ. է թագ. դ՝ 33:

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՆ

'Ի վերայ ազգի ազգի խօթութեանց և ախտից, այլև պատճառաց, նշանաց, խնամատարութեանց, և դեղորէից նոցին։

ԳԻԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

'Ի վերայ Տենդից ընդհանրապէս. որ յիպոլացոց ասի՝ քէպպոէ ին ճէնէռալէ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՏԵՆԴԴ անուն՝ է տեսակ ինչ ասատիճանաւոր և վնասարար ախտից, զոր այլով անուամբ կոչեմք՝ ջերմն։ Եւ է բազմատեսակ, յորոց զոմանս ունիմք ներքնաշարել 'ի տեսիս իւրաքանչիւր։ Ըստ առաւել հասարակ կարծուածոց՝ զբաւեն 'ի կենաց առաւելքան զկէս մասն մարդկային սերնդոց, որ և յայն սակս կոչի ըստ բժշկաց՝ ոսոխ կենաց. զի առաւելու զջերմութիւնն կենսական, դրդռէ կամ շարժէ զթելս մարմնոյ, որք գտանին 'ի միանուն և յայլ մասունս կենդանւոյն. ածէ ամբոխումն 'ի վերայ ճնապաղիցն

ջղաց, և բառնայ զոյժ և զզօրութիւն մարմնոյ. անդէն նոյնհետայն սկսանին 'ի վերս երևիլ այլևայլ ամբոխմունք 'ի պաշտաման սատանայի և ընդերացն, եղծմամբ մարդոյութեան, խորշելով յո՛ և իցէ կերակրոյ տաղտկանօք սրտի. որում երբեմն զուգընթանան և բռնաւորութիւն, մղումն, դողդոջումն, ցնցումն, և ցնորումն, յառաջընթացութիւն ճնշման կրծոց, սեղմամբ և չորութիւն կոկորդի, ցաւով և ծանրութիւն, կամ նաև պատուտմամբ գլխոյ, շառաչմամբ ականջաց, փոխադարձ առնելութիւն սրտի, նեարդից՝ և զօրութեց ջղաց, և անպատմելի ինն զգածմամբ անձկութիւն: Ամենի իրի մեծապէս կարևոր է ամենայն բժշկաց ճանաչել զպատճառս, յորմէ յառաջ գայ ախտս: Ա՛ռաւել ընդհանուր պատճառք տենդից են՝ փոխատրութիւնն ախտից, սխալանք 'ի կառավարութիւն, ներքին ինասակար հիւթքն, օդն յոռի, արգելումն որպիսի և իցէ սովորական հոսման, և ներքին կիրքն եռացուցիչք ոգւոյ, 'ի վախճանի սաստիկ ջերմութիւն, և կարի ցուրտն, որ խափանէ զարտաշնչութիւնն մարմնոյ՝ խցմամբ ծակտեաց մորթոյ: Դիւրին և պարզագոյն ինն տենդն ունի միշտ զոյգ ընդ իւր անհամաձայն նշանս, որք վերաբերին մասնաւորապէս առ այլասեռ ախտս:

Գլխաւոր նշանքն ախտից են՝ մեծագոյն խոնջութիւն, սաստիկ ջերմութիւնն, անհանգստութիւն. երբեմն զուգընթաց լինի և ընդ ախտիս ուժգնութիւն կամ բռնութիւն, հանդերձ ցնորմամբ և կատաղութիւ: Ջարկ բազկին հարկանէ երբեմն արագ և ուժեղ, և երբեմն սակաւ և նուրբ՝ կամ նաև թոյլ: Իսկ նշանք անսեպհականք՝ են զզուանք, տաղտկութիւնք, յօժարութիւն 'ի ժայթքել, ծարաւն սաստիկ, անձկութիւն, գժուարութիւն 'ի շնչառութիւն, ցամաքութիւն լեզուի, թուլութիւն մարմնոյ, և քունն միջահատ: Յորժամ 'ի վերայ գայ ումեք տենդն իբր ընդ աստիճանս ելանելով, յայնժամ ախտակիրն շուրջ պատեալ ունի զիւրեւ զթմբրութիւն, և զտարտամութիւն. կրէ զցաւ 'ի մկանունս, յոսկերս, և 'ի գլուխն, կորուսանէ զախորժակն գլխովին. և բերանն լինի ցամաքագոյն. և զկնի քանի ինչ ժամանակաց զգայ յանձին զջերմութիւն սաստիկ, և զծարաւ բորբոքիչ, և զանկարութիւն 'ի քուն լինել և այլն: Իսկ յորժամ յանկարծակի 'ի վերայ հասանէ տենդն, յայնժամ ախտակիրն

ունի զդողդոջումն, և զցուրտ ուժգին, զտկարութիւն կամ զթուլութիւն, զկորուստ ախորժակի, զանձկութիւն սրտի, զործումն և այլն։

'Ի վերայ զանազան փէսակաց փէնդին։

Տենդքն բաժանին յընդհատ, և յանընդհատ, կամ յօրըստօրէ։ առաջինն կոչի յիտալացւոց ֆէպպրէ ինթէռմիթթէնթէ, և երկրորդն՝ քօնթինուա։ Տենդն ընդհատ է այն՝ որ յանկարծ 'ի վերայ յարձակի ախտակրին, և յետ այնորիկ նշանաւոր ինչ ժամանակս միջահատեալ 'ի բաց հրաժարի 'ի նմանէ, այնպէս մինչև համարել ախտակրին՝ թէ ստացեալ ևցէ զառողջութիւն, և չզդալ յանձին նշան ինչ տենդի։ բայց զկնի քանի ինչ աւուրց վերստին գլուխ ամբառնայ և 'ի յայտ գայ տենդն, երբեմն առաւել, և երբեմն սակաւ դժնէութիւն, և այսպէս մնայ մինչև ցկատարելապէս առողջութիւն ախտակրին։ Տենդս այս ընդհատ՝ անջատի դարձեալ 'ի ֆէպպրէ քօթիտիանա, այսինքն տենդ օրըստօրեայ։ 'ի ֆէպպրէ թէռցանա, այսինքն տենդ եռօրեայ։ 'ի ֆէպպրէ գուառթանա, այսինքն տենդ քառօրեայ։ 'ի ֆէպպրէ գուինթանա, այսինքն տենդ հինգօրեայ։ 'ի ֆէպպրէ թէռցանա տօբբիա, այսինքն կրկնապատիկ տենդ եռօրեայ։ 'ի ֆէպպրէ գուառթանա տօբբիա, այսինքն կրկնապատիկ տենդ քառօրեայ։ Են և այլևս տենդք, որք 'ի հինգ, 'ի վեց, 'ի յեօթն և յութ ամիս, և յամն միանգամ պատահին։ բայց այսպիսիքն յոյժ սակաւք են, և դասին 'ի կարգս ընդհատ տենդի։ որովհետև սոցա դեղորայք, և կառավարութիւնքն նոյն են ընդ նմա։ Իսկ տենդքն գարնանային սնուանեալք՝ են այնք, որք սկսեալք 'ի փետրվարէ՝ աւարտին մինչև ցյունիս։ Իսկ տենդքն աշնանային տիրապետեն 'ի յուլիսէ մինչև ցյունվար։ 'Ի սոյն կարգ դասի և տենդն չարարար, կոչեցեալ յիտալացւոց՝ ֆէպպրէ բէռնիչիոզա, որոյ են բազում տեսակք։

Իսկ տենդն անընդհատ է այն՝ որ բնաւ ոչ հեռանայ և ոչ թողու զախտակիրն յամենայն ընթացս հիւանդութիւն։ և ցորքան ևս տևէ, բնաւ ինչ նշանս ոչ ցուցանէ, բայց միայն՝ զի համբարձեալ ախտն 'ի

սաստկագոյն ասուիճան, սկսանի առ սակաւ սակաւ զինչանել և դադարիլ կամ նոյն իսկ բնութենն նպաստաւորութիւն, և կամ 'ի ձեռն դեղորէից։ Տենդս այս որոշի դարձեալ 'ի ֆէպպռէ աքութա, այսինքն տենդ սուր կամ դժնեայ. 'ի ֆէպպռէ նէռվօզա, այսինքն տենդ ջղական կամ յուռեգոյն. 'ի ֆէպպռէ ռէմիթթէնթէ, այսինքն տենդ թուլական. 'ի ֆէպպռէ քոնթինուա կասթռիքա, այսինքն տենդ անընդհատ ստամոքական. 'ի ֆէպպռէ բիլիթուիլիթօզա, այսինքն տենդ մաղաստական. և 'ի ֆէպպռէ լէնթա նէռվօզա, այսինքն դանդաղատենդ ջղային։ Այսմ ամենայնի լիով ծանօթասցիս յիւրաքանչիւր տեղիս իւրեանց։

Կատարուելի պէնդիր ընդհանրապէս։

Պատքէն տենդքն ոչ այլ ինչ են, բայց եթէ ուժգնութենի ինչ բնութենէ յարձակեալ 'ի վերայ 'ի ձեռն ախտարծարծ և ապականեալ նիւթոց, որք լինին յուտելեաց և յըմպելեաց, 'ի ցրտոյ և 'ի ջերմութենէ, 'ի շատ և 'ի սակաւ աշխատանաց, 'ի յոլով և 'ի սակաւ ննջելոյ, այլովքն հանգերձ. վասն որոյ պարտ և պատշաճ է, որոց կամին խնամ տանիլ ախտակրաց՝ նախ զդուշութիւն քննել զպատճառս և զնշանս տենդից. և ապա գիտել և իմանալ զճանապարհն, զոր ինքն բնութիւն ընտրէ առ 'ի բաց վանել զնիւթս զայս ախտարծարծ, և նպաստաւորոյց լինել ներգործութենէ նորին. քանզի այսպէս են օրէնք մարդկային բնութեան՝ 'ի բաց մերժել յինքենէ, և 'ի դուրս վանել զայն ամենայն, որք փնասաբեր լինին նորին առողջութեան՝ 'ի ձեռն հոսմանց, որպիսի են միզելն, քիրան, արտաթորումն որովայնի, թքանելն, փրսխումն և այլն։ Եթէ 'ի սկզբան անդ տենդից դուշակի կամ ճանաչի քաջ միտումն բնութենէ, և ըստ այնմ նպաստ ընծայի նորին ներգործութենէ, ոչ բնաւ յերկարաձգի ախտն. իսկ եթէ չիցէ հնար ճանաչել զայն, յայնժամ ախտն երկարաձգի, և լինի վատնդաւոր, և զայս փորձիւ իսկ ճանաչեմք. քանզի ումանք զկնի ցրտահար լինելոյ՝ ունին զամենայն նշանս տենդի, իբր արդէն սկսեալ. բայց եթէ նոքա պահպանեն զանձինս ջերմագինս, անդէն 'ի դոյզն ինչ

պահու անհետ լինին նշանքն, և չմնայ այլ ինչ եր-
կիւղ վտանգի։

Ո՛չ են մեր կամք աստանօր մոռանել 'ի նրբազնին
քննութեն բնութեան, այլ միայն ցուցանել կամիմք
զսկզբունս, զկանոնս, զիսկական պատճառս, և զնշանս
առաւել քաջայայտս՝ 'ի ձեռն որոց մարթ է 'ի վար
արկանել զկառավարութիս, և զդարմանս առաւել
ճահոդականս և պիտանականս սխտակրաց. որպիսի
են ժուժկալութիւն որկորոյ, դեղորայք, ըմպելիք,
օդն, և այլն, ըստ այլևայլ յատկութեան տենդից.
որպէս զի 'ի կշիռ պահեսցի նեղքին տրամադրութի
հիւթոց և գործարանաց. որում զհետ գայ առող-
ջութիւնն խնդրեալ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

'Ի վերայ ընդհապ պենդից, զոր Իպոլոյիտ Լուէն՝ Քէպպոի
ինրէոդիրրէնրի, կամ Քէպպոի պ' ալէքսիս։

Ամենայն ոք քաջայայտ ճանաչէ և զանազանէ
զայսոսիկ տենդքս յայլ ամ տեսակաց տենդից. և
դեղորայքն, որք սովորաբար 'ի կիր արկանին 'ի դէ-
պուածս այսց սխտից, յայտնի և ծանուցեալ են առ
ամենեսեան։ Գիտել արժան է, զի տենդն ընդհատ
կայանայ յառաւել ինն խմորման արեան՝ նախ 'ի
ցուրտ, և յետ այնորիկ 'ի ջերմութի, որում յարա-
կից է հոսումն քրտանց։ Իսկ զանազան տեսակք
ընդհատ տենդից են՝ օրըստօրեայ, եռօրեայ, քառ-
րեայ, և այլն. և 'ի սոցանէ ծնանին և որոշին միան-
գամայն տենդքն 'ի գարնանային, և յաշնանային։
Կան նաև այլ տենդք, որք 'ի հինգ՝ 'ի վեց՝ յեօթն
կամ յութ ամիս միանգամ պատահին, որպէս տե-
սաւ 'ի վեր անդր, և դասին 'ի կարգս ընդհատ տեն-
դից, որովհետև սոցա կառավարութիքն և դեղորայքն
համանման են ընդ նոցա։

Պատճառք ընդհատ պէնդէից։

Սկզբնական պատճառք ընդհատ տէնդէից համարին հնասակար գոլորշիք, որք արտաքս ցնդին 'ի նեխեալ և յանշարժ մնացեալ ջուրցն. և ճշմարտութիւնս քաջայայտ երևի և հաստատի յայնմանէ, զի 'ի բնակութիւնս և 'ի գաւառս՝ ուրանօր ըմպեն զջուրս անձրևոյ և լճաց, ստէպ և յաճախ պատահի ախտս։ Դարձեալ՝ յանբարեխառնուէ, որ լինի 'ի գժուարամարսելի կերակրոց, 'ի տհաս պտղոց, 'ի խոնաւագոյն օդոց և բնակութեաց, 'ի կարի և 'ի սակաւ քնոյ, 'ի շատ և 'ի սակաւ աշխատանաց, 'ի ցօղոյ գիշերայնոյ, և 'ի տօթոյ տունջեան, և յաճախ պակասութէ առողջարար պարենից։ 'Ի քուն լինելն 'ի վերայ գէճ գեանոյ, խառվելն, և շարժիլն կրից՝ և այլն, կարեն պատճառել զտենդս զայս ընդհատ. և 'ի մի բան բովանդակեալ, այն ամենայն որք թուլացուցանեն ընդներքին գործարանս, և նուազեցուցանեն զշոգիս մարմնոյ, որով ներքին ջափակցութի կամ բարեխառնութին այլայլի, պատճառեն զտենդս զայս։

Նշան ընդհատ պէնդէից։

Տենդքս այսոքիկ սկիզբն առնուն 'ի ցաւոց գլխոյ, միջաց և երիկամանց, 'ի թուլութէ զօրութեց ջղաց և բոլոր մարմնոյ, 'ի ստէպ ստէպ յօրանջելոյ հանդերձ խիք տարտամութիք, և անձկութիք, ևս ձգրատմամբ, և երբեմն ևս 'ի փսխելոյ. և զկնի այսոցիկ ամենայնի 'ի վր գայ գողդոջումն սաստիկ և դժընդակ, և իսկ և իսկ թուլացեալ աւիշկեան անօթոցն և մորթոցն՝ քիրան հոսէ յորդութիք։ Բայց պատահի երբեմն, զի տենդքս այս փութով փարատին, և ոչնչեան լինին. մինչև համարիլ ախտակրին ստանալ զկատարեալ առողջութի. բայց հաստարակօրէն այս պատահի 'ի թմբրութէ, 'ի կորուսմանէ ախորժակի, և վերոյիշեալ նշանաց։ Մինն 'ի սոյգ նշանացն, որք յատկապէս գուշակեն զտենդս զայս, է գոյնն մեզն ախտակրին, զոր 'ի դուրս հոսէ 'ի նմին պա-

հու, մանաւանդ զկնի քրտանց, և լինի պղտոր կաթ-
մրագոյն 'ի գոյն կղմնարի։ 'Ի սկզբան անդ ջերմուէ
զարկ բազկին հարկանէ մանր, խիտ, կամ խոշ, և
ատէպ. ապա լի, բուռն, և յաճախ. հուսկ յետոյ
թոյլ, յամր, կամ յուշիկ. 'ի վախճանի ուժեղ և
միօրինակ. որ է ընթացք բնական։ Անմիջապէս զկնի
ցրտոյն տենդոտն զգայ զջերմութիւն ուժգին. բայց
երբեմն և զգայ նախ զջերմութիւն, և ապա զցրտու-
թիւն, որում զհետ գայ և ծարաւ սաստիկ, չորութիւն
լեզուի, և քիրտն յորդառատ։

Կատաւարութիւն և դարմանք 'ի նիր արկանելիք 'ի դի-
պուածս ընդհանուր փենդիոց։

'Ի յարատև մնալ ջերմութեանն՝ օրէն է ըմպել
տենդոտից զջուրն գարեոյ կամ ավէնակ, և կամ սիէռ-
տի լաթթէ առանչիանթօ, որ է շիճուկն կաթին բա-
զադրեալ ընդ հիւթոյ նարնջոյ. կամ նաև զթրմոցն
երիցկի։ Իսկ եթէ զգայ և զփուք, 'ի վար արկանել
պարտ է զշիճուկ կաթին՝ յաւելլով 'ի նոյն փոքր
ինչ գինի ախորժելի, և նոյնչափ հիւթ կիտրոնի։ 'Ի
միջահասակեալ աւուրս, յորս տենդն հանդարտեալ
կայ, պարտ և պատշաճ է տենդոտից պահպանել զան-
ձինս իւրեանց թեթև և դիւրամարսելի կերակրեղի-
նօք, որպիսի է արդանակն որթոս, հաւոս, և քոէ-
մոռ տի ավէնա սակաւ ինչ գինեաւ, և այլն։ Դար-
ձեալ, արժան է տալ նմա ըմպել և գոյն ինչ գառ-
նահամ հեղուկ, յորում արկեալ իցէ երիցուկն կամ
օշինդրն, և կամ թռիֆօլիս բալուսթռէն. մարթ է
և ըմպել սակաւ ինչ գինի թեթև՝ յոր իցէ արկեալ
արմատն ճենցիանայի, կամ ջենթաուռէա մինօռէ, և
կամ որպիսի և իցէ այլ գառնահամ բոյս։ Դար-
ձեալ, հարկ է առնել շարժումն ըստ տանելոյ կարո-
ղութեան տենդոտից, եթէ ամառն իցէ՝ հեծանել 'ի ձի
և երթալ 'ի զբօսանս և այլն։ Եթէ տենդոտքն չի-
ցեն զգածեալք և ըմբռնեալք 'ի չարագոյն ինչ տեն-
դէ, եթէ օդն բնակութեան նոցին իցէ չոր և աւուղ-
ջարար, յայնժամ՝ ոչ ուրեքն պէտս նպաստից դեղ-
բէից, այլ միայն անձնապահ լինելով ատանան զա-
ռողջութիւն ապահովապէս։ Իսկ եթէ օր քան զօր

նուազեսցի զօրութիւն մարմնոյ, և ջերմութիւնն հասա-
նիցէ յայն աստիճան սաստկութիւնէ, մինչև երկնչիլ 'ի
վերայ կենաց տենդոտից, յայնժամ անյապաղ պարտ
է դիմել 'ի դեղորայսն։

Խնամապարութիւնք և դարմանք 'ի վերայ ընդհանուր պենդիդ
'ի չափահասս։

'Ի դիպուածս սխտիս՝ նախ քան զամենայն պարտ է
փոյթ մեծ ունել 'ի մաքրել զառաջին ճանապարհն,
մանաւանդ եթէ իցէ լեզուն աղտեղի և գեղնագոյն,
և ապա դեղորայքն լինին ներգործիչք և ապահովա-
պէս 'ի վար արկանելիք. որովհետև 'ի դիպուածս
յայս ստամոքն հասարակօրէն լինի բեռնաւորեալ և
ապականեալ խժային մեղասով, տոիպ և սուր մեղ-
ձիւ, և այլ ինասակար հիւթովք. և բազում անգամ
պատահի՝ զի հիւանդն ժայթքէ կամ ործայ առատ-
օրէն զմեղձս. և այս գուշակ, մանաւանդ ուժգնու-
թիւն բնութիւնէ ցուցանէ բաւականապէս զհարկաւո-
րութիւն ործացուցիչ դեղոց, որք են առաջին և գլխա-
ւոր դեղորայք։ 'Ի մէջ ամենայն ործացուցիչ կամ
փսխեցուցիչ դեղորէից առաւել բարեգոյն և պատ-
շաճողականքն վասն այսր սխտի են՝ թարթարս էմ-
թիքս, և իբէքաքուանան։ Թարթարս էմէթիքս եթէ
կամիս առնել, ուրկ զնուրբ փոշի դեղոյս ըստ կշռոյ
երկու ցորենոյ՝ 'ի վեց ունկի հասարակ ջրոյ. (և
ջուրն պարտի լինել 'ի ցքսահանէ եղուզեալ։) Յըմ-
պելոյ աստի յերիս ժամս միանգամ առնու հիւանդն
դրգալ մի սեղանոյ առ իւրաքանչիւր նուագ. մինչև
պատճառեսցի փսխումն, կամ լուծումն որովայնի,
և կամ քիրան. և իբրև սկսանի դեղս այս ներգոր-
ծել ընդ բերանն, յայնժամ օրէն է խափանել զգոր-
ծածութիւնն, և տալ ստէպ ստէպ հիւանդին զջուր
գաղջ, որ եռացուցեալ իցէ երիցկաւ. այս կերպս
է յոյժ պատշաճագոյն և անվնաս սխտաժէտաց։
Բայց հայեցեալ 'ի չափ հասակի սխտակրին, պարտ
է երբեմն նուազել, և երբեմն առաւելուլ զքա-
նակութիւնն ործացուցիչ դեղոյ։ Իսկ եթէ իցէ էբէքաքուանան, պարտ է լինել երեսուն կամ քա-
ռասուն կշիռ ցորեան՝ վասն միոյ չափահասակի.

այլ իբրև սկսանի փսխու�մն, յայնժամ պարտ է նոյնպէս առատօրէն ըմպել զխաշուն երիցկի՝ ըստ վերոգրեալ օրինակին։ 'Ի դիպուածս ընդհատ տենդի՝ պատշաճ է տալ զփսխողականն երկու կամ երեք ժամ յառաջ քան զվերադարձուն ջերմութիւն, և ցպահանջման հարկի մարթ է կրկնել զնոյն փսխողականն, 'ի դիպուածս օրըստօրեայ տենդի՝ յերկրորդում աւուրն։ Իսկ 'ի դիպուածս գարնանային և աշնանային ընդհատ տենդից՝ երկու կամ երեք աւուրբ զկնի։ Փսխողականքն բաց 'ի մաքրելոյ զստամոքսն, շարժեն միանգամայն զոգիս մարմնոյ, դիւրապատրաստ յօրինեն զարտաշնչութիւն մորթոյ մարմնոյն, առաջնորդեն 'ի լաւագոյն մարսողութիւն կերակրոց, թուլացուցանեն զուժգնութիւնն ընութիւն, և սովորաբար առանց իրիք նպաստաւորութեան այլոց դեղորէից՝ առողջացուցանեն զախտակիրն։

'Ի դիպուածս ընդհատ տենդից ոչ միայն օգտաւէտ և վայելուչ է երբեմն գործածուին լուծողական դեղորէից, այլ միանգամայն և հարկաւորապէս պահանջին. վասն որոյ պարտ է 'ի վար արկանել զլուծողականս, եթէ զկնի փսխողականացն ախտակիրն տակաւին բաց 'ի ջերմութիւն զգայ զանհամութիւն բերանոյ, զանախորժակութիւն, զցաւ երիկամանց և միջաց, և զանհանգստութիւն սրտի և կրծոց, և այլն։ Բայց որովհետև քաջայայտ ցուցաք, եթէ 'ի դիպուածս յայս փսխողականն է յոյժ պատշաճագոյն և շահաւէտ, իսկ լուծողականն սակաւ, և երբեմն կարևոր, նմին իրի եթէ ախտակիրն զգայ զվերոյասացեալ նշանսն, պարտ է յայնժամ 'ի վար արկանել զհետագայ լուծողականն, առ 'ի մաքրել զփորոտիսն 'ի միջահատեալ աւուրս ջերմութիւն, կամ ութ ժամ յառաջ քան զգալուստ ջերմութիւնն։ Առ 24 կշիռ ցորեան շիարաբբա լոսեալ 'ի փոշի մանրամաղ, և տրամ մի խաշնդեղ, խառնեալ եռացո՛ վեց ունկի ջրով, և յաւել 'ի նոյն երկու արամ սալ տի կլաւպէռ, և մատո՛ հիւանդին 'ի պահ առաւօտու. և եթէ հարկաւոր լինիցի, վերատին կրկնեա՛։

Երակահատութիւն ևս պատշաճի երբեմն 'ի դիպուածս ընդհատ տենդի, բայց 'ի սկզբան անդ հիւանդութեան, և այն առաւել 'ի սատականալ և 'ի զայրանալ ջերմութիւն ևն. այլ 'ի վերայ այսր ամենայնի զգուշանալ պարտ է մի հոսեցուցանել զարիւն չա-

փոքանց, չորս ունկի բաւական է վասն միոյ չափա-
հասակի, և այն ևս՝ եթէ իցէ զարկն խիստ, լի, և
արագ. որովհետև միշտ վասնզ 'ի վերայ կայ յայս-
մանէ: Զկնի այսոցիկ փսխողական դեղոց, օրէն է
անվեհեր մերձեցուցանել զքինաքինա: Ա՛ռ երկու
կամ չորս ունկի՝ ազնուագոյն քինա, և լոսեա 'ի
փոշի յոյժ մանրամաղ, և բաժանեա 16 հաւասարաչափ
մասունս, և տուր ըմպել տենդոտին կամ բաժակ մի
գինեաւ, և կամ թորմուխն երիցկի. և մարթ է ևս
հատադեղ յօրինել ընդ բաւականաչափ շարապին
կիտրոնի: 'Ի դիպուածս օրըստօրեայ տենդի պարտ է
հիւանդին ընդունել յամենայն երկու ժամու մէն մի
մասն 'ի վերոյբաժանեալ քինաէ մինչև ցհինգ կամ
ցվեց և կամ ցեօթն անգամ յաւուրն, բաց 'ի ժա-
մէն յորում 'ի վերայ գայ տենդն: 'Ի դիպուածս
եռօրեայ տենդի պարտ է 'ի վար արկանել զայսոսիկ
մասունս քինաի յամենայն երիս ժամս միանգամ:
Իսկ 'ի դիպուածս քառօրեայ և հինգօրեայ տենդից
'ի չորս ժամու միանգամ. բայց միշտ նկատել արժան
է, զի 'ի գործ արկցի արտաքոյ ժամանակի ջերմուեն:

Այլ եթէ հիւանդն չկարասցէ միանգամայն ընդ-
ունել զայդպիսի մեծաքանակ մասունս քինաի, մարթ
է բաժանել զայն մի մասն յերկուս կամ յերիս մաս-
նիկս, և 'ի կիր արկանել յիւրաքանչիւր ժամու միան-
գամ 'ի դիպուածս օրըստօրեայ տենդի. և յամենայն
երկու ժամու միանգամ 'ի դիպուածս եռօրեայ տեն-
դի. իսկ յերիս ժամս միանգամ 'ի դիպուածս քառօ-
րեայ տենդի: Իսկ տղայոց և երիտասարդաց եղելոց
'ի չափ հասակի 12, 15 ամաց, կամ 'ի վեց ամէ մին-
չև ցութ և տասն ամ, պարտ է 'ի գործ արկանել
սակաւ քանակութիւն. ուստի օրէն է նկատել 'ի հա-
սակն, 'ի խառնուածն մարմնոյ և 'ի յուժգնութիս
նշանաց, ևն: Քինաքնան վերոյեդեալ եղանակաւ 'ի
կիր արկեալ՝ անվրէպ պատճառէ զբժշկութիւն ըհատ
տենդից. բայց չէ՛ օրէն ախտակրաց իսկ և իսկ 'ի
փարատիլ 'ի նոցանէ ջերմութենն՝ զանց առնել զգոր-
ծածութիւն նորին, այլ պարտ է յարատևել 'ի գոր-
ծածութեէ նորին մինչև 'ի հաւաստի և 'ի կատարեալ
բուժումն ախտից կամ տենդից: Բազումք 'ի կիր արկ-
կանեն զքինան ցայն վայր՝ մինչև տեսանեն նշան ինչ
փարատելոյ ջերմութեէ, և յետ այնորիկ 'ի բաց թող-
ուն. և զկնի քանի ինչ ժամանակաց վերստին դառ-

նայ 'ի նոսա տենդն սաստկագին և գժնդակագոյն ինն եղանակաւ։ Բարեգոյն և սեպհական եղանակն առ 'ի խափանելոյ զվերագարձ տենդից, է յարաւեալն 'ի գործածութիւն սակաւամանեայ քինայի ժամանակս ինչ, և զկնի փարատելոյ, և դադարելոյ նշանացն։ 'Ի նոյն իսկ ժամանակի գործածութեամբ քինայի, մարթ է տալ հիւանդին զհետագայ թանձրանիւթս։ Առ մի և կէս ունկի՝ սուկո տէլլէ ֆոլիէ տի թառասսաքո, և սուկո տի ֆումմոսթէռնո, կամ չիքոռիա, այլև նոյնչափ՝ սուկո տի քռէսչիոնէ, կամ պէք-քապուռնճա, և սուկո տի չէռֆոլիո. առ և երկու տրամ՝ սալ տի ինկիլթէռռա, և մի տրամ՝ ռասպառպառո։ Ջամենեսին զսոսա պարտ է ճմլեալ 'ի միասին յանկանի՝ զանգել բարդք ընդ միմեանս, մինչև լինել մի բաղադրութիւն, և տուր ըմպել հիւանդին երկու անգամ յաւուրն 'ի պահ առաւօտուն՝ խառն ընդ սկահակ մի արգանակի մսոյ, որ թեթևապէս լուծէ զորովայնն, լուծանէ զիցանս լեարդի, փայծեղան, և այլ ընդերաց. զօրացուցանէ զստամոքսն, և նպաստամատոյց լինի առողջութեան. և զայս պարտ է 'ի վար արկանել մինչև ցվնդ և ցվեց օր։

'Ի դեպուածս յորում տենդն ընդհատ՝ լինի խըստամբակ յամառեալ, և իբր անփարատելի, յայնժամ քինայն պարտի լինել առաւելաքանակ։ 'Ի սոյն կարգ դասին և դեղորայքն կոչեցեալք յիտալացւոց՝ ֆէպպռիֆուկի, այսինքն ջերմեահալածք. որպիսի են՝ սքօռցա տի քասթակնո տ' ինտիա, կռացիօլա, սալէ տի սբիկո սալվաթիքո։ Զորօրինակ. առ ունկի մի՝ սքօռցա տի քասթակնո տի ինտիա փոշիացուցեալ, 40 կշիռ ցորեան՝ կռացիօլա բռէբառաթա, և մի տրամ՝ սալէ տի սբիկո սալվաթիքո, և բաւականաչափ շիրօբբօ տի ֆիօռ տի բէսքո, խառնեալ զանգեա զամենայն 'ի միասին, և արա մածուն։ 'Ի մածունէ ասսի յերիս ժամս միանգամ առցէ տենդոտն մշկահոտ ընկուզաչափ առ իւրաքանչիւր նուագ, բաց 'ի ժամէն յորում 'ի վերայ գայ ջերմութիւն։ Բաց 'ի սոցանէ և 'ի սոցին նման դեղոցէից, երկար փորձառութիւն ուսայ ես զնշանաւոր զօրութիւն դեղոյ միոյ, որ բաղադրի այսպէս։ Առ չորս ունկի 'ի ցքահանէ եղուզեալ ջուր անանխոյ, և քսան շիթ լաւտանո լիգուիսաս, և մի ունկի շիրօբբօ տի քէռմէզ։ 'Ի հեշտաբմպելոյ ասսի հինգ ժամ յառաջ

քան զգալուստ տենդի արբցէ տենդոտն գրգալ մի սեղանոյ առ իւրաքանչիւր կէս ժամ, մինչև լեցի ասան գրգալ յաւուրն, միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի հինգ օր. և տեսցի օգտութիւն սորա մեծ 'ի կազդուրել զթուլութի ջղաց և ստամոքսին, 'ի խափանել զյորդութիւն քրտանց, և 'ի փարատել զտենդս յամառեալս։

'Ի դիպուածս եռօրեայ, քառօրեայ և հինգօրեայ տենդից, որք ստէպ պատահին 'ի վերջն աշնան և 'ի սկիզբն ձմեռան, յայնժամ գառնահամ և համեմային գեղորայքն են յոյժ պատշաճք և կարևորք. որպիսի են՝ ճենցիանան, կեղև նարնջոյ, կոճապղպեղն, սպիտակ կինամոնն, սէռբէնթառիա վիռճինիանա, և կամ որպիսի և իցէ այլ ինչ ջերմահամ և խթիչ արմատ։ Իսկ 'ի դիպուածս յորում ջերմութիւնն լինի յաճախակի և կարի ուժգին, յայնժամ առաւել ապահով և պատշաճագոյն է 'ի գործ արկանել սալէպի թառթառօ՝ փոխանակ վերոյգրեալ համեմոց։

Յորժամ ընդհատ տենդքն ոչ լինին կատարելապէս և իսպառ բուժեալք, բազում անգամ փոխարկին յսխատս ջրգողութե, դալկան, ևն. վասն որոյ փոյթ մեծ ունել պարտ է առ 'ի վար արկանել զամենայն հնարս կարելիս՝ մինչև արմատաքի խլել զայն ներքատպէս նախ քան զապականիլ հիւթոց և եղծանիլ խառնուածոց։ Ադարև ոմանք 'ի դիպուածս ընդհատ տենդից 'ի կիր առնուն զմիջոցս և զհնարս դիմամարտս, որպիսի են՝ ըմպել զոգիաւոր հեղանիւթս, ընկենուլ զտենդոտն 'ի գետ կամ 'ի ջուր ցուրտ, ևն. այդպիսի հնարք երբեմն կարեն օգտակար լինել, բայց միշտ են վտանգաւոր, և բազում անգամ ևս մահաբեր. մանաւանդ եթէ տենդոտն զգածեալ իցէ իւրք բորբոքմամբ, և կրեսցէ զերկիւղ մեծ։ Ակնատես եղաք միանգամ երագահաս մահուան ուրուք տարաբախտի, որ էարբ զոգիաւոր հեղանիւթս ինչ 'ի դիպուածս ախտիս՝ խորհրդով ոմանց անձանց, առ որս համարեալ էր հեղանիւթն այն իբր դեղ անվրիպելի։ Գոն և այլ բազում դեղք զզուականք, որպիսի են ոջիլք, մլուկն, թելք ատրդի ոտաստանից, գոռեխն, սունկն, ևն. որք թէպէտ իբր հրաշապէս երբեմն ապաքինեն զտենդս, բայց հատարակօրէն այդ օրինակ ապաքինեալ անձանց ստէպ ստէպ վերադարձ պատահէ։ Սէպհական և անվրէպ ներգործիչ դեղն

'ի դիպուածս ընդհատ տենդից՝ է քինաքինա. և ստուգիւ հաստատեալ վկայեմ, եթէ քանիցս անգամ կարևոր զգուշութիւն և 'ի պատշաճաւոր ժամանակի 'ի գործ արկի զդեղս զայս, միշտ եղև օգտակար, և ոչ բնաւ վնասակար:

Կոռավարութիւն և դարմանք 'ի վերայ ընդհատ տենդից 'ի պղայս և 'ի մանկունս:

Դժուարին իմն է ապստքինութիւն փոքրիկ տենդակիր մանկանց և տղայոց, որովհետև ուր ուրեմն և հազիւ երբէք մարթ է տալ նոցա ըմպել զքինաքինա, և զայլ որպիսի և իցէ դեղս անախորժս. վասն որոյ արժան է պատրաստել զքինան շարապանման՝ յաւելլով 'ի նոյն քուն իւնչ կաթիլ էլիսիռէ, կամ սբիռիթօ տի վինթռիօլօ, որով բարեխառնի դեղն և համեղանայ. ուստի և լինի հեշտեաւ ըմպելի: Իսկ եթէ չիցէ հնարաւոր տալ նոցա զքինա, յայնժամ պարտ է 'ի վար արկանել միսթուռա սալինա: Սիէռօ տի լաթթէ վինօզօ ևս է ըմպելի իմն ազնիւ յոյժ և պատշաճագոյն մանկանց 'ի դիպուածս ընդհատ տենդից. յորոյ վերայ մարթ է յաւելուլ ևս փոքրիկ դեղգալ մի սբիռիթօ տի քօռնօ տի չէռվօ: Դարձեալ փոյթ ունել պարտ է տալ նոցա առնել շարժումն, որ լինի յոյժ օգտակար: Կերակրոցն պարտ է լինել սնուցիչ և սակաւաքանակ, և երբեմն երբեմն մարթ է տալ սակաւ ինչ ազնիւ գինի:

Յորժամ մանկունք ոչ լինին կարող ընդունելոց զքինան, յայնժամ պարտ է գրեթէ պատրաստել նոցա յետագայ եղանակաւս, զոր 'ի կիր արկանել մարթ է ևս չափահասից: Առ կէս ունկի ազնիւ քինա, և եռացո՛ զայն չորս ունկի ջրով, յոր յաւել կէս ունկի՝ իւղ քաղցր նշոյ, և վեց կամ ութ շիթ լաւտանօ լիգուիսօ. և զգրեխս զայս 'ի գործ արկ 'ի չորս ժամու միանգամ, կամ ևս առաւել յաճախ ըստ պահանջելոյ հարկին: Ոմանք 'ի մանկանց գտին զառողջութիւն 'ի դիպուածս տենդիս, պնդելով ընդ մէջս զդօտի իմն, յորոյ միջի պարուրեալ կայր քինա փոշիացուցեալ:

Հնարք 'ի կիր արկանելոյ 'ի դիպուածս ընդհաս պէնդիոց։

Հնարքք շահաւէտք և օգտակարքք 'ի դիպուածս սիւ-
տիս են հրաժարիլն 'ի պատճառացն՝ յորոց յառաջ
գայ տենդս, զորոց լիովին խօսեցաք 'ի վերս անդր։
Բայց կարևոր և օրինաւոր համարիմք ասասանօր և
յաւելուլ զկերպ իրիք դեղորէից, զոր օրէն է 'ի
վար արկանել նոցա, որք բնակին 'ի խոնաւ և 'ի ՀՆա-
սաբեր օդոց վնճակեալ տեղիս, և ևս նոցա, որք բա-
զում անգամ զվորձ առեալ են այսր տենդի։ Ա՛ռ
ունկի մի՝ ազնիւ քինա, կէս ունկի՝ սէռբէնթառիա
վիռճինիանա, և նոյնչափ կեղևն նարնջոյ։ Զամենե-
սին զսոսա պարտ է լոսել յանկանի, և դնել թրմոց
'ի քսեսա մի օղի զաւուրս հինգ կամ վեց. ապա քա-
մեա զայն կտաւով յանօթ ապակեայ, և 'ի գործ արկ
երկուս կամ երիս բաժակս յաւուրն։

Եթ և այլ դեղ՝ որ առանց գրգռելոյ առաւելու
զոյժ ստամոքսին և ջղացն, որք դանդաղ գտանին.
այն է թինթուռա տի քինա սէրլ՝ առուզամ. որ այս-
պէս բաղադրի։ Ա՛ռ ունկի մի՝ ազնիւ քինա, վեց
տրամ՝ կեղևն նարնջոյ, մի և կէս ունկի՝ սէռբէն-
թառիա վիռճինիանա, և քսան կշիռ ցորեան քոչէն-
նիլիա։ Զայս ամենայն մանրեա 'ի մէջ անկանի, լից
յանօթ ապակեայ, և դիր թրմոց 'ի լիտր մի ցքի,
կամ ոգի գինւոյ զաւուրս երիս կամ չորս. և յետոյ
քամեա զայն ընդ կտաւ։ 'Ի հեղանիւթոյ ասասի որբ-
ցէ հիւանդն երեք անգամ յաւուրն՝ զկշիռ երից ունկ-
կեաց։ Իսկ նոքա որք ոչ կամին զգործածուն ցքւոյ
կամ ոգւոյ գինւոյ, կարեն 'ի տեղի այնոցիկ 'ի կիր
առնուլ զազնիւ գինի։

Եւ եթէ ոք ընդ բազում ժամանակս կրեալ է
զայսպիսի տենդ, յայնժամ փոխանակ սոցին մարթ
է ընդ սակաւ ինչ եօթնեակս 'ի գործ ածել զհետա-
գայ հեղանիւթս։ Ա՛ռ երկու ունկի՝ էնուլա քամբա-
նա, և նոյնչափ քալամս առոմաթիքս, և մի բուռն՝
չէնթառուռէա մինոռէ, և երկու ունկի խարտաշս
երկաթոյ։ Զայս ամենայն լոսելով 'ի մէջ անկանի
ամրկ յապակեայ անօթ, և դիր թրմոց 'ի յերկու
քսեսա սպիտակ գինի զաւուրս չորս. ապա հեղ ըզ-
գուշութիւն զհեղուկն յայլ ապակի անօթ, այնպէս

զի մի՛ խառնեսցի մրուրն ը պայծառ հեղանիւթոյն. և տուր ըմպել հիւանդին երկու անգամ յաւուրն՝ ը չափու երկուց կամ երից ունկեաց։ Զնոյն ազդեցութիւն մարթ է ստանալ ծաղբելով 'ի բերանն զարմատն ճէնցիանայի, կամ քալամօ առօմաթիքօ, կամ զքինա, և։ Ամենայն դառնագին դեղորայք, մանաւանդ որք բնութեամբ են խթիչ՝ են յոյժ օգտակար 'ի դիպուածս ընդհատ տենդից։

ՅՕԳՈՒԱԾ Գ.

'Ի վերայ չարաբար տենդից, զոր Իպալոյիտ Լուքն՝ Փէպպոէ Բէռնիչիօզա։

Տենդս այս չարաբար՝ է ախտ ինչ դժնդակ և նբր թիւնաւոր, յազգէ ընդհատ տենդից, որ սովորաբար առաւել տիրապետէ յաշնան՝ քան յայլ եղանակս տարւոյ։ Առաւել գտանի ախտս այս յեւրոպիա, և յայլ նահանգս ինչ խգալիոյ, մանաւանդ 'ի տեղիս ցածագոյնս և գէՃս, և այն առաւելապէս 'ի գիւղականս, որք բնակին յայդպիսի գիՃային վայրս, և ապրին գժուարամարսելի կերակրեղինօք։ Զնք տենդ ինչ այնքան շուտափոյթ մահահրաւէր խբրև զտենդս զայս. որ և բազում անգամ 'ի միջոցս քսան և չորից ժամուց, կամ յերկուս և յերիս աւուրս ապանանէ. յայն սակս պատշաՃ վարկաք տենդ չարաբար անուանել։ Երկոտասան են տեսակք այսր տենդի, որք զանազանին 'ի միմեանց անուանադրութիւնք, էրևութիւ, նշանաւ, այլովքն հանդերՃ. զորս մի առ մի տեսցես բացատրեալ յառաջիկայդ։

Առաջին տեսակն կոչեցեալ յիտալացւոց՝ Ֆէպպրէ բէռնիչիօզա քօլէռիքա, այսինքն տենդ չարաբար և զայրագին, որ պատահի յանբարեխառնութէ և յառատութէ սուր և ապականեալ մաղձից, և այլ հիւթոց, յանմարսութէ, և 'ի կերակրոցն, որք դիւրաւ թթիւին 'ի ստամոքսն. որպիսի են կոգի, Ճարպն մսոյ, քաղցրաւէնիք, ձմերուկն, սեխն, կեռասն, և այլ միրգք, որք են զով և թուլացուցիչ բնութիւք։

Երբեմն ևս պատճառի յուժդին լուծիչ և ործացուցիչ դեղորէից, 'ի մեսասակար առնկոց, և 'ի թիւնաւոր դեղորէից մտելոց 'ի ստամոքսն, 'ի սաստիկ կրից և յերկիւղէ, 'ի ցրտութէ, 'ի տօթադին ջերմութէ, և 'ի թանչացաւութէ։ Սա նախ բերէ սաստիկ լուծողութէն ինչ 'ի վերուստ և ստորուստ, և ապա ուժգին ջերմութէ 'ի ծագն ստամոքսի և աղեաց, անձկութիւն, ճնշումն կրծոց, կերկերումն ձայնի, և ձգտումն։ || Ականատես եղաք 'ի դիպուածս ախտիս հիւանդաց ոմանց՝ արտաքսել զկղկղանս հարիւր անգամ 'ի մէջ քանի ինչ ժամուց || ։ տկարանայ տեսութէն աչաց ախտակրին։ և եթէ այսպիսի լուծողականութէն յարատևէ, ոչ է մարթ նՃ այլևս պատրաստարիլ և սթափիլ։ Դարձեալ, ախտակիրն կրէ զծարաւ սաստիկ, և զարկն բազկի լինի արագ, մանր, գաղտնագոյն, և անհաւասար։ իսկ 'ի յարատև յառաջանալ ախտիս զարկն նուազի այնքան՝ մինչև լինի անզգալի։ ծայրք անդամոց ցրտանան։ 'ի վեր երևի ցուրտ քիրան միայն յերեսս։ մէզն լինի արգելական, և ստէպ ստէպ զգայ զդողդոջումն սրտի։ ձեռք 'և ոտքն ցրտանան և փոխարկին 'ի գոյն կապոյտ։ կրէ զոյգ ընդ ախտիս և զթալկութէն, զուշագնացութէն և զհեծկլտանք։

Այլ գիտել արժան է, զի 'ի դադարել տենդի՝ զոյգ ընդ նմին դադարին և վերոյիշեալ նշանքն բոլորովին։ Բայց եթէ ախտն լիովին թափեալ ելցէ զթոյն իւր, և արմատացեալ, յայնժամ լինի յոյժ վտանգաւոր և երկիւղալի, և առաւել քան զամենայն աղեսալի է այն, յորժամ վերսին դարձ առնէ լուծողութիւնն այլովքն հանդերձ։ Դարման նորա են խթիչ սեղմիչ և խաղաղիչ դեղորայքն։ որպիսի են՝ ջուրն կինամոնի կամ անանխոյ, լիգուօռէ անօտինօ, և լաւտանօ լիգուիտօ։ Զոր օրինակ։ առ երկուունկի՝ ջուր կինամոնի, կամ անանխոյ։ և երեսուն շիթ՝ լիգուօռէ անօտինօ մինէռալէ հօֆֆման։ յաւելով 'ի նոյն 24 շիթ՝ լաւտանօ լիգուիտօ։ և տուր ըմպել հիւանդին յամենայն ժամու մէն մի դրդալ սեղանոյ մինչև ցդադարումն ախտիս։ Ըմպելին նորա պարտի լինել ջուրն խորովեալ հացի։ եթէ գտանիցի առ ձեռն պատրաստ՝ օգտակարագոյն ևս է հացն վարսակի։ Եթէ այսու նպաստիւք ոչ դադարի փըսխումն և լուծումն որովայնի, յայնժամ օրէն է տալ

նմա ժամէ 'ի ժամ երկու դրգալ սեղանոյ ճիւլոպ-
ոպէ տի սալինա։ յորոյ վերայ պարտ է յաւելուլ 15
կամ 20 կաթիլ լաւանս լիգուիտս։ Նոյնպէս և
օգտաւէտ է թրմոցն երիցկի, և սիէռս տի լաթթէ
վինոզս ֆոռթէ՝ առ 'ի պահպանել զոյժ սխտակրին,
և առ 'ի շարժել զարտաշնչութեան մարմնոյ։ Նոյնպէս
և կարևոր և օգտակար է թանալ զոտս սխտակրին
'ի մէջ ջերմագին ջրոյ, և յետոյ բարուք չորսցու-
ցեալ ջերմ պատառաւ՝ դնել 'ի ներբանն ոտից ըզ-
ջերմ կղմինտրա։ Իսկ եթէ կիրառութիւն այսոցիկ
դեղորէից չիցէ հնար ստանալ զտենչացեալ ներգոր-
ծութեան և զօգուտն, յայնժամ պարտ է տալ սխտա-
կրին վեց անգամ յաւուրն ընկուզաչափ զհեռագոյ
դեղն։ Առ երկու տրամ՝ տալ տի սոտա, զոր մարթ է
լուծանել բաւականաչափ հիւթով կիտրոնի՝ յաւել-
լով 'ի նոյն տրամ մի էթէռէ։ երկու տրամ՝ թին-
թուռա տի սուչչինս, չորս տրամ՝ քոնֆէցիոնէ ճիա-
չինթինա, և նոյնչափ՝ շաքար սպիտակ և մաքուր։

Ընդ այսոցիկ գիտել արժան է, զի զկնի դադար-
մանն տենդիս պարտ և պատշաճ է փոյթ ընդ փոյթ
ձեռնամուխ լինել 'ի գործածութեան քինա քինայի առ
'ի խափանել զվերադարձումն այսպիսի դժնդակ և
զայրագին տենդից։ Յայսպիսի դիպուածս օրէն է
լոյծ պահել և զորովայնն ոսկապէս 'ի ձեռն թեթև
գրեխաց՝ յօրինելոց երիցկաւ, և այլ խթիչ դեղո-
րէիւք։ Կերակուրքն պարտին լինել սնուցիչ և կարի
սակաւ քանակութեամբ, և չափաւոր ինչ շարժումն է
ևս շահեկան։

Երկրորդ տեսակն կոչի յիտալացւոց՝ ֆէպպրէ
բէռնիչիոզա տիսէնթէռիքա։ այսինքն տենդ չարա-
բար խառն ընդ արիւնային փորհարութեամբ։ Պատճառք
սորա գրեթէ նոյն են ընդ պատճառաց չարաբար և
զայրագին տենդի։ որպէս աւանդեցաւ վերագոյնդ։
'Ի դիպուածս սխտիս հասարակօրէն զուգընթաց լի-
նի ջերմութեան ուժգին, արիւնային փորհարութիւն,
խիթք սրբանին, սասաիկ ցաւ ստամոքսի և ստորին
որովայնի, նոզկանք սրտի, և հեծկլտանք։ լեզուն
լինի չոր և խիստ, մեղն թանձր և քրքմագոյն, զարկ
բազկին լինի մանր և արագ։ կղկղանքն 'ի սկզբան
անդ լինի մաղձագոյն, ապա մաղասային, հուսկ յե-
տոյ արիւնային։ երբեմն սխտակիրն բռնութեամբ չար-
ժի 'ի փսխել։ այլ 'ի դադարիլ տենդի՝ զոյդ ընդ-

նմին անհետ լինին և նշանքն։ Եւ եթէ տենդս այս երեք կամ չորս անգամ դարձ առնէ մի զկնի միոյ, ոչ է մարթ ախտացեալին այլևս պատասպարիլ և սթափիլ. որոյ դեղ է նախ՝ տիտանաքուտիս, կամ լաւտանո լիգուիտոս, ջուրն անանխոյ կամ կինամոնի. և ապա քինա քինա առաւօրէն։

Երրորդ տեսակն կոչի՝ ֆէպրուէ բէռնիչիօզա սուպքռուէնթա, կոչի և ըստ նախնեաց՝ ֆլուսսօ էբանթիքօ. այսինքն հոսուն լերդական։ Տենդս այս չարաբար՝ գուշակի 'ի ստէպ ստէպ արտաթորմանէ մսագոյն հիւթոց խառն ընդ կղկղանաց, հանդերձ նուազմամբ սրտի, ցրտուք ձեռաց և ոտից, նուազմամբ ձայնի, և տագնապաւ շնչառութեան։ Դարձեալ՝ որպէս 'ի դիպուածս այլոց չարաբար տենդից, նոյնպէս 'ի դիպուածս յայս թուլանան զօրութիւնք ջղաց և բոլոր մարմնոյ. զարկ բաղկին բաղխէ մանր, և նուրբ. որոյ սեփական դեղ է քինա քինա, զոր օրէն է տալ առաւօրէն։ Այլ եթէ տենդս այս վերակրկնէ, անվրէպ սպանանէ։ Բայց երբեմն ևս դէպ լինի, եթէ ախտակիրն իցէ երիտասարդ, և վիճակեալ զօրեղ կազմուածոց, զի յերկարատևէ ախտն, և յայնժամ կոչի՝ քռոնիքա։

Չորրորդ տեսակն կոչի՝ ֆէպրուէ բէռնիչիօզա քառտիանա։ Տենդս այս չարաբար՝ ճանաչի 'ի սաստիկ ցրտոյ, 'ի ջերմութէ, ընդ որում զուգընթաց լինի և սրագոյն ելն ցաւ 'ի վերին ծագն ստամոքսի, 'ի ստէպ ստէպ ուշագնացութէ, 'ի տաղտկութենէ, 'ի տժգունութէ դիմաց, 'ի հառաչանաց, 'ի հեալոյ, 'ի կազկանձմանէ, և 'ի փոքրիկ բաղխմանէ շնչերակին. որոյ դեղ է ջուր կինամոնի, լաւտանո լիգուիտոս, լիգուօռ անիսոնիս. և այլ սոցին նման խթիչ և խաղաղացուցիչ դեղորայք, և յետ այսոցիկ քինա քինա։ Գիտելի է՝ եթէ տենդս այս չորս կամ հինգ անգամ դարձ առնէ, անվրէպ սպանանէ։

Հինգերորդ տեսակն անուանի 'ի նոցանէ՝ ֆէպրուէ բէռնիչիօզա էմէթիքա տէլ սօվաճօ, այսինքն չարաբար տենդ ործացուցիչ՝ գտեալ 'ի վերին ժամանակս 'ի սօվաճօ բժշկէ։ Սա նախ բերէ դողումն և ջերմութիւն սաստիկ, և ապա ստէպ ստէպ փրսխումն, յարակցեալ 'ի նոյն ցաւ ստամոքսի, և ուժգին ծարաւ. որոյ դեղ նոյն է ընդ վերնոյն։ Բայց եթէ զարկն լինի ուժեղ և լի, և 'ի վեր երևին նշանք

եռացման, յայնժամ նախ պիտոյ է երակահատութիւն, և ապա 'ի կիր առնուլ զքինաքինա։

Վեցերորդ տեսակն յորջորջի՝ ֆէպպռէ բէռնիչիօ զոս տիաֆօռէթիքս. այսինքն չարաբար տենդ քրտնաբեր։ Սա նախ բերէ քիրսն յորդառատ, և ապա դողումն և ջերմութիւն ուժգին, զուգընթաց ցրտութեամբ անդամոց, և թուլութիւն ջղաց և բոլոր անդամոց, և տագնապաւ շնչառութիւն. մինն 'ի մեծագոյն հիւսուց որ միշտ կիցգոտանի ընդ ախտիս՝ է արագումն տուրն և առութիւն շնչոյ, և հաշումն բովանդակ մարմնոյ, մանաւանդ մանրութիւն, արագութիւն, և անզօրութիւն զարկի բազկին։ Երբեմն մարթ է 'ի դիպուածս այսորիկ տենդի ստանալ զապաքինութիւն, եթէ փոյթ ընդ փոյթ 'ի կիր արկանիցի քինա քինա 'ի սկզբան անդ տենդիս. բայց եթէ ախտն ժամանեսցէ յապտիճան ինչ, հասաբակօրէն անպտուղ և վայրապար լինի նպատն քինա քինաի, և այլ ամենայն դեղոցէից, և առաւել քան զամենայն վոտանգաւորագոյն է այն, յորժամ վերագարձի տենդն։

Եօթներորդ տեսակն կոչի՝ ֆէպպռէ բէռնիչիօզա սինքօբալէ, այսինքն չարաբար տենդ թալկացուցիչ։ Սա գուշակի 'ի յաճախակի թալկացմանէ, որ 'ի դոյզն ինչ շարժմանէ ծնանի նուազումն սրտի. դողումն և ջերմութիւն որ զուգընթաց լինի ընդ տենդիս այսորիկ՝ երբեմն լինի առաւել, և երբեմն նուազ. զարկ բազկին հատանէ արագ, մանր յոյժ, և նուրբ. քիրսն 'ի վեր երևի միայն 'ի ճակատն և 'ի պարանոցն. աչքն ակարանայ, և մթագնի. և եթէ ոչ աճապարեալ փութով դարմանեսցի, մեռանի անվրէպ. որոյ դեղ է հոտառաւալ զերս զօրացուցիչս և սթափիչս, որպիսի են՝ մելիսսէ, լիգուօռ անոմինօ, և՝ այլ, զոր բուցանելով ստէպ քինաքինա։

Ութերորդ տեսակն ասի՝ ֆէպպռէ բէռնիչիօզա ալճիտա. այսինքն չարաբար տենդ սառուցիչ։ Սա ճանաչի 'ի սաստիկ դողդոջմանէ և 'ի ցրտոյ. իբր զի թէ ոք ըմբռնեսցի յախտէ յայսմանէ, առ ժամայն ամենայն անդամք մարմնոյն ցրտացեալ սառին, մինչև լինել իբր դի այլագունեալ գլխովին. զոր յայն սակս կոչեն տենդ ցրտասառոյց. և ցրտութիւնս այս յարատևեալ մնայ մինչև ցաւարտ տենդիս՝ առանց ջերմանալոյ ամենևին. սովորաբար զուգընթաց լինի և ծարաւ ինչ ուժգին, չորութիւն և կարծրութիւն լե-

զուի, և կերկերումն ձայնի։ 'Ի վախճան տենդիս, (եթէ կեցցէ ախտակիրն) 'ի վեր երևի ջերմութիւն ինչ թեթև, և տարածանի 'ի զանազան մասունս մարմնոյն՝ մանաւանդ 'ի ծայրսն։ և յայնժամ օրէն է իսկ և իսկ ձեռնամուխ լինել 'ի գործածութիւն քինաքինայի առ 'ի արդելուլ զվերադարձումն այսորիկ տենդի չարաբարի։

Ինն երորդ տեսակն անուանի՝ ֆէպպրէ բէռնիչիօզա բլէուռիթիքա, այսինքն տենդ չարաբար կշտայլին։ զոր մարթ է ճանաչել 'ի ցրտոյ, 'ի սարսափոյ, որում զհետ գայ ջերմութիւն, պտոյտ գլխոյ, նողկանք սրտի, փսխումն, և ծարաւ սաստիկ։ Եւ զկնի այսոցիկ հիւանդն զգայ զցաւ ինչ ուժգին և խայթիչ 'ի մի կողմն կրծոց կամ 'ի կուշտն, մանաւանդ 'ի վայրկենի՝ յորում ախտակիրն հաչայ։ Զարկն բազկի լինի արագ, խիստ, և անկանոն, մէջն թանձր և մըրրալից։ կրէ հաղ սաստիկ, և ցնորումն, և գժուաբաշնչութիւն, որոյ գեղ նոյն է ընդ գեղոց բորբոքման թոքոց։ և 'ի դադարիլ նշանաց՝ օրէն է իսկ և իսկ ձեռնամուխ լինել 'ի գործածութիւն քինաքինայի ըստ եղանակին՝ զորմէ նշանակեցաք 'ի տեղի իւրում։

Տասներորդ տեսակն կոչի՝ ֆէպպրէ բէռնիչիօզա քօլիքա, այսինքն չարաբար տենդ խիթաւոր։ Ախտս այս հասարակօրէն զոյգ ունի ընդ իւր զանհնարին խէթս ստորին որովայնի և արգանդի, զփքախտուն, զնողկանս, զանձկութիւն, զործումն, զչորութիւն լեզուի, և զսաստիկ ծարաւ։ Զարկ բազկին լինի մանր և անկանոն։ երբեմն ևս հոսէ զքիրսն ցուրտ։ և գեղն՝ է գրեթէ կակղացուցիչ, ֆոմէնթա, արբուցանելով թիւրակէս, լաւատանս լիգուիտս, և այլ գեղս խաղաղիչս։ երբեմն մարթ է ևս երակ հատանել, եթէ իցէ զօրեղ և խիստ զարկն բազկին։ Եւ զկնի դադարման տենդին՝ օրէն է փոյթ ընդ փոյթ 'ի կիր արկանել զքինաքինա առ 'ի խափանել զվերադարձումն նորին։

Մետասաներորդ տեսակն ասի՝ ֆէպպրէ բէռնիչիօզա սօբօռօզա, այսինքն չարաբար տենդ թմբրեցուցիչ, կամ քնաբեր։ Յորժամ սկսանի ոք ըմբռնիլ յախտէս յայսմանէ՝ լինի թմբրեալ և ուիշեալ, մինչև լինել իբր ննջեալ կամ արբեալ անզգայ գլխովին, կրելով զուշաբարձուի։ երբեմն և զհետ գայ թլուատութիւն լեզուի, և երբեմն հեծկլտանք։ Եւ եթէ

տենդս այս երկու կամ երեք անգամ դարձ առնէ, անվրէպ սպանանէ. որոյ դեղ է երակահատութիւն, լուծողական գրեխք, խարանադեղ, և այլ դարմանք որք պատճառեն զանթափութիւն: Եւ յետ դադարման տենդիս օրէն է առատօրէն 'ի կիր արկանել քինաքինա:

Իսկ երկոտասանեերորդ տեսակն անուանի՝ Ֆէպպրէ բէռնիչիօզա չինէքա տէլ մոռանտի, այսինքն չարարար տենդ կուրացուցիչ՝ գտեալ 'ի մոռանտի բժշկէ: Ըմբռնեալքն յախտս յայս լինին իբր կոյր, զոյգ ունելով ընդ իւր զյօրանջումն, զկերկերումն, զցրտութիւն, զդողդոջումն, զանուժութիւն ձեռաց և ոտից, զանձկութիւն, զնողկանք սրտի, զծանրութիւն և զցաւ գլխոյ, զփսխումն, զթուլութիւն ջղաց և բոլոր մարմնոյն, զցնորումն, զթմբրութիւն, զծարաւ սաստիկ, զպտտումն գլխոյ, և զթախծումն: Չարկն բաղկի հարկանէ նուազ՝ խիստ՝ և անզօր. և մէջն մրրալից, և թանձր: Այլ 'ի դադարիլ տենդի՝ զոյգ ընդ նմին դադարին և նշանքն բոլորովին. և դեղն՝ երակահատութիւն, լուծողականք, և խարանադեղք: Եւ յետ աւարտելոյ զտենդն՝ 'ի կիր առնուլ զքինաքինա:

ՅՕԳՈՒԱԾ Դ.

'Ի վերայ անընդհատ կամ ջերմնակ Ֆեբրի, որ ասի յԻպոլոյոս՝ Քէպպրէ փօնրինոսա ափուռնա:

Տենդս այս անուանի սուր, այսինքն բորբոքիչ, և հասարակօրէն պատահի յերիտասարդութիւն՝ հզօրեալ զոյգոյն փսփկակեաց և արիւնոտ անձանց. և այս ծագի յընթացս ամենայն եղանակի, բայց առաւել յաճախակի 'ի գարնան և 'ի սկիզբն ամառան:

Պատճառք անընդհատ Ֆեբրի:

Սա պատճառի յայնմ ամենայնէ, որք գրգռեն զշընչերակս, առաւելուն զշրջանն արեան և ջերմացուցանեն զմարմնին բուլանդակ, որով ոյլոյլի նեղքին

բարեխառնութիւն, և տկարանան գործողութիւնքն։ Աչսպիսիք են՝ ինասակար յաւելուածքն, գժնդակ աշխատանքն, ննջելն ընդ արեգակամբ, առաւօրէն ըմպելն զոգիաւոր հեղանիւթս, կերակուրք չափազանց և գժուարամարսելիք, և զկնի կերակրոցն չառնել ինչ շարժումն։ Եւ էս այն ամենայն, որ նուազն և խափանէ զարտաշնչութեան մարմնոյ, որպէս ընկողմանելն 'ի վերայ խոնաւ գետնի, և 'ի բացօթեայս, խոնաւագոյն հողմունք, ըմպելն զցուրտ հեղանիւթս մանաւանդ զկնի քրտնելոյ, հակումն ընդ գիշերն ողջոյն։ Եւն։

Նշանք անընդհատ և սուր փէնդի։

Դիւրին և պարզագոյն ինն տենդն՝ ունի միշտ զոյգ ընդ իւր անհամաձայն նշանս, որք վերաբերին մասնաւորապէս առ այլասեռ ախտս։ Գլխաւոր նշանք աենդիս են՝ ընդհանուր ինչ ցրտութեն, որում ապա զհետ գայ սաստիկ ինն ջերմութեն և տապացումն, լեռութեն, խստութեն և արագ արագ հարկանելն զարկի բաղկին, չորութեն մորթոյ, որկորոյ, շրթանց, և բերանոյ։ սաստիկ ցաւն գլխոյ, միջաց, և երիկամանց, էս ոսկերաց և միանանց։ և կարմրութիւն աչաց։ Զկնի այս ամենայն նշանաց՝ 'ի վերայ գայ գժուարութեն ինչ 'ի շնչառութեն, թուլութեն ջղաց և բոլոր մարմնոյ։ անձկութեն սրտի, ճնշումն կրծոց, նողկանք, յօժարութիւն 'ի փսխել, ծարաւ սաստիկ։ ոչ ընդունի զհատատուն կերակուրս, և բնաւ ոչ ննջէ, որովք առաւել ուժաթափ լինի հիւանդն։ և հասարակօրէն լեզուն լինի կարծր և կարմրագոյն, և ունչքն չորագոյն։ մէղն լինի ջերմագին, նուազ, և կարմրերանգ։ որովայնն պինդ, և քիրտն սակաւ և խժային։ Նշանք առաւել յուռեդոյնք և վտանգաւորք՝ են ցնորումն, թրթռումն սրտի, ակամայ շարժումն միանանց և ձգանաց, հեծկլտանք, քիրտն կարի խժային և թանձր և ցուրտ, և սառիլն ծայրից անդամոց։

Խրատ Ի կառավարութիւն 'ի վար արկանելի 'ի դիպուածս պէնդիս։

Բայց որովհետև տենդս այս է վտանգաւոր, պէտք է փութապէս 'ի վար արկանել զբարեգոյն նպաստս և զհնարս, և յոյժ ձեռնտու լինի հիւանդին, եթէ 'ի սկզբան անդ բժիշկն կայցէ առ ընթեր։ Իսկ եթէ թոյլ տան ախտիս հաստատել և յառաջանալ, յայնժամ ամենայն գիտութիւնք և ճարտարութիւնք բժշկին բազում անգամ լինին անօգուտ։ Բայց 'ի գործածութեանէ վայրապար լինիմք յուսադիր 'ի նպաստս գեղոցէից՝ յորժամ ախտն լինի անապաքինելի՝ պատճառաւ յապաղման և այլանդակ կառավարութեան, և ուժանթափ լինելոյ հիւանդին։ Արդարև բժիշկք կարեն օգնական լինել բնութեանէ, բայց ճիգն և փոյթ նոցին լինի յարդիւնս՝ յորժամ բնութիւն չիցէ սիրեալ յախտէ անսի գլխովին։

'Ի վերոյասացեալ նշանաց այսորիկ տենդի՝ քաջայայտ երևի, եթէ հարկաւորապէս պահանջի կառավարուն և գեղոցայք ինն, որովք մարթ իցէ ցրուել զինաստակար հիւթս խառնեալս յարեան, շինուցանել զբորբոքումն արեան, և խաղաղել զդրգռումն շնչերակաց և նեարդից և սրտի։ Արդ՝ առ 'ի վճարել այսոցիկ ամենայնի հարկ 'ի վերոյ կայ բժշկաց կատարել զկանոնս և մերձեցուցանել զօգտաւէտ գեղս հիւանդին, որպիսի են՝ խաշուն վարսակի, զոր կոչեն՝ թիզանա տի ավէնա, կամ գարւոյ, և կամ շիճուկն կաթին, զոր ասեն՝ սիէռօ տի լաթթէ։ Յորս մարթ է յաւելուլ սակաւ ինչ հիւթ նարնջոյ, կամ ուվա սբինաի, և կամ լամքօնէի առ ախորժելի գործելոյ։ Շիճուկն կաթին բաղադրեալ ընդ հիւթոյ կիտրոնի, կամ քաղցր նարնջոյ, որ այն ինքն է փորթուգալ՝ է ըմպելի ինչ ազնիւ 'ի դիպուածս յայս։ Նոյնպէս շահաւէտագոյն է խաշուն կրամինաի խառն ընդ սակաւ ինչ օքսիմել սէմբլիչէի, կամ հիւնապի։ Այլև օրէն է նախ քան զամենայն փութալ զի մի արգելական մնասցէ օդն 'ի մէջ սենեկի հիւանդին։ որովհետև օդն սենեկի արգելեալ և թանձր գոլով խառնի ընդ գոլորշեաց՝ որք ըստ մեծի մասին արտաշնչին 'ի մորթոյ և 'ի շնչոյ հիւանդին, և անդրէն ը-

մոանեն 'ի թոքս, յերակս և 'ի ջիղս նորին, յորոց պատճառին այլևայլ ախտք վտանգաւորք. նմին իրի պարտ և պատշաճ է ստէպ ստէպ բանալ զպատուհանս և զդրունս սենեկի, առ 'ի դուրս վանել զախտարծարծ գոլորշիս, և վերանորոգել զօդն. չէ բաւական միայն մուծանել 'ի սենեակն զօդս զովացուցիչս և առողջարարս, այլ արժան է միանգամայն 'ի կիր արկանել զքացախս, զքափուր, զվեգենայ, կամ զայլ ինչ և ելցէ ազդու և հոտաւէտ իրս։

Ընդ այսոսիկ գիտել արժան է, զի 'ի դիպուածս յայս փոյթ մեծ ունել պարտ է 'ի բարեխառն պահպանել և ծածկել զհիւանդն, արկեալ 'ի վերայ ըզծածկարանս թեթեւս և չափաւորս, և մի զգեցուցանել զհանդերձս յոլովս, և որքան մարթ ելցէ՝ անձնապահ լինել 'ի խոնաւուէ հանդերձից կամ զգեստուց, և 'ի գիշերային դէզ օդոց, փակ պահելով զպատուհանս և զդուռն սենեկին. և պարտ է ախտակրին վայելել 'ի մեծի անդորրութիւն՝ եթէ ըստ մարմնոյ, և եթէ ըստ հոգւոյ, հրաժարիլ արժան է յամենայնէ յայնպիսեաց՝ որք նեղեն և գրգռեն զոգի, և զսիրտ։ Կերակրոցն ախտակրիս պարտ է լինել սակաւաքանակ և յոյժ թեթև. որպիսի են հացաթանն՝ յոր մարթ է արկանել սակաւ աղ հասապրակ, կամ սակաւ ինչ շաքար առ 'ի բարեխառնել։ Նոյնպէս կաթն նշոյ է պատշաճաւոր կերակուր 'ի դիպուածս յայս։ Դարձեալ՝ կարէ ուտել հիւանդն զպատուղս ինչ եփեալս շաքարաւ, զհաց խորովեալ և թոթախեալ յեփեալ ջուրն, կամ 'ի հիւթն դամոնի կամ հաղարջի։

Դարմանք ի դեղս 'ի կիր արկանելիս 'ի դիպուածս փենդիս։

'Ի դիպուածս յայս երակահատութիւնն կարի կարեւոր է՝ եթէ 'ի վեր երևին նշանք գրգռմանց կամ ամբոխման սրտի, կամ նեարդից, և կամ շնչերակաց, զորս մարթ է գուշակել 'ի հրակիզն բորբոքմանէ կամ 'ի ջերմութէ մարմնոյն, մանաւանդ յարագութէ, 'ի խստութէ և 'ի լեութէ զարկի բազկին, և ևս յանհնարին ծարաւոյ, և 'ի ցաւոց գլխոյ և մի-

ջաց, 'ի հրաշէկ փայլմանէ աչաց, և 'ի չորութէ մոր-
թոյ, լեզուի, բերանոյ, որկորոյ, շրթանց, և ուղն-
գաց. և չափ քանակութէ արեան հանելոյ օրէն է
լինել համաձայն զօրութէ ախտակրին, և ուժգնու-
թէ ախտին: Իսկ եթէ զկնի երակ հատանելոյ՝ եռա-
ցումն կամ ջերմուին առաւել զօրանայցէ, և զարկ
բազկին լիագոյն և խստագոյն ևս լինիցի, յայնժամ
արժան է կամ վերստին երակ հատանել, և կամ
տզրուկ դնել 'ի շրջակայս երասատանի: Բայց եթէ
զկնի միանգամ երակ հատանելոյ՝ զարկ բազկին լի-
նիցի փոքրիկ կամ թոյլ, և բորբոքումն նուազ, յայն-
ժամ չէ՛ օրէն բնաւ վերակրկնել զայն: Եթէ հի-
ւանդն ունիցի ճնշումն կրծոց և նոպկանս սառամոքսի
հանդերձ աղտեղութիւն լեզուի, և դառնութիւն բերա-
նոյ, յայնժամ օրէն է նպաստամատոյց լինել բնու-
թեն, տալով նմա զսակաւ ինչ տորտ ործացուցիչ,
խտալերէն թառթառս էմէթիքս ձայնեալ. զորոյ ըզ-
կերպն կիրառուէ մարթիս տեսանել 'ի վեր անդր,
գլ. ՠ. յօդ. Ը:

Բայց եթէ գործածութիւն այս ամենայն նպաստից
և դեղորէից չերևի նշան ինչ նուաճելոյ տենդին,
յայնժամ պարտ է ձեռնամուխ լինել 'ի գործածուն-
թուլացուցիչ և զովացուցիչ դեղորէից, որպիսի են
նիթռս, և խաշուն գարւոյ. որ այսպէս բաղադրի:
Առ զնիթռս ըստ կշռոյ երկու կամ երեք տրամոյ,
'ի տաս ունկի գարեջրոյ. և տուր ըմպել հիւան-
դին հինգ անգամ յաւուրն՝ 'ի չափ երկու ունկւոյ:
Նմանապէս մարթ է 'ի կիր արկանել յայսպիսի դի-
պուածս զյեռագայ հեղանիւթս առ 'ի բառնալ
զդրգռումն անօթոցն արեան, և 'ի մեղմել զտապս
ջերմականս բորբոքեալս: Առ երկու ունկի հաստա-
բակ ջրոյ, որ բաղադրեալ իցէ ունկի մի ջրոնէ վար-
դի, և կէս ունկի՝ շիրոբբոս տի աչէթս, կամ սուկս տի
մուսիս, յաւելլով 'ի նոյն զ30 շնթ՝ սպիրիթս տի վի-
թրիոլս տոլչիֆիքաթս, և 'ի կիր արկ զայս չափս մին-
չև ց10 կամ ց12 ժամն, մինչև 'ի հանդարտիլ բոր-
բոքման. յետ այնորիկ շատ լիցի տալ զայն 'ի հինգ
կամ 'ի վեց ժամն միանգամ: Իսկ եթէ 'ի ձեռն այդ-
պիսի դեղորէից ոչ նուաճի ևս տենդն, բորբոքումն
կամ ջերմութիւնն տակաւին մնայ յարատեւեալ, յայն-
ժամ օրէն է տալ նմա բօլվէռի թէմբէռանթի, որ
այսպէս բաղադրի: Զորս կշիռ տրամ՝ քռէմոռ տի

թառթառս, և մի և կէս տրամ՝ նիթռս բուռս։ Եւ զայս պարտ է առնուլ վեց անգամ յաւուրն։ Ոչինչ արգելք կայ գործածութեան թամբաքինտին, շերրոյ, և հիւնտապի ևն։ Կարի կարևոր է յամենայնում երեկոյի առնուլ 'ի կիր զգրէխ մի պատրաստեալ գաղջ ջրով և փոքր ինչ նիթռօիւ, և օսիմէլէիւ, կամ շիճկաւ՝ առ 'ի զերծ պահել զոգելից մանրաթելս աղեաց 'ի հրատապ ջերմութէ։

Ապա եթէ յեօթներորդում, 'ի մեռասաներորդում, 'ի չորեքտասաներորդում, և երբեմն 'ի քսաներորդում և միւսում, 'ի քսան և ութերորդում աւուր հիւանդութեան զարկ բաղկին լինիցի մեղմագոյն, և լեզուն, բերանն և մորթն սկսանին տամկանալ և կակղանալ, և մէղն փոխարկի 'ի գոյն նարնջոյ և մրրալից, յայնժամ գոյ յոյս ապաքինութեան ախտակրին, և զայսմանէ տէս և 'ի բառն Քռիզի, հատ. ը։ Բայց եթէ ընդ հակառակն՝ հիւանդն ունիցի ամբոխումն և խռովութեան անհնարին, և զարկ բաղկին օր քան զօր զտարտուղեալ վրիպի, տագնապ և վիշտ ընդ ամենայն անդամս տիրապետեալ բազմացի, շարժումն ձգանաց՝ ցնցումն ջղաց և միսանց՝ ցնորումն և ցամաքութիւն մորթոյ, լեզուի և կոկորդի 'ի վերայ երևեսցէ, նշան է երկիւղալից և ապերջանիկ եղիցն տառապեալ հիւանդին։ Յայսմ երկիւղալի գիպուածի վէշեքաթօռիոն, այսինքն խարանադէղն հարկաւորապէս պահանջի, մանաւանդ յորժամ ցնորումն և մղձկումն, կամ ճնշումն զուգընթաց գտանին ընդ ախտիս, զոր պարտ է դնել 'ի ծոծրակն, 'ի բազուկս, 'ի սրունս և 'ի յաղդերս ըստ պահանջելոյ պարագայիցն։

Եթէ ախտակիրն ունիցի զուժգին ցաւ գլխոյ, յայնժամ օրէն է դնել սէնաբիզմօ 'ի ներբանս ոտից։ Եթէ ունիցի զկարմրութեան աչաց, և զնցումն անօթոց ուղղոյ, յայնժամ պարտ է դնել քանի մի տզրուկ 'ի քունքս։ Եթէ ունիցի զչորութիւն կամ զցամաքութեան մորթոյ մարմնոյն հանդերձ ջերմութ, յայնժամ հարկ է զսպունդս ջերմաջերմ ջրով թացեալ ստէպ ստէպ դնել 'ի ստորին որովայնն՝ յաղդերս և 'ի սրունս։ Իսկ եթէ ունիցի զշարժումն կամ զցնցումն ձգանաց կամ ջղաց, յայնժամ սրկ զ40 կամ 50 շիթ էթէռէ սոլֆուռիքօ 'ի վեց ունկի՝ ցուրտ ջրոյ. յոր յաւէլ զկէս ունկի շաքար, և առեր ըմ-

պել հիւանդին վեց անգամ յաւուրն՝ զչափ միոյ դրդ-
գալի։ Զնոյն աղդեցութեն ունի և յետագայ ոգիա-
ւոր հեղանիւթն, որ այսպէս բաղադրի։ Առ երկու
տրամ՝ լեգուօռէ անօսինօ մինէռալէ սէլլ՝ հօֆֆման-
կէս ունկի՝ շաքար, և երկու լիտր՝ ջուր հասարակ։
Զայս ամենայն խառնեա՛ բարեոք, և տո՛ւր ըմպել
հիւանդին յերկուս ժամս՝ մի սկահակ արձոյ։ 'Ի սո-
ցին կարգս դասի և յետագայ հատադեղն. որ բա-
ղադրի 'ի կէս տրամ՝ ֆիօռի տի ծինքօէ, և 'ի բա-
ւականաչափ վարդի քաղցրաւենեաց։ Կազմեալ սասի
եօթանասուն և երկու հատիկս, տացի 'ի ջղային
ցնցմունս յիւրաքանչիւր երկու ժամու մէն մի հատ։
'Ի նոյն պէտս կարգի և մշկով պատրաստեալ հեղաս-
նիւթն, զոր շինեն 'ի կէս ունկի՝ շաքարէ, 'ի մի
տրամ՝ մշկոյ, և 'ի վեց ունկի՝ ջրոյ. և տան ըմպել
հիւանդին հինգ կամ վեց անգամ յաւուրն՝ ըստ չա-
փու միոյ դրդալի սեղանոյ։

Իսկ եթէ այսպիսի ախտակրութիւն կարի ի-
սուն սաստիկ իցէ, և կիս ընդ հանապազորդ արթնութեան
կամ տքնութիւն, յայնժամ 'ի վերայ բովանդակ նա-
խագրեալ նուսխայի դեղոցդ՝ մարթ է յաւելուլ
տասն մինչև ց16 կշիռ ցորեան՝ բօլվէռէ տի տօվէռ.
զոր բաղադրեն 'ի 16 կշիռ ցորեան՝ իբէքքաքուանահ.
'ի 20 ցորեան՝ ափիոնէ, 'ի մի տրամ՝ թաւթառօ
վիթռիօլաթօէ, 'ի նոյնչափ՝ նիթռօէ, և 'ի հինգ
և կէս տրամ՝ մաքուր շաքարէ։ Վարի և 'ի փարա-
տել զցաւս յօդուածոց, և զհազս ուժգինս, մանա-
ւանդ յորժամ զայդ ը ախտիս գտանի ակամոյ շար-
ժումն մկանանց կամ ցնցումն ջղաց։ Այլև 'ի բու-
ժել զշնչարգելութիւն, զփորհարութիւն, և զջրգողու-
թիւն, զի է քրտնեցուցիչ, խաղաղեցուցիչ միզման
արեան, և քնաբեր բնութիւն։ Զափ՝ 'ի հինգ ցորենոյ
մինչև ց20 յաւուրն. զոր օրէն է խառնել ընդ դրդ-
գալ մի ջրոյ վարդի, կամ անանխոյ, և կամ երիցկի։

Դարձեալ՝ եթէ ախտակիրն ունիցի զյաճախակի
փսխումն, յայնժամ պարտ է 'ի կիր արկանել զյետա-
գայ դեղս առ 'ի խափանել զործումն յոտառ։ Առ
կէս ունկի՝ սալ տի սօտա, և նոյնչափ՝ շաքար, խառ-
նեա՛ 'ի միասին, և բաժանեա՛ 12 հաւասարաչափ մա-
սունս, և տո՛ւր ըմպել հիւանդին յամենայն երկու
ժամու մէն մի մասն կէս սկահակ ջրով, յաւելլով
'ի նոյն դրդալ մի սեղանոյ զհիւթն կիտրոնի, կամ

նոյնչափ բարկ քոցախ։ Կայ և տեսակ ինչ թանձ-
րացեալ աղի, զոր կոչեն՝ սալ վօլատիլէ քօնքրէթօ,
որոյ զօրութիւն և ներգործութիւն նոյն է ընդ վերոյի-
շեալ սալ տի սօտսի, զոր կազմեն 'ի անկոց անտի՝
գալի անուանեալ։ Իսկ եթէ ունիցի զասստիկ փոր-
հարութիւն, յայնժամ օրէն է 'ի վար արկանել զեղ-
ջիւրն եղջերուի, և զտիասքօռտիս։ Այլ եթէ ու-
նիցի զչափազանց քիրան, յայնժամ պարտ է 'ի գործ
արկանել զաչիտս սօլֆօռիքս։

Դարձեալ, եթէ տկարացեալ իցէ ոյժն կենսա-
կան, յայնժամ փոյթ ունել օրէն է զօրացուցանել
զախտակիրն 'ի ձեռն քօռտիալից, որպիսի են քինա
սէռբէնթառիա վիռճինիանա, և։ որ այսպէս բա-
ղադրի։ Առ կէս ունկի ազնիւ քինա, և երկու
տրամ՝ սէռբէնթառիա վիռճինիանա, և կէս տրամ
վալէռիանա, և 'ի հասարակ ջրի եփեա եռացմամբ
ութ քառորդ մի ժամու, յետ զտելոյ յաւելլ 'ի նա եր-
կոտասան կշիռ ցորեան քանֆօռա, և կէս տրամ լի-
գուօռ անօտինս մինէռալէ տէլլ՝ հօֆֆման, կամ նոյն-
չափ՝ էթէռէ սօլֆօռիքս։ Յամպելլոյ ասսի պարտ է
տալ հիւանդին յիւրաքանչիւր կէս ժամու մէն մի
գրգալ սեղանոյ։ 'Ի նոյն պէտս վարի և յետագայ
քօռտիալն։ զոր կազմեն 'ի կէս ունկի՝ քինա քինաէ,
յերկու տրամ՝ սէռբէնթառիա վիռճինիանաէ, յաւելլ-
լով 'ի նոյն և զտասն ունկի՝ ջուր հասարակ, մեր-
ձեցուցանեն 'ի հուր, և եփեն այնքան մինչև ցսպա-
ռիլ մի մասին ջրոյ։ յետ քամելոյ զայն կտաւով յա-
նօթ ապակի, յաւելուն և ս 'ի նա երկու ունկի՝ ջուր
կինամոնի, և կէս ունկի՝ քօնֆէքցիօնէ ալ քէռմէզ,
և 30 շիթ՝ սբիռիթօ տի մէլիսսէ, կամ նոյնչափ՝ լի-
գուօռէ անօտինս մինէռալէ տէլլ՝ հօֆֆման, և տան
հիւանդին ժամէ 'ի ժամ մէն մի սկահակ սրճոյ։

Կառավարութիւն 'ի ներ արկանելի 'ի դիպուածս՝ յորոմ ոք վերոգրեալ անկանի յանընդհատ և 'ի սուր գէնդս։

Կանոն և կառավարութիւն, զորմէ խօսեցաք վե-
րագոյնդ, հարկաւորապէս պահանջին ոչ միայն յա-
մենայն ընթացս տենդից, այլ և միանգամայն 'ի դի-
պուածս յայս։ զորովք եթէ ոք զանց առնէ, դնէ զան-

տակիրն 'ի վտանգ վերատին անկանելոյ կամ 'ի նոյն անընդհատ տենդս, և կամ յայլ ինչ խոտս. որ ընդ բովանդակ կեանս իւր թողու զնա հիւանդագին և տկար: Ուկատել պարտ է. քանզի թէ և զկնի ապաքինելոյ ախտիս՝ տակաւին ախտակիրն մնասցէ տկար և անզօր, 'ի վերայ այսր ամենայնի կերակրոցն պարտ է լինել զովացուցիչ՝ քան թէ սնուցիչ: Պարտ է մեծապէս արգելուլ զնա առաւել յորպիսի և իցէ կերակրոց և ըմպելեաց, այլև յաշխատանաց, որք գլխովին են հնասաբերք: Այլ արժան է կատարելապէս վայելել 'ի հանգստեան. չէ բնաւ օրէն պարապիլ 'ի յընթերցմունս, կամ յայլ ինչ իրս, որք պահանջեն զմեծագոյն մտադրութիս: Եթէ մարսողականութիւն լինիցի տկար, և հիւանդն զգայցէ երբեմն երբեմն զթեթևագոյն ինչ տենդս, արժան է յայնժամ 'ի վար արկանել զքինա քինա թրմեալ 'ի մէջ ցուրտ ջրոյ յետագայ եղանակաւ: Աւրկ զնոշոր փոշի կեղևոյս քինաի ըստ կշռոյ ունկուոյ միոյ՝ 'ի լիտր մի ցուրտ ջրոյ. զկնի 24 ժամուց հեղ զդուշութիւն յայլ անօթ ապակի, կամ անցո՛ ընդ կտաւ նուրբ. յոր յաւէլ զմի ունկի ջուր կինամոնի, կամ զնոյնաքանակ ջուր նարնջոյ. և տո՛ւր ըմպել հիւանդին երկու կամ երեք անգամ յաւուրն՝ ըստ չափու միոյ սկահակի. և գործածութիւն այսր դեղոյ անվրէպ զօրանայ ստամոքսն, ցրուի ախտարծարծ հիւթն, և նորոգի ոյժն տկարացեալ յերկար խօթութէ: Աշխատաւորք և արուեստաւորք, որք միանգամ կրեալ են զախտս զայս, ո՛չ պարտին փութով ձեռնամուխ լինել 'ի գործս իւրեանց. այլ պարտին հեռի կալ 'ի գործոյ և յաշխատանացն, մինչև ստանալ նոցա գէթ զմեծագոյն մասն առաջին զօրութէ և կարողութէ իւրեանց:

Եթէ չար է՝ ըսկիզբն ախտին,
չար ևս անկումն՝ յայն վերըստին:
Զոր յակամայս՝ նախ կըրեցեր,
մի՛ քո կամաւ՝ կրեր անդրըստին:
Ախտք որ 'ի բնէ՝ վերաստեղնին,
փոքր են քան զորս՝ կամաւ ստեղնին:
Քեզ բժիշկ քաջ՝ դեղ անարծաթ,
առցէս ըղջալի՝ մարմնոյ ըղձին:

ՅՕԴՈՒԱԾ Ե·

'Ի վերայ ղղական պենդի, որ կուլի յիպալացուոյ՝ Քէպպոէ նէուվզա· կամ ըսպ ռամկական Բարբառոյ՝ Քէպպոէ մալի նէայ, այսինքն պենդ լարախոսական։

Տենդս այս ղղային կոչի և ըստ ոմանց՝ Քէպպոէ բէսթիլէնցիալէ, որ թարգմանի՝ տենդ ժանտախտաս կան· քանզի մեծագոյն մասն նշանաց այսր տենդի՝ ունի զմեծ համաձայնութիւն և նմանութիւն ընդ զարհուրելի ախտին, որ յորջորջի անուամբս՝ ժանտախտ։ Անձինք՝ որք հասարակօրէն են ենթակայ այսր տենդի, են վիճակեալք տկար կազմուածոց, և սեամսաղձային խառնուածոց, և ևս նոքա որք ուժաթափ լեալ են 'ի ծոմապահութենց, 'ի հսկմանց, և 'ի տաժանակիր աշխատանաց, 'ի սաստիկ տուփանաց, 'ի զաղիր խորհրդոց, և։

Պապճառք ղղական կամ լարախոսական պենդի։

Տենդս այս ծնանի յապականեալ օդոց և հողմոց· որպիսի են օդքն բնակչաց ցածագոյն և խոնաւագոյն տեղեացն, և ևս տեղեացն՝ ուրանօր օդն ապականի պատճառաւ դիոց կամ գիշոց և արեանց կենդանեաց, որք անկեալ մնան ընդ երկար, և դարշահոտին են· նոյնպէս և պատճառի յօդոյ, որ արգելական մնայ ուրեք առանց շրջանաց, 'ի խոնաւուէ, 'ի հեղեղատէ, որք պատահին 'ի ցածագոյն գաւառս, յընդեղինաց և 'ի խոտեղինաց ապականելոց յանձրևոյ և 'ի ցօղոյ են· 'ի ջրոց՝ որք անշարժ մնան, որպիսի են լիճքն, ճահինքն են։ Դարձեալ՝ անմաքրութիւնն, չքաւորութիւնն, ճախորդութիւնն, տրտմութիւնն, սաստիկ բարկութիւնն, են· մարթին դասիլ 'ի կարգս պատճառաց այսորիկ տենդի։ Այլև ծագի յանբարեխառնուէ, որ լինի 'ի դիւրափոխելի ուսելեաց և յոռեգոյն ջուրց· նոյնպէս յաւելումք ասել

եթէ Ջղական տենդս այս 'ի լինելն 'ի Ծայրագոյն աստիճանի՝ սովորաբար միշտ է տարափոխիկ և հաղորդական առ այլս. վասն որոյ արժան է ամենայն ուժգ փախչիլ և հեռանալ 'ի յաճախ և 'ի մօտակաց կենակցութէ այսպիսի ախտացեալ անձանց։ Նմանապէս ստէպ պատահի ախտս այս 'ի բանտս՝ 'ի հիւանդանոցս՝ յանկեղանոցս՝ 'ի բանակս՝ և յայլ տեղիս, ուր բնակին խուռն բազմութիւն նեղեալք և տառապեալք. ևն։ Հուսկ յետոյ տենդս այս Ծագի և յառաջ գայ յայնմ ամենայնէ, որք թուլացուցանեն զզօրութիւս ջղաց և զգայութեց, և վասն այսորիկ կոչեցաւ՝ տենդ Ջղական։

Նշան այսր Ջղական տենդի։

Տենդս այս ընդհանրապէս բացայայտի յերեւելի ինն թալկութենէ ջղաց, և 'ի լքմանէ կենսական ոգեաց։ Երբեմն թալկութիս այս լինի այնքան սաստիկ, մինչև ոչ կարէ ախտակիրն յոտն կանգնիլ. որով կորուսանէ գլխովին զարիութին, և վարանի երկիւղիւ մահու։ Ունի ցամաքութի կամ չորութի բերանոյ հանդերձ նողկութիւ սրտի կամ ստամոքսի. և տագնապաւ շնչառութէ. ունի մեծ ամբոխմունս և հառաչանս, և գժնդակ ցաւ ինն գլխոյ, միջաց, և յօդուածոց, և շշնջիւն ինչ յականջս. թոքն լինի ոստղային. ստամոքն գլխովին աղտեղեալ սևանան. ձայնն նուազի, և ունչքն խցանին. երբեմն լեզուն լինի այնքան ցամաք չոր և դողդողուն, մինչև ոչ կարէ ախտակիրն 'ի դուրս հանել ընդ բերանն, և երբեմն խոնաւ և կակուղ. բայց հանապազ ծածկեալ կայ գեղնագոյն և սոսնձային աղտով։ Ախտակիրն յաճախակի ործայ մաղձս, արտահանէ զՃՃիս երբեմն 'ի վերուստ, և երբեմն 'ի ստորուստ. և զգայ զսառուռ, զդողդոջուն, զջերմութի ուժգին, ըզցնորուն, և զբարբանջուն։ Եթէ երակ հատանի, արիւնն երևի լուծեալ և կարմրերանգ. և զկնի սակաւուց 'ի վեր երևի յերեսս արեան մակարդ ինչ նուրբ իբր մաշկ։ Աչքն լինին կարմրերանգ, որպէս և դէմք նորա։ Զարկ բազկին 'ի սկզբան անդ հարկանէ յոյժ յաճախակի և լի. բայց յետ քանի մի ա-

ուրոյ լինի ցած, թոյլ, և մանր, և հասարակօրէն անկանոն։

Յետ այսոցիկ նշանաց սկսանին հանապազորդել գողդոջումն ձեռաց զոյգ ընդ ցնցման ձգանաց, և կապուտակութեամբ այտից, և խցմամբ ականջաց, պտուտիւք գլխոյ, և ցնորմամբ խելաց, որք են նշանք յոռեգոյնք։ Երբեմն ծարաւն լինի չափազանց, և երբեմն չափաւոր։ Մէզն երբեմն լինի տհաս և ջրայն, երբեմն կարմիր, երբեմն սեաւ և թանձր, և սակաւ։ և երբեմն մթագոյն և գարշահոտ։ Ապաւառն լինի կանաչագոյն և զաղբահոտ, և երբեմն կարմրագոյն, կամ սեաւ։ Մորթն մարմնոյ լինի չորագոյն, և քիրան ոստոզային և ծանրահոտ։ Սովորաբար 'ի վեր երևին 'ի վերայ մորթոյն գէզք կամ խաղաւարտք գեղնագոյն, ծիրանագոյն, կապտագոյն և թխագոյն, որք գուշակ են յայտնապէս ապականութեան ներքին հիւթոց։ Երբեմն արտահոսեն յորդ արիւն 'ի ռնգացն, 'ի բերանոյ, և ն։

Տենդս այս ջղային զանազանի 'ի սոսկ անընդհատ տենդէ։ ըստ որում 'ի դիպուածս յայս զօրութեն կենսական փութով նուազի, ախտակիրն կրէ խլութիւն, և մեծագոյն ամբոխմունս, և գէզք կամ խաղաւարտք 'ի վեր երևին։ բայց պատահի երբեմն, եթէ նշանք անընդհատ տենդի՝ այնպէս խառն 'ի միասին գտանին 'ի ջղային տենդիս, մինչև մեծապէս դժուարագոյն լինի որոշելն և զանազանելն։ յայնժամ օրէն է 'ի վար արկանել փոյթ մեծ, և 'ի կիր առնուլ զամենայն հնարս կարելիս առ 'ի ճանաչել և որոշել զայն։ վասն որոյ և արժան է կրկին և կրկին քննուն առնել 'ի վերայ նշանացն, և յետ այնորիկ 'ի գործ արկանել զկառավարութիս և զդեղորայս ըստ պահանջելոյ հարկին։ Ընդ այսոցիկ գիտել արժան է, եթէ անընդհատ տենդն կամ այլ տենդք, գործածութեամբ ներհակական դեղորէից մարթին վոխարկիլ 'ի ջղական տենդ և 'ի փոսխտութիւն։

Իսկ որքան առ յարատևութիւն ջղական տենդի չիք ինչ որոշեալ կանոն։ երբեմն աւարտին՝ 'ի վեց կամ յեօթներորդում, կամ 'ի մեռասաներորդում, և կամ 'ի չորեքտասաներորդում աւուրն։ երբեմն և յարուցդին 'ի քսաներորդ, կամ 'ի քսան ութերորդ օր, և երբեմն և աւարտին մինչև ցհինգ կամ 'ի վեց շաբաթս։ Նշանք առաւել բարեգոյնք և լաւագոյնք

են արտաշնչութիւն մարմնոյն, քիրան մշտատև, տամ-
կութիւն մորթոյ, բերանոյ և լեզուի, յորդութիւնն
միզի, կամ թեթև ինչ լուծողութիւն որովայնի, և
կարմրութիւն խաղաւարտից, և պնդութիւն որովայնի։
Իսկ նշանք յոռեգոյնք և ձախողք են՝ ուժգին ջեր-
մութիւն, պակասութիւն քնոյ, շարժումն և դողդո-
ջումն ձեռաց, սաստիկ ցաւն և կարմրութիւն ստորին
որովայնի, որք գուշակեն զփոխարկումն 'ի քաղցկեղ.
մանաւանդ այտուցն և ուժգին լուծողութիւն որո-
վայնի, գժուարութիւն տուրևառութեան շնչոյ, ցամա-
քութիւն մորթոյ, դողդոջումն և անկարութիւն առ
'ի արտահանել զլեզուն ընդ բերանն. խաղաւարաք
կամ գէղքն լայնարձակ, կապտագոյնք կամ սևա-
գոյնք. 'ի վեր երևումն եղնդոյ 'ի քունջս երանաց,
կամ 'ի յետին կողմն ականջաց, փոփոխումն ձայնի,
ցուրտ և ոտղային քիրան, հեծկլտանքն, ակամայ
շարժումն մկանանց, և ձգանաց, գժուարութիւն 'ի
կլանել. ճնշումն կրծոց, յորդառատ հոսումն թանձ-
ջից, անկանոնութիւն և միջահատութիւն զորկի բազ-
կին, ուշագնացութիւն, ցնորումն, և։ Հուսկ յետոյ
եթէ 'ի վեր երևեսցին 'ի բերան հիւանդին փոքրիկ
և սեաւ վէրք ինչ՝ որ ասի աֆթէ, է նշան մահահրա-
ւէր։ Ընդ այսոցիկ գիտել ևս արժան է, եթէ ախ-
տակիրն 'ի մահճաց 'ի վայր սահեսցի, և եթէ 'ի վի-
ճակի սատակագոյն ջերմութիւն շունչն ախտաժեռին
ցուրտ լիցի, են նշանք անվրէպ մահացուցիչք. քան-
զի քաջայայտ է եթէ սպառի յայնժամ ջերմութիւնն
բնական, և զկայ առնու զօրութիւն կենսական։ Դար-
ձեալ՝ ընդ այսոցիկ յոռեգոյն նշանաց գոյ իմանալ
թէ 'ի սկզբան անդ տենդիս 'ի վեր երևի թալկութիւն
կամ թուլութիւն սաստիկ, հանդերձ փոփոխմամբ
գունոյ, կորուսմամբ քնոյ և քրտանց, բռնի շարժ-
մամբ ջղաց և մկանանց, ցնորմամբ, և տագնապաւ
շնչառութիւն, են։

Կատարութիւն ի դեղրայն 'ի վեր արկանելի 'ի դեղ-
պատոյ ջղական դէնդի։

Կարի կարևոր է նախ քան զամենայն յանխուսափելի
թիւն ունել զհօթացեալն, և 'ի կշիռ պահել զնեղքին
տրամադրութիւնն հիւթոց, և զկենսական զօրութիւն
նորին, և ապա ըստ բնութեանն ցուցանելոյ արդելուլ

զպատճառս ախտիս։ 'Ի վերագոյնդ ասացաք, եթէ տենդս այս ըստ մեծի մասին ծագի և յառաջ գայ յապականեալ օդոց. վասն որոյ պարտ է նախ փութալ զի մի արգելական մնասցէ օդն 'ի մէջ սենեկի ախտակրին, որպէս տեսաւ 'ի նախընթաց յօդուածդ։ 'Ի դիպուածս յայս պարտ է կերակրոցն լինել թեթեւագոյն. և մարթ է միանգամայն ախտակրին ուտել անելիւղ զամենայն հասունացեալ միրգս եփեալս ևն։

Դարձեալ՝ չէ՛ օրէն բնաւ թողուլ երկարապէս զնա առանց կերակրոյ. այլ պարտ է սակաւ ինչ ուտելի տալ ստէպ ստէպ, որովք ոչ միայն պահպանի զօրութիւն կենսական, այլ միանգամայն արգելանի ճապաղումն ժանտ հիւթոցն և գոլորշեացն, և փոխարկիչն նոցին 'ի նեխութիւն կամ 'ի փտութիւն։ Բազում ինչ կայ ասացեալ և գրեալ 'ի հեղինակաց զընտրութէ պարենից, որ ճահոդագոյնքն են լաւագոյն անդեան մարդկային մարմնոյ. և սակայն ճշգրիտ է, թէ չէք կանոն ընդհանուր, որ յարմարեսցի զինչ և իցէ կլիմայից, դրից երկնից, ազգի, և կամ ուժ և իցէ անհատի։ Կերակուրն, որ առաւել համեմատ է ջղական տենդիս, և առաւել անուցիչ և զօրացուցիչ է մարմնոյ, երևի թէ է արգանակն մսոյ. և սակայն 'ի ջերմագին գաւառս, որպէս ուսուցանէ մեզ փորձառութիւն, ինասակար է յաճախ գործածութիւն արբդանակի, նա յաւէտ մսոյ։ Իսկ բնակիչք եւրոպիոյ և այլ գաւառաց վեճակելոց բարեխառն օդոյ՝ կարի իսկ նախագասեն զարգանակն մսոյ, և ընտանի կենդանեաց։ Դարձեալ 'ի դիպուածս յայս օրէն է խառնել 'ի մէջ ամենայն ըմպելեաց զհիւթն լեմոնի, կամ կիտրոնի և կամ նարնջոյ, և ս մարթ է 'ի կիր առնուլ գինի ազնիւ ջրախառն։

Յորժամ տենդս այս ջղական յառաջ գայ և ծագի 'ի սուր և 'ի տոկոպ մաղձէ, և 'ի ժանտ հիւթոց, և ս 'ի փսխողականութէ, յայնժամ պարտ է 'ի սկզբան անդ ախտիս իսկ և իսկ առնուլ 'ի կիր զդեղս որ ծացուցիչս առ 'ի դուրս վանել զայնս։ Նոյնպէս և օգտաւէտ է որ ծացուցիչ դեղս այս՝ եթէ զուգընթաց լինի ընդ ախտիս տենդն մաղձային։ Սեփական և անվրէպ ներգործիչ որ ծացուցիչ կամ փսխեցուցիչ դեղն 'ի դիպուածս ջղական տենդի՝ է թարթառս էմեթիքս, զորոյ զկերպն կիրառութէ մարթ է լիով

ուսանիլ 'ի դլ. ՝ա. երես 8։ Ստուգիւ հաստատեմ և վկայեմ, եթէ քանիցս անգամ կարևոր զգուշութեամբ, և 'ի պատշաճաւոր ժամանակի 'ի վար արկի զգեղս զայս, միշտ եղև օգտակար, և ոչ բնաւ վնասակար։ Բայց եթէ զկնի քանի ինչ աւուրց զօրանալոյ տենդիս, և սաստկանալոյ նշանացն 'ի կիր արկանիցի, յայնժամ չլինի այնքան անվտանգ և օգտակար։

Այլ եթէ սխտակիրն անկեալ ելցէ 'ի յուժոյ, և եթէ ունիցի զվորհարութիւն, պարտ է յայնժամ փոխանակ ործացուցիչ դեղոյ՝ առնուլ 'ի կիր զթեթև լուծողականս, որպիսի են ռասպառպառս, և թամարինտի. նոյնպէս օգտաւէտ է առնուլ 'ի կիր զդրեխս պատշաճաւորս առ 'ի դուրս հերքել զփուքս ստորին որովայնի, և 'ի ցրուել զվնասակար շոգիս, որ սովորաբար եղեալ յաղեաց գիմեն առ ուղեղն, և պատճառեն զցաւս գլխոյ, զցնորութիւն, զշշնջիւն ականջաց, և երբեմն և զխլութիւն։ Յետ այսոցիկ առ 'ի զօրացուցանել զստամոքսն և 'ի դուրս վանել ըզփուքսն ստորին որովայնի, և զս և 'ի զովացուցանել զհրակիզն ջերմութիւնս, պարտ է 'ի կիր առնուլ զվենֆուզիոնէ ոլ քամոմիլլա, եթէ ստամոքսն կարօղ ելցէ տանիլ, և օրէն է յաւելուլ 'ի նոյն էլիսիրէ աչիտոտի հալլեռս, կամ էլիսիրէ ոլ վիթռիոլ 10 կամ 12 շինթս յիւրաքանչիւր սկահակի։ Այլ պարտ է ուշ դնել, զի նախայիշեալ էլիսիրէ աչիտոտի հալլեռս ոչ յարմարի 'ի լուծմունս որովայնի։ 'Ի դիպուածս ջլական տենդիս երակ հատանել՝ ուր ուրեմն է հարկաւոր. եթէ երևին նշանք բորբոքման, մարթ է երբեմն թոյլ տալ այնմ իսկ և իսկ 'ի սկզբան անդ հիւանդութեան։ Բայց զգոյշ լինել պարտ է, զի մի առատօրէն թոյլ տացի այնմ՝ մինչև լքեալ վհատիլ զօրութեն նորին. այլ մի կամ երկու սկահակ սրճոյ բաւական է վասն միոյ չափահասակի։

Յետ այնորիկ առ 'ի կշիռ պահել զկենսական զօրութիւնս սխտակրին՝ պարտ է փութով մերձեցուցանել զյետագայ դեղս։ Ա՛ռ կէս ունկի՝ ազնիւ քինա քինա, և երկու տրամ՝ սէռբէնթառիա վիռձինիանա. և 'ի հատարակ ջրի եփեա եռացմամբ լոր քառորդ մի ժամու. ապա զտեա և մնացեալ 12 ունկի. յոր յաւել 50 կամ 60 շինթս՝ էթէռէ սոլֆուռիքս, կամ 80 շինթ էլիսիրէ աչիտոտ ոլ հալլեռ։ 'Ի խառնուրդէ ասոի յերկուս ժամս միանգամ առնու հի-

ւանդն երկու դրդալ սեղանոյ առ իւրաքանչիւր նուագ։ 'Ի դիպուածս տենդիս չէ պարտ փութով առնուլ 'ի կիր զվէշիքաթօռիս, այսինքն խարանադեղ, բայց եթէ 'ի վերջին կիսի հարկաւորութեամբ. որովհետև բաղում անգամ պատճառէ զքաղցկեղ, որ յիտալացւոց կոչի՝ քանքրէնա։

'Ի բազմակերպ նշանաց ջլական տենդիս, զորոց լիով գրեցաք, քաջայայտ ճանաչի՝ եթէ քանի այլ և այլ և բազմապատիկ գեղորէից կարօտի բուժումն տենդիս։ 'Ի դիպուածս, յորում 'ի վեր երևի սաստիկ ժայթքումն կամ փսխումն, որպէս պատահի 'ի սկզբան անդ ախտիս, յայնժամ պարտ է առնուլ 'ի կիր զպէվանտա անթէմէթիքա անուանեալ դեղն, որ այսպէս բաղադրի։ Առ քսան կշիռ ցորեան՝ սալ ալքալինս վէճէթապիլէ, և կէս ունկի սուկս տի չէառս, յաւելով 'ի նոյն և զերկու ունկի՝ ջուր հասարակ։ Եւ զայս պարտ է առնուլ ութ անգամ յաւուրն։ Եթէ ախտակիրն ունիցի զփորհարութիւն կամ զլուծումն որովայնի, պարտ է յայնժամ 'ի գործ արկանել զհետագայ խաշու դեղս։ Առ ունկի մի՝ աղնիւ քինա, և տրամ մի՝ կինամոն, կամ նոյնչափ բասիչէ տի քօլմպօ, և գիր զայս յանօթ կաւեղէն, արկանելով 'ի նա և զմի ֆօլիէթթա աղնիւ գինւոյ. ապա մերձեցո 'ի հուր, և յորժամ սկիզբն առնէ եփել, արկ 'ի նա երկու տրամ՝ սէռբէնթառիա վիռճինիանա, և եռացո զայն 'ի ջուրն իբր երեք բոպէ. և յետ զտելոյ 'ի գործ արկ յամենայն երկու ժամու երկու դրդալ սեղանոյ։ Իսկ եթէ 'ի ձեռն այսպիսի հնարիւ անմարթ իցէ արգելուլ զայն, յայնժամ է օրէն 'ի վար արկանել զափասքօռատիս, որոյ չափն պարտի լինել յերկու տրամէ մինչև ցերեք խաւն ընդ ջրոյ երիցկի երեք կամ չորս անգամ յաւուրն։

Նոյնպէս մարթ է պատրաստել գրեթէ ինչ յետագայ եղանակաւ, որ է յոյժ պատշաճողական։ Առ կէս լիտր ջուր կամ խաշու երիցկի, յաւելով 'ի նոյն և զչորս տրամ՝ ափասքօռատիս, կամ նոյնչափ՝ քօնֆէցիօնէ ճիաչինթինա. զոր պարտ է հեղուլ գրեթէաւ ընդ երասատանս ախտակրին երկու անգամ յաւուրն։ Եթէ ախտակիրն ունիցի զնէթ կամ զցաւ ինչ որովայնի, որ է նշան բորբոքման, յայնժամ օրէն է տզրուկ դնել 'ի վերայ այնր մասին ուր առաւել զգայ զցաւն։ Նոյնպէս նշանաւոր դեղ ինն է յայսմ

դիպուածի ֆոմէնթէն, զոր պարտ է առնել ջրոմն կակղացուցիչ խոտոց։ Նմանապէս օգտաւէտ է՝ լինել մէնթօ վօլանթիլէն, զոր պարտ է օծանել 'ի վերայ ցաւագնեալ մասին որովայնի։ Իսկ եթէ 'ի ձեռն այսոցիկ նպաստից չդադարեսցի ուժգնութիւն ցաւոց, յայնժամ հարկ է ոներկբայ դնել զվէշիքաթօռիս 'ի վր՝ այնր մասին որովայնի, ուր առաւել զդայ զցաւն։

Այլև 'ի նոյն իսկ ժամանակի, յորում ախտակիրն ընդունի զայսոսիկ նպաստս, 'ի կիր արկանել զթամբրինտի կամ զառապառաւ, և կամ զթինթուռա աքգուօղա ակ քինա առ 'ի մաքրել զնեխեալ հիւթս ստորին որովայնի, և 'ի մեղմել զդրդռումն ջղաց։ Եթէ 'ի վերայ եկեսցէ թանչ ինչ արկածեան, որ է յորդառատ հոսումն արեան որ և իցէ անդամոց, յայնժամ օգտաւէտ է գործածութիւն քինաի, և պաղլեղի, ևս աչիտս մինէռալէի խառն ընդ ցուրտ ջրոյ։ և ևս պարտ է թանալ զոտս, զձեռս և զգլուխն ցրրտագին ջրով, կամ ձեամբ, և կամ սառամբ, զոր պարտ է երբեմն խառնել ընդ գինւոյ և ընդ ափիոնի։ Եւ եթէ 'ի վերայ եկեսցէ միզարգելութիւն, յայնժամ օրէն է առնուլ 'ի կիր զէմուլսիօնէ արապիքա, որ այսպէս բաղադրի։ Ընկաչ կէս ունկի՝ կոմմա ա՞րապիքա, երեք հատ սպիտակ գոյացուն նշոյ, և երկու տրամ՝ շաքար մաքուր, և մանրեալ ծեծեա՛ յանկանի, յոր յաւէլ ութ ունկի՝ ջուր հասարակ։ և տո՛ւր ըմպել երկու անգամ յաւուրն։ Իսկ եթէ փոխարկեալ եցէ 'ի քաղցկեղ, յայնժամ օրէն է առատորէն 'ի կիր արկանել զքինա։ Այլ եթէ 'ի վեր երևին վէրք ինչ փոքրիկ 'ի բերանն հիւանդին, յայնժամ պա՛րտ է ատէպ ատէպ ողողել զուրն և զբերանն քացոխախառն մեղրիւ։ Իսկ 'ի դիպուածս, յորում վէրքն չեցեն սաստիկ ցաւագին, պարտ է հոլիլ լուծեալ ջրոմն պօռաչէի կամ վիթռիօլօ պիանքօի։

Դարձեալ, 'ի դիպուածս յորում ջլսկան տենդս լինի յոյժ վտանգաւոր, և գէղք կամ խաղաւարտք կապտագոյնք կամ սեւագոյնք զուգընթաց գոտանին ընդ ախտիս, յայնժամ հարկ է առնուլ 'ի կիր զքինա քինա, որ եցէ եփեալ գինեաւ։ Այլ վասն նուազութեան քրտանց, և այլ հնարից սակս խափանելոյ զվերստին դարձն այսր տենդի՝ գրեթէ նոյն է ընդ դարմանատուութիւն անընդհատ և սուր տենդի, զոր մէ խօսեցաք լեռվին յօդ։ ՀՀ։

ՅՕԳՈՒԱԾ Զ.

'Ի վերայ Ռոմկական պէնդէ, որ յիպալայոց՝ Քէպպոէ ռէմրրէնրէ յայնի։

Տենդս այս թուականն տարորոշի յանընդհատ կամ 'ի շարունակ տենդէն միայն առանձնաւ իւրով. քանզի և սա ըստ օրինակի անընդհատ տենդի ոչ անջատի և ոչ հեռանայ բնաւ յախտաժեռէն յամենայն ընթացս հիւանդութեան. բայց 'ի մէջ քսան և չորս ժամուց բաղում անգամ առաւելեալ սաստկանայ, և բաղում անգամ ևս նուազի. յայն սակս և հիւանդն 'ի վայրկեանս ինչ լինի ուժեղ և զօրաւոր, և 'ի վայրկեանս ինչ՝ տկար, և ապիկար։

Պապճառ Ռոմկական պէնդէ։

Տենդս այս հասարակօրէն ծագի և պատճառի 'ի բորակածին օդոց. որպիսի են՝ օդքն բնակչաց խոնարհագոյն, ստոթագին, և գիճագոյն գաւառաց, որք սովորաբար են թանձր, և ախտարծարծ. || քանզի օդոյն 28երորդ մասն ևեթ է թթուածին և առողջարար. իսկ 72երորդ մասն է բորակածին, թանձր և ճնասակար մարդկային կենաց. որ կոչի՝ կազ, և աղօթ ||։ Նմին երբ յաճախակի պատահի տենդս այս 'ի կողմանս ափրիկոյ, 'ի պոնկալա, և յայլ արևմուտեան սահմանս հնդկաստանի։ Տենդս այս սովորաբար սկսանի դէպ 'ի սկիզբն ամառան, և աւարտի 'ի մտանելն ձմեռան։ Անձինք՝ որ ստէպ բնակին 'ի խոնաւուտս, յանտառս, և յաշտորայս, որք աշխատին 'ի բացօթեայս, և որք ոչ անձնապահ լինին 'ի տուընջենային հրատապ օդոյ, և 'ի գիշերային ցօղոյ, և ապրին անառողջ և դժուարամարսելի կերակրեղինօք, են ենթակայ այսր տենդի։

Նշան Ռոմկական պէնդէ։

Ատանօր խօսիմք զառաւել գլխաւոր նշանացն միայն։ Քանզի դրեթէ բովանդակեն յինքեանս զնշանս ամենայն տենդից 'ի մի և 'ի նոյն անձն. բաղում ան-

գամ տարորոշին և փոփոխին այլ և այլ կերպիւ յայլ և այլ ժամանակս նշանք այսորիկ տենդի։ Գլխաւոր նշանք են յօրանջումն, ձգտումն, անկարգ եղկութի, և ցնորումն. անդէն նոյնհետայն սկսանին 'ի վեր երևիլ սաստիկ ցաւ ինչ գլխոյ՝ հանդերձ պտուտիւ, գեղնութի մորթոյ մարմնոյ, մանաւանդ աչաց, սպիտակութի լեզուի, ցաւ ուժգին 'ի մի կողմն ստամքաւ, և ժայթքումն կամ փսխումն մաղձի. զարկ բազկին լինի հոծ և լի։ Ախտակիրն երբեմն զդայ յանկարծօրէն 'ի վերայ յարձակիլ մարմնոյն՝ ջերմութի ինչ, իսկ երբեմն ցրտութի սաստիկ. որովայնն երբեմն լինի լոյծ, բայց սովորաբար պինդ. մէզն հասարակօրէն լինի բորբոքեալ։ Բազում անգամ ևս նշանք կշտացաւութե և յօգուտածացաւութե լիով 'ի վեր երևին։

Պատուաստութի 'ի կիր արկանելի 'ի դիպուածս Ռուսական պենդի։

'Ի դիպուածս ախտիս ջնջք ինչ կարևորագոյն և օգտաւէտ քան զմաքրութի. քանզի 'ի ձեռն այսր մաքրութեան մեծապէս նպաստ ընծայի ախտակրին. նմին իրի արժան է յաճախակի փոխել զհանդերձս կամ զպանելիս նորա, և պարտ է 'ի մէջ սենեկի նորին հանապազօր շրջագայիլ բարեխառն և առողջաբար իմն օդոյ և հողմոյ, և ստէպ ստէպ սրսկել կամ ծխել զքացախ, զհիւթն կիտրոնի, և կամ զայլ ինչ և իցէ սաստիկ հոտաւէտս։ Ըմպելին պիտի լինել թեթև, հեղեղիչ, և զովացուցիչ բնութիւն. և պարտ է բացէ 'ի բաց հրաժարիլ 'ի մսոյ, յարգանակէ, և յայնմ ամենայնէ, որք առթեն զնեխութիւն։ 'Ի դիպուածս, յորում նշանք ջղական տենդի 'ի վեր երևին, հարկ 'ի վերայ կայ յայնժամ 'ի կիր արկանել զնոյն կառավարութիս և դարմանս՝ զորս գրեցաք 'ի տեղիս իւրեանց 'ի նախաւանդեալ յօգուտածս։ Դարձեալ՝ պարտ է ախտակրին վայելել 'ի մեծի անգորրութե՝ եթէ ըստ մարմնոյ, և եթէ ըստ հոգւոյ. հրաժարիլ արժան է յամենայն կերպ իրաց, որք նեղեն զսիրտս, և գրգռեն զչիղս։

Կարևոր դեղերայք 'ի վեր արկանելիք ընդդէմ Ռուլակոն պէնդի։

'Ի դիպուածս յայս երակահատութեան հազիւ հազ է հարկաւոր. բայց զփսխողականն հարկ է միշտ 'ի կիր արկանել առ 'ի մաքրել զստամոքսն և զփորոտինն. վասն որոյ պարտ է տալ իբէքաքուանա, որոյ ներգործութիւնն դիւրացուցանի՝ պատրաստելով 'ի թեթև ինչ թրմոց կամ ջուր երիցկի. բայց ուր ուրեմն պահանջի 'ի դիպուածս յայս ուժգին և զօրաւոր փսխողականն, առ որ բաւական է հասարակօրէն 16 կամ 20 և կամ շատ ևս 30 կշիռ ցորեան իբէքաքուանա վասն միոյ չափահասի. իսկ երբեմն բաւական լինի 16 ցորեանն։ Բաղում անգամ ևս 'ի կիր առնումք երկու կշիռ ցորեան՝ թառթառս էմէթիքս. յաւելլով 'ի նոյն 12 կամ 14 ունկի՝ ջուր եղուզեալ 'ի ցքահանէ, կամ հասարակ, և տամք հիւանդին ժամէ 'ի ժամ սկահակ մի սրձոյ, մինչև պատճառեսցի փսխումն կամ լուծումն որովայնի։ Եւ յետ այնորիկ պարտ է 'ի վաղ արկանել երեք կամ չորս անգամ յաւուրն մէն մի ունկի՝ թրմոց քինաի, որ բաղադրեալ իցէ հիւթոնէ կիտրոնի կամ շարապաւն հաղարջի։

Երբեմն առ 'ի շինուցանելոյ զջերմութեն և մեղմելոյ զչափազանց արագութեն զարկի բաղկին՝ այլազգ. ևս առնեմք զգործածութեն քինաի, որ այսպէս բաղադրի։ Ա՛րկ զխոշոր փոշի կեղևոյս ըստ կշռոյ ունկեւոյ միոյ 'ի յաւեթ ունկի ջերմ ջրոյ. զկնի երկուտասան ժամուց՝ քամեա կտաւով. յոր յաւել քսան և հինգ կաթիլ էլիսիրէ աչիտո տի հալլէռս, և տուր ըմպել հիւանդին վեց անգամ յաւուրն՝ զկշիռ միոյ ունկեւոյ։

Ընդ այսոցիկ գիտել արժան է, զի յետ դարմանելոյ և ապաքինելոյ այսր տենդի՝ գոտանին ինչ ինչ հնարք՝ և միջոցք, 'ի ձեռն որոց մարթ է լինել կարգադրութիւն՝ թեթև և դիւրամարսելի կերակրեղինաց և զբօսանաց. քաջայայտ է ապաքէն, եթէ հնար է փոխել զնառնուածս մարմնոյ ախտակրին 'ի ձեռն ճահոլսգոյն կարգադրութեան 'ի կեանս, և այդպէս գլխովին արմատաքի խլել զախտս զայս. միայն թէ ըստ բաւականին յարատև 'ի գործ դիցին պայմա-

նեալ կանոնադրութիւնք, որքան 'ի կերակուրս թէ թեւս անուցիչս՝ և դիւրամարսելիս, և 'ի գեղրայս խթիչս և զօրացուցիչս, որպիսի են՝ թրմոցն քինա քինաի, զոր խաալայնք կոչեն՝ ինֆուզիոնէ տի քինա, զորմէ խօսեցաք լեռվ 'ի յօդ. Գ: Դարձեալ՝ իրաւունք զախտակիրն կանխել յընթրիսն, և ոչ ածապարել խակեիսկ զկնի ընթրեացն 'ի մահիճ անդր: Եւ պարտ է հրաժարիլ յամենայն ոգիաւոր հեղանիւթից, մանաւանդ 'ի կիրառութէ ուժգին օղւոյ:

ՅՕԴՈՒԱԾ Է.

'Ի վերայ ապամոքական փենդի, որ յիպալաց՝ ֆէպպրէ ինտերմիտա յայնի:

Յորժամ տենդ ինչ սաստիկ՝ եթէ ընդհատ և եթէ անընդհատ՝ կուգընթաց իւր ունի զաժգունութիւն դիմաց, զդեղնութիւն աչաց, զթուլութիւն ստամոքսի, զձանձրութիւն կամ զտառապանս, զուռուցումն, և զձգտումն որովայնի, զանախորժակութիւն կերակրոց, և զյորդառատ փսխումն թթու և ժահահոտ նիւթոց, յայնժամ տենդն այն անուանի՝ ֆէպպրէ քոնթինուա կասթրէքա, այսինքն տենդ անընդհատ ստամոքական. կոչի և ֆէպպրէ պիլիօզա. այսինքն տենդ մաղձային: Յերկրին անդղնոյ և գաղղնոյ տենդս այս հաստարակօրէն սկսանի դէպ 'ի յաւարտ ամառան, և աւարտի 'ի մոտանէն ձմեռան: Դարձեալ՝ տենդս այս ստէպ գտանի 'ի ջերմ և 'ի տօթագին գաւառս, մանաւանդ յերկիրս ճահնուտս և խոնաւուտս, և է վտանգաւոր իսկ. և եւս անձինք, որք բնակին 'ի բացօթեայս, և աշխատին յարտորայս և 'ի դաշտավայրս, և որք ոչ անձնապահ լինին 'ի գիշերային օդոյ են, են առաւել ենթակայ այսր տենդի:

Ընդ սոսին գիտել արժան է, զի տենդս այս երբեմն ծագի 'ի մաղասէ կամ 'ի տողունից, յայնժամ կոչի՝ ֆէպպրէ բիլիուլիօզա. երբեմն յորդանց, յայնժամ ասի՝ ֆէպպրէ վէռմինօզա. և երբեմն եւս զոյգ լինին Ը տենդիս նշանք ջղական տենդի, յայնժամ անուանի՝ ֆէպպրէ կասթրէքա նէրվօզա, որ-

ալէս ունիս տեսանել 'ի սորև, յորոց ոչ սակաւ լուսաւորին վիտք՝ յորժամ խնամով մտադիր լինիցի ոք։

Պատճառք անընդհատ սպասողական փէնդի։

Սկզբնական պատճառք տենդիս դատին յառաջութենէ մաղձի, և յոսպականութէ հիւթոց գումարելոց 'ի մէջ ստամոքսի և փորոտեաց. որք լինին յանչափ ուտելոյ խակ մրգաց, 'ի գործածութէ ոգիաւոր հեղանիւթոց, յուժգին ործացուցիչ և լուծիչ գեղորէից, 'ի ցրտոյ և 'ի սաստիկ ջերմութէ, յարդելմանէ սովորական հոսմանց, և արտաշնչութեան մարմնոյ, 'ի քուն լինելոյ 'ի բացօթեայս՝ այլովքն հանդերձ, որովք ներքին բարեխառնութիւնն այլայլեալ, և մաղձն վրդովեալ գրգռեն զլեարդն, և զսահմանն ախոնդանաց։ Դարձեալ, բազում անգամ յառաջ գայ տենդս այս 'ի յաճախ և 'ի մօտաւոր կենակցութենէ ընդ ախտացեալ անձանց, որովհետև տենդս այս է տարաւիրսիկ, մանաւանդ յայնժամ, յորժամ զուգընթաց գտանին ընդ տենդիս նշանք ջղական տենդի։

Նշանք անընդհատ սպասողական կամ մաղձային փէնդի։

'Ի դիպուածս տենդիս բաց 'ի վերոգրեալ նշանաց 'ի վեր երևին նախ քան զաւուրս ինչ ախտակրութէ հիւանդին՝ սաստիկ ցրտութէ, ջերմութիւն, անհանգստութէ սրտի, ծանրութէ գլխոյ, նողկանք ստամոքսի, թուլութէ մարմնոյ, ուռուցումն և մղձկումն խախտացոցի։ Դէմքն լինի տժգոյն, լեզուն սպիտակախառն դեղին, բերանն չոր, գառնահամ և խժայլին, որովայնն երբեմն լինի լոյծ, բայց սովորաբար պինդ, ցաւ ինչ սաստիկ 'ի փորոտիան, և գժուարութիւն 'ի շնչառութէ, կղկղանքն դեղնագոյն և գարշահոտ։ Եւ յետ քանի ինչ աւուրց՝ ջերմութէ և թաչկութէն աճելով աճեն, և օր քան զօր նորանոր նշանս արտայայտեն. և հիւանդն զդայ զծարաւ սաստիկ, զպտոյտ գլխոյ հանդերձ անհնարին ցաւով. զարկ բաղկին բաղխէ երբեմն արագ արագ, և երբեմն միջահատակսն, և անկանոն. գոյն երեսացն երբեմն լինի կարմիր, և երբեմն դեղին. 'ի վեր երևի դողդոջումն ստորին շրթանց, ցնորումն, տքնութէ, ցաւ կրծոց, ու-

ստոց, և կոկորդի. մէջն լինի հասարակօրէն դեղնագոյն՝ հանդերձ կարմիրերանգ մրրովք: Երբեմն ախտակիրն բնութիւն չարժի 'ի հոսումն արտասուաց ուռատօրէն, և երբեմն ևս ունչն ձևակերպի 'ի գոյն կանաչ. հազն երբեմն լինի չոր, և երբեմն խոնաւ. քիրան 'ի վերբ երևի 'ի ճակատն, և 'ի կուրծս. մորթն լինի ցամաք և չոր: Եւ 'ի հասանիլ ախտիս յայս աստիճան, յայնժամ ամենայն նշանք առաւելեալ ուստկանան, ցնորումն և ցաւն գլխոյ, ստամոքսի և լերդի զայրանան, և զարկ շնչերակին լինի սրընթաց, մանր, և անկանոն:

Պատճառք մաղասային տենդի, որ յիպալոյոյ ելի՝ քիպոկրատ բիբլիոթիկայ:

Ամենաւոր պատճառք մաղասային տենդի՝ են աւելութիւն և թանձրամածութիւն տիղունից, դանդաղկոտութիւն ընդհանուր, ապականութիւն մաղասային հիւթոց, տկարութիւն մանրաթելից ստամոքսի: Երբեմն ևս ծագի յերկարատև թանչից, 'ի փորհարուէ, 'ի շատկերութէ, և 'ի շատ քնոյ, մանաւանդ անմիջապէս յետ կերակրոյ, որով մարսողական զօրութիւն խանգարի և անբաւական լինի 'ի տրորել և 'ի հալել զընկալեալ կերակուրն, և պատճառէ ըզ տենդս զայս: Սա հասարակօրէն տիրապետէ յաշնան և 'ի ձմեռան եղանակի, և կարի հասարակ է 'ի հիւսիսային կողմանս, ուրանօր եղանակն լինի ցուրտ և խոնաւ: Անձինք որք սովորաբար են ենթակայ այսր տենդի, են վիճակեալք տկար կազմուածոց, և մաղասային խառնուածոց, և ևս նոքա, որք ուժաթափ լեալ են յերկարատև հօթութէ, յանհալ և 'ի դըժուարամարսելի կերակրեղինաց:

Նշան մաղասային տենդի:

'Ի դիպուածս տենդիս, հասարակօրէն զուգընթաց լինին թեթև ինչ ջերմութի և թուլութի անդամոց՝ լեզուն և խոռոչն բերանոյ լինի թանձրամած և մաղասուտ, մանաւանդ 'ի պահ առաւօտեան. և յետ այնորիկ սկսանի ախտակիրն զգալ զնողկանս և զնեղութի սրտի, զծանրութի գլխոյ, զջնջիւն ականջաց, զփքոտութի, զանախորժակութի կերակրոց:

Զարկ բաղկին երբեմն լինի յամբ, և թոյլ. և երբեմն լի, և կարծր. մորթն հասարակօրէն ջերմ է և ցամաք կամ ջոր։ Քիրան բնաւ ուրեք ոչ գտանի, այլ եթէ գտանի ևս, կորի նուազ և բռնի։ Մէզն լինի հում և մոխրաջրեայ։ Ախտակերն կրէ զծաբաւ սաստիկ. (բայց ոչ որպէս 'ի դիպուածս մաղձային տենդի.) և հասարակօրէն ստորին որովայնն լինի փքալից և այտուցեալ, և 'ի միջոցն զմատունս յուռուցեալ մասունս ստորին որովայնի, խակոյն զգայ զցաւ ուժգին. փսխէ զնիւթ ի մեծուցիկ և սպիտակ զօրէն սաղմի, և համն այսորիկ նիւթոյ երբեմն է անհամ, և երբեմն թթու և դառն, որ և ցամաքեցուցանէ զկոկորդն։ Բաց յայսոցիկ նշանաց հիւանդն կրէ և զհազս, զձնշումն ստամոքսի, զհեծկլտանս, զդժուարութիւն 'ի կլանելն և 'ի շնչառութենէ։ Եւ զկնի քանի ինչ աւուրց 'ի վերայ երևին վէրք կամ խոցք փոքրիկ 'ի խոռոչս բերանոյ, և յայնժամ իսկ և իսկ զհետ գայ ցաւ ինչ 'ի մասունս յօդուածոց, մանաւանդ 'ի գիշերային պահու, հանդերձ սաստիկ ի մեն ջերմութեամբ մորթոյ, և այս ջերմութիւն սովորաբար լինի ընդհատ, այսինքն օր ի մէջ. բաց յընդհատ ջերմութենէ սաստ 'ի վերայ երևի ևս հակումն, թմբրութիւն և պտոյտ գլխոյ։ Այլ գիտելի է, զի տենդս այս մաղասային բաղում անգամ աւարտի և փոխարկի յախտն, որ կոչի՝ Ֆէպպրէ Նէռվօզա, կամ մալինեա։

Նշանք որդնեռաց տենդի, որ յիպալաց-ոց ասի՝ Ֆէպպրէ Վէռմինօզա։

Սեպհական նշանք որդնեռաց տենդի են՝ ուժգին և խթիչ ցաւն յօդուածոց, մարմնոյն ունգաց, հոսումն լորձունաց, սաստիկ ջերմութիւնն, նոպկութիւնն, փսխումն, վրդովումն ստորին որովայնի, ցնորումն, անբնական շարժումն մկանաց կամ ջղաց, յաճախ ուշագնացութիւնն, արտելումն ձձեաց կամ 'ի վերուստ և կամ 'ի ստորուստ, որոց ոմանք են կենդանի, և ոմանք մեռեալ կամ նեխեալ. և առատապէս հոսումն խժային և նեխեալ հիւթոց 'ի ստորուստ, հանդերձ խեթիւ արբանին։

Կառավարութիւն և դեղորայք 'ի կիր արկանելի 'ի դէպս ոպամոփոկան կամ մաղձային դէնդի։

Կառավարութիւն ախտիս է մի և նոյն ընդ խնամատարութեան անընդհատ տենդի։ Իսկ դեղորայքն այսորիկ անընդհատ ստամոքական տենդի, նոյնպէս համաձայնին ընդ դեղորէիցն վերոյիշեալ անընդհատ և սուր տենդի. յայն սակս պարտ է մերձեցուցանել հիւանդին նախ զփսխողական դեղն, առ 'ի մաքրել զստամոքսն և զփորոտիսն, որով միւս դեղորայքն լինին անվրէպ ներգործիչք. քանզի 'ի դիպուածս յայս ստամոքսն և փորոտիքն հասարակօրէն լինին բեռնաւորեալք ախտարծարծ մաղձիւ և ապականեալ հիւթով, որպէս և բաղում անգամ պատահի, զի հիւանդն ժայթքէ առատօրէն զմաղձս երփներանգս, և զնիւթս ապականեալս. և այսու բնութիւն զեկուցանէ բաւականապէս զհարկաւորութիւն փսխողականին, որ է ճշգրիտ և գլխաւոր դեղ վասն այսր տենդի։

Կարի կարևոր և անվրէպ ներգործիչ փսխողական դեղն 'ի դիպուածս յայս՝ է թառթառս էմէթիքս։ Զայս եթէ կամիս առնել, արկ զնուրբ փոշի ըստ կշռոյ երկու կամ երեք ցորենոյ՝ 'ի լիտր մի ականակիտ ջրոյ. զկնի խառնելոյ տուր ըմպել ախտակրին տասն վայրկեանէ 'ի տասն վայրկեան սկահակ մի արձոյ 'ի պահ առաւօտուն, մինչև պատճառեսցի փրսխումն կամ լուծումն որովայնի. և եթէ սկսանի փրսխողական դեղն 'ի ներգործել 'ի վերուստ, յայնժամ պարտ է խափանել զգործածութիւն սորա, և տալ սրագ սրագ ախտակրին զջուր գաղջ, կամ զգաղջ ջուրն երիցկի, առ 'ի առաւել մաքրել զստամոքսն. այլ նկատել օրէն է 'ի վերնակս ախտի, 'ի պարագայս կաղմուածոց մարմնոյ, յուժգնութիւն նշանացն, 'ի չափն հասակի հիւանդին, և յայլ բազմակերպ հարկաւորագոյն պարագայս, որոյ վասն պարտ է երբեմն նուազել, և երբեմն յաւելուլ զչափն նախայիշեալ ործածուցիչ դեղոյն։ Իսկ եթէ զկնի փսխելոյ՝ ջերմութիւն ոչ նուազի, բերանն և որկորն ոչ տամկանայ, և ցաւն գլխոյ և այլ նշանքն ոչ թեթևանան, յայնժամ օրէն է վերստին առնուլ 'ի կիր զփսխողական դեղն նովին չափով և օրինակաւ մինչև ցեր-

ըորդ և ցչորրորդ անգամ. և այս մարթի լինել 'ի միջահատուածեն երկուց կամ երից աւուրց, և առաւել ևս ըստ պահանջելոյ նշանացն։ Բայց եթէ զկնի միանգամ առաջին փխառղական դեղոյն՝ ջերմուածին նուազի, բերանն, որկորն, լեզուն և մարթն մարմնոյ տամկանայ, և հիւանդն լինիցի հանգստացեալ, յայնժամ չէ օրէն բնաւ վերակրկնել։

Նոյնպէս չէ օրէն, և է գլխովին վտանգաւոր 'ի գործ արկանել զնոյն, այսինքն թառթառս էմէթիքս 'ի դիպուածս, յորում զուգընթաց գտանիցին ընդ տենդիս՝ էթիզիա, փորհարուածն, և ակարուածն կրծոց, ևն։ Եթէ վերոյիշեալ ախտքն՝ փորհարուածին, նուրբ ախան, և այլ պարագայք խոչընդոտան լինին գործածուածն վերոյգրեալ ործացուցիչ տորտոյ, որպէս պատահի բազում անգամ, յայնժամ պարտ է ձեռնամուխ լինել փոխանակ սորա 'ի գործածուածն իբէքքաքուանա արմատոյն, զորոյ զքանակուածն և զներ-գործուածն մարթիս տեսանել 'ի հատ. ը. 'ի տառն ի. 'ի կարգի ներում։ Բայց մեք զայս դեղ ևեթ անբաւական համարիմք 'ի պատճառեալ զառողջուածն. վասն որոյ հարկաւոր դատիմք ևս սրբել զորովայնն տոսկապէս 'ի ձեռն թեթև և մեղմ լուծողականաց և գրեխաց։

Իսկ եթէ 'ի ձեռն այսոցիկ ործացուցիչ, և լուծիչ դեղորէից չլինիցի հնարաւոր դադարումն ջերմուածն, և նուազումն նշանաց, յայնժամ պարտ է առնուլ 'ի կիր զյեատադայ դեղորայս։ Ա՛ռ չորս լիտր զջուր հասարակ, յոր յաւելլ և զերկու լիտր շիճուկ կաթին, կամ զչորս ունկի՝ օսիմէլէ սէմբլիչէ, և տուր ըմպել հիւանդին ստէպ յաւուրն, առ 'ի զովացուցանել զջերմուածն, և 'ի պահպանել զընդերս 'ի փտուածէ։ Իսկ եթէ այսորիկ ջերմուածիւն կարի ինն սաստիկ լցէ, և կից ընդ բորբոքման, յայնժամ 'ի վերայ բովանդակ նախագրեալ նուսխայի ըմպելլոյդ՝ մարթ է յաւելուլ զքսան՝ մինչև 340 շինթս աչիտս վինթռիօլիքս։

'Ի դիպուածս յայս փոյթ մեծ ունել պարտ է առ 'ի զօրացուցանել զկենսական զօրուածն, և 'ի զերծ պահել զընդերս 'ի նեխուածենէ. վասն որոյ բաց 'ի դեղորէիցն՝ զորոց խօսեցաք վերագոյնդ, հարկ է ձեռնամուխ լինել 'ի դեղորայս առաւել զօրաւորս, և առաւել ներ գործիչս, որպիսի են՝ քինա քինա,

աչխատ վիճռիօղիքդ , ևն : Զայս եթէ կամիս յօրինել, արկ զխոշոր փոշի կեղևոյս ըստ կշռոյ ունկուց միոյ 'ի լիտր մի ջերմաջերմ ջուր . զկնի 12 ժամուց՝ հեղ զգուշութիւն զհեղուկն յանօթ ապակի , այնպէս զի մի խառնեսցի մրուրն ընդ պայծառ հեղանիւթոյն . ապա յաւելՀ 'ի սոյն զ40 շիթս աչխատ վիճռիօղիքդ , և տուր ըմպել ախտակրին վեց կամ ութ անգամ յաւուրն զչափ միոյ գրգալի սեղանոյ :

Բացէ 'ի բաց հրաժարիլ արժան է յերակահատութենէ , 'ի ՀԷսասակար ուտելեաց , յոգիաւոր հեղանիւթոց , 'ի ցուրտ և 'ի խոնաւ օդոց , 'ի խթիչ և 'ի հրապուրիչ դեղորէից , ևն : 'Ի դիպուածս , յորում նշանքն ջղական տենդի 'ի վեր երևին , հարկ 'ի վերոյ կայ յայնժամ 'ի գործ արկանել զնոյն դարմանս և դեղորայս՝ զորս նախագրեցաք լիով 'ի տեղիս իւրեանց 'ի յօդ . Ե : Զկնի դադարման տենդիս արժան է առնուլ 'ի կիր զթրմոցն քինա քինաի , զորոյ զկազմելոյ զկերպն մարթիս տեսանել 'ի յօդ . Ղ . միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի տասն և հինգ օր :

Կատավարութիւն և դեղորայ 'ի վար արկանելի 'ի դիպուածս անընդհատ մաղասային տենդի :

Կատավարութիւնք մաղասային տենդի նոյն են ընդ կատավարութիւն ստամոքական տենդի : Պարտ է պահպանել զհիւանդն 'ի հանգիստ, և զդոյշ 'ի ցրտոյ . հեռի առնել 'ի նմանէ զայն ամենայն , որք առթեն զձանձրութիւն , և զանձկութիւն սրտի : Կերակուրքն լինելոց են թեթևագոյն , դիւրամարս , և փոքր քանակութիւ : Իսկ ըմպելին զովացուցիչ և անօսրիչ, որպէս ջուրն կրամինաի , թարաքսաքօի , և չիքօռիաի , ևն : Ործացուցիչ կամ վիսխոզական դեղն որպէս 'ի մաղձային տենդի , նոյնպէս և ատ կարևոր դատի . բայց յայսմ դիպուածի կարի հարկաւորապէս ևս պահանջի , մանաւանդ եթէ նողկացեալ ելցէ ստամոքսն . և պարտ է միշտ զթաւթառօ էմէթիքօ ձայնեալ ործացուցիչ տորան մերձեցուցանել նմա 'ի նոյն իսկ վայրկենի , յորում նշանքն ախտիս քաջայայտ երևին . և չափ քանակութիւ ործացուցիչ տորտոյն պատշաճ է լինել համաձայն զօրութիւ ախտակրին , և ուժգնութեան ախտիս , որպէս խօսեցաք 'ի վերՈ անդր 'ի դի-

պուռնս Ֆէպպռէ քօնթինուա կասթռէքայի։

Եթէ զկնի փսխողականին հիւանդն տակաւին բաց 'ի ջերմութէ զգայ զանհամութիւն բերանոյ, զանհոր ժակութի, և զանհանգստութիւն որսի, յայն ժամ օրէն է վերսին 'ի վար արկանել զործացուցիչ դեղն ըստ եղանակին, զորմէ գրեցաք 'ի տեղւոջ իւրում։ Բայց յայսմ փոյթ ունել պարտ է և գուն գործել առ 'ի կակղացուցանել և անօսրել յառաջագոյն զլիանձրամածութի տողունից՝ կիրառութիւն վերոյիշեալ կրամինեաի, թառաքսոքօի, և ն. և ապա ակսանիլ պատշաճ է զկիրառութի ործացուցիչ դեղոյ։ Իսկ եթէ զկնի գործածութէ նախագրեալ դեղորէից, մնայ տակաւին ախտն նոյն օրինակ, յայն ժամ պարտ է պատրաստել լուծողական դեղ ինչ թեթև, որպիսի է ռապառապառն խառն ընդ քանի մի ցորեան իբէքաքուանաի։ Բայց որովհետև 'ի գլ. պուռնս յայս գործածութէն այլազգ լուծողականի՝ պատճառէ երբեմն զսաստիկ փորհարութի, յայնժամ օրէն է զհետ երթալ կանոնի, և դարմանոյ, զորմէ ունիմք խօսել յետոյ 'ի գլ. ԺԲ։

Նոյնպէս ախտս այս բազում անգամ՝ եթէ ոչ բարբոք խնամ և դարման տարեալ լինի, փոխարկի սովորաբար 'ի տենդն ջղական. յայնժամ պարտ է ակսանիլ զգործածութի դեղորէից ըստ կանոնի և ԺԲ կերպի, զորմէ գրեցաք 'ի գլ. Ա. յօդ. Է. ըստ ամենայն պարագայից։ Իսկ զատն միւս այլատեսակ ախտին կոչեցելոյ՝ Ֆէպպռէ վէռմինօզա, այսինքն տենդորդնեռաց, գիտելի է, զի վերոյիշեալ կառավարութիք և դեղորայք են յոյժ պատշաճողականք, որովհետև զուգընթաց գտանի Ը ախտիս միշտ նոյն ուժգնութի ջերմութէ, և տաղտկութէ։

Յետ այսոցիկ արժան է 'ի վար արկանել զդեղոբայս առ 'ի սպանանել և արտաքս վանել զորդունս և զճճիս. որպիսի են՝ վալերիանա, սէմմ սանդօ, ասսա Ֆէթիտա, խարտաճն պողպատի, և անագի։ Բայց յընտրութէ դեղորէից հրաժարիլ արժան է 'ի կարի խթանիչն և 'ի նմանեաց. ապա ձեռն արկանելի է յաղդու և 'ի պարզ նպաստս, որպիսի է զանգուած ինչ հատադեղոյ, բաղադրեալ 'ի վեց կշիռ ցորեան՝ մէռքուռիօ տօլչէ անուանեալ անդկէ, և յերկոտասան կշիռ ցորեան՝ ասսա Ֆէթիտա յորջորջեալ խժոյ։ Յօրինեալ աստի վեցեակ հատիկս՝ երկու առ

ցին ընդ առաւօտս, երկու նախ քան զՀաչն, և այլ երկու ընդ երեկս, միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի վեց օր։ Այլ եթէ ստամոքսն ախտակրին, և այլ պարագայքն ընդդիմակալ լինին գործածուէ վերոգրեալ դեղորէից սնդկաւ պատրաստելոց, որ ոչէս պատահի բազում անգամ, յայնժամ օրէն է միանգամայն 'ի վար արկանել զործացուցիչ դեղս ըստ վերոցուցեալ եղանակի։ Եւ յետոյ՝ 'ի գործ արկանել զգրեխս քացախիւ և ջրով պատրաստեալ։

Բայց որովհետև 'ի դիպուածս յայս ստամոքսն և փորոտիք ախտակրիս սովոր են լինել յոյժ տկարագոյն, վասն որոյ պարտ է առ ժամանակ մի 'ի վար արկանել զթրմոց խաշնդեղի, կամ քինայի, և կամ ալլոց զօրացուցիչ և դառնահամ դեղորէից, որպիսի են ասէնցիս, կեղև նարնջոյ, և խարտաճն երկաթոյ լուծեալ 'ի գինի։ Եւ յոյժ շահաւէտ է յայսոսիկ դիպուածս շրջիլն 'ի զբօսանս ըստ տանելոյ կարողութեանն ախտակրին, 'ի ձեռն որոյ յորդորի հոսուածն քրտանց։

ՅՕԴՈՒԱԾ Ը.

'Ի վերայ ջղային դանդաղ պէնդի, որ յիպոլոյոոյ՝ ֆէպպոէ լէնԲա նէոՀՕղա կոչի։

Դասարակ է ջղային դանդաղատենդս այս յեւրոպիայ, ուրանօր յաճախ պարապին յընթերցմունս, և յուսումնական վաստակս, և գրեթէ սակաւք 'ի յուսումնասիրաց լինին զերծք յախտէ յայսմանէ։ Անձինք, որք վարեն զանշարժական կեանս, և ապրին անանուն և դժուարամարսելի կերակրեղինօք, են առաւել ենթակայ այսմ ախտի։

Պոպճաոտ ջղային դանդաղապէնդի։

Այն ամենայն, որք գրգռեն զջիղս, պակասեցուցանեն զարիւնն, և զկենսական ոյժն, առթեն զտենդս զայս, որպիսի են տխրութիւն, երկիւղն, անհանգստութիւն, տքնութիւն, խորին մտածութիւնն, ձանձրութիւն, սիրահարութիւն, և հեշտութիւն իգա-

մոլ։ Եւ եւ՝ յաճախ երեսակահատութեան, ուժգին փըսխողական և լուծողական դեղորայքն, չափազանց արբեցութեան, տհաս պտուղքն, փքոտ և ջրային խոտեղէնքն, նուազ սնուցիչ և դժուարամարսելի կերակուրքն, ընկողմանելն 'ի վերայ գէջ գետնոյ, մնալն ընդ երկար թացեալ ոտիւք և զդեստիւք, լճացեալ ջուրքն մեռասակարք, և յաճախ պակասութիւնքն առողջարար պարենից, այս ամենայն ասեմք՝ պատճառք են ախտիս։

Նշան ջրային դանդաղապենդի։

'Ի դիպուածս յայս հասարակօրէն զուգընթաց լինի զգացումն ինչ ջրային բռնութեան, անսովոր տկարութեան, թեթեւ դժուարաշնչութիւն, յօրանջումն, լքումն, բաբախիւն սրտի, ախոնդանոտութեան, գըրգռականութեան, թօսումն կամ անձկութիւն, հառաջանք, ցաւ և պտտումն գլխոյ, տոչորումն ստամոքսի, նոպկութեան սրտի, յօժարութեան 'ի ժայթքել, ճընշումն կրծոց, տքնութեան, շնչումն ականջաց, ձգրտումն, ցաւ ստորին որովայնի, և մեղամաղձութեան։ Ախտակիրն ունի ցնորումն թեթեւ, ամփոփումն քնքոց, անհանգիստ է և աչաբաց 'ի քուն լինելն, և հանապազ սոսկալի տեսլեամբ և երազօք տաժանի. երբեմն կրէ զմղձկումն և զդողդոջումն ձեռաց և ոտից, և երբեմն փոխչի 'ի լուսոյ և 'ի մարդոց. հոսէ անդադար զսրտասուս յաչաց, սիրէ զառանձնութեան, ծամածռէ և խանդաբէ զերեսս, յաճախ ընկողմանի 'ի վերայ թիկանց, և բաղխէ զոտն ձեռամբ առ'է որսալ զձանձ։ Զարկ բազկին երբեմն լինի անզօր, արագ, դողդոջուն, և միջահատ. և երբեմն կարծր և կծկեալ։ Մէզն լինի դեղնագոյն, շիճկայլին, և փուչելից։ Բերանն և միջին մատն լեզուի հասարակօրէն լինի չոր կամ ցամաք, բայց հիւանդն չունի զծարաւ սաստիկ, և հազիւ երբէք կամի ըմպել զջուր։

Եթէ յարաւեւեալ մնասցէ ախտս այս, յոյնժամ տկարութեան և անուժութեան աճելով աճի, և օր քան զօր զայլ նորանոր նշանս արտայայտէ, և ախտակիրն ակամի զգալ զթմբրութեան, զցաւ ինչ արտեւանաց, և զնեղութեան անհնարին. և այդոքիկ նշանք սովորաբար սաստկանան 'ի գիշերի, և 'ի ծագիլ առաւօտու թէ

թևանալ սկսանին։ Ախտակիրն զգայ յանձն զոյգ ընդ նշանացս միանգամայն և ցրտութիւն և ջերմութի ինչ. յայն սակս 'ի վեր երևի կարմրութիւն յերեսս հանդերձ ջերմութիւ, և կարի սպիտակութի յեղջերեայ թաղանթս աչաց։ Հուսկ յետոյ այնքան սաստկանայ տկարութի կամ թալկութին, մինչև հիւանդն ոչ ևս կարէ յոտն կանգնիլ։

Ընդ այսոցիկ գիտել արժան է, եթէ չիք ինչ պայմանեալ սահման յապաղման այսր տեսակի տենդի. ուր ուրեմն մարթ է 'ի ձեռս բերել զկատարեալ ապաքինութիւն 'ի մէջ մեռասան կամ վեշտասան աւուրց. երբեմն յերկարաձգի մինչև 40 աւուրս, և երբեմն ևս յարատևէ ամիս ինչ. և վասն այսորիկ անուանեցաւ՝ ջղային դանդաղատենդ։ Այլև զայս արժան է գիտել, եթէ տենդս այս գործածուի ներհակական դեղորէից մարթի փոխարկիլ 'ի մնշարակական ախտն, զոր խտաշացիք՝ թիղն անուանեն։ Նշանք բարեգոյնք՝ են տամկութի լեզուի, բերանոյ և մորթոյ մարմնոյն, և նորոգութի զօրութե 'ի մեռասաներորդում կամ 'ի վեշտասաներորդում աւուրն, հանդերձ ջափաւոր և գոլորշային քրտամբ, որ ցուցակ է արմատախլելոյ ախտիս։

Քունն ջափաւոր և ախորժակք կերակրոյ ևս՝ են նշանք բարի։ Իսկ նշանք վատթարագոյնք և մահաբերաւէրք՝ են ուժգին որովայնալուծութին, հոսումն ցուրտ և խժային քրտանց, դորշագունիլն երեսաց, առաւել սպիտակուին յեղջերեայ թաղանթս աչաց, 'ի վեր երևումն խոցից 'ի խոռոչս բերանոյ, դժուարաշնչութին, ցնցումն ջղաց, ձգտումն ձգանաց, քնահատութի, նուազումն սրտի, կնճռումն գիմաց, եղծումն լսելեաց, դժուարութի յարատևութիւն զաւելորդս որովայնի, դողդոջումն լեզուի, հեծկլտանք, ընդոստ և միջահատ շարժումն զարկի բազկին։

Կառավարութի 'ի վեր արկանելի 'ի դիպուածս ջղային դանդաղատենդի։

'Ի կառավարութի այսր ախտի խնամ մեծ տանել արժան է առ 'ի կանխաւ ունել զառաջն, զհիւանդն քաջալերել, և կանոնաւորել զժուժկալութին որ կորոյ, հեռի առնել 'ի նմանէ զայն ամենայն, որ պատճառէ զձանձրութի և զնեղութի սրտի, և ապա

'ի բաց հերքել զախաս 'ի ձեռն թեթև ործացուցիչ և զօրացուցիչ դեղորէից։ Ճահողագոյն կերակրեղէն է հացաթանն՝ յոր մարթ է յաւելուլ սակաւ ինչ շաքար 'ի բարեխառնել. ընտիր մասն վարսակի, խաշուն բրնձոյ, հացն բարուոք եփեալ և թրջեալ 'ի մէջ գինւոյ։ Եւ ըմպելին ջուրն կրամինեան բաղադրեալ հիւթովն կիտրոնի կամ քաղցր նարնջոյ, շիճաուկն կաթին բաղադրեալ ընդ գինւոյ։ Նոյնպէս և օգտաւէտ է ջրախառն գինի։

Դեղոյց 'ի ներ արկանելի 'ի դիպուածս ջղային դանդաղութեանցն։

'Ի սկզբան անդ հիւանդութեանն, եթէ ախտակիրն զգայ զյօժարութիւն ինչ 'ի փսխել, զցաւ ստամոքսի կամ ստորին որովայնի, յայնժամ պատշաճ է տալ նմա 15 կամ 20 կշիռ ցորեան՝ իբէքաքուանա, և զայս պարտ է առնուլ 'ի պահ առաւօտու 'ի ծոմուստ։ Եւ յետ այնր ըմպել զկաշուն երիցկի՝ որչափ պէտք իցեն ստ ժայթքելոյ ըստ պահանջելոյ հարկին։ Եւ այս փսխողական ոչ միայն մաքրէ զստամոքսն, այլ և զսիրժէ զքիրսն, և երբեմն առանց իրիք նպաստաւորուն այլոց դեղորէից փարատէ զտենդս զայս։

Իսկ եթէ զկնի քանի մի աւուրց զօրանայ ախտն և ստատկանան նշանքն, յայնժամ փսխողականն չլինի այնքան ապահովապէս ներգործիչ, և օգտակար։ 'Ի գիպուածս յայս երակահատութիւնն, և ամենայն սառաիկ և զօրաւոր լուծողականքն՝ են յոյժ վնասաբեր, և վտանգաւոր։ Մինայն յայսր տեսակի տենդի մարթ է 'ի վար արկանել զուապառապառս, որ այն ինքն է խաշնդեղ, որ մեղմապէս լուծիչ է և զօրացուցիչ։ Ես զարմատս զայս տամ ըստ կերպի փոշւոյ, կամ նաև իբր թրմոց։ Եթէ իբրև փոշի, պարտ է լինել մի և կէս տրամ նուրբ փոշի խաշնդեղ, յոր յաւէլ չորս ունկի՝ զշիճաուկն կաթին, որ իցէ պատրաստեալ գինեաւ։ Իսկ եղանակն, զոր պահեմ 'ի տալն թրմոց, է այս. արկ զնոշոր փոշի արմատոյս ըստ կշռոյ ունկւոյ կիսոյ՝ 'ի հինգ ունկի ջուր ջերմ. զկնի 12 ժամուց՝ հեղ զդուշութիւն յանօթ ապակի, այնպէս՝ զի մի խառնեսցի մրուրն ընդ պայծառ հեղանիւթոյն, և յետոյ տուր ըմպել հիւանդին 'ի պահ առաւօտուն 'ի ծոմուստ։

Գրելն պարտի լինել ջրոնն երիցկի կամ վարսակի, խառն ընդ կաթին, և աղի, զոր պարտ է 'ի վար արկանել յերկուս կամ յերիս աւուրս միանգամ։ Դարձեալ՝ 'ի գիպուածս յայս յոյժ օգտակար և բարեգոյն վարկանիմ զվէշեքաթօռիս, զոր պատշաճ է դնել 'ի վերայ ծոծրակի, և բաղկաց։

Ըստ սասակուլթե թալկուլթեն, և այլ յոռեգոյն նշանաց պահանջի և առաւել հոգածութիւն և մտադրութի ախտիս, և դեղորայքն յայնժամ լինելոց են զօրացուցիչ, և խթիչ. որպիսի են մուշկն, քափուրն, ցնդական աղն եղջերն եղջերուի, բեշկն մշկոյ, և ն. որ այսպէս բաղադրի։ Ա՛ռ տասնեւհինգ կշիռ ցորեան՝ մուշկ, երեք ցորեան՝ քափուր, և վեց ցորեան՝ սալ վոլսթիլէ տի քօռնս տի չէռվս, և յաւէլ յայնչափ շարապ կամ շիռօք՝ որչափ պէտք իցեն առ կազմելոյ զզանգուած։ 'Ի զանգուածոյ աստի 'ի վեց ժամն միանգամ առնու հիւանդն վեց կշիռ ցորեան առ իւրաքանչիւր նուագ։

Եթէ ախտն չնուազի 'ի վէշեքաթօռիսէ և 'ի զանգուածէ աստի, կարող եմք յայնժամ 'ի վար արկանել զառաւել ազդու դեղորայս. որ այս կերպ յօրինի։ Տասն կշիռ ցորեան՝ ամենանուրբ փոշին սէռբէնթաւիա վիռձինիանա անուանեալ արմատոյ, նոյնչափ՝ փոշին քօնթռայէռվա արմատոյն, և հինգ ցորեան՝ փոշին բէշկ մշկոյ, յաւելլով 'ի նոյն զշարապն քրքմոյ այնչափ՝ որչափ պէտք իցեն առ կազմելոյ զզանգուած։ Եւ զայս պարտ է առնուլ երիցս անգամ յաւուրն։

Բաց 'ի զանգուածոց աստի՝ գոյ և այլ դեղ, որ առանց զայրացուցանելոյ զօրացուցանէ զլիզս և նուազէ զախտն, որ այսպէս յօրինի։ Ա՛ռ քսան կշիռ ցորեան՝ արմատն վալէռիանայի, (որ Ժողովեալ իցէ 'ի լեռնային տեղեաց.) և չորս ցորեան՝ քրքում, և նոյնքան բէշկ մշկոյ. զամէնն 'ի միասին լոսեա՛ բարիոք. տո՛ւր ախտակրին երեք կամ չորս անգամ յաւուրն՝ խառն ընդ շիճուկի կաթին, որ բաղադրեալ իցէ գինեաւ։

Եւ զայս պարտ է գիտել, եթէ տենդս այս գործածութիւնքն ներհակական դեղորէից մարթի փոխարկիլ 'ի տենդն ջլական. նմին իրի պարտ է կրկին և կրկին քննութիւս առնել 'ի վերայ նշանացն, և ապա 'ի վար արկանել զդեղորայս։ Այլև գիտելի է, զի

ընդ տենդիս այսմիկ երբեմն զուգընթաց լինի տենդն ընդհատ, և կամ զկնի ապաքինելոյն 'ի վերայ գայ նոյն տենդն ընդհատ. յայնժամ հարկ է 'ի վերոյիշեալսն յաւելուլ զքինա քինա, և յարատև 'ի գործ արկանել մեծաւ քանակութիւն՝ ընդ երկար ժամանակ, որպէս զի խափանեսցի վերադարձն այսպիսի դժբաղդութեան, և զի բարձցին ամենայն հետք նախ ընթաց ջղային դանդաղատենդի:

Բարեգոյն եղանակն առ 'ի կիր արկանելոյ զքինա՝ է յետագայս: Ա՛րկ զնոշոր փոշի կեղևոյս քինայի ըստ կշռոյ ունկուոյ միոյ՝ 'ի քսեատ մի ցքուոյ կամ օղուոյ, և յաւել 'ի վերայ՝ կէս ունկի կեղև դառն նարնջոյ, և երկու տրամ՝ սէռբէնթառիա վիռճինիանա, և մի տրամ՝ քրքում. զկնի երեք կամ չորս աւուրց քամեա զայն կտաւով յանօթ ապակի. և տուր ըմպել ախտակրին երեք կամ չորս անգամ յաւուրն ըստ չափու երկուց դրգալից սրճոյ՝ խառն ընդ փոքր ինչ գինւոյ:

Գտանին և այլ տեսակք տենդից, զոր կոչեն՝ թիֆօ, և ֆէպպռէ փուռիտա, որոց դարմանք նոյն են ընդ դարմանոյ ջղային տենդի:

Բարառնուռիւն Տենդի:

Զի՞ դու՝ զի՞ գրրի՛չդ՝ թըւով 'ի յարմար,
կարգես ըզՏենդիս՝ ճիշդ ազգահամար.
ըստ ազգաց ազգաց՝ և ըստ պատճառաց,
բերել 'ի տեսիլ՝ զյոքնագէմ գումար:
Մի եմ ես միակ՝ բոլոց համայն ախտից,
ըսկիզբն և աւարտ՝ հետք մահուն մլտից.
նա միայն անվէր՝ առ յիմոց ժանեաց,
որ չէտես զարև՝ կենցաղոյս ասոից:
'Ի թևերս հողմոց՝ ժանտից թըռանիմ,
'ի հրոյ և ջրոյ՝ արկածս դարանիմ.
դիմեմ անարգել՝ ընդ տարր ամենայն,
յօդք մարմնոյ և հիւթք՝ բընիկ կայան իմ:
Թէ մարմնոյ բնութիւն՝ ինև տապանայ,
միտք 'ի դարմանել՝ հոգովք ախտանայ.
ուր գեղովք կարծիմ՝ լինել 'ի բացէ,
անդ վերադարձի՝ երկիւղ զօրանայ:
Քեզ խըրատ ազգօղ՝ տամ ինձ հակառակ,
մի՝ առ մարմնոյ կիրս՝ լինիր անառակ.
որով չըմբռնիս, կամ բուժիս արագ:

ԳԼՈՒԽ Բ.

Ի վերայ ընդհանուր բորբոքման կամ պապմանց։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Բորբոքումդ անուն թէպէտև հասարակ, այլ յարմարի ի գործածութիւն իտալական բառին՝ ինֆիամմացիոնէ, որով նշանակի բորբոքումն, եղեալ ի բայէ անտի՝ ինֆիամմառէ, որ է լուցանել կամ բորբոքել. յորմէ և արտաբացիք միւհրիւքան, կամ իթիհապ կոչեն, և պարսք՝ կիրիմ, որ է խօթութեան ինչ տապացուցիչ, և վտանգաւոր, ծագեալ յաճեցմանէ և ի ձկամանէ ջերմութեան արեան, որ լինի ի խթողական հիւթոց մռեալոց և ճապաղեալոց յերակս, և ի ներքին եռացուցիչ կրից ոգւոյ, և այլևայլ տենդից և ախտից, որպէս տեսցի իւրաքանչիւր յիւրում տեղւոջ։ Դ.ախ բերէ ցրտութիւն և հրակէզ ջերմութեն, և ապա խստութեն կամ կարծրութեն ինչ որ և իցէ ընդերաց կամ անդամոց կենդանւոյն, հանդերձ կարմրութեբ և ցաւով, և լիութեբ՝ ուռուցութեբ՝ և կարծրութեբ զարկի բազկերակին. և ցաւն այն՝ որ սովորաբար ի վեր երևի ի նոյն խստացեալ անդամն, լինի երբեմն թեթև, և երբեմն ուժգին. երբեմն ծանր և խռկեալ, և երբեմն խայթիչ և բաբախ. յորմէ բաղում անգամ զհետ գան խցանք ինչ խիստ, և պատճառեն զալաբար, զնստիայթ, զնեխութիւն և զքաղցկեղ, և երբեմն ևս զմահ։

Ընդ այսոցիկ գիտել արժան է, զի պէսպէս անուանս ընծայեն այսմիկ բորբոքման, ըստ այլևայլութեամանցն որք են ենթակայ ընդունելոց զայս։ Դ.ախ՝ յորժամ բորբոքումն զկայ առնու յուղեղն կամ յայլ ներքին մասունս գլխոյ, յայնժամ անուանի՝ ինֆիամմացիոնի էֆալիքէ, կամ ինֆիամմացիոնէ տէլ էեուվէլլօ. այսինքն բորբոքումն ուղղոյ։ Երկրորդ՝ եթէ բորբոքումն այս ի վեր երևի յաչս, յայնժամ կոչի

օթթալմիա. այսինքն բորբոքումն աչաց։ Երրորդ՝ եթէ յականջս, յայնժամ ասի՝ օթիթիտէ. այսինքն բորբոքումն ականջաց։ Չորրորդ՝ 'ի լինելն բորբոքման 'ի լեզուն, ասի յայնժամ գլոսսիթիտէ։ Հինգերորդ՝ 'ի լինելն յորկորն, յորջորջի յայնժամ էնանքէ. ընդ այսու տեսակաւ են բորբոքումն խռչափողին, հագագին, քմաց, մակալեզուին և։ Վեցերորդ՝ եթէ բորբոքումն 'ի վեր երևի 'ի թոքս և 'ի լանջամիջկս, յայնժամ անուանի՝ բէռիբնէումոնիա և բլէուռիթիտէ։ Եօթներորդ՝ եթէ 'ի սիրտն, յայնժամ ասի՝ քարդիթիտէ։ Ութերորդ՝ եթէ 'ի ստոծանին, յայնժամ կոչի՝ տիաֆռամմաթիտէ։ Իններորդ՝ եթէ 'ի ստամոքսն, յայնժամ ասի՝ կասթռիթիտէ։ Տասներորդ՝ եթէ 'ի ստորին որովայնն, յայնժամ ձայնի՝ ինթէռիթիտէ։ Մեռասաներորդ՝ եթէ 'ի լեարդն, յայնժամ կոչի՝ հեպաթիտէ։ Երկոտասաներորդ՝ եթէ 'ի փայծաղն, յայնժամ ասի՝ սպլէնիթիտէ։ Երեքտասաներորդ՝ եթէ յերիկամունս, յայնժամ կոչի՝ նէֆռիթիտէ։ Չորեքտասաներորդ՝ եթէ 'ի փամփուշտն, յայնժամ ասի՝ չիսթիթիտէ։ Իսկ հինգտասաներորդ՝ եթէ յարգանդն, յայնժամ կոչի՝ մատռիթիտէ. զորս յայսմ վայրի սկիզբն արասցուք մի առ մի ստորագրել ըստ վերոյեդեալ կարգի։

ՅՕԳՈՒԱԾ Բ.

'Ի վերայ բորբոքման ուղղոյ, որ յիպալայոոյ կուգի՝ ինքիամ մոյիօնէ պէռ էռվէլլ։

Բորբոքումնս այս երբեմն է գոյացական, և բաղում անգամ ևս է իբր նշան ինչ այլ ախտից, որպէս բորբոքողականքն տենդից, ևն. ուր ուրեմն մարթ է ախտիս լինել գոյացական, և այն յանձինս յարբուն հատակի եղեալս, և 'ի բնակութիւնս ջերմագինս։ Անձինք հրոյինք, որք ունին զկիրս ատատիկս, են ա՝ ուաւել ենթակայ բորբոքմանս։

Պատճառք Բորբոքման ուղղոյ։

Բորբոքումն այս բազում անգամ պատճառի և 'ի հակմանէ, մանաւանդ եթէ հակումն լինիցի հանդերձ տաժանաւոր խորհրդով, և խոր մտածութեամբ։ Դարձեալ՝ մարթ է ծագիլ 'ի չափազանց ըմպելոյ ոգիաւոր հեղանիւթոց, 'ի սաստիկ սիրահարութէ, 'ի տրտմութէ, յուժգին և 'ի մշտատև գլխացաւութէ, յարգելմանէ իրիք սովորական հոսման, զորօրինակ թանչից, դաշտանի, ևն։ Եւ ևս նոքա՝ որք անզգուշաբար ընկողմանին 'ի տօթագին արևու, կամ բաց գլխով 'ի քուն լինին ընդդէմ հողմոյ, 'ի բնակութիս ջերմագինս՝ են ենթակայ ախտիս անվրէպ։ Նոյնպէս մարթի պատճառիլ ևս 'ի հարուածոց 'ի գլուխն, 'ի գոնջութէ, 'ի յօդուածացաւութէ, և 'ի բորբոքմանէ թոքոց, ևն։

Նշանք Բորբոքման ուղղոյ։

Սովորական նշանքն 'ի դիպուածս յայս՝ են անկայուն ցրտութիւն, խորշոմութիւն մարթոյ, խոնջութիւն, և թուլութիւն ձեռաց և ոտից, անձկութիւնն, և տխրութիւն, անանգորրութիւն սրտի, անսովոր ջերմութիւն, դիւրագրգռութիւն հոգւոյ, և խանգարումն երևակայութէ։ Ախտակիրն ունի ցնորումն թեթև, մշտատև տքնութէ, մոռացկոտութէ, սաստիկ քաջասրտութէ, երբեմն զուարճացեալ ծիծաղի, և երգէ բարձրաձայն, և երբեմն լայ և ողբայ, և ստէպ շարժէ զձեռն առանց ինչ պատճառի։ անհանգիստ է 'ի քուն լինելն, և միշտ ահագնատեսիլ և սոսկալի տեսլեամբ և երազօք տաժանի։ կրէ սովորաբար զպտոյտ գլխոյ, զդողդոջիւն ձեռաց և ոտից՝ ևս լեզուի, զանախորժութէ կերակրոց, և զդժուարամարսութէ։ ստէպ ժայթքէ զտողունս ժանգագոյնս, և կրէ զսաստիկ ցաւ գլխոյ, և ցաւս այս զկնի սակաւուց եղեալ տարածանի 'ի զանազան մասունս գլխոյ, և առաւել ևս յուղեղն, 'ի ջիղս, և 'ի խատամայրս, և յայնժամ իսկ և իսկ սկսանին հարկանել յաճախակի շնչերակք քնքոց, և պարանոցի։

Յայս վայր խօսեցեալ նշանքն՝ են անեղկեան և դանգաղկոտք։ Իսկ նշանք որք փութապէս 'ի վեր

երևին՝ են յեռագայքդ։ Զկնի վերոյգրեալ անհաստատ կամ անկայուն ցրտութենն՝ իսկ և իսկ զհետ գայ ջերմութի ինչ սուր, և քիրան յորդահոս. զարկ բազկերակին լինի կարծր և սրընթաց, երբեմն և սկար, գողդոջուն, անհաստատ, և անկանոն. մէջն լինի առատ, լոյծ և դեղնագոյն. ցնորումն առ սակաւ սակաւ յաւելանայ. բերանն և լեզուն լինին չոր և ցամաք, բայց ախտակիրն չունի զծարաւ սաստիկ, և հազիւ երբէք կամի ըմպել։ Ախտակիրն ունի զվիշտս և զտագնապ մեծ. և ձայնն լինի կերկերեալ և այլափոխեալ. անդադար բարբանջէ և քրթմնջէ. մորթն գլխոյ, և դէմքն լինին այտուցեալ, և գոյն աչաց սաստիկ կարմրերանգ, տեսիլք սոսկալիք և երկիւղալից. երբեմն և յուժգին ջերմութէ և գլխացաւութէ գլխովին իանգարի զգայութենն և բանն. ստէպ դնէ զձեռս 'ի վերայ գլխոյ. արագ արագ բանայ և խփէ զաչս, փախչի 'ի լուսոյ, հոսէ անդադար զարտասուս, բաղխէ զօդն ձեռամբ առ 'ի որսալ զՀանձ, առնէ և այլ այսպիսիս՝ Հանգոյն գիւաՀար մոլեգնելոց։ Դարձեալ, ախտս պատճառէ երբեմն զդժուարաշնչութի, զուշադնացութի. զցնցողականութի, և զլուանոտութի. և երբեմն և արձակէ 'ի բերանոյ զփրփուրս յորդառատս։

Յաղագս կառավարութեան՝ զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դիպուածս բորբոքման ուղղոյ։

'Ի դիպուածս բորբոքման ուղղոյ նախ քան զամենայն պարտ է ջանալ 'ի պակասեցուցանել զարիւնն, որ է 'ի մէջ ուղղոյն. պարտ է ախտակրին վայելել 'ի մեծի Հանգստեան. այն ամենայն, որ կարէ զայրացուցանել զզգայութենն, և խռովեալ վրդովել զերևակայութենն, առաւելապէս սասակացուցանէ զախտս զայս. մանաւանդ զի և առատութի իսկ լուսոյ է յոյժ վնասակար. վասն որոյ և սենեակն՝ յորում բնակի հիւանդն, պարտի լինել ոչ այնքան ջերմ, և ոչ այնքան ցուրտ։ Դարձեալ, պարտ է ունել զախտակիրն միշտ ուրախ և զուարթ, ոչ է օրէն բնաւ գործել ինչ ընդդէմ կամաց նորին, այլ մանաւանդ պարտ է ջանալ 'ի կատարել զախորժակս և զինդրուածս նորին։ Կերակրոյն նորին արժան է լինել թեթև, և միանգամայն պատրաստեալ աղերօք,

որպէս ընտիր վարսակի, գարւոյ, և՚ն. նոյնպէս պատշաճ է ուտել զմիրգս եփեալս 'ի վերայ հրոյ, որպէսի են քաղցրաւէնիք, և՚ն։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դիպուածս բորբոքման ուղղոյ։

Առաւել օգտաւէտագոյն դեղն 'ի դիպուածս սխտիս՝ է հոսումն ինչ արեան յընդացն, որ եթէ ինքնին բնութիւն ոչ շարժի, պարտ է յայնժամ շարժել զայն բռնութիւն, 'ի ներքս մուծանելով ընդացն զիր ինչ մղիչ կամ առիթիչ։ Երակ հատանելն 'ի դիպուածս յայս յերակէն որ կոչի՝ եուկուլարէ, է յոյժ օգտաւէտ, բայց պարտի լինել 'ի ձեռն ուրուք հմտագոյն վիրաբուժի. որովհետև երակ հատանելն յայդմ երակէ՝ յոյժ դժուարին է և որոգայթաւոր։ Նոյնպէս է յոյժ շահաբեր հոսումն ինչ թանչից. վասն որոյ պարտ է 'ի գործ արկանել զամենայն հնարս կարելիս առ 'ի շարժել զնոյն հոսումն. պարտ է դնել քանի ինչ տզրուկս 'ի քունջս քնքոց, կամ 'ի յետին կողմն ականջաց, կամ 'ի ծոծրակն, և կամ 'ի յերանս, և նստուցանել զախտակիրն 'ի վերայ շոգեաց ջրոյ, և՚ս 'ի գործ արկանել զգրեխս պատրաստեալս զովացուցիչ և կակղացուցիչ դեղորէիւք, և մարթ է յաւելուլ 'ի վերայ և՚ս սակաւ ինչ քացախ։

'Ի դիպուածս յորս յառաջ գայ ախտս այս յարգելականութիւն իրիք հոսման, եթէ բնականի, և եթէ անսովորականի, պարտ է փութալ վաղվաղակի շարժել զնոյն հոսումն, և կամ ընուլ զտեղի նորա 'ի ձեռն այլ ինչ իրաց։ Մինչ պարտ է լոյծ պահել զորովայնն 'ի ձեռն գրեխաց, և թեթևագոյն լուծողականաց։ Յոյժ օգտակար դեղ է և՚ս գրեխ առնել 'ի զովացուցիչ դեղոց, և 'ի հեղանիւթոց, որպիսի են քացախ, սաղ նիլթռս, և՚ն. և՚ս 'ի գործ արկանել նիլթռս սակաւ քանակութիւն 'ի մէջ հասարակ ըմպելւոյ ախտակրին։ 'Ի սակիպողական դիպուածս մարթ է զայն նիլթռսն 'ի գործ արկանել 'ի մէջ 24 ժամուց երկու տրամ, կամ և՚ս առաւել։ Պարտ է դերծուլ զգլուխն ախտակրին, և խառնեալ զքացախն ընդ անուշադրի, և ընդ նիլթռսի, շփել այնու զգլուխն ստէպ ստէպ յաւուրն. կամ թացեալ այնու զչուխայ, պարտ է դնել 'ի վերայ գլխոյ նորին։

Արդ՝ 'ի ժամանակի, յորում 'ի գործ արկանեմք զդարմանս զայս, յայնժամ պատշաճ է դնել զոտս ախտակրին 'ի գաղջ ջուր մինչև ցծունկս, կամ 'ի բաղանիս մուծանել զբովանդակ մարմին 'ի դիպուածն յորում բորբոքումն ուղղոյ պատճառեալ լինի յարենէ, կամ 'ի պղտորութենէ նորին։ Եւ եթէ յառաջ գայ բորբոքումն ուղղոյ 'ի սեամաղէէ, յայնժամ ցուրտ ջրով բաղանիս առնելն է յոյժ օգտակար, և յարմարագոյն։ Այլ եթէ զկնի 'ի գործ արկանելոյ զամենայն վերոյգրեալ հնարս, տակաւին բորբոքումն մնայ նոյն օրինակ, յայնժամ հարկ է դնել զվէշլեքաթօռիս 'ի վերայ այնր մասին գլխոյ, ուր առաւել զգայ զցաւն. և այս ոչ միայն քարշէ արտաքս զցաւս գլխոյն, այլ և ս շինչուցանէ զբորբոքողականութիւնն։ Սովորութիւն է և ս յայդպիսի դիպուածս բորբոքողականութիւն, տալ քանֆիօռա ընդ նիթռօի բազում ցորեանս. նոյնպէս ատէպ 'ի կիր առնուն մուսքիոն, և օբբիոն. բայց մեծի զգուշութիւն պէտք են առ 'ի կիր արկանել զայսպիսի խթիչ կամ գրգռիչ դեղորայս, և զայն 'ի պահանջել հարկին միայն, այսինքն առ 'ի անօրինել զանկարգ, զալէծուփ, և զդողդոջուն ընթացս զարկի բազկերակին։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յաղագս բորբոքման աչաց, որ ասի օֆթալմիա։

Ախտքն աչաց են բազմաթիւ, որոց ենթակայ է մարդն, որք յառաջ գան 'ի բազմազան պատճառաց, ուստի և մարթին վչտացուցանել միանգամայն և տկարացուցանել զզանազան գործարանս տեսանելեաց, և զպէսպէս ջիղս աչաց. բայց մեք խօսեսցուք յառաջիկայդ զառաւել հասարակ ախտից աչաց, որք ունին զոյդ ընդ իւրեանս զբորբոքողականութիւնս, և զվտանգ լինչ կուրութեան։

Յաղագս բորբոքման և ախտից աչաց։

Բորբոքումն կամ ախտ աչաց՝ է յոյժ յաճախ յեգիպտոս, քան յայլ մասունս աշխարհի, և այս գուցէ

յառաջ գայ 'ի տօթագին շնչմանէ հողմոց, կամ 'ի միզախառն փոշեաց, և կամ 'ի տօթախարշ աւազոց, որք ստէպ մնանեն յաչս մարդկան։ Իսկ սովորական տեղիք կամ կայանք բորբոքման են թաղանթքն, և շառաւիղք աչաց, և այլ գործարանքն տեսութեց։

Պատճառք բորբոքման և ախտից աչաց։

Սկզբնական, և մասնաւոր պատճառքն բորբոքման և ախտից աչաց՝ են անպայման պարապումն յընթերցանութիս, և 'ի գրութիս, մանաւանդ 'ի գիշերային պահու. յերկարաւէ հայեցուածն 'ի վերայ սպիտակագոյն և փայլուն իրաց. որպիսի են ձիւնն, թուղթն, անդամանդն և։ Նոյնպէս ընդ երկար ուշնելն 'ի վերայ լուսատու իրաց, զորօրինակ արեգական, լուսնոյ, փայլական, հրոյ, ճրագի, և։ Դարձեալ, արգելականութիւն որ և իցէ հոսմանց. զորօրինակ է հոսուածն արեան յրունգացն, գաշտանի, արտաշնչուածն մարմնոյ, մանաւանդ քիրտն ոտից, և։ Բազում անգամ ևս պատահի և յառաջ գայ յանչափապէս գործածութենէ ոգիաւոր հեղանիւթից, 'ի հսկմանէ, յանձկութէ, 'ի տխրութէ, 'ի սաստիկ բարկութէ, 'ի ճնշմանէ ոգւոյ, 'ի պնդութէ որովայնի, 'ի փոշեաց և յայլ ո՛ և իցէ նիւթոց մտելոց յաչս, 'ի գոլորշեաց թիւնալի մեռաղաց, և հանքաց, 'ի բարկ և յաղդու ծխոց փայտից և այլոց նիւթոց, 'ի տկարութէ ջլաց, յանսանձ սիրահարութէ և 'ի վաղաշոտական ցանկութէ, յիկուածոց, 'ի հարբբիոց։

Նոյնպէս յառաջ գալ մարթ է բորբոքմանս, եթէ ոք զկնի քրանելոյ նստիցի հանդէպ հողմոյ, կամ ընկողմանիցի 'ի վերայ գէճ գետնոյ, և կամ բաց գըլխով 'ի քուն լինիցի ընդդէմ հողմոց, և։ Դարձեալ ախտս այս յոլով անգամ ևս յառաջ գայ 'ի գաղղիական ախտէ, 'ի խղճայթից, 'ի սքռոֆոլօ կոչեցեալ խուլէ, 'ի բորոտութէ, 'ի գոնջութէ, յորքիւնէ, 'ի ոլիսակէ, 'ի վարդախտէ, 'ի սքօռպութիօ անուանեալ ախտէ, 'ի հնացեալ վերաց, և։ Յայսցանէ և 'ի սոցին նման ախտից յառաջ եկեալ ախտքն աչաց ոչ բնաւ ապաքինին, եթէ ոչ նախ բուժեսցին վերոյասացեալ ախտքն. յայն սակս պարտ է նախ դարման տանել ախտիցն այնոցիկ՝ յորոց պատճառին, 'ի

գործ արկանելով զկառավարութիւնս և զդեղոցս սեփականս իւրաքանչիւր ախտից։

Յաղագս նշանաց բորբոքման աչաց։

Գլխաւոր նշանք են ուժգին այտուցն, արտասուէն, կարմրութիւն, ցաւն, և ջերմութիւնն աչաց. հանդերձ խղճայթիւ, որք 'ի դոյզն ինչ շօշափմանէ առաւել ևս զայրանան և աճին. և միով բանիւ ասացից, տարաբաղդիկ ախտացեալս՝ լինի գլխովին անընդունակ իրիք լուսոյ։ Ախտակիրն զգայ ջերմութի, և ծանրութի ինչ գլխոյ, զարկ բազկերակին լինի խիստ և արագ։ Յերկարաձգեալ մնալն այսորիկ բորբոքման, սովորաբար 'ի վեր երևին բիծք և լուսունք 'ի մէջ տեսանելեաց, և ուրեք ուրեք 'ի բիբս աչաց, որք երբեմն գլխովին արգելուն զտեսութիւն։ Դիտել արժան է, եթէ բորբոքումն լինիցի յոյժ դժնեայ և զօրաւոր, և զոյգ ընդ այնմ գտանիցի սաստիկ ցաւ ինչ գլխոյ, յայնժամ իսկ և իսկ ջՀետ գայ տկարութի ինչ գործարանացն տեսանելեաց, և երբեմն ևս կուրութի գլխովին։

Յաղագս կանոնի և կառավարութեան, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դիպուածս բորբոքման աչաց։

'Ի նշանաց այսորիկ ախտի քաջայայտ երևի, եթէ հարկաւորապէս պահանջի կառավարուն նմին, որով մարթ իցէ բարեխառնել զջերմութիւնն, և շինուցանել զբորբոքողականութիւն։ Կերակրոցն պարտ է լինել թեթևագոյն, և դիւրամարս, որպիսի են թեթև արգանակն, կաթն, ևն։ Ըմպելին նորա պարտի սովորաբար լինել ջուրն գարեոյ, կամ վարսակի, շիճուկն կաթին, թեթև լիմոնաթթու, և թամարինդի, յորոյ վերայ արժան է յաւելուլ սակաւ ինչ շաքար, որ լինի յոյժ պատշաճողական ըմպելի 'ի դիպուածս յայս։ Պարտ է որքան մարթ իցէ՝ 'ի հանգստեան և 'ի յանդորրութեան ունել զախտակիրն, և 'ի բաց տանել զայն ամենայն, որք կարեն զայրացուցանել զաչիւնն և սաստկացուցանել զբորբոքումն զայս. մանաւանդ զի և առատութեան իսկ լուսոյ է յոյժ վնասակար. վասն որոյ և սենեակն՝ յորում բնակի ախ-

տակիրն, պարտի լինել մթագին. և արժան է լինել ոչ այնքան ջերմ, և ոչ այնքան ցուրտ։

Յաղագս դեղոցէից, զոր մարն է 'ի վար արկանել 'ի դեղապուռածս բորբոքման աչաց։

Յայսպիսի դիպուածս պարտ է հարկաւորապէս երակ հատանել և հանել զարիւն իբր տասն կամ երկոտասան ունկի. և գրեթէ այդ է սեպհական դեղն, զորմէ կախեալ կայ բարի ելքն աչաց. բայց նկատել արժան է յար 'ի պարագայս անձին. զոր օրինակ 'ի հասակն, 'ի զօրութիւնն, 'ի սասակութիւնն նշանաց. և՝ն։ Օգտակարագոյն է միանգամայն դնել զտզրուկս 'ի մերձադիր մասունս աչաց, կամ 'ի յետկոյս ականջացն։ Նոյնպէս արժան է 'ի գործ արկանել զվէշիքաթօռիս, զոր և պարտ է դնել 'ի վերայ ծոծրակի, կամ յետկոյս ականջաց։ Դարձեալ պարտ է միշտ լոյծ ունել զորովայնն 'ի ձեռն կակղացուցչէ և բարեխառն դեղոցէից. որպիսի են քուէմօռոի թաւթաւռս, թամառինտի, ռասպառպառս, սալկլաուպէռ, սէննա, նիլթռս, և՝ն։ Այլև պարտ է 'ի գործ արկանել զգրեխս կակղացուցիչս միանգամ յաւուրն։ Նաև պարտ է դնել և յաճախակի զոտս ախտակրիս 'ի ջերմ ջուր մինչև ցծունկս։

Յոյժ օգտակար դեղ է և քսթաբլազմա առնել 'ի զովացուցչէ և 'ի մեղմիչ ծաղկանց գաղջ կաթամբ և միջուն հացի, և ստէպ ստէպ անընդհատ դնել 'ի վերայ ցաւագնեալ աչաց. և նախ քան զպաղիչն պարտ է փոխել և վերանորոգել. չէ՛ պարտ լինել այնքան սասիկ ջերմն, և ոչ կարի ցուրտ. քանզի առաւել ջերմն, և կարի ցուրտն հաւասարապէս վնասակար են աչաց։ Երբեմն և պատշաճական է յայսմ դիպուածի լաւատանս լիգուիտոն, զոր պարտ է հեղուլ 'ի մէջ ցաւագնեալ աչաց երկու անգամ յաւուրն զկշիռ երկու ցորենոյ։ Իսկ եթէ ախտակիրն ունիցի քնհատութիւն կամ տքնութիւն, յայնժամ արժան է տալ նմա յամենայն երեկոյի՝ զոտան և հինգ կամ քսան շինթս նոյն լաւատանս լիգուիտոն։ Այլ եթէ յաւաղ գայ բորբոքումն աչաց 'ի տկարութէ, և 'ի թուլութէ ջլաց, յայնժամ ցուրտ ջրով բաղանիս առնելն է յոյժ օգտակար, և յարմարագոյն։

Դարձեալ, նշանաւոր դեղ իմն է յայսմ բորբոքման

յետագայ խառնուրդս։ Ա՛ռ կէս ունկի օղի, կամ քացախ, և երեք ունկի ջուր ցուրտ, խառնեա՛ 'ի միմեանս, և տո՛ւր ցաւակրին ստէպ ստէպ լուանալ զաչս իւր։ Բայց առաւել բարեգոյն դեղն յայսմ դիպուածի է խառնուրդ ինչ, որ այսպէս բաղադրի։ Մ՚ի տրամ՝ ֆիւոր տի ծինքօ, և երկու տրամ՝ կօմ մա առապիքա, և վեց կամ եօթն ունկի ջուր հաստարակ։ 'Ի խառնուրդէ ասսի՝ պարտ է ախտակրին լուանալ զաչս իւր՝ վեց կամ եօթն անդամ յաւուրն։ Եւ ինձ իսկ ոչ այլազգ յաջողեցաւ դարման տանիլ, բայց եթէ տալով զտուաւել յարմարականն յարտաքին դեղորէից ասսի, որպիսի են լիգուօռ օթթալմիքօ, և թութիա, զորմէ լեագոյն տեսցես 'ի հատ. ՟. 'ի տառն Թ. 'ի կարգի իւրում։

Յաղագս դեղոյ դեղոյ և խնամապարուրեալ, զոր պարտ է 'ի վեր արկանել զնի անցանելոյ բորբոքման ալոց։

Բայց որովհետև 'ի դիպուածս յայս գործարանքն տեսութեց և արտաքանունքն աչաց ախտակրիս՝ առվոր են լինել յոյժ տկարագոյնք և թուլագոյնք, վասն որոյ պարտ և պատշաճ է խօթացելոյն 'ի կիր արկանել ստ. ժամանակ ինչ ինֆուզիօնէ տի քինա, և զկերպն 'ի կիր առնելոյ սորա տես 'ի հատ. ՟. 'ի տառն Ի. 'ի կարգի իւրում։ Դարձեալ, 'ի դիպուածս յայս պատշաճողական է նաև խարսանն, զոր մարթ է բանալ 'ի սրուանս կամ 'ի բազուկս, և թողուլ բացեալ ընդ բովանդակ կեանս ցաւակրին։ Այլ և 'ի գարնանային և յաշնանային ժամանակի պարտ է երակ հատանել, և 'ի գործ արկանել թեթև ինչ լուծողական դեղս, որոյ գործածութեն է օգտակարագոյն՝ ոչ միայն 'ի մաքրել, այլ և առ 'ի խափանել զվերադարձուն այսորիկ բորբոքման։

Ակն եշխեցօղ՝ ըզգայութեանց,
կերտուած փափկիկ՝ դրիւ գերազանց.
հոգւոյ մրտաց՝ զոյգ է դըրանց,
դարման խընդրէ՝ զեռ անդին գանձ։

ՅՕԳՈՒԱԾ Դ.

Յաղագս բորբ-ման, կամ ցաւոց ականջաց. որ ասի՝
օՌիՌիպէ, կամ պօլօռէ պ' օռէպիօ :

Բորբոքումնս կամ ցաւս այս սովորաբար 'ի վերբ երևի 'ի ծածկոյթ անուանեալ թաղանթան, (որք են մարմինք նուրբ 'ի ներքին խոռոչս ունկան 'ի մուտս լսելեաց :) Այս բորբոքումն երբեմն լինի յայնքան սաստկագոյն սատիճանի, մինչև պատճառէ խլութիւն և անդամալօսութիւն :

Պապճառք բորբոքման ականջաց :

Առաջս կամ բորբոքումնս այս ունի պատճառիլ յայնմ ամենայնէ՝ որք կարեն զայրացուցանել զվերոյասացեալ թաղանթս, և ջերմացուցանել զարիւնն. վասն այսորիկ հեղձումն, սաստիկ բարկութիւնն, որ դեղումն արտաշնչութիւնք մարմնոյ, մնալն ընդերկար բաց գլխով ընդդէմ ցրտագոյն հողմոյ՝ մանաւանդ զկնի քրտնելոյ, կարեն պատճառել զախտս զայս. նոյնպէս յառաջ մարթ է գալ ախտիս 'ի գործածութիւն ոգիաւոր հեղանիւթից, յարգելականութիւն երիք սովորական հոսման, 'ի հարուածոց 'ի գլուխն, 'ի հարբուխոյ, յինքնաւածոց, 'ի յօդուածացաւութիւն, 'ի ցնցողականութիւն, 'ի յարգանդացաւութիւն, յախոնդանոտութիւն, ևն : Բազում անգամ ևս պատահի և յառաջագայի յորդանց, և յայլ միջատաց մտելոց յականջս, յառատութիւն կեղտից կուտակելոց 'ի ներքս յունկան, 'ի յաճեցմանէ սանդանման մսոյ 'ի խոռոչս ականջաց :

Նշանք բորբոքման ականջաց :

Բորբոքումնս այս հասարակօրէն սկիզբն առնու յուժգին ցաւոց ականջաց, գլխոյ, և մկանանց տոյ- տից, 'ի սաստիկ ցնորմանէ, 'ի բռնի շարժմանէ մկանանց, 'ի քնապութիւն, և 'ի նուազմանէ կամ 'ի թալկացմանէ սրտի. և զկնի այսոցիկ ամենայնի 'ի վերայ

դայ կարմրութիւն երեսաց, շնչու�ականջաց, և ջերմութի հանապազօրեայ։ Ի սկզբան անդ բորբոքման, զարկ բազիերակին լինի մանր, և շուտաշոյթ. իսկ ի յարատեւել բորբոքման՝ հարկանէ կարծը և լի։ Մեզն լինի առատ և կարմրերանգ։ Զի՛ք ինչ պայմանեալ սահման տեւելոյ այսր տեսակի բորբոքման. ուրեք ուրեք մարթ է ի ձեռս բերել զկատարեալ ապաքինուն ի մէջ վեց կամ ութ աւուրց. երբեմն յերկարաձգի մինչև ցերկոտասան աւուրս. և երբեմն եւս ի սասակութէ այսոցիկ նշանաց ի վերբերեալի կուտակումն ինչ շարաւոց ի խուռուչս ունկան։

Յաղագս դեղոցն և հնարքն բորբոքման ականջաց։

Երակ հատանելն՝ որպէս ի բորբոքման աչաց, նոյնպէս և առ կարևոր դատի. բայց պարտ է նկատել ի պարագայս նշանաց կարողութեանն հիւանդին, և ուժգնութեանն ցաւոցն։ Նոյնպէս արժան է ի գործ արկանել հինգ կամ ութ կշիռ ցորեան՝ սալ նիթռս խառն ընդ վեց ունկի գարեջրոյ, զոր պարտ է երեք կամ չորս անգամ կրկնել յաւուրն։ Եւս պարտ է գրեխս կամ թեթև լուծողականս առնել և կակղացուցանել զորովայնն։ Այլև արժան է դնել եւս սակէպ սակէպ զոտս ցաւակրին ի ջերմ ջուր մինչև ցծունկս։

Քանթարիդաղմա կակղացուցիչ է յոյժ օգտակար ի դիպուածս յայս, զոր պարտ է պատրաստել այսպէս։ Առ զմէջն հացի ցորենոյ, զմոլոշ խոտն, զսոխ, և զկանթն կոգւով հանդերձ խառնեալ իրերաց, և եփեա՛ի վերայ հանդարտ հրոյ, և դիր սակէպ սակէպ ի վերայ վշտացեալ ականջացն։ Խաշուն մոլոշի խառն ընդ կանթին՝ է նոյնպէս դեղ լմն կարի աղնիւ և գործունեայ նկատմամբ ախտիս, զոր մարթ է ի գործ արկանել ՝ի վերոյասացեալ կերպի եօթն կամ ութ անգամ յաւուրն, կամ եւս առաւել։ Նոյնպէս պարտ է զսպունգն ջերմ կանթամբ կամ վերոյշնեալ մոլոշի ջրոյն թացեալ դնել ի վերայ ցաւագնեալ ականջացն, բազմիցս անգամ յաւուրն։

Դարձեալ, յամենայնում երկու ժամու միանգամ պարտ է երեք կամ չորս շիթս հեղուլ ի ցաւագնեալ ունկն զ՝ետագայ դեղն։ Առ մի տրամ՝ իւղն դառն նշոյ, կէս տրամ իւղն քաֆրոյ, և նոյնչափ

իւղն կալպանօի, խառնեա զամենայն 'ի միասին, և 'ի կիր արկ քանի ինչ աւուրս։ Նոքա՝ որք ոչ հնարին 'ի ձեռս բերել զասացեալ իւղորայքս, պարտին 'ի գործ արկանել փոխանակ նոցա զյետագայ դեղոցայս, որք ունին զնոյն զօրութիւնս և զներգործութիւնս։ Աւ երկու տրամ իւղն դառն նշոյ, մի տրամ կալպանօ, կէս տրամ՝ դեղին մեղրամոմ, և նոյնչափ քափուր։ Զայս ամենայն եռացո 'ի մէջ փոքրիկ խեցեղէն անօթոյ միոյ. և ապա առեալ 'ի սմանէ գոյշն ինչ՝ յօրինեա որպէս պատրոյկ, և մխեա 'ի մէջ ցաւագնեալ ականջաց։ Մարթ է և զքերմ գոլորշին երիցկի կամ քացախոյ մուծանել 'ի ներքս յունկն։ Իսկ եթէ գործածութիւնք այսոցիկ դեղորէից և հնարից չիցէ մարթ փարատել զբորբոքումն և զցաւն յայնժամ պարտ է 'ի գործ արկանել վէշլիքաթօռիս, զոր պարտ է դնել 'ի վերայ ծոծրակի կամ յետակոյս ցաւագնեալ ականջացն։ Յորժամ բորբոքումնս կամ ցաւս այս յառաջ գայ յորդանց կամ 'ի միջատաց մոեցոց 'ի ներքին խառոչս ականջաց, յայնժամ հարկ 'ի վերայ կայ արտահանել զորդունս կամ զմիջատս 'ի ձեռն իւղոյ քաղցր նշոյ, կամ ձիթապտղոյ, և կամ 'ի ձեռն վիրաբուժական գործեաց։ Եւ եթէ պատճառեալ իցէ 'ի յաճեցմանէ աւելորդ և սպեղանման մնոց՝ որպէս ասացաք 'ի վերագոյնդ, յայնժամ պէտս ունի միշտ խորհրդոյ Հարտաբ վիրաբուժի կամ վիրահատի։

ՅՕԳՈՒԱԾ Ե.

Յաղագս բորբոքման ականջաց, որ ասի՝ կլօսիրիպէ։

Բորբոքումնս այս՝ է ախտաժէտութիւն ինչ լեզուի, որ յոյժ ցանցառակի պատահէ. և նմանի բորբոքմանն, որ կոչի չինանքէ. զայսմանէ խօսեացուք 'ի ստորև. այլ ասատանօր լիցի բան յատկապէս զսոյն տեսակ բորբոքմանէ՝ որ այսուցանէ և վշտացուցանէ զլեզուն միայն։

Պատճառք բորբոքման։

Պատճառք այսորիկ բորբոքման՝ յոյժ համաձայն են պատճառաց բորբոքողականութեաց, այսինքն բորբոքմանց աչաց, ականջաց, ևն. զորս լիովին խօսեցաք 'ի տեղիս իւրեանց։ Բազում անգամ ևս յառաջ գայ 'ի յօդուածացաւուէ, և 'ի բորբոքմանէ լերդի։

Նշանք բորբոքման։

Գլխաւոր նշանքն են ուռոյցն, կարմրութիւնն և կարծրութիւն լեզուի՝ հանդերձ յանկարծահաս ցաւովք, հոսումն լորձանց 'ի բերանոյ, հազն մշտատև, ուժգին ջերմութիւն, դժուարութիւն 'ի կլանելն, 'ի խօսելն, և 'ի շնչառութիւնս, հսկումն, ցաւն գլխոյ, կարմրութիւնն դիմաց, ծորումն արտասուաց, անձկութիւն, և ճնշումն կրծոց։ Զարկ բազկերակին հաստարակօրէն լինի խիստ, ստուար, և սրընթաց։ Ախտակիրն զգայ զծարաւ սաստիկ, և զթուլութիւն մարմնոյ։

Յաղագս կառավարութեան, և դեղոցն, զոր պարտ է 'ի վար արկանել 'ի դիպուածս բորբոքման։

Կառավարութիւնք այսորիկ բորբոքման գրեթէ նոյն են ընդ կառավարութեաց բորբոքողականութեաց, զորս ասացաք 'ի տեղիս իւրեանց. վասն որոյ պարտ է պահպանել զախտակիրն 'ի հանգիստ, և զգոյշ 'ի ցրտոյ, հեռի առնել 'ի նմանէ զայն ամենայն՝ որք առթեն զանձկութիւն սրտի։ Կերակուրքն լինելոց են անուցիչ, թեթև, և փոքր քանակութիւ. ըմպելին զովացուցիչ և միզաբեր, որպէս ջուրն կրամինեայի, կամ ավէնայի, ևն։ 'Ի դիպուածս ախտիս երակ հատանելն հարկաւորապէս պահանջի. բայց պարտ է նկատել 'ի պարագայս նշանաց կարողութեան հիւանդին, և սաստկութեան բորբոքմանն. և յետ այնորիկ հարկ է դնել զտզրուկս 'ի ներքոյ կզակի։ Պարտ է ևս զջերմ գոլորշին քացախոյ, կամ երիցկի մուծանել 'ի ներքս 'ի բերանն։ Նոյնպէս և ընդ կզակաւ հարկ է դնել զերս կակղացուցիչս, որպիսի է թանձրաթանն մոլոշի ևն։

Յոյժ օգտակար դեղ է ևս կառկառս առնել 'ի

կակղացուցիչ տերևոց և 'ի յարմատոց՝ գաղջ կա-
թամբ. և ստէպ ստէպ անընդհատ դնել 'ի ներքոյ
կզակի կամ ուլան, և նախ քան զպաղիլն ստէպ ստէպ
փոփոխել, և վերանորոգել. չէ՛ պարտ լինել ոչ
այնքան սաստիկ ջերմ, և ոչ այնքան ցուրտ. քանզի
առաւել ցուրտն, և առաւել ջերմն հաւասարապէս
վնասակար են ախտակրիս։ Նիթռօն նմանապէս է
դեղ իմն աղնիւ՝ 50 կամ 60 ցորեան՝ ընդ կէս սկա-
հակ սրճոյ. և երկու սկահակ ջերմացուցեալ մոլոշի
կամ տղտոյ ջրով՝ յաւուրն 10 կամ 12 անգամ 'ի
բերանն ողողելով։ Նոյնպէս պարտ է յաճախակի
զոտս և զսրունս դնել 'ի ջուր գաղջ, և 'ի ներքոյ
ոտիցն դնել զսէնապիզմն. և այս ոչ միայն շինչուցանէ
զբորբոքողականութիւն, այլև քարշէ զցաւս և զու-
ռոյցս լեղուի։

Դարձեալ՝ 'ի դիպուածի ասա յոյժ օգտակար է
բարեգոյն վարկանիմք զգրեհն կազմեալ 'ի զովացու-
ցիչ, 'ի կակղացուցիչ, և 'ի սնուցիչ դեղորէից. սմին
իրի պատշաճ է յօրինեալ ծաղկամբ տղտոյ կամ մոլո-
շի, և սերմամբ կտաւատի, ևն։ Եւս մնրթ է նկա-
տեալ 'ի պարագայս ցաւոցն, յաւելուլ 'ի վերայ է-
րեք ունկի մանանայ. եթէ ցաւն չնուազի դրեխաւ,
պարտ է ապատան լինել և դիմել յաներկբայ զօ-
րութիւնն իրիք թեթև լուծողականի։ Բայց առա-
ւել բարեգոյն դեղն յայսմ դիպուածի, և յայլ ամե-
նայն բորբոքողականութիւնս ըստ կարծեաց հմտա-
գոյն հեղինակաց՝ է վէշիքաթօռիս, զոր պարտ է դնել
'ի ներքոյ կզակի, կամ 'ի վերայ ուլանն. զայդ յո-
լով անգամ փորձեալ են, և մեք ևս միշտ տեսանեմք
թէ օգտաւէտ լինի ախտակրաց, և ոչ բնաւ վնասա-
կար։ Դարձեալ՝ պարտ և պատշաճ է դադարեցու-
ցանել զսաստկութիւն բորբոքման, և շինչուցանել ըզ-
ջերմութիւն արեան միջնորդութիւն զովացուցիչ և մի-
զաբեր ըմպելեաց. սմին իրի պատշաճագոյն է 'ի
գործ արկանել յայնմ դիպուածի նիթռօ, տէքօցիս-
նէ սի թամարինտի կամ կրամինեայի, ևն։ Դար-
ձեալ, 'ի դիպուածս ախտիս՝ չէ՛ օրէն փութով խա-
փանել զգործածութիւն յարմարաւոր դեղորէից, այլ
հարկ է ութ կամ տասն օր առաւել ակնուանել փա-
րատելոյ բորբոքմանս. և լաւ ևս է ապաքէն, յետ
գլխովին ապաքինելոյ ախտիս, տակաւին վեց օր 'ի
գործ արկանել զսովորական դեղորայս։

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Յաղագս բորբոքման որկորոյ, կամ փողոցաւորեալ, որ կոչի՝ շինանքէ, կամ անձինա. կոչի և ապիէնանցիա, կամ ագոռէ-նանցիա, կամ սբոռէմանցիա, և կամ մալ պի կոչա:

Այս բորբոքումն կամ փողոցաւ՝ ունի զերբեակ անուանս պատշաճեալս ինքեան 'ի մասանցն որկորոյ, զորս զգածէ: Առաջինն կոչի՝ ինֆիամմացիօնէ տի կոչա. այսինքն բորբոքումն կոկորդի: Երկրորդն անուանի՝ չինանքէ մալինեա. այսինքն չար փողոցաւ, կոչի և մալ տի կոչա քանքրէնօզա, այսինքն քաղցկեղային փողոցաւութիւն: Իսկ երրորդն յորջորջի՝ անձինա սէմբլիչէ, կամ մալ տի կոչա սբուռիա. այսինքն հասարակ փողոցաւութիւն. զորոյ իւրաքանչիւրոցն ուրոյն ուրոյն ճառեսցուք:

ՅՕԴՈՒԱԾԻԿ Ա.

Դիտել արժան է, եթէ այս բորբոքմունք կամ փողոցաւք հասարակօրէն տիրապետեն 'ի ձմեռան, և 'ի գարնան եղանակի, և կարի հասարակ են յերկիրս ճախնուտս, և խոնաւուտս. և են վտանգաւորք իսկ. և ևս անձինք, որք վիճակեալք են արիւնային խառնուածոց, են առաւել ենթակայ այսոցիկ ախտից: Սովորական կայանք կամ տեղիք բորբոքմանցս՝ են շնչափողն, խռչափողն, դուռն հագագին, քիմքն, ուկօլա անուանեալ անդամն, մնանն հագագին, որ կոչի՝ թօնսիլէ, լեզուակն, որ ասի կլօթթիս, մակալեզուն, որ ասի՝ էբիկլօթթիս. յատակն լեզուի, ծակն որկորոյ, մնանքն քմոց, և ն:

Յաղագս պատճառաց բորբոքման որկորոյ կամ կոկորդի:

Բաց 'ի յընդհանուր պատճառաց այլ ամենայն բորբոքմանց, բորբոքումն որկորոյ մարթի և յառաջ գալ 'ի բարձրաձայն երգեցմանէ, 'ի կարկաչմանէ,

և յերկար կաքաւմանէ։ Դոյնպէս մարթ է պատճառել ախտս այնմ ամենայնէ, որք կարեն արգելուլ զարտաշնչութիւն մարմնոյ, որպիսի են՝ ցրտագոյն և գիճագոյն հողմունքն, 'ի քուն լինելն 'ի բացութեայս, զգենուլ զթացեալ հանդերձս։ Եւ։ Այլև մարթ է յառաջ գալ ախտս, եթէ ոք զկնի քրտնելոյ ընկողմանիցի 'ի վերայ խոնաւ գետնի, կամ նստիցի հանդէպ հողմոց, և կամ մտցէ 'ի մէջ ցուրտ ջրոյ։ Արուեստաւորքն, գործաւորքն, երգիչքն, որսորդքն, ձիավարքն, սրնգահարք կամ փողահարքն են առաւել ենթակայ այսորիկ ախտի, մանաւանդ նոքա, որք արիւնային խառնուածոց են վիճակեալք։ Երբեմն և պատահի 'ի մեսաղական գոլորշեաց՝ որք ընդմտանեն 'ի թոքն շնչառութիւն։ 'ի ոստիկ ինչ կրից, 'ի յերկիւղէ, և յաշխատանաց, մանաւանդ 'ի սրարշաւ ընթանալոյ, յոգիաւոր հեղանիւթից, և 'ի կարի ջերմոգինս պահելոյ զանձն զդեստուք, կամ աւ հրով, և կամ պատճառաւ բնակութեան քաղաքի, 'ի յարգելականութենէ իրիք սովորական հոսմանց, 'ի հարբուխոյ, և 'ի յանկարծակի ելուածոց՝ ելելոց 'ի վերայ մասանցն որկորոյ։ Վերջապէս, 'ի յընկերութիւն ընդ ախտացեալ անձանց, որովհետև ախտս այս է տարափոխիկ։

Յաղագս նշանաց բորբոքման որկորոյ կամ կոկորդի։

Ախտս այս յայտնապէս ճանաչի 'ի կարմրութիւն և յուռուցք ինչ 'ի վեր երևելոյ 'ի կոկորդս, և զոյգ ունի ընդ իւր զուժգին ջերմութիւն և զբորբոքողական նութիւն, և զցաւ ինչ ոստոիկ, մանաւանդ 'ի ծաղքելն, 'ի կլանելն, և 'ի խօսելն։ Զարկ բազկերակին հաստաթաւոքէն լինի սրընթաց և կարծր, և կարճառօտիւ կամեցեալ խօսել, նշանքն մահաբեր տենդից լինին 'ի վեր երևին։ Երբեմն և զհետ գայ յօժարութիւն 'ի ժայթքել, դժուարութիւն 'ի շնչառութիւնս, ցաւ ուժգին յականջս, և կարմրութիւն ինչ յաչս։ 'Ի դիպուածս ախտիս գէպ լինի երբեմն՝ զի ախտակիրն անկարող լինի առնուլ սնուցիչ ուտելիս և ըմպելիս։ որով ժամանէ 'ի յետին ոստիճան վատութիւն և շընչարգելութիւն։ Բազում անգամ և բորբոքումնս կամ ուռոյցս այս ժամանէ 'ի ներքին մասունս շնչափողին կամ խուչափողին, որ երբեմն այնքան ուռճացեալ

զայրանայ, մինչև ընչակուր և հեղձամուղձ առնէ զխօթացեալն։ Եւ եթէ բորբոքողականութիւնս այս զեռեղի 'ի գուռն հագագի կամ 'ի մկանն լեզուակի, յայնժամ առաւել լինի երկիւղալի, և մահահրաւէր 'ի մէջ ամենայն բորբոքմանց որկորոյ։ Իսկ եթէ բորբոքումնս այս զկայ առնու 'ի մկանն խօխոէ կոչեցեալ երկճղի ոսկեր, յայնժամ չլինի այնքան դժնեայ և վտանգաւոր, որպէս միւս բորբոքողականութիւնքն որկորոյ։

Ընդ ախտիս այսմիկ թէպէտ և զուգընթաց լինի ուժգին ջերմութիւն, և ցաւ ինչ անտանելի, և այսուց ինչ կարծր 'ի վեր երևեալ 'ի վերոյդրեալ մկանս, ևն. բայց 'ի վերայ այսր ամենայնի որպէս ասացաք՝ ախտակիրն չգտանի 'ի մեծի վտանգի, յորժամ ոչ տուեալ լինի պատճառ կամ արդելումն ինչ՝ եթէ 'ի կտրավարութիս, և եթէ 'ի դեղորայս։ Այլ եթէ նոյն բորբոքումն բնակի 'ի ծաղ որկորոյն և եթ, յայնժամ նոյնպէս զհետ գայ այսուց ինչ կարծր և ջերմութիւն, և կարի դժուարութիւն 'ի կլանելն, 'ի ծասքելն, և 'ի խօսելն, և երբեմն և զուգընթաց գտանի ընդ ախտիս հազ ինն ուժգին. բայց յայսպիսի դիպուածի յոյժ ցանցառակի երևի վտանգ ինչ։

Իսկ եթէ ախտս այս 'ի վեր երևի ուռուցիւք 'ի ուկօլա անուանեալ անդամն կամ 'ի մասն հոգագին, կամ 'ի քիմքն, կամ 'ի մկանն քմաց, յայնժամ իսկ և իսկ զհետ գայ ցաւ ինչ ասատիկ 'ի նեղքս յունական, և նոյնպէս դժուարութիւն 'ի շնչառութիս, 'ի ծասքելն, 'ի կլանելն, 'ի թքանելն, և 'ի խօսելն։ Բայց եթէ ախտակիրն ոչ զդայ, կամ յոյժ սակաւ զջերմութիւն ինչ, յայնժամ չէ վտանգաւոր, և մարթի դարմանիլ հեշտեաւ։ Դարձեալ, գոյ և այլ ինն տեսակ այսորիկ ախտի՝ որ կոչի անձինս քսնվուլսիվա, այսինքն ցնցական փողայաւութիւն, որ առաւել քան զամենայն աղետալի է և վտանգաւոր. բայց այդպիսի դիպուածք ուր ուրեմն պատահին։

Յաղագս խնամապարութեան և կառավարութեան բորբոքման որկորոյ։

'Ի դիպուածս այսորիկ ախտի գրեթէ յար և յաւէտ պարտ է 'ի կիր արկանել զնոյն կառավարութիս, և զինամս, զոր ինչ 'ի դիպուածի ախտին կո-

չեցելոյ բլէուռիթիսէ, զորմէ ունիմք գրել 'ի սոքրև։ Կերակրոցն պարտ է լինել թեթև, սնուցիչ, և զովացուցիչ։ Նոյնպէս և ըմպելեացն արժան է լինել զովացուցիչ, և հեղեղիչ. և պարտ է խառնել 'ի մէջ ամենայն ըմպելեաց փոքր ինչ թթուեղէն, կամ ճէլաթինա տի ուվա սբինա անուանեալ մածուածն։ Այլ պարտ է ախտակրիս անձնապահ լինել 'ի ցըրտոյ. և միշտ զուարթ և ուրախ լինել յընթացս հիւանդութե. և արժան է ընկողմնեցուցանել զախտակիրն՝ բարձր թողեալ զգլուխն առանց իրիք աշխատանաց. նաև 'ի նոյն իսկ վայրկենի հարկ է գնել զասր 'ի վերայ այնր մասին որկորոյ, ուր առաւել զգայ զցաւն։

Դարձեալ, 'ի գիպուածս յայս յոյժ օգտակար և ճահողագոյն վարկանիմք զողողումն կոկորդի, կաղմեալ 'ի քացախոյ, 'ի մեղուէ, և 'ի հասարակ ջրոյ. և պարտ է ողողել յերկուս ժամս երկու անգամ, և առաւել յաճախակի, եթէ յոյժ կարծրացեալ իցէ ուռոյցն որկորոյ. երբեմն և գրեմ չորս ունկի 'ի վերոգրեալ խառնուրդէն, յաւելլով 'ի նոյն երկու դրգալ սբիռիթօ տի սալ ամմոնիաքօ, կամ նոյնքան սբիռիթօ տի ռոզմառինօ, և տամ ողողել զուլն ախտաժեսաց եօթն, կամ ութ անգամ յաւուրն ըստ չափու միոյ փոքրիկ սկահակի։ Այլև պարտ է գնել զոտս ախտակրին 'ի մէջ ջերմ ջրոյ, և կրկնել զայն ըստ պահանջելոյ պարագայից երկու անգամ յաւուրն։ Նոյնպէս արժան է 'ի կիր արկանել յամենայնում երեկոյի զգրեխ մի պատրաստեալ կէս պարատագոյն արգանակաւ, և կէս կաթամբ կամ ջրոնի վարսակի։ Ոչինչ արգելք կայ գործածութե աղպում կռէքում անուանեալ աղբոյ 'ի սկզբան անդ հիւանդութե. զոր նրբագոյն փոշի արարեալ պարտ է փչել եղեգամբ 'ի ներքս ընդ փողն։ Երբեմն մարթ է և 'ի կիր արկանել 'ի քաթաբլազման նորին. նոյնպէս կակղացուցիչ և մեղմացուցիչ քաթաբլազմայքն են գեղ ազնուագոյն և կարի պատշաճողականք, որպիսի են՝ մոլոշն, մէջն հացի, կաթն, սերմն կտաւատի, և ն։

Յաղագս դեղոցն՝ զոր պարտ է 'ի ձիր արկանել 'ի դի-պոտածս բորբոքման որիորոյ։

Բայց որովհետև ախտս այս է դժնեայ և վտանգաւոր, նմին իրի երակ հատանելն 'ի բազուկն, մանաւանդ 'ի փողական երակէ անտի՝ հարկաւորապէս պահանջի. բայց նկատել արժան է միշտ 'ի պարագայս անձին, զորբինակ 'ի հասակն, 'ի զօրութեն, 'ի լիութեն զարկի բազկերակին, և 'ի սաստկութեն նշանաց։ Եւ եթէ զկնի երակ հատանելոյ՝ բորբոքողականութեն, և ցաւն կամ ուռոյցն որկորոյ չնուազի, յայնժամ պարտ է տալ ախտակրին թաւթառս էմէթիքս փոքր քանակութիւն։ Զայս եթէ կամիս առնել, արկ զնուրբ փոշի դեղոյս ըստ կշռոյ երեք կամ չորս ցորենոյ՝ 'ի տասն կամ յերկոտասան ունկի գաղջ ջրոյ։ Յըմպելոյ ասասի 'ի քառորդ ժամս, այսինքն 'ի տասն և հինգ վայրկեանս միանգամ առնու հիւանդն սկսեալ մի սրճոյ առ իւրաքանչիւր նուազ, մինչև պատճառեսցի ժայթքումն կամ լուծումն որովայնի. այլ իբրև սկսանի փսխողականն 'ի ներգործել, յայնժամ պատշաճ է նմա ստէպ ստէպ ըմպել ջուր ինչ գաղջ։ Յետ որոյ պարտ է 'ի վար արկանել զբալասան ինչ անուանեալ՝ պալասամ տի թռանգուիլլը։

Պատմէ Ֆռանգ յորջորջեալ հեղինակն, եթէ սկսնատես լեալ է օգտաւէտութիւն, և շահաւէտութեան այսր հանդարտեցուցիչ բալասանի. որ այսպէս բաղադրի։ Ա՛ռ զթարմ տերևն կոչեցեալ իշլեամս, և զկանաչ տերևն չինօկլօսաս, և զտերևն նիքօցիանա, յիւրաքանչիւրոցն մէն մի լիտր։ Եւ թող եռալ երեք բինթէ գինեաւ, մինչև ցսպառիլ միոյ մասին գինւոյ. զկնի զտելոյ, յաւելլ 'ի սոյն զնոյնչափ մաքուր իւղ ձիթոյ. վերատին եռացս թեթև ինչ հրով այնչափ՝ մինչև մնալ կիսոյ մասին։ Յետ այնորիկ հեղ զգուշութիւն զհեղուկն յայլ անօթ ապակի, այնպէս՝ զի մի խառնեսցի մրուրն ընդ պայծառ բալասանին։ 'Ի բալասանէ ասասի վեցիս անգամ յաւուրն պարտ է օծանել փեսրով 'ի վերայ այնր մասին ուրան, ուր առաւել զգայ զցաւն, միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի հինգ օր, և տեսցի օգտաւէտուն սորա մեծ 'ի ցրուել զուռոյցս, 'ի փարատել զբորբոքողականութիւնս, 'ի մեղմել զցաւս, և 'ի բուժել զվէրս և զկեղս։

Ըստ կարծեաց վերոյիշեալ հեղինակին, չէք դարման քան զսոյն գերազանց՝ երբ խնդրի ապաքինել զփողոցաւորութիւն, և բառնալ կամ մեղմել զցաւս նորին։ Իսկ եթէ յայդպիսի սոսկ նպաստից՝ ոչ անդորրանայ ախտակիրն, և ոչ խաղաղի բորբոքումն, և ցաւն, և այլ դժնեայ նշանքն մնան յարատեւեալ, յայնժամ պարտ և պատշաճ է դնել վէշիքաթօռիս մի լայնաբաց 'ի վերայ ծոծրակի։ Այլ յորժամ ըստ իրաց լինէ տեսանին նշանք ապաքինութիւն, և օրըստ քան զօր 'ի լաւ անդր լինի յառաջանալ, յայնժամ պարտ է մատչիլ 'ի կիրառութիւն ցրուիչ և զօրացուցիչ դեղորէից, որպիսի են՝ գուէրչիա, աշլուսմէն, և։ զոր պարտ է պատրաստել յետագայ եղանակաւ։ Առ վեց տրամ քօրթիչէ տի գուէրչիա։ և 'ի հատարակ ջրի եփեա եռացմամբ իբր քառորդ մի ժամու։ ապա զտեա և մնացէ լիպրա մի, յոր յաւել մի և կէս տրամ աշլուսմէն, և մի և կէս ունկի սբիռիթօ տի վինօ։ և տուր ողողել զուշն հիւանդաց հինգ կամ վեց անգամ յաւուրն։

Դարձեալ, յոյժ հռչակաւոր է յայսմ դիպուածի լենիմէնթօ վօլատիլէ, որ այսպէս բաղադրի։ Առ վեց տրամ իւղ ձիթոյ, և երկու տրամ ոգի անուշադրի, որ ասի՝ սբիռիթօ տի սալէ ամմոնիաքօ։ և տրոցեա 'ի միմեանս ընդ միջոց հինգ րոպէից։ և ապա շփեա չորիցս յաւուրն զվշտացեալ մասունս ուշան, և զկնի շփելոյ արժան է ծածկել մուշտակաւ կամ սաւով զվշտացեալ ուշն։

Սեպհական նեղքին դեղորայքն՝ զոր 'ի գործ արկանել մարթ է 'ի դիպուածս յայս, են կօմմա տի կուսեաքօ, և ռօպ տի սամպուքօ, կամ ՃԷլատինա տի ուվա սբինա, որ այսպէս յօրինի։ Առ երեսուն և երկու կշիռ ցորեան կօմմա տի կուսեաքօ, փոշի արարեալ խառնեա բաւականաչափ ռօպ տի սամպուքօիւ, տուր ըմպել ախտակրին 'ի պահ առաւօտուն։ Նոյնպէս հռչակաւոր է յետագայ դեղն, որ այսպէս բաղադրի։ Առ 12 կամ 16 կշիռ ցորեան՝ նիթռօ, և ութ կշիռ ցորեան խաշնդեղ, և յաւել 'ի վերայ երկու ունկի արդանակ թղոյ, կամ թամարինտիի, և տուր ըմպել երեք կամ չորս անգամ յաւուրն։ Ըստ կարծրութեանն ուռուցին, և սատակութեանն ցաւոցն պահանջի և առաւել հոգածութեան, և մտադրութեան բորբոքմանս, և դեղորէիցն յայնժամ պարտ է լինել բա-

բեխառն և մեղմացուցիչ, և կակղացուցիչ. որպիսի են խէժն արաբիոյ, կորիզն սերկևիլի, մեղրն, և ն։ Եւ 'ի վերայ այնորիկ 'ի նոյն իսկ վայրկենի հարկ է գնել զվերոյգրեալ վէշիքաթօուիօն 'ի վերայ այնր մասին ուլան, ուր առաւել զգայ զցաւն։

Մինն 'ի մեծագոյն փնասուց այն է՝ յորժամ 'ի վեր երևի այտուցս այս 'ի վերայ հագագին կամ 'ի մանս նորին հագագի. յայնժամ երակ հատանելն հարկաւորապէս պահանջի 'ի սկզբան անդ հիւանդութեան, և գրեթէ այդ է սեպհական դեղն. զորմէ կախեալ կայ բարի ելքն հիւանդութեան։ Եւ զկնի երակ հատանելոյ՝ մարթ է դնել զութ կամ զոտան տզրուկս 'ի վերայ ուլան ուր առաւել զգայ զցաւն. մարթ է և այս յաճախակի զոտս և զարունս դնել 'ի ջուր ջերմ, և շփել երիցս յաւուրն զվշտացեալ մասունս ուլան անուշադրի ոգւով պատրաստեալ օծանելեօք, որ ասի լինիմենթօ վօլատիլէ։

Այլ եթէ 'ի ձեռն այդոցիկ դեղորէից և կառավարութեց ոչ փարատի ուռոյցն, կամ ը հակառակն առաւել ևս զայրացի և կարծրանայցէ, յայնժամ պարտ է 'ի կիր առնուլ զվիրասպական գործի, ձեղքելով զուռոյցն նշտրակաւ, կամ հատանելով արմատաքի։

Դարձեալ գիտել արժան է, զի ըստ վկայելոյ նախայիշեալ հեղինակին, գոն ինչ ինչ համբաւեալ դեղոյք, որոց առաջինն է քալօմէլանօ, զոր պարտ է յերիս ժամս միանգամ ըմպել հիւանդին երեք կշիռ ցորեան առ իւրաքանչիւր նուագ. դեղս այս գերահռչակ է 'ի մասին օգտաւէտութեան 'ի դիպուածս բորբոքմանց որկորոյ, և այտուցից 'ի վեր երևելոց 'ի հագագս, 'ի խռչափողս, և 'ի մանս հագագի։

Յօդուածիկ Ը.

Յաղագս ախտի՝ որ ասի լինանտէ մալինէա, կամ անձինա փանտէնօղա. այսինքն լար փողացաւութիւն, կամ փաղջիէ-ղային ախտի կոկորդի։

Զայս տեսակ ջար փողացաւութիւն, կամ քաղցկէղային ախտի կոկորդի՝ բազումք անուանեն սովո-

բաբար նաև անձինս քոն վուլչէռէ, այսինքն փողոց
ցաւ վիրալից. և ունի ըստ իրաց ինչ նմանութիւն
հրատապ ջերմախտի, որ կոչի՝ ֆէպպռէ նէռվօզա,
կամ մալինեա։ Թէպէտ անխտիր գոտանի ախտս այս
յայր մարդիկ և 'ի քաջակազմ երիտասարդս, որպէս
պատմէ վերոյիշեալ հեղինակն՝ ականատես լեալ այն
պիսի ախտացելոց, բայց սովորաբար յաճախ երևի 'ի
կանայս, յօրիորդս, և 'ի փափկակեաց անձինս։ Ախտս
այս նոյնպէս բացայայտի և ծագի յաշնանային եղա
նակի, կամ 'ի սկիզբն ձմեռան։

Յաղագս պատճառաց լար փողոցաւոյ, կամ փաղցիէղային
ախտի կոկորդի։

Ախտս այս հասարակօրէն է տարափոխիկ և հա
ղորդական այլոց. նմին իրի պարտ և պատշաճ է ամե
նայն ումեք խուսափել և տարակայել 'ի յաճախ և 'ի
մօտուստ կենակցութենէ՝ այսպիսի խօթացեալ ան
ձանց։ Նոյնպէս պատճառի ևս յապականեալ օդոց
և 'ի մեսասաբեր հողմոց, որպիսի են բնակչաց գինայ
ին և ճանապարհային տեղեաց. և միով բանիւ ասացից,
պատճառք այսորիկ ախտի՝ գրեթէ նոյն են ընդ
պատճառաց հրատապ ջերմախտի. զորմէ լիովին խօ
սեցուք 'ի գլ. ԺԲ.

Նշանք լար փողոցաւոյ կամ փաղցիէղային ախտի կոկորդի։

Սովորաբար ախտս այս սկսանի 'ի գողգոլանաց,
և 'ի ջերմոյ. որում զհետ գայ թուլութի, անձկու
թի, ճնշումն կրծոց, արագութի զարկի բազկերա
կին, յափրութի, նողկութի, յօժարութի 'ի ժայթ
քել, որովայնալուծութի. և յետ այնորիկ 'ի վեր
երևի 'ի կոկորդս ուռոյց ինչ առոյգ կարմրերանգ.
բորբոքեալ, և ցաւեցուցիչ. ունելով 'ի վերայ բիծս
ածգոյնս, և վերս վատնիչս, և վասն այսորիկ ան
ուանեցաւ ևս՝ փողոցաւ վիրալից. ճանաչի ևս 'ի մաս
նաւոր և 'ի նշանաւոր ինչ այսուցաց, որ զկնի եր
կուց կամ երից աւուրց 'ի վեր երևին 'ի բազուկս,
'ի կուրծս, 'ի մատունս, ևն։ Դարձեալ, են և այլ
նշանք, որպէս կերկերումն ձայնի, կարմրուն աչաց,
դարշահոտութենն բերանոյ, ցնորումն, և սոփոտակու
թի լեզուի. և մէջն երբեմն լինի ածգոյն, և երբեմն

գեղին։ Բայց յորժամ վերոյիշեալ վէրքն կամ բիծքն փոխարկին 'ի քաղցկեղ, յայնժամ իսկ և իսկ զհետ գան բորբոքումն, կապուտակութիւն վիրաց և բծաց, ժայթքումն, փորհարութիւն, անզօրութիւն ջղաց, դողդոջումն անդամոց, մթագնութիւն դիմաց, երերումն, մանրաքայլութիւն, և խորութիւն զարկի բազկերակի, սարսռումն, մղձկումն կրծոց, յորդառատ արտաթորումն թանչից, ցաւ անհնարին և մնայուն։ ուռոյցն որկորոյ լինի յոյժ կարծրապինդ, և 'ի շօշափելն խորտաբորտ, և անհարթ, ունելով և 'ի միջի զցցումն ինչ։ և օր քան զօր առաւել ճապաղի 'ի խոչափողս, և 'ի շնչափողս, և 'ի մերձաւոր մասունս որկորոյ։ և վերջապէս սխտակիրն ժամանէ 'ի վիճակ յոյժ աղետալի, և ապերջանիկ։

Յաղագս դեղոցն և խնամապարուրեաց լաւ գողացաւոյ կամ գաղջկեղային ախտի կոկորդի։

Յորժամ ախտս այս պատճառեալ իցէ 'ի բորբոքմանէ արեան, կամ 'ի յապականութիւն օդոց, բարեգոյն դեղն 'ի սկզբան անդ երևման նշանացն է ըմպելն զսակաւաքոնակ թարթառս էմէթիքս։ զորմէ լիովին ճառեցաք 'ի վեր անդր։ Իսկ եթէ գուցէ առիթ երկնչելոյ՝ թէ սկիզբն արարեալ իցէ 'ի նմա քաղցկեղ ինչ 'ի կոկորդն, յայնժամ պարտ է դադարիլ 'ի գործածութիւն թուլացուցիչ և սակարացուցիչ դեղոցն, և ձեռնամուխ լինել 'ի դեղորայս գըրգռիչս և զօրացուցիչս, որպիսի են՝ ծաղկաջուրն, վարդաջուրն, սրիռիթս տի մէլիսսէ, ինֆուզիոնէ տի սալվիա, կամ քառս սանթս։ Էն։ Զկնի այսոցիկ պատշաճական գեղոցէ, մարթ է անվեհեր 'ի կիր արկանել զյետագայ կառկառիզմն։ Առ կէս ունկի՝ արմատն կոչեցեալ քօնթռաէռվա, և նոյնչափ սբէջիս բէթթօռալէ։ և 'ի հասարակ ջրի եփեսա եռացմամբ իբր քառորդ մի ժամու։ ապա զտեսն և մնացէ վեց ունկի, յոր յաւէլ երկու ունկի քացախ սպիտակ գինւոյ, և մի ունկի մաքուր մեղր, և նոյնչափ թինթռուռա տի միռռա։ և պարտ է ողողել զկոկորդն հինգ կամ վեց անգամ յաւուրն։

'Ի նոյն իսկ ժամանակի գործածութեան կառկառիզմի, մարթ է տալ ըմպել նմա զյետագայ հեղանիւթս։ Առ մի ունկի աղնիւ քինա քինա, և երկու

որամ սէռբէնթառիա վիռճինիանա, և եռացն էրեք քսեսա հասարակ ջրով, մինչև մնալ 12 ունկի. յետ զտելոյ յաւելՀ'ի վերայ մի գրդալ արճոյ էլիսիռէ տի վիթռիօլո, կամ աչիտո տի հալլէռօ։ 'Ի հեղանիւթոյ ասոի յերիս ժամն միանգամ առնու ախտակիրն գըրդալ մի արճոյ առ իւրաքանչիւր նուագ։

Արդ՝ յորժամ այդ ամենայն հնարք և գեղորայք 'ի գերև էլանեն, և անպտուղ լինին, և դժնդակ նշանքն մնան տակաւին նոյնօրինակ, յայնժամ ճա-հագոյն է դնել լայնաբաց վէշիքաթիօռիս մի 'ի վերոյ ծոծրակի, կամ 'ի յետին կողմն ականջաց։ Եւ եթէ վերաբերեց այսուրցն կոկորդի կամ ուլան փոխարկեալ իցէ 'ի քաղցկեղ, յայնժամ պարտ է ձեռնամուխ լինել 'ի գեղորայս և 'ի կառավարութիս, զոր սովոր եմք 'ի վար արկանել 'ի գիպուածս խցման խուլական ուռուցից, որ ասի օսթռուցիօնէ տէլլս շիռաս. զորմէ լիովին ունիմք խօսել 'ի գլ. Լէ։

Յօդուածիկ Դ.

Յաղագս հասարակ կամ սուպ քողացաւոյ, որ ասի էինանդէ կամ անճինա սէռուռիա, և կամ մալ պի կօլա սէմբլիէնէ։

Ընդ ախտիս այսորիկ հազիւ ուրեք զուգընթաց լինի վտանգ մեծ. հասարակօրէն ախտս այս գոյանայ 'ի վերոյ մասանց ինչ որկորոյ. որպէս 'ի վերոյ մասանց հագագին, կոկորդին, և ծնօտին. որ կոչին՝ ամիկտալէ տէլլ' ուվլա, ամիկտալէ թօնսիլլի, և ամիկտալէ մաչէլլառի. նաև երբեմն 'ի վերոյ բառօթիտէ անուանեալ անդամոյ, որ է խոյլ ինչ զէտեղեալ առ ականջաք։ Պատճառք այսորիկ ախտի գրեթէ նոյն են ընդ պատճառաց բորբոքման որկորոյ, զորմէ խօսեցաք լիովին 'ի վեր անդր, 'ի յօդ. Ա։

Նշանք հասարակ քողացաւոյ։

Նախ զառաջինն 'ի վեր երևի 'ի ներքս որկորոյն ուռոյց ինչ կարծր, և կարմրերանգ, յորմէ իսկ և իսկ ախտակիրն զգայ զցաւ ինչ սաստիկ 'ի մուտս կոկորդին, մանաւանդ 'ի ծաքէլն, 'ի կլանելն և 'ի

խոսելն։ Եւ յետ այնորիկ ուռոյցս այս առ սակաւ սակաւ աճելով աճի. և օր քան զօր սխտակիրն անկանի 'ի զօրութիւն և 'ի կարողութիւն. յորմէ և պատճառի անձկութիւն, ճնշումն կրծոց, կարմրութիւն լեզուի և քմաց, ցաւ գլխոյ, և ականջաց, և ցընցումն միանաց՝ յաւէտ 'ի կլանելն։ Պատճառի և ջերմութիւն, և բորբոքողականութիւն, որ երբեմն լինին սաստիկ, և երբեմն թեթև. 'ի վախճանի ուռոյցս այս։ կամ ցրուեալ փարատի, և կամ կակղացեալ հաղուանայ 'ի ձեռն յետագայ դեղորէից։

Կառավարութիւն ի դեղորայ այսորիկ ախտի։

Արդ՝ առ 'ի բուժել զփողացաւս զայս 'ի մէջ սակաւ ինչ աւուրց, 'ի լինել նորա 'ի թեթևագոյն սաստիճանի՝ պարտ է զոտան և զձեռան դնել 'ի մէջ ջերմ ջրոյ. և ստէպ ստէպ տալ սխտակրին ըմպել զարգանակն երիցկի, կամ ֆիոռ տի սամպուքօի, և յաւուրն մի կամ երկու անգամ գրեթէ պատրաստել կակղացուցիչ դեղորէիւք, և յարատև 'ի գործ արկանել զայս օրինակ, մինչև փարատեսցի ցաւն որկորոյ, և ջերմութիւնն մարմնոյ։ Եւ եթէ լինիցի ուռոյցն խիստ, ցաւալից և բորբոքեալ, և զարկ բազկերակին՝ լի, կարծր, և արագ, յայնժամ պարտ է երակ հատանել, և վաղընդփոյթ ծածկել, և պահպանել զվշտացեալ մասունս որկորոյ, եդեալ 'ի վերայ զասր ուղտու, կամ նապաստակի, և այդպէս 'ի բարիոք խնամատարութիւն արժան է յուսադիր լինել միշտ, եթէ նոյն ինքն բնութիւն կառավարեալ զինքն՝ ստանայ զապաքինութիւն առանց պէտս ունելոյ այլ ինն նպաստից, բնական ինն հոմանք քրտանց կամ միզի. և ն։

Նոյնպէս 'ի գործ արկանել պարտ է յաւուրն վեց կամ եօթն անգամ կառկաւիզմ, զոր պարտ է պատրաստել այսպէս։ Առ 12 ունկի արգանակն թզոյ, որ պատրաստեալ ի՛ցէ երկու տրամ մանանխով, և երկու ունկի մեղր. և նոյնչափ քացախ խառնեալ ի՛ներքաց, և տուր ողողել զուլն։ Դարձեալ, պատշաճագոյն է 'ի կիր արկանել յայսմ դիպուածի քաթաբլաղմա, որ այսպէս բաղադրի։ Առ զմէջն հացի, և ագուա վէճէթօ մինէռալէ, խառնեա իրերաց, և թանձրացո մեղմ հրով, և դիր 'ի վերայ վշտացեալ մասին որկորոյ. զոր պարտ է նորոգել մինչև յերկու

կամ յերեք և կամ գէթ 'ի հինգ ժամու միանգամ։ Աւրդ՝ եթէ անօգուտ լինիցի այս քաթաբլազմա, և բաւականապէս ոչ փարատեսցէ զցաւս, յայնժամ պարտ է 'ի կիր արկանել զմիւս իմն կակղացուցիչ քաթաբլազմա պատրաստեալ միջոցն հացի, սոխով, և բարեխառնել կոգւով, և շաքարաւ։ Յորժամ հաւանացեալ լինի ուռոյցն, և կակղագին, յայնժամ արժան է բանալ զայն խոհեմապէս, և դարմանել մինչև 315 կամ 320 աւուրս։

Յաղագս հնարիցն 'ի յեռն որոց մարմն է խոփանել զվերապարտ-
ցոն այսոցիկ ախտից փողոցաւորեցն։

Յետ գաղարման ախտից փողոցաւորեցն, պարտ է հիւանդին ընդ սակաւ ինչ էօթնեակս 'ի վար արկանել ինֆուզիօնէ տի քինա, կամ գուասսիա, յորմէ սկահակ մի առցի ընդ առաւօտն, մի նախ քան զճաշն, և այլ միւս ընդ երեկս։ Այլ և պարտ է ստէպ ստէպ կառկառիզմս առնել յետագայ էղանակս։ Աւ՛ր վեց ունկի խաշուն քինայի, կամ աքօռցօ տի գուէռչիայի, յոր յաւելցի 'ի վերայ սակաւ ինչ աղլումէն կամ օբբիս։ և տուր ողողել զուլն։ Դարձեալ խրատեմք զսխտակիրն կանխել 'ի յընթրիսն։ և ոչ ուճապարել խակ և խակ զկնի ընթրեացն 'ի մահիճս։ պարտ է հրաժարիլ յամենայն ոգիաւոր հեղանիւթոց, մանաւանդ 'ի գործածութենէ սատիկ և ուժեղ գինւոյ, և չափաւորապէս շրջիլ 'ի զբօսանս ձիով, կամ հետիոտս։

ՅՕԳՈՒԱԾ Է։

'Ի վերայ Բորբոքմանց Լոքոց, և լանջամաղիի։ որ կուլին 'ի լապինաց՝ Բէռիբնէումօնիա, և Բլէուրիդիպէ։

Բէռիբնէումօնիայդ անուն՝ զոր 'ի յունաց առեալ վարեն լատինք, նշանակէ զբորբոքումն թոքց, զոր խաչք թէպէտև հասարակ անուամբ բուն թա կոչեն, և արաբք՝ վէճա իլ ճէմանբ, այսինքն կրշ

տացաւութիւն, այլ յարմարութիւն իրացն սակսեաց զմեզ թարգմանաբար և 'ի մեր լեզու այնպէս կոչել զայն, զի է սաստիկ ջերմութիւն ինչ թոքոց, յաւելք եկեալ 'ի բազմապատիկ պատճառաց: Երհեստաւորքն և գործաւորքն, ևս որսորդքն, զօրականքն, ձիավարքն, փողահարքն, և այլ սոցին նման տարժանելի արուեստաւորքն են առաւել ենթակայ այսորիկ բորբոքման, մանաւանդ նոքա, որք վաստակին 'ի բացօթեայ տեղիս, և ևս նոքա՝ որք վիճակեալ են արիւնային ինն խառնուածոց:

Բորբոքումնս այս պատահի անձանց յո և իցէ հասակի եղելոց. յաճախ են և առաւել 'ի սեռի արանց քան կանանց. և 'ի մէջ արանց ևս տկար և չոր կազմուածոց վիճակեալքն, և մաղձոտքն ևս են առաւել ենթակայ բորբոքմանս այսմիկ:

Գիտել արժան է. զի թոքն առաւել ենթակայ է այսր բորբոքման, քան զայլ մասունս ընդերաց, և հասարակօրէն սա տիրել սկսանի զկնի հասակի եօթն ամաց. ծերունիքն կարի դիւրաւ զերծանին յախտից, քան զչափահաս երիտասարդս. որովհետև կազմուածքն նոցա ուժաթափ դոլով, են սակաւ ենթակայ բորբոքմանս. և սովորաբար 'ի ձմեռնային և 'ի գարնանային եղանակի բորբոքմունքս այս յաճախ երևին: Բայց որում դէպ լինի ըմբռնիլ 'ի բորբոքմանէ առաջ, գժուարին ինն է փարատելն զայն, և բաղում անգամ փոխարկի 'ի խղնայթումն, և 'ի քաղցկեղ:

Պատճառք բորբոքման թոքոց:

Բորբոքումնս այս մարթի պատճառիլ յայնմ ամենայնէ, որք կարեն արդելուլ զարտաշնչութիւնն մարմնոյ. վասն այսորիկ ցրտագոյն հողմունքն, ըմպելն զցրտագոյն հեղանիւթս՝ մանաւանդ զկնի քրտնելոյ, 'ի քուն լինելն 'ի բացօթեայս և 'ի վերայ խոնաւ գետնի, զգենուլն զթացեալ զգեստս, 'ի կարի ջերմագինս պահելոյ զանձն, 'ի սաստիկ աշխատանաց, յարշաւանաց, յընդոստնելոյ, յերկարատև խօսակցութիւնէ, և յերգեցողութիւնէ, 'ի գործածութենէ ոգիաւոր հեղանիւթից, յարգելականութիւնէ սովորական հոսմանց, 'ի փութով փարատմանէ բորոտութիւնք, որքիւնոյ, հնացեալ խոցից, և վիրաց, 'ի խածատ-

մանէ թիւնաւոր կենդանեաց, 'ի հարուածոց, 'ի խժային մածուցիկ մաղասոյ, նաև 'ի սարիէջ ՝ենասակար հիւթոց, որք 'ի գլխոյ 'ի թոքս լճանան։ Երբեմն կա 'ի փողացաւուէ, 'ի յօգուածացաւութէ, 'ի սասակագոյն տենդից, յերկարատև խօթութէ, և 'ի տկարութէ թոքոց, կրծոց, և լանջամաշկի։

Նշանք բորբոքման թոքոց։

Նշանք թոքային բորբոքման մարթին գուշակել 'ի սարսափոյ և 'ի գողգողջանաց, որում զհետ գայ ջերմութիւն, ուժգին ծարաւն, նողկանքն սրտի, ժայթքումն, հանդերձ ծանրութեամբ և ցաւով կրծոց, և ցնորմամբ։ Եւ յետ այսոցիկ սխտակիրն զգայ զցաւ ինչ սաստիկ՝ սուր՝ և խայթիչ՝ 'ի մի կողմն կրծոցն կամ կողիցն, և կամ լաւ կա 'ի խուռչս լանջաց։ Երբեմն ցաւս այս տարածանի մինչև 'ի ծագն ուսոյն, և երբեմն կա շրջապատէ զքամակաւ. հատարակօրէն յոյժ սաստիկ զայրանայ 'ի վայրկենի, յորում հիւանդն հազայ կամ շարժի։ 'Ի գիպուածս յայս զարկ բազկին երբեմն լինի կարծր, լի, զօրեղ, և սրընթաց, և երբեմն մեղմ, մանր, և միջահատակաւ։

Սիրտն և շնչերակն թրթռին կամ գողգողին։ Ախտակիրն զգայ և զասասիկ տապ, զհազ, զգժուարութիւն 'ի կլանելն և 'ի շնչառութեանն. լեզուն լինի ցամաք յոյժ. մէջն պղտոր 'ի գոյն մոխրոյ. տեսիլ գիմացն այսուցեալ, երբեմն է կարմիր, և երբեմն ոժգոյն, կամ կանաչագոյն. թուքն 'ի սկզբան անդ ոչ ունի ինչ փոփոխութիւն. այլ զկնի տիրապետելոյ ախտիս սակաւ ինչ, լինի երբեմն արիւնաբանգ կամ արիւնախառն, երբեմն դեղնագոյն, և երբեմն կանաչագոյն։ Արիւնն զկնի ելանելոյ յերակէն փութով ուռի և կարծրանայ. և զկնի սակաւուց մածանի 'ի վերայ մակարդակի ինչ ելբև զմաշկ նուրբ հանդերձ դեղնագոյն հիւթով. զոր լատինք անուանեն՝ բլէուրիթիքա, այսինքն կշռացաւ։ Ընդ այսոցիկ գիտել արժան է, եթէ նշանք այդոքիկ սկսանին զայրանալ և սաստկանալ 'ի գիշերի, և 'ի ծագիլ առաւօտուն թեթևանալ սկսանին։ Իսկ նշանք լանջամաշկային բորբոքման՝ նոյն են ընդ նշանաց բորբոքման թոքոց, բայց գոյն ինչ թեթև և մեղմ քան զայն։

Այլ գիտել պարտ է, զի բորբոքումն լանջամաշ-

կի ոչ է այնքան ընդհանուր, և երկիւղալի. բայց թոքոցն առաւել ընդհանուր է և վտանգաւոր։ Ընդ բորբոքման այսորիկ երբեմն զուգընթաց լինին և նշանքն ղայլին տենդի. յայնժամ առձայնի՝ բէռի բնէումոնիա նէռվոզա, որ լինի յոյժ որոգայթաւոր և երկիւղալի։ Ընդ այսոսիկ արժան համարիմ յուշ առնել և զայն, զի եթէ բորբոքումն զետեղի 'ի մկանունս կրծոց և ստորին որովայնի, յայնժամ ասի՝ բլէուռիթիտէ սբուռիա կամ նօթա, այսինքն սուտ կշտացաւութի. որում իսկ և իսկ զհետ գոյ ցաւ ինչ ուժգին 'ի կուրծս և 'ի մասունս ստորին որովայնի և ախոնդանաց, ևս 'ի գլուխս, մանաւանդ 'ի հաչաղն։ Ախտակիրն կրէ զպտոյտ գլխոյ, և զդժուարութի մեծ յընկողմանիսն 'ի վր՝ վչտացեալ կողմանն։ Չարկ բազկին լինի երբեմն լի և անկանոն, և երբեմն թոյլ և կանոնաւոր. ջերմութին և ծարաւն ոչ այնքան սաստիկ՝ որպէս զայնս, զորոց փոքր ինչ յառաջ խօսեցաք։ Բայց զնարդ և իցէ, պարտ է փոյթ մեծ ունել 'ի դիպուածս այսոցիկ բորբոքմանց՝ մեծաւ ժրաջանութիւ 'ի սկզբան անդ իսկ և իսկ յերևիլ առաջին նշանացս նպաստամատոյց լինել ախտակրին. ապա թէ ոչ՝ յարմատանալ և 'ի հաստատիլ ախտիցս՝ գրեթէ միշտ լինին անապաքինելի և անդարմանելի։

Դարմանք ի գէղորայք 'ի վր արկանելիք 'ի դիպուածս բորբոքման թոքոց երակ հատանելն է հարկաւորագոյն և ճահաւորագոյն, որովհետև 'ի նշանացն իսկ յայտ է. քանզի միշտ զուգընթաց լինի ընդ ախտիս տապ սաստիկ, ցաւ ուժգին սուր և խայթիչ 'ի խոռոչս լանջաց. չարկ բազկին զօրեղ, խիստ և արագ. վասն որոյ յոյժ օգտակարագոյն է ախտակրին, որքան մարթ իցէ՝ երակ հատանել փութանակի. և պարտ է յառաջին անգամ երակ հատանելն թոյլ տալ արեանն չափաւորապէս հոսել 'ի մէջ սկահակաց սրճոյ, և թողջիր այնպէս ժամն երկուս՝ առ 'ի զննել զորպիսութիւն արեան. 'ի չափահաս ոք՝ մարթ է 'ի դիպուածս յայս երակ հատանել, և հանել զարիւն իբր վեց ունկի. բայց նկատել արժան է միշտ

'ի մակարդն արեան, և 'ի պորագայս անձին. զոր օրինակ 'ի հասակն, 'ի խառնուածն, 'ի զօրութիւնն, 'ի սաստկութիւն ցաւոց, և յայլ նշանս:

Իսկ եթէ զկնի միանգամ երակահատութեան տակաւին մնան սաստկութիւն նշանաց, և զայրացումն ցաւոց, յայնժամ արժան է վերստին երակ հատանել, և հանել զարիւն նոյն օրինակ: Այլ եթէ զկնի երկրորդ անգամ երակ հատանելոյն ևս նշանքն ոչ նուազին, և հիւթն և մակարդն ըստ վերոյասացեալ եղանակի 'ի վեր երևին յերեսս արեան, յայնժամ օրէն է երրորդ, և չորրորդ անգամ իսկ կրկնել: Այլ եթէ ցաւն կրծոց կամ կողից նուազի փոքր ինչ, շնչառութիւն դիւրանայ, և զարկ բազկին թուլանայ, և հիւանդն սկսանի հազալ, կլանել, և թքանել առանց աշխատանաց և ցաւոց, յայնժամ երակ հատանել ոչ է պիտանաւոր գլխովին:

Գիտել արժան է ասէն, եթէ 'ի դիպուածս յայս երակհատանելն 'ի վեցերորդում և յեօթներորդում աւուր է սակաւ օգտակար. այլ զկնի այսոցիկ աւուրց ոչ է այնքան խոհեմութիւն 'ի գործ արկանելն զայն: Արդ՝ զկնի մի կամ երկրորդ անգամ երակ հատանելոյ, պարտ է 'ի վար արկանել զյետագայ ֆօմէնթօն: Առ բուռն մի՝ քամոմիլա, և նոյնքան մալվա, եռացո 'ի մէջ բաւականաչափ ջրոյ, և թացեալ սպունգն դիր 'ի վերայ վշտացեալ մասին՝ այնքան ջերմագին, որքան մարթ եկէ հիւանդին տոկալ. և 'ի պաղելն, պարտ է ստէպ ստէպ փոխել:

Յետ այնորիկ պարտ է 'ի գործ արկանել զյետագայ օծանելիս: Առ երկու ունկի՝ ձէթն ձիթենեաց, ունկի մի՝ սբիրիթօ տի քօռնօ տի չէռվօ, և երկու տրամ՝ սբիրիթօ տի սալ ամմօնիաքօ. եդեալ զայսոսիկ 'ի մէջ անկանի, այնքան տրորեա, մինչև միաւորիլ իրերաց կատարելապէս. և ապա փոքր ինչ եդեալ 'ի վերայ վշտացեալ մասին կրծոց, պարտ է մեղմապէս շփել ջերմ ձեռօք մինչև ցաղդելն և ցընդմոռանելն 'ի ներքս, զոր և պարտ է կրկնել յաւուրն երիցս կամ չորիցս անգամ: Այլ 'ի չգտանել 'ի պատրաստի զայս վերոյիշեալ օծանելիս, յայնժամ արժան է 'ի վար արկանել փոխանակ նորա թիւնթուռա տի քանթառիտէ նոյն քանակութիւն և նոյն եղանակաւ, որ ևս ունի զնոյն գործունէութիւն:

Գիտել արժան է և զայս. զի յետ մի կամ երկու

անգամ երակահատուէ՝ եթէ ցաւն կշտին փոքր ինչ թեթեւանայ, և շնչառութին դիւրանայ, յայնժամ փոխան երակ հատանելոյ մարթ է 'ի վար արկանել գլեատագոյ փոշի դեղս: Առ վեց կշիռ ցորեան՝ ոչ ճիթալիս բուռբուռէա. և չորս կշիռ ցորեան՝ քէռմէզ մինէռալէ: Յետ լոսելոյ յանկանի՝ բաժանեա յերկոտասան հաւասարաչափ մասունս: 'Ի փոշւոյ առաջ յերկուս ժամս միանգամ առնու հիւանդն մասնիկ մի առ իւրաքանչիւր նուագ սկահակ մի ջրով, որ քաղցրացուցեալ լցէ շաքարաւ: Զօրաւոր է յոյժ դեղս 'ի դիսպուածս բորբոքման թոքոց, զի սովաւ լքանի ուժեղութին և գրգռելուն արեան, և միանգամայն ցաւոյն կրծոց կամ կշտին: Սակայն պարտ է ևս զգուշանալ, զի մի առաւել քան զչափն դիցես զվերոյիշեալ ոչ ճիթալիս բուռբուռէան. քանզի սաստիկ թուլացուցանէ զախտակիրն, միանգամայն պատճառէ զնուաղումն սրտի:

Դարձեալ՝ 'ի դիսպուածս յոյս յոյժ օգտակար է արիւն հանելն սրուակաւ, զոր պարտ է առնել 'ի վշտագնեալ մասին կշտոյ, և ներգործութիւն սորա է առաւել փութանակի և ապահովագոյն: Բայց առաւել ապահով միջոցն և հնարն է երակահատութին, որպէս լնով խօսեցաք 'ի վեր անդր: Լուաք ասել յոմանց ներհուն բժշկաց, եթէ այր ոմն 'ի վիճակի 80 ամաց զկնի մեատասան աւուրց գործածութեաբ այսր հնարից սատացաւ զկատարեալ առողջութիւն: Ալ յորժամ կարի իմն անկեալ լցէ ոյժն ախտակրին, յայնժամ օրէն է ընդ սակաւ ինչ աւուրս 'ի գործածել տէքօցիօնէ տի բօլիկալա սէնէկա: Ալ յսինքն, առ ունկի մի՝ յարմատոյն կոչեցելոյ բօլիկալա սէնէկա. և 'ի հատարակ ջրի եփեա եռացմամբ լիր քառորդ մի ժամու. ապա զտեա, և մնասցէ լիտր մի ամբողջ: Եւ ապա տուր հիւանդին յայսմանէ չորս կամ հինգ անգամ յաւուրն, ըստ չափու վեց տրամոյ, և աւելի ևս ըստ կարողութեաբ ատամոքսի: Եթէ ըմպելիս այս շարժէ զախտակիրն 'ի փսխողութիւն, յայնժամ պարտ է բաղադրել յայն երկու ունկի՝ ջուր կինամոնի. և դեղս այս ոչ միայն հռչակաւոր է 'ի դիսպուածս բորբոքման թոքոց, այլ միանգամայն յայլ և այլ բորբոքման կրծոց: Զնոյն ներգործութիւն ունին և քանֆու

և ալքալի վոլսթիլէն:

Ալդ՝ զկնի 'ի վար արկանելոյ և փորձելոյ զցայս

վայր դրեալ հնարս և գեղորայս մի ըստ միոջէ, եթէ տակաւին մնայ ցաւն և միւս նշանքն նոյն օրինակ, յայնժամ պարտ և պատշաճ է դնել վէշիքաթօռիս լայնաբաց 'ի վերայ նոյն վշտացեալ մասին, և թողուլ մնալ իբրև ժամս 24, և այս ունի յոյժ բազմակերպ օգուտս 'ի դիպուածս յայս: Իսկ ըմպելին հիւանդին ցորքան մնայ վէշիքաթօռիսն, պարտի լինել պատրաստեալ ըստ յետագայ եղանակի: Առ երկու ունկի՝ նուշ քաղցր, և ածիկ զայն 'ի մէջ ջերմ ջրոյ առ 'ի հանել զնեղքին մաշկաձև պատեանն. և եդեալ յանկանի նոյնչափ շաքարաւ ճմլեա բարուոք, և յաւել 'ի նոյն մի և կէս լիտր՝ խաշուն գարւոյ, և կէս ունկի՝ կոմմս առապիքա, և յետ զտելոյ տուր ըմպել հիւանդին փոխանակ հասարակ ըմպելւոյ:

Եթէ ախտակիրն ունիցի զանդուիթիւն որովայնի, յայնժամ պարտ է առնուլ 'ի կիր յերկու աւուրս միանգամ զդրեխս պատրաստեալս գարւոյ ջրով և սամպուքօիւ. որ ոչ միայն լուծանէ զորովայնն, այլև միանգամայն թուլացուցանէ զփորոտիսն, և ցրուէ զքամիս աղէաց: Դարձեալ՝ առ երկու ունկի՝ իւղն քաղցր նշոյ, և նոյնչափ շիւօրբօ տի վիօլէ, խառնեա իրերաց, և յաւելլ 'ի վերայ բաւականաչափ շաքար վանի, և տուր առնուլ 'ի կիր 5 կամ 6 անգամ յաւուրն, ըստ չափու միոյ դրգալի սրձոյ: Բայց գոն ոմանք՝ որոց ինաստակար լինի իւղն. յայսպիսի դէպս ուրեմն պարտ է 'ի գործ արկանել փոխան վերոյիշեալ գեղորէին զյետագայդ: Առ երկու տրամ՝ կոմմս ամմոնիաքա, և նոյնչափ սալէպ, և բարիոք լոսեա 'ի փոշի. յոր յաւելլ առ սակաւ սակաւ տէքոցիոնէ տի օրացս մինչև լուծանիլ խեժիցն կատարելապէս. մարթ է և այս յաւելուլ 'ի վերայ երիս ունկի՝ աքուա տիսթիլլաթա տի բուլէձձիս, և տուր 'ի գործ արկանել չորս անգամ յաւուրն ըստ չափու երկուց դրգալաց սեղանոյ, որ օգտէ մեծապէս 'ի դէպուածս վասն հոգի: Իսկ 'ի դիպուածս, յորում հիւանդն գժուարաւ շունչ առնու, և ջերմութիւնն սաստկագին լիցի, և հոսումն միզի լինի յոյժ սակաւաքանակ, յայնժամ պարտ է 'ի վար արկանել զյետագայ գեղս, որ է յոյժ օգտակար և շահաբեր: Առ երկու տրամ՝ նիթռօ բուռօ, և վեց կշիռ ցորեան՝ քանֆօռա. լոսեա բարուոք զերկոսին 'ի մէջ միոյ անկանի, մինչև կատարելապէս խառնիլ իրե-

բաց, և բաժանեա՛ 'ի վեց հաւասարաչափ մասունս, և յամենայնում 5 կամ 6 ժամու զմի մասն այսոցիկ վեցից մասանց տուր հիւանդին ըմպել խառն ընդ հասարակ ջրոյ։

Դարձեալ՝ 'ի դիպուածս յորում հիւանդն կրէ զփորհարուածն, յայնժամ ճահճաղագոյն է առնուլ 'ի կիր զհետագայ էմուլսիոնն առատիքա անուանեալ դեղն։ Առ կէս ունկի կոմնա առատիքա, և երեք հատ կեղևեալ նուշ, ճմլեա՛ յանկանի խառն ընդ երկու տրամ շաքարի, և հեղ 'ի նա հետզհետէ երկու ունկի՝ ջուր ջերմ. տրորեա՛ բարեւոք 'ի միասին. և տուր ախտակրին 'ի վար արկանել երկուս գրգռոս սեղանոյ 'ի ջրոս կամ 'ի հինգ անգամ յաւուրն։ Դեբակրոցն պարտ է լինել թեթևագոյն, զովացուցիչ, և բարեխառն. պարտ է ախտակրին զգոյշ լինել յուտելոյ զգիժուարամարսելի կերակուրս, զյոյժ պարարտագոյնս և զանուշողականս. որպիսի են՝ միս, կաթն, պանիր, ձու, ևն։ Ըմպելին նորա պարտի առվորաբար լինել զովացուցիչ և միզաբեր, զոր պարտ է պատրաստել և յօրինել օրինակ զայս։ Առ երկու լիտր՝ խաշուն գարւոյ, և մրկ 'ի նա երկու տրամ նիթռս, յաւելով 'ի նոյն ունկի մի օսխմելէ սէմբլիչէ, և տուր 'ի գործ արկանել փոխանակ հասարակ ըմպելւոյ։ Ոչինչս մարթ է արկանել 'ի գործ զսիէռս տի լսթթէ։ Պարտ է որքան մարթ եցէ 'ի հանգստեան և յանդորրութեան ունել զախտակիրն. այլև յամենայնում աւուր թանալ զոտս, և զձեռս նորա ջերմ ջրով։

Հուսկ յետոյ կարևոր համարիմ կարգել խրատս ինչ պիտանաւորս մերոսերս համբակացդ։ Դ,ախ՝ գիտելի է, եթէ զամենայն դեղորայս, զորս գրեցաք ցայս վայր, ոչ է պարտ մի ըստ միոջէ 'ի վար արկանել. և եթէ գործածութիւն միոյն եւեթ գտանիցէ առողջութեն հիւանդն, ոչ է օրէն կրկնել զմիւսն։ Երկրորդ՝ եթէ այսոքիկ դեղորայք ոչ արկցին 'ի կիր զգուշութիւն, և ըստ պատշաճաւոր չափու, եղանակի, և ժամանակի, անտարակոյս լինին առաւել վնասակար, քան օգտակար. ևն։

Ի վերայ դեղոցն Ե խնամապարտութեան բորբոքման լանջամաշկի, որ ասի՝ բլեուրիթիպէ։

Ի գիպուածս, յորում բորբոքումն զեռեղի 'ի լանջամաշկն, յայնժամ երակահատութիւն հարկաւորապէս պահանջի. և գրեթէ այդ է սեպհական հընարն, զորմէ կախեալ կայ բարի ելքն խօթութեան։ Եւ եթէ յետ մի, երկրորդ և երրորդ անգամ երակահատութեամբ տակաւին յարատև մնայ սաստկութիւն ցաւոց կրծոց կամ կշռից, և զայրացումն բորբոքման, յայնժամ պարտ է վեց, և կամ 9 տղբուկս գնել 'ի վերայ վշտացեալ մասին կշռից։ Դոյնպէս նշանաւոր դեղ ինն է յայսմ գիպուածի վերոգրեալ ֆոմենթօն, և օծանելին. բայց առաւել լաւագոյն դեղն յայսմ, և յայլ ամենայն բորբոքմունս ըստ կարծեաց ամենայն հմուտ հեղինակաց՝ է վէշիքաթօռիօն, զոր պարտ է դնել 'ի վերայ վերոյիշեալ մասին կշռից կամ կրծոց. զայդ բազում անգամ փորձեալ են, և մեք հանապազ տեսանեմք, թէ օգտակար լինի խօթացելոց, և ոչ բնաւ վնասակար։

Են բժիշկք, որք զկնի մի կամ երկրորդ անգամ երակ հատանելոյ վարեն 'ի գործ զտորան ործացուցիչ։ Իսկ այլք փոխան ործացուցչի տորտոյ 'ի կիր արկանեն զվերոգրեալ տիՃիլթալէն և քէռմէզ մինէռալէն։ Սակայն զպատշաՃական և զչափաւոր կիրառութեան նորա ըստ պիտոյից տեղւոյն՝ կարեւոր համարելի է։ Ապաքինի ախտս այս 'ի մէջ քանի ինչ աւուրց, անՃնապահ լինելով 'ի ցրտոյ, և նպաստաւորութեամբ նախատացեալ հնարից և դեղոցէից, և առատօրէն ըմպելով բարեխառն հեղանիւթս, զորօրինակ ջուրն սամպուքօի, գարւոյ, և։ կանոնադրելով զինքն 'ի կերակուրս ըստ եղանակին, զոր գրեցաք 'ի գիպուածս բորբոքման թոքոց, և բորբոքողական տենդից։

Ի վերայ հնարից և դեղոցէից բորբոքման մկանացն իրծոց և ոտորին որովայնի, կուլեցելոյ՝ բէռիթինէռմօնիա սբռռոիա։

Ախտս այս անուանի և բլէուռիթիսէ նօթա կամ ֆիալաս, այսինքն պատիր կշտացաւութեան. և 'ի գիպուածս յայս ցաւն գլխաւորապէս 'ի վեր երևի 'ի

միանուն լանջաց և ստորին որովայնի. բայց ցաւն այն ոչ է այնքան սաստիկ, որպէս 'ի դիպուածս ճշգրիտ բորբոքման թոքոց և լանջամուշկի: Անձինք որք ենթակայ լինին բորբոքման թոքոց և լանջամուշկի, մարթին նմանապէս լինել ենթակայ և այսորիկ ախտի: 'Ի դիպուածս յայս երակ հատանելն ուր ուրեմն է հարկաւոր. եթէ երևին նշանք բորբոքման, զորօրինակ դժուարաշնչութիւնն, ուժգին ջերմութիւնն, ցամաքութիւնն որկորոյ և լեզուի, և, մարթ է երբեմն թոյլ տալ այնմ առ ժամայն 'ի սկզբան անդ խօթութեան. բայց զործացուցիչ կամ փսխեցուցիչ դեղն հարկ է միշտ 'ի վար արկանել՝ առ 'ի զերծ պահել զթոքն. յայն սակս պարտ է տալ թառթառս էմէթիքս ըստ եղանակին, զորմէ պարզագոյն բացատրեցաւ 'ի գլ. ՃԾ. յօդ. Ը. երես 8:

Եւ իբրև վերոյիշեալ կամ նոցին նման դեղորէիւք կասեցն սաստկութիւն բորբոքման, եթէ չև ևս ելեալ կազդուրեալ ցաւն, ոչինչ արգելք կայ գործածութիւն կօմմա ամմոնիակա յորջորջեալ խեժի: Ես զնէժս զայս տամ ըստ կերպի արգանակի, կամ նաև իբրև զհատադեղ: Եթէ իբրև արգանակ, պարտ է լինել երկու տրամ՝ կօմմա ամմոնիակա, և նոյնչափ՝ օսիմէլէ շիլլիթիքս, և մի լիտր՝ խաշուն սամպուքօի: Յարգանակէ ասուի յերիս ժամս միանգամ առցէ հիւանդն ունկի մի առ իւրաքանչիւր նուագ: Իսկ էզանակն զոր պահեմք 'ի տալն զհատադեղ, է այս: Առ երկու տրամ՝ վերոգրեալ խէժդ, և ութ կշիռ ցորեան՝ քէրմէզ մինէռալէ. և յաւէլ 'ի նոյն այնչափ օսիմէլէ շիլլիթիքս, որչափ պէտք ելցեն առ կազմելոյ ըստ կանոնաց արհեստին. զզանգուածս զայս աբարեալ հատադեղ որ կշռիցէ չորս ցորեան, և շրջապատեալ վոշլով կենամանի, տացին երկու հատք, երկու անգամ յաւուրն:

Իսկ ըմպելին հիւանդին՝ ցորքան միայ ցաւն, պարտի լինել սիէռօ տի լսթթէ, այսինքն շիճուկն կաթին, որ համեմեալ ելցէ մանանխով, և մեղրիւ: Բայց պատահի երբեմն, եթէ ախտս այս հատատեալ միայ և ոչ փարատի փութով. յայնժամ արժան է դնել վէշիքաթօռիս 'ի վերայ ցաւագնեալ մասին, և 'ի վար արկանել ըստ հարկաւորութիւն զամենայն դեղբոյս, զորս գրեցաք 'ի դիպուածս ճշգրիտ բորբոքման թոքոց և լանջամուշկի: Եւ կիրառութիւն առա-

ցեալ դեղորէիցն անտարակոյս ապաքինի ախտս այս, և հաղիւ երբէք մարթի վերիպել յապաքինութէ, զ-
րովհետև 'ի բազումս զփորձ առեալ եմք և գիտեմք:

'Ի վերայ դեղորէից և հնարից, զորս պարտ է 'ի վեր արկա-
նել 'ի դիպուածս, յորոմ ընդ բորբոքմանցս ևոքոց և լանջա-
մաշի զոյգ գոյանին և նշանքն զայնոցին պէնդի:

Հնարք և դեղատուութիւն այսորիկ ախտի գրեթէ նոյն է ընդ հնարից և դեղատուութիւն ջղային տենդի, զորմէ խօսեցաք լիովին 'ի գլ. ՝ա. երես 30: 'Ի դիպուածս յայս, եթէ հիւանդն լինիցի յարբունս հասակի երիտասարդութէ, և արիութէ, և եթէ երևին նշանք բորբոքման՝ մարթ է երբեմն երակ հատանել իսկ և իսկ 'ի սկզբան անդ ախտաժեռութէ. բայց գործ մեծ է յայդպիսի դիպուածի քաջ նկատել զհանգամանս բնութէ, և ճանաչել զհակուն և զ-
ուրամադրութի բնութէն. պարտ է նպաստամատոյց լինել նմին ՝ի պահանջելոյ հարկի պարագայիցն, ար-
ատահանելով զսակաւ ինչ արիւն յերակացն. քանզի յայդպիսի դիպուածի, եթէ անխոհական ընտրանօք և ագիտութէ՝ երակ հատանիցեն, յառաջ բերեն անվրէպ զմեծ վտանգ, և մահ:

Բազում անգամ կիւց լինի ընդ ախտիս անզօրութի և թուլութիւն ինչ երևելի, և տապ սաստիկ. յայն-
ժամ օրէն է առնուլ 'ի կիր զյեատագայ խթիչ և զ-
րացուցիչ դեղս: Ա՛ռ կէս ունկի՝ սէռբէնթառիա վիռճինիանա, և 'ի հասարակ ջրի եփեա եռացմամբ իբր քառորդ մի ժամու. ապա զտեա և մնացեալ 12 ունկի, յոր յաւել երկու ունկի օսիմել սէմբլիչէ, և երկու տրամ աչէթօ քանֆօռաթօ. և ապա առ-
նուլ օրէն է հիւանդին յերկուս ժամս միանգամ ուն-
կի մի առ իւրաքանչիւր նուագ: Նոյնպէս օգտակար է 'ի դիպուածս յայս շիճուկն կաթին, որ ի ցեղ բա-
զադրեալ սպիտակ գինեաւ, զոր պարտ է 'ի կիր առ-
նուլ յաւուրս բազումս: Իսկ եթէ 'ի ձեռն այսո-
ցիկ դեղորէից չգադարեսցի ուժգնութի նշանացն, յայնժամ արժան է դնել զվէշիքաթօռիս 'ի վերայ այնր մասին, ուր առաւել զգայ զցաւն: Դարձեալ օգտաւէտ է, և բարիոք և է գործածութի ֆոմէն-
թօի, զորմէ ճառեցաք 'ի վեր անդր: Նոյնպէս և ոչ սակաւ օգտէ զգրեխս լուծիչս 'ի վար արկանել:

ԱՅԼ գիտել արժան է, զի 'ի դիպուածս բորբոքման թոքոց, և լանջամաշկի՝ երբեմն 'ի վեր երևի խղխայթեալ պալար ինչ 'ի թոքս, և յայնժամ յորկորջի անուամբս վօմիքա, այսինքն խղխայթ թոքոց: Եւ նշանքն այսորիկ պալարի են՝ անհանգստութիւն, նողկումն, պռոյտ գլխոյ, և երկիւղ հեղձման: Իսկ եթէ նոյն պալարն բայեալ լինի, և ապականեալ շարաւն կուտակեալ շեղջի 'ի խորչս թոքոց, յայնժամ վաղվաղակի զհետ գայ դժուարաշնչութիւն, անհանգստութիւն, և համառօտիւ կամեցեալ խօսել, նշանք բորբոքողականութեան վերսին 'ի վեր երևին: ԱՅԼ եթէ շարաւն այն հոսեալ գումարի 'ի խոռոչս բլշաղի՝ կոչեցելոյ չէքա, յայնժամ իսկ և իսկ զհետ գայ դժուարութեան 'ի շնչառութիւնս, հազ, անախորժակութիւն, տենդ ինչ ծիւրական, և հանապազօրեայ. որ գլխովին ուժաթափ առնէ զախտակիրն, և հասարակօրէն հիւանդն ժամանէ 'ի վիճակ յոյժ աղեսալի:

Յաղագս դեղոցն՝ զոր պարտ է 'ի վեր արկանել 'ի դէպս ուածս վերոյիշեալ պալարի, որ երբեմն 'ի վեր երևի 'ի թոքս դէպ 'ի դադարումն բորբոքման թոքոց կամ լանջամաշկի:

Եթէ ախտակիրն իցէ արիւնային իմն բնութեամբ և ուժեղ խառնուածոց վիճակեալ, և եթէ վերոյիշեալ պալարն նորոգ իցէ պատահեալ, յայնժամ մարթի փորձել իսկ և իսկ 'ի ձեռն երակահատութեան: Իսկ յորժամ գուցէ կասկած 'ի նշանաց ինչ՝ եթէ արդեօք պալարս այս իցէ հասունացեալ, կամ բացեալ, յայնժամ պարտ է 'ի կիր արկանել զդեղորայս կակղացուցիչս, որպիսի են՝ օսսիմելէ շիլլիթիքօ, կոմմա արատիքա, և սիռուբ աղթէա: Զորօրինակ. առ երկու ունկի՝ օսսիմելէ շիլլիթիքօ, մի ունկի՝ կոմմա առատիքա, և երկու ունկի՝ սիռուբ աղթէա: 'Ի խառնուրդէ ասսի՝ տացի 'ի թոքային ախտակրութիւնս յիւրաքանչիւր երկու ժամու մի գրգալ սեղանոյ:

Բայց եթէ զոյգ ընդ պալարի թոքոց գոսանի և հազ իմն, յայնժամ պարտ է փոյթ մեծ ունել առ 'ի գրգռել զշարաւումն, և յայսպիսի դիպուածս մարթէ 'ի կիր արկանել զհետագայ դեղորայսն: Առ ունկի մի՝ կոմմա առատիքա, և նոյնքան շաքար մաքուր. առ և իւղն քաղցր նշոյ՝ որչափ ինչ պէտք են վասն

չինելոյ զլոք, որոց մէն մի կշռիցեն մի տրամ։ 'Ի լոքէ ասսի՝ յերբէք ժամն միանգամ առնու ախտակիրն հատ մի առ իւրաքանչիւր նուագ։ Արդ՝ յորժամ նուագի հոսումն շարաւոյ, և վարատեալ ցրուին ամենայն վերոյ ցուցեալ նշանքն, պարտ է յայնժամ ձեռնամուխ լինել 'ի մատակարարութիւն և 'ի գործածութեան քինայի ըստ եղանակին՝ զորմէ գրեցաք 'ի կառավարութեան միջահատական տենդի։

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Յաղագս բորբոքման սրտի, որ ասի՝ փարդիտիս։

Ասիս այս՝ բորբոքումն սրտի կամ սրտակրանաց, պատճառս առնու 'ի սաստկագին կրից հոգւոյ, յերկիւղէ, 'ի տրտմութենէ, 'ի սիրոյ, և յայլ ամին նման շարժողականութենէ հոգւոյ։

Նշանք բորբոքման սրտի կամ սրտակրանաց։

'Ի հասարակի նշանք այսորիկ բորբոքման են տգեղութեան դիմաց, դժուարաշնչութեան, անհանգստութեան, նուաղումն, անհաւասարութեան զարկի բազկերակին, հաղ, ժայթքումն, ցուրտ քիրան. ախտակիրն հասարակօրէն զգայ զցաւ ինչ հաստատ յոսկր կրծոց, և զոյգ ընդ այնմ միանգամայն ևս զբաբախիւն սրտի։ Բաց յայսոցիկ նշանաց հիւանդն կրէ զանձկութեան, զթաշկացումն, զթօսումն, զծանրութեան կրծոց, ըզտատ, և յետ այնորիկ յարձակի 'ի վերայ ուժգին նուաղումն. ցաւ ինչ 'ի մի կողմն սրտի, հանդերձ սաստիկ բաբախմամբ։ Զարկ բազկերակին երբեմն լինի մանր, և միջահատական. և երբեմն անհաւասար, և յոյժ սրընթաց։ Ականատես եղաք 'ի դէպս ուծս բորբոքմանս ախտակրաց ոմանց բազմեալ զընչերակս 150 կամ 200 անդամ 'ի մէջ միոյ վայրկենի։ Այս յեռին նշանքս հասարակօրէն ցուցակ են վերաւորութեան սրտի, կամ սրտակրանաց։

Իսկ որքան առ յարաւևութիւն բորբոքման սրտի կամ սրտակրանաց՝ չէք լինչ որոշեալ կանոն. երբեմն

աւարտին յեօթնեերորդում աւուրն. երբեմն եւ յաջորդին 'ի տասնեւչորրորդում աւուրն, և երբեմն եւ 'ի տասնեւութերորդում աւուրն: 'Ի վախճան ամենայնի կորուսանէ գլխովին զկարողութիւն, և վարանի երկիւղիւ խեղդամահ լինելոյ: Կրէ և զցաւ ինչ սաստիկ 'ի ձախակողմն կրծոց. և ցաւս այս այնքան սաստկանայ և ուժգնի, մինչև ախտակիրն ոչ եւս կարէ տոկալ վոքոր իմիք շօշափման. և յետ այնորիկ զարկ բաղկերակին սկսանի բաղխել նիհար, գողգոջուն, միջահատական և զեռնական, կամ սողնական. յայսոցիկ նշանաց գուշակի վտանգ ծանր և աղետալի:

Կառավարութիւն և դեղորայք այսորիկ բորբոքման գրեթէ նոյն են ընդ դարմանատրութիւն և դեղատուութիւն բորբոքման թոքոց, զորմէ լիովին խօսեսցաք 'ի յօդ. է:

ՅՕԴՈՒԱԾ Թ.

Յաղագս բորբոքման սրտին, որ կոչի՝ պիտիքրամմա կիպէ:

Բորբոքումս այս հասարակօրէն 'ի վեր երևի 'ի սրտին անուանեալ թաղանթն կամ մկանն, (որք անջրպետեն զկուրծն 'ի սորակայ որովայնէ.) և սարբերի այս 'ի բորբոքմանէ թոքոց, լանջամաշկի, և որովայնամաշկի. ըստ որում զուգընթաց լինի ՀԷ ախտիս ծիծաղ ինչ անպատեհ՝ անուանեալ սարտանիկեան, ուժգին ցնորումն և մտաթափութիւն: Դարձեալ բորբոքումս այս ոչ է այնքան ընդհանուր՝ որպէս զբորբոքումն թոքոց և լանջամաշկի:

Յաղագս պատճառաց այսորիկ բորբոքման:

Պատճառքն այսորիկ բորբոքման՝ յոյժ համաձայն են պատճառաց բորբոքմանց թոքոց և լանջամաշկի, զորոց լիովին գրեցաք 'ի տեղիս իւրեանց:

Յաղագս նշանաց այսորիկ բորբոքման ախտանաց։

Ի հասարակի նշանքն այսորիկ բորբոքման են անպատեհ ծիծաղն, ուժգին ցնորումն, մտաթափումն. սովորաբար կրէ զցաւ ինչ սաստիկ և սուր 'ի ներքին կողմն ոսկեր կրծոց, կամ 'ի մէջքն, և կամ 'ի խորս կողից, և ցաւս այս առաւել զայրանայ 'ի հազալն. և 'ի շարժիլն, մանաւանդ զկնի կերակրոց. և զդպայ յանձին զոյգ ընդ ցաւսն միանգամայն և ջերմութիւն ինչ սաստիկ, և անձկութիւն. և զկնի այսոցիկ ամենայնի 'ի վերայ գայ մոլեգնութիւն, և երբեմն և հեծկլտանք։ Շնչառութիւն լինի երագ, փոքր, և հեղձեալ։ Զարկ բազկերակին լինի շուտափոյթ, սակաւ, և մանր։ Եւ այդոքիկ նշանք բազում անգամ են յոյժ գժնեայ, և գուժաբերք. մանաւանդ եթէ զուգընթաց լիցի ընդ նոսին և ճնշելութի, և ախոնդանոտութի։

Յաղագս դարմանի այսր պնևմոնի բորբոքման։

Ի դիպուածս այսորիկ բորբոքման գրեթէ միշտ պարտ է 'ի գործ արկանել զնոյն դարմանս և զիրենամն՝ զորոց լիովին գրեցաք 'ի վեր անդր 'ի դիպուածի ախտին կոչեցելոյ բերիբնէումոնիա կամ բլէուռիթիտէ։ Ըմպելին պարտի լինել գաղջ և սակաւաքանակ։ Իսկ ոչքան առ արտաքին գեղորայս պարտ է 'ի գործ արկանել զօծանելիս, որ ասի սբիռիթօ ակ սալ ամոնիաքօ, բարեխառնեալ ը ձիթոյ։ Դարձեալ 'ի դիպուածի սաստ յոյժ օգտակար և բարեգոյն վարկանիմք զգրեխն կազմեալ 'ի կակղացուցիչ և 'ի խաղաղացուցիչ գեղորէից. սմին իրի մարթ է յօրինել ծաղկամբ երիցկի, և արմատովք տղտոյ, կամ մոլոշի, և սերմամբ կտաւատի, ևն. և մարթ է հայեցեալ 'ի պարագայս ցաւոցն յաւելուլ 'ի վերայ մի տրամ կամ մի ամբողջ գլուխ բաբավէրօ աշպօ, և կամ 30 կաթիլ լաւտանօ լիգուիտօ։

ՅՕԴՈՒԱԾ Ժ.

Յաղագս բորբոքման սպամոքսի, որ կոչի կասլոռիլիպէ։

Ամենայն բորբոքումն որ 'ի ստամոքսն կամ 'ի խախացոցն լինի, է վտանգաւոր, և պահանջէ զաւելի գործունեայ, և զպատրաստական նպաստս։ յայն սակս՝ զի բորբոքումս այս բազում անգամ փոխարկի 'ի շարաւումն՝ որ կոչի սուբբուրացիոնէ, և երբեմն 'ի քանքռէնա, որ է քաղցկեղ, յորմէ զհետ գայ ստուգապէս մահ։

Պատճառք բորբոքման սպամոքսի։

Ինֆլամմացիոնէ տի սթօմաքօ, այսինքն բորբոքումն ստամոքսի՝ մարթի յառաջ գալ յամենակերպ պատճառաց, որք պատճառեն զուժգին ջերմութիւն։ որպէս արբումն ցրտային հիւթոց՝ յորժամ զգայ ոք յանձին զտաքութիւն, 'ի բուռն զօրութենէ սաստիկ ոգիաւոր հեղանիւթոց, յարգելմանէ արտաշնչութիւնէ մարմնոյ, 'ի յանկարծօրէն և յորդ դատարկմանէ արեան, և ն։ Դարձեալ՝ հնար է բորբոքմանս պատճառիլ 'ի թթուուէ մաղձի, և 'ի դառնակսկիծ և 'ի դժնդակ նիւթոց, որք երկսրատեւեալ մնան 'ի ստամոքսն։ 'ի կարի զօրաւոր փսխողական կամ 'ի լուծողական դեղոցէից, 'ի թիւնաւոր նիւթոց, որպիսի են սունկքն, քաղցրացուցեալ անգիկն, սուպլիմաթն, արսէնիքն, և ն, 'ի գործածութենէ ջերմացուցիչ և ներհակական դեղոցէից, կարծր և անմարսելի իրք մնացեալք 'ի ներքս 'ի ստամոքսն կամ յաղիսն, որպէս ոսկերք, կորիզքն պտղոց և ն, նմանապէս կարեն յառաջ բերել զնոյն ախտն։ Նոյնպէս մարթ է պատճառիլ 'ի բորբոքմանէ փորոտեաց, լերդի, փայծեղան, և ստոծանեաց։ Դարձեալ՝ բորբոքումս այս կարէ պատճառիլ 'ի խոցից, որք երբեմն գոյանան 'ի ստամոքսն, նաև 'ի բորոտութէ, 'ի սքօռպութիւն անուանեալ ախտէ, 'ի թթախտութէ, 'ի փորհարութէ, և յաւէտ 'ի յարգելականուէ իրիք սովորական հոսմանց։

Յաղագս նշանաց բորբոքման սրտամոքսի։

Ընդ բորբոքմանն սրտամոքսի գտանի և ցրտութիւն ինչ ուժգին, որում անդէն զհետ գայ սաստիկ ցաւն ջերմութիւն 'ի ներքին մասունս, հանդերձ սուր խայթիչ և դժնդակ ցաւով։ Զարկ բազկերակին լինի մանր, արագ, կարծր, անհաւասար, և միջահասակն։ Ախտակիրն ործայ երբեմն ջինջ, և երբեմն ժանգագոյն, կամ գէթ զգայ յանձին զգուանս, և զանախորժակութիւն, և զսաստիկ ծարաւ։ Շնչառութիւնն կարի դժուարին, և քիրտն ցուրտ։ և երբեմն և մոլեգնի, նեղի, և տանջի կարկամութիւն, և գալարումամբ։ սրտամոքսն է այտուցեալ, և բազում անգամ երևի լինել խիստ և պինդ։ Մինն 'ի նշանաց այսր ախտի՝ է ուժգին ցաւն, զոր յանձին զգայ հիւանդն քանիցս անգամ ճաշակէ ինչ, թէ պնդակազմ, և թէ հեղանիւթ։ մանաւանդ եթէ կերակուրն, և եթէ ըմպելին լինիցի կարի ջերմ, և կամ կարի ցուրտ։ Նոյնպէս ճանաչի և 'ի կարի ձգտաւոր, 'ի տապոյ, և 'ի ժայթքմանէ՝ որք 'ի վերս երևին զկնի ուտելոյն կամ ըմպելոյն։

Դարձեալ՝ սովորաբար ը ախտիս զուգընթաց լինին և աքնութիւն, անձկութիւն, ժժգունութիւն դիմաց, թուլութիւն կամ անզօրութիւն ընդերաց, ցամաքութիւն բերանոյ, թմբրութիւն անդամոց, ցնցումն սրտամոքսի և միանանց, և այտուցումն սորին որովայնի։ Այլ և սրտամոքսն է ենթակայ սուր և ուժգին իմն խթի, զոր յորջորջեն՝ քօլիքա սէլլս սթօմաքօ, որ և բազում անգամ պատճառի 'ի փքոց և 'ի սրաղմոնական ներգործութիւն։ Մինչ չէ՞ յարակցեալ ընդ ախտիս ջերմութիւն, պարտ է 'ի գործ արկանել զդեղորայս ջերմացուցիչս։ այլ եթէ յարակցեալ իցէ և ջերմութիւնն, յայնժամ պարտ է փոյթ մեծ ունել 'ի փարատեալ զբորբոքումն։ Եթէ հիւանդն փսխէ զամենայն ինչ զոր ուտէ և ըմպէ, յայնժամ ախտն է հաստատեալ, որում և զուգընթաց գտանի հեծկլտանք, և ուժգին ցաւ։ 'Ի վախճանի՝ եթէ զարկ բազկերակին ընդմիջութիւն հարկանէ, և կարի սաստիկ թմբրութիւն և նուաղումն ստէպ 'ի վերայ գայ, գոյ մեծագոյն վտանգ, կամ որոգայթ։ քանզի քաջայայտ է թէ բորբոքումնս այս յայնժամ փոխարկի 'ի քաղցկեղ։

Կառավարութիւն 'ի գործ արկանելի 'ի Բարբարոսն պատմութեան։

Հարկ է մեծաւ փութով արգելուլ իսկ և իսկ զուտելիս, և զըմպելիս բնութիւն ջերմացուցիչս, և զայրացուցիչս։ Տկարութիւն հիւանդի կարէ խաբել զմերձակայս, և շրջել զմիտս նոցա 'ի տալ զգինի, զոգիաւոր հեղանիւթս, և կամ զայլազգ քուռիալս։ Բայց այդպիսի դեղորայք միշտ զայրացուցանեն զախտն, և սովորաբար 'ի վերայ ածեն զերագահաս մահ։ Աւաւել հասարակօրէն պատճառքն պատահելոյ չարեաց յախտէս յայսմանէ, է սուտ և կեղծեալ կարծիքն՝ որով սեռօրէն համարին եթէ ցաւքն զայրացուցիչք ստամոքսի և փորոտեաց միշտ յառաջ գան 'ի վիրոց։ Յայն սակս և մերձակայքն 'ի տեսանել անդ զհիւանդն այսու ախտիւ զգածեալ, իսկ և իսկ փութան տալ նմա զօղի անիսօնի և զայլազգ ուգիաւոր հեղանիւթս, և այդպէս առաւել զօրանայ ախտն, և հետեւապէս 'ի վերայ հասանի քաղցկեղն, յորմէ և զհետ գայ երագահաս մահ։ Կերակուրն պարտի լինել թեթև, զովացուցիչ, և դիւրամարս, արժան է լինել սակաւ քանակութիւն, ոչ կարի ջերմ, և ոչ կարի ցուրտ։ Ըմպելին՝ էմուլսիօնէ տի կօմմա առասղիքա, կամ շինձուկն կաթին, կամ ջուրն գարեոյ, և հացի, և այլք նմանք։

Խնամապարութիւն 'ի վերայ արկանելի 'ի Բարբարոսն պատմութեան։

'Ի դիպուածս ախտիս երակահատութիւն հարկաւորապէս պահանջի, և գրեթէ այդ է սեպհական դեղն, զորմէ կախեալ կայ բարի ելքն հիւանդութեան։ և չափ քանակութեան արեան հանելոյ պարտի լինել համաձայն զօրութեան ախտակրին, և ուժգնութեան նշանացն։ Եւ յետ այնորիկ 'ի նոյն իսկ վայրկենի հարկ է ֆոմենթացիօնէ առնել 'ի կակղացուցիչ արմատոց և 'ի տերևոց դաղջ ջրով, և ստէպ ստէպ անընդհատ դնել 'ի վերայ ստամոքսի, և նախ քան զպաղելն յաճախակի փոփոխել, և վերանորոգել։ չէ՛ պարտ լինել ոչ այնքան սառուցեալ ջերմ, և ոչ կարի ցուրտ։ քանզի սառաւել ցուրտն և առաւել ջերմն հաւասարապէս վնասակար են ախտիս։ Յոյժ օգտակար

դեղ է և ելենիմենթօ վօլաթիլէն. զոր պարտ է յա-
ճախակի օծանել 'ի վերայ ստամոքսի և ստորին որո-
վայնի։

Դարձեալ, պարտ է ստէպ ստէպ թանալ դաղջ
ջրով զոտս և զարուն ախտակրին. և զչուխայն ջերմ
ջրով թացեալ շփել կամ դնել 'ի վերայ ստամոքսի։
Նոյնպէս և 'ի ներքոյ ոտից դնել զերս ջերմագինս,
որպէս թանձրաթան, կամ մանանեխ ևն։ Ջերմ բա-
զանիքն յոյժ օգտակար է, եթէ հնարաւոր իցէ։ Բայց
առաւել բարեգոյն և շահաւետագոյն դեղն յայսմ
դիպուածի, և յայլ ամենայն բորբոքմունս է լայնա-
բաց վիշքաթօռիս. զոր պարտ է դնել 'ի վերայ ցա-
ւագնեալ մասին մարմնոյ. այդ՝ որպէս բազում ան-
գամ փորձեալ տեսանեմք, միշտ օգտաւէտ լինի հի-
ւանդաց, և ոչ բնաւ վնասաբեր։

Սեպհական ներքին դեղորայքն, զոր 'ի գործ ար-
կանել մարթ է 'ի դիպուածս ախտիս՝ են թամարին-
տի, մաննա, նիթռօ, ալէնա, յօրինեալ պարզագոյն
դաղջ ջրով. կամ թեթև տէքօցիօնէ արարեալ հեղուլ
զայն գրեխաւ ընդ երաստանս հիւանդին. և եթէ
գուցէ պնդութի որովայնի, մարթ է 'ի վերայ յա-
ւելուլ և սակաւ ինչ օլիս տի ռէցինա. զայդ ոչ է
մարթ բնաւ զանց առնել, որովհետև բազում անգամ
դէպ լինի՝ եթէ յայդպիսի ախտս առողջութին ախ-
տակրին զայդմանէ ևեթ կախեալ մնայ. իսկ եթէ
ունիցի զուժգին թուլութի աղեաց կամ փորոտեաց
(որպէս պատահի յոլով անգամ,) յայնժամ պարտ է
գրեխ կաղմել 'ի քինայէ, և 'ի քանֆօրայէ։ Դի-
պուածս ախտիս, չէ օրէն փութով խափանել զգոր-
ծածութին դեղորէից. այլ հարկ է երկու կամ երեք
օր առաւել ակն ունել փարատելոյ բորբոքմանս. և
լաւ ևս է ապաքէն յետ լիովին բուժելոյ ախտիս՝
տակաւին ութ աւուրս 'ի գործ արկանել զսովորա-
կան դեղորայս։ Են և այլ ախտք որոց ընդունակ
է ստամոքսն, զոր օրինակ ցաւն աղեաց, կորուսան
ախորժակի, անմարսողութին, քարտիալՃիա, բիրբ-
լէ, որ է ջերմութի ստամոքսի. զորոց ունիմք ճա-
ռել 'ի տեղիս իւրեանց։

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ

Յաղագս Բորբոքման փորոքեաց կամ սրտին որովայնի, որ առի՝ Էնրէոֆիլիտէ։

Բորբոքումն այս է մինն յառաւել գժնդակ և վտանգաւոր բորբոքմանց, որում ներքոյ անկանին մարդիկ։

Պատճառք Բորբոքման աղիեաց կամ սրտին որովայնի։

Այս բորբոքումն՝ 'ի հասարակի խօսելով, յառաջ գայ 'ի նոյն իսկ պատճառաց բորբոքմանն ստամոքսի։ Բայց և այնպէս պնդութիւն որովայնի, որդնահարութիւն, այսինքն ունել զճճի կամ որդն յորովայնի, տհաս կամ խակ միրգն, ընկոյզն՝ եթէ յանչափս ոք ուտէ, հնագոյն պիտուան՝ փակեալ մնացեալ 'ի յապակւոջն, սաստիկ գինին, և, կարեն պատճառել զբորբոքումն զայս։ Նոյնպէս մարթի պատճառիլ 'ի փոշտանկութիւն, յուռուցք ինչ պատահելոյ 'ի մէջ փորոտեացն, յերկար ուղեգնացութենէ, 'ի փոքրիկ քարանց մտելոյ ընդ ճանապարհն փորոտեաց և։ Դարձեալ՝ մարթի յառաջ գալ 'ի կծու և 'ի թթու մաղձէ, 'ի յօդուածացաւութէ, յարիւնախառն որովայնահոսութէ, 'ի թթախտութէ, 'ի սաստիկ և 'ի թնդագոյն լուծողական դեղորէից, 'ի թունաւոր նիւթոց, 'ի ցրտաւութէ և 'ի խոնաւութէ և։ Սեպհական անուանք, որովք յորջորջեմք զբորբոքումն փորոտեաց, կամ սորին որովայնի են՝ էնթէռիթիտէ, բասիոնէ իլիսաքա. երբեմն և՝ քօլիքա ինֆիամմատորիա և։ Դարձեալ գիտելի է, եթէ յորսիսի և իցէ մասունս ներքին փորոտեաց ախտն զեռեղեալ կայցէ, գրեթէ միշտ մի և նոյն է կառավարութենն. այլ մեք զանազան յօդուածս բաժանելով, գիտեմք զհետեւեալ մասաւութի վերծանողիդ։

Յաղագս նշանաց բորբոքման փորոքեաց կամ ոգորին որովայնի :

Ոչանք ախտիս յոյժ համաձայնին նշանաց բորբոքման ստամոքսի, և գրեթէ նոյն են ը նմա. բայց և սեպհական զանազանութիւն ընդ մէջ գտանի, զի այսր ախտի ցաւն լինի առաւել սուր և սաստիկ, և՝ ի խորագոյնս զեռեղեալ շուրջ զպորտով, որովայնն պնդեալ իբրև առաստանաւ, և պնդութին որովայնի կարի առաւելեալ : Զարկ բազկերակին հարկանէ ցածուն, խոր, երագ, սկար, անհաւասար, և կարծր : Լեզուն լինի յոյժ կարմիր, և չոր. ծարաւութիւնն ուժգին. փսխումն ևս կարի զօրաւոր. և ախտաժէտեալն արտաքս բերէ զնիւթ իմն մածուցիկ ժանգագոյն և անհամ. այսորիկ նիւթոյ զհետ գայ և դառնակսկիծ իմն մաղձ կանաչագոյն, որ ցամաքեցուցանէ զկոկորդն, և երբեմն ևս զպէտս որովայնին, մինչ զի արարեալ գրեթան բազում անգամ ը բերանն ելանէ : Ախտակիրն կրէ և զցնցումն ինչ մկանանց 'ի ստորին որովայնի, հանդերձ կիզողական ասոտիկ ջերմութիւ. և զգայ յանձին յօժարութիւն ինչ 'ի միզել հանդերձ ցաւով. ուռոյց և խիթ ինչ 'ի վերս երևի 'ի սրբանն. անդադար փուքս արձակէ 'ի վերուստ, և երբեմն ևս կրէ զմիզարգելութիւն :

Առաւելեալ մնասն այսորիկ բորբոքմանս, և հասանելն 'ի յեռին աստիճան, զցաւն վերոյիշեալ այնքան 'ի սաստկագոյն աշխատանան տանի, մինչև եթէ ոք կամիցի թեթևապէս շօշափել զայն ցաւագնեալ մասունս որովայնի, իսկոյն ախտակիրն զաղաղակ բարձեալ գոչէ բարձրաձայն, և յետ այնորիկ զհետ գայ հեծկլտանք, և ստէպ ստէպ փսխումն : Հուսկ յետոյ եթէ ցաւն փոփոխէ զտեղիս, եթէ փսխումն ոչ ներգործէ 'ի նեղքուստ, և եթէ գրեթան արարեալ արտաքս ելանէ հաստարակ ճանապարհաւ, գոյ յոյս ապաքինութեան, և բուժելոյ ախտիս : Բայց եթէ ախտակիրն փսխէ զգրեթան, և զպէտս որովայնին (որ ասի բասսիոնէ իլիաքա). եթէ լինիցի կարի և յանչափս սկար, եթէ զարկ բազկերակին հարկանէ խոր, մանր, մեղմով, և մրջմնաքայլ, եթէ լիցի գէմքն տրժգոյն, և այլայլունեալ, և եթէ շունչն գարշահոտ և զաղբալի լինիցի, ցուցակ է անապաքինութեան, և ապերջանիկ ելիցն տառապեալ ախտակրին :

Կառավարութիւն 'ի գործ արկանելի 'ի դիպուածս բորբոքման ներքին որովայնի։

Կառավարութիւն ախտիս է մի և նոյն ընդ վերոյիշեալ կառավարութիւն բորբոքման ստամոքսի։ Պարտ է պահպանել գՀիւանդն 'ի հանգիստ և զդոյշ 'ի ցրտոյ, հեռի առնել 'ի նմանէ զայն ամենայն որք առթեն զնեղուն սրտի։ Կերակրոյն հարկ է լինել թեթևագոյն, և փոքր քանակութիւն։ Ըմպելին զովարար, որպէս սիէռս տի լաթթէ քիտռիֆիքաթօ, և ջուրն դարբոյ, կամ վարսակի։

Յաղագս դեղոցն, զորս պարտ է 'ի վար արկանել 'ի դիպուածս բորբոքման ներքին որովայնի։

'Ի դիպուածս, յորում բորբոքումն փորոտեաց և ստորին որովայնի յառաջ գայ 'ի կծու և 'ի թթու մաղձէ, և 'ի թունաւոր ինչ նիւթոց, և 'ի խակ կամ 'ի տհաս մրգաց, որք երկարատևեալ ճնան 'ի փորոտիսն, պարտ է 'ի վար արկանել զթեթև լուծողական, զզովացուցիչ և զնուազեցուցիչ դեղորայս, որպիսի են՝ շիճուկն կաթին, թամարինտին, մաննան, օլիս տի ռէչինօն, և իւղն քաղցր նշոյ են։ Եւ գրեթէ պատրաստեալք քամոմիլլատիւ, օսիմէլէ սէմբլիչէիւ, և հատարակ ջրով։ Կակղացուցիչ ֆոմէնթօն նմանապէս հարկաւ պահանջի։ Այլև պարտ է ստէպ ստէպ թանալ գաղջ ջրով զոտս և զձեռս հիւանդին։ Եւ զջուխսն ջերմ ջրով թացեալ դնել 'ի վերայ որովայնի, և 'ի վերայ պորտոյ։ Յետ այսոցիկ հարկ է դնել զվէշիքաթօռիս 'ի վերայ այնր մասին, ուր առաւել զգայ զցաւն։ Եւ այս ոչ միայն քարշէ արտաքս զցաւս փորոտեացն, այլ և յառաջ բերէ և պատճառէ զներգործուն ինն աղդու, և զօրաւոր, որով լուծողականքն և մաքրողականքն, որք զառաջինն անդորձ էին, սկսանին այնուհետև ներգործել խակ և խակ։

Յորժամ բորբոքումն փորոտեաց և ստորին որովայնի պատճառի 'ի ճնշմանէ կամ յարգելականուէ թանչից կամ իրիք սովորական հոսմանց, և 'ի ցրտառութէ, յայնժամ պարտ է երակ հատանել։ Բայց

ուրիշան է նկատել 'ի պարագայս նշանաց կարողութիւն ախտակրին, և ուժգնութիւն ցաւոցն։ Եւ յետ այնր ելիկ 'ի նոյն իսկ վայրկենի հարկ է գնել զաղբուկս 'ի վերայ այնր մասին, ուր առաւել զգայ զցաւն։ Եւ 'ի վերայ պորտոյ գնել անօթ ինչ ապակեայ լցեալ ջերմ ջրով. նոյնպէս և ը ոտիւքն հարկ է գնել ջերմ կզմինար, կամ ջերմ ջուր յանօթս լցեալ։ Գրեթէն պարտի լինել կազմեալ ջրով գարուոյ, ավենաիւ, և աղիւ, նշի իւղով, զոր պարտ է 'ի գործ արկանել երեք անգամ յաւուրն, և առաւել յաճախակի, եթէ յոյժ կարծրացեալ իցէ պնդութիւն որովայնի։

Ըստ սասակութեան ցաւոցն պահանջի և առաւել հոգածութիւն և մտադրութիւն բորբոքմանս, և գեղորէիցն յայնժամ պարտ է լինել բարեխառն. 'ի գրեթէն չէ պարտ 'ի գործածել զաղն, այլ միշտ զիւղն քաղցր նշոյ։ Դարձեալ, 'ի գինուածի ասա յոյժ օգտակար և բարեգոյն վարկանիմ զգրեթէն կազմեալ 'ի կակղացուցիչ արգանակէ. սմին իրի պատշաճ է յօրինել ծաղկամբ տղտոյ և սերմամբ կտաւատի. ևն։ Եւս մարթ է հայեցեալ 'ի պարագայս ցաւոցն՝ յաւելուլ 'ի վերայ կէս կամ մի ամբողջ գլուխ բաբաւէրս ալպս. եթէ ախտն չնուազի 'ի գրեթէ, պարտ է ապատան լինել և դիմել աներկբայ 'ի զօրութիւն վերոգրեալ լուծողականի. բայց զի մի լուծողականն ինչեսցէ զայրացուցանել զփորոտիան և զայլ ներքին մասունս. յայն սակս յօրինել պարտ է միանգամայն խաղաղացուցիչ գեղս, որք նուազեն զցաւս, և խափանեն զցնցումն մկանանց ստորին որովայնի, և մասնաւոր ի մն ներգործութիւս ընծայեն լուծողականին։

Դոյ գեղ ի մն, որով մարթ է 'ի գուրս վանել ըզպէտս որովայնի, և է լուծումն գառն աղի լուծողականի, զոր պարտ է պատրաստել և յօրինել զայս օրինակ։ Առ երկու ունկի՝ սալ քաթառութիւ, կամ սալէ տ' էբսոն, և լուծեալ զայն գաղջ ջրով՝ տուր փոքրիկ սկահակաւ յամենայն կէս ժամու միանգամ, մինչև սկսանիցէ ներգործել. նոյնպէս պարտ է տալ 'ի նմին ժամու ութ կաթիլ՝ լավտանո լիգուիտո բաժակ մի ջրով կինամոնի կամ անանխոյ, առ 'ի խափանել զգրգիռս և զզայրացումն, և աճապարել զփրփրումն։

Դէպ լինի բազում անգամ, զի հիւանդն ոչ լինի ենթակայ ընդունելոյ զհեղանիւթս 'ի ստամոքսն, և

յայնժամ հարկ է մաքրել կամ լուծել զնա 'ի ձեռն հատադեղոյ, զորոյ զփորձ առի բազում անգամ, և է յոյժ շահաւէտ և օգտակար: Ա՛ռ կէս տրամ՝ շիաբաբա, և նոյնչափ՝ թառթառս վիթռիօլաթս, և մի կշիռ ցորեան՝ օբբիս, սաբոնէ տի ալիքանթէ. լոսեան և փոշի արա զշիարաբբան և զօրբիսն. և խառնեալ զամենայն 'ի միասին զանգեա ընդ սաբոնէ տ' ալիքանթէի, և յետ այնորիկ հատ կազմեա փոքրիկ կամ մեծ ըստ չափու: Հիւանդն կլանիցէ զայդ ամենայն միանգամ ևեթ. և եթէ զկնի քանի ինչ ժամուց ոչ ներգործեսցէ 'ի նմա, պարտ է վերստին նոյնաչափ կլանել:

Այլ եթէ՝ դժբախտութիւն 'ի գործածութիւնէ այսր ամենայնի չլինիցի հնարաւոր լուծումն որովայնի, յայնժամ հարկ է բազանիս առնել ախտակրին, եղեալ զնա 'ի ջերմագին ջուր, որ հասանիցէ մինչև 'ի կուրծս: Ակնհատես եղէ շահաւէտութեան այսր հնարից, յետ միանգամ ոնօգուտ և 'ի դերև ելանելոյ այլ ամենայն դեղորէից: Հիւանդն ցայն վայր մնասցէ 'ի ջուրն, մինչև ուժաթափ լինել նմա, և ոչ ունել զօրութիւն յոտն կալոյ. և թէ յառաջին անգամն չստանայցէ զսկզբնական օգուտն, պարտ է երկրորդ անգամ կրկնել իսկ և իսկ 'ի ստանալ հիւանդին փոքր ինչ կարողութիւն, և զօրութիւն: Եւ 'ի վախճանի՝ յոյժ օգտակար է բազում անգամ կրկնել զբազանիս զայս, և յերկար ժամանակ մնալ 'ի մէջ ջրոյս, մինչև 'ի յայտ եկեսցէ ներգործութիւնն: Այլ եթէ այդ ամենայն ընդունայն և անպտուղ լինիցի (որպէս պատահի երբեմն) յայնժամ պարտ է 'ի ձեռս առնուլ զվերջին հնարն. դնել զհիւանդն 'ի ջուր ցուրտ, կամ շրջեցուցանել զնա բոկ ոտիւք 'ի վերայ խոնաւ յատակի, և կամ թափել 'ի վերայ աղդեր և սրունիցն ջուր ցուրտ: Արդարև որոգայթաւոր է հնարս այս, բայց յանպտուղ ելանել այլ ամենայն հնարից և դեղորէից, և յանյոյս մնալն, յոյժ պատշաճ և բարիոք ևս է 'ի կիր առնուլ զհնարս անստոյգս՝ քան բնաւ անփոյթ լինել զփրկութիւն ախտակրին: Եթէ բորբոքումն այս պատճառի յորդանց. որ քաջ ճանաչի 'ի նշանաց պիտոյիցն որովայնի, որով որ. դունք մեռեալք արտաքս ելանեն, յայնժամ մարթ է 'ի վար արկանել զդեղոյս առ 'ի սպանանել, և արտաքս վանել զորդունս. որպիսի են բօլվերէ տի

ատանեմ, օրհնս տի բարմաքրիսթէ, և լուծողականք պատրաստեալք խաշնդեղիս, և քալամեանսիս։

Խրատ ընդհանրապէս առ 'ի խնամատար լինել որպիսի և ինչ բորբոքման փորոտեաց կամ ատորին որովայնի։

Բորբոքողականութիւնն փորոտեաց կամ ատորին որովայնի յորպիսի և ինչ պահանջեալ յառաջ եկեալ, ըստ պարագայիցն պահանջելոյ, եթէ պարտ ինչ շինուցանել զայն, իսկ և իսկ երակ հատանել հարկ է։ և եթէ բորբոքումն ոչ դադարի յառաջին երակահատումէն, յոյժ հարկաւոր է վերստին կրկնել զայն, և չէ պարտ բնաւ 'ի սակս մեղմութեան զարկի բազկերակի երկնչել 'ի կրկնելոյ զայն։ քանզի զարկ բազկերակի երբեմն վերականգնի զկնի երակ հատանելոյ։ և ցորքան տեսանեմք զայդ վերականգնումն զարկի բազկերակի, մարթ է աներկիւղ և ապահովապէս երակ հատանել։ և ապա 'ի նոյն իսկ վայրկենի հարկ է օծանել ունկուէնթօ առ աղթեաիւ կամ օրհնս քանֆորաթօիս 'ի վերայ այնր մասին որովայնի, ուր առաւել զդայ զցաւն։

Արդ՝ յորժամ 'ի ձեռն նախագրեալ դեղորէիցս և կառավարութեանցս չփարատին բորբոքմունք, և կալուածքն որովայնի մնան տակաւին նոյն օրինակ, յայնժամ պարտ է դրեթս առնել 'ի յործացուցիչ դեղոյ, որ ասի՝ թառթառս էմէթիքս, կամ 'ի ծխախոտոյ։ Նոյնպէս սովորութիւն է յայդպիսի դիպուածս յուսահատութեան տալ մերքուրիս քռուտս բազում ունկի մինչև 'ի մի լիտր ամբողջ, բայց ոչ աւելի։ իսկ եթէ կայ երկիւղ կամ կասկած փոխելոյ բորբոքմանս 'ի քաղցկեղ փորոտեաց, յայնժամ չէ օրէն բնաւ զփորձ առնուլ այսր անդկի։ քանզի ոչինչ զօրէ սխտակրին առողջութիւն, այլ գործածութեամբ այսր անդկի անշուշտ ատուգի մահ եղկելոյն։ Այլ եթէ գիրք փորոտեացն այնպիսի հաստատակամ բնուն իցեն վիճակեալ՝ մինչև յաղթել սատկապէս զօրութեանն, յայնժամ անդիկն, որ է մերքուրիս քռուտս, ոչ միայն է դեղ նոին պատշաճ և վայելուչ, այլ և յոյժ բարիոք և օգտակար։ քանզի 'ի մէջ ամենայն գոյացութեց՝ սմա առանձինն ընծայեմք զբացողական զօրութիւն, որով բանայ և լուծէ զնոսղովակս փորոտեացն կամ աղեացն։

Բայց եթէ բորբոքումն պատճառեալ ի՞նչ է 'ի փոշտանկութէ, կամ յաղեթափութէ, յայնժամ պարտ է փոյթ մեծ ունել առ 'ի ներքս մուծանել զփորոտիսն, 'ի ցածագոյն և 'ի խոնարհ տեղւոջ եդեալ զգլուխ հիւանդին, և թեթևապէս շոշափմամբ ձեռաք, և մատամբք տեղաւորել զանկեալ փորոտիսն: Այլ եթէ այսպիսի հնարիւք, ևս գրեթէ տալով ևն, չլինիցի ինչ կառավարութի, յայնժամ պարտ է ձեռնամուխ լինել յարհեստն վիրասպութէ, որ է յեռին նպատն ախտակրին: Առաջին զգուշութիւնն՝ զոր պարտ է 'ի գործ արկանել յայդպիսի ախտաժէտ, է նկատելն և որոնելն, եթէ արդեօք ունիցի ինչ կոտորած յանդամն. պարտ է ևս մեծաւ աչալրջութիւ 'ի քննութի մտանել. որովհետև ախտն չլինի միշտ յայտնի, և աչաց տեսանելի մանաւանդ 'ի սեռս կանանց, շոշափել պարտ է զամենայն մասունս որովայնի և տեսանել թէ գուցէ 'ի նմա կոտորած ինչ կամ էռնիա, որ է փոշտանկութի. որ եթէ գտանի, հարկ է կամ արտաքս քարշել, և կամ 'ի ներքս ածել զաղիսն, որպէս ասացաք վերագոյնդ: Այս է սեպհական գեղն, որով մարթ է նպաստամատոյց լինել ախտակրիս յայսպիսի դիպուածս:

Այլևս խրատք կարևորք 'ի գործ արկանելիք 'ի դիպուածս ախտիս: Ով ոք կամի արդելուլ կամ խափանել զբորբոքմունս զայս դժնդակ, և որոգայթաւոր, չէ պարտ բնաւ ընդերկար ժամանակս մնալ առանց կատարելոյ զպէտս որովայնի. քանզի բազումք զրաւեցան 'ի կենաց ըմբռնեալք 'ի բորբոքմանէս միայն վասն այսր պատճառի. այսինքն վասն չհոգալոյ զլուծումն պիտոյից որովայնի: Ո՛չ է օրէն ուտել զհաց և զթթու միրգս, և ոչ իսկ ըմպել զքաջաբեր հեղանիւթս. ևն: Դարձեալ՝ պատճառի 'ի ցրտոյ, 'ի թացեալ հանդերձս զգենլոյ, 'ի խոնաւութէ ոտիցն, որպէս ասացաք 'ի տեղի իւրում:

ՅՕԴՈՒԱԾ ԺԲ.

Յաղագս բորբոքման լերդի, որ ասի էբաթիթէ։

Լեարդն է սակաւ ենթակայ այսր բորբոքման քան զայլ մասունս ընդերաց, յայն սակս՝ զի շրջագայութիւնն յայսմ մասին կարի մեղմով և դանդաղանօք դնի 'ի գործ. բայց եթէ գէպ լինի այնմ ըմբռնել 'ի բորբոքմանէ առտի, յոյժ դժուարին ինն է բուժելն զայն. և յոլով անգամ փոխարկի 'ի շարաւուն, և յուռոյցն կոչեցեալ շերրօ։

Պապճառք բորբոքման լերդի։

Բաց յընդհանուր պատճառաց այլ ամենայն բորբոքմանց ընդերաց, բորբոքումն լերդի՝ կարէ և յառաջ գալ 'ի կարի գիրութէ, և 'ի մեղութէ, 'ի շաբաւոյ, որ գոյանայ 'ի լեարդն, 'ի բուռն հարստահարութէ առթելոյ 'ի յործացուցիչ գեղոյ՝ 'ի ժամանակի, յորում տակաւին լեարդն է ախտաժեռեալ, 'ի կարի ինն ջերմագին արենէ, և յայնմ ամենայնէ որ կարէ յանկարծակի զովացուցանել զլեարդն, յեա միանգամ սաստկապէս ջերմանալոյ նորա. 'ի խճից լեարդի՝ որ ասի քալքօլի էբաթիչի, որ նեղքոյ արկանին յընթացման մաղձի, 'ի բուռն զօրութենէ սաստիկ ոգիաւոր հեղանիւթոց, 'ի սակպ գործածութէ կերակրեղինաց համեմելոց ջերմացուցիչ նիւթովք, 'ի դժնդակ և 'ի խստամբակ ներգործութէ մաղձից։ Նոյնպէս մարթի պատճառիլ յանկմանէ, 'ի խոցէ ինչ պատահելոյ 'ի լեարդն, յերկար ճանապարհորդութէ, 'ի սաստիկ կրից ոգւոյ, յանսանձ բարկութէ և 'ի սրտմտութէ։ Բազում անգամ և յառաջ գայ 'ի բորբոքմանէ փորոտեաց, թոքոց, և ստոծանւոյ, և։

Նշան բորբոքման լերդի։

Բորբոքմանս այսմիկ զուգընթաց լինի ցաւ ինչ սաստիկ և խայթիչ՝ յաջակողմն գէպ 'ի ներքոյ անդ

հարազատ կողն, որ ասի քօսթօլէ սբուռիէ։ Երբեմն ցաւս այս ճապաղն մինչև 'ի ծագն ուսոյ, հանդերձ ծանրութիւն։ Ունի զզուանս և տապակութիւնս. և երբեմն ժայթքէ զմաղձս ժանդագոյնս։ Կրէ զտապ սաստիկ և զծարաւ։ Եմն բորբոքեալ, զտապնապ ուժգին, զհազ չոր, զհառաչանս, զդժուարութիւն 'ի շընչառութենէ, և զհեծկլտանք. գոյն մորթոյն մանաւանդ աչացն հասարակօրէն լինի ոժդոյն կամ գեղին. 'ի վերբ երևի ուռոյց ինչ յաջակողմն դէպ 'ի ներքոյ վերոյիշեալ կողն։ Զարկ բազկերակին հարկանէ արագ, և կարծր։ Մէզն լինի պղտոր 'ի գոյն նարնջոյ, և երբեմն հարկանի 'ի գոյն մոխրոյ։ 'Ի դիպուածս ախտիս ախտակիրն սովորաբար 'ի գիշերային պահու գտանի միշտ 'ի վիճակ յոռեգոյն, և յաւուրսն պահու խուն ինչ բարեգոյն։

Ախտս այս տարբերի 'ի բորբոքմանէ թոքոց կամ 'ի կշտացաւութէ. ըստ որում 'ի դիպուածս յայս զարկ բազկերակին լինի արագ և կարծր. և ցաւն զդացեալ 'ի ներքոյ անհարազատ կողին՝ ոչ է այնքան սաստկագոյն և խայթիչ, որպէս 'ի դիպուածս բորբոքման թոքոց. և թուքն լինի պարզ, և ոչ արիւնախառն։ Բայց պատահի երբեմն, զի նշանքն ախոնգանոտութիւնք, որ ասի՝ իբօքօնտուիքէ, թոքաժէտութիւնք, արգանդաժէտութիւնք, և ախտի մկանի որովայնի, որ ասի՝ մուսքօլի տէլ'ատտօմինէ, այնպէս խառն 'ի միասին գտանին 'ի բորբոքման լերդի, մինչև մեծապէս դժուարագոյն լինի որոշելն. յայնսակս արժան է 'ի վար արկանել փոյթ մեծ և զամենայն հնարս կարելիս առ 'ի ճանաչել և որոշել զայն. և զկնի այնորիկ 'ի գործ արկանել զկառավարութիւնս և զդեղորայս ըստ պահանջելոյ հարկին։

Նշանք յոռեգոյնք և ձախորդականք են ստէպ ստէպ հեծկլտանքն, սաստկութի տապոյ, ուժգնութենն ծարաւոյ, յաճախակի ժայթքումն և հոսումն որովայնի. ցնորումն խելաց, նեխութենն և զազրահոտութիւնն կղկղանաց, հոսումն ցուրտ քրտանց, նուաղումն սրտի և այտուցումն ոտից։ 'Ի վերայ այսր ամենայնի՝ եթէ յանկարծակի թմբրութի, և ցրտութի ձեռաց և ոտից 'ի վերոյ եկեսցէ, է նշան անվրէպ մահացուցիչ. քանզի քաջայայտ է՝ եթէ նեխեալ է յայնժամ լերդն և փոխարկեալ 'ի քաղցկեղ։

Կառավարութիւնք 'ի վեր արկանելի 'ի դիպուածս բոր-բոքման ընդդէմ։

Կառավարութիւնք ախտիս են մի և նոյն ընդ վերոգրեալ կառավարութեանցն բորբոքմանց. պարտ և պատշաճ է պահպանել զախտակիրն անդորր և 'ի հանգիստ, և հեռի առնել 'ի նմանէ զայն ամենայն՝ որք առթեն զջերմութիւն։ Ըմպելին պարտի լինել հեղկիչ և զովացուցիչ, որպիսի են շիճուկն կաթին, ջուրն գարեոյ կամ ավէնայի, խառն ընդ օսխմէլէ սէմբլիչէի։ Կերակուրն թեթևագոյն և սակաւաքանակ, և սակաւ սնուցիչ կամ տաժիչ։

Յաղագս դեղորէից, զոր պարտ է 'ի կիր արկանել 'ի դիպուածս բորբոքման ընդդէմ։

'Ի դիպուածս յայս՝ որքան մարթ լիցէ՝ պարտ է վաղընդփոյթ երակ հատանել 'ի բազկացն, կամ յերակէն որ ասի՝ վէնա էմոռռոիտալէ. բայց նկատել պարտ է հանապազ 'ի պարագայս անձին. զորօրինակ 'ի սաստկութենէն ցաւոց և նշանաց, 'ի հասակն, 'ի խառնուածն, և 'ի զօրութենն։ 'Ի դիպուածս ախտիս ամենայն սաստիկ և ուժգին լուծողականքն են յոյժ վնասակարք, և որոգայթաւորք։ Մինչև յայսոր տեսակի բորբոքման մարթ է 'ի գործ արկանել զդեղորայս մեղմապէս լուծողականս, և զովացուցիչս, որպիսի են խաշուն թամարինտիի՝ խառն ընդ մանանայի, քռէմոռ տի թառթառս, թինթուռա տի ռապառպառս, մանանա խառն ընդ շիճուկի կաթին։

Դարձեալ, նշանաւոր և օգտաւէտ դեղ ինն է տղրուկն, զոր պարտ է եօթն կամ ութ հատ դնել 'ի վերայ սրբանին, կամ վէնա էմոռռոիտալէ անուանեալ երակի։ Զգրեթն պարտ է պատրաստել նոյնպէս 'ի կակղացուցիչ և 'ի զովացուցիչ դեղորէից։ Եւ պարտ է զսպունգս կամ զչուխայս ջերմ ջրով թացեալ յաճախակի դնել 'ի վերայ այնր մասին, ուր առաւել զգայ զցաւն։ Նոյնպէս նշանաւոր դեղ ինն է յայսմ դիպուածի՝ ունկուէնթում վոլանթիլէ, զոր պարտ է օծանել 'ի վերայ ցաւագնեալ մասին։ Իսկ եթէ 'ի ձեռն այսոցիկ դեղորէից և նպաստից չդադարիցի ուժգնութեն ցաւոյն, յայնժամ հարկ է ան-

երկբայ դնել զվէշիքաթօռիս 'ի վերայ այնր մասին, ուր առաւել զգայ զցաւն։ Այլ եթէ բորբոքողական ուրեմն յոյժ սաստիկ ելցէ, և կիցս ընդ միզարգելութեան, յայնժամ 'ի վերայ նախագրեալ ըմպելեացն մարթ է յաւելուլ չորս կշիռ ցորեան՝ նիթռոս բուռիֆիքաթօ, կամ 12 շիթ՝ սբիռիթօ տի նիթռոս տօլչիֆիքաթօ։

Եւ ինձ իսկ ոչ այլազգ յաջողեցաւ դարման տանիլ, բայց եթէ տալով զառաւել զովացուցիչս և քրտնաբերս 'ի դեղորէից սատի, որպիսի է թառթառօ էմէթիքօ, խառն ընդ ջրոյ սամպուքոյ, և օսամել սէմբլիչէի։ որ այսպէս բաղադրի։ Արդ՝ ակ զվերոյիշեալ սամպուքս անուանեալ ծաղիկն ը կըշռոյ ունկուոյ միոյ 'ի լիտր մի ցուրտ ջրոյ։ զկնի 12 ժամուց՝ հեղ զդուշութիւն զհեղուկն յայլ ապակի ասնօթ։ Ապա յաւելլ 'ի սոյն զմի կամ զմի և կէս կշիռ ցորեան թառթառօ էմէթիքօ, և զմի ունկի օսսիմել սէմբլիչէ, և տուր ըմպել հիւանդին հինգ կամ վեց անգամ յաւուրն՝ զկշիռ մի և կէս ունկուոյ։

Դարձեալ, գիտել արժան է, զի 'ի դիպուածս ախտիս չէ պարտ խափանել զարտաթորումն մեծասքեր հիւթոց։ ապա թէ ոչ՝ 'ի խափանմանէ գլխովին այսր արտաթորման առաւել բորբոքի լեարդն և ստրին որովայնն, և պատճառին նեխութիւն և փտութիւն, միանգամայն և քաղցկեղ։ Այլ պարտ է մեծաւ ըզգուշութիւն չափաւորել զառաւելութիւնն արտաթորման նորին, որովհետև չափաւոր արտաթորումն նորին սփոփէ և թեթևացուցանէ զախտակիրն։

Գոյ և այլ իմն տեսակ այսր ախտի, որ ասի՝ է բաթիլիթէ քրօնիքա, այսինքն երկարատև լերդաժեռութիւն։ ըստ որում 'ի դիպուածս յայս ջերմութիւնն լինի յարատև, բայց ոչ այնքան սաստիկ, որպէս 'ի դիպուածս բորբոքման լերդի։ ախտակիրն զգայ ըզլիութիւն, և զծանրութիւն, զձգտումն լերդի։ սովորաբար կրէ զցաւ ինչ թեթև յաջակողմն գէպ 'ի ներքոյ անհարաղատ կողին։ երբեմն ցաւս այս տարածանի մինչև 'ի յեզրն ուսոյ։ և հաստարակօրէն զայրանայ 'ի վայրկենի՝ յորում ոք հպէսցի 'ի նա շօշափմամբ, մանաւանդ յընկողմանէն 'ի վերայ ցաւագնեալ կողմանն։

Իսկ դեղք այսորիկ ախտի։ Վէշիքաթօռիս դնելն՝ որպէս 'ի բորբոքմանն լերդի, նոյնպէս և սաստ կա-

բևոր գատի։ Բայց յայսմ դիպուածի յոյժ հարկաւորապէս ևս պահանջի։ Կակղացուցիչ և զովացուցիչ դեղոցայքն, որպիսի են սիէռս տի լաթթէ, նիթռս, ջուրն ավէնայի կամ գարեոյ։ և գրեթէ վերոգրեալ կերպիւ նմանապէս հարկաւ պահանջին։ Բայց առաւել բարեգոյն և օգտաւէտագոյն դեղն յայսմ դիպուածի է քաղցրացուցեալ սնդիկն, որ ասի՝ մէռքուրիո տոլչէ։ զոր առ 'ի խոհեմութիւն 'ի գործ արկանել՝ արժան է սկիզբն առնել 'ի մի կշիռ ցորենոյ, և հաղիւ երբէք հ« սանել 'ի վեց ցորեանս յաւուրն։ Եւ յետ այսոցիկ պարտ է 'ի վար արկանել զհանքային ջուրսն, որ ասի՝ աքուէ մինէռալի կամ մառցիալէ տի սբա, ըստ չափու չորից ունկեաց երիցս անգամ յաւուրն։ Բայց որովհետև 'ի դիպուածս ախտից ջերդի, փորոտիքն և լեարդն ախտակրին սովոր են լինել յոյժ տկարագոյնք, վասն որոյ յետ դադարման ախտին պարտ է հրաժարիլ յամենակերպ մեղինաց և ձկնեղինաց, և յայլ ոգիաւոր հեղանիւթոց։ յայնժամ կերակրոցն հարկ է լինել սնուցիչ, խոտեղէնք և հասունացեալ պտուղք։ և այնք կարի սակաւ քանակութիւն։ և չափաւոր ինչ շարժումն է և ևս օգտակար։

ՅՕԳՈՒԱԾ ԺԳ։

Յաղագս բորբոքման փայծեղան։ որ ասի՝ «բլէնէռիոն»։

Բորբոքականութիւնն փայծեղան, որ ըստ իտալացւոց կոչի՝ ինֆիամմացիօնէ տէլլա միլցա, ունի մեծ նմանութիւն ընդ բորբոքման ջերդի։ Անձինք, որք սովորաբար են ենթակայ այսր բորբոքման, են վիճակեալքն տկար կազմուածոց փայծեղան, և սեամիաղձային խառնուածոց, և ևս նոքա, որք կրեալ են յերկարատև տենդս, և զայլ հիւանդութիս, և որք ուժաթափ լեալ են 'ի տաժանաբեր աշխատանաց։ Եւ

Պատճառք բորբոքման փայծեղան։

Պատճառքն այսորիկ բորբոքմանս յոյժ համաձայն են ընդ պատճառաց բորբոքմանց ստամոքսի, և փո-

ջոտեաց : Դարձեալ, բորբոքողականութիւնքն ստո-
րին որովայնի, ստոծանւոյ, որովայնամուշկի, մար-
թին գասիլ 'ի կարգս պատճառաց այսորիկ բոր-
բոքման :

Նշան բորբոքման փայծաղան :

Նշանքն ախտիս գլխովին համաձայնին ըստ մա-
սին նշանաց ախտին կոչեցելոյ՝ էբաթիթէ, այսինքն
բորբոքման լերդի, զորմէ խօսեցաք 'ի վեր անդր :
Բայց սեպհական զանազանութիւն՝ որ ը մէջ գտանի,
է զի ցաւն այսորիկ լինի 'ի ձախակողմն դէպ'ի սահ-
մանան ախոնդանաց, ուր զետեղեալ կայ փայծաղն :
Դարձեալ, ախտս այս գուշակի յուժգին լինչ ցրտոյ,
որում անդէն զհետ գայ սաստիկ ինն ջերմութիւն (որ-
պէս պատահի երբեմն 'ի դիպուածս բորբոքման լեր-
դի.) 'ի չափազանցութիւն ծարաւոյ, 'ի կատաղութիւն :
Ախտակիրն զգայ յարատեւ զցաւ լինչ սաստիկ 'ի ձա-
խակողմն, որ 'ի գոյզն լինչ շարժմանէ կամ շօշափմա-
նէ ուժգին սաստկանայ, և աճի. և այսոքիկ ցաւք
'ի վեր երևին նաև յուսս, 'ի ստինս, և յանրակս,
բայց ոչ լինին միշտ 'ի մի և 'ի նոյն աստիճանի, այլ
երբեմն առաւելուն, և երբեմն նուազին : Երբեմն
նեղի և տագնապի սաստկագոյն ինն հազիւ, և հեծ-
կլատանօք, և երբեմն կրէ զտաղտկութիւնս, և զզուանս,
և երբեմն ևս ժայթքէ զմաղձս առատագոյնս :
Այլ գիտել արժան է. զի փայծաղն, որ է ընդ-
դեմքք լինչ կակուղ և սպնդային, բազում անգամ յուժ-
գին բորբոքմանէ այտնու, կամ թուլանայ. և բա-
զում անգամ ևս կարծրանայ հանգոյն ոսկեր, և եր-
բեմն ևս 'ի նոյն բորբոքմանէ փոխարկի 'ի խղխուլ-
թուն, յորմէ զհետ գայ ախտն այն որ կոչի՝ թա-
պէ սբլէնիքա, այսինքն փայծաղնական նեխութիւն :
Իսկ նշանքն փայծաղնական կամ լերդական նեխուեց
են սաստիկ և արիւնախառն ժայթքումն, կամ հո-
սումն որովայնի, ցուրտ քիրան, յաճախակի հեծկըլ-
տանքն, ցրտութիւնն ձեռաց և ոտից, թալկութիւնն
սրտի. զարկ բազկերակին լինի մանր՝ արագ, և մրջմնա-
քայլ, և ախտակիրն կրէ դժուարութիւն մեծ յընկող-
մանելն 'ի վերայ ցաւագնեալ կողմանն :

Կառավարութիւն , և դեղորայք 'ի գործ արկանելիք 'ի դէպ պատուոյ Բորբոքման ֆայծիեղան :

Կառավարութիւնք և դեղորայքն ախտիս են մի և նոյն ընդ վերոգրեալ կառավարութեանն և դեղատուութեան բորբոքման լերդի :

ՅՕԳՈՒԱԾ ԺԴ.

Յաղագս Բորբոքման Երիկամանց , որ ասի Նէֆրիտիտ :

Բորբոքումն Երիկամանց , որ ըստ խտալացւոց յորջորջի՝ ինֆիլամմացիօնէ տէ՝ ռէնի , կամ քօլիքա նէֆրիտիքա , ունի համանձայնութիւն ընդ բորբոքման միզանց խողովակաց , կամ փամփշտոյ : Ախտս այս անխափար գտանի 'ի ծերունիս , և յերիտասարդս :

Պատճառք Բորբոքման Երիկամանց :

Ախտս այս հասարակօրէն յառաջ գայ յայլ ամենայն բորբոքմանց ընդդէմ : Մարթի և պատահիլ յանկմանէ , 'ի հարուածահարութէ , 'ի խձից , և յաւազոց , որք արգելեալք մնան յանցս միզի և 'ի խողովակս ստորին որովայնի : Դարձեալ՝ ախտս այս պատճառի բազում անգամ և յընդերկար ձիավարութէ , յարշաւանաց , 'ի յերկար և 'ի տաժանաւոր ճանապարհորդութէ , 'ի չափազանց հետևագնացութենէ , մանաւանդ 'ի տունջենային պահու , 'ի սաստիկ բարձմանէ ծանրագոյն իրաց , և յանչափապէս գործածութէ ոգիաւոր հեղանիւթոց : Նոյնպէս մարթի և պատճառիլ 'ի ձգտմանէ , կամ 'ի բռնի շարժմանէ միզանց խողովակաց փամփշտոյ , և երիկամանց , յանշարժական կեանս վարելոյ , 'ի սատակագոյն կրից , 'ի խոնաւութէ , և 'ի ցրտաւութէ , 'ի բռնութենէ ինչ մտաց , 'ի կարի հետազօտութէ նրբիմաց գիտութեց : Հնար է և պատճառիլ յայնմ ամենայնէ , որ սատակապէս զայրացուցանեն և վիրաւորեն զերիկա-

մունս, և զփամփուշտս. որպէս 'ի քանթառէլլէ անուանեալ միջատէ, 'ի բալասանէ, և 'ի կարի սաստիկ լուծողականէ: Այլ և 'ի հնագոյն ախտից, որք խանդարեն զանցս կամ զխողովակս միզի, որպիսի են յօդուածացաւութիւն, և ախտքն ախոնդանաց, և ն:

Նշանք բորբոքման երիկամանց:

Ախտաժէտն զգայ յարատև զցաւ ինչ սաստիկ զարկողական և խայթիչ 'ի թիկնամէջս՝ դէպ յաղիքն միջնոլին, և 'ի խորագոյն մասունս ստորին որովայնի, ուր զետեղեալ կան երիկամունքն յաջմէ և յահեկէ. երբեմն ցաւս այս տարածանի մինչև 'ի միզանցքն, 'ի սաղմանցքն, և 'ի փամփուշտն: Եթէ երկու երիկամունքն 'ի միասին բորբոքեալ լցեն, յայնժամ ճանաչի 'ի յարգելմանէ միզին, 'ի տաղտկութէ, յանձկութենէ, և 'ի ժայթքմանէ: Եւ եթէ ախտն յոյժ սաստիկ լցէ, յայնժամ մէզն լինի անօսր և անգոյն: Իսկ եթէ պատճառեալ լցէ 'ի խձից, յայնժամ այսոքիկ նշանքս զայրանան տասնապատիկ առաւել. և ճապաղի ցաւն վերոգրեալ ընդ մերձաւոր մասունս երիկամանց. ազդերքն ախտակրիս տանջին թմբրութիւք, կարկամութիւք, և ջղացաւութիւք. ոտնաթիքն քարշին 'ի բարձրագոյնս. մէզն լինի արդելական, արիւնախառն, և շարաւալի խառն ընդ աւազոյ: Իսկ ջերմութիւնն, որ զուգընթաց լինի այսորիկ բորբոքման երիկամանց, սովորաբար լինի կիզղական: Ստամոքսն և փորոտիքն լի փքով:

Ախտակիրն կրէ զնոզկանս սրտի, զմոլեգնութիւն, և զանանդորրութիւն: Զարկ բազկերակին 'ի սկզբան անդ լինի լի, և ընկեցեալ. և ապա հարկանէ մանր, կարծր, և միջահատական: Որովայնն լինի պինդ, և ուռոյց մինչ 'ի վեր երևի 'ի ստորին որովայնն, յերիկամն, և 'ի մկանունս ազդերաց. այսմ ուռուցի ընդհետ գայ և խլթ ինչ սրբանին, և ցաւ անտանելի. և ցաւս այս լինի այնքան 'ի սաստկագոյն աշտիճանի, մինչև եթէ ոք կամիցի մեղմապէս շօշափել զայն վշտացեալ մասունս, իսկոյն ախտակիրն զաղաղակ բարձեալ գոչէ բարձրաձայն: Հուսկ յետոյ 'ի վերայ յարձակի նմա ակամայ ինն շարժումն մկանանց, ջղացաւութիւն, քիրտն ոստղային, տապանք, կատաղութիւն, ցրտութիւն բովանդակ մարմնոյ, ցնորումն,

և նուաղումն սրտի։ Բորբոքումն երիկամանց՝ եթէ յառաջ գայ 'ի յարշաւանաց, 'ի յանչափապէս գործածութէ ոգիաւոր հեղանիւթոց, կամ յայլ ինչ պատճառէ, առաւել դիւրաբուժելի է՝ քան զայն, որ յառաջ գայ 'ի խճից։ Հոսումն ինչ արեան 'ի ռնգացն, 'ի յորովայնէ, և հոսումն դաշտանի են, բազում անգամ արդելուն զբորբոքումն վերահասեալ։

Բայց գիտել արժան է, զի երիկամունքն յոլով անգամ 'ի սոյն բորբոքմանէ փոխարկի 'ի խղնայթումն որ ասի՝ սուբբուրացիոնէ. և յայնմ դիպուածի մարթ է ճանաչել զայն 'ի նշանաց խորագոյն և զարկողական ելեն ցաւոց, զոր աղդոլագոյն ևս զդայ ախտակիրն 'ի շօշափելն. և ևս 'ի նշանաց իրիք ծանրութէ և ցրտութէ, զոր 'ի թիկնամէջն կամ 'ի անակուշան զդայ ախտակիրն։ Հնար է ևս ճանաչել 'ի յանկանոն ջերմութենէ, որ երբեմն լինի նուազ, և երբեմն ուժգին. երբեմն ևս այտուց ինչ 'ի վեր երևի 'ի անակուշան. հասարակօրէն մէզն լինի արդելական, շարաւալից, նեխեալ, և զազրահոտ։ Երբեմն շարաւալից այն մէզ տարածանի մինչև 'ի փայծաղն կամ 'ի լեարդն. երբեմն նեխեալ ծախէ զերիկամունքն. երբեմն ևս անցեալ գումարի 'ի հաստաղիքն անուանեալ քօլօն. և անտի արտաթորի ընդ ճանապարհ երաստանի։ Բայց 'ի դիպուածս՝ յորում շարաւալիր մէզն տարածանի 'ի վերոյիշեալ ընդերքն, յայնժամ մարթ է զհետ գալ վէր ինչ անձուկ և խոր 'ի փայծաղն, կամ 'ի լեարդն. և ուրեք ուրեք 'ի ուռէթռա անուանեալ միզանցքն, և յայլ փորոտիս, յորմէ զհետ գայ քաղցկեղ։ Նշանք քաղցկեղի կոչեցելոյ քանքրէնա՝ են թուլութիւնն բովանդակ մարմնոյ, նուազումն սրտի, ցուրտ քիրտն, մանրութիւն, արագութիւն և միջահատութիւն զարկի բազկերակի, յանկարծօրէն դադարումն ցաւոց, ցնորումն, հեծկլտանքն, յաճախակի ժայթքումն, արդելականութի, գարշահոտութի, և սևութիւն միզի։

Այլ գիտել արժան է, եթէ կարծրապինդ ուռոյցն՝ անուանեալ շիրօ 'ի վեր երևեալ երիկամունս, յոլով անգամ ևս ոչ հասունանայ. այլ առաւել անձկացուցեալ ծիւրէ զախտակիրն, և յայսմ դիպուածի մարթ է ճանաչել զայն 'ի նշանաց իրիք ծանրութէ, և թմբրութեան, զոր զդայ ախտակիրն 'ի յազ-

գերան։ Ճանաչի եւս 'ի յարատեւ արգելմանէ միզի, եւ 'ի Ճապաղմանէ հիւթոց ընդ ամենայն մասունս մարմնոյ ընդ մէջ մորթոյ, եւ մարմնոյ։ Իսկ եթէ 'ի յիշատակեալ նշանացս բաւականապէս ոչ Ճանաչի զիարդն պաշարի, կամ այսուցն երիկամանց, յայնժամ հնար է Ճանաչել 'ի ցաւոց եւ 'ի խորին ինն ծանրութէ, զոր սովորաբար զգայ ախտակիրն 'ի յերիկամունս եւ 'ի ստորին որովայնն, մանաւանդ յընկողմանեալ լինելն 'ի վերայ որովայնի, կամ 'ի վերամբարձմանէ բովանդակ որովայնի։

Կատարութիւն 'ի գործ արիանէլիւ 'ի դիպուածս բորբոքման երիկամանց։

Կերակրոցն պարտ է լինել բնութիւն սնուցիչ, զովացուցիչ, եւ կակղացուցիչ։ որպիսի են՝ հացաթանն, թեթեւ արգանակն մսոյ, եւ կաթն կովու, ընտանի կանգառն, ծնեբեկն, եղերգն, մոլոշն, եւն։ Պարտ է հրաժարիլ յամենակերպ ոգիաւոր հեղանիւթոց, 'ի ջերմացուցիչ եւ 'ի զայրացուցիչ ըմպելեաց։ Յարմարաւոր ըմպելիքն են՝ շիճուկն կաթին, խաշուն գարւոյ, տղտոյ, մատուտակի, եւն։ եւ առաւել աքդուա մատցիալէ։

Դեղերայս 'ի վեր արիանէլիւ 'ի դիպուածս բորբոքման երիկամանց։

Յայսմ դիպուածի՝ ըստ թելադրելոյ բնութեանն քաջայայտ Ճանաչի, եթէ պարտ է երակ հատանել, որ առաւել քան զամենայն դեղերայս լինի օգտաւետագոյն, եւ առողջարար։ այլ պարտ է նկատել 'ի պարագայս նշանաց կարողութէ ախտակրին, եւ ուժգնութէ ցաւոցն։ 'Ի դիպուածս ախտիս վէշիքաթօռիս դնելն, քանֆօռան, եւ ամենայն փսխողականքն, եւ լուծողականքն՝ եւ միզաբերքն են յոյժ վնասակարք եւ վտանգաւորք։ միայն մարթ է 'ի կիր արկանել զմանանայն, եւ զիւղն քաղցր նշոյ։ եւ ըմպելիքն պարտին լինել գաղջ, եւ ոչ ցուրտ։

Դարձեալ, 'ի դիպուածի աստ յոյժ շահաւէտ եւ բարեգոյն վարկանիմք զգրեհն յօրինեալ 'ի կակղացուցիչ ծաղկանց եւ արմատոց։ եւ զգրեհս զայս պարտ է առ փոքր փոքր հեղուլ 'ի ներքս առ 'ի չլայնել ըզ-

փորոտիան • որովհետև առատութիւն ամենայն հեղուն-նութեց մտելոց 'ի ներքս յորովայնն, սովորաբար լայնեն զփորոտիան, սեղմեն զերիկամունս, և աճեցուցանեն զբորբոքումն: Եւ ընդ դրախիս պարտ է մատուցանել սխտակրին յամենայն ժամու մի փոքրիկ դրդալ էմուլսիոնէ տի կոմմա առատիքա՝ խառն ընդ ջերմ ջրոյ:

Յոյժ օգտակար դեղ է և լենիմէնթօ վօլատիլէն • զոր պարտ է ատէպ ատէպ օծանել և շփել 'ի վերայ ցաւագնեալ մասին միջաց: Նոյնպէս օգտաւէտագոյն դեղ ինն է ազրուկն • զոր պարտ է վեց կամ եօթն հատ գնել 'ի վերայ սրբանին, կամ վէնտէմուռուսիտալէ յորջորջեալ երակի: Դարձեալ՝ կարի օգտակար դեղ է և ֆոմէնթօ առնել 'ի կակղացուցիչ արմատոց և 'ի տերևոց ջերմ ջրով, և յաճախակի գնել 'ի վերայ միջաց, և նախ քան զպաղիլն ատէպ ատէպ փոփոխել, և վերանորոգել: Սեպհական ներքին դեղորայքն, զոր 'ի գործ արկանել արժան է 'ի դիպուածս բորբոքման երիկամանց, են՝ էմուլսիոնէ տի կոմմա առատիքա, ջուրն գարուոյ, սալէբի, և սաքշնառիս անուանեալ արմատն, խառն ընդ մեղու:

Այլ պարտ է գիտել, զի 'ի դիպուածս բորբոքման երիկամանց՝ բազում անգամ 'ի վեր երևի պալար ինչ յերիկամունս, որ քաջ ճանաչի 'ի ձեռն վերոգրեալ նշանաց • պարտ է յայնժամ անընդհատ գնել զջերմ ֆոմէնթօ, և քանիսբլազմս 'ի վերայ միջաց, առ 'ի ցրուել կամ հատուցանել զայն: Իսկ եթէ նոյն պալարն խղնայլեալ կամ բացեալ լինի, յայնժամ յայսպիսի դիպուածս սովորաբար զուգընթաց լինի շարաւ ինչ ընդ միզն: Եւ վերջապէս, եթէ փութով դարման չտանիցի պալարիս այսմիկ, փոխարկի սովորաբար 'ի խոցն ասացեալ քաղցկեղ, և լինի մահաբեր:

Յաղագս դեղերէից, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դիպուածս խղխայլեալ կամ բացեալ պալարի:

'Ի դիպուածս, յորում պալարս այս հատուցեալ կամ բացեալ իցէ, յայնժամ պարտ է ձեռնամուխ լինել 'ի գործածութեան գաղջ կաթին, և կաթին խշոյ: Իսկ 'ի դիպուածս, յորում պալարս այս փոխարկեալ իցէ 'ի նեխութեան կամ 'ի փտութեան, յայն-

ժամ պարտ է 'ի կիր արկանել զդեղորայս անուա-
նեալս անթի փութռիթի, որպիսի են քինա քինա,
տէքօթթի մուչիլաճինօզի, և տէքօթթի տօլչիթի
խառն ընդ մեղու, ջուրն կրոյ, ևն։ Այլ եթէ դա-
դարեալ կամ գէթ նուազեալ ցգէ բորբոքողականու-
թիւն, յայնժամ մարթ է տալ ախտակրին էսթռաթ-
թօ տի միռռա, և քինա քինա խառն ընդ ջրոյ նարն-
ջոյ, և յաւելեալ լինի 'ի վերայ դոյզն ինչ պալսամօ
քօրբաիպէ։

ՅՕԳՈՒԱԾ ԺԵ.

Յաղագս ախտի, որ ասի չիոնիթիդէ, այսինքն բորբոքումն
թամբղաոյ։

Զայս տեսակ բորբոքման փամփիշտոյ խտալք
անուանեն սովորաբար ինֆիամմացիօնէ տէլլա վէշի-
քա, և ունի մեծ նմանութիւն և համաձայնութիւն
ընդ ախտին որ ասի՝ ինֆիամմացիօնէ տէլլ' ուռէթ-
ռէ. այսինքն բորբոքումն միզանցք խողովակաց. և
իրապէս տարբերի այս 'ի բորբոքմանէ երիկամանց.
ըստ որում յայսմ ցաւն 'ի վեր երևի 'ի կարի խտ-
բագոյն մասունս ներքնորովայնի, ուր զետեղեալ
կայ փամփուշտն. և ցաւս այս՝ որ է բուռն սուր և
խայթիչ, առաւել զայրանայ յայնժամ, յորժամ ոք
հպեսցի 'ի նա շօշափմամբ. երբեմն ևս 'ի վեր երևի
'ի փամփուշտն զոյգ ընդ ցաւոյն նաև այտուց ինչ
դժնդակ, յորմէ և պատճառի յաճախակի ժայթքումն,
գրգիռ, և տագնապ մեծ, մանաւանդ 'ի միզելն։

Անձինք, որք ենթակայ լինին բորբոքման երիկա-
մանց, և միզանցք խողովակաց, մարթին նմանապէս
լինել ենթակայ ևս այսորիկ բորբոքման։ Այլ 'ի
վերայ այսր ամենայնի, եթէ դէպ լինի այնմ ըմբռ-
նիլ 'ի բորբոքմանէ աստի, յոյժ դժուարին է ապա-
քինելն զայն, և բազում անգամ ևս փոխարկի յան-
դամագօսութիւն, 'ի խղճայթռումն, 'ի փտութիւն, և 'ի
քաղցկեղ, յորմէ զհետ գայ մահ անվրէպ։

Պատճառք Բորբոքման Քամֆիշոյ։

Բորբոքումն փամֆիշոյ մարթի յառաջ գալ յամենակերպ պատճառաց, որք պատճառեն զՋերմութիւն կիզողական. որպէս խնձագործ կամ աւազագործ նիւթքն, միզարգելութիւնն, փոքրիկ քարքն փամֆիշոյին, խոտորումն գաշտանի, ուռուցումն միզանցք խողովակաց։ Մարթի ևս պատահիլ յընդերկար ձիավարութէ և 'ի հեռևագնացութէ, 'ի խոցէ 'ի վերբ երևելոյ յերիկամն, կամ 'ի փամֆիուշան կամ 'ի միզանցք խողովակքն, և կամ յայլ մերձակայ մասունս փամֆիշոյն։ Նոյնպէս մարթի ևս պատճառիլ 'ի խորտակմանէ կամ 'ի հատուածոյ, և կամ 'ի փտութէ ոսկերք երանաց կամ առականաց. որք սովորաբար պատճառին յանկմանէ, 'ի յոստոստմանէ, և 'ի փոշտանկութէ։ Դարձեալ՝ մարթի ևս պատճառիլ յայնմ ամենայնէ, որք ուժգնապէս զայրացուցանեն զփամֆիուշան, որպէս 'ի քանթառէլիէ կոչեցեալ միջատէ, 'ի սատիկ և 'ի զօրաւոր միզաբերէ, և 'ի լուծողականէ։ Այլ և 'ի յաճախակի ոստոստմանէ, և յերկարատև խիթէ փամֆիշոյ, և 'ի յօդուածացաւութեանէ, ևն։

Նշանք Բորբոքման Քամֆիշոյ։

'Ի գիպուածս այսր բորբոքման՝ բաց 'ի վերոգրեալ նշանաց, ատորակողմն որովայնի լինի յոյժ ուռուցեալ, և բորբոքեալ, հանգերձ ուժգին ցաւով. մէզն լինի արդէլական, և կարմրերանգ, և կրէ զբժուարութիւն մեծ 'ի միզելն։ Ախտակիրն զգայ զնէթ սատիկ 'ի ներքնորովայնն և զնեղութիւն անհնարին, առաւելապէս յընկողմանիլ նորա 'ի մէջ ջերմ անկողնոյ. կրէ հանապազ զնողկանս, և երբեմն ևս ժայթքէ զմաղձ 'ի գոյն ժանգոյ. և զգայ յանձն զոյգ ընդ նողկանան միանգամայն ևս հեծկլտանք, փքախտութիւն, ցնորումն, հակումն, և ցնցումն մկանանց։ Զարկ բազկերակին 'ի սկզբան անդ լինի կարծր, արագ, և լի, բայց յետ սակաւ աւուրց հարկանէ այլազգ, այսինքն մանր, և հեզ։ Հուսկ յետոյ 'ի վերայ յարձակի նմա խիթ ինչ աղեաց, և սրբանին. և ընդ այս խիթի միանգամայն և զգան յանօթքն թանչից զցաւ ինչ սատիկ, զարկողական, և ձգտելի։

Կառավարութիւն և դեղարայ 'ի վեր արիանելի 'ի դէ պոռածս բորբոքման ֆամիլիոյ։

Կառավարութիւն, և դարմանատարութիւն այսորիկ բորբոքման, և խղճայլթի փամիլիայոյ գրեթէ նոյն են ընդ դարմանատարութիւն և դեղատուութիւն բորբոքման երիկամանց. զորմէ խօսեցաք 'ի վերս անդր։

ՅՕԴՈՒԱԾ ԺԶ.

Յաղագս ախտի, որ ասի մելանխոլիկք, այսինքն բորբոքումն արգանդի։

Բորբոքումս այս է ախտ ինն դժնդակ և կարի վտանգաւոր. որ սովորաբար գոյանայ յարգանդս կանանց, մանաւանդ կանանց ամուսնացելոց, և այրեաց։ Իսկ երբեմն և արտաքոյ սովորութիւն պատահի բորբոքս այս 'ի յերիտասարդ օրիորդս, և 'ի պատանուհիս 'ի հասակի 15 կամ 16 ամաց, բազում անգամ և 'ի նոյն իսկ 'ի ժամանակի դաշտանի, 'ի յղութիւն, և 'ի վիժման կամ յանցուցման զաւակի։

Պատճառք բորբոքման արգանդի։

Բազմապատիկ են պատճառք այսորիկ բորբոքման. վատթարութիւն դաշտանի, հարստահարութիւն թանչից, հոսումն ապիտակ նիւթոյ 'ի նոյն իսկ 'ի ժամանակի դաշտանի, վիժումն զաւակի, հոսումն չափազանց կամ արգելումն սեռատեսականի, ակարութիւնն զաւակատան, և թուլութիւն գործարանաց. անկանիլն, և հարուածքն 'ի վերայ արգանդի, արգելումն արտաշնչութեան մարմնոյ, առաւել գործածութիւնն գինւոյ, և ոգիաւոր հեղանիւթոց։ Նոյնպէս յառաջ գոյ յայնմ ամենայնէ, որ կարէ յանկարծակի ցրտացուցանել զարգանդն, յետ միանգամ սաստկապէս ջերմանալոյ նորա. 'ի յաճախ գործածութիւն կերակրեղինաց համեմելոց ջերմացուցիչ նիւթովք. յուժգին կրից ոգւոյ, 'ի սաստիկ երկիւղէ,

և 'ի սրտմտութէ։ Երբեմն ևս յառաջ գայ 'ի բոց բոքմանէ որովայնամաշկի, և ներքնորովայնի, ևն։

Նշան բորբոքման արգանդի։

Նշանքն արգանդային բորբոքման՝ մարթին ճանաչել յուժգին ցրտոյ. յորմէ զհետ գայ ջերմութիւն կիզողական, անանգորրութեն, և մոլեգնութեն։ Եւ յետ այնորիկ ախտակիրն զգայ զցաւ ինչ սաստիկ, խայթիչ և զարկողական 'ի մի կողմն արգանդի. երբեմն ցաւն նուազի իբր ժամս ինչ. բայց յետ այնորիկ առաւելագոյն լինի սաստկութիւն վերադառնայ միւսանգամ, և ճապաղի մինչև 'ի թիկնամէջս. և ըստ այս ցաւոյ միանգամայն 'ի վեր երևի այտուց ինչ կակուղ 'ի ստորին որովայնն, և անտի անցանէ յարգանդն. զարկ բազկերակին 'ի սկզբան անդ լինի արագ, մեծ, լի, և կարծր. և յետոյ հարկանէ մանր, ոնզօր, և անհաւասար. ստինքն լինին ուռուցեալ կամ այտուցեալ։

Ախտակիրն զգայ զբորուն լեզուի, զծարաւ սաստիկ, զփքախտութեն, զգլխացաւութեն, և զնոդկանս. ժայթքէ ստէպ զմաղձս դառնագինս, և ժանգագոյնս. մէզն լինի երբեմն արգելական, անկայուն կարմրուն ինչ 'ի վեր երևի 'ի յերեսս. աչքն մխին 'ի ներքս, հազն լինի ջոր, և դժուարութեն մեծ կրէ ախտակիրն 'ի շնչառութէ, 'ի հազալն, և 'ի հառաչելն։ Ախտաժեռեալ կինն զգայ և զցաւ ինչ 'ի մէջս, 'ի ոսկրանս սխոնդանաց, 'ի մնակուշտս, 'ի կուրծս, և 'ի յանրակս. կրէ և զոքնուն, զհեծկլատանք, զցնցումն ձգանաց, զքիրան արկածեան, զժայթքումն 'ի գոյն կանաչ, զմանրութեն, զխորութեն, և զվիշահատութեն զարկի բազկերակի, զուժգին ցրտութեն, զարտաթորումն զաղբահոտ հիւթոց ընդ ճանապարհ ծննդական անդամոց, զթմբրութեն, և զուշագնացութիւն։ Այսպիսի երկրորդական պատահարքս քաջայայտ ցուցանեն զփոփոխումն բորբոքման 'ի քաղցկեղ, յորմէ ախտաժեռեալն մահակործան լինի։

Յաղագս խնամոպարութեան, և դեղորէիցն, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դիպուածս բորբոքման արգանդի։

Դեղորէիցն այսր բորբոքման պարտ է լինել այլ և այլ ըստ այլևայլութեան պատճառացն, յորոց յառաջ գայ։ Եթէ ենթակայն ի՞նչ քաջառողջ կազմուածոց վիճակեալ, եթէ առատացեալ ի՞նչ արեամբ, եթէ սխտակրեալ կինն չի՞նչ յղի, և չի՞նչ չափազանց հոսեալ կամ կորուսեալ զարիւնն, որպէս ստէպ պատահի զկնի վիժման կամ անցուցման զաւակի, յայնժամ պարտ է իսկ և իսկ երակ հատանել 'ի բազկէն, նկատեալ ևս 'ի խառնուածս, և 'ի սաստկութի պատահարին։ Իսկ եթէ ենթակայն ի՞նչ թուլակազմ, և փափկակեաց, եթէ խոշտանկութի՞ սաստիկ, և ձրգտումն ջղաց կրեալ ի՞նչ սխտաժեռեալ կինն 'ի ժամանակի ծննդեան, եթէ զբուգընթաց գտանին ընդ սխտիս նշանքն մահաբեր ահեղի, որ ասի՝ ֆէպպռէ նէռվօզա, և եթէ մասն աղտին մնացեալ ի՞նչ 'ի նեղքս յարգանդին, յայնժամ չէ՛ բնաւ օրէն երակ հատանել։ այլ պարտ է 'ի գործ արկանել զնեթանիչ և զխաղաղիչ դեղորայսն, որպիսի են լենիմենթօ վալերիլէ, և ձէթն ձիթոյ խառն ընդ սբիրիթօ ոչ քօռնօ ոչ չէռվօի։ զոր պարտ է ստէպ ստէպ օծանել 'ի յայն մասն արգանդին, ուր առաւել ղգայ զցաւն։

Յոյժ օգտակար դեղ է և սիմենթօ առնել 'ի կակղացուցիչ արմատոց և 'ի տերևոց ջերմ ջրով, և անընդհատ դնել 'ի վերայ նոյն մասին արգանդի։ Նոյնպէս կարի օգտակար և բարեգոյն վարկանիմք ըզգրեթն պատրաստեալ կակղացուցիչ արմատովք և ծաղկամբք։ են։ Եւ հայեցեալ 'ի պարագայս ցաւոյն՝ յաւելուլ 'ի վերայ մի ամբողջ գլուխ բաբավէռօ, կամ 20 չիթ լաւտանօ լիգուիտօ։ Եւ եթէ բորբոքումն այս պատճառեալ ի՞նչ 'ի հարուածոց կամ 'ի յանկմանէ 'ի վերայ որովայնի, և կամ յարգելմանէ յաւելուածոց արգանդի, որք սովոր են հոսիլ յետ որդեծնութեան, յայնժամ արժան է և երակ հատանել յոտիցն, և դնել տպրուկս 'ի վերայ բէռինէօ անուանեալ մասին մարմնոյ, այսինքն ընդ սրբանն և ընդ ամթոցս։

Այլ եթէ բորբոքումն այս 'ի վեր երևեալ ի՞նչ

յանձկագոյն մասն արգանդի, յայնժամ պատշաճ է Ֆոմէնթօ առնել նոյնպէս 'ի կակղացուցիչ նիւթոց և ջերմ ջրով, և ստէպ ստէպ դնել 'ի վերայ փողոյն արգանդի։ Նոյնպէս գրեթն պարտի լինել կազմեալ ջրոմն մոլոշի, տղտոյ, իւղով նշոյ, և մանանայիւ. զոր պարտ է 'ի վար արկանել երկու անգամ յաւուրն, և ստաւել յաճախակի, եթէ յոյժ կարծրացեալ եցէ պնդուշն որովայնի։ Բայց եթէ բորբոքումն սակաւ ինչ խաղաղեալ եցէ, յայնժամ վասն առաւել խաղաղացուցանելոյ զայն՝ հարկ է առ ժամանակ մի ձեռնարկել 'ի գործածութիւն նիթռօի, 'ի փոքր քանակէ. այսինքն 5 կամ 6 կշիռ ցորեանս՝ 'ի մէջ միոյ սկահակ ջրոյ սամսուքօի կամ թիլէի, երեք կամ չորս անգամ 'ի մէջ 24 ժամուց, մինչև ցերկու կամ ցերիս աւուրս։ Դարձեալ, 'ի դիպուածս՝ յորում ախտակիրն կրէ զորովայնահոսութիւն ինչ թեթև, յայնժամ ոչ է այնքան վտանգաւոր. և ոչ են պէտք դեղրէից, այլ մանաւանդ յոլով անգամ լինի յոյժ օգտակար ինչ հոսումն. վասն որոյ և չէ՛ պարտ փութով արգելուլ զհոսումն. իսկ եթէ առաւելեալ սաստկացի այն, և տկարացի ախտակիրն երևելապէս, յայնժամ ճահողագոյն է 'ի գործ արկանել զէմուլսիոնէ արտալիքս անուանեալ դեղն, զորմէ խօսեցաք 'ի վեր անդր 'ի դիպուածս բորբոքման կրծոց։

Իսկ եթէ բորբոքումն այս պատճառեալ եցէ յախտակցութէ փողոյ արգանդի, կամ 'ի մեռեալ զաւակէ, և կամ յաղտէ մնացելոյ յարգանդին, յայնժամ պարտ է պատրաստել գրեթ ինչ յետագայ եղանակաւ։ Առ կէս ունկի՝ կօմմա առապիքս, և վեց ունկի՝ ջուր վարդի. հալեա զնէժն 'ի մէջ նոյն վարդի ջրոյ, և ջերմացո սակաւ ինչ. և հեղ զգուշութիբ զայն փոքրիկ գրեթաւ ընդ ծննդական անդամն յարգանդն ախտակրեալ կնոջ. և զայս պարտ է 'ի գործ արկանել երեք կամ չորս անգամ յաւուրն. առ 'ի մաքրել զարգանդն, և 'ի դուրս վանել զմեռեալ զաւակն և զմասն աղտի։ Այլ եթէ գոյացեալ եցէ պալար ինչ կարծր, կամ խղխայթաւոր յարգանդի անդ, հարկ է յայնժամ զհետ երթալ կանոնի, և կառավարուլ՝ զորոց խօսեցաք 'ի վեր անդր 'ի յօդ. ԺԷ։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս զանազան գեղոյից խրթից, որ ասի՝ փօլիփա։

Խրթքս այսոքիկ ունին մեծագոյն նմն հաղորդակցութիւն, և նմանութիւն, եթէ 'ի նշանս, և եթէ 'ի կառավարութիւս ընդ ախտին որ ասի՝ ինֆիսամմացիոնէ տէլլօ սթօմաչօ, և տէլ պասսօ վէնթռէ. այսինքն բորբոքումն ստամոքսի, և ստորին որովայնի, զորոց լիովին խօսեցաք վերագոյնդ։ Եւ հասարակօրէն ախտիցս այսոցիկ զուգընթաց գտանին ինդուռի որովայնի, և ցաւ ինչ սուր, և խայթիչ 'ի փորոտիսն, և յընդերս. սին իրի և պահանջէ կառավարութիւս կակղացուցիչս, լուծողականս, և ֆօմէնթօ։ Ունին զանազան անուանս ըստ այլևայլութեան պատճառացն, յորոց 'ի վեր երևին և ծագին. այսպիսի են՝ քօլիքա վէնթօզա, պիլիօզա, խաէրիքա, և նէռվօզա։

ՅՕԳՈՒԱԾ Ա.

Յաղագս ֆֆական կամ ֆամիական խրթի, որ ասի՝ փօլիփա վէնթրօզա։

Ասեսս այս յառաջ գայ, և պատճառի 'ի վերոց կամ 'ի քամեոյ որ տարածանի 'ի փորոտիսն, և բազում անգամ և համընթաց գտանի ընդ ախտին, որ ասի քօլիքա սբազմօտիքա. այսինքն խրթ ցնցական։

Պատճառ ախտին։

Ասեսս այս պատճառի յանչափ գործածութենէ տհաս պտղոց, և 'ի դժուարամարսելի կերակրեղի-

նաց, 'ի զօրաւոր քամւոյ, յարգելմանէ արտաքինչու�մարմնոյ, և 'ի ցրտոյ։ Փափկակեաց և գիրգ անձինք են առաւելապէս ենթակայ ախտիս, սակս տկարագոյն լինելոյ մարսողական զօրութեանն նոցին։

Ղ. ԱԽՏԻՆ ԱԽՊԻՆ։

Ախտս այս ունի զսեպհական զիւր բնակարան 'ի ստամոքսն, և 'ի ստորին որովայնն և 'ի վերոյեալ մասունս. զոյգ ընդ իւր ունի միշտ զձգուտսն, և զՆշմունս ցաւալիս. և ախտաժեռեալն զգայ 'ի փորի անդ իւրում զխլրտմունս, և զձայն շնչմանց։ Փուքն կամ քամին, որ առ սակաւ սակաւ իբր աստիճանաւ տարածանի, ուռուցանէ զփորոտիսն, և ընդլայնէ զնոսա առաւել քան զսովորական պայմանն. և տայ նոցա անկանիլ 'ի տկարութիւն։ Այն փուք զգայուն կան է, մանաւանդ 'ի դիպուածն յորում 'ի վեր երևի 'ի ձախակողմեան սահմանսն ախոնդանոց. քանզի եթէ ուշադիր ոք լինի՝ զգայ, և լսէ զձայն նորա. հաստաղիքն է ուռուցեալ. իսկ որովայնն է նոյնպէս այտուցեալ, բայց կարծր է քան զայն, և հնչէ իբր զթմբուկ։ Եւ երբեմն այնպիսի սաստկագոյն վիշտս յանձն կրէ, մինչ համարիլ նմա անկարելի 'ի տակալ այնմիկ, յորմէ և զհետ գայ դժուարութիւնն 'ի շնչառութիւն, որ միշտ համընթաց լինի այսր տեսակի խնթի։

Ախտակիրն հաստարակօրէն դիւրանայ զկնի փուքս արձակելոյ, եթէ 'ի վերուստ անտի, և եթէ 'ի ստորուստ. և ցաւն միանգամայն նուազի, և քամիքն 'ի միոյ փորոտեացն 'ի միւսն արձակին, մինչև արտաքս ելանեն. ընդ ախտիս երբեմն զուգակից լինին և յօրանջումն և նոզկանք, և քարտիալգիա, այսինքն խօթութիւն ստամոքսի և սրտի, և կաղուածք որովայնի։ Յորժամ ցաւն արմատանայ և հաստատի 'ի մէջ նորբագոյն աղեացն, յայնժամ դժուարութիւն մեծ է զանազանել զնիւթս զայս՝ յախտէն, որ ասի քարտիալգիա։

Յաղագս խնամապարանքն այսր ախտի։

Յորժամ ախտս այս պատճառեալ եղէ 'ի փքալից հեղանիւթոց, 'ի տհաս մրգոց ևն, բարեգոյն գեղն

'ի սկզբան անդ Երևման նշանացն է ըմպելն զսակաւ ինչ օղի, կամ զայլ ոգեաւոր հեղանիւթս ջերմարարս և օգտակարս։ Ախտակիրն պարտի պահպանել զոտն ջերմագինս, դնելով 'ի ներքոյ ոտիցն կղմնտերս ջերմացեալս. նոյնպէս արժան է և 'ի վերայ ստամոքսի և որովայնի դնել զչուխայս ջերմագինս։ Այլև պարտ է ջերմ ձեռամբ, կամ ջերմացուցեալ չուխայիւ շփել 'ի վերայ ստամոքսի, և 'ի վերայ որովայնի. և 'ի ձեռն այսր շփման հասարակօրէն նպաստ ընծայի փարատման վրայ, եթէ ստէպ ստէպ շփեսցի։ Մինչև 'ի դիպուածս այսր տեսակի խեթի, մարթ է 'ի գործ արկանել զերս ջերմագինս, և զդեղորայս ջերմացուցիչս. որոց գործածուքն համարիմք լինել բուժումն ախտիս։ Իսկ եթէ հնացեալ իցէ խեթն, և գուցէ առիթ երկնչելոյ՝ թէ սկիզբն արարեալ իցէ 'ի նմա բորբոքումն ինչ 'ի փորոտիսն, յայնժամ պարտ է դադարել 'ի գործածութենէ ջերմացուցիչ դեղորէից. և ձեռնամուխ լինել 'ի դեղորայս և 'ի կառավարութիս, զորս սովոր եմք 'ի կիր արկանել 'ի դիպուածս բորբոքման ստորին որովայնի, զորմէ խօսեցաք լիովին 'ի յօդ. ԺԱ։

Իբրև պատճառի ախտս այս յանմարսողութենէ, հասարակօրէն ապաքինի և փարատի ըստ ինքեան ճնաղապարհաւ փսխման կամ լուծողութեամբ որովայնի. բայց փոյթ ունել պարտ է չլինել խափանարար այդպիսի հոսման, այլ մանաւանդ ընդ հակառակն պարտ է շարժել, և գիւրացուցանել զայն, առատօրէն տալով նմա ըմպել ջուրս ջերմս։ Իսկ յորժամ բռնութեան նշանաց դադարի, մարթ է տալ ախտակրիս մի տրամ ռատպառպտուս, կամ զորպիսի և իցէ այլ լուծողականս՝ որով 'ի գուրս վանին մնացորդքն անմարսողութենէ։ Այլ եթէ պատճառի ախտս այս 'ի ցրտոյ և 'ի խոնաւութենէ ոտիցն, հասարակօրէն ապաքինի և բուժի իսկ և իսկ դնելով զոտս և զարուսս 'ի մէջ ջերմ ջրոյ, և տալով միանգամայն ըմպել սակաւ ինչ սիկռս տի լաթթէ վինոզս, կամ ավէնտ աքուոզս, յաւելեալ 'ի վերայ սակաւ ինչ լիգուոռ սբիրիթոզս։

Կառավարութիւն 'ի վար արիւնելոյ 'ի դիպուածս յայս։

Բնակիչք ագարակի և դաշտավայր տեղեաց՝ են յոյժ ենթակայք այսմիկ խեթի. ամին իբրև փոյթ ունել

պարտ է նոցա իսկ և իսկ 'ի զգալ խոնարհութեն ինչ 'ի հանդերձս, փոխել զայն. նոյնպէս պարտ է ըմպել սակաւ ինչ օղի կամ որպիսի և իցէ ոգեաւոր հեղանիւթս զկնի ուտելոյ զտհաս միրգս. բայց զայս պատուիրելով, ոչ գիտեմք սովորութեն առնել զաքբու

օղւոյ. այլ միայն յայդպիսի գիպուածս և է թ 'ի կիր առնուլ զջերմացուցիչ հեղանիւթս, որք են դեղ ինն առաւել օգտաւէտ և բարեգոյն. մի բաժակ ջուրն անանխոյ կամ կինամոնի խառնեալ ընդ սակաւ ինչ պղպեղի, ունի զնոյն ներգործութեն օղւոյ. զոր պարտ է 'ի գործ արկանել յոմանս գիպուածս, նկատմամբ 'ի պարագայս անձանց, յորս գտանի մեծ գալարուն, և կծկուն, որք առաւել են ենթակայ այսմիկ տեսակի խեթի։

ՅՕԳՈՒԱԾ Բ.

Յաղագս մաղձային խեթի, որ ասի՝ ՀՐՇԻՓԱ ՊԻԼԷՕՂԱ։

Ախտս այս յառաջ գայ 'ի սաստիկ և 'ի դժնդակ ինն մաղձէ, որ վրդովէ, և զայրացուցանէ զաղիս և զփորոտիս, մանաւանդ 'ի տուօտէնում անուանեալ աղիքն, որ է սկիզբն աղեաց։ Սակայ և յաճախակի տիրապետէ 'ի հասակի երիտասարդութեն, յորում վիճակեալ է մարդ զօրաւոր և քաջեղ ինն խառնուածոց։ Երբեմն ախտս այս 'ի վերայ հասանէ զկնի ըմպելոյ ջուր ցուրտ յանչափս՝ յամառնային եղանակի. և կամ յո և իցէ պահու, յորում շնչաւորութեն ար գելական լինի վասն իրիք պատճառի։

Նշան ախտին։

Ախտիս այսմիկ զուգընթաց լինի ցաւ ինն սրտգոյն դէպ 'ի մասունս, որ ասի՝ ռէճիոնէ օմպէլիքալէ, այսինքն կողին պորտոյ։ Ախտակիրն կրէ զծարաւ ինն բորբոքեալ, և հասարակօրէն որովայնն լինի փակեալ և ոնդագոյն. բայց ոչ որպէս 'ի գիպուածս բորբոքման ատորին որովայնի։ Զարկ բաղկերակին հարկանէ սաստկ սաստիկ, և բազում անգամ մանր.

բայց ոչ բնաւ կարծր և խիստ։ Ախտակիրն ունի զվիշտս և զտագնապ մեծ, և ձայնն լինի կերկերեալ և արգելեալ. փսխէ զմաղձս ջերմս, դեղնագոյնս, և դառնագինս. և զկնի փսխմանն երևի թէ դիւրանայ փոքր ինչ. բայց խիթն կամ ցաւն մնայ տակաւին յառաջին ուհման սաստկութեանն, և ախտն երթալով աճմատանայ, և տրամադրութիւն առ փսխումն առաւել աճի, և երբեմն գրեթէ յարատեւեալ մնայ 'ի փսխմանն. շարժումն և գրգռումն փորոտեացն լինի այնքան այլայլեալ, և փոխեալ, մինչև համարիլ 'ի նշանացս, եթէ սկիզբն արարեալ ցկէ ախտն ասացեալ՝ բուսիծնէ կլինաքա. այսինքն խիթ փութոյթ ալեաց։ Ախտս այս քաջայայտ ճանաչի և 'ի դառնութէ բերանոյ, 'ի սաստիկ ջերմութէ ներքին մասանց։ Խիթն երբեմն լինի հաստատուն, և երբեմն փոփոխական, երբեմն եկանէ 'ի պորտն, երբեմն 'ի քամակն, և երբեմն և 'ի սրամոքսն։ Մեծագոյն մասն յախտաժեռեալոց տագնապն այնպիսի ինն ցաւով, որով համարին զանձինս պրկեալ ջուանաւ, և նուաճեալ։ Մէջն լինի կարմրագոյն և սակաւ քանակութիւն եկանէ. այդ օրինակ նշանաց երբեմն զհետագայ ախտն ասացեալ ինթէռիցիա, որ է դալուկն։

Յաղագս խնամապարութեան ախտին։

Եթէ ցաւակիրն ցկէ երիտասարդ, և քաջ զօրեղ բնութիւն վիճակեալ, եթէ զարկ բազկին ցկէ լի, և արագ, պարտ է երակ հատանել, և գրեթէ տալ, և առաստօրէն ըմպել սիէռօ տի լաթթէ.քիարիֆիքաթօ. կամ քուէմօռէ աքուօզօ տի ավէնա, խառն ընդ սուքօ տի չէտռօի, կամ ընդ քուէմօռէ տի թառթառօի։ Պարտ է տալ սակաւ ինչ արգանակ մսոյ կամ հաւու, հալեալ 'ի նմա դոյզն ինչ մանանայ. և և պարտ է առնել տէքոցիոնէ տի թամառինտի, և այլ կակղացուցիչ երաց։ Գրեթէն լիցի պատրաստեալ 'ի կակղացուցիչ արմատոց և 'ի տերևոց, և 'ի սերմանէ կտաւատի, յաւելեալ 'ի նա և զձէթն ձիթենեաց։ Այլև պարտ է զջուխայս ջերմ ջրով թացեալ ստէպ ստէպ դնել 'ի վերայ որովայնի։ Իսկ եթէ չօգտիցի ինչ յայսմանէ, հարկ է յայնժամ զախտակիրն մուծանել 'ի բաղանիս մինչ ցկուրծս, ընկողմանեալ 'ի մէջ ջրոյ։

'Ի դիպուածս յայս կարի դժուարին ինն է դա-

գարիլն փախման. վասն որոյ պարտ է տալ հիւանդին զջուրն հացի կամ անանխոյ, կամ երիցկի, և կամ մելիսսէի. որք եթէ յանօգուտս եղանեն, հարկ է յայնժամ տալ՝ բօրիոնէ սալենա, յորոյ վերայ մնրթ է յաւելուլ քանի ինչ կաթիլ լաւատնօ լի գուիտոս, և սէպ սէպ կրկնել ըստ պահանջման հարկի։ Դարձեալ, յոյժ պատշաճ է թիւրակէսիս սպեղանի առնել և դնել 'ի վերայ կրծոցն. այլ և սէպ սէպ գրեխ տալ թիւրակէսիս, կամ լաւատնօ լիգուիտոսիս։

Դարձեալ, մնրթ է և ս 'ի գործ արկանել զգբեռոր անուանեալ պտուղն։ Զայս եթէ կամիս առնել, սրկ զնոշոր փոշի պտղոյս ըստ կշռոյ երեսուն տրամոյ 'ի յերկու լիտր եռացեալ ջրոյ. զկնի քսանուչորս ժամուց՝ հեղ զգուշութիւն զհեղուկն յայլ ապակի անօթ, այնպէս՝ զի մի խառնեսցի մրուրն ընդ պայծառ հեղանիւթոյն. և տուր ըմպել ախտակրին երեք կամ չորս անգամ յաւուրն՝ զկշիռ երեք տրամոյ, կամ լաւ ևս ասել, զդրգալ մի սեղանոյ։

Հնարք և կատարութիւնք 'ի գործ արկանելիք 'ի դեղագործս ախտիս։

Այսքա, որք սէպ սէպ զփորձ առնուն այսր սիւտի, պարտին ուսել յոյժ սակաւ միս. և պարտին անուցանել զինքեանս թեթև և զօրացուցիչ կերակրեղենօք։ Նմայն պարտին երբեմն երբեմն 'ի գործ արկանել վարդ ինչ ֆիւոր տի թառթառս, և թամբինտի, և կամ զայլ որպիսի և իցէ կակղացուցիչս, և զովացուցիչս։

ՅՕԳՈՒԱԾ Գ.

Յաղագս ախտի, որ ասի փօլիփս իսինէոիփս. այսինքն խիլ արգանդեան։

Ասեսս այս, որպէս զփորձ առեալ եմք և տեսանեմք, է խիլ ինն սեպհական 'ի սեռս կանանց, որ բազում անգամ միջահասեալ դադարի. և առանց

իրեք պատճառի՝ դարձեալ դառնայ միւսանգամ։ Կանայք, որք փափուկ, թոյլ և քնքուշ, և մաղաստա իմն խառնուածոյ են վիճակեալ, են առաւել ենթակայ այսմիկ ախտի։ Եւ ևս կանայք, որք կրեալ են զախտն, որ կոչի մալ նէռվոզ, այսինքն ջլացաւութիւն. այլ ևս նոքա, որք զանտանելի վիշտս և նեղութիւս կրեն յերկունս ծննդեան, նոյնպէս են ենթակայ այսմիկ ախտի։

Ութներորդ խոսք։

Ախտս այս բազում նմանութիւս ունի ընդ վերոյշեալ ախտին, որ ասի խիթ մաղձային։ Մեշտ զուգակից իւր ունի զործումն, և զսուր իմն ցաւ՝ ի կողմանան ստամոքսի. յորժամ կիներն ախտակրեալ անկանի յախտս յայս, հաւարակօրէն գոյին լինի կարմիրանգ. կրէ մեծ ամբոխմունս, և սաստիկ անձկութիւս. և զշունչն առնու մեծաւ դժուարութիւն. ցաւն ոչ լինի բնաւ հաստատուն, այլ երբեմն յայս մասն, և երբեմն յայլ մասունս որովայնի թափառական։ Երբեմն ցաւս այս գադարի իբր հնգետասան օր, կամ երիս շաբաթս. բայց յետ այնորիկ առաւելագոյն իմն սաստկութիւն վերադառնայ միւսանգամ։ Այսքիկ են նշանք, ՝ի ձեռն որոց մարթ է մասնաւորապէս գուշակել զախտս զայս. թէպէտ և երբեմն զուգընթաց լինին ևս ՝ի դիպուածս ախտի դալկան. բայց յայնժամ հաստարակօրէն ՝ի սակաւ ինչ աւուրս ինքնին փարատին։ Այլ այս իսկ է չարն առաւել մեծագոյն և անտանելի, զի ախտս այս յետ միանգամ բուժելոյ՝ ՝ի դոյզն ինչ անկարգութէ և անզգուշութէ անդրէն վերադառնայ։

Յաղագս խնամապարտութէ ախտին։

՝Ի դիպուածս ախտիս՝ ամենայն լուծողական և փսխողական դեղորայքն են յոյժ վնասաբերք. վասն որոյ պարտ է արգելուլ զգործածութիւն այնր ամենայնի, որք ուժանթափ առնեն, և կործանեալ տապատս արկանեն զախտադնեալ կանայս։ Իսկ եթէ փսխումն կամ ործումն ինքնին բնութիւն շարժի և գրգռի, յայնժամ պարտ է տալ գաղջ ջուր, կամ թեթև իմն բոսակեթ առ ՝ի մաքրել զստամոքսն. և

յեւ այնորիկ հարկ է եւ տալ 15 կամ 20 եւ կամ 25 կաթիլ լաւտանում լինգուիտա՝ բաժակ մի ջրով կինամոնի։ զոր պարտ է վերակրկնել 'ի տան, եւ յերկոտասան ժամն միանգամ, մինչեւ ցածուցանել, եւ խաղաղել նշանացն։

Դարձեալ, 'ի վեց ժամու միանգամ մնրթ է տալ չորս կամ հինգ հատ հատ, որ ասի բիլօլէ ֆէթիտէ։ եւ իսկ եւ իսկ զկնի բաժակ մի արգանակի լուլէՃիս անուանեալ խոտոյ։ Իսկ եթէ ասացեալ հասն երեւի կարի անախորժելի, որպէս պատահի երբեմն, յայնժամ պարտ է 'ի վերայ յաւելուլ վերոյիշեալ արգանակի սկահակ մի թինթուռայ քասթորէս, կամ 30 շիթս պալսամն ոչ բէռու, փշրեալ 'ի վերայ եւս սակաւ ինչ շաքար։ մարթ է եւս 'ի գործ արկանել էմբիասթռս անթիսթէռիքս, որ եւս մեծապէս ներգործէ եւ օգտէ։ 'Ի սեռս արմատց սեամաղձոտքն են առաւել ենթակայ ցաւոցն, որք ունին մեծ նմանութիւն խիթի արգանդի։ վասն որոյ զոր ինչ միանգամ ցայս վայր 'ի յօգուածս յայս խօսեցաք, պատշաճի եւս 'ի գիպուածս ախտի՝ որ կոչի քօլիքա իբոքքոնտրիաքա, այսինքն խիթ ախոնդական։

ՅՕԳՈՒԱԾ Դ։

Յաղագս ախտի, որ ասի փօլիփա նէրվօսա։ այսինքն խիթ ջղային։

Անքագործքն, քարագործքն, հիմնագիրքն են, են առաւել ենթակայ այսմ ախտի։ Հասարակ է ախտս այս 'ի գաւառս անգղիոյ եւ գաղղիոյ, ուրանօր յաճախ 'ի գործածին զըմպելին կոչեցեալ սիտռօ (որ է աղդ ինչ ցքրոյ կաղմեալ 'ի հիւթոց խնձորոյ, կամ տանձի,) եւ թուի թէ յառաջ գայ ախտս այս 'ի գործածութէ արձաձեայ անօթոցն որով պատրաստեն զհեղանիւթս զայս։ Դարձեալ, յոյժ յաճախ է յաղիւմուռան սահմանս հնդկաստանի։ ուր եւ անուանեն զախտս զայս քօլիքա սէքքա, որ թարգմանի խիթ չոր։

Ենանի խոսիս։

Ողբընթաց լինի ընդ ախտիս ցաւ ինն որովայնի, անհանգստութիւն, ցնցումն մկանանց, պնդութիւն որովայնի, ցաւ սատմոքսի, ժայթքումն, գեղնութիւն երեսաց, ևն։ Ախտակիրն զկորձ առնու մեծի տրտմութիւն, և սասսիկ ծանրութիւն գլխոյ. ունի զաչս մթագնեալս, և երբեմն խակ ուշագնաց լինի։ Ցաւն որովայնի խակ և խակ աճիլ սկսանի, և հաստատի 'ի կողմն պորտոյ, որ լինի յոյժ փոսացեալ և 'ի ներքս միսեալ։ Երբեմն այնքան սասականայ ցաւն, մինչև ախտակիրն անկեալ 'ի մահիճս աղաղակ բառնայ, և գոչէ բարձրաձայն։ Եւ յայդպիսի դիպուած թուի 'ի ձեռն դժնդակ անձկութես և տառապանացս նուազիլ ցաւոյն։ Մէզն և պէտքն որովայնի լինին արգելական, և համարի թէ շրջան երատանի փակեալ կայ կարկամութիւն ջլաց։ Զարկ բազկին վրիպեալ զարտուղի 'ի բնական ընթացիցն, և լինի այլազան. և եթէ չմատուցանի փութապէս նպաստ, և խնամատարութիւն տառապանաց ախտակրին, բաղումք 'ի նոցանէ լինին անդամալոյծ, և մատունքն ձեռաց ամ փոփեալ կորանան։

Այդպիսի երկրորդական պատահարք քաջայայտ ցուցանեն զփոխումն հիւանդութեան ախտակրիս. և երբեմն յորժամ ախտն զայրանայ, ախտաժեռեալն մահակործան լինի զարհուրելի և անըմբերելի ցաւովք։ Այս տեսակ խնթի պատճառէ ցաւս յոյժ դժնդակս առաւել քան զայլ ամենայն խնթս փորոտեացն, և յարատևեալ մնայ ընդ երկար ժամանակս։ Ականատես եղէ յարատև մնալոյ ցաւոյ ախտիս մինչև ցութ և ցոսան օր, հանդերձ դժնեայ ինն խըստութիւն որովայնի, որով արգելոյր և խափանէր զամենայն նպաստս և ներդործութիւնս դեղորէից, և 'ի վախճանի զերծաւ անվնաս։ Բայց հաստարակօրէն ախտս այս ուժաթափ առնէ զախտակիրն, և լքեալ թողու զնա սովորաբար անդամալոյծ։

Խնամապարտութիւն և դեղորայք։

Ընդհանուր և հաստատակ կառավարութիւն այսր ախտի համաձայնի, և մերձ է կառավարութիւն ախտի

որ կոչի՝ բասսիոնէ լէլիպա, այսինքն խնիթ փաթոյթ անուանեալ աղեաց։ Բայց զայն կառավարուի ևեթ անբաւական համարիմք 'ի պատճառել զառողջութեն. վասն որոյ հարկաւոր դատիմք ևս սահեցուցանել զորովայնն սոսկապէս 'ի ձեռն ախորժական և մեղկ լուծողականաց. այլ միանգամայն նպաստաւոր լինել ներգործութեանն այսոցիկ լուծողականաց 'ի ձեռն գրեխաց՝ յօրինելոց ձիթով, և խառնելոց։

'Ի դիպուածս ախտիս ունի մասնաւոր ներգործուն դեղս այս, այսինքն օլիս տի քասթորէոն. զոր պարտ է 'ի գործ արկանել մինչև ցերիս օնձայս, այսինքն ունկիս։ Իսկ 'ի գրեխն մինչև ցհինգ կամ ցվեց ունկիս։ Գատուամէ տէլլէ պառպատի է նոյնպէս դեղ ինն կարի ազնիւ և գործունեայ նկատմամբ ախտիս, զոր մարթ է 'ի գործ արկանել երկու արամ, երիցս անգամ յաւուրն, կամ ևս առաւել, եթէ տանիցն ստամոքսն։ Իսկ եթէ 'ի ձեռն այսոցիկ դեղոցն չլինիցի հնարաւոր բուժումն ախտիս, յայնժամ պարտ է 'ի վար արկանել զյետագայ կառավարութիւնս։ Դարս հարկ է գրեխս տալ ախտակրին բաւականաչափ մաքուր և ազնիւ գինւով, և ձիթով ընկուզի խառնելով ընդ իրեարս, և զկնի երկու կամ երեք ժամու պատրաստեա զայլ ինն գրեխս հետագայ եղանակաւ։

Առ երկու արամ՝ սէնա մաքուր, մի ունկի՝ էլէթթուարիս տիաֆէնիքս, կէս ունկի՝ պէնէտէթթս լուսատիվս, երկու ունկի՝ մէլ մէդբուռիալէ, կամ հիւթն միոյ գօլիս գուինթիատայի, եռացո զամենայնն 'ի միասին ջրով, և 'ի գործ արկ. և զկնի ներգործութեն գրեխի, կրկնեա միւսանգամ զվերոյիշեալ գինին, և զձէթն, և 'ի հետագայ աւուրն տուր ըմպել ախտակրին երիս կամ չորս կաթ ցորեան թաւթառս էմէթիքս առ 'ի փսխել. և իսկ և իսկ զկնի ներգործելոյ փսխողականիս՝ տուր նմա մի արամ թիւրակէս, որ այն ինքն է թրիսիս, խառնեալ մի կաթիլ լաւանս լիգուիտս։ Իսկ յաւուրն երրորդի վերըսին 'ի գործ արկանին գրեխն և փսխողականն։

'Ի չորրորդում աւուր պարտ է լուծողականս պատրաստել հետագայ դեղորէիւք։ Առ սէնա, թամրինտի, սալ տ' էբսոն և սալ տի թառթառս յիւրաքանչիւրոցն մէն մի ունկի, եռացո զամենայնն երկու լիտր հասարակ ջրով. և յաւել 'ի վերայ կէս էլէթ-

թուառիս տիաֆէնիքս, և նոյնչափ շիլօրբս տի ուա-
նս. տուր ընդ առաւօտն ըմպել ախտակրին յիւրա-
քանչիւր երեք ժամու բաժակ մի կամ երկու զկնի
բաժակի։ Դարձեալ, յաւէլ 'ի վերայ վերոյիշեալ
գեղորէիցս կէս տրամ թիւրակէս, և մի շիթ լուսա-
նս լիդուիտս, և տուր յերեկոյս ըմպել։

Դարձեալ, մարթ է պատրաստել գեղ ինն քրտնա-
բեր յետագայ եղանակաւ։ Առ երեք ունկի ուատիչէ
տի սալսաբառիլիա, մի ունկի՝ լէնես կուվաեուքս,
կամ սասաֆրաս, երեք ունկի՝ պառատանա, և նոյն-
չափ՝ ուատչէ տի սգուինա. թրմեսց զամենայն 'ի
մէջ միոյ հողեղէն անօթոյ, մինչև ցերկոտասան ժամ,
բաւականաչափ ջրով, և թող եռալ մինչև ցսպառիլ
միոյ մասին ջրոյ՝ յերից մասանց անտի, և մնալ երկու
մասն, և 'ի ցերեկի տուր ըմպել ախտակրին
առատ առատ բաժակաւ։ Իսկ 'ի գլխովին ուժա-
թափ լինել ախտակրին, պարտ է պատրաստել գեղ
ինն, որ ասի բօցիօնէ քօռտիալէ. որոյ կերպն լինի
այսպէս։ Առ մի ունկի՝ ագուա տի մէլիսսէ, նոյն-
չափ՝ ագուա տի քառտս սանդս, երեք տրամ՝ ագուա
տի թռէ նօչէ. նոյնչափ՝ քօնֆէցիօնէ ռիսաչէնթինա.
և մի ունկի՝ շիլօրբս կառօֆանի. խառնեա զամե-
նայնն, և յամենայնում ժամու մի հատարակ դրդա-
լիս 'ի գործ արկ։ Իսկ եթէ 'ի վերոյ ասյսոցիկ ամե-
նայնի, մնայցէ խնթն ախտակրին տակաւին միօրի-
նակ, յայնժամ պարտ է վերատին ձեռնամուխ լի-
նել 'ի գործածութեն վերոգրեալ լուծողականաց ըստ
տանելոյ կարողութեն, և զօրութեն հիւանդին։

'Ի դիպուածս ախտիս չէ բնաւ օրէն երակ հատա-
նել. բայց եթէ յորժամ նշանքն լինին առաւել սաս-
տիկ, և հատանեն 'ի բարձրագոյն տատիճան ուղերձ-
ման, և ձգտման։ Բայց եթէ զկնի բուժման ախտիս
տակաւին մնայ անզօր և տկար, յայնժամ պարտ է
շարժումն առնել, հեծեալ 'ի ձիս կամ 'ի ջորիս, և 'ի
գործ արկանել զքինա քինա, ինֆուզիօնէ արարեալ
'ի մէջ գինւոյ կամ ջրոյ։ Իսկ եթէ ախտն ապաքինի,
բայց ախտաժեռեալն մնայ անդամալոյծ, յայնժամ
առաւել պատշաճաւոր գեղն է ագուա տի պաթհ.
որ է ազգ ինչ հանքային ջրոյ՝ բղխեալ 'ի դաշտէ
Լիմէքէ անգղիացւոց, կամ 'ի պաթհ անուանեալ գա-
ւառէն. որ յայն տակս կոչեցաւ ագուա տի պաթհ։

Կառավարութիւն 'ի գործ արկանելի 'ի դիպուածս ախտից։

Այսպէս քան զամենայն պարտ է հրաժարիլ յուսելոյ զահաս և զիսակ մերպս, և յրմնպելոյ զասատիկ և զբորբոքեցուցիչ հեղանիւթս, են։ Արձագործքն պարտին զգուշանալ 'ի գործելոյ ծոմ բերանով. և կերակրեղենաց նոցին հարկ է լինել իւղային, և պաքարտ. 'ի գործ արկցեն յամենայնում առաւօտու զձէթն ձիթենեաց, խառնեալ օղւով, կամ հեղանիւթիւ՝ որ կոչի ռում. բայց չէ բնաւ օրէն զայսպիսի ոգիաւորս առանձին 'ի կիր առնուլ։ Առաւել պատշաճաւոր կերակուրքն են՝ պարարտագոյն և իւղալի արգանակքն, և այլ սմին նմանք. միայն թէ ունիցին զղօրութիւն սնուցողականս, և տաժողականս։ Եւ 'ի վերջ քան զամենայն պարտին փոյթ մեծ ունել առ 'ի արգելուլ զանդուիւն որովայնի։

Խրատ պիպանի 'ի խնամատարութիւն ախտից ընդհանրապէս։

Ոչ էպէտ և հնար էր մեզ յառաջիկայս դնել և զբազում զայլ տեսակս խնդից, բայց քանզի ոչ են մեր կամք՝ շփոթել և խառնել զփոս վերծանողաց, վասն որոյ զառաւել գոյացականաց և ետեթ ճառեցաք աստանօր, որք պէտս ունին մեծի զգուշութեան. քանզի են յոյժ դժուարաւ բուժելի։

Դիտելի է դարձեալ, զի բազումք ևս 'ի բժշկաց 'ի դիպուածս ախտից չէին ձեռնահաս, և բաւական 'ի քաջ ճանաչել զախտս զայսոսիկ, և զանազանել զայնս 'ի միմեանց. վասն որոյ յորդոր ընծայեմք ամենայն քաջախոհ վերծանողաց և բժշկաց՝ վասն մեծի օգտի ախտակրիս 'ի ճանաչել նոցա զախտս քաջայայտ, զհետ երթալ կանոնի հեռագոյ խրատուց։ Յամենատեսակ դիպուածս խնդից հարկ է զոտս, և զարունս դնել 'ի մէջ ջերմ ջրոյ. և ևս սաէպ սաէպ դնել 'ի վերոյ որովայնի և ստամոքսի զկապերտս չուխայի թացեալս 'ի մէջ ջերմագին ջրոյ։ Դարձեալ, պարտ է տալ ախտակրին առատօրէն զրմնպելիս բարեխառն զովացուցիչս, և յամենայն երկու կամ երիս ժամս միանգամ պատրաստել դրեխս կակղացուցիչս։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս սասպին հոսման մղի, որ ասի՝ պիսպէրնէ։

Ահաս այս՝ է սասակագոյն և յաճախակի հոսումն միզի, յերիտասարդս ուր ուրեմն է պատահական. իսկ 'ի ծերունիս ստէպ. և յոյժ ընտանեկան, մանաւանդ այնոցիկ, որք զբաղեալ կան յաշխատանս տարժանաւորս, և որք յերիտասարդութէ հասակի 'ի գործ արկանէին առատօրէն զըմպելիս սասակագոյնս։

Յաղագս պապճառաց սասպիկագոյն հոսման մղի։

Ահաս այս հասարակօրէն յառաջ գայ 'ի սուր ինչ հիւանդութէ, 'ի տենդից, և յանչափապէս լուծողականութէ։ Մարթի և պատահիլ 'ի սասսիկ աշխատանաց, 'ի կրից, յերկար ճանապարհաց, և ընդերկար ձիավարութէ, 'ի բարձմանէ ծանրագոյն իրաց, 'ի յուժգին և 'ի զայրացուցիչ հեղանութոց, և 'ի դեղորէից. որպիսի են թինթուռա տի քանթարէլէ, սբիռիթօ տի թռէմենթինա և։ Եւ և սովորաբար յառաջ գայ յերկարատև գործածութենէ հանքային ջրոց. վասն որոյ զգուշանալ պարտ է 'ի յաճախակի և յառատօրէն գործածութէ այսպիսի ջրոց. ապա թէ ոչ՝ փոխանակ օգտի վնասաբերք լինին։ Հուսկ յետոյ, ախտիս այսմիկ մնրթ է յառաջ գալ 'ի թուլութէ ներքին գործարանաց միզարանի, 'ի թթուութէ ինչ, որ սասակապէս զայրացուցանէ ղերիկամունս, և 'ի հոսմանէ ինչ արեան։

Նշան ախտի։

'Ի դիպուածս ախտիս մէջն լինի բազմաչափ քան զհեղանութէ ըմպելեան, զոր 'ի գործ արկանէ ախտակիրն. և լինի մաքուր ջինջ, և դեղնագոյն. և հան

ոչ է այնքան գարշելի. ախտակիրն ունի զծարաւ ինչ յարատև, և սակաւ ինչ տենդ. բերանն լինի չորագոյն, և սաէպ թքանէ. ուժաթափ լինի գլխովին, կորուսանէ զախորժակն խապառ, և այնքան հիւծեալ մաշեալ վատանայ, մինչև համարի ախտակիրն չունել ինչ մարմին, բայց եթէ զմորթն և զոսկերս: Չգայ զչերմուն ինչ 'ի մէջ փորոտեացն. և ուռնուն ոտքն, և մէջքն: 'Ի սկզբան անդ հիւանդութէ ախտակիրն ոչ ինչ, կամ յոյժ սակաւ կրէ անհանգստութիւնս. բայց ոչ է յարատև. քանզի խակ և խակ կորուսանէ զախորժակն, և զդայ զչերմութի ինչ թեթևագոյն, և զպնդութի որովայնի:

Ախտս այս 'ի սկզբան իւրում դիւրին է յապաքինութի. բայց թէ առ ժամանակ ինչ յամեցէ, տապաքինութին լինի յոյժ դժուարին: Ա՛չ է մարթ բնաւ յուսադիր լինել 'ի բուժել, և յառողջութի պատրաստարել զծերունիս, և զարբշիռս ըմբռնեալս յախտէս յայսմանէ:

Յաղագս դեղոցն ասոպին հոսման մղի:

Ախորժելի և մեղմագոյն լուծողականքն 'ի դեղուածս ախտիս լինին յոյժ շահաբեր, եթէ ախտակիրն չկոյէ կարի ուժաթափ լեալ յերկարատևութէ ախտին. ռառպառպառօն, և սէմին քառատմօմն տրոբեալ 'ի մէջ գինւոյ տուր 'ի գործ արկանել, մինչև ցկարծու�կամ ցկակղուإ որովայնի. և անմիջապէս զկնի այսորիկ պարտ է ախտակրին 'ի գործ արկանել զդեղս պնդացուցիչս և զօրացուցիչս. վասն որոյ պարտ է տալ յաւուրն չորս անգամ, կամ հաս առաւել՝ եթէ տանի ստամոքսն, կէս տրամ զյեռագոյ վիշին, որ կոչի՝ բօլվէռէ ա' էլվէցիս: Ա՛ռ ալումէ և քաթէքու՝ յիւրաքանչիւրոցն հաւասարաչափ մասունս, և հալեալ 'ի մէջ քուրայի, մանրեա զերկոսին 'ի միասին. և 'ի գործ արկ յիւրաքանչիւր անգամն 'ի մէջ միոյ բաժակի թինթուռա ակ ռօզէի, որ է ոգի վարդի:

Իսկ եթէ ստամոքսն ոչ կարիցէ տանել առանձին զվերոյիշեալ նիւթն, յայնժամ պարտ է առնուլ սիէռօ ակ լաթթէ ալումինօզ, և 'ի գործ արկանել չորս ունկիս՝ յերիս անգամս յաւուրն. զոր մարթ է պատրաստել հետագոյ եղանակաւ: Ա՛ռ չորս լիտր

կաթն թարմ. և երեք տրամ աղուամէ, որ է՝ պաղլէղ. դիր զկաթն 'ի վերայ մեղմագոյն հրոյ, և եռացո. և իբրև սկսանի կաթն թանձրանալ՝ արկ 'ի վերայ ըզ-պաղլեղն։ Դարձեալ, 'ի դիպուածս ախտիս են օգտակարք սեղմիչ դեղորայքն, որպիսի են՝ տասն կամ 12 շիթք լաւտանո լիգուիտո 'ի մէջ միոյ բաժակի հասարակ ջրոյ երկու անգամ յաւուրն։ Իսկ օգտակարագոյն և բարեոքք ևս է գործածութիւնն քինա քինայի փոշի արարեալ, և տրորեալ 'ի մէջ միոյ բաժակի աղնուագոյն գինւոյ, և 'ի կիր արկանել երիս անգամ յաւուրն. բայց յարմարագոյն, և ախորժելագոյն ևս լինի եթէ յաւելցի 'ի վերայ 15 կամ 20 կաթիլ էլիսիրէ տի վիթրիօլ։

Յաղագս կոտավարութեան, որ տան հերակուրս։

Պարտ է արգելուլ նախ քան զամենայն 'ի դիպուածս ախտիս՝ զայն ամենայն որ կարէն զայրացուցանել զգործարանս միզարանի, և խանգարել զնառնուածս։ Եթէ ծարաւն չիցէ այնքան սաստիկ, պարտ է ախտակրիս ապրիլ չորագոյն կերակրեղինօք. որպիսի են բրինձ, սալեբ խառն ընդ կաթին, խեցգետին, ոսարէ ևն։ Զսաստիկ ծարաւն մարթ է շիջուցանել 'ի գործ արկանելով զջուրն կրոյ, խառն ընդ կեղևոյ կաղնւոյ։ Տէքօթթիօ պիանքօ, հալեալ 'ի մէջ նորա զիսէժն ձկան, լինի յարմարագոյն լինչ ըմպելի 'ի դիպուածս ախտիս։ Նոյնպէս պարտ է ախտակրին առնել չափաւոր շարժմունս առանց խոնջելոյ. ևս պարտ է նստիլ և 'ի քուն լինել 'ի վերայ միոյ կարծրագոյն և պնդագոյն մահճի. քանզի փափուկ և կակղագոյն մահիճքն են յոյժ հիասակար երիկամանց։ Նոյնպէս ցուրտ և խոնաւ օդքն ոչ սակաւ հիաս ընծայեն ախտակրիս։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս ախտի, որ ասի՝ ինքօնԼինէնցա պ'օրինա, այսինքն անժուժուԼիւն կամ անժուժկալուԼ մԼի։

Այս է ախտ իմն, որում անձինք աշխատաւորք են յոյժ ենԼթակայ զկնի անցանելոյ զչափ հասակի ամաց. և ախտս այս տարբերի ներքսապէս 'ի վերս յիշեալ ախտէն տիսապէԼեն, ՝ որում 'ի գիպուածս յայս մէջն հոսի յոյժ յակամայս, և շնԼթ առ շնԼթ. և ոչ առատօրէն՝ որպէս 'ի գիպուածն վերոգրեալ ախտի։ Ախտս այս առաւեԼ տառապեցուցիչ է՝ քան որոգայԼթաւոր. ենԼթակայք այսր ախտի հասարակօրէն են երիտասարդք, և ծերունիք, կանայք 'ի ժամանակի յղուԼթեան, և ևս եԼթէ կրեալ իցեն զաշխատանքի ծնունդս, և վարեալ իցեն զանկանոն վարս։

Յաղագս պատճառաց անժուժուԼեան մԼի։

Ախտս այս յառաջ գայ 'ի թուլուԼթէ փամփշտոյ, և սովորաբար 'ի բարալիզիսէ, այսինքն 'ի լուծուէ կամ 'ի գօսուԼթէ այսր գործարանի։ Կարէ պատճառիլ երբեմն ևս 'ի մղմանէ, 'ի հարուածոց, 'ի տարժանաւոր ծննդոց, և յայլ ինչ պատահարաց, 'ի ջերմախտէ, յերկար գործածուԼթէ զայրացուցիչ ինչ դեղոց, որք մնալով 'ի մէջ փամփշտի վնասաբեր լինին։

Դարձեալ, պատճառի ախտս այս 'ի տկարուԼթէ կազմուածոց և գործարանաց, որպէս 'ի մանկունս, 'ի ծերունիս և 'ի փափկակեաց անձինս. ևս 'ի նեղուԼթենէ ինչ, զոր կրեն մկանքն փամփշտոյ. որպէս պատահի բազում անգամ յարուեսան քարագործուԼթեան, և 'ի տաժանաւոր ծննդեան։ Հուսկ յետոյ պատճառի ևս 'ի քարէ ինչ գոյացելոյ 'ի մէջ միզարանի, յուռուցէ ինչ 'ի վեր երևելոյ 'ի մօտաւոր մնասունս փամփշտոյ. երբեմն ևս յանկանոն գործածուէ ջրոյ կամ յայլ ինչ հեղանիւԼթ ըմպելեաց. 'ի վախ-

ՀԱՆ ԱՄԵՆԱՅՆԻ, 'Ի ԳԱՐՇ ՅԱՆԿՈՒԹԻՆ, ԿԱՄ 'Ի ՎԱՎԱՇՈՏՈՒԹԵՆԻ:

ՅԱՂԱԳՍ ԽՆԱՄԱՊԱՐՈՒԹԻՆ, ԵՎ ԴԵՂՈՐԷԻՑ ԱԽՊԻՍ:

Ախատ այս է անբուժելի 'ի զառամեալս, և ոչ է մարթ 'ի գործ արկանել առ նոսա դեղորայս ինչ, բայց եթէ գնել 'ի վերայ փամփշտոյ էմբիասթռօ քռօսպօռանթէ, և պնդակազմ ինչ գօտւով պնդել շուրջ զերիկամամբք նոցին, և կանոնադրել զկերակուրս սնուցողականս, և զդինի ազնիւ, և չափաւոր ինչ շարժութիւնս, և զայլ սոցին նման յարմար կառավարութիւնս:

Իսկ 'Ի մանկունս ախատ այս յառաջ գայ 'Ի տկարութէ, և պատշաճաւոր դեղն է բօլվէռէ տի սօռչիս. այսինքն փոշի մկան, կամ մուկն խորովեալ 'Ի շամփուրի, և կամ այլ այսպիսի դեղորայք. քանզի ախատ այս թէպէտ 'Ի մանկունս ըստ ինքեան է բուժելի, բայց նպաստաւորուին և այսպիսի դեղորէից ոչ է վայրապար: Անժուժութի կամ անժուժկալութին միզի, եթէ լցէ յառաջ եկեալ 'Ի քարէ ինչ գոյացելոյ 'Ի փամփուշտն, է ապաքինելի ըստ եղանակին, զորմէ խօսեսցուք 'Ի տեղւոջ իւրում: Եթէ պատճառի 'Ի խենեշութէ և 'Ի խառնակութենէ ընդկանայս, է իբր անբուժելի, մանաւանդ եթէ լցէ հնացեալ:

Իսկ 'Ի գիպուածս, յորում յառաջ գայ ախատս այս 'Ի լուծութէ կամ 'Ի գօտութէ փամփշտոյ, յայնժամ զդեղն տես 'Ի գլ". ԺԵ. 'Ի վերայ անդամալուծութէ: Իսկ յորժամ փամփշտալուծութիս այս պատճառի յուռուցէ ինչ, կամ յինջուածոց ինքեանց 'Ի մերձադիր մասունս փամփշտոյ, յայնժամ դեղն է վէշիքաթօռիս, զոր պարտ է դնել 'Ի մէջքն, և գարմանել քանի ինչ շաբաթս, մինչև փարատեսցի փամփշտալուծութիւնն, և յետ այնորիկ պարտ է 'Ի գործ արկանել փոխանակ վէշիքաթօռիսի զյետագոյ օծանելիս: Ա՛ռ մի ունկի՝ օլիս տի ռութա, երկու տրամ ունկվէնթում նէռվինում, և երեսուն շիթս օլիս տի էսսէնցիալէ տի թէռէպէնթինս: Այսու օծանելեաւս պարտ է յաւուրն բազում անգամ շփել զայն մասն, յորոյ վերայ եղեալ էր վէշիքաթօռիսն, և զայլ մերձաւոր մասունս: Անժուժութենն միզի, որ

հասարակօրէն զուգընթաց լինի ընդ փորհարութիւն և որովայնահոսութիւն, ոչ ունի պէտս մասնաւոր ինչ դեղորէից, այլ ապաքինի և բուժի 'ի դադարիլ անդ լուծողականութիւն որովայնի։

ԳԼՈՒԽ ՁԺ.

Յաղագս անմիզութեան, կամ միզարգելութեան։

Արգելականութիւն միզի, որ ըստ բժշկաց կոչի՝ սոբբուէսսիօնէ ա՛օռինա, կամ իսքուռիա, յերկուս բաժանի, 'ի ռէնալէ, և 'ի վէշիքալէ, այսինքն յերիկամնական, և 'ի փամփիշտական. երիկամնականն կոչի՝ սոբբուէսսիօնէ ա՛օռինա, կամ իսքուռիա. իսկ փամփիշտականն անուանի հասարակօրէն՝ ռիթէնցիօնէ ա՛օռինա. իսկ առ մեզ երկաքանչիւրն կոչի՝ անմիզութիւն, կամ միզարգելութիւն։

Յաղագս նշանաց միզարգելութեան։

Նշանք երիկամնական արգելման միզի են գաղտնի ինչ ցաւ սրագոյն, ծանրութիւն երիկամանց, և միջաց. ցաւն ստամոքսի, զզուանքն և ժայթքումն, միզահամութիւն բերանոյ, և դարշահոտութիւն միզի։ Ախտակիրն ոչ զգայ բնաւ յօժարութիւն ինչ 'ի միզել, և ոչ հոսի մեզն, բայց եթէ մեծաւ բռնադատութիւն. ոչ գտանի բնաւ ուռոյց ինչ 'ի միզարանի, և ոչ 'ի մերձաւոր մասունս նորա։

Իսկ նշանքն փամփիշտական արգելման միզի, որ հասարակօրէն ասի՝ ռիթէնցիօնէ ա՛օռինա, են հետագայքդ. ծանրութիւն ինչ զոր զգայ ախտակիրն 'ի մէջ անդամոցն, որ ասի՝ իբօկասթռօ, բուպէ, և բէռինէօ, յօժարութիւն ինչ 'ի միզել հանդերձ վայրապար բռնադատութիւն, ուռոյց ինչ 'ի վերայ երևի 'ի ներքոյ ոսկեր երանաց կամ առականաց. զոր 'ի ջ-

շափելն՝ զայրագին ցաւս զգայ ախտակիրն. և ուռոյցս այս փարատի կամ ինքնին բնութիւն 'ի լուծանել արգելմանն միզի, և կամ գործածութիւն սրինգի:

Հաստարակօրէն արգելումնս այս միզի լինի առանց ջերմութեան: Իսկ եթէ պատճառեալ լինի 'ի բորբոքմանէ կամ 'ի շարաւմանէ միզարանի, և կամ 'ի գաղղիական ախտէ, յայնժամ յայսպիսի դիպուածս սովորաբար զուգընթաց լինի տենդ ինչ, և ցնորումն. ցաւքն և ջերմութիւնն լինին սաստկագին, և ախտակիրն յոյժ ամբոխեալ և խռովեալ. և վերջապէս եթէ բարիոք դարման չտանիցի ախտիս այսմիկ, փոխարկի սովորաբար յախտն ասացեալ խառօրիզնա, այսինքն ջրգողութիւն, և լինի մահաբեր:

Յաղագս պատճառաց այսորիկ ախտի:

Գրդէն խօսեցաք 'ի վերագոյնդ, եթէ միզարգելութիւն կարէ պատճառիլ և յառաջ գալ 'ի բազմազան պատճառաց, որպէս 'ի բորբոքմանէ երիկամանց և փամփշտի էն: Խիճք կամ փոքրիկ մասնիկք ինչ քարի կամ աւազոյ արգելեալք 'ի ճանապարհի միզարանի, նիւթք ինչ շարաւային և նեխեալ, կարկամութիւն ջլաց. ոլորումն փամփշտոյ, և գալարումն աղեաց և փորոտեաց ատորին որովայնի, բորբոքումն կամ այտուցքն էն, կարեն պատճառել զախտս զայս:

Դարձեալ, նոքա՝ որք զապեն, և ճնշեն զանձինս իւրեանց յընդերկար ժամանակս 'ի գալ միզի, և ևս նոքա, որք զապրագործութիւնս առնեն ընդ կանայս, են ենթակայ ախտիս այսմիկ. նոյնպէս և կանայք զինի զուգաւորութիւն, և յղութիւն երբեմն ևս կրեն զախտս զայս: 'Ի վախճանի ամենայն կերպ ախտք, որպիսի են ակամայ շարժմունքն մկանանց, արգանդացաւութիւն, սեւամաղձութիւն, ցաւն փամփշտոյ և երիկամանց կարեն պատճառել զմիզարգելութիւն:

Յաղագս դեղոցն և խնամապարտութեանն միզարգելութեանն:

'Ի բազմակերպ պատճառաց ախտիս, զորոց գրեցաք, քաջայայտ ճանաչի՝ եթէ քանի այլևայլ և բազմապատիկ դեղոցն կարօտի բուժումն ախտիս: 'Ի դիպուածս ագգելականութիւն որ պատճառի 'ի բորբոքմանէ երիկամանց, կամ փամփշտոյ կամ ատամոք-

ան, և կամ այլ ինչ աղեաց ատորին որովայնի, և կամ 'ի գիպուածն՝ յորում պատճառի 'ի խիճէ, յաւազոյ, 'ի վերայ ինչ ծննդական անդամոց, 'ի տուփական ախտէ ևն, պարտ է 'ի գործ արկանել զայն գեղոբայս, զորս սահմանեցաք վասն մի մի իւրաքանչիւրոյն այսոցիկ ախտից ուրոյն ուրոյն 'ի տեղւոջ իւրեանց։

Դարձեալ գիտելի է, եթէ յայս ամենայն գիպուածս մարթ է և 'ի գործ արկանել զյետագայ գեղորայս. այսինքն ֆոմէնթի, և բաղանիս առնել. իսկ երակ հատանելն է հարկաւորագոյն, եթէ զբուսթին ախտակրին տանիցէ այնմ, յորժամ գտանի նշան ինչ բորբոքման. երակ հատանելն 'ի գիպուածս ախտիս ոչ միայն փարատէ զջերմութին, այլ միանգամայն թուլացուցանելով զհատատակնդութին գործարանաց և խողովակաց, վանէ զբռնի շարժումն մկանաց և ջղաց, որք պատճառեն զարգելականութի։ Զկնի երակ հատանելոյն պատշաճագոյն է 'ի գործ արկանել զֆոմէնթի սոսկ ջերմ ջրով, կամ ջրոմն եբիցկի, և կամ մելոշի, ևն։

Դարձեալ, պարտ է գնել զախտակիրն 'ի մէջ գաղջ ջրոյ, և թողուլ այնքան, որքան տանի զբուսթի նորին, և կրկնել զայն ըստ պահանջելոյ պարագայիցն։ Այս կերպս օգտէ և 'ի գիպուածս, յորում արգելականութին միզի պատճառի յերկարապէս զապելոյ զանձն 'ի միզել, և 'ի զազրագործութենէ ընդ կանայս, կամ և 'ի գաղղիական ախտէ. քանզի միշտ յայսպիսի գիպուածս արգելման կամ զուգընթաց լինի բորբոքումն, և կամ պատճառէ զայն։ Յայդ ամենայն գիպուածս ոչ է հասարակօրէն որոգայթաւոր, բայց եթէ 'ի յարմատանալն և 'ի հնանալն նորին։

Իսկ 'ի գիպուածս՝ յորում արգելականութին միզի պատճառի 'ի կրից, և 'ի սեամաղէ, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել մասն ինչ 'ի վերոյիշեալ գեղրեցից, և մասն և զհետագայ գեղորայս։ Առ երեք ունկի՝ ռատիչէ տի աղթէա, կէս ունկի՝ լիկոռիցիա, և երեք տրամ՝ սէմէն բլանթակո։ Զայս ամենայն եռացո՛ մի և կէս լիտր ջրով քանի ինչ վայրկեան. և յետ այնորիկ յաւելէ 'ի վերայ երկու ունկի՝ կոմմա առապիքա, և կէս ունկի՝ ռաշնիթռօ, բուռիֆիքաթօ, և մատո՛ ախտակրիդ մի բաժակ յաւուրն ջրս

կամ հինգ անդամ։ Այլ եթէ պատճառի 'ի գոլորշեաց ինչ, որք 'ի ճանապարհին միզարանի, կամ 'ի շարաւալից ինչ նիւթոց, 'ի վիրաց, 'ի մեղաւորութենէ այսորիկ անդամոյ, 'ի թուլութէ երիկամանց և փամփշտոյ, 'ի լուծութէ կամ 'ի գօսութէ գործարանաց և խողովակաց, են, յայսպիսի դիպուածս չէ օրէն միշտ 'ի գործ արկանել զսնդացուցիչս և ըղջերմացուցիչս, զվէշեաթօռիս են. այլ պարտ է 'ի գործ արկանել զքանտէլէթիա սուբբուռաթիվա, կամ կօմմա էլասթիքա, զոր պարտ է պատրաստել բազմազան եղանակաւ. վասն որոյ և ոչ կամիմ ասատանօր խօսել զկերպէ պատրաստելոյ զայն. քանզի իւրաքանչիւր վերասպ ունի այլևայլ եղանակ 'ի պատրաստել զքանտէլէթիան զայն ըստ խոհեմական իւրում դատողութեան։

Բայց զայս միայն ասեմք՝ եթէ արժան է միշտ նախ քան զմուծանելն զպատրոյգս զայս 'ի ծննդական անդամն՝ թաթախել զնոյն 'ի մէջ իւղոյ քաղցր նշոյ. որով լինի առաւել դիւրապատրաստ և շուտափոյթ 'ի նեբգործել. և պարտ է թողուլ զայն մնալ 'ի նեբքս անդ երիս կամ չորս ժամս ըստ կարողութեան ախտակրին, որով ոչ միայն բուժին խոցքն, այլ և գոլորշիքն փամփշտոյ, և մեղութիքն, որք գտանին 'ի մէջ նոցն անդամոյ, և այլ այն ամենայն, որք արգելական լինին ճանապարհին միզի. և այլն։ 'Ի գիպուածս, յորում պատճառի 'ի յղութէ, հասարակօրէն չէ պարտ 'ի գործ արկանել դեղորայս ինչ. այլ թողուլ պարտ է բնութեն կառավարել զինքն։

Յաղագս ընդհանուր կառավարութեան, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դիպուածս արգելման միզի յորդիսի՞ իցէ պատճառէ լինիցի յառաջ եկեալ։

Որ և իցէ պատճառն միզարգելութեան, հարկաւոր է միշտ լոյծ ունել զորովայնն. բայց զգուշանալ պարտ է՝ զի մի 'ի գործ արկցին սաստիկ լուծողականք, և յոյժ լուծիչ գրեկքն ևս՝ ինֆուզիոնէ ու սէնա և ուր մաննա. են։ 'Ի դիպուածս յայս թեթևագոյն գրեկն է յոյժ օգտակար. մաքրէ զորովայնն, և մանաւանդ ունի զօրութեն 'ի փարատել զբռնի շարժումն փամփշտոյ, և այլ մերձաւոր մասանց։ Կերակրոցն պարտ է լինել թեթև և սնուցիչ, և սակաւ քանակութեամբ. 'ի

գործ արկանել ըմպելի՝ զթեթև արգանակն, ինֆուզիոնէ տի ռատիչէ տի ալթէա, ֆիլօր տի թիլիս ևն, յաւելուլ պարտ է ևս երբեմն 'ի վերայ այդպիսի ինֆուզիոնէի հինգ կամ վեց շիթս սբիրիթօ տի նիթռօ տոլչէ, կամ մի տրամ՝ սաքօնէ տի ալիքանթէ։ Իսկ եթէ ախտակիրն ոչ ունիցի զբորբոքողականութիւն, կարէ ըմպել ևս սակաւ ինչ թեթև բուն աւանց թթուոյ։



ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս ախտի որ ասի՝ ռէնէլլա. այսինքն սաղ երիկամանց. և յաղագս ախտի որ կոչի՝ բիէլոտա. այսինքն փոր երիկամանց։

Ի դիպուածս, յորում աւազք կամ խիճք յամէցեալ մնան 'ի մէջ երիկամանց, կամ ընդ քարշ դնան ճանապարհաւ միզանց խողովակացն հանդերձ միզիւն, յայնժամ ասի թէ ախտակիրն ունի աւազս, կամ նիւթս խճագործս։ Իսկ 'ի դիպուածս, յորում այսպիսի խիճք, կամ փոքրիկ քարինք ընդմտանեն 'ի փամփուշտն, և յերկարեալ մնան անդ առ ժամանակ ինչ, ածելով ածին օր քան զօր աւազային և խճային նիւթովք միզի, որք կռուեալ յարին շուրջանակի. և 'ի վախճանի այնքան ստամիկ ստուարանան, մինչև ոչ կարեն ելանել 'ի փամփշտէ, և ընդ քարշ անցանել ճանապարհաւ միզանց խողովակացն հանդերձ միզիւն. և յայսպիսի դիպուածս ասի՝ ախտակիրն ունել քարինս։

Պատճառք այսր սաղոյ և փորի։

Աւազն, և քարն կամ խիճքն գոյանան նախ՝ 'ի բարկ, 'ի կծու, և 'ի տաքեալ կերակրեղէնից, 'ի գործածութէ սաստկագոյն և սեղմիչ գինւոյ, յանշարժա-

կան կեանս վարելոյ, 'ի պահպանելոյ զանձն 'ի մէջ անկողնոյ կարի ջերմապէս, այնպէս մինչև բռնութիւն շարժել զդողոլոշին, և զքրտունս, 'ի կերակրելոյ զերս կակղացուցիչս այնքան՝ մինչև շարժել զունակական ինչ լուծումն որովայնի: Դարձեալ՝ յերկարաձիգ մնալն ընկողմանեալ 'ի վերայ ուսոցն, գործածութիւնն պրպտորեալ և աւաղային ջրոց, փքաւոր կերակուրքն ևն, կարեն նոյնպէս պատճառել զախտս զայս: Անձինք զառամեալք, ևս նոքա՝ որ կրեցին զախտն կոչեցեալ կօթիթս կամ ռէումաթիզմս, են առաւել ենթակայ սխտիս:

Յաղագս նշանաց սաստկոյ, և փարի:

Ուաղքն, կամ քարինք երիկամանց պատճառեն զցաւս միջաց, զանախորժակուն, զզուռուն, զժայթքուն, և երբեմն ևս զմէզն սաստիկ, կամ արիւնախառն. իսկ յորժամ քարինքս այսոքիկ իջանեն յերիկամանց 'ի փամփուշտն, և արգելական մնան ընդ ճանապարհն միզանց խողովակաց, յայնժամ այսոքիկ նշանքս զայրանան սաստնապատիկ առաւել. տարաժանի ցաւն ի մերձաւոր մասունս փամփշտի, մէջքն և զիստն կողից սխտակրին տանջին միշտ անհնարին ցաւովք, ամորձիքն կծկին 'ի վեր կոյս, և մէզն լինի արգելական: Իսկ քարն երիկամանց կամ փամփշտոյ ճանաչի 'ի ցաւոցն, զոր զգայ սխտակիրն կամ 'ի մէջեն, կամ յառաջ, և կամ զկնի միզելոյն. 'ի սառնամածութիւնէ կամ 'ի թանձրութիւնէ միզի, որ իջանէ չնթ առ չնթ, 'ի յերկարաձիգ յապտղմանէ միզին՝ 'ի նոյն իսկ վայրկենի՝ յորում ստիպիւր յորդառատ միզել, 'ի սրագոյն ինչ ցաւոց՝ զոր սխտակիրն զգայ 'ի ծագն փամփշտի, զկնի շարժմանն մանաւանդ յետ ձիավարութեանն, կամ կառաջնորդութեանն, և այլ սմին նման տարժանաւոր շարժման, 'ի գունոյ միզին, եթէ լցէ յոյժ սպիտակ և թանձրամած, 'ի մարմանջանաց, և 'ի տագնապէ ծննդական անդամոյն, որ բռնադատէ զսխտակիրն անդադար քորել զանձն:

Դարձեալ՝ ճանաչի 'ի դիւրագոյն միզելոյ սխտակրին 'ի նատիլն, քան յոտն կալն, 'ի կարկամութիւնէ և յակամայ շարժմանէ ջղաց կամ միանանց, որք պատճառին 'ի սաստկագոյն ցաւոց 'ի միզելն, հուսկ յե-

ռոյ 'ի շշաֆիմանէ քարին 'ի ձեռն միզահան գոր-
ծեաց, որ կոչի՝ քաթէթէռէ։

Յաղագս կարևորագոյն կառավարութեան, որ պահանջին 'ի դիպուածս ախտից։

Անձինք ըմբռնեալք յախտէս յայսմանէ՝ պարտին անձնապահ լինել 'ի կերակրեղինաց, որք են բնութիւն քամոտ և ջերմագին, որպիսի են միրգն տհաս, և ըմպելիք աղտաղտինք, և ն. պարտին 'ի գործ արկանել զայն ամենայն ուտելիս և ըմպելիս, որք են բնութիւն միզաբերք, և թեթև լուծողականք, որպիսի են քառջիսֆէ, սբառաձի, սբինաջէ, ջիքօռիա, և ն, մանաւանդ սոխն. իսկ ըմպելիքն առաւել պատշաճողականք են սիէռօ տի լաթթէ, կաթն կովու, ջուրն գարեոյ, կամ կտաւատի և ն։ Շարժումն է յոյժ յարմար 'ի դիպուածս ախտիս, սակայն պարտ է լինել չափաւոր, ապա թէ ոչ՝ պատճառէ զարիւն միզախտն։

Անձինք որք ունին զաւազս՝ հասարակօրէն զինի շարժողականութիւն, մանաւանդ զինի ձիավարութիւն, աբատաքս հոսեն բազմութիւն մանրամասն աւազս կամ խիճս։ Իսկ անձինք, որք ունին զքար 'ի մէջ փամփշտոյ, հազիւ երբէք պարապեսցին 'ի շարժողականութիւն։ Դարձեալ գիտելի է, զի այն անձինք որք երկնչին ըմբռնիլ յախտէս՝ այնու զի ծնողքն նոցա կրեալ են զախտս զայս, պարտին միշտ շարժումն առնել, և ոչ բնաւ նստիլ անշարժ յուլութիւն։

Յաղագս դեղոցն, զորս պարտ է 'ի գործ արկանել նոցա, որ ունին զախտն ելեալ առաջոյ, և ելեալ փարի։

'Ի դիպուածս, յորում աւազքն, և խիճքն կամ փոքրիկ քարինքն արգելական մնան 'ի միզանցս, կամ 'ի փամփուշտն և կամ յայլ ինչ ճանապարհ միզանց խողովակաց, պարտ է ախտակրին միշտ երակ հատանել, դնել զջերմ ֆօմէնթօ 'ի վերայ որովայնի, և 'ի վերայ միջաց, 'ի գործ արկանել զդրեխս կակղացուցիչս, և զբաղանիս, և ըմպել առատօրէն թիզանա տի լուէնթի և ն։ Ընդերկարագոյն ևս խոսեցաք զկառավարութեաց ախտիս 'ի ճառէն 'ի վերայ բորբոքման երիկամանց, տե՛ս գլ. ԺԲ. յօդ. ԺԳ։ Խրատեն հե-

զինակքն զայն անձինս, որք ունին զաւազս 'ի մէջ երիկամանց կամ փամփշտոյ, և ոչ քարինս, զի յամենայնում առաւօտու երկու կամ երեք ժամաւ յառաջ քան զկատարելն զպէտս որովայնի ըմպիցեն մի ֆիլիէթթա ջուր կրոյ՝ պատրաստեալ ընդ շերտս ոստրէի. և բաղում փաստիւք հաստատեն հեղինակքն միանգամայն՝ եթէ յոյժ օգտակար է և անհրաժեշտ:

Իսկ 'ի դիպուածս, յորում քարն լինի 'ի նեղքս 'ի փամփուշտն, դարձեալ խրատեն նոյն հեղինակքն 'ի գործ արկանել սաբօնէ տի ալիքանթէ, և աքուա տի քալչէ պատրաստեալ ըստ վերոյիշեալ կերպի, զոր պարտ է 'ի գործ արկանել ըստ յեռագայ եղանակի: Առոյգ ախտակիրս յամենայնում աւուր մի ունկի՝ սաբօնէ տի ալիքանթէ, աքուա տի քալչէ, այսինքն ջուր կրոյ ըստ վերոգրեալ կերպի ընդ շերտս ոստրէի. զՃառն բաժանեսցէ յերիս մասունս. զմեծագոյն մասն 'ի գործ արկցէ յառաւօտեան պահու 'ի ծոմուստ. զերկրորդ մասն 'ի մէջօրէի, իսկ զերրորդ մասն զկնի վեց ժամուց. և արբցէ մէն մի մեծագոյն բաժակ աքուա տի քալչէ զկնի իւրաքանչիւր մասանց օՃառին. իսկ զմնացեալ ջուրն կրոյ արբցէ փոխանակ հասարակ ջրոյ ընդ մէջ Ճաշու, և ընթրեաց. և զկնի ստ ժամանակ ինչ գործածութեանն այսր դեղոյ պարտ է նկատել, եթէ զօրաւոր էցէ մարսողականութիւնն ախտակրին, պարտ է յայնժամ վերստին պատրաստել զջուրն կրոյ զօրաւորագոյն ևս:

Ալքալի քաուսթիքօ կամ լիշիվա տի սաբօնաի՝ է աղնուագոյն ամենեցուն դեղ 'ի գործածեալ յոյժմեան դարուս 'ի դիպուածս քարի: Դեղս այս բնութիւն է յոյժ դառնակսկիծ. վասն որոյ միշտ պարտ է 'ի գործ արկանել ընդ ախորժարար և բարեխառն իրս. որպիսի են արդանակն որթու, կաթն, ինֆուզիօնէ տի սէմէն լինս, կոմնա առապիքա, տէքոցիօնէ տի ռատիչէ տի ալթէա: Ախտակիրն սկսանիցի 'ի գործ արկանել զդեղս զայս նախ սակաւ քանակութեամբ զորօրինակ երեսուն կամ քառասուն շիթս, և աստիճան քան զաստիճան առաւելուցու ըստ տանելոյ ստամոքսի նորին: Ահա կերպն պատրաստելոյ ալքալի քաուսթիքօի: Առ երկու ունկի քալչէ վիվա, և մի ունկի՝ չէնէռէ տի թէռռառռ, կամ բօթասսա. խառնեա զայսոսիկ յիրեարս. և թող մինչև ցլուծանիլ 'ի մէջրաջուր, և ասէպ ասէպ խառնեա նախ քան

գ'ի գործ արկանելն։ Իսկ եթէ այս երկու գոյացութիւնք ոչ լուծանին առանձին, յաւելուլ արժան է սակաւ ինչ ևս ջուր։

Գոյ այլ ևս ազնուագոյն դեղ 'ի գիպուածս սխտիս, որ կոչի՝ ուվա սուրսինա. դեղս այս է օգտաւէտագոյն, և մարթի գասիլ 'ի կարգս վերոյիշեալ հռչակաւոր դեղորէիցն. և գրէ հեղինակն, եթէ ա-կանատես եղէ բազում անգամ զիրարձ առեալ օգտաւէտութիւն այսր դեղոյ. դեղս այս հասարակօրէն 'ի գործ արկանի յարգանակ կազմեալ, և չափն է 'ի մի տրամէ մինչև ցերկու, երկու անգամ յաւուրն. մարթէ և ևս առաւելուլ զչափն մինչև ցվեց կամ ցեօթն տրամ յաւուրն խառն ընդ մի լիտր հասարակ ջրոյ առանց երկիւղի։ Արդ 'ի վերոգրեալոցս ցայս վայր՝ քա-ջայայտ ճանաչի, եթէ շահաւէտագոյն դեղորայքն 'ի գիպուածս յայս՝ են ջուրն կրոյ, օճառն, աղքա-լի քառսթիքօ ևն։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս զանազան պէտակաց ջրգողութեան, որ ասի՝ իպրօբիղէա։

Ասատս այս է ուռուցումն ինչ բովանդակ մարմնոյ, կամ միայն ոմանց մասանց մարմնոյ, յառաջ եկեալ 'ի գոյացութէ ջրային հիւթոց. բազմապատիկ և զէապէս անուանս ընծայեմք այսմիկ ախտի ըստ զանազանութէ մասանցն, որք են ենթակայ ընդունելոյ զախտս։ Եթէ՝ յորժամ ջուրն տարածանի ընդ ամենայն մասունս մարմնոյ, յայնժամ անուանի՝ ոնազարքա, կամ լէուքօֆլէգմացիա, կամ իտուօբիզիա ճէնէռալէ. այսինքն ընդհանուր ջրգողութիւն։ Երկրորդ՝ եթէ ջուրն ժողովեալ մնայ միայն 'ի ստորին որովայնն, յայնժամ ասի՝ աշիթէ, կամ իտուօբիզիա տէլ պասսո վէնթռէ, այսինքն ջրգողութիւն ստորին որովայնի։ Երրորդ՝ եթէ ջուրն գումարեալ

զետեղն 'ի կուրծս, յայնժամ յորջորջի՝ խառօբիզնա ան բէթթօ, կամ խառօգօռաչէ։ Ապրրորդ՝ 'ի լինել ջրոյն 'ի գլուխն կամ 'ի յուղեղն, ասի յայնժամ խառօչէֆալօ, այսինքն ջրգողութիւն գլխոյ։ Հինգերորդ՝ յորժամ ջուրն փակեալ մնայ 'ի քսակի ինչ մասնաւոր՝ առանց բնաւ հաղորդութիւն ունելոյ և հոսելոյ յայլ մասունս մարմնոյ, յայնժամ առձայնի՝ խառօբիզնա սաքքաթա։ ընդ այս տեսակաւ են՝ ջրգողութիւն արգանդի, որ ասի՝ խառօբիզնա տէլլա մաթռիչէ, կամ ութէռօ։ և ջրգողութիւնն ձուարանի, որ կոչի՝ խառօբիզնա տէլլէ օվայէ։ և ջրգողութիւնն ֆալլօփիեան փողոց, զոր կոչեն խառօբիզնա տէլլէ թուպէ ֆալլօբբիանէ։ զնշանակութիւն սորա տեսցես ստորև 'ի կարգի իւրում։ և ջրգողութիւնն որովայնամաշկի, զոր կոչեն՝ խառօբիզնա տէլ բէռնիթօնէօ։ զորոց իւրաքանչիւրոցն ուրոյն ուրոյն ճառեսցուք։

ՅՕԳՈՒԱԾ Ա.

Յաղագս պոպճառաց անապարբա անուանեալ ջրգողութեան։ և յաղագս պոպճառաց ալիրնէի, այսինքն ջրգողութեան որովայնի։

Ախտքս այսոքիկ յոլով անգամ 'ի վեր երևին յանտրամադրութէ ինչ անդամոց, յրմպելոյ զոզի և կամ զայլ ամենայն ոգիաւոր հեղանիւթս։ և արդարև յայտնի իսկ է ճշդրտութիւն առածիս, որ ասի ||Ան-յագ արբշիռք յայս կենցաղիս, կարճեն ըզկեանս 'ի ձեռն ախտիս||։ Դարձեալ, պակասութիւնն շարժմանց մարմնոյ՝ է հասարակ և ընդ հանուր պատճառք այսր ախտիս։ և յայն սակս յերկարանիստ, և յանշարժական անձինս յաճախ գտանին ախտքս։ Բազում անգամ պատճառին ևս 'ի սաստիկ ինն լուծողականութէ, 'ի յաճախակի և յանչոփս հոսմանէ արեան, 'ի դժնդակ և 'ի կարի զօրաւոր փսխողականէ, 'ի ծորեցուցմանէ լորձանաց։ ևն։ Դարձեալ, յանկարծօրէն, և յանակնկալ ինն ընդունելութենէ սովորական և կարևոր լուծմանց որովայնի, 'ի սոէպ սոէպ ոստոստելոյ, որպէս առնեն կաքաւօղքն։ 'ի յարգել-

մանէ քրտանց տուից, 'ի ցրտագոյն ջրոց՝ յորժամ անչափապէս ըմպէ ոք զկնի աշխատանաց, և քրտնելոյ. 'ի տարժանաւոր իմն ճանապարհէ, 'ի բնակելոյ 'ի խոնաւուտ և 'ի ցածագոյն տեղիս. վասն որոյ ախտքս այսոքիկ հասարակօրէն տիրապետեն 'ի ձորաբնակս. որպիսի են բնակիչք քաղաքին Հոլանտիոյ. յերկար ժամանակս 'ի կիր արկանելոյ սակաւ մնուցիչս և դժուարամարսելիս։

Այլև պատճառիլ մարթի և սովորաբար ներգործութիւնք այլոց ախտից, որպիսի են՝ դալուկն, այտուցն, և կարծրութիւնն լերդի, փորհարութիւնն, աբիւնախառն որովայնալուծութիւնն, իմբիէման, թաղէն, թոքաժետութիւնն, երկարատև տենդքն, ևն։ Եւ վերջապէս յայնմ ամենայնէ, որք են պատճառ խափանելոյ զարտաշնչութիւն մարմնոյ, կամ զպատշաճական շրջանս արեան։

Յաղագս մասնաւոր պատճառաց անապարդի, և աչիռնէի։

Մասնաւոր և սեպհական պատճառքն այսորիկ տեսակի ջրգողութեաց՝ են ապականութիւնքն արեան, թուլութիւնն ընդհանուր, հաստատութիւնն անզօրութեան, ամիսոիւմն մանրաթելից, որք զետեղեալ կան 'ի մկանունս, և յայլ մասունս կենդանւոյն, երբեմն և պատճառի 'ի խցանաց աւիշկեան անօթոց. և այլ երբեմն 'ի թանչից, որով ընդ երկար վչտանայ և տագնապի հիւանդն, 'ի կարի և յանչափ երակ հատանելոյ, յերկարապէս որովայնահոսութենէ, 'ի լիէնթերիա անուանեալ ախտէ, և յայլ ամենայն ախտէ, որով մամացայնն կամ մարսողական զօրութիւն տկարանայ, և լինի անյաջող 'ի մասամբ արարել և 'ի բաշխել զնպաստս կազմուածոց։ Դարձեալ, պատճառի 'ի կորստենէ արեան, յառատութենէ շնչկային և իւղային հիւթոց, յայլայլութենէ խժային հիւթոց, յայտուցմանէ լերդի, և փայծեղան, 'ի խցմանէ մեսենտրական մատանց։

Յաղագս մասնաւոր նշանաց անապարդի։

Հասարակօրէն ոտքն և սրունքն սկսանին ուռիլ, և նշանաւոր ուռոյցն 'ի վեր երևի յընկղմանիլն. և 'ի ծագիլ առաւօտու փարատիլ սկսանին, և 'ի մնալն

զմատունս յուռուցեալ մատունս մարմնոյ, մանաւանդ յերեկոյեան պահու, տպաւորի 'ի նմա, և տեղիքն մնան փոսաձև։ Այսուցն առ սակաւ սակաւ վերանայ, և եւանէ 'ի մէջս, 'ի բազուկս, և մինչև ցգլուխն։ և իսկ և իսկ շնչառութիւն դժուարանայ, և մէզն յոյժ նուազի, և հասարակօրէն սպիտականայ, և երբեմն և կղմնտրագոյն երևի, մանաւանդ եթէ տարածանի յորովայնն ատորին, և կամ փոխանցէ 'ի լեարդն։ Ախտաժեռեալն ունի ծարաւ սաստիկ, որովայնն է փակեալ, շնչառութիւն յոյժ նեղեալ, քիրան բնաւ ուրեք ոչ գտանի, այլ եթէ գտանի և՝ կարի նուազ և բռնի։ բայց յայսոցիկ նշանաց ախտակիրն կրէ զնեղութիւն սրտի, և զծանրութիւն, և զտենդ նմին ծիւրական, որ ասի՝ ֆէպպռէ էթիքա, և հազս կարի տարժանաւորս։ այս յետին նշանս՝ հասարակօրէն ցուցակ է ախտաւորութեան փայծեղան։

Յաղագս սէպհական նշանաց աղիքէի, այսինքն ըրգողութեան որովայնի կամ սպորին որովայնի։

'Ի դիպուածս ախտիս՝ բայց 'ի վերոգրեալ նշանաց, ըրգողութիւն որովայնի լինի յոյժ այտուցեալ, և 'ի գնալն զմի թաթ ձեռին 'ի վերայ միոյ կողման որովայնի, և միւսով թաթիւ թեթևապէս հարկանելով զմիւս կողմն, իսկոյն 'ի նեղքս անդ լսելի լինին ձայնք կամ որոտք փքոց։ Մէզն կարի նուազ լինի, կարմիր կամ կղմնտրագոյն, ոսքն ուռուցեալ, մանաւանդ յերեկոյեան պահու, իսկ դէմքն ընդ առաւօտն։ և բազուկն՝ յորոյ վերայ ընկողմանի հիւանդն, մնայ կարկամեալ, և ծարաւն անքնհատ։ Եւ որքան ընանի որովայնն փքով, այնքան 'ի վեր եւանէ ախտֆռակմա անուանեալ թաղանթն։ ուստի դժուարութիւն մեծ կրէ 'ի տուրևառութեան շնչոյ, մանաւանդ յընկողմանիլն։ Զարկ բաղկերակին լինի թոյլ՝ բայց ստէպ ստէպ։

Ախտակիրն ոչ հեշտեաւ ընկողմանի 'ի վերայ թիկանց առանց ուրուք ձեռնտուութեան։ նեղի և տաղնապի ջրագոյն լինն հազիւ, և երբեմն և արիւնախառն թուքս և լորձունս ընդ բերանն արձակէ։ Հուսկ յետոյ դեղնութիւնն երեսաց, ախտն սրտի, յամր տենդն, փքոտութիւնն, պնդութիւնն որովայնի, նիհարութիւնն վերին մասանց ևն, են առաւել ընդհա-

նուր նշանք այսր ախտի։ Որովայնն պարպտոի իբ-
րև զփամփուշտ օդալիր, և երբեմն իջանէ մինչև 'ի
ծունկս, և ջուրք արտահանին, և արձակին յամե-
նայն կողմանց. և ոմանք յախտակրաց յառողջութի
պատսպարին 'ի ձեռն այգպիսի նպաստաւորութեան
բնութեն. բայց այգպիսի դիպուածք յոյժ սակաւք
պատահին, և այն ևս յառոյգ հասակի եղելոց։ Իսկ
եթէ անցեալ իցէ զաւուրքք ախտաժեռեալն, հասա-
րակօրէն փոխարկի 'ի քաղցկեղ, և ինքն մահակործան
լինի։

Այլ երբև ջրգողութենն անազարքա, և ջրգողու-
թենն որովայնի 'ի միասին գտանին, յայնժամ ախտն
լինի յոյժ վտանգաւոր. թէպէտև ինքն ջրգողութենն
որովայնի միայնակ ևս գոլով՝ հազիւ ուրեք է ապաքի-
նելի, և փարատելի։ Եթէ յառաջ դայ 'ի լեռնքո-
ֆլէմացիա անուանեալ ջրգողութէ, որ պատճառի 'ի
մեծագոյն ինն կորստենէ արեան, կամ յայլ ինչ և
իցէ պատահարէ, մարթի դարմանիլ հեշտեաւ, և ա-
ռանց աշխատանաց. բայց եթէ յառաջ դայ 'ի լու-
ծողութէ կամ 'ի հոսմանէ բնական կարգաւ պատա-
հելոյ, յայնժամ լինի առաւել տարժանելի, և դըժ-
ուարաբուժելի։ Ա՛ռ է պարտ բնաւ յուսահատիլ,
եթէ ախտս այս պատճառի 'ի սուր և 'ի դժնդակ
ինչ ախտէ. որպիսի են տենդն անընդհատ, տենդն
հանապազօրեայ, շնչարգելութենն. ևն։ Այլ յայն-
ժամ պարտ է երկնչիլ և անյոյս լինել՝ յորժամ յա-
ռաջ դայ 'ի յերկարատև ինչ ախտէ, որ գոյանայ 'ի
մէջ աղեաց, 'ի թոքաժեռութէ, և 'ի լերդացաւուէ։

Յախտէս յայսմանէ որ ասի՝ աշնթէ, այսինքն ջրգ-
ողութենն որովայնի, համարի թէ աղջկունք, և կա-
նայք առաւել բարիոք և դիւրագոյն ճանապարհաւ
բժշկին, քան թէ արք. որովհետև 'ի նոսա չլինի
այնքան դժնեայ և զօրաւոր, որպէս միւս այն ախտն,
որ ասի խառօքիզիա սաքքաթա։ Եւ եթէ յառաջ
դայ 'ի սոսկալէս արգելմանէ միզի, առանց ընթա-
ցակցուէ այլ ինչ արտաքին ախտի, որպէս պատահի
երբեմն, յայնժամ յոյժ դիւրաւ և փութով է դար-
մանելի, և բուժելի. յայդպիսի դիպուածս դէպ լի-
նի երբեմն, եթէ առանց երիք դեղոցէից՝ միայն բը-
նութենն նպաստաւորութիւն գտանի առողջութի, որ-
պէս հասարակօրէն հոսմամբ միզի, և երբեմն ևս լու-
ծողութիւն որովայնի։

Դարձեալ, համարի եւ՝ եթէ ախտս այս մարթի տպագրիչ արտահանմամբ ջրոյն 'ի պորտոյ բնական ինն եղանակաւ, որպէս յոլով անգամ առնեն վիրաբուժքն եւրոպիոյ։ Այլ եթէ ընդ ախտիս զուգընթաց լինի և տաղակութի, թալկութի, վատակրութի, մէզն կարմրերանգ և կարի հոտուն տեռատեսական արեան, թքանեալն զարիւն, տենդն՝ ընդ որում համընթաց գոտանի ռիսիբօլա անուանեալ պալարն էն, են նշանք և պատահարք կարի դժպհիք։ Ջորագոյն և յաճախակի հաղն տայ երկնչիլ վասն ախտաւորութէ լերդի, և գուշակ է ջրգողութէ կրծոց։ Փսխումն և լուծումն որովայնի կարեն լինել 'ի սկզբանն կարի օգտակարք և փրկարարք, բայց յարատեւէն՝ պարտ է երկնչիլ։ Յորժամ ախտս այս պատահի յղի կանանց 'ի յղութէ նոցին՝ երբեմն մարթ է նոցա գիւրաւ ազատիլ յախտէս, արտահանելով զջուրս ինչ 'ի ծնանիլն անդ։ բայց երբեմն հաստատեալ մնայ ուռուցեալ եբրև զառաջինն ըստ օրինակի յղեաց։ Ախտս այս կարէ ձգիլ յերկար ժամանակս։ քանզի ականատես եղաք բազում անգամ, եթէ ոմանք ստացեալ զախտս զայս կրեցին զնոյն առաւել քան զտասն, և զ12 ամս մեծաւ թշուառութիւն։

Յաղագս խնամապարութեան և կառավարութեան անապարտս, և աշխատանաւոր ջրգողութեանց, յորժամ 'ի վերայ հասանէն ըստ պատահման, և էնրնակայն ինչ բարեկազմ։

Այսպիսի ախտակրի պարտ է ժուժկալել որքան հնարաւոր եցէ՝ յամենայն ըմպելեաց, մանաւանդ 'ի ջրային հեղանիւթոց։ Սակայն եթէ հարկ 'ի վերայ կայցէ տալ նոցա ըմպել առ 'ի շինչուցանել զծարաւն, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զշիճուկն կաթին՝ պատրաստեալ ընդ մանանխոյ, կամ այլ ինչ թթուով, որպիսի են հիւթն կիտրոնի, կամ նարընջոյ, և կամ աչէթօղաի։ Ուտելեացն արժան է լինել չոր, և ջերմացուցիչ, և բնութիւն միզաբերք։ այդպիսի են հացն խորովեալ, և խորոված միսն որպիսի և եցէ վայրենի անասնոց։ Դարձեալ, 'ի խոտեղինաց, որք են բնութիւն ջերմացուցիչք և գրգռիչք, որպիսի են մանանեխն, նասթուրցիոն, ռաֆանոս ռուստիքանոս, խստորն, սոխն, և պաքսիմատն թաթախեալ 'ի սակաւ ինչ գինի, կամ յողի, որք բաց

'ի անուցիչ զօրութիւն, ունին ներգործութիւն ինչ մասնաւոր 'ի շինչուցանել զծարաւն։ Որմանք յախտաւ կրաց գործածութիւն ասացեալ կերակրեղինաց միայն ստացան զկատարեալ առողջութիւն։

Շարժումն և շրջագայութիւնն եթէ կարելի իցէ հիւանդին, մեծապէս շահաբեր է և օգտակար 'ի դիպուածս ախտիս. սմին իրի պարտ է նմա ստէպ ստէպ գնալ աշխատիլ և գործել զերկիր. և յայլ այգպիսի շարժողութիւնս յարատևել որքան հնարաւոր իցէ։ Իսկ եթէ ապիկար լինիցի առ այդպիսի շարժմունս, հեծեալ'ի ջորիս գնայցէ ըստ կարողութեան. և յայնժամ ևս այդ օրինակ շարժումն լինի կարի օգտաւէտ։ Անկողինք ախտակրիս պարտին լինել յոյժ կարծր, և օդն սենեկին ջերմ և չոր. իսկ եթէ օդն քաղաքին իցէ խոնաւ, պարտ է փոխել զբնակուին, և երթալ 'ի տեղիս ուրանօր գտանի օդն ջերմ և չոր։ Հուսկ յետոյ 'ի մի բան բովանդակեալ զամենայն ասեմ, եթէ արժան է'ի գործ արկանել զամենայն միջոցս, և զհնարս, որով մարթ իցէ դրդռել և շարժել զարտաշնչութեանն մարմնոյ. նմին իրի յոյժ բարիոք է յաւուրն երկու կամ երեք անգամ շփել զմարմին հիւանդին չորացուցեալ չուխայիս, կամ մորթով ևն։

Դարմանք և դեղորայք 'ի վար արկանելիք 'ի դիպուածս ջրգողութեան։

Եթէ ախտակիրն լինիցի երիտասարդ, և ունիցի զբարեկազմ խառնուածս, մարթ է նմա պատասխանել 'ի կատարեալ առողջութեան 'ի ձեռն սաստիկ և կարի զօրաւոր փսխողականաց և լուծողականաց, և 'ի ձեռն դեղորէից, որք ընդունակ իցեն 'ի դրդռել և 'ի շարժել զմէզն, և զբիրան։ Աւ կէս արամ իբէքքաքուանա փոշի արարեալ, ընդ կէս ունկի՝ օսանմէլ շիլլիթիքօի՝ մարթ է յօրինել փսխողական ինն կարի վայելուչ և պատշաճական վասն չափահասակաց, բայց միջահասակաց երկու կամ երիս աւուրս 'ի մէջ փսխողականացն. զգոյշ լինել պարտ է, զի մի առատօրէն, և յանչափս ջուր արբցէ, մինչև խանգարեալ եղծանիլ զօրութեանն նորին. այլ մի կամ երկու բաժակ գաղջ ջուրն երիցկի շատ լիցի տալ 'ի գիւրապատարաստել զներգործութեանն։ 'Ի միում աւուր 'ի

միջահատուածեան զինի փսխողականին, տուր ախատակրին և զհետագայ լուծողականն։ Առ կէս տրամ՝ եալաբբա փոշի արաբեալ. երկու տրամ՝ քուէմօռ ոչ թառթառ, և վեց ցորեան քալօմէլանս. և զանգեալ ընդ բաւականաչափ շիլօբբս տի ռոզաի՝ արա մի կամ երկու հատագեղ, և կանխաւ ընդ առաւօտն տուր կլանել կամ ուտել ախատակրին. և յետ այնորիկ որքան սակաւաչափ ջուր ըմպիցէ, այնքան բարիոք և օգտաւէտ լինի. այլ եթէ յոյժ նեղեալ տագնապի 'ի ծարաւոյ, մարթ է երբեմն տալ ըմպել փոքրիկ սկահակաւ զսրգանակ հաւու։

Դարձեալ, պարտ է ախատակրիս յերեկոյեան պահու յերթալն յանկողին 'ի կիր արկանել զյետագայ դեղն։ Առ չորս կամ 5 ցորեան քանֆիօրա, և մի ցորեան՝ օբբիս. և զանգեալ ընդ բաւականաչափ շարաղն նարնջոյ, որա մէն մի հատ, և տուր կլանել. յորմէ սովորաբար զհետ գայ թեթև քիրան. մարթ է և ևս 'ի գործ արկանել երբեմն սակաւ քանակութիւն զշինուկն կաթին պատրաստեալ գինեաւ. և ևս մարթ է 'ի վերայ ասացեալ շնչկի յաւելուլ փոքրիկ գրգալ մի՝ սբիրիթօ տի քօռնս տի չէռվօ։

Դարձեալ, յամենայնում աւուր 'ի չորս կամ 'ի հինգ ժամու միանգամ նոյնպէս փոքրիկ ինն գրգալիս պարտ է 'ի վար արկանել զյետագայ դեղորայքն։ Ընկակ քօքօլէ տի ճինէբռս, սէմէն տի սէնաբէ, ռատիէ տի ռաֆանս ռուստիքանս. յիւրաքանչիւրոյն կէս կէս ունկի՝ և կէս լիտր չէնէռէ տի ճէնէսթռա։ Եւ խառնեալ ընդ միքսեատ ռէնս անուանեալ գինւոյ, կամ ուժգին ալիռռաի, թող մարսիլ 'ի միմեանս՝ ընդ միջոց քանի ինչ աւուրց. և ապա զտեալ 'ի գործ արկ։ Նոքա՝ որք ոչ կարեն 'ի ձեռս բերել զասացեալ դեղորայս, պարտին 'ի գործ արկանել զնաշուն սէնէկալ անուանեալ արմատոյ, որ ևս է յոյժ քրանաբեր, և օգտակար։ Ականատես եղէ միանգամ, եթէ կրօղ ոք ախտիս անազարբա՝ բուժեալ ապաքինեցաւ միայն 'ի ձեռն մոխրոյ ճէնէսթա անուանեալ ծառոյ խառնելոյ ընդ գինւոյ։

Բայց 'ի ասցանէ, և 'ի ասցին նման դեղոց՝ է և այլ ինն գեղ յոյժ միջաբեր և կարի պատշաճական 'ի գիպուածս ախտից ջրգողութեց, զոր և 'ի բազում ժամանակաց հետէ բազում երևելի բժիշկք եւրոպիոյ 'ի կիր առին, այն ինքն է տիճիթալէ բուռբու-

ռէա, յորմէ պարտ է առնուլ մի կամ երկու ցորեան յաւուրն։ Զայս դեղ բազմօրինակ գրեմ տալ ախտաժեռաց։ Զոր օրինակ. 'ի չորս ունկի հասարակ ջրոյ, որ քաղցրացուցեալ իցէ շաքարաւ՝ որչափ և կամք իցեն, արկանի երկու կշեռ ցորեան՝ 'ի վերոգրեալ տիճիթալէէն, որ լինի ըմպելի ինչ ախորժելի քմաց, և նման հասարակ օշարակի. թող զնատնուրդս զայս մարսիլ 'ի միմեանս ընդ միջոց քսան և չորս ժամուց. յետ այնորիկ զտեա զայս, և տուր ըմպել ախտակրին չորս բաժակ չորս անգամ յաւուրն։ Երբեմն ևս գրեմ տալ երկու ցորեան 'ի վերոյիշեալ տիճիթալէէն՝ յաւելլով 'ի նոյն մի և կէս տրամ սէնէկա, և վեց կամ եօթն ունկի հասարակ ջուր, և թող եռալ՝ մինչև ցսպառիլ կիսոյ ջրոյն, և ապա զտեա և տուր ըմպել ախտակրին 'ի միջոց երկոտասան ժամուց՝ ըստ չափու միոյ ունկեւոյ։ Այս տիճիթալէ բուռբուռէան ունի և զմեծասակար որակութիս, որ 'ի վեր երևի 'ի գործածուէ յարատևաբար. զորմէ տեսցես լեռվին 'ի տառն Տ. 'ի կարգի իւրում։ Նոյնպէս օգտաւէտ է արգանակն չինգուէ ռատիչի աբէռիէնթի անուանեալ արմատոց։

Յաղագս կառավարութեան և դեղորդիոն ջրգողութեանց անապարտի և աշիութի, և յայլ ամենայն դիպուածս՝ յորում. 'ի վերայ գան ըստ պատահման։

Կառավարութեան և դեղորայքն, զորմէ վերագոյնդ խօսեցաք, պատճառեն զառողջութիւն ըստ պատահման միայն՝ եթէ ախտակիրն վիճակեալ իցէ բարեկազմ բնութեամբ. իսկ եթէ ախտքն 'ի վեր երևին 'ի վատթար ինչ նիւթոց, կամ յապականութենէ ինչ գոյացելոյ 'ի ներքս աղեացն, յայնժամ չէ օրէն 'ի գործ արկանել զփսխողականսն, և զկարի զօրաւոր լուծողականսն։ Յայսպիսի դիպուածս պարտ է շատանալ նպաստամատոյց լինելով բնութեան 'ի ձեռն դեղորդիոց, գրգռելով զպատուցողական զօրութիսն միզի, և պահելով զզօրութիւնն հիւանդին, 'ի գործ արկանելով միայն զՋերմագին, և զսնուցիչ բօռաիալս։ Գերազանց դեղ իմն է նիթռօն՝ առ 'ի շարժել զարտաթորումն միզի. քանզի ակամաւես իսկ եղէ, եթէ երիտասարդ. ումն ապաքինեցաւ 'ի դժնդակ իմն ջրգողութէ, որ համարեալ էր անբուժելի և անդարմա-

նելի, միայն 'ի ձեռն այսորիկ գեղոյ, յամենայնում առաւօտու՝ առնելով մի տրամ նիթռօ, բաժակ մի պիռռաթիւ խառնեալ։

Փոշին մինսոխոյ, որ ասի՝ բօլվէռէ տի սգուիլլէ, է նմանապէս գեղ իմն ազնիւ, վեց կամ եօթն կշիռ ցորեան ընդ 24 ցորեան նիթռօի, և բաժակ մի աղ դու կինամոնի ջրով, յաւուրն երկու անգամ 'ի գործ արկանելով։ Դարձեալ, ականատես եղէ բազում անգամ 'ի դիպուածս սիտիս՝ մեծի շահաւէտութեան քռէմօռ տի թարթառօի, որ լուծանէ զորովայնն, և զմէզն. և այս յոլով անգամ պատճառէ զառողջութիւն, եթէ յարատև 'ի գործ արկանի 'ի պատշաճաւոր ժամանակի։ Պարտ է սկիզբն առնել յերկու կամ յերիս աւուրս 'ի գործ արկանել զմի ունկի, և առ սակաւ սակաւ առաւելուլ մինչև ցերկու կամ ցերիս ունկիս, եթէ տանիցի ստամոքսն առ այս. և չէ հարկ զմի ունկին միանգամայն առնուլ, այլ բարիոք և է բաժանելն յերիս կամ 'ի չորս մասունս։

Դարձեալ՝ գեղ իմն ազնուագոյն, և յոյժ վայելուչ, զոր սովոր են 'ի գործ արկանել 'ի հիւանդանոցն լոնտուայի, է այս։ Առ երկու տրամ ռատիչէ տի ծէնտոռուիս, և նոյնչափ կինամոն փոշի արարեալ, զփոշիացուցեալ կեղևն մինսոխոյ, զնաշնգեղ, զհատապտուղն գիոյ, և զաղն օշնդրի, յիւրաքանչիւրոցն մէն մի տրամ։ Չորս խառնեալ 'ի մի և կէս քսեատ հնագոյն գինւոյ, թոզ մարսիլ 'ի միմեանս՝ ըստ միջոց քան և չորս ժամուց. յետ այնորիկ զտեալ և 'ի գործ արկ ըստ հաճոյիցդ յաւուրն երիցս կամ չորս անգամ։ Նոյնպէս շահաւէտ է միլէբիէտին ըստ չափու կիսոյ տրամոյ երկիցս անգամ յաւուրն։

'Ի դիպուածս անազարքա անուանեալ ջրգողուճ սովորութիւն է առնել երբեմն թեթև ինչ ցեռուին յոտս կամ 'ի սրունս, որով երբեմն ջուրքն արտահանին այսու ճանապարհաւ. բայց զդոյշ լինել պարտ է վերաբուժին՝ զի մի 'ի կարի խորագոյնս ցեռեսցէ, և անդր քան զմորթն անցանիցէ։

Դարձեալ, է և այլ գեղ, որ առանց զայրացուցանելոյ գրգռէ զմէզն և զթուքն. և է այս։ Ընկալ կէս տրամ՝ փոշի մինսոխոյ, և կէս ունկի՝ սալէ տի սոտա. և բաժանեա զայս 'ի 12 հաւասարաչափ մասունս, և պարտ է ախտակրին ընդունիլ յամենայն երեք ժամու մէն մի մասն 'ի վերոյ բաժանեալ գե-

զոյն մինչև ցչորս կամ ցհինգ անգամ յաւուրն, և վերբաբմպել արժան է բաժակ մի հասարակ օշարակ, որ թթուացեալ ելցէ փոքրիկ դրդալ մի քացախով, կամ հիւթուն կիտրոնի։ Դարձեալ, պարտ է 'ի գործ արկանել ֆոմէնդի սբիրիթոզի, և տէքոթթոտի քինա՝ առ'ի աճապարեալ արգելուլ զքաղցկեղն՝ որ հասարակօրէն սովոր է ընդ առաջ ելանել 'ի դիպուածի սատ։

'Ի դիպուածս ջրգողութեան աչեթէի 'ի գերև ելանել լուծողականացն և քրտնաբերիցն, հարկ է յայնժամ ծակել զփոր ախտակրին առ 'ի հանել արտաքս զգումարեալ շիճուկս կամ ջուրս։ 'Ի գործածութեան է այդ հասարակօրէն, յորմէ և չէ մարթ 'ի վեր երևիլ երիք վտանգի. բայց եթէ ըստ պատահման ծակեալ ելցէ ինչ 'ի փորոտեացն սակս ընդ երկար ժամանակս մնալոյ նոցին 'ի մէջ ջրոցն կամ շիճկացն, յայնժամ չունի ինչ նեղգործութեան ծակումն։

Ընդհուպագոյն դեղ ելմն է առ 'ի դուրս վանել զշիճուկս կամ զջուրս 'ի դիպուածս ջրգողութեան աչեթէի, այսինքն որովայնի, որով առաջի աչաց իմոց ապաքինեցաւ ոմն յախտէս, և է այս։ Առ մի և կէս ունկի՝ հիւթն երկրորդ կեղևոյ սամպուքս յորջորջեալ ծառոյ, որ ասի՝ սուքս տէլլա սէքսնտա սքօռցա տէլ սամպուքս՝ յաւուրն չորս անգամ խառնեալ երկու դրդալ սպիտակ գինեաւ։ Բազում անգամ զփորձ առի այսորիկ դեղոյ, և'ի գործ արկի 'ի բազում յայլ դիպուածս, թէպէտ ոչ միշտ պատճառէ զկատարեալ առողջութիւն, բայց միշտ նեղգործէ և արտահանէ զջուրն կամ ճանապարհաւ կղկղանաց, և կամ միզի։ Բազում անգամ դէպ լինի, զի դեղս այս պատճառէ զփսխումն, և այս յառաջ գայ յոլով անգամ 'ի պարուրելոյ ստամոքսի. և յայնժամ պարտ է միջահատել զգործածութիւն դեղոյս, և յօրինել զփսխողական ինն պատշաճաւոր հասակի և զօրուն ախտակրին, և յետ այնորիկ վերստին մատուցանել զդեղն, որ բազում անգամ օգտաւէտ լինի. իսկ եթէ փսխէ կամ ործայ զդեղն, յայնժամ չէ օրէն 'ի գործ արկանել և ոչ իսկ զփսխողական։

'Ի վախճանի եթէ անազարջա կամ աչեթէ անուանեալ ջրգողութիւնքն պատճառին 'ի խցողութենէ ինչ լերդի, կամ փայծեղան, կամ մեսենտրի ևն, յայնժամ ընդունայն է աշխատանքն, և վատնակն 'ի բու-

ժուն նորին, բայց եթէ 'ի գործ արկանիցին դեղորայք ինչ սեպհականք, որովք մարթ ի՛ցէ եղծանել և ջնջել զիցողութիւնն. որպէս ունիմք խօսիլ 'ի դլուխս լէ։

Յառաջելոցս ցայս վայր քաջայայտ երևի, եթէ զիարդ դժուարաւ բուժելի են ջրգողութիւնքս այսքիկ. ամին իրի փոյթ մեծ ունել պարտ է բժշկին իսկ և իսկ 'ի գործ արկանել զվերոյիշեալ դեղորայքս, և զկառավարուելս մինչև ի՛ցեն ախտքս հաստատեալք։

Յաղագս ի՞նչ զի՞արդ պարտ ի՛նչ կառավարել զախտակիրն 'ի դէպուածս յորում հոսին ջուրքն, և յաղագս հնարիցն որովք արգելանի վերադառնալն նորին։

'Ի դիպուածս, յորում ջուրքն հոսին, պարտ է 'ի գործ արկանել ախտակրին զդեղորայս զօրացուցիչս, որպիսի են՝ քինա, էլիսսիռէ տի վիթռիօլ, համամունք են, 'ի վերոյ որոց յաւելուլ և զբաւական անաչաւ խաշնդեղ, և զամենայն արկեալ 'ի գինի են։ Կերակրոցն պարտ է լինել չոր և սնուցիչ, և ախտակրին պարտ է միշտ շարժումն առնել ըստ կարողութեան առանց խոնջելոյ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս ջրգողութեան կրծոց, որ կուի՝ էպուՀիպիա կամ ԲԷՐՐՈ։

Ախտս այս սովորաբար ունի ընթացս ինչ կարի դանդաղկոտս, և պատահի առաւել 'ի ծերունիս, 'ի յերկարատև ախտագնեալս, 'ի բարձրաձայն երգօղս, որոյ նշանքն են յոյժ անյայտ և անստոյգ. մինչև բազում անգամ ոչ իմացեալ լինի, բայց եթէ զկնի մահուանն բանալով, և յօշոտելով։ Ախտս այս ոչ է միշտ միօրինակ, մանաւանդ եթէ յառաջ գայ 'ի թոքաժեռութէ, 'ի շնչարգելութենէ, և յայլ ախտից կրծոց։ Բայց երբեմն դիւրաւ ճանաչի, յորժամ կախեալ կայ 'ի տարբեր ախտից, որպիսի են խոզք կամ խոյլ պոչրանոցի, աքօռպուլթօ անուանեալ ախտն, գաղղիական ախտն, ջրգողութի որովայնի, և։

Յաղագս նշանաց ջրգողութեան կրծոց։

Ընդհանրապէս 'ի յարակցութենէ ոմանց նշանաց եւթն մարթ է ճանաչել, եթէ գտանի ախտս այս։ Առաջինն այսոցիկ նշանաց՝ է ստէպ ստէպ և դըժուարաւ շնչառութիւն, մանաւանդ 'ի գիշերի 'ի սկզբան անդ քնոյ, յորում յոյժ առաւել դժուարանայ։ Ոմանք յախտակրաց այնքան տուառապին և նեղին, մինչև ոչ կարել ընկողմանիլ 'ի վերայ անկողնոյն, և ոչ կարեն զշունչ առնուլ, բայց եթէ նստելով կորացեալ յառաջկոյս։ Իսկ միւս նշանքն յառաջ գան 'ի ծանրութէ ինչ, զոր զգայ հիւանդն 'ի վերայ սառծանի անուանեալ թաղանթի կամ միանի, հանդերձ ցաւով իւեք 'ի վերայ կրծոցն, կամ 'ի յուսս, կամ 'ի բազուկս։ Հաղն միշտ լինի չոր՝ քան թէ խոնաւ։ ոմանք 'ի սկզբան ախտիս թքանեն զարիւն։ Իսկ և ոմանք ոչ թքանեն, և ոչ իսկ հազս ունին։

Սովորաբար ը ախտիս զուգընթաց լինի և ջերմութի ինչ մեղմ, որ ասի ֆէպրուէ լէնթա։ զարկ բազկերակին լինի մանր, անհամաձայն, և ընդհատ։ ծարաւն երբեմն լինի սաստիկ, բայց ոչ որպէս 'ի դէպուածս ջրգողուէ որովայնի։ Սովորաբար ուռոյցն 'ի վեր երևի 'ի շրթունս, 'ի ձեռս, 'ի արունս, 'ի կուրծս, 'ի բազուկս, և 'ի դէմս։ որովայնն լինի ոնդագոյն, և եղունգն կարկամեալ, ևն։ Են և այլ նշանք, որպիսի՝ գողգոջումն սրտի, քիրտն գիշերային, ցաւն միջաց, նուազութիւն կամ առատութիւն միզի, և այլ պատահարք հասարակք միւս ախտից։

Խնամապարանքք՝ դեղերայք պահանջեալք 'ի դիպուածս անոքիս։

Եթէ ուրեք ուրեք առձայնի ախտս այս անբուժելի, պարտ է 'ի միտ առնուլ, եթէ այդ ասի ոչ վասն պակասութէ դեղորէից՝ 'ի ձեռն որոց մարթ եցէ դիմամարտիլ ընդ ախտիս։ քանզի դեղորայքն, որոց վասն վերադոյնդ խօսեցաք, մարթին երբեմն 'ի դիպուածս յայս գալ 'ի պէտս։ որպէս մինսոին, օսսիմէլ շիլլիթիքօն, օղեաւ բաղադրեալ մինսոին, օշարակն մինսոյոյ, ևն, են առաւել նէրգործիչք 'ի դիպուածս ջրգողութէ կրծոց։ Նոյնպէս և քէռմէզ

մինէռալէն ըստ կարծեաց բազմափորձ և հմտագոյն հեղինակաց՝ է դեղ իմն կարի ազնիւ և օգտաւէտ։ Օշարակն մինսոխոյ, որ ասի՝ օսիմէլ շիլլիթիքօ, փոքրիկ գրգալ մի եդեալ 'ի սկահակ և խառնեալ արգանակաւն թիլլիս անուանեալ ծաղկան՝ տուր ըմպել ախտակրին յաւուրն երկու անգամ։

Դարձեալ, ընկալ աքուա տի պօռռաձինէ, և տի քառասն անթօ՝ յիւրաքանչիւրոցն երկու ունկի, մի ունկի՝ օսիմէլ շիլլիթիքօ, և երկու ունկի՝ շիլօբբօ տի թուսիլլաձինէ. խառնեա՛ բարիոք, և տուր հիւանդին յամենայն ժամու մի կամ երկու գրգալ։ Իսկ յորժամ 'ի գործ արկանի օշարակն մինսոխոյ, յայնժամ պարտ է 'ի բաց թողուլ զօսիմէլէն, կամ շիլօբբօ տի թուսիլլաձինէն, և խառնեալ 'ի միասին զօշարակն մինսոխոյ ընդ նոյնչափ ջրոյ 'ի գործ արկանել, զոր պարտ է բաժակաւ մատուցանել, կամ խառնել ընդ հասարակ ըմպելւոյն։ Ջքէռմէզ մինէռալէն արժան է 'ի սակաւաքանակ մատուցանս բաժանել 'ի կէս ցորենոյ մինչև ցմի ամբողջ, և խառնեալ ընդ շաքարի 'ի գործ արկանել յաւուրն երիցս կամ չորիցս անգամ յարատեւել ընդ երկար ժամանակս։

Հարկ է լուծողականս յօրինել ախտակրիս երբեմն նապէս ընդ շիլօբբօ տի սբին չէրվինօի, կամ սոսկ մի և կէս ունկի ջրով խառնելոյ ընդ. շիառաբբաի հետոտգոյ եղանակաւս։ Ընկալ շիառաբբա փոշի արարեալ կէս տրամ, և եռացո՛ զայն մի բաժակ ջրով. յորոյ վերայ յաւելՀ կէս ունկի՝ սբին չէռվինօ։ Բայց երբեմն հարկ լինի հապ կազմել. և յայնժամ այսպէս կազմեա՛։ Ա՛ռ շիառաբբա 12 ցորեան, 24 ցորեան փոշիացուցեալ ռապառպտռօ, և կէս տրամ քռէմոռ տի թառթառօ, և շիռօբբօ տի սբին չէռվինօ բաւականաչափ առ 'ի կազմել երկու կամ երեք հատոտգեղս։ Դեղ իմն ազնիւ և գերազանց քան զայլ դեղորայս՝ զորոց ցայս վայր խօսեցաք, է բառաչէնթէզին, այսինքն շիճկահանութիւն կամ ջրահանութիւն, որ է գործողութիւն ինչ վիրաբուժից, եթէ քաջաբուհատ բժիշկն 'ի ձեռն նշանաց քաջ 'ի միտ առցէ զիսկութիւն ախտիս. որով մարթի է արմատաքի խլել զախտն. բայց պարտ է միշտ և յաւէտ փոյթ մեծ ունել յարատահանել զշիճուկս կամ զջուրս, որք ժողովեալ են 'ի կուրծս. որք կրճինն, և խափան լինին օգտաւէտ ներգործութիւն դեղոյս։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յաղագս ԼՐԳՈՂՈՒԹԵՆ գլխոյ, կամ ուղղոյ, որ ասի՝ իպրօլէ-գիալ, կամ իպրօբիդիա պէլ էՎՎԷԼԼՕ։

Երգողութիւս այս՝ որպէս ասացաք 'ի սկզբան անդ գլխոյս, է հաւաքումն ինչ ձրոց, որք փակեալ մնան 'ի խուռչս ուղղոյ՝ առանց բնաւ հաղորդութեան ունելոյ ընդ այլ լուծականս և հոսականս, և հաղիւ երբէք է ապաքինելի, մանաւանդ եթէ ի՞նչ հնացեալ։ Ախոս այս հասուրակօրէն յաճախ գտանի յեւրոպիայ. և յաւէտ 'ի Ճինէվրա, 'ի վիէննա, և 'ի էտիմպուրգ անուանեալ դաւառան։

Յաղագս պապճառոյ ԼՐԳՈՂՈՒԹԵՆ գլխոյ։

Ախոս այս բազում անգամ է ինքնեկ՝ և ոչ յայլ սխալէ ծագեալ. փոքրիկ մանկունքն են յոյժ ենթակայ այսպիսի ձրդողութեան, մանաւանդ 'ի ժամանակի, յորում ծագին առամունք նոցին։ Երբեմն և պատճառի 'ի հանապազօրեայ և 'ի հրատապ ձերմախտէ, 'ի յերկարատև հիւանդութէ, 'ի յանկարծօրէն և 'ի յորդ դառարկելոյ արեան կամ գոլորշեաց, 'ի յերկիւղէ, 'ի կարի ելմն ակարութէ ձրաց և մանրաթելից, 'ի բորբոքմանէ և 'ի յամբոխմանէ ուղղոյ, 'ի հարուածոյ գլխոյ, 'ի յուժգին շարժմանէ ուղղոյ, որ պատճառի 'ի նուաղմանէ սրտի, 'ի յափրութէ, 'ի պտուտմանէ գլխոյ, 'ի քնապութէ, 'ի բռնի շարժմանէ միանանց կամ ձրաց, և՛. 'ի ցուրտ և 'ի խոնաւ հողմոց՝ յորժամ յերկար ժամանակ գլխաբաց մնասցէ ոք զկնի հիւանդութէ կամ աշխատանաց և քրտնելոյ։ 'Ի վախճանի յայնմ ամենայնէ որք են առիթ արգելոյ զարտաշնչութիւն մարմնոյ, և խափանելոյ զպատեհական շրջանս արեան, և աւիշկից։

Յաղագս ոչպհական նշանաց ԼՐԳՈՂՈՒԹԵՆ գլխոյ։

Հասարակօրէն ախտակիրն զդայ զցաւ, զծանրութէ, և զպտոյտ գլխոյ, որում և զուգընթաց լինի

տագնապ մեծ, և անձկութիւն սրտի։ Զարկ բազկեբակին 'ի սկզբան անդ լինի մեղմագոյն, և ապա սրագոյն։ Մէջն երբեմն հոսի սակաւաքանակ, և երբեմն առատօրէն, գեղնագոյն և ջինջ։ Աչքն լինի կարմրերանգ, շլագոյն, գէջ, և բժոտ. երևակայութիւն, և կերպարանն խանգարին։ Ախտակիրն ործայ կամ ժայթքէ զմրուր լինչ ծանր, սպիտակ և ջինջ։ Զկնի այս ամենայն նշանաց առ սակաւ սակաւ 'ի վերայ գայ այլափոխութիւն, քնափութիւն, գեղումն կամ կծկումն միանանց, մանաւանդ 'ի միանս աչաց, և այլ սոսկատեսիլ նշանք անդամազօսութիւն։

Յայսմ յեռին գիպուածի պարտ է մեծապէս ըզգոյշ լինել 'ի վերայ անձին ախտակրիս. զի այդ օրինակ այլափոխութիւն, քնափութիւն, խանգարումն երևակայութիւն են, գուշակ են անվրէպ ապերջանիկ եղից նորին։ Ախտս այս բազում անգամ ևս աւարտի 'ի կուրութիւն, 'ի խլութիւն, 'ի խելագարութիւն, 'ի վերնատութիւն, 'ի մշտատև գլխացաւութիւն, 'ի սրտախօթութիւն, յանդամալուծութիւն, 'ի ջղային բնաւորութիւն, և յայլ և այլ ախտս եռացուցիչ ոգւոց։ Զորքն ուղղոյ՝ որք արտաքս հոսին զկնի հատանելոյ և բանալոյ զգանկն գիոյ, գրեթէ միշտ լինին գեղնագոյն, և ջինջ։

Յաղագս դեղորէիցն, զորս մարդ է 'ի գործ արկանել 'ի դէպս ծածս ջրգողութիւնք գլխոյ։

'Ի գիպուածս յայս մեծի զգուշութեան պէտք են առ 'ի գործ արկանել զդեղորայս։ Նախ՝ պարտ է փութանակի դնել լայնաբաց վէշեքաթօռիս 'ի վերայ ծոծրակի. նոյնպէս պարտ է տզրուկս դնել 'ի վերայ երաստանի։ Իսկ փսխողականն, և լուծողականն հարակաւորապէս պահանջի 'ի գիպուածս յայս. զորս պարտ է կրկնել նկատեալ 'ի պարագայս տկարութեան, և հատակի ախտակրին, և սաստկութեան նշանացն ախտիս։ Եւ եթէ վերոգրեալ, կամ սոցին նման դեղոբէիւք ոչ պակասեսցի սաստկութեան նշանաց, եթէ չև ևս եցէ կաղդուրեալ ախտակիրն, ոչինչ արդելք կայ գործածութեան անդի, որ ասի մեռքուռիս։ Զոր օրինակ. Ա՛ռ կէս ունկի՝ զտեալ անդիկն, և մի ունկի՝ քաղցրաբենի վարդի, բարիոք զանգեա ընդ միմեանս, արա տասնեւութ հատս, և այսոկիսի հատք

ջրջապատեալ փոշւոյն կինամոնի, տացին յերկու հատէ մինչև ցվեց՝ ջրս անգամ յաւուրն։

Նոյնպէս օգտաւէտ է աքօնիթօ յորջորջեալ բոյսն, որ այսպէս բաղադրի։ Քսան կշիռ ցորեան՝ էսթռաթթօ ա՝ աքօնիթօ, և ռօպ ոչ սամպուքօ՝ որչափ ինչ պէտք են վասն շինելոյ զ48 հատադեղս, զոր ջրջապատելի է փոշւոյն երեցկի։ Ի հատադեղոյ ասոյ պարտ է ախտակրին սկիզբն առնել յերկու կամ յերիս տուրս ի գործ արկանել մէն մի հատ, և առ փոքր փոքր առաւելուլ մինչև ցչորս հատս, եթէ տանիցի սոսմոքսն։

Դարձեալ՝ ֆոսֆոռօն ըստ կարծեաց բազմաֆորձ և ներհուն հեղինակաց է դեղ ինն կարի ազնիւ և շահաւէտ ի դիպուածս ջրգողուէ գլխոյ, որ այսպէս յօրինի։ վեց կշիռ ցորեան ֆոսֆոռօ, և երկու ունկի՝ գաղջ իւղն քաղցր նշոյ, խառնեալ բարիոք լուծեա, և զկնի երկու կամ երեք ժամուց տուր ըմպել հիւանդին 5 կամ 6 անգամ յաւուրն՝ փոքրիկ դըրգալ մի առ իւրաքանչիւր նուագ։ Յայսպիսի դիպուածս ևս երևին յաւէտ օգտակար դեղորայքն զօրացուցիչք, և մեղմացուցիչք, որպիսի են էթէռա խառն ընդ թինթուռա ոչ սուչչինոի, կամ ընդ թինթուռա ոչ վալէռիանայի, և կամ ընդ թինթուռա ոչ քինա քինայի։ Նոյնպէս ոչ սակաւ օգտէ ալիոնն, զոր պարտ է ջափով և զգուշութիւն ընծայել։

ՅՕԳՈՒԱԾ Դ.

Յաղագս ջրգողուէ մասնաւոր ինչ պարտի, որ ասի՝ իպոջ բինիա սոֆֆալա։

Ելեալս այս՝ որպէս ասացաք վերագոյնդ, է գումարումն ինչ ջրոց, որք արգելեալ մնան ի պարկ կամ ի քսակ ինչ մասնաւոր՝ առանց բնաւ հաղորդութեան ունելոյ, և հոսելոյ յայլ մասունս մարմնոյ։ Սովորական կայան ախտիս այսորիկ է սոսորին որովայնն։ Թէպէտ բազում անգամ ասի փորձիւ իսկ ծանուցեալ, և տեսեալ զգտանիլ սորա շրջապատեալ զկրծովք, և զփայծեղամբ։ բայց այդպիսի դիպուածք

մարթին լինել յոյժ ցանցառակի։ Բազմատեսակ է ախտս այս. բայց գլխաւորաբար բաժանի 'ի խորք բիզիա տէլլա մաթռիչէ. այսինքն ջրգողութիւն արգանդի, կամ զաւակատան. 'ի խառօբիզիա տէլլ' օվայէ, այսինքն ջրգողութի ձուարանի. 'ի խառօբիզիա տէլլ բէռիթօնէ. այսինքն ջրգողութի որովայնամաշկի. 'ի խառօբիզիա տէլլէ թուպէ. այսինքն ջրգողութի ֆալլօբեան փողոց, (որք են երկու անցք զեռեղեալք 'ի վերին և 'ի կողմնական մասունս յաւակի արգանդին.) 'ի խառօբիզիա տէլլ'էբիբլօն, այսինքն ջրգողութի աղեացամաշկի. և 'ի խառօչէլէ, որ է ազգ ինչ ջրալիր փոշտանկութե։

Բազում անգամ այդպիսի տեսակք ջրգողութեանց զուգընթաց լինին ընդ ջրգողութե ստորին որովայնի, և յայդպիսի դիպուածս անհնարին է փարատել զայնս, և ոչ ջուրքն իսկ որովայնի մարթին հոսիլ արտաքս գործածութեամբ դեղոյիցն։ Իսկ պատճառք ախտիցս այսոցիկ են գլխովին նոյն պատճառքն ջրգողութեց ստորին որովայնի, և անաղարքայի։

Յաղագս նշանաց ջրգողութե մասնաւոր ինչ պարտի։

Ջրգողութիս այս բացայայտ ճանաչի յուռուցէ ինչ 'ի վեր երևելոյ 'ի ստորին մասունս որովայնի 'ի ձև արգանդի, և ևս 'ի կակղութէ և 'ի ցրմանէ այսր ուռուցի։ Երբեմն ախտս այս ձևակերպի 'ի յղուն, և յայնժամ ջուրքն գումարին 'ի յարգանդն, կամ յայլ մասաւոր կողմանս զաւակատանն, որպիսի են աղան կամ ծինն, որ ասի՝ քօռիօն, և ներքին աղտն, որ կոչի՝ ամնիօս կամ ամնիօ։ Եւ ախտս այս յայն սակս դժուարաւ ճանաչի, վասն զի երբեմն զոյդ ուն ընդ իւր զհաւատարանման նշանս յղութե. միայն 'ի դիպուածս ինչ ստուգիւ ճանաչի գոյութին ախտիս, յորժամ 'ի սկզբան անդ հիւանդութե յանձին զգայ ախտակիրն գոյանալ յարգանդի իւրում զգընդակ ինչ, կամ ուռոյցս, որ սկսանի առ սակաւ սակաւ աճիլ, և ամբառնալ զորովայնն ՝ի օրինի յղեաց, բայց առանց ինչ անհանգստութե, և առանց իրիք փոփոխման գունոյ մորթոյ, մանաւանդ եթէ ոտքն, սրունքն, և ազդերքն չիցեն ուռուցեալք՝ բայց եթէ 'ի վախճանի. և եթէ որովայնն ձևակերպի միշտ այլ ազգ ինն եղանակաւ, յայնժամ պարտ է ստուգել,

Եթէ այս է ախտն առաջեալ խառօբիզնա տէլլա մա-
թուիչէ, քանզի այսոքիկ նշանք ոչ ունին տեղի 'ի դի-
պուածս աշխարհի։

Իսկ ամուլ և անծնունդ կանայք են առաւել են-
թակայ այսմիկ ախտի։ Խառօբիզնա տէլլ՝ օվայէ՝ է
յոյժ յաճախակի, բայց յոյժ գժուարաւ է ճանաչե-
լի քան զմաթուիչէին։ Սեպհական նշանք՝ որովք
մարթ է կասկածանօք գուշակել զամանէ՝ են ու-
ռոյցքն, ցաւքն 'ի մասունս քնջոց երանաց։ (որք են
մասն մարդկային մարմնոյ ընդ աջդր և ընդ առա-
կանս։) Հոտուն չէ այնքան առատ՝ որպէս 'ի դի-
պուածս ջրգողութեան սատրին որովայնի, այլ հաղիւ
գտանի երեսուն կամ քառասուն էանթել հիւթ 'ի դի-
պուածս ախտիս։ Բայց որովհետև հիւթս այս հա-
սարակօրէն է մածուցիկ և առատ, որ երբեմն փա-
կեալ մնալով յայլ և այլ խոռոչս՝ չլինի բացայայտ
հոտուն, վասն այսորիկ ախտս այս չճանաչի՝ բայց
եթէ զկնի մահուանն յօշռտելով կամ բանալով զմարմ-
ինն։ Յայն սակս ոմանք կանայք առաւել քան զ30
զ40, և զ50 ամս կրեցին զախտս զայս։ Աղջկունք,
և օրիորդք չեն այնքան ենթակայ ախտիս, այլ առա-
ւելապէս են ենթակայ ամուլ և այրի կանայք՝ յորս
պակասի արիւնն տեռատեսական, և յայն սակս միշտ
վիշտս կրեն։

Ջրգողութիւնն որովայնամաշկի, որ ասի խառօբի-
զնա տէլ բէռիթոնէօ, ձևանայ դանդաղկոտ և մա-
հացուցիչ։ բայց յոյժ յամր, և մեղմով։ Ախտածէ-
տեալքն ունին անկորուստ զննուցողական զօրուն։
Իսկ զծարաւն՝ սակաւ կամ ընաւ ոչ ունին։ Ախոր-
ժակն նոցին բարի, մարսողականն զօրաւոր, և քունն
առատ, իսկ մէզն ըստ սովորութեն։ և միով բանիւ
ասացից, կատարեն զամենայն կարևորականս բնու-
թեն ըստ պայմանի բնութեն, ոչ ունին բայց յու-
ռուցէ՝ այլ ինչ նեղութի, և անհանգստուի մարմնոյ։

'Ի դիպուածս ախտիս համարի, եթէ պորան սա-
կաւ ինչ մխի 'ի ներքս, և երբեմն իսկ ջուրքն ելա-
նեն 'ի պորտոյ՝ հերձմամբ և պատառմամբ այսորիկ
մասին։ Ընդհանուր նշանքն ջրգողութեան մասնաւոր
ինչ պարկի են գժուարութեն, զոր ախտակիրն զգայ
'ի հոսման ջուրց։ որովհետև բազում անգամ փա-
կեալ արգելական ճան 'ի փոքրիկ խոռոչս անդամոց։
հեղանիւթն որ արտաքս ելանէ ճանապարհաւ բուն-

թուռայի, գրեթէ միշտ լինի ընդարմացեալ արիւնա-
խառն, և զազրահոտ։ 'Ի վախճան ամենայնի, 'է դէ-
պուածս սխտիս՝ ուռոյցն որովայնի լինի անհամա-
ձայն, և փոփոխական, և սխտակիրն անկորուստ
պահէ զգոյնն երեսաց և բովանդակ մարմնոյ, և զա-
խորժակն։

Յաղագս կառավարութեան և դեղոցն սխտիս։

Կառավարութիւն սխտիս է նոյն իսկ ընդ կառավա-
րութիւն ջրգողութեաց ստորին որովայնի, զորոց խօսե-
ցաք 'ի յօդ • ԽԱ • այսր գլ։ Բայց յորժամ հարկ 'ի վր կայ արտահանել զջուրն 'ի ձեռն գործեաց, յայն-
ժամ պարտ է և ճեղքուածոյն լինել համաձայն չէս-
թէի (այսինքն խողովակին,) ապա թէ ոչ՝ բացարձակա-
պէս հարուածն լինէր անբաւական։ Դարձեալ,
պարտ է զճեղքուածն մեծացուցանել և զդուշութիւն
պահպանել՝ առ 'ի դիւրացուցանել զկաթիլն հիւ-
թոց, որք գումարին անդ, և ստ 'ի փութով, և
'ի սուղ ինչ ժամանակի բուժել զայն։

'Ի դիպուածս ջրգողուն արգանդի, որ իբր զյղաց-
ցումն ձևակերպի, կամ ընդ յղացմանն զուգընթաց
լինի, չեն սահմանեալ այնքան բազում դեղորայք առ
'ի գործ արկանել. որովհետև ջուրքն արտահանին
երբեմն 'ի ծնանիլն անդ, և երբեմն յընթացս ամ-
սոյ • բայց յորժամ հոսումնս այս կամ արտահանումն
ջրոց զանցանէ ըստ չափ, միշտ լինի վտանգաւոր, մա-
նաւանդ զի ակնհայտ է իսկ եղաք մահուան ոմանց
կանանց զկնի արտահանման ջրոյն, կամ 'ի նոյն իսկ
վայրկենի, և կամ նախ քան զծնանիլն • այլ եթէ յեր-
կարի յոյժ ծնունդն, յայնժամ յայդպիսի պարա-
գայս իսկ և իսկ պարտ է դիմել 'ի քաջարուեստ ոմն
բժիշկ, և առնուլ 'ի նմանէ զայնպիսի պատշաճաւոր
լուծողականս և զջրաքաշիչ դեղորայսն, որ ասի և
մէնակոկի։

Իսկ յորժամ քաջայայտ ճանաչի և բացայայտ է-
րևի, չլինել սխտիս յղութիւն, յայնժամ բաց յընդհա-
նուր դեղորէից ջրգողութեան ստորին որովայնի,
պարտ է 'ի գործ արկանել զայլ կառավարուելս սահ-
մանագրեալս 'ի դիպուածս արգանդի՝ առ 'ի փու-
թով արտահանումն ջրոցն, ընդարձակելով զճանա-
պարհն խողովակի • բայց յայսմ փոյթ մեծ ունել

պարտ է, և գուն գործել առ 'ի կակղացուցանել յառաջագոյն զՃանապարհն արգանդի գործածութիւն բաղանեաց Ֆոմէնթօի, և այլ կակղացուցիչ իրաց։

Ջրգողութիւնն ձուարանի, որ ասի՝ խառօբիզնա տէլլ'օվայէ, է ախտ իմն վարկուցեալ անբուժելի. վասն որոյ զդեղորայսն 'ի գործածեալս 'ի գիպուածս ջրգողութեան ատորին որովայնի, թէպէտ և նկատմամբ այսորիկ ախտի՝ եցեն յոյժ անչօր և տկար գործունեայ, բայց 'ի վերայ այսր ամենայնի արժան է 'ի գործ ածել. և առաւել ապահով միջոցն և հնարն՝ է հոսել զջուրսն արտաքս՝ բանալով զՃեղքուած իմն 'ի վերայ կշռին։ Լուաք ասել յոմանց, եթէ կին ոմն 'ի հասակի 50 ամաց գործածութեամբ այսր հնարից ատացաւ զկատարեալ առողջութիւն։

'Ի գիպուածս ջրգողութեան որովայնամաշկի, որ կոչի խառօբիզնա աէլ բէռիթօնէօ, եթէ ենթակայն եցէ երիտասարդ և քաջառողջ իմն բնութեան վիճակեալ, և եթէ ուռոյցն չեցէ տարածեալ տակաւին, և եթէ ջուրն՝ զոր արտահանեն Ճանապարհաւ Ճեղքուածոյ չեցէ այլագունեալ և գարշահոտեալ, մնրթէ է յուսադիր լինել յայնժամ 'ի բուժել զայն. խնկ յայլ ամ գիպուածս ներհակականս՝ ապաքինութիւն ախտիս յար և յաւէտ է կասկածելի։ Դեղորայքն են գլխովին նոյն ընդ դեղորէիցն ջրգողութեան ատորին որովայնի, զորոց Ճառեցաք վերագոյնդ. բայց Ճեղքուածն, որ է հնար իմն յոյժ պատշաՃեալ և կարևոր 'ի բուժումն ախտիս, պարտի լինել 'ի մասունս առաւել յարակցեալս պարկին. և միանգամայն արժան է լինել մեծագոյն և լայնաբաց առ 'ի կարօղ լինելոյ զկնի արտահանելոյ զջուրն գնել 'ի նեղքս ըզմինչթայ կամ զպատրոյկ իմն թրջեալ խուղոնէ կամ ոգւոնէ զմռոյ, որով մնայ Ճեղքուածն բացեալ մինչև 'ի բուժումն ախտիս։

'Ի գիպուածս, յորում՝ ջուրքն արտահանին Ճանապարհաւ պորտոյ, որպէս ասացաք, յայդմիկ գիպուածի երբեմն չէ՛ պարտ բնաւ զանց առնել ըզՃեղքուածն, զորմէ յիշատակեցաք անդէն. որովհետև բնաւոր հոսումն ջրոցն 'ի պորտոյ անտի՝ չէ բնաւ բաւական։

Ջրգողութեն Ֆալլօբեան փողոյ, որ ասի՝ խառօբիզնա տէլլէ թուպէ, ենթադրեալ ևս եթէ եցէ քաջ ատուգեալ, բայց 'ի վերայ այսր ամենայնի գործ մեծ

է և գժուարին զանազանել զայն 'ի ջրդողութենէ ձուարանի. վասն որոյ յայդպիսի դիպուածս պարտ է ընթանալ և վարել ըստ կանոնի, զոր 'ի վեր անդր քաջայայտ ցուցաք։ Բայց քաջայայտ իսկ է ամենայն ումք, եթէ ամենայն տեսակք ջրդողութեց՝ զորոց ցայս վայր խօսեցաք, պէտս ունին միշտ խորհրդոյ Հարտաւր բժշկի՝ յարմատանալ և 'ի հաստատիլ նոցին. վասն որոյ անմտուի և անխոհեմուի մեծ գործեն նոքա, որք անգէտ գոլով արուեստիս՝ ըստ խորհրդոց մտաց իւրեանց ձեռնամուխ լինին 'ի բուժումն ախտիս։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս դալկան, որ ասի՝ ԻՐԻԷՈՒԹԻՈՆ։

Ախտս այս բացայայտ Հանաչի 'ի գեղնութենէ ինչ 'ի վեր երևելոյ 'ի յաչս և 'ի բովանդակ մորթս մարմնոյ, նաև 'ի սաստիկ կարմրութէ միզի, և 'ի շիկագոյն հոսմանէ քրտանց։ Արդ՝ սա 'ի հասարակի խօսելով, չէ այնքան գժնեայ և վտանգաւոր, որպէս սև դալուկն, որ կոչի՝ ԻԹԹԷՌԻՑԻԱ ՆԷՌԱ, սակս պատՀառելոյ առաջնոյն 'ի գեղին մաղձէ կամ յայլ ինչ և ի՝ցէ պատահարէ։ Իսկ եթէ յառաջ գայ 'ի սև մաղձէ, յայնժամ յորջորջի՝ դալուկն սեաւ, և պարտ է երկնչիլ վասն ախտաւորութեան լերդի, և փայծեղան. և գուշակէ զվտանգութիւն։ Մինն 'ի նշանաց այսր սեաւ դալկան՝ է կանաչախառն կապոյտ գոյնն՝ որ նախապէս 'ի վեր երևի 'ի գէմս, և ապա առ ակաւ ակաւ բռնացեալ տարածանի ընդ բովանդակ անօթս արեան և մարմնոյ, և ապիտակուցն աչաց փոխարկի 'ի մթին գեղին։ Ճանաչի նաև 'ի միզէ, որ հասարակօրէն փոխարկի 'ի գոյն բոհրեալ արճոյ։

Յաղագս պատճառաց դալկան։

Ախտս այս մարթի յառաջ գալ յամենակերպ պատճառաց, որք խցանեն զանցս քամեալ հիւթոցն մաղձի. որպէս խածումն կատաղի շանց, և խայթումն օձից, և այլ թունաւոր սողնոց։ Դարձեալ, հնար է ախտիս պատճառիլ 'ի մաղձային, և 'ի յարդանդային խթէ, 'ի յանսանձ ցանկութէ, 'ի յերկիւղէ, 'ի տրտմութէ, 'ի հոգածութէ, 'ի կարի զօրաւոր փքախողականէ կամ 'ի լուծողականէ, 'ի գործածութէ սեղմիչ, և պնդացուցիչ դեղոցէից, 'ի ցրտոյ, 'ի յարգելականութէ կամ յանչափ յորդառատութէ որ և իցէ սովորական հոսմանց, 'ի միջահատական, և 'ի քառօրեայ տենդից, 'ի յախտագնութէ և 'ի բորբոքմանէ լերդի, 'ի յախոնդանոտութէ, և 'ի յղութէ։ Կարծր և դժուարամարսելի գոյացութիք յապաղեալք 'ի ներքս 'ի ստամոքսն և յաղիս, որպէս ածառք, կորիզքն պտղոց, չիոքօլաթան, սուրճն, ևն, նմանապէս կարեն յառաջ բերել զնոյն ախտն։

Յաղագս նշանաց դալկան։

Ընդ ախտիս գոտանի ևս անձկութի ինչ, և չորութի մորթոյ։ Ախտակիրն զգայ յանձն զցաւ ինչ և զմարմնջութիւն. գոյն աչաց և մորթոյ՝ որպէս ասացաք, լինի գեղնագոյն, և մէջն երբեմն կարմրագոյն, և երբեմն գեղնագոյն. շնչառութիւնն կարի դժուարին, քրտունքն և լորձունքն գեղնագոյն։ Ախտակիրն ործայ, և ստէպ ստէպ փուքս արտաքսէ, և զգայ դառնութի ինչ և անախորժութի 'ի բերանն, և ծանրութիւն ինն 'ի կուրծս։ Զարկ բազկերակին լինի թոյլ և նիհար, և բազում անգամ հարկանէ որպէս 'ի գիպուածս տենդից։ Եւ 'ի վեր երևի ցաւ և ձգտումն ինչ 'ի սահմանսն ախոնդանաց, (որք են տեղիք լերդի և փայծեղան)։ Ո՛չ է պարտ բնաւ յուսահատիլ, որպէս խօսեցաք 'ի վեր անդր, եթէ ախտս այս պատճառի 'ի դեղին մաղձէ և կամ յայլ ինչ և իցէ պատահարէ։

Այլ յայնմ վայրի պարտ է երկնչիլ, յորժամ ընդ ախտիս զուգընթաց գոտանի սեաւ գալուկն, կամ ջրգողութի կամ ախոնդանոտութիւն և կամ փտախ

թութիւն. մանաւանդ եթէ անցեալ ելցէ զաւուրքն
ախտակիրն։ Եւ եթէ յառաջ գայ 'ի սաստիկ և 'ի
զօրաւոր փսխողականութէ կամ 'ի լուծողականութէ,
և կամ 'ի յորդառատ հոսմանէ ինչ թանչից, յայն-
ժամ ախտս այս յոյժ երկարատև է։ Բայց եթէ
պատճառի 'ի բորբոքմանէ և 'ի խուլական ինչ ու-
ռուցէ լերդի, կամ 'ի աքօռպութիւնս անուանեալ ախ-
տէ, յայնմ վայրի լինի առաւել տարժանելի և դըժ-
ուարաբուժելի։ Իսկ եթէ ընդ ախտիս համազոյգ
գտանին և փքալից ջրգողութի, յաճախակի ժայթ-
քումն, ճնշումն կրծոց, նուազումն սրտի, արիւնա-
խառն հոսումն որովայնի, սրճադոյն կամ կանաչա-
խառն սեաւ միզումն ևն, են նշանք վատթարագոյնք։

Յաղագս խնամապարութեան, զոր պարտ է 'ի նէր արկանել 'ի դէպուածս դալիան։

Ախտակիրն պարտի հրաժարիլ յամենակերպ ո-
գեաւոր հեղանութեան, և 'ի դժուարամարսելի կե-
րակրեղինաց։ Սովորաբար պատշաճական կերակրե-
ղէնք են արդանակն որթու, և հաւու, հացն բարիոք
եփեալ, և պտուղք հասունացեալ։ Եւ ըմպելին՝
կաթն կովու, և զատոյն շնճուին կաթին խառն ը-
մեղու, և խաշուն կակղացուցիչ և քաղցրացուցիչ
արմատոց. որպիսի են՝ արմատն տղտոյ, մատուտա-
կի, չիքօռիայի, կրամինեայի, ևն։

Շահաւէտ է սակաւ սակաւ գործածութեան ֆոմէն-
թօի կամ բուրանեաց, և ևս՝ կակղացուցիչ իրաց, զոր
պարտ է ջերմ ջերմ արկանել 'ի վերայ ստամոքսի և
լերդի։ Շարժականութենն կամ շրջագայելն 'ի զբօ-
սանս՝ նոյնպէս է օգտաւէտ, բայց արժան է լինել
ըստ կարեաց ախտակրիս. որում պարտ է միանգա-
մայն անձնապահ լինել յամենայն իրաց, որք առթեն
զնեղուն, զձանձրութի, զբարկութի, ևն. այլ պարտ
է միշտ ջանալ 'ի զուարթամտութիւն, և յանխռով
հանգարտութի հոգւոյ, զբաղելով յուրախարար և
'ի զուարճալի իրս։

Յաղագս դեղերէից, զորս պարտ է 'ի վար արկանել 'ի դէպ պուտածս յայս։

Աֆսորժելի և մեղմագոյն փսխողականքն, և լուծողականքն 'ի դիպուածս սխտիս լինին յոյժ օգտակարք, եթէ հիւանդն չիցէ կարի ուժաթափ լեալ յերկարատևութէ ախտին։ Քառասուն կշիռ ցորեան՝ կամ մի տրամ ամբողջ իբէքուանան տրորեալ 'ի մէջ ջրոյն երիցկի, տուր ըմպել ախտակրեդ յառաւօտին պահու 'ի ծոմուստ, և ստէպ ստէպ վերըմպել զնաշուն երիցկի այնչափ՝ որչափ պէտք իցէ առ ործալոյ ըստ կարողութեան ախտակրին։ Եւ անմիջապէս զկնի այսորիկ պարտ է 'ի գործ արկանել բիլլօլէ քօնթռա լ՝ ինթէռիցիա անուանեալ հատագեղն, որ այսպէս բաղադրի։ Առ մի տրամ աղօտ սօքքօթռինս, և նոյնչափ՝ ռասպառպառս, այլև տրամ մի սաբօնէ տ՝ աղիքանթէ. սա և հատարակ շիլօբբօ՝ որչափ ինչ պէտք են վասն շինելոյ զհատս. որք մէն մի կշռիցեն հինգ կամ 6 ցորեան. զորս շրջապատեալ փոշուոնէ մատուտակի, ասցէս հիւանդին 5, կամ 6 հատ երկիցս կամ չորիցս յաւուրն։

Բաց 'ի հատագեղոյ ասոր շահաւէտ յոյժ եղիցի արբուցանել յամենոյն առաւօտու և երեկոյի թառթառս սօլուպիլէ խառն ընդ չայի. բայց առցէ մի աւելի քան զմի տրամ առ մի նուագ։ Դարձեալ, մարթ է ը սակաւ եօթնեակս 'ի գործ ածել տէքցիօնէ տի բլաթանս։ Այսինքն սա տրամ մի տաշած փայտին կոչեցելոյ բլաթանս, որ այն ինքն է սոսի, և 'ի հատարակ ջրի եփեսա եռացմամբ իբր քառորդ մի ժամու, ապա զտեսա, և մնասցէ երեք դրգալ սեղանոյ. յոր յաւելլ մի սպիտակուց թարմ ձուոյ, և զանգեսա բարիոք, և ապա տուր ըմպել ախտակրեդ յառաւօտեան պահու երեք կամ չորս ժամ յառաջ քան զկերակուրն։

Սակայն 'ի մէջ սոցա ես ընտրեմ 'ի սկզբանն զայնոսիկ, որք պատշաճաւորք են և օգտաւէտք 'ի դէպուածս դալկան, մանաւանդ սեաւ դալկան։ Առ չորս լիտր՝ արդանակն գլխոյ, հինգ տրամ՝ խաշնդեղ, և չորս տրամ՝ թէռռաֆօլիաթա տի թառթառս։ Եւ զայս պարտ է առնուլ վեց կամ եօթն անգամ յաւուրն՝ ըստ չափու մեծ սկահակի սրճոյ։ Է և այլ

դարման, որ առանց զայրացուցանելոյ բանայ զխը-
ցանս, և զանցս մաղձի և միզի, և ցրուէ զմաղձային
հիւթս խառնեալս յարեան, և կազդուրէ զթաւկու-
թիւն ստամոքսի, և բարեկարգէ զգործողութիւն լեր-
գի և փայծեղան. այն է չափաւոր գործածութիւն
խարտածոյ երկաթոյ, որ այսպէս բաղադրի։ Երկու
տրամ՝ լիմաթուռա տի ֆէռռօ, այսինքն խարտածն
երկաթոյ, և նոյնչափ ռաստառպառօ, և յաւէլ այն-
չափ շիլօբբօ որչափ պէտք իցեն առ կազմելոյ ըստ կա-
նոնաց արհեստին. զզանգուածս զայս արարեալ հապ՝
որ կշռեսցէ հինգ կամ վեց ցորեան, և շրշոսպատեալ
փոշւով կինամոնի, տացին երկու կամ երեք հատք
երկու անգամ յաւուրն։

Այլ բաց 'ի սոցանէ և 'ի սոցին նման դեղոց,
երկար փորձառութիւն ուսայ ես զնշանաւոր զօրուն
դեղոյ ինչ. զոր և 'ի յոլով ժամանակաց հետէ բա-
զում բժիշկք արաբացւոց և պարսից 'ի կիր առին,
այն ինքն է մուսալաք, յորմէ պարտ է առնուլ չորս
ունկի՝ փոշի լոսեալ, և մի և կէս սկահակ սրճոյ քա-
մածն լեմոնի, և յաւէլ այնչափ շիլօբբօ կամ մեղր՝
որչափ պէտք իցեն առ կազմելոյ ըստ կանոնաց արհ-
հեստին. զզանգուածս զայս արարեալ մաճուն, որ
լիցի թանձրագոյն քան զմեղր, առցէ սխտակիրն
գրդալ մի սեղանոյ ընդ առաւօտս, և նոյնչափ ընդ
երեկս։ Երակ հատանելն ևս պատշաճի երբեմն 'ի
գիպուածս դալկան. բայց 'ի սկզբան անդ, և այն
զի պարտ է նկատել 'ի կազմուածն մարմնոյ, 'ի խառ-
նուածան, և յուժգնութիւն բորբոքման և ցաւոց, ևն.
բայց 'ի վերայ այսր ամենայնի զգոյշ լինել պարտ է
չյաճախել զգործածութիւն երակ հատանելոյ, բայց
եթէ 'ի մեծի հարկաւորութեան, որովհետև միշտ
վտանգ 'ի վերայ գայ յայսմանէ երկարելոյ հիւան-
դութեանն։

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս ախտի, որ ասի Ռիզիֆէցցա. որ առ մեզ ասի Ռոփախտութի, առհասարակ Բարբեցաւ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ախտս այս է խոթութեան ինչ, որ հաշեալ ծիւրէ զբովանդակ մարմինն. և յառաջ գայ 'ի խոցէ ինչ կամ յայտուցէ թոքի, նաև մարթի յառաջ գալ յախտիցն, որ ասին՝ Էմբիէմս, այսինքն շարաւաթուք. ատեռոֆիա նէռվոզա, այսինքն անտածութեան. քաքէսսիա, այսինքն ուխտագունութեան, և ն։ Վկայէ պուքան հեղինակն, եթէ առ ժամանակաւ իւրով 'ի քաղաքն Լօնտռայ տասնեքորդ մասն 'ի ժողովրդենէն մեռանէին յախտէ յայսմանէ. ուստի որչափ ևս աւելի յայժմեան ժամանակիս։ Երիտասարդք վտիտք և նիհարք, որք ունին զերկայն պարանոցս, և զթիկունս բարձրաւանդակս, և զլանջս նեղագոյնս, և անձուկս 'ի հասակէ 15 ամաց, մինչև ցերեսուն ամն, են յոյժ ենթակայ ախտիս այսորիկ։ Ախտս այս է յոյժ յաճախ յանդղնա քան յայլ ամենայն մասունս աշխարհի. և այս գուցէ յառաջ գայ 'ի սովորութէ, զոր ունին 'ի գործ արկանել յանչափս զմիս գժուարահալ կենդանեաց, և զոգիաւոր հեղանիւթս, այլև յանշարժական կեանս վարելոյ. և 'ի կիրառութենէ հանքային ածխոյ, զոր յաճախապէս վառեն, և ն։

Յաղագս պատճառաց Ռոփախտութեան։

Այն ամենայն, որ պատճառէ զբորբոքողականութիւն ինչ 'ի կուրծս, մարթի համարիլ իբր պատճառ այսորիկ ախտի։ 'Նոյնպէս պատճառի ախտս յայլ ինչ չար ախտից, որք գլխովին եղծեալ ապականեն զհանգաւութեան և զգողրշիս, որպիսի են՝ աքօռպութիւն,

ագռոֆոլէ, մալ վէնէռէս, ազմա, վաէոլս, ռոզ-
ելիա, էն։ Բայց որովհետև ախտս այս գրեթէ հազիւ
երբէք է ապաքինելի, վասն որոյ մասնաւոր ինն է-
ղանակաւ կամիմք ճառել զպատճառաց նորին առ'ի
յօգուտ և 'ի զգուշութեան վերծանողացդ։ Արդ՝ այ-
սոքիկ պատճառք են յետագայքդ։

Նախ, օդն ապականեալ, և որ արգելեալ և փա-
կեալ մնայ յուրեք տեղւոջ. մեռաղական ինչ գոլոր-
շիքն, որ մասնաւորապէս փեսասակաբք լինին թոքոց,
յորմէ ևս բազում անգամ հեռեի հատանիլ կամ
վնասանալ նրբագոյն և փափուկ ինչ նեարքին անօթոց
անգամոյն։ Բ. Սաստկագոյն կիրքն, բռնութեան ինչ
մուտց, անձկութիւնք հոգւոյ. զոր օրինակ արտմուին,
ցաւն, վիշտն. ևս կարի յոյժ հեռաղստութեան նրբի-
մաց գիտութեաց էն։ Գ. Հոտուն ինչ սաստկագոյն
բնութեամբ, որպիսի էն քիրտն, և լուծողականութեան
որովայնի, ևս վավաշ տուփանք, հոտուն ինչ արեան,
սերմնականութեան, էն։ Դ. Արգելականութիւն
երկնք սովորական հոսման, որպիսի է թանչն, քիրտն
ստից, արիւն որ հոսի յունգացն, խարտին, էն։ Ե.
Արտաքին ինչ պատահմունք և փոփոխութիւնք, որ-
պէս երթալն 'ի ջերմագին ինչ բնակութեէ 'ի ցրտա-
գոյն տեղիս, փոփոխութիւն ինչ հանդերձից, և այլ
ասցին նմանք։ Զ. Ընկերութեան ընդ ախտակցեալ ան-
ձանց, որովհետև ախտս այս է յոյժ տարափոխիկ։
Է. Անձինք, որք վարեն զանշարժական կեանս, որ-
պիսի են դերձակք, կօշկակարք՝ որք ընդ երկար ժա-
մանակս պատճառաւ արհեստի մնան կորացեալ և
կծկեալ. երգեցողքն, և այլ ամենեքին, որք վնաս-
ցուցանեն զթոքն։ Ը. Խոնաւութեան ոտից, մահճի,
բնակութեէ, ևս գիշերային օդն էն։ Թ. Կերակուրք
աղուաք, տաքուք և գառնակակիծք, որք բորբոքեն
և ապականեն զարիւնն. նոյնպէս և ոգիաւոր հեղա-
նիւթք։ Ժ. Ախտս այս բազում անգամ լինի ժա-
ռանգական. և յոյսպիսի գիպուածս հասարակօրէն
լինի անապաքինելի և անբուժելի։

Յաղագս նշանաց ռոփախտութեան։

Ախտս այս հասարակօրէն սկսանի 'ի ջորագոյն ինչ
հազէ, որ սովորաբար յարատևեալ մնայ քանի ինչ
ամիս։ Այլ եթէ ախտակիրն յոյսպիսի գիպուածս

զգայ և յանձին յօժարութեն ինչ 'ի ժայթքել զկնի կերակրոցն, յայնժամ նշանս այս գուշակէ՝ թէ յոյժ 'ի մօտոյ ունի 'ի վերայ հասանել ախտս այս։ Դարձեալ, ախտակիրն զգայ զջերմութեն ինչ առաւելեալ միով աստիճանաւ քան զջերմութեն բնական, զցաւ, և զնեղութեն ինչ 'ի կուրծս, մանաւանդ զկնի թեթև ինչ աշխատանաց. թուքն բերանոյն լինի աղուտ, և բազում անգամ և արիւնախառն։ Ախտակիրն լինի տրտմագին, և սեամոլծոտ, և կորուսանէ զախորժակն. զարկ բազկերակին հասարակօրէն շուտափոյթ, թոյլ, և մանրընթաց. բայց երբեմն և լինի յոյժ լի, և կարծր. այդոքիկ են նշանք առաւել հասարակք, որք զուգընթաց գտանին ընդ առաջին մուտն թոքախտիս, և յետ այնորիկ անդէն սկսանի թուքն լինել կանաչագոյն, և արիւնախառն. ախտակիրն զգայ զտենդ ինչ ծիւրական, որ ասի՝ ֆէպրէ էթիքա. քրտնի առատօրէն յերեկոյեան և յառաւօտեան պահու. լուծումն որովայնի, և առատութեն միզի նոյնպէս է սովորական։

Դարձեալ, զգայ ախտակիրն զջերմութեն ինչ յաւին ձեռաց. այտքն զկնի կերակրոցն կարմրանան, մեզոտունքն նշանաւորապէս վատանան, եղնգունքն կորանան, և մազքն թափին. 'ի վախճանի՝ ոտքն մինչև ցարունս ուռնուն, կորուսանէ դլխովին զկարողութեն և զզօրութեն, աչքն մխին 'ի ներքս, դժուարութիւն մեծ կրէ ախտակիրն 'ի շնչառութեէ և 'ի կլանելն. այդ ամենայն նշանք՝ են գուշակ մօտալուտ մահուան, յորմէ ուր ուրեմն մարթ է ախտակրիս զերծանիլ. քանզի եթէ ոչ խնամ տարցի 'ի սկզբան ախտիս ըստ պատշաճին փութանակի, յետ այնորիկ անօգուտ և անպիտան լինին ամենայն դարմանք, և դեղորայք։

Յաղագս կառավարութեան, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դիպուածս ռոգանոցութեան, որ ասի ռիգիֆէցցա։

'Ի սկզբան անդ ախտիս խակ և խակ պարտ է ախտակրին փոխել զընակութեն. եթէ բնակեալ ելցէ 'ի մեծաշէն և 'ի բազմամարդ ինչ քաղաքս, կամ 'ի տեղիս ինչ՝ ուրանօր օդն փակեալ, և արգելեալ լինի, յայնժամ պարտ է երթալ 'ի դաշտս և 'ի բնակութիս, ուր լինի օդն մաքուր, ջոր և առողջարար. և

շրջագայել անդ ըստ հանձոյից իւրոց։ Ոչ է պարտ ախտակրիս բնաւ նստիլ դատարկ, այլ պարտ է միշտ շարժմունս առնել, մանաւանդ յոյժ օգտակար է՝ եթէ լինիցի 'ի վերայ ձիոյ, կամ ջորւոյ, և այն՝ ըստ առաւօտն։ այսպիսի շարժողութիւն 'ի դիպուածս ախտիս է իբր դեղ ինն աղնուագոյն։ բայց պարտ է ախտակրին անձնապահ լինել 'ի ցրտոյ յընթացս այսպիսի շարժմանց։ Այլ եթէ հնարաւոր իցէ։ ապա, յոյժ օգտաւէտ է 'ի դիպուածս ախտիս ճանապարհորդութիւն ընդ ծով, և բազմաց իսկ ակամատես եղաք ազատիլ յախտէս նպաստիւք ծովագնացութիւնք 'ի վերջին աշխարհի ախտիս, յորում ամենայն դարմանք և դեղորայքն անօգուտ եղեն։

Պարտ է ախտակրիս հրաժարիլ 'ի ջերմագին, և 'ի դժուարամարսելի կերակրեղինաց։ Ըմպելեացն ներ պարտ է լինել զովացուցիչ և բարեխառն, կաթն միայն է յոյժ շահաւէտ 'ի դիպուածս ախտիս քան զամենայն դեղորայս, մանաւանդ կաթն իշոյ կամ կանանց։ բայց պարտ է 'ի գործ արկանել զայն յոյժ սակաւ քանակութիւնք, և որքան կարելի իցէ՝ պարտ է ըմպել զկաթն իշոյ բնական ջերմութիւնն, այսինքն փութով զկնի կթելոյ։ մի և կէս սէսթիէռէ վասն միոյ չափահասի բաւական է, զոր պարտ է բաժանել յերիս կամ 'ի չորս մասունս յաւուրն։ պարտ է սակաւ ինչ հաց բրդել 'ի մէջ կաթին և ուտել փոխանակ կերակրոյ։ Այլ եթէ 'ի գործածութիւն կաթին պատճառի լուծողութիւն որովայնի, յայնժամ պարտ է յաւելուլ 'ի վերայ քօնսէռվա վէքքիա տի ռօպա, կամ բօլվէ տի ծամբէ տի կռանքիս։

Դարձեալ, մարթ է ախտակրիս ուտել զմիրգս հասուցեալս և եփեալս 'ի վերայ հրոյ, կամ զքաղցրաւենիս հաղարջի, վարդի, կեռասի և ն։ 'ի վախճան ամենայնի պարտ է գիտել եթէ ամենայն կերակրոց և ըմպելեաց ախտակրիս միշտ պարտ է լինել սակաւաքանակ առ 'ի ոչ ինասել թոքոցն յոյժ ծանրաբեռնութիւնք ստամոքսի, և առ'ի արգելուլ զասատիկ շրջագայութիւն արեանն։ Նոյնպէս պարտ է ախտակրիս միշտ զուարթ, և ուրախ լինել։ որովհետև ախտս այս սովորաբար յառաջ գայ 'ի ստատկութիւնէ սեամաղձի։

Յաղագս կառավարութեան դեղարէից, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի զանազան ասպիճանս ռոգախտութեան։

Յառաջին ասպիճան ախտիս մարթ է երբեմն մեղմել զհաշն միայն երակ հատանելով, և գործածութիւն յետագայ դեղարէից։ Ա՛ռ չիբբօլա սգուիլլա ֆռէսքա, կօմմա ամմոնիաքա և սէմի տի քառտամօմ՝ յիւրաքանչիւրոցն երկու արամ, մանրեա զամենայնն բարիոք յանկանի, և յաւէլ 'ի վերայ ևս սակաւ ինչ ճիւլէպպէ քօմմունէ, և հապա արարեալ տուր սիտակրին յաւուրն երկու կամ երիս հատս ըստ տանելոյ ստամոքսի նորին։ Նոյնպէս է դէլ ինն յոյժ օգտակար 'ի գիպուածս ախտիս՝ լաթթէ ամմոնիաքալէ, կամ լաթթէ տի կօմմա ամմոնիաքա, զոր պարտ է պատրաստել և 'ի գործ արկանել ըստ եղանակին, զոր գրեցաք 'ի ճառն բորբոքման ներքին մասանց կրծոց. երես 89։

Որքան առ ըմպելին ախտակրիս պատշաճագոյն է ինֆուզիօնէ դառնագին արմատաց, որպիսի են էտէռա թէռռէսթռէ, չէնթաւռէա մինօռէ քամօմիլլա, թռիֆօլիս բալուսթռէ և՝, որք եթէ 'ի գործ արկանիցին ըստ պատշաճին, զօրացուցանեն զստամոքսն, դիւրացուցանեն զմարսողականութիւնն, մաքրեն զարիւնն և՝։ Այլ եթէ ախտակիրն փսխէ զարիւն, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զինֆուզիօնէ կամ տէքօյիօնէ, որպիսի են յետագայքդ։ Ա՛ռ ռատիչէ տի քօնսօլիտա մաճճիօրէ՝ մի ունկի, կէս արամ ռէկօլիցիա, և նոյնչափ ալթէա։ Եռացո 'ի մէջ երկու բինթա հատարակ ջրոյ ընդ վայրկեանս ինչ, և թող պաղիլ, և յաւէլ 'ի վր՝ մի փոքրիկ դրդալ սբէռիթօ տի վինթռիօլօ, և տուր ըմպել ախտակրին մի բաժակ՝ երկու կամ երիս անգամ յաւուրն։ Են և այլ ինչ արմատք օգտակարագոյնք 'ի գիպուածս ախտիս, որպիսի են օռքիտէ, սէմէ տի մէլաքօթթօնա, թռուսիլաճինէ, սէմէ տի լինո, սալսաբարիլիա, և՝։ Նոյնպէս օգտաւէտ է 'ի գիպուածս յայս յառաջին ասպիճանի ախտիս քաղցրաւէնին վարդի, զոր մարթ է 'ի գործ արկանել կամ ընդ վերոյիշեալ դեղարէից, և կամ առանձինն դրդալիւ։

Յաղագս դեղերէից, զոր պարտ է 'ի գործ արկանել յեր-
կրորդում ասպիճանի ընդախտումն։

Յորժամ 'ի վերոգրեալ նշանաց քաջայայտ ճանաչի, և ստուգապէս գուշակի բորբոքումն ինչ թոքոց, յայնժամ սեպհական և շահաւէտագոյն դեղն է քինա քինա, զոր պարտ է 'ի գործ արկանել ըստ յետագայ եղանակին։ Ընկալ մի ունկի՝ ազնիւ քինա, և մանրագոյն փոշի արարեալ զայն, բաժանեա յութ և տան հաւասարաչափ մասունս, և յամենայն երիս ժամս տուր ախտակրին զմի մասն, կամ տրորեալ 'ի մէջ բաժակի հասարակ ջրով, և կամ հապա արարեալ սակաւ ինչ շիլոբբոիւ։ Այլ եթէ 'ի գործածութէ քինայի պատճառի լուծողութեն ինչ որովայնի, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զկերպն յետագայ։ Առ քոնսէռվա տի ռոզա չորս ունկի, և մի ունկի՝ քինա ազնիւ փոշի արարեալ, շիլոբբոյ տի առանչիա, կամ տի լիմոնիա բաւականաչափ, խառնեա յիրեարս. և տուր ախտակրին ուտել զմի և կէս ունկի 'ի միում աւուր, ուտելով երկու կամ երիս անգամ յաւուրն. և յաւարտիլն այսորիկ չափու, պատրաստեա վերըստին ըստ վերոգրեալ եղանակի, և 'ի գործ արկ ըստ տանելոյ ախորժակի ախտակրին։

Յամենայն դիպուածս ախտիս միշտ պարտ է 'ի գործ արկանել աքուա սբիռիթոզա, կամ սալ վոլատիլէ, որք նմանապէս են յոյժ շահաբերք։ Եթէ թուքն բերանոյ ախտակրին լինիցի խիտ և թանձր, և հաղն նուազ, և շնչառութենն դիւրաշարժ և անարշխատ, յայնժամ մարթ է յուսադիր լինել ապաքինութէ ախտիս։ Եւս՝ յայնժամ կերակրոցն պարտ է լինել թեթև, և դիւրամարսելի, այլ անուցողական, որպիսի են թեթև արգանակն հաւու, տէքոցիոնէ տի քռէմոր տի ավէնա, կամ սուկո քռէմոռէ տի ռիզն ևն։

Յաղագս ախտի, որ ասի ռիդիֆէցցա սինռոմռիֆա, այսինքն արկածէան ընդախտումն։

Ախտս այս ոչ բնաւ ապաքինի, եթէ ոչ նախ բուժեսցի ախտն, յորմէ պատճառի և յառաջ գայ այս տեսակ թոքախտութէ. հասարակօրէն պատճառի յայտցիկ ախտից, վիցիս սքռոֆոլոզս, կամ սքռոֆոլս աթ-

թուալէ, սքօռպուԹօ, ազմա, սխան գաղղիական. ևն. վասն որոյ պարտ է նախ դարման տանիլ սխ-տից այսոցիկ, յորոց պատճառի, 'ի գործ արկանել-լով զկառավարուԹն և զդեղորայս սեպհականս իւ-րաքանչիւր սխտից։

Ալ եԹէ սխտս այս յառաջ գայ յո՛ և ելցէ սաստ-ակ ինչ լուծողականուԹէ, կամ 'ի հոսմանէ, յայն-ժամ պարտ է փուԹալ առ 'ի արգելուլ զայն, և միանգամայն պարտ է զօրացուցանել զախտակիրն՝ 'ի գործ արկանելով շարժողուԹիւն պատշաճողականս, կերակուրս սնուցողականս, քօռտիալս, ևն։ Դարձեալ գիտել արժան է, եԹէ յախտէս յայսմանէ ըմ-բռնին յոլով անգամ մարք կոծովագոյնք և փափկա-կեացք, որք ընդ երկար ժամանակս գիեցուցանեն զզաւակս իւրեանց, ուստի և սկսանին ուժաԹափ լինել. վասն որոյ պարտ է նոցա պահպանել զզօրու-Թիւնս իւրեանց, կամ հատանելով 'ի ստենէ զերա-խայն, և կամ գտանել զայլ ոք սնուցիչ. ապա ԹէՀ ոչ՝ անհնար է նոցա այլազգ ապաքինուԹէ ակնկալել։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս սխտի որ ասի՝ ալեռօփիա, կամ ռիդիֆէցցա նէռվը-ղա. այսինքն ջղային ռոփոխտորութի։

Սխտս այս է նշանաւոր ինչ հիւծումն, կամ մա-շումն բովանդակ մարմնոյ առանց վերոգրեալ նշա-նաց, և աստիճանաց զուգընԹաց գտանելոյ, այսինքն առանց տենդի, առանց հազի, առանց գժուարուԹի կրելոյ 'ի շնչառուԹէ և 'ի կլանելն ևն։ Ալ զու-գընԹաց ունի միայն ընդ իւր զտկարուԹ ինչ, զպա-կասուԹէ ախորժակի, և զանմարսողականուԹ։ Ան-ձինք, որք են ընուԹիւն անհանգիստ և անհամբեր, և որք 'ի գործ արկանեն առատօրէն զոգիաւոր հեղա-նիւԹս, և որք վիճակեալ են ապականեալ ինչ օդոց, են առաւել ենԹակայ սխտիս այսորիկ։

Յաղագս կառավարութեան և գեղջկէից՝ զոր պարտ է 'ի վար արկանել 'ի դիպուածս այսորիկ ասելոյ։

'Ի դիպուածս ախտիս նախ քան զամենայն պարտ է կերակրոցն ախտակրին լինել թեթև, և անուշ զկան. այլև պարտ է շարժողութիւնս առնել ստէպ ստէպ 'ի բացօթեայ տեղիս, և 'ի գործ արկանել զիրս դառնագինս առ 'ի զօրացուցանել զստամոքսն, որպիսի են՝ քինա քինան, Ճէնցիանան, կինամոնն, օշինդր, և՝ն. զոր պարտ է դնել 'ի մէջ միոյ բաժակի ջրոյ կամ գինւոյ, և 'ի գործ արկանել ստէպ ստէպ յաւուրն։

Դարձեալ՝ 'ի դիպուածս ախտիս յոյժ օգտակարագոյն դեղ իմն է էլիսիրէ տի վիթռիօլ, զոր պարտ է 20 կամ 30 շիթս եդեալ 'ի մէջ միոյ բաժակի գինւոյ, կամ ջրոյ 'ի գործ արկանել յաւուրն երկու անգամ։ Դարձեալ, ընկալ երեք ունկի՝ լիմաթուռա տի ֆէռռօ, կամ աչչիսաէ, և դիր 'ի մէջ մի բինթա օպիտակ գինւոյ, և թող մնալ երիս շաբաթս, բայց յայսոսիկ յաւուրս պարտ է միշտ ցնցել և շարժել զապակեայ անօթն, յորում եդեալ է գինին երկու ունգամ յաւուրն. այս դեղ մաքրէ զարիւնն, զօրացուցանէ զստամոքսն և զբնութիւն, և՝ն։ 'Ի վախճան ամենայնի՝ կարևոր դատիմ խրատել զամենեսին առ 'ի փախչիլ 'ի պատճառաց ախտիս, հրաժարիլ յամենայն եղեռնագործութեանց, և 'ի վաղաչ տուփանաց մարմնոյ. որովհետև մեծագոյն մասն երիտասարդաց և օրիորդաց վասն այսր պատճառի ըմբռնին յախտէ աստի։

Թէ ըզհոգւով՝ ապախտ առնեն,
զի՞ և մարմնոյ՝ խընամ չառնեն.
այլ երկոցունց՝ ոսոխ յառնեն,
մատնել 'ի ցաւս՝ որ միշտ դառն են։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս ախտի, որ ի՞նչի՝ ապնա, կամ ապինա, այսինքն ընչարգելութիւն։

Ընչարգելութիւնս այս է ախտ ինչ թոքոց, և հաղիւ երբէք է ապաքինելի, մանաւանդ եթէ ի՛ցէ հնացեալ. և է դժուարութի՛ ինչ շնչառութե՛, առաւել կամ նուազ սաստկագոյն, ըստ որում զոյգ գոտանի՛ ևս ջերմութի՛ ինչ ժամանակեայ, այսինքն ո՛չ է յաւուստև, այլ երբեմնական, և 'ի ժամանակս ինչ սահմանեալ. ուստի յայտ է՝ եթէ յոյժ դժուարին իմն է ճանաչել զախտս զայս. որովհետև այսպիսի դժուարութի՛ շնչոյ գոտանի՛ ևս 'ի գիպուածս որ և ի՛ցէ ախտի՛ կրծոց, սրտի՛, ստորին որովայնի՛, և այլ բազմակերպ ախտից։ Ենթակայ ախտիս են հասարակօրէն անձինք, որք անցեալ են զաւուրբք, ևս նոքա որք պարապին 'ի տեղիս՝ յորս հնչէ հողմն փոշեախուռն. մանաւանդ նոքա որք 'ի պատճառէ արհեստին ուն նին, զորօրինակ ոսմնագիրք, քանդակագործք, փռանապետք, ևն։ Եւ բաժանի ախտս այս շնչարգելութե՛ յերկուս, այսինքն 'ի խոնաւ, և 'ի չոր, կամ'ի շընչարգելութի՛ ջլական, կամ ցնցական։

Յաղագս պատճառաց ընչարգելութե՛։

Ախտս այս երբեմն է ժառանգական, երբեմն ևս մարթի յառաջ գալ 'ի յոռեգոյն կազմուածոց կրծոց, 'ի վատթար օդոց, 'ի մեռաղական գոլորշեաց, որք ընդմտանեն 'ի թոքն շնչառութե՛ն. 'ի յուժդին ինչ աշխատանաց, մանաւանդ յարշաւակի ընթանալոյ, յարգելականութենէ երիք սովորական հոսմանց այսինքն դաշտանի՛, թանչից, քրտանց ևն, 'ի յանկարծակի ելուածոց ելելոց 'ի վերայ թոքոց կամ յայլ մասն. 'ի յորդ դատարկմանէ արեան, և շարա-

ռոյ • որպէս պատահի յախտից, որք ասին՝ վախուօլս, ռօզօլիա, բորոտութիւն, որքիւն են • 'ի սատիկ կրից, որպիսի է երկիւղն, տրտմութիւնն են։ Եւ միով բանիւ ասացից, ախտս այս մարթի յառաջ գալ յայնմ ամենայնէ, որք արգելական լինին շրջագայութեան արեան 'ի թոքն։ Դարձեալ՝ բորբոքողականութիւնն կրծոց, թոքոց, տենդքն անընդհատք, ախտն արգանդի, և ախոնդանաց, գործողութիւք սեւամաղձային, երկարատև հիւանդութիւքն, աքօռպութիւն անուանեալ ախտն, արգելականութիւնն արտաշնչութիւնք մարմնոյ, ցուրտ և խոնաւ հողմունքն, կաքաւումն, և բարձրաձայն կարկաչումն են, պատճառեն յոլով անգամ զախտս զայս։

Յաղագս նշանաց այսորիկ ախտի։

Գլխաւոր նշանն է դժուարութիւն կամ աշխատանք ինչ 'ի շնչառութիւն, զորօրինակ պատահի 'ի մարդն զկնի սատակագոյն արշաւանաց, և վազից • վերոյշեալ բորբոքումն՝ ընդ որում զուգընթաց լինի հասարակօրէն հակումն, կերկերումն ձայնի, հազն, և քամին, որ եւանէ ընդ բերանն, ծանրութիւն ինչ, զոր զգայ ախտակիրն 'ի կուրծս, դժուարութիւն 'ի շնչառութիւն, են • ընդ ասացեալ նշանացս գտանի միանգամայն զոյգ երբեմն տենդն, ցաւ գլխոյ, անձկութիւն սրտի, յօժարութիւն ինչ 'ի փսխել, բաբախիւն սրտի։ Զարկ բազկերակին լինի տկար, և երբեմն ընդհատ, արտասուք յակամայս, փսխողութիւք մաղձային • այս ամենայն վերոգրեալ նշանք սատկանան յերեկոյեան պահու։ Ախտակիրն լինի առաւել 'ի հանգիստ 'ի նստիլն՝ քան յընկողմանիլն։

'Ի գիպուածս՝ յորում ախտս այս (որպէս ասացաք) պատահի 'ի խոնաւութենէ, կրէ ախտակիրն զթեթև ինչ ցաւ գլխոյ, նախ քան 'ի վերայ գալ ջերմութեան • և իբրև 'ի գործ արկանէ կերակուրս ջերմագինս, յոյժ նեղն ստամոքսն, բայց ոչ այնպէս յորժամ 'ի գործ արկանէ զկերակուրս ցուրտս • իսկ ջերմութիւնն սկսանի հասարակօրէն զկնի կէս գիշերոյ իբրև երկուս ժամն, կամ զկնի ճաշու, և յարատև մնայ իբրև զերկու կամ զերիս ժամն • երբեմն և իբրև 2 կամ 3 աւուրս • և հասարակօրէն դադարի ջերմութիւնս այս առաւաւոտն ինչ հանմանէ միգն։ Յորժ-

քան ջերմութիւնս այս յարատև մնայ, ախտակիրն կրէ զմեծ ամբոխմունս. բերան նորա մնայ բացեալ, և ստէպ ջանայ և տանջի՝ համարձակ և ազատօրէն շունչ առնուլ, և ոչ կարէ: Իսկ 'ի գիպուածս՝ յորում շնչարգելութիւն պատահի 'ի չորութէ, յայնժամ 'ի գալ ջերմութեն ուռնու սատամքան և ձեռքն ախտակրին, և գէմք նորին վառի խբրև զհուր. բաբախումն սրտի լինի յոյժ սասակագոյն, մինչև կարծել՝ շնչասպառ նուաղել:

Յաղագս խնամապարութեան, զոր պարտ է 'ի կիր արկանել 'ի գիպուածս ընչարգելութեան:

Կերակրոցն ախտակրին պարտ է լինել թեթև և դիւրամարսելի, որպիսի են թեթևագոյն արգանակք, պտուղքն հասունացեալք կամ եփեալք 'ի վուան. պարտ է հրաժարիլ յամենակերպ քամիաւոր և դժուարամարսելի կերակրեղինաց, և յոգիաւոր և 'ի սասակի հեղանիւթոց. պարտ է անձնապահ լինել 'ի ցրտոյ, մանաւանդ 'ի ձմեռան եղանակի, և պարտ է միշտ ջերմ և չոր պահել զոտսն, և լոյծ ունել զորովայնն: Այնպէս յոյժ օգտակար և կարևոր է ախտակրին վայելել 'ի մաքուր, 'ի չոր, և 'ի բարեխառն օդս, ևս շրջագայիլ, և շարժողութիս առնել: Այլ և պարտ է նմա կարի սակաւ 'ի քունն լինել, և այն 'ի գիշերի. քանզի քունն 'ի առնջեան է յոյժ վնասակար:

Յաղագս դեղրէից, զոր պարտ է 'ի վեր արկանել 'ի դիպուածս ախտի ընչարգելութեան:

'Ի գիպուածս ախտիս մեծի զգուշութիւն պէտք է առ 'ի գործ արկանել զդեղսրայս: Նախ՝ պարտ է պատրաստել դրեխս կակղացուցիչս խառն ընդ սասաֆէթիտաի. զոր և պարտ է կրկնել ըստ պահանջելոյ պարագայից երկու կամ երիս անգամ: Այնպէս դնել պարտ է զոտս և զձեռս ախտակրիս 'ի մէջ ջերմ ջրոյ, և ստէպ շփել զնոսին ձեռօք կամ չուխայիւ:

Երակ հատանելն երբեմն պահանջի 'ի գիպուածս ընչարգելութեան, որ յառաջ գայ 'ի չորութէ. զոր և պարտ է չափել ընդ պարագայս ակորութեան ըստ հա-

տակի ախտակրին, և սատկութեան նշանաց։ Զկնի երակ հատանելոյ՝ պատշաճագոյն է 'ի գործ արկանել զՖոմէնթի երիցկի ջերմ ջրով. և կրկնել զայն ըստ պահանջելոյ պարագայիցն։ Երբեմն ևս պարտ է դնել զախտակիրն 'ի մէջ գաղջ ջրոյ, և թողուլ այնքան, որքան տանի զօրութիւն նորին։ Իսկ իբրեքաքուանա անուանեալ փոշին հարկաւորապէս պահանջի 'ի դիպուածս շնչարգելութեան, որ գոյանայ 'ի ջորութեան. զոր պարտ է հանապազորդել ըստ տասն կամ 20, և կամ 30 աւուրս, տալով ախտակիրին ժամէ 'ի ժամ երկու ցորեան 'ի պահ առաւօտուն, մինչև լցցի վեց ցորեան յաւուրն։

Յետ փսխողական դեղոյ, պարտ է պատրաստել ոխտակրին ըմպելիս, մի գրդալ սեղանոյ թինթուռա տի քասթօռս, և տի զսֆռանս խառնեալ ընդ սկահակ մի սրձոյ, ինֆուզիօնէ տի վալերիանս, պարտ է 'ի գործ արկանել յաւուրն երկու կամ երիս անգամ։ Դոյնպէս օգտաւէտ է 'ի դիպուածս յայս գործածուին զօրացուցիչ իրաց. վասն որոյ մարթ է երկու անգամ յաւուրն 'ի գործ արկանել մի գրդալ էլիսիռէ լէնիթիվ. կամ պատշաճագոյն ևս է քինա-քինա, կամ փոշի արարեալ, և կամ լուծեալ 'ի մէջ գինւոյ։

Համառօտիւ կամեցեալ ասել, 'ի դիպուածս ախտիս ջոր շնչարգելութեան պարտ է 'ի գործ արկանել զայն տմենայն, որ զօրացուցանէ զՍիրտ և զստամոքսն։ Հասարակօրէն յոյժ օգտակար են 'ի դիպուածս որպիսի և իցէ շնչարգելութեաց՝ գործածութի վէշլքանթէի, տզրկի, խարտանի, հաճամանթի և ն. բայց պարտ է միշտ բաց պահել զխարտանն, և ոչ ջորացուցանել։ Դարձեալ ըստ պատմելոյ հմտագոյն բժշկաց, 'ի դիպուածս ջոր շնչարգելութեան՝ համարին դեղ իմն ազնիւ և օգտակար զՍիրտն գաղնիսեժի կամ ձիւթոյ, զոր պարտ է տալ հիւանդին երկու կամ երեք անգամ յաւուրն՝ զչափ միոյ սկահակի. և պատմեն միանգամայն հեղինակք, եթէ բազում անգամ անձամբ ոկանատես եղեն օգտաւէտութեան այսր դեղոյ։ Դոյնպէս յոյժ շահաւէտ է սպիտակ և մաքուր մեղրն, զոր պարտ է առատօրէն 'ի կիր արկանել 'ի դիպուածս յայս։

'Ի դիպուածս, յորում պատճառի շնչարգելութեան 'ի բորոտութեան կամ յորքիւնայ, յայնժամ հասարա-

կօրէն գեղն է վեշիքաթօրիօ. զոր պարտ է դնել 'ի կուրծս, կամ 'ի մէջքն, և կամ 'ի բազուկս, և թողուլ քանի ինչ շաբաթս, մինչև ցփարատիլ հնչարգելու։ Իսկ 'ի գիպուածս խոնաւային հնչարգելութեն չէ բնաւ օրէն երակ հատանել. այլ յայնժամ պատշաճական գեղորայք են գործածութիք մաքրիչք կրծոց՝ կամ մազասին. որպիսի են՝ ադուիլլա, կօմմա ամմոնիաքա և ն. որ այսպէս բաղադրի։ Ա՛ռ մի և կէս տրամ՝ ադուիլլա սէքքա ին բօլվերէ, երեք տրամ կօմմա ամմոնիաքա, և նոյնչափ սէմի տի քարտամօմօ, և յաւէլ այնչափ շիլօբբօ քօմունէ որչափ պէտք լցեն առ կազմելոյ ըստ կանոնաց արհեստին. զգոնգուածս զայս արարեալ հապ՝ որ կշռիցէ հինգ կամ վեց ցորեան, և շրջապատեալ փոշեով կինամոնի, տացին երկու կամ երեք հատք երկու անգամ յաւուրն։

Նոյնպէս օգտաւէտ է պատրաստուին ադուիլլա, որ այսպէս բաղադրի. ընկալ մի ունկի՝ շիլօբբօ տի ադուիլլա կամ օսսիմէլէ շիլլիթիքօ, և նոյնքան՝ ջուրն կինամոնի։ Յրմպելլոյ աստի առցէ հիւանդն երեք կամ չորս անգամ յաւուրն՝ զգրգալ մի սեղանոյ։ Բաց 'ի գեղորէից աստի՝ շահաւէտ յոյժ եղիցի 'ի կիր արկանել պարզ նպաստս, որպիսի է զանգուածն ինչ հատագեղոյ՝ բաղադրեալ 'ի կէս ունկի՝ ասասֆէթիտա անուանեալ խեժէ, և երկու տրամ ֆիօռ տի պէլցուինօի և բաւականաչափ շարտպոյ հատարակի, որ ասի շիլօբբօ քօմունէ։ Կազմեալ աստի հապս, որոց մէն մի կշռիցէ վեց ցորեան, տացես ախտակրին չորս կամ հինգ հատս յերեկոյեան պահու 'ի մտանելն յանկողին։ Նոյնպէս օգտաւէտք են քեռմէզ մինէռալէն, և քանֆօռան. զոր պարտ է զգուշութիւն և չափով ընծայել։

Յաղագս հնարից, զորս պարտ է 'ի վար արկանել՝ առ 'ի արգելուլ զգալուսպ ախտի ընդարգելութեն։

'Ի ժամանակի՝ յորում յայտնիլ սկսանի գալուստն այսր ախտի, յայնժամ պարտ է ախտակրին 'ի գործ արկանել նախ՝ 12 կամ 15 ցորեան խբէքաքուանա փոշի արարեալ ըստ կանոնի փսխողականի, և յետ այնորիկ պարտ է յամենայնում աւուր 'ի կիր արկանել երկու ցորեան զնոյն խբէքաքուանա խառն ընդ

կէս ցորեան՝ տիճիթալէ բօռբօռինակ, մինչև 315, կամ 20 աւուրս ընդ առաւօտն, և ապա բանալ մի քաւթէռիօ, այսինքն եախու, և թողուլ բացեալ Ը բովանդակ կեանս ախտակրին։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս հիւանդութեան կանանց ընդհանրապէս, ըստ իտալ. մալարիէ պէլլէ քէմմինէ էն ճէնէռալէ։

ՅՕԳՈՒԱԾ Ա.

Յաղագս դաշտանի, կամ յաղագս ամսային հոսմանց, որ ասի՝ մէնռոռոի, կամ քլռոռոռ մէնռոռոալէ։

Դաստարակօրէն կանայք սկսանին ունել զդաշտանն իբրև 'ի հասակի 14 կամ 15 ամաց, և դադարին ունել զնոյն 'ի հասակի 50 ամաց. բայց 'ի վերայ այսր ամենայնի գիտել արժանէ, եթէ հասակն յորում դաշտանն երևիլ սկսանի 'ի սեռս կանանց, ոչ է միշտ յամենեսին նոյնօրինակ։ Ասուիճանն կամ կլիմայն երկրին՝ յորում բնակին, ուժեղութիւնն և տկարութիւնն կազմուածոց, պարագայքն վիճակի, և կենաց, յորս վայելեն, ասն նշանաւոր իմն տարբերութիւն նախկին երևման այսր դաշտանի։ 'Ի քաղաքս Ջերմագինս աղջկունք սկսանին դաշտանաւորիլ 'ի հասակի ինն ամաց, և երբեմն ևս կանխագոյն։ Պատմի վասն միոյ աղջկան բնակելոյ յարևելեան հնդիկս, եթէ 'ի հասակի հինգ ամաց դաշտանաւորեցաւ, և յեօթներորդում ամի ծնաւ։ Այլ 'ի քաղաքս ցուրտս ընդ հակառակն կանայք հազիւ 'ի հասակի 20 կամ 25 ամաց դաշտանաւորին, և յառաւել ցրտագոյն երկիրս բնաւ ոչ ունին զնոյն. որպիսի է գաւառն անուանեալ կռօէլանտիա։

Իսկ հոսումն այսր դաշտանի միանգամ սկսեալ,

ունի վճարիլ յամենայնում ամսեան. այսինքն յամենայն 26 կամ 28 աւուրս միանգամ, և այս է առաւել հասարակն։ Բայց են կանայք ոմանք, որք առանց ինչ ինաս կրելոյ՝ ըստ բնութեն անօրինելոյ դաշտանաւորին երկու անգամ յամսեան, կամ երեք անգամ յերկու ամիս. և ը հակառակն՝ ոմանք ևս ոչ դաշտանաւորին, բայց եթէ 'ի 5 շաբաթ միանգամ։ Իսկ աւուրքն՝ յորս յարատև մնայ հոսումնս այս, անստոյգ են. բայց չէ հնար ընդհանրապէս մնալ յարատև՝ առաւել քան զվեց օրն, և պակաս քան զերիս աւուրս։

Դժուարին ինն է կշռադատել զորքանութիւն աբեանն, որ հոսի յիւրաքանչիւր անգամն, որովհետև տարբերի ըստ տարբերութեան ենթակայից, մանաւանդ ևս երբեմն 'ի մի և 'ի նոյն ենթակայ լինի տարբեր։ Դաշտանն պակասի 'ի ժամանակի յղութեան, մանաւանդ 'ի վերջին ամիս. որովհետև պատահի երբեմն մնալ յարատև յառաջին երիս ամիս։ Նոյնպէս պակասի 'ի մեծագոյն մասն անուցչաց։ Հուսկ յետոյ պակասի 'ի գեղջուկ, և յաշխատաւոր կանայս, ևս և 'ի կաքաւիչ կանայս, որք ևս ոչ դաշտանաւորին առանց մեծի նեղութեան. բայց հնարաւոր է երբեմն յայսպիսի դիպուածս, եթէ քիրան և այլ արտահոսեալքն ընուն զտեղի դաշտանի։ Սակայն մեծի զգուշութեամբ պէտք են կանանց 'ի ժամանակի դաշտանի. քանզի մեծագոյն մասն նոցին վտանգաւորին վասն անզգուշութեան։

ՅՕԳՈՒԱԾ Բ.

Յաղագս առաջին երևման դաշտանի։

Եթէ օրիորդ ոք 14 կամ 15 ամաց՝ արգելական մնայ ուրեք փակեալ 'ի ընակութեան ինչ՝ առանց կարելոյ շարժումն ինչ առնել, և այսր անդր ընթանալ, վերջապէս առանց իրիք գործնական պաշտօնի, որով մարթ իցէ 'ի սթափութեան պահել զմտաւոր մարմնոյ իւրոյ, այնպիսին լինի տկար, թալկացեալ, և հիւծեալ, արիւն նորա դեղնագոյն, և այլափոխեալ

գլխովին առողջութիւն նորա. արիութիւն և զօրութիւն նուազելով նուազի, և ընդ բովանդակ մնացեալ կեանս իւր մնայ հիւանդագին։ Այդպիսի իմն վիճակի են հանդիպեալ մեծագոյն մասն դժբաղդագոյն օրիորդաց, որք կամ վասն հեղգութիւն և անհոգութիւն ծնողացն, և կամ վասն դժուարութիւն պարագայիցն յորս գտանին՝ զրկեալ մնան 'ի կարևոր զբօսանաց, և յառողջարար օդոց, ևն։

Բայց գիտելի է, եթէ է միշտ յոյժ օգտակարագոյն դաշտանաւորիլն օրիորդաց 'ի պատշաճագոյն հասակի, այսինքն 'ի հասակի 12. 13. 14. կամ 15 ամաց. և ընդ հակառակն՝ մեծապէս վնասաւոր, և երկիւղալի է, եթէ դաշտանն երևեսցի կամ յոյժ վաղքաջ, և կամ կարի անագան, որովհետև գուշակեն զպատահարս թշուառս, որպիսի են՝ ազգ ինչ դժնդակ հիւանդութեանց, կրեն զմեծ վիշտս և նեղութիւս 'ի ժամանակի դաշտանաւորութեանն։ և հասարակօրէն այսպիսիք հազիւ ուրեք են ենթակայ յղանալոյ, և մանաւանդ ծնանելոյ բարի և առողջանդամ զաւակս։

Յաղագս նշանացն, որք կանխեն զան պատաքին երևումն դաշտանի։

Հազիւ ուրեք պատահի՝ եթէ դաշտանն յանկարծակի և յանսպասելի պահու 'ի վերայ եկեսցէ ուրուք օրիորդի. այլ հասարակօրէն յառաջեն նշանք ազդարարողք այնմ, որպիսի են յետագայքդ. ջերմութիւն, ծանրութիւն, ցաւն երիկամանց, պնդութիւն և կարծրութիւն ծոցոյ, ցաւն գլխոյ, դեղնութիւնն երեսաց, կորուսան ախորժակի, և երբեմն ևս փոքրիկ ինչ տենդ։

Յաղագս կատարման, որք պահանջին 'ի դիպուածս այսոցիկ նշանաց։

Յորժամ օրիորդ ոք հասանէ 'ի չափ հասակի ունելոյ զդաշտանն, և զդոյ զվերոյիշեալ նշանս, պարտ է իսկ և իսկ փոյթ մեծ ունել՝ զի մի յապաղեսցէ այնպիսի հոսումն առողջարար և կարևոր, այլ զամենայն հնարս կարելիս 'ի վար արկանել առ 'ի փութացուցանել զնոյն. որպիսի է նստիլն 'ի վերայ գոլորշեաց ջերմագին ջրոյ. և սաէպ սաէպ գնելն զոտս

և զարունս 'ի մէջ ջերմ ջրոյ, և ըմպելն թիզանէ տէջ լուէնելի, այսինքն ըմպելին հեղեղկիչ դեղոց։

Յաղագս եղանակի, որոյ պարբ է վարել 'ի ժամանակի դաշտանի։

Իսկ և իսկ յորժամ միանգամ դաշտանն սկսանի հոսիլ, պարտ է մեծապէս զգուշանալ յամենայն ինչ ասկարը իրաց։ Վասն որոյ պարտ է կանանց յայսոսիկ ժամանակս զգոյշ լինել 'ի վերայ կերակրոց և ըմպելեաց, զորս ուտեն, և ըմպեն. պարտին հրաժարիլ յայնմ ամենայնէ, որք են ցուրտ բնութիւն, և զայրացուցիչք սառամոքսի. որպիսի են խակ և ահաս պտուղն, կաթն, կոգին, և են։ Նոյնպէս պարտին հեռի կալ 'ի ձկանէ, և յայլ ամենայն դժուարամարսելի կերակրեղինաց։ Բայց որովհետև է անկարելի նոցն 'ի համար բերել մի ըստ միոջէ զայն ամենայն, որք ինաստաբեր են կնոջ 'ի գիպուածի յայսմիկ, խրատ տամք ամենեցուն ընդհանրապէս, զգոյշ լինել յայնմիկ ժամանակի, զէթ յայնմ ամենայնէ, որ հատաբակօրէն ընդդիմանայ բնութեան նոցին։ Զուրտն է մասնաւորապէս ինաստակար կանանց 'ի ժամանակի դաշտանի, և բազում կանանց հիւանդութիւն յառաջ գայ 'ի ցրտոյ զոր առնուն յայնմ ժամանակի, քան յայլ ինչ պատճառաց. ուստի պարտին մեծապէս զգոյշ կալ 'ի ցրտոյ. որովհետև փոքր ինչ ցուրտ որ յայլ ինչ ժամանակի ոչ է ինաստակար, բաւական է 'ի ժամանակի դաշտանաւորութիւն տապալել գլխովին և կործանել զառողջութիւն, և զկազմուածն նոցին։ Դարձեալ գիտել արժան է՝ եթէ կիրքն, սուգն, անձկութիւն, և վիշտն, երկիւղն, և այլ ամենայն կիրք հոգւոյ՝ պատճառեն սովորաբար զձնշումն և զարգելումն դաշտանի, որ բացարձակապէս լինի անբուժելի։

ՅՕԳՈՒԱԾ Գ.

Յաղագս արգելականութեանց դաշտանի։

Կառավարութիւն 'ի գործ արկանելիս 'ի դիպուածս արգելման դաշտանի յորպիսի և իցէ պատճառաւ լինիցի յառաջ եկեալ։

Որպիսի և իցէ պատճառն՝ յորմէ լինիցի յառաջ եկեալ արգելականութիւն դաշտանի, բաց 'ի դիպուածոց յղութեան, սնուցչութեան, կաթուածման, աշխատութեան, և, զորոց առացաք վերագոյնդ, պարտ է մեծապէս փոյթ ունել առ 'ի յետս դարձուցանել զնոյն. վասն որոյ իբրաւ տամք կանանց՝ որք գտանին յայսպիսի վիճակի, առնել չափաւոր ինչ շարժումն, ընակիլ 'ի տեղի՝ որ ունիցի զօդ առողջարար, չոր, և զովացուցիչ, նմանապէս ուտել կերակուրս առողջարարս։ Եթէ մարմինն լինիցի տկար, և թալկացեալ, պարտին ըմպել հեղանիւթս զօրացուցիչս, և կենակցիլ ընդ մուերիմ անձինս, և վերջապէս զուարճացուցանել և զօրացուցանել զընութիւնն պատշաճաւոր զբօսանօք. իսկ եթէ այս կառավարութիւնք անօգուտ լինիցին, պարտին 'ի գործ դնել զդեղորայս զորոց խօսեացուք յառաջիկայդ։

Յաղագս դեղորէից արգելականութեան դաշտանի, որ պատճառի 'ի Ռու�ութեան։

Յորժամ յառաջ գայ արգելումն դաշտանի 'ի ստատիկ թուլութեէ, ճանաչի 'ի յետագայ նշանաց։ Հիւանդն զգայ զմեղկութեն, զակարութեն, զցաւս, և զծանրութեն ինչ 'ի մէջս, զցաւ գլխոյ, զտքնութեն, և զարգելականութեն շնչոյ, զփքուութեն և զուռոյցն ստամոքսի, և զյօժարութեն ինչ 'ի փսխել, և խիթ, դեղնութեն ինչ հասարակ, որ տարածանի ընդ ամենայն մասունս մարթոյ, մանաւանդ 'ի դէմս, և դեղնութիւնս այս երբեմն 'ի կանաչագոյն փոխարկի։ Վերջին նշանս այս հաստատէ զախտն ստացեալ քլորոզի, զորմէ խօսեացուք 'ի հետագայ յօդուածն։

Արդ՝ 'ի դիպուածս յայս՝ պատշաճ է 'ի գործ արկանել զդեղորայս՝ որք են Ընունակ 'ի դիւրացուցանել զմարսողականութիւն, և 'ի զօրացուցանել զթուլութիւն, և ևս բարեկարգել և յարդարել զդործարանսն առ 'ի պատրաստել զարիւն ինչ առողջարար և բարի։ Աղնուագոյնն, և գլխաւորն 'ի մէջ այսոցիկ դեղորէից է երկաթն, և քինաքինա, խառնեալ ընդ այլ դառն սեղմեցուցիչս։ Խարատած երկաթոյ ամրկ 'ի մէջ գինւոյ կամ պիռռաի, ըստ հետագայ եղանակիս։ Ամրկ երկու կամ երեք ունկի՝ ամենանուրբ խարատած երկաթոյ՝ յերկու լիտր գինւոյ կամ պիռռայի. զկնի երկուց շաբաթուց հեղ զդուշութեամբ զհեղուկն յայլ ապակի անօթ, և տուր ըմպել հիւանդին երկու անգամ յաւուրն՝ զչափ միոյ գաւաթի։ Կամ, առ երեք տրամ վերոգրեալ խարատածդ երկաթոյ, և նոյնչափ՝ ռասպառպառս, և յաւէլ այնչափ շիլօբբս ոչ քռօքս որչափ պէտք իցեն առ կազմելոյ ըստ կանոնաց արհեստին զզանգուածս զայս. արարեալ հապ՝ որ կշռիցէ հինգ ցորեան, տացին հիւանդաց երեք կամ չորս հատք երկու անգամ յաւուրն։ Քինաքինա, ասպինթիս, Ճէնցիանա, և այլ դառնագին իրք մարթին 'ի գործ արկանել, կամ արկեալ 'ի թուրմն, և կամ առանց թրմոյ ըստ տանելոյ ախորժակի հիւանդին։

Յաղագս արգելականութեանն դալպանի պատճառելոյ 'ի յառաջութենէ, և 'ի կռուականութենէ արեան։

Յորժամ ախտս այս յառաջ գայ 'ի յառաստութենէ, կամ 'ի հոծութենէ, և կամ 'ի թանձրամածութենէ, և 'ի կռուականութենէ արեան, և եթէ կանայքն, որք կրեն զախտս զայս՝ լինիցին վիճակեալ հիւթային կամ արիւնային իմն խառնուածոց, պատշաճագոյն դեղ են լուծողականքն, և այնք ամենայն, որք լուծեալ անօսրեն և ներբացուցանեն զհիւթս կամ զարիւնս։ 'Ի դիպուածս յայս պատշաճ է երակ հատանել, ատէպ ատէպ դնել զոտս 'ի մէջ ջերմ ջրոյ, և երբեմն երբեմն 'ի գործ արկանել լուծողականս զովացուցիչս։ Կերակուրքն պարտին լինել թեթև, և հեղանիւթ, ըմպելին՝ նիէռս ոչ լաթթէ, և թեթևագոյն պիռռա։ ԵՒն, պարտ է ևս առնել շարժողութիւն։ Դարձեալ, պարտ է յաւուրն երկու անգամ տալ նմա մի վոքրիկ

դրդալ թինթուռա տի էլլէպօռ պիանքօ, արկեալ 'ի մէջ միոյ բաժակի ջերմ ջրոյ։ Բայց հասարակօրէն արգելականութիւն դաշտանի պատճառեալ 'ի թանձրութէ՝ առաւել ենթակայ է առողջութէ, և բազում անգամ ապաքինի միայն երակ հատանելով յոտից։

Յաղագս արգելականութէ դաշտանի պատճառելոյ 'ի կրից հոգւոյ։

Յորժամ արգելականութիւն պատճառի 'ի կրից հոգւոյ, 'ի տրտմութէ, յերկիւղէ, 'ի խռովութէց սրտի և՝ն, պարտ է 'ի գործ արկանել զոր ինչ միանգամ յարմար է 'ի զուարճացուցանել, և 'ի սփոփել զախտաժեռեալն։ Առաւել ապահով հնարն է՝ խլել զպատճառն այսր ախտի, այսինքն հեռացուցանել զախտակիրն 'ի պատճառաց տրտմութէ։ Նոյնպէս յոյժ օգտակար է տեղափոխութիւն, տեսութիւն զուարճալի առարկայից և՝ն։ Այս ամենայն հնարք թէպէտ են բարիք և կարևոր, բայց ոչ միշտ բաւականք, յորժամ արգելականութիւնն լինի հնացեալ։ քանզի յայսմիկ դիպուածի ընդ առաջ լինին սովորաբար նշանք թանձրութեան արեան։ վասն որոյ պարտ է փոյթ ունել յայնժամ 'ի նրբացուցանել զարիւնն։ և հասարակօրէն սկսանիլ պարտ է յերակ հատանելոյ 'ի բազկէն, և յետ այնորիկ յոտից։ Նոյնպէս պարտ է դնել տզրուկս 'ի բերան արգանդին, յանօթս թանչից։ Այլ և մարթ է մուծանել սրուակս արեան յաղդերս, 'ի քունջս երանաց, և՝ն։

Իսկ առաւել զօրաւոր հնարքն 'ի դիպուածս որք ոչ են այնքան ծանունք զկնի վերոյիշելոցն, է գոլորշին ջերմ ջրոյ, յորոյ վերայ պարտ է նստուցանել զախտակիրն, բաղանիք ջերմայինք, դնել զոտս մինչև ցարունս 'ի մէջ գաղջ ջրոյ, նոյնպէս մարթ է առնել կակղացուցիչ ֆոմէնթի, և՝ գրեխս թուլացուցիչս և՝ն։ զայս ամենայն գրեալս 'ի վար արկանելն 'ի դիպուածս արգելականութէ դաշտանի, որ եթէ 'ի կրից, եթէ 'ի ցրտոյ, և եթէ յորովիսի և՝ իցէ պատճառէ յառաջ եկեալ, է յոյժ պատշաճողական, և օգտակարագոյն։

Յաղագս գիտելոյ, զորս պարտ է ունել նախ քան զքնամ պանիլն արգելականութիւնք դաշտանի յորմէ պարտաքէ յառաջ եկեալ։

Հասարակօրէն նախ քան զգործածութիւն իրիք դեղորէից 'ի գիպուածս արգելականութիւնք դաշտանի, որ յորպիսի ևս պատճառէ երևեսցի յառաջ եկեալ, պարտ է բարիոք և քաջ ստուգել և հաստատել, եթէ չիցէ պատճառեալ 'ի յղութէ. այլ եթէ չիցէ մարթ հաւատաւեալ ստուգել, և կայցէ ինչ կասկած, յայնժամ պարտ է յերկարաձգել զգործածութիւնն դեղորէիցն մինչև ցհինգ ամիս զկնի արգելականութեանն. քանզի սովորաբար 'ի հինգերորդումամսեան սկսանին նշանքն յղութեան երևիլ և ստուգիլ, և յայնժամ գիւրաւ մարթ է զանազանել 'ի նշանացն, որպէս դնելով լոկ զցուրտ ձեռս 'ի վերայ արգանդի, մարթ է զդալ զշարժումն ինչ երևելի 'ի մէջ արգանդի. թողում ասել զայլ ամենայն նշանաց յղութէ, զորոց խօսեսցուք 'ի յետագայդ։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Յաղագս դժգունութիւնք, որ ասի՝ փլօռօզի, և յաղագս ճնուտոյր փաղցրոյ, որ կոչի՝ Բիֆա, կամ Մալալիա։

Ախտս այս է դժգունութիւն կամ գեղնուն ինչ, և երբեմն կանուչութիւն ինչ տարածեալ յերեսս կանանց, նմանեալ ախտի արգելականութիւնք դաշտանի. բայց և տարբերի յայնմանէ՝ ըստ որում ախտս այս պատահի ևս յայնժամ, յորժամ յարատևեալ հոսի դաշտանն ըստ սովորական պայմանի, բայց յոյժ նուազ քանակութիւն։ Ախտս այս բազում անգամ երևի 'ի քաջատոհմ, և յազնուական աղջկունս, և յամուրի օրիորդս, որք են առոյգ և զօրեղք, և փափկակեացք, և առաւելեալք զգայակ ան մասամբք. բայց վարեն կեանս ընդդէմ բաղձանաց իւրեանց։

Յաղագս նշանաց ախտից դժգունութեան, որ ասի՝ գլխոցի։

Որժամ դժգունութիւն կամ դեղնութիւն այս մորթոյ սկսանի տարածանիլ և արմատանալ յոք, յայնժամ յայտանին և երևին ուռոյցք ինչ 'ի շրթունս, և յայլ մասունց երեսացն, ևս և 'ի սրունս, և յոտս ևն։ Սաստկանայ ցաւն գլխոյ, և ախտակիրն զգայ զանհանգստութիւն ինչ 'ի ծունկս, կրէ զաշխատանս, և զվիշտս 'ի ծնանիլն։ ունի զբաբախիւն սրտի, զանձկութիւն, և զուշագնացութիւն, կրէ զտենդ իմն ծիւրական, որ ասի ֆէպրէ լէնդա՝ առաւել 'ի գիշերի քան 'ի տունջեան։ սաստկանան և ուռնուն ախոնդանքն, (որք են սահմանք կամ տեղիք լերդին, և փայծեղան։) և ամբառնայ որովայնն, մինչև երբեմն տալ կասկածանս զյղութէ աղջկանն, ևն։ Զայսպիսի ուռոյց որովայնի պարտ է առաւել վերաբերել առ ըմբռնումն որովայնի, որ ասի ռիթէնցիոնէ, քան առ արգելումն դաշտանի։ որովհետև սովորաբար աւարտի 'ի հոսումն արեան։ Այս ուռոյց կոխեալ զմատունսդ, հեռք ոչ տպաւորին 'ի նա, և ոչ իսկ փոսանայ տեղն մատանցն, որպէս 'ի դիպուածս ջրգողուեց, զորմէ խօսեցաք 'ի տեղւոջն։ և ուռոյցս այս առաւել նշանաւոր լինի ընդ առաւօտն, քան ի երեկոյն։

Թէպէտ և արգելականութիւնն դաշտանի է ընդհանուր պատճառ այսր ախտի դժգունութեան, սակայն ոչ է բոլորական պատճառն, որովհետև դաշտանն հոսի 'ի ժամանակէ 'ի ժամանակ։ Արդ 'ի դիպուածս յայս այնքան առաւել է երկիւղալի ախտն, եթէ պատճառեալ իցէ այն 'ի խցանաց ընդերոց ստորին որովայնի։ Դարձեալ՝ ախտս այս պատճառէ երբեմն զամլութիւն, և մարթ է յարատև մնալ ընդ երկար ժամանակ։ բայց հասարակօրէն չէ այնքան երկիւղալի, եթէ չլինիցի պատճառեալ 'ի վերոյիշեալ պատճառէ։ Իսկ եթէ անփոյթ անիցեմ թողցի, մարթ է պատճառել զախտն ասացեալս՝ ջրգողուն, ախտագունուն, որ ասի՝ քաքէսիա, ևն։

Յաղագս նշանաց ՀԱՍԱԿԱՐ ԹԱՂՑՈՒ, կամ ապականեալ ախորժակի, որ կոչի՝ Բիւթա, կամ Մալաչիա։

Կանայք՝ որք ունին զվերոգրեալ դժգունութիւն, բազում անգամ ունին և քաղց հասակաւոր, և ախորժակ ինչ անկարգ, և անկանոն, որով ձեռնամուխ լինին ուտել զանսովոր, և զանպատշաճ իրս, զոր օրինակ զաղ, և զհասարակ պղպեղ, զտհաս միրգս, զանեփ և զհում միս, և զձկունս, զկիր, զմողէս, զգորտ, զմոխիր, զածուխ, զձիւն, զսառոյց, զթուղթ, զխաղախ հնացեալ, զապաւառ, և զայլ սոցին նմանս հասակաւոր և անանուանդ նիւթս։ Իսկ ոմանք և 'ի նոցանէ մտադիւր փափաքին և ախորժեն հոտոտալ զգարշահոտս և զզազրալիս, և խաղալ նոքօք 'ի ձեռս ևն։ Այս ապականեալ ախորժակ, որ է ՀՀմարիտ ինն ախտ, կոչի յաղջկունս՝ բիքա, իսկ 'ի յղի կանայս՝ մալաչիա։

Յաղագս դեղոցէն ախորժն դժգունութեանէ, և հասակաւոր թաղցու։

Դեղքն և կառավարութիւնքն ախտի դժգունութեանէն գլխովին նոյն ընդ դեղատուութեանէ, և ընդ կառավարութեանէ ախտի թուլութեանէ, զորմէ խօսեցաք վերագոյնդ։ Բայց գիտելի է, եթէ յորժամ ապականեալ ախորժակն յարատեւեալ մնայ ի երկար ժամանակս, կամ սակաւ ժամանակս, բայց այնքան սաստիկ, մինչև ախտակիրն ձեռնամուխ լինի ուտել զվերոյշեալ զանսովոր կերակուրս կամ նիւթս, պարտ է յայնժամ սկսանիլ նախ՝ 'ի գործ արկանել զփսխողականն, և զլուծողականն, առ 'ի մաքրել զստամոքսն, և զառաջին ճանապարհն, որք լցեալ եղեն այսպիսի այլանդակ նիւթովք, և յետ այնորիկ անցանել 'ի գործածութեան երկաթոյ, քինաքինայի, և այլ դառնագին իրաց։ Բայց 'ի վախճանի՝ պարտ է գիտել, եթէ առաւել ապահովագոյն փորձեալ, և ազնուագոյն դեղն է ամուսնութիւնն այսպիսի ախտացեալ օրիորդաց, որով արդարև ստանան իսկ և իսկ զառողջութիւն։ Այլ յղի կանայք, որք ունին զապականեալ ախորժակն, հասարակօրէն մինչև ցչորրորդ ամիս յղութեանէ նոցին ճնան այլազգ, և ոչ ունին պէտս ի

բիք դեղոյ, մանաւանդ փսխողականի, ապա թէ ոչ՝ դնին յորոգայթ վիժման։

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Յաղագս չափաղանց դաշտանի, որ ասի յէպաղաց՝ Մէնորրոի անօրենի։

Դաշտանն կամ արիւնն տեռատեսական, որպէս երբեմն սակաւ քանակութ, նոյնպէս և երբեմն յոյժ մեծաւ և չափազանց քանակութիւն մարթի հոսիլ։

Պատճառք չափաղանց դաշտանի։

Ուռաւելութիւնն և չափազանցութիւնն դաշտանի պատճառի յանշարժական կեանս վարելոյ, յաղուտ, 'ի կծու, և 'ի զօրաւոր ինն կերակրոց, 'ի գործածութիւն ոգիաւոր հեղանիւթոց, 'ի սպասիկ աշխատանաց 'ի թուլութիւն և 'ի տկարութիւն փոքրիկ խողովակաց արգանդի, 'ի լուծականութիւն արեան, յանկարգ, և յանչափ կրից և բաղձանաց հոգւոյ, ևն։

Յաղագս նշանաց ախտին։

Նախ քան զամենայն՝ ախտակիրն լինի յոյժ տկարագին և դեղնագոյն, կորուսանէ զախորժակն, ապականի մարսողական զօրութիւն։ Նաև զհետ գայ այսոցիկ այտուց ինչ ոտից՝ նման էտէմա անուանեալ ուռուցից։ Կանայք հասարակօրէն ենթակայ լինին այսպիսի պատահմանց 'ի հասակի 45 կամ 50 ամաց, և է յոյժ դժուարաւ բուժելի։

Յաղագս դեղորէից չափաղանց դաշտանի։

Դեղորէիցն այսր ախտի պարտ է լինել այլ և այլ, ըստ այլևայլութիւն բուն պատճառացն՝ յորոց յառաջ գայ։ Եթէ կարի սասիկ լինիցի առաւելութիւն դաշտանի, յայնժամ պարտ է 'ի մեծի անդորրութիւն պահել զախտակիրն ըստ հոգւոյ և ըստ

մարմնոյ, և պարտ է ընկողմնեցուցանել զնա 'ի մահճի, 'ի խոնարհ դնելով զգլուխն, և ը պահանջելոյ հարկի՝ երակ հատանել 'ի բազկէն, նկատեալ 'ի հասակն, 'ի խառնուածս ախտակրին, և 'ի տաքկուն պատահարին: Կերակրոցն պարտ է լինել արգանակ հաւու, և որթոս, տակաւ ինչ հացիս: Ըմպելին թիղանա տի ռատիչէ տի օռթիքա, կամ քոնաօլիտա մաՀՀիօռէ, կամ միլէֆօլիս. զոր պարտ է 'ի գործ ածել զօրաւոր կամ թեթև ըստ հարկի պահանջելոյ:

Իսկ եթէ այսոքիկ հնարք չլինիցին բաւական, յայնժամ պարտ է 'ի կիր արկանել զառաւել պնդակազմ և զօրաւոր դեղոյս, որպիսի են՝ քաչչիու, աղլուամէ, քինաքինա են: Ահա կերպն կազմելոյ զայսոսիկ դեղոյս: Առ երկու արամ՝ աղլուամէ, և մի արամ՝ քաչչիու, մանրեա զամենայն 'ի միասին, և բաժանեա յութ կամ յինն մասանիկս հաւասարաչափս, կամ խառնեա ընդ բաւականաչափ շիլօբբօ տի ռոզէի, և տրա ութ հատս, և զչափս զայս 'ի գործ արկցէ ախտակիրն յաւուրն երիցս անգամ:

Իսկ այն անձինք՝ որոց ստամոքսն ոչ կարէ տանել աղլուամէի, այսինքն պաղլեղի, պարտին 'ի գործ արկանել փոխանակ այնր զյետագայ դեղորայքն: Ընկալ մի ունկի՝ թինթուռա տի ռոզէ, և տասն շիթս՝ լաւտանո լիգուիտո: Խառնեա, և մատո՝ ախտակրին զայս չափն՝ երեք կամ չորս անգամ յաւուրն: 'Ի վախճանի, եթէ այսոքիկ դեղորայք ևս ընդունայն լինիցին, պարտ է յայնժամ ախտակրին առնուլ 36 ցորեան՝ քինաքինա փոշի արարեալ, և եգեալ զայն 'ի մէջ մեղոյ բաժակի գինւոյ, և յաւելլ 'ի վերայ 10 կաթիլ՝ էլիսիռէ տի վիթռիօլօ, և կրկնեա զայս չափս չորս անգամ յաւուրն:

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Յաղագս ինչ ինչ գիտելեաց 'ի վերայ դաղտանի:

Դաշտանն է ենթակայ յոլովակերպ փոփոխուելեանց, զորս կարևոր է ճանաչելն. քանզի են բա-

զումք 'ի կանանց, որք 'ի մի և 'ի նոյն ամիս յոլով անգամ դաշտանաւորին, իսկ ոմանք և յերկուս կամ յերիս ամիսս միանգամ: Այլք քանի ինչ կաթիլս յիւրաքանչիւր ամիս. 'ի վախճանի ոմանք և ութ, տասն, և 15 աւուրս դաշտանաւորին. բայց ոչ սոքա, և ոչ նոքա կրեն ինչ վնասս, այլ մանաւանդ վարեն զառողջարար կեանս: Դարձեալ գիտելի է, զի արիւնն տեռատեսական՝ ոչ միայն հոսի 'ի ծննդական անդամոցն կանանց, այլ բազում անգամ հոսի և յամենայն անդամոց մարմնոյ նոցին. որովհետև յոլով անգամ դէպ եղև տեսանել՝ հոսիլ տեռատեսական արեանն նաև 'ի ռնդաց, յաչաց, յականջաց, 'ի բերանոյ, ըստ օրինակի թքոյ, 'ի ընտերացն, 'ի մի զանց ճանապարհէ, 'ի գագաթանէ, 'ի ծնօտիցն, 'ի ստեանց, 'ի պորտոյ, յերանաց, 'ի ձեռաց, յոտից, 'ի մատանց, և ն:

'Ի վերայ այսոցիկ մասանց մարմնոյ սովորաբար երևին ուռոյցք ինչ բորբոքողականք և ցաւալից, յորոց հոսի կամ կաթի արիւնն բնականաբար, և տեղին լինի խոց ինչ, որ փուլթով փակի, և յամենայնում ամենեան վերատին բացեալ լինի: Արդ՝ 'ի դիպուածս այսոսիկ, պարտ է փուլթով երակ հատանել յոտիցն, և այնպէս վերատին դարձուցանել զդաշտանն 'ի բուն 'ի բնական ճանապարհն իւր: Եւս և նստիլ 'ի վերայ գոլորշեաց ջերմ ջրոյ, և 'ի գործ ածել կակղացուցիչ տէքօցիոնէ ևն. բայց եթէ դիպուածք այսոքիկ պատահին յերիտասարդ օրիորդս կամ յաղջկունս, կամ 'ի կանայս, 'ի սկզբան անդ չէ՛ օրէն իսկ և իսկ ձեռնամուխ լինել 'ի դեղորայս. յորժամ տեսանեմք, զի թէպէտ դաշտանն զարտուղեալ 'ի բուն ճանապարհէն, հոսի յայլ և յայլ անդամոց վերոյիշեալ մասանց, բայց ախտացեալն չկրէ ինչ նեղութիւն և վնաս, այլ մանաւանդ վայելէ 'ի մեծի հանգստեան, յայնժամ պարտ է թոյլ տալ բնութեն 'ի կառավարել զինքն, որովհետև նա ի մասանագոյն է քան զմեզ:

ՅՕԴՈՒԱԾ Է·

Յաղագս անպի, որ ասի՝ Փլուտոն, կամ Բուռնկա պիանոտ, այսինքն է հոսումն ինչ ապիպանոգոյն հիւրեոց։

Հոսումն տեռատեսական հնար է թէ այլայլեցի, որպէս ըստ քանակութեան, նոյնպէս ըստ որպիսութեան։ Ախատ կամ հիւթս այս՝ կոչեցեալ Փլուտոն պիանքս, է յոյժ հասարակ, որում զհետ գան երբեմն 'ի վիպիկակեաց կանայս պատահարք ինչ տարժանադոյնք և դժուարինք· և ստէպ պատահի 'ի մեծահռչակ քաղաքս, ասակս բազմութեան օրիորդաց, կանանց ամուսնացելոց և այրեաց, և հասարակօրէն ակամի 'ի հասակի 12 կամ 14 ամաց· իսկ երբեմն և արտաքոյ սովորութեան պատահի հոսումն այսր հիւթոյ յաղջկունս 'ի հասակի ութ, և չորս ամաց· ուստի և չէ մարթ միշտ համարել զհոսումն այսր սպիտակ հիւթոյ՝ նոյն ընդ դաշտանի, որովհետև և 'ի ժամանակի յղութեանն մարթ է կանանց ունել զայս հոսումն, բայց ոչ երբեք զհոսումն դաշտանի։ Հասարակօրէն հիւթս այս հոսի 'ի նոյն ժամանակի դաշտանին, և երբեմն մնայ յարատև, և երբեմն ոչ, երբեմն կանխէ, և երբեմն զհետ գայ դաշտանի· և երբեմն և այնքան դժնեայ, և անսովոր, մինչև չփոթել զբոլանն տեռատեսական։

Նշանք հոսման ապիպանոգոյն հիւրեոց։

Հոսումս այս կոչեցեալ Փլուտոն պիանքս՝ ոչ է միշտ նոյնագոյն, այլ երբեմն լինի տժգոյն, դեղնագոյն, կանաչագոյն ևն· և երբեմն և մաքրագոյն, և զտագոյն· իսկ երբեմն թանձրամած, և խտագոյն, ևն։ Կանայք՝ որք կրեն զցաւս զայս, միշտ լինին կերպարանօք այլագունեալ, ունին զցաւս թիկանց և զզուանս, և սովորաբար են ենթակայ այտուցման ոտից ևն։ Բաց յայսոցիկ նշանաց, կանայք այսպիսիք զգան զթուլութեն ինչ և զմեղկութեն, զծանրութեն 'ի մէջս, զանհանգստութեն 'ի ծունկս, և 'ի սրունս, զնարդկանս, և զցաւս ատամոքաց։ Հուսկ յե-

ոոյ բազումք 'ի նոցանէ այնքան հիւծեալ տկարա-
նան, մինչև համարիլ նոցա, եթէ ըմբռնեալ լցեն
յախտէն կոչեցեալ թիզիքա, այսինքն թոքախտուն։

Յաղագս պատճառաց հոսման սպիտակագոյն հիւղոց։

Կատարակօրէն ախտս այս պատճառի 'ի թուլու-
թէ, և 'ի տկարութէ գործարանաց արգանդի, և
երբեմն յարդելականութէ դաշտանի, յանչափ գոր-
ծածութէ ջայի կամ սրձոյ, և կամ այլ ինչ հեղանիւ-
թոց։ Նոյնպէս յառաջ գայ 'ի թալկութէ անօթոց
կամ անձկագոյն մասանց արգանդին, ուր գումարեալ
խափանին հիւթք ՝ի ներսակարք։ Դարձեալ, գլխաւոր
պատճառն այսր ախտի՝ է արգելեալ մնալն 'ի տան
առանց շարժողութէ, և շրջագայութէ, որ անշուշտ
պատճառէ բազում կանանց զցաւս զայս 'ի քաղաքս։
Դարձեալ, գոյ այլ ինն պատճառ գժուարաւ ճանա-
չելի, յորմէ բազում անգամ յառաջ գայ հիւթս այս
ապիտակ։ և է տկարութէն ստամոքսի, որ պատճա-
ռէ զվատթար մարսողականութէ, յորմէ և զհետ
գայ ապականութէ հիւթոց, և այսպէս պատճառի
թուլութէն ամենայն գործարանաց, մասնաւորապէս
արգանդական գործարանաց։ Նոյնպէս պատճառէն
զախտս զայս ցաւօք և տաժանմամբ ծնանելն, վիժումն,
արտմութէն, երկիւղն, եռացուցիչ կիրքն հոգւոյ,
և ն։ Բազում անգամ և յառաջ գայ 'ի գաղղիական
և 'ի սքօռպութական ախտից։ 'Ի վախճանի՝ ախտս
այս կանանց, որոց խառնուածքն են բուռն՝ առթէ
բազում անգամ ամլութէ։ և զկնի դադարելոյ տե-
ղատեսական արեան՝ լինի ախտս յոյժ գժուարաւ
ապաքինելի, և երբեմն և անապաքինելի։

Յաղագս խնամապարութէ և դեղոցն պիտոյ։

Նախ՝ պարտ է ախտակրիս ստէպ ստէպ շար-
ժումն առնել ըստ տանելոյ կարողութէն՝ առանց
ծանր աշխատանաց։ և չէ՛ օրէն բնաւ մնալ միշտ յան-
կողնի անշարժ։ Կերակրոցն պարտ է լինել պինդ և
սնուցողական, բայց դիւրամարսելի։ ըմպելին աղ-
նուագոյն գինի ջրախառն։ և պարտ է արգելուլ
գլխովին զգործածութէ ջայի կամ թէյի, և սրձոյ։
Իսկ որքան առ դեղոցդ, 'ի գիպուածս ախտիս

ըստ իմոց կարծեաց՝ ազնուագոյն գեղն է քինա քինա, զոր փոշի արարեալ պարտ է 'ի գործ արկանել. յամենայն եղանակի բաղանիս առնել ցուրտ ջրով յոյժ օգտակար է: 'Ի դիպուածս ախտիս միշտ կարևոր է թեթև փսխողականն. մանաւանդ յորժամ պատճառն ախտիս համարի տկարութիւն ստամոքսի, կամ ապականեալ մարսողականութիւն. 12 կամ 15 ցորեան խբէքաքուանա: Լուծողականն յոյժ պատշաճողական է ռապառապառ մի տրամ փոշի արարեալ, կամ նոյնչափ ռատիչէ ալ քօլօմպօ, և հսպ կազմեալ ընդ բաւականաչափ շիլօբբօ տի սբին չէռվինօ: Իսկ երակ հատանելն 'ի դիպուածս ախտիս չէ հարկաւոր. բայց եթէ յորժամ լինի պատճառեալ ախտս յարգելակտնութէ դաշտանի, և բաց յայսմանէ յայլ ամենայն դիպուածս միշտ է վնասակար, եթէ կանանց, և եթէ աղջկանց՝ երակ հատանելն:

ՅՕԳՈՒԱԾ Ը.

Յաղագս ամլութեան, կամ անպտղութեան, կուսէցեալ յիպոլայոց՝ ՈՒԷՐԻԼԻՈ:

Զամլութիւն ևս պարտ է համադասել 'ի թիւս ախտից կանանց. որովհետև բազումք 'ի նոցանէ գոլով ամուսնացեալ, և ոչ ունելով զաւակս, ոչ կարեն վարել կեանս անցաւս, առողջապոյնս:

Յաղագս պատճառաց ամլութեան:

Յոգնատեսակ և բազմապատիկ են պատճառք այսորիկ ախտի: Գիրութիւն և պարարտութիւն չափազանց, տրամութիւն, թուլութիւն, սաստիկ անառակութիւն, և ցոփութիւն, գինեհարութիւն, գաղղիական ախտն, գոբծածութիւն բարկ ոգիաւոր հեղանիւթոց, և պարարտացուցիչ կերակրեղինաց. ևս Ֆլուօռ պիանքօ, այսինքն հոսուն ինչ սպիտակագոյն հիւթոց: Նոյնպէս յառաջ գայ 'ի սաստիկ և 'ի չափազանց հոսմանէ, կամ յարգելմանէ դաշտանի: Հաւասարապէս ամլութիւն է ապաքէն, եթէ կարի հիւթեղ և խո-

նաւուա կերակրեղէնքն ապականեն զխոնաւուն, և զդոլորչիսն, և արգելական լինին բազմածնութիւն, և զայս փորձիւ իսկ տեսանեմք, և ճանաչեմք. քանզի կանայք ամուլք և անզաւակք առաւել գտանին 'ի մէջ մեծատուն և փափկակեաց անձանց քան 'ի մէջ աղքատաց, և հասարակօրէն աղքատքն լինին միշտ բազմազաւակ, և բեղնաւորք։

Յաղագս դէղերէից ամլութեան։

Նախ՝ պարտ է այսպիսեաց վայելել 'ի քաջառողջ ինն օդս ըստ կարեաց, և յաճախ 'ի կիր առնուլ զկերակուրս 'ի խոտեղինաց, և առաւել ևս 'ի կաթնեղինաց. ըստ վկայելոյ ներհուն բժշկաց՝ բազում անգամ պատճառ անզաւակութեան լինի յառնէ քան 'ի կնոջէ. որ սակս նախ խրատեմք զարս խնամ տանիլ անձանց գործածութեան այսպիսի կաթնեղինաց։ Նոյնպէս օգտակար է 'ի դիպուածս գործածուելոց գեղոլրէիցս. զորօրինակ աղլումն, ֆէռռս, սանկուէ սի տռուսկս, էլիսսիռէ սի վիթռիօլս, քինա, ևն, և 'ի վախճան ասի՝ ցուրտ բազանիքն։ Ամլութեան բազում անգամ զհետ գայ տրտմութիւն. վասն որոյ պարտ է սխտակրիս միշտ լինել ուրախ, և զսպել զամենայն կիրս հոգւոյ։ Ա՛յլ են բանք մեր ատտանօր զամլութիւն որ պատճառի յապականութիւն ինչ խառնուածոցն, և յանտրամագրութիւն գործարանաց, որք զհետ գան գաղղիական սխտին, և աշխատելի ծննդեան ևն. քանզի յայսպիսի դիպուածս ձեռին վիրաբուժի պէտք են։

ՅՕԴՈՒԱԾ Թ.

Յաղագս վիճման, և անցուցման պտուղի։

Ա՛ռ հասարակ կանայք են ենթակայ վտանգի վիճման զաւակի, ոմանք առաւել, և ոմանք սակաւ. վասն որոյ պարտին մեծապէս փոյթ ունել զգուշութեան յայսպիսի պատահարէ, որով ոչ միայն ինքեանն կազմուածոցն, այլ միանգամայն ենթակայ լինին այսպի-

սի վիժման զաւակաց ընդ բովանդակ կեանս իւրեանց։ Վիժումն մարթի պատահել յամենայն ժամանակի յղութեանէ. բայց հասարակօրէն յերկրորդում և յերրորդում ամսեան, և ոմանց 'ի չորրորդում և 'ի հինգերորդում ամսեան։

Յաղագս պատճառաց վիժման կամ անցուցման։

Գլխաւորագոյն պատճառն վիժման է ծնունդն մեռեալ զաւակի, տկարութիւն մօրն, թուլութիւն գործարանաց և արգանդի, հոսումն ինչ անչափ, սաստիկ շարժումն, և աշխատանքն, բարձումն ինչ ծանրագոյն իրաց, ձկտումն ձեռաց 'ի բարձր տեղիս, փսխումն, հաղն, կարկամութիւն և գալարումն, հաւրուածք 'ի վերայ որովայնի, անկանիլն, սենդն սաստկագին, և անախորժելի հոտն. յորդառատ հոսումն արեան, պարարտագոյն կերակուրքն, և յոյժ սակաւ սնուցիչ կերակուրքն. սաստիկ խլրտմունք ցանկական մասին, և կիրք ցասմնական մասին, որպէս երկիւղն, տրտմութիւնն, և։ 'Ի վերայ այսոցիկ պատճառաց յաւելուն և սաստիկ սնդութիւն որովայնի, զոր յղի կինն կրէ 'ի նշանաւոր ինչ ժամանակի. առաւել գործածումն գինւոյ, սրձոյ, ջայի, և ոգիաւոր հեղանիւթոց. իղձք վառեալք, այլ ոչ կատարեալք. ցաւք ինչ սրագոյն, վատթար կազմուածքն արգանդի, և գաղղիական ախտն. և։

Նշանք, որք գուշակեն զվիժումն։

Առաջաւոր նշանք վիժման են ցաւք ինչ երիկամանց կամ ստորին մասանց որովայնի, զգալն զցուրտ ինչ, թալկութիւն և ուշագնացութիւն, բաբախումն սրտի, և 'ի խոնարհ իջումն ստեռանց և որովայնի, կաթիլ ինչ արեան, կամ այլ ջրախառն հիւթոց, և խոնաւութեանց 'ի ծննդական անդամոցն և այլն. այսոքիկ նշանք երևին միով ամսով յառաջ քան զվիժումն, և յարատեւեալ մնան մինչև ցայն վայր, յորում պատահի վիժումն։

Թէ զինչ պարտ է ասել, յորժամ 'ի նշանաց
գուշակի վիճաստն մերձաւոր։

Յայսպիսի դիպուածս պարտ է գնել զյղի կինն 'ի մահիճս, զեռեղեալ զգլուխն 'ի խոնարհ, և 'ի ցաւագոյն. պարտ է ունել զնա 'ի հանգիստ, և ուրախ, և ստէպ ստէպ քաջալերել զնա և չէ՛ պարտ այնքան ջերմ պահպանել զնա։ Կերակրոցն պարտ է լինել ոչ այնքան ջերմ, այլ զովացուցիչ բնութիւն, որպէս թեթև արգանակ, կաթն, և այլն։ Նոյնպէս նկատեալ 'ի զօրուն ախտակրին, պարտ է երակ հատանել 'ի բազկէն գէթ վեց ունկի արիւն. ըմպելին նորա ջուր գարեոյ, բարեխառնեալ ընդ սուքս տի լէմոնէ. եթէ ունիցի զլուծումն որովայնի, պարտ է տալ նմա մի տէքցիոնէ տի քօռնս տի չէռվս։ Իսկ եթէ ունիցի զփսխումն, նոյնպէս պարտ է տալ նմա ստէպ ստէպ յաւուրն երկու դրդալ բօցիոնէ տալինա։

※※※

Յաղագս պատճառաց այսորիկ ախտի։

Զայն ամենայն, որք թուլացուցանեն և թալկացուցանեն զմարմինն, պատճառեն զախտն Ջլաց. որպիսի են ճանձրութիւնն, դատարկութիւնն, տափանք, և սիրահարութիւնք, յանչափս գործածութի սրձոյ, չայի, և այլ ինչ այսպիսի ըմպելեաց։ Դարձեալ, երակահատութիւնն կամ արեանառութիւնն, ստատիկ լուծողականքն, յաճախակի և ուժգին փսխողականքն. հուսկ յետոյ այն ամենայն, որ զայրացուցանեն զմարսողականութիւնն, կարեն պատճառել զախտս զայս։

Դարձեալ, սխտս այս պատճառի բազում անգամ ևս յանչափապէս պարապելոյ յընթերցմունս, և գրելթէ սակաւք յուսումնասիրաց որք ոչ ընտրողութիւնք վարին, լինին զերծք յախտէս յայսմանէ. ընդ որ ոչ է պարտ զարմանալ, որովհետև ընթերցանութիւնք ոչ չափով արարեալք՝ հալեալ ծիւրեն զհոգի և զմարմին։ Տրտմութիւնն, անձկութիւնն, վիշտն, ևն, կարեն նոյնպէս պատճառել զսխտս զայս. և համառօտիւ կամեցեալ ասել՝ այն ամենայն որ տկարացուցանեն զմարմինն, և ընդդիմակալ լինին կարողութեանց հոգւոյ, մարթին պատճառել զախտս Ջլաց։

Յաղագս Դշանաց այսորիկ ախտի 'ի հասարակի։

Զատանօր խօսիմք զառաւել գլխաւոր նշանաց միայն. քանզի զիւրաքանչիւր նշանաց ուրոյն ուրոյն գրելն լինի անօգուտ, և միանգամայն է անկարելի։ Գլխաւոր նշանքն են վիշտն և ուռայցքն ստամոքսի և փորոտեացն, առթեալ 'ի փքոյ, անկարգութիւնն ախորժակի, և մարսողականութիւն. իբր զի բազում անգամ դէպ լինի, զի ախորժակն լինի անյագ, և մարսողականութիւնն յոյժ արագ, և բազում անգամ ևս կերակուրքն մնան 'ի մէջ ստամոքսի անմարսական, և ախտակիրն փսխէ ջինջ և մաքուր ջուր, և մեղաս թանձրախիտս. ստորին որովայնն հասարակօրէն զգայ զցաւ, որում զուգընթաց լինի կերկերուն և շշնջուն փորոտեաց. երբեմն ևս ործայ հիւթ ինչ թանձրախիտ 'ի գոյն սրձոյ. որովայնն երբեմն լինի լոյծ. բայց սովորաբար պինդ, յորմէ և պատճառի քամի, և այլ սոյնպիսի անհանգստութիւնք։

Մէզն երբեմն հոսի սակաւաքանակ, և չիթ առ չիթ, և երբեմն ևս առատօրէն. եթէ նուազի, կարի ի մեն թանձրահիւթ և ներկեալ, և կամ վաղվաղակի պղտորեալ և մրրալից. իսկ եթէ առաւելուցու, ջրային և անգոյն: Գոյն երեսաց լինի անկայուն. երբեմն կարմրագոյն քան զսովորականն, և երբեմն ևս գորշագոյն: Քունն լինի միջահատական և ցնորական, և գրեթէ ոչինչ զօրութիւն ընկալեալ. մինչև ըստ մեծի մասին՝ ախտակիրն առաւել ընդ առաւօտն անհանգիստ լինի քան յերեկոյեան պահու յերթալն յանկողինն: Ախտակիրն երբեմն զգայ ճնշումն կրծոց, բաբախումն սրտի, սեղմումն կոկորդի, դժուարութիւն ինչ 'ի շնչառութեան, պտտումն գլխոյ, շառաչումն ականջաց, ցնցումն մկանանց:

Երբեմն ևս զգայ յանկարծօրէն 'ի վերայ յարձակիլ անդամոցն մարմնոյ ջերմութիւն ինչ, իսկ երբեմն ևս ցուրտ ինչ սաստկագոյն, մանաւանդ 'ի ժամանակս մերձաւորութեան: Զարկ բազկերակին լինի այլազան, երբեմն մանրագոյն քան զհասարակն. երբեմն ևս արագագոյն. ախտակիրն ստէպ յօրանջէ և ձգտայ: Հուսկ յետոյ յարմատանալ ախտիս զկնի քանի ինչ ժամանակաց զգայ ախտակիրն ցաւ գլխոյ, գալարումն ջլաց, և սրագոյն ինչ ցաւ 'ի զանազան մասունս մարմնոյ, աչքն լինի թխատիպ, և գորշ, քիրտն առատօրէն, լսողութիւն տկարանայ. վերջապէս ամենայն կենսական գործարանքն և զօրութիւքն իանգարին, և տղաւաղեալ զարտուղին 'ի բնական ընթացիցն:

Ախտակիրն առ թեթև ինչ պատճառի վրդովեալ խռովի, զահի հարկանի, յուսահատ լինի. և կարի դիւրաշարժ լինի 'ի տրտնջանս: Բայց առաւել հաւաստի և սովորական նշանքն 'ի դիպուածս ախտիս են՝ անհնարին երկիւղն մահու, որով իբրև խելացնոր լինի, և տանջի երևակերպութիւք, տկարանայ յիշողութիւն, և կերկերի ձայնն: Են և բազում ախտաստաժէտք՝ որք 'ի սոյն օրինակ վիճակի կրեն զծանրատաղտուկ պնդութիւն որովայնի, և բազում նեղութիւք թափեն զաւելորդս պինդս գնդակախիտս, կամ որպէս ասի այծեայս. և յոլով անդամ այտուցաւ, ձկումամբ և ցաւով թանչից. և երբեմն ևս տանջի սպառեցուցիչ և բազմատանջ թորմամբ որովայնի:

Գիտելի է, զի զկնի առժամանակ ինչ կրելոյ ախ-

տակրիս զմեծագոյն մասն այսոցիկ նշանաց, (ասա-
ցի զմեծագոյն մասն, որովհետև քաջայայտ է՝ զի ոչ
ումեք մարթ է կրել զամենայն նշանս անթերի.) պա-
տահի բազում անգամ, զի եղկելի ախտաժետեալն
սահի յախտն կոչեցեալ մելանքոլիա, և խելացնոր
լինի. բազում անգամ ևս անկանի յախտս կոչեցեալ
ինթիէռիցիա նէռա, ջրդողութի, թոքախտութիւն,
անդամալուծութի, անդամդօսութի, և որ այլ ևս
սխոք տարժանաւորք և դժուարաբուժելիք:

Խրատ, կառավարութիւնք, և գիշերապահութիւնք ընդհանրա-
պէս առ 'ի հասարակել նախ՝ պատշգամուն ջրոց և սար-
մոցի, և ապա 'ի հանդարտել ընոյն ջիղն:

Առաջինն ցուցանէ զկանոնս ժուժկալութեան որ-
կորոյ, և ևս զգործածութի դարմանոց՝ որք առաջ-
նորդեն 'ի լաւագոյն մարսողութի կերակրոց. և այս
իսկ է, որում զհետ գայ բարիոք սնունդ, և նորո-
գութի կորուսեալ զօրութեցն: Երկրորդն հայի 'ի
կատարեալ կանոնաւորումն կրից հոգւոյ, և զբաղ-
մանց ոգւոյն և յարտաքսումն կղկղանաց՝ տարբեր
կարգադրութեան, զորոց կախեալ կայ յաւէտ կամ
նուազ զօրութին, և բարիոք կամ չարոք կարգաւո-
րեալ գործողութին ջլական բնութե:

Տեսցուք արդ զժուժկալութին որկորոյ՝ որ 'ի յախ-
տաժէտութիւնս: Սա է հիմն յորոյ վերայ հաստա-
տեալ յենու ամենայն երջանիկ կամ ապերջանիկ գոր-
ծողութի դարմանոց բժշկին: Զէ՛ հնար պնդագոյնս
համոզել զմիտս եթէ՛ քաջառողջաց, և եթէ ախտա-
ցելոց՝ թէ է յոյժ կարևոր փոյթեռանդն ծառքումն
ընկալեալ կերակրոցն. և կամ ասէպ ծանուցանել
նոցին՝ եթէ ատամոքսն ոչ ընու զտեղի աղօրեաց ատա-
մանցն, և ոչ իսկ ընդերքն ընուն զպակասութիւն
պաշտամանց խախտացոցին: Բազում ինչ կայ ասա-
ցեալ և գրեալ զընտրութէ պարենից, որք ճահողա-
գոյնքն են՝ լաւագոյն սննդեան մարդկային մարմնոյ.
և սակայն ճշմարիտ է, թէ չիք կանոն ընդհանուր,
որ պատշաճեսցի զինչ և իցէ կլիմայից, դրից երկնից,
ազգի, և կամ ուստ և իցէ անհատի:

Կերակուրքն, որ ընութե մարդոյս առաւել համե-
մատ են, և առաւել դիւրաւ բերին 'ի համանմանու-
թիւն, երևի թէ է կաթն, և առողջ մայ ընտանի և

վայրենի կենդանեաց։ և սակայն 'ի Ջերմագին գաւառս, որպէս ուսուցանէ մեզ փորձառութիւն, ինքնակար է յաճախ և առատ գործածութիւն մսոյ։ իսկ զբուսական կերակուրսն՝ թէպէտ նուազ սնուցանեն, և կարի վիրտ են, բնակիչք գաւառաց ընդ տօթագին ապրիճանաւ արեգական՝ կարի իրաւամբք նախադասեն քան զմսեղէնս։ Այլ 'ի գաւառս յաւէտ հարաւային տեսանի, զի հասարակագոյն գործածութեան բուսական ուտելեաց՝ համապատշաճ է և գործածութիւն Ջերմահամոց, զոր օրինակ կինամոնի, մշկահոտ ընկուզի, հիլի, մեխակի, և 'ի վեր քան զնմ պղպեղի։ Որով ցուցանի, թէ 'ի գործածութիւն պարենից ըստ բուսական տեսակին միայն՝ առանց օժանդակութիւն համեմիչ և ոգելից խթանի ինչ, գրժուարաւ և նեղութիւն կատարի մարսողականութիւնն։ Նոյնպէս և 'ի միւս կողմանէ 'ի պակասութիւն գերգռիչ իրացս այսոցիկ, արտաշնչութիւնն մորթոյ մարմնոյն և քիրան այնպէս չափազանց լինին, մինչև վաղվաղակի զհետ գալ բոլորական պարտասուէ և լքման կենսական զօրութեց։

'Ի դիպուածս ախտի ջլաց՝ կերակուրքն մսեղէնք, ընդ որում միշտ կիր իցեն թեթև ինչ ընդեղէնք, որք ոչ կարի ջրայինք իցեն, և ոչ կարի փիրտք, են ընարելագոյն կերակուրք 'ի ժուժկալութիւն որկորոյ։ Փոխանակ պարտրտ, և անծառքելի, և դժուարամարսելի մսոց, եղիցին ձագ հաւուց, կաքաւք, ծիտք, ձկունք քաղցր ջրոյ։ որպիսի են կռնկաձուկն, կարմրախայտն, և այլ սոյնպիսիք։ Նոյնպէս սակաւ ինչ հաց թաթախեալ 'ի մէջ միոյ բաժակի գինւոյ յամենայնում՝ աւուր չափաւորապէս 'ի գործ արկեալ ջրացուցանէ զստամոքսն, և դիւրացուցանէ զմարսողականութիւնն։ ուստի ճահոզագոյն է ևս կիրառութիւն ջրախառն աղնիւ գինւոյ։

Այլ քանզի չիք ոք՝ որոյ ժամանեալ 'ի հասակ երեսուն և աւելի ևս ամաց, չիցէ անձամբ անձին ըզփորձ առեալ յաղագս ժուժկալելոյ 'ի կերակրոց, թէ ըստ իւրում՝ անհատական բանի՝ ոյք ոմանք օգտակար իցեն, և ոյք ոմանք վնասակարք, նմին իրի քաջայայտ է, թէ չիք կանոն ժուժկալութիւն որկորոյ՝ առանց ինչ ամենևին բացառութիւն, զոր առ ամենեսին հաւասարապէս հնար իցէ մերձեցուցանել առ 'ի գործածութիւն։ Ստուգագոյն ևս է, եթէ առա-

ւել քանակութիւնն ընկալեալ կերակրոց՝ քան թէ որակութիւն նոցին ինչպէս առողջութիւն մարդկան։

Եւ բաղում անգամ չափազանց զբաղմունք և հոգք ոգւոյն՝ դառնան ժամանակաւ 'ի ծանր տուգանս ստամոքսին. և որ միանգամ 'ի մէջ այնց զբաղմանց՝ հարկադրի վարել զկեանս իւր զուրկ 'ի շարժմանց մարմնոյ, մնանի կրել զամ զչարաշուք ինչս եղծեալ և խանգարեալ մարսողութիւն, և զ նմին մարսողութիւն ունի և զմամուցն։ Եւ որ ոք զ բաղում ամս կրեալ է զայսպիսի սխտաս ջլաց, թէպէտ և առողջացի, տակաւին պարտի երկնչիլ առաւել քան զամենայն յանդգուշութեանց ժուժկալութեան որկորոյ, թէպէտև թեթևաբեռն ինչ իցեն։ Վասն այդպիսի գիպուածոյ՝ բժշկական փորձառութիւն յօրինէ պատաս մեծապէս գործունեայս՝ զդեղորայս կոչեցեալս դառնագինս, և կազդուրիչս, 'ի պէտս կարի իմն քնքուշ, և զգայուն հիւանդաց. բայց միայն՝ զն մի ունիցին նոքա զորոշայնալուծութիւն. առաւել քան զամենայն 'ի վոր արկանեմք տէքօթթօ տի գուասսիա։ Այսինքն՝ սառ արամ մի տաշած փայտին կոչեցեալոյ գուասսիա, և 'ի հասարակ ջրի եփեա եռացմամբ իւր քառորդ մի ժամու. ապա զտեա, և մնացէ եօթն ունկի. յոր յաւելէ ունկի մի աքուա տիսթիլլատա տի մէլառանջիա. և ապա առնուլ պարտ է երիս դրդալս սեղանոյ երիցս յաւուրն ժամ մի յառաջ քան զկերակուրն։

Է և այլ դարման, որ առանց զայրացուցանելոյ առաւելու զկար ջղաց, և ստամոքսին՝ որք դանդաղ գտանին, այն է չափաւոր գործածուն (որպէս թէ փոքրիկ գաւաթ մի ընդ երեկոյս) պաղպաղակի կամ օշարակի յօրինելոյ 'ի փոնչէ, որ է կէս ոգեղէն ըմպելի անգղիացւոց. արարեալ յոգեացն զոր կոչեն առուաք, կամ ռում, եդեալ 'ի վերայ ջուր, քամածն լեմոնի, և շաքարի։ Եթէ սխտակիրն ունիցի զպընդութիւն որովայնի, պարտ է տալ նմա սակաւ ինչ ռապառպառս, կամ այլ ինչ բարեխառն և թեթև լուծողականս առ 'ի արգելուլ վայնդութիւն. բայց զգուշանալ արժան է չտալ նմա սաստիկ լուծողականս, որպիսի են՝ ալօէ, շիաշարբա, տիակրիտիս և ն։ Ինչ ֆուզիօնէ տի սէնա, կամ տի ռապառպառս 'ի մէջ օղւոյ, կամ բարիոք և ս 'ի մէջ գինւոյ, է յոյժ յարմարագոյն և օգտաւէտ 'ի գիպուածս յայս։

Իսկ եթէ ոք վասն տկարութիւն ստամոքսի և ջղաց

կրէ յաճախակի զորովայնալուծութեն, երկար փորձառութիւն ուսայ, եթէ գերաղանց դեղ ինն է գործածութեն փոշւոյ ինչ՝ որ այսպէս բաղադրի։ Հին գեռասան կշիռ ցորեան՝ ռատիչէ տի քօլօմպօ, և տասն կշիռ ցորեան՝ ցուքքէռօ առօմաթիծծաթօ տի մաչէռ։ Եւ զայս պարտ է առնուլ երիցս անգամ յաւուրն։ Այլ 'ի դիպուածս, յորում մարսողական զօրութեն լինի առաւել խանգարեալ, և ջիղքն տկար և թուլագին, յայնժամ պարտ է 'ի վար արկանել գյեռագայ դառնագին ըմպելիս • որ այսպէս յօրինի։ Արդ՝ հեղ մի և կէս լիտր աղնիւ գինի կամ օղի 'ի ցուրտ ապակի անօթ կամ շիշ, և ընդ այսմ ոգեղէն հեղուկի խառնեա մի ունկի՝ քինա քինա, կէս ունկի՝ ճէնցիանա, և նոյնչափ՝ աքօռցէ տի առանչիա, և երեք տրամ՝ սէմի տի քօռիանտօլօ։ Քաջ խցեալ և խփեալ զանօթն վերոյասացեալ, թող զնաւնուրդս զայս մարսիլ 'ի միմեանս՝ ընդ միջոց հինգ կամ վեց աւուրց։ Յետ այնորիկ փոխադրեա զհեղուկս զայս յայլ ապակի անօթ, և յըմպելոյ ասսի արբցէ հինգանդն մի դրդալ սեղանոյ 'ի մէջ կէս սկահակ ջրոյ մի ժամ յառաջ քան զնախաճաշիկն, զճաշն, և զընթրիսն։

Բաց 'ի սոցանէ և 'ի սոցին նման դարմանոց, երկար փորձառութեամբ ուսայ ես զնշանաւոր զօրութիւն դարմանոյ ինչ՝ որ յաւէտ առանին ինչ է՝ քան դեղագործաց արարք • զոր և 'ի բազում ժամանակաց հետէ յոլով երևելի բժիշկք եւրոպեոյ 'ի կիր առին • այն ինքն է՝ սպիտակ պղպեղն ամբողջ, յորմէ պարտ է առնուլ 12 հատ 'ի դնալն յանկողին։ Զի եթէ զպղպեղն սպիտակ, ևս առաւել զսեաւն՝ առցէ ոք փոշի լոսեալ, փոշին այն վասն տարածականութեն իւրոյ ընդ բովանդակ ներքին մակերևոյթ ստամոքսին և ընդերական խողովակին, զգրգռէ զամենայն մասունս՝ յորս մածանի • և առաւել ևս լուծեալ 'ի ստամոքսական հիւթոցն, ծծեալ ընկղմի ցնդական մասանն, որ անցեալ գնայ 'ի զանգուած արեանն • առաւելու զառնելութեն անօթոց արեան, և այնպէս կարի ինն ջերմացուցանէ զմարմինն։ Զորոյ զամենայնի զհակառակն է տեսանել 'ի գործածութեան սպիտակ պղպեղին, առեալ զայն ամբողջ, և իբրև զհապս • քանզի նկատեմք՝ զի համեմիչ սերմանքս այսոքիկ ոչ լուծանին բավանդակ, այլ ներգործեն մի-

այն ըստ սակաւ ծայրից շշաւողաց 'ի ստորին մա-
կերևութի սննդագործ խողովակին, և մեղմով առա-
ւելուն զառնելութին. յօժարեցուցանեն յարտաք-
սումն վերոց՝ որք առ յարմարութեան իւրեանց կարի
ինն արգելեալ մնան, և հուսկ ուրեմն նաև ամբող-
ջաբար արտաքս ելանեն յուզիչ փորոտեացն:

Եւ արդ՝ ըստ այսմ օրինակի կազդուրեալ ստա-
մոքսին և ջլացն, նպաստիւք բարւոք մարսողութե-
անտարակոյս ընկալցի սխտակիրն զլաւագոյն սնունդ
և զհամապատշաճ ուժեղութիւն ջլաց և բովանդակ
մարմնոյ: Առ 'ի յառաւելուլ զգօրութին նաև ար-
տաքին նպաստիւք, զշահեկանութի մառցիալէ կոչե-
ցեալ բաղանեացն կրկին և կրկին յանձն առնեմ, իբրև
զամսօրեայ մի ժամանակ մնանել 'ի բաղանիս ցուրտ
ջրոյ ծովու: Ո՛չ ինչ ըստ հատ շահեկան է և օրըստօրեայ
հեծելութի ձիոյ, կամ կառաց՝ եթէ հնար իցէ. բայց
միայն զի մի լինիցի յետ կերակրոյ՝ երբ ծանրացեալ
իցէ ստամոքսն:

Մ՚ապիցոտ արդ յերիրորդ ցոյցն. այն է՝ 'ի հանդարտել
ղջիղս, ղմիտանանս, և ղոգամոգսն:

Որովհետև յերկարժամանակեայ սխտաժէտու-
թիւնս՝ ամբոխումն ջղաց՝ ըստ սառաւել մասին զհետ
գայ մեծի տկարութեան մարմնոյ, իբր զի ըստ նմին
համեմատութե առաւելու և զգայունութի ջլային
բնութեն, նմին իրի երբ միանգամ կազդուրի սխ-
տակիրն, հետ զհետէ նորոգի և հանդարտութիւնն
ջղաց: Այլ այս հնմարիտ է, զի ջիղքն միայն՝ յոր-
ժամ ուժգինս և յաճախակի շարժիցին 'ի սաստիկ
կրից ոգւոյն, և կամ 'ի բազմապատիկ հոգոց պար-
տասին, և կամ 'ի չափազանց ուսմանց կարի ինն
նուազին, թէպէտև չիցէ լեալ յառաջընթաց ֆիզի-
գական տկարութի, ինքնին լինին առաջին պատճառ
հետևորդ տկարութե մարմնոյն և դլխաւոր պաշտա-
մանց նորին: Յայսպիսի դիպուածս երևին յաւէտ
ինքնակար գոլ՝ քան օգտակար, դեղորայքն թօնիքօ
կոչեցեալքն, և կազդուրիչ կամ զօրացուցիչ (այս-
ինքն քօռուսպօռանթէ) ասացեալքն: Իսկ ըստ հակա-
ռակս՝ օգտակար ևս են թուչական դեղորայքն՝ որք
նուազ մղիչք են, որպիսի են՝ ագուա տոխսթիլլանթա
տի քասթօռիօ, տի վալէռիանա սիլվէսթռէ, սբիռի-

թեւ տի նիլթեւ տօլչիֆիքաթեւ, լիդուօռէ տի քօռնօ տի չէռվօ, էթէռէ սօլֆօռիքօ, և նոյն իսկ ափիոնն զգուշութիւն և չափով ընծայեալ, բայց միայն՝ զի բարձեալ իցեն, և կամ ընդհատեալ իցեն բարոյական պատճառք արտադրիչք ամբոխմանց այսոցիկ։

Յայսպիսի դիպուածս այնչափ է չափազանց զգայունութիւն ջղացն, մինչև՝ թէպէտ և այլ մասունք մարմնոյ 'ի տկարութիւն գտանիցին, 'ի սկզբան անդ բժշկական դարմանոցն, ըստ դառնայ զինչ և իցէ խթիչ գեղորիւց։ Եւ ինձ իսկ ոչ այլազգ յաջողեցաւ դարման տանիլ, բայց եթէ տալով զառաւել աղուականան 'ի գեղորիւց ասսի, որպիսի է էլիսսիռէ տի հալէռօ, զորոյ շինելոյ կերպն ունիս տեսանել 'ի տառն՝ Է. 'ի կարգի իւրում։ Զայս դեղ ես բաղմիցս գրեմ տալ հիւանդաց։ Զորօրինակ. 'ի լիտր մի հասարակ ջրոյ, որ քաղցրացուցեալ իցէ շաքարիւ՝ ուրչափ և կամք իցեն, արկանին քսան կամ նաև 25 կաթիլք էլիսսիռէ աչիտօ տի հալէռօ, որ լինի ըմպելի ինչ ախորժելի քմաց, և նման հասարակ օշարակի լեմոնի։ Յըմպելւոյ ասսի արբցէ հիւանդն չորս ունկի՝ երիցս անգամ յաւուրն։ Երբեմն ես գրեմ՝ երկու տրամ 'ի վերոգրեալ էլիսսիռէն, յաւելով 'ի նոյն չորս ունկի՝ ախորժելի ինչ շարապ, որպիսի է շարապն լամիլիոնի, լատիներէն՝ սիռուփուս ռուպի իտէի, և կամ շարապն հաղարջի կամ աղարծի, լատիներէն, սիռուփուս ռիպէզիօռում։ 'Ի թթու շարապէ ասսի իբր չորս ունկի հեղեալ լինի 'ի լիտր մի կամ աւելի ևս ջրոյ, ըստ որում զիարդ ախորժելի իցէ քմաց, և առեալ լինի ախորժելի ըմպելիս այս 'ի միջոցի քսան և չորս ժամուց։ Յետ ըմպելոյ բաժակ մի յըմպելւոյ ասսի, պարտ է լուանալ զբերանն, առ նախապահելոյ զստամունս 'ի նեղգործութէ թթուոյն։

Այլ առաւելուլ կամեցեալ զզօրութեան նաև արտաքին նպաստիւք, բաղում անգամ փորձեալ եմ զօգտաւէտութիւն վերոյիշեալ էլիսսիռէ տի աչիտօ հալէռօի, լուանալ տալով երկիցս անգամ յաւուրն զբոլոր թիկունս, 'ի սկզբան զով ջրով, և հետ զհետէ միշտ առաւել ցուրտ ջրով՝ յոր եղեալ էր հեղուկս այս. ապա 'ի բարիոք յաջողել սոցին՝ պարտ է կարգել զգործածութիւնն հանքային և մառցիալէ ջրոյն սպիայի, որ ասի՝ աքուա մինէռալէ տի սպիա, տալով

ախտակրաց ժամէ 'ի ժամ չորս ունկի՝ 'ի պահ առաւօտուն, մինչև լցցի լիտր մի յաւուրն։ Այլ զի մի ջուրս այս հանքային վասն դիւրաշնչութեան շոգեացն կորուսցէ զկազ իւր, այսինքն զսկիզբն ածխային զպարունակեալն յինքեան, պարտէ քաջ խփել զանօթ նորին, և շրջուն պահել յայլուստ անօթի՝ որ լի ի ցէ զով ջրով։

Եւ յետ այսոցիկ զթինթուռա տի մառթէ ըստ չափու չորից ունկեաց՝ երկիցս անգամ տալ յաւուրն։ և ապա զնրբագոյն խարտաշս նոյն իսկ երկաթոյ՝ հանգերձ յաւելուածով գառն ինչ էսթռաթթոյի, որպիսի են՝ օշինդրն, կամ գուասսիան, և կամ ռապառպառոն են։ Եւ զխարտուածս զայս երկաթոյ տամ ըստ կերպի փոշւոյ, կամ նաև իբրև հապ։ եթէ իբրև փոշի, պարտի լինել ութն կշիռ ցորեան՝ ամենանուրբ խարտաշ երկաթոյ, և նոյնչափ ռապառպառս, կամ ռասիչէ տի քօլօմպօ, և քանի մի կաթիլ իւղ էական կինամոնի, կամ օլէօ տի մուչիս։ 'Ի փոշեաց ստատի առցէ հիւանդն զերկուս կամ զերիս յաւուրն։ Իսկ եղանակն, զոր պահեմ 'ի տալն զհսպան՝ է այս։ Առ երկու տրամ էսթռաթթօ տի ասսէնցիօ, կամ գուասսիա, և կամ ռապառպառս, տրամ մի և կէս վերոգրեալ խարտաշդ։ և յաւելլ այնչափ փօլվէռէ տի քալամօ առոմաթիքօ՝ որչափ պէտք ի ցեն առ կազմելոյ ըստ կանոնաց արհեստին։ զզանգուածս զայս տրարեալ հապ՝ որ կշռիցէ երեք ցորեան, և շրջապատեալ փոշւով կինամոնի կամ մակնէսիայի, տացին հինգ կամ վեց հատք, երկու անգամ յաւուրն։

Յորժամ առ կարի ինն զդայուններութեան հիւանդացն հարկագրիմք յետս կալ առ ժամանակ մի 'ի քոռռօպոռանդէ և 'ի թօնիքօ կոչեցեալ դեղորէիցն, կարող եմք 'ի նմին պահու 'ի գործ ածել զառաւել թռչական, և զմեղմագոյն անօտինս կոչեցեալ դեղորայսն։ Սակայն 'ի մէջ ստոցա ես ընտրեմ 'ի սկզբանն շէյնսիկ, որք նուազ խթիչքն են, որպիսի են, ագուա տիսթիլլաթա սէմիլիչէ տի քասթօռս, տի վալէռիանա, են։ Զորօրինակ։ առ երեք ունկի՝ ագուա տիսթիլլաթա տի վալէռիանա, երկու ունկի տի քամիլլա, ունկի մի տի քասթօռս, քսան կաթիլ սբիռիթօ տի նիթռօ տոլչիֆիքաթօ, և քսան կաթիլ լիգուօռէ տի քոռնօ տի չէռվօ։ 'Ի խառնուրդէ ասատի,

յոր՝ եթէ ախորժեսցեն քիմք հիւանդին, յաւելցի նաև իբրև կէս ունկի կամ աւելի ևս՝ շարապ ինչ շինեալ կեղևոնի՝ որ կոչի քօռթիչչիա ոի նառանչի. ապացի 'ի ջղային ախտակրութեան յիւրաքանչիւր ժամու կէս ունկի։

Իսկ եթէ այսոքիկ ախտակրութիք կարի ինն սաստիկ իցեն, և կից ընդ հանապազորդ արթնութիւն, և կամ ընդ ջղացաւութիւն, յայնժամ 'ի վերայ բովանդակ նախագրեալ պատճենի գեղոյդ մարթ է յաւելուլ տասն մինչև ցքսան կաթիլս՝ լաւատանօ լինդուիտօ։ Երբեմն առ հանդարտելոյ զջիղսն, ևս դիմեմ 'ի գործածութիւն ինֆուզիօնին, որ լինի 'ի ջուր ջերմ, երկու տրամ յարմատոյ վայրենի վալէրիանայի (որ ժողովեալ իցէ 'ի լեռնային տեղեաց) ընդ մէջ միոյ քառորդի ժամու։ Զոր և մնայ եօթն ունկի՝ և յաւելեալ լինի 'ի վերայ ունկի մի ագուա տիսթիլլատա ոի քասթօռօ, և նոյնչափ շիռօբբօ ոի քամոմիլա, և քսան կաթիլ էթէռէ սուլֆուռիքօ։ Յինֆուզիօնէ ասաի՝ յերկուս ժամս միանգամ առնու ախտակիրն ունկի մի՝ առ իւրաքանչիւր նուագ։

Իսկ եթէ ոք առաւել ախորժէ 'ի գործ ածել ըզհապա, 'ի տրամակայութիք ջղախտութիք. ևս տամ զնոսին ալէոպէս եղանակաւ, և բարուք յանջողի։ Զորօրինակ. ա՛ռ տրամ և կէս էսթռատթօ ոի քամոմիլա, և նոյնչափ էսթռատթօ տէլլս վալէռիանա, այլ և տրամ մի ասսաֆէթիտա, ա՛ռ և փուլվէռէ ոի ռատիչէ ոի քալամօ առոմատիքօ՝ որչափ պէտք են վասն շինելոյ զհատս, որք մէն մի կշռիցեն երեք կամ չորս գրամեան, զորս շրջապատեալ փոշուոնն կեղևոյ նարընջոյ, ապացեա հիւանդին հինգ կամ վեց հատ երկնցս յաւուրն։ Իսկ եթէ տհաճելի է նմա հոտ ասսաֆէթիտային, փոխանակ նորա 'ի զանգուած անդր նախագրեալ հապիցդ արկցի կէս տրամ մօսքուս օռիէնթալիս, իբր զի սա առաւել թռչական է, և նուազ դրդռիչ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս տիպի՝ որ ասի փիսիքէիա, առ մէջ Բարգմանեալ Ղազային դիւռարամարսուրիւն։

Ասեմ այս է խօթուրթիւն ինչ ստորին որովայնի, պատճառեալ 'ի գօսուրթէ կամ 'ի թալկուրթէ մանրաթելից միանանց ներքին որովայնի, որով և խանգարի և չարաչար ինչասի գործողութիւնն մարսողութիւն, և առնելութիւնն ջլոց։ Զախտս այս բազումք անուանեն սովորաբար նաև ինտիգէսցիոնէ, այսինքն անմարսութիւն. կոչի և մալաթիա նէռվոզա, կամ քռոնիքա տէպօլէցցա. այսինքն ախտ ջլոց, կամ երկարատև տկարութիւն. որովհետև ունի մեծ աղդակցութիւն ընդ ախտին որ ասի՝ մալաթիա նէռվոզա։ Իսկ կայան, կամ բնակարան նորա որպէս ասացաք՝ է ստորին որովայնն։

Պատճառք ջղային դիւռարամարսուրիւն։

Բազմակերպ են պատճառք ախտիս, երբեմն յառաջ գայ 'ի տկարութիւն մանրաթելից միանանց ներքին որովայնի։ Երբեմն ևս 'ի դիւրագրգռուէ ջղաց կամ մանրաթելից միանանց ստորին որովայնին։ Եւ երբեմն ևս 'ի գօսուրթէ նոյն մանրաթելից միանանց ստորին որովայնի. յայն սակս կոչի և բարալիզիա տէլ վէնթռիքօլօ։ Հնար է ևս պատճառիլ յայնմ ամենայնէ որ սաստկապէս թուլացուցանեն զջիղս և զնոյն մանրաթելս, որպիսի են՝ ոգելից հեղանիւթքն, թմբրեցուցիչ և ջերմահամ դեղորայքն, անչափ գործածութիւն ջերմ ջրոյ, սրճոյ, չայի, և այլ ինչ այսպիսի ըմպելեաց։ Դարձեալ, հեշտութիւնն խգամտութիւն, սիրահարութիւն, սաէպ սաէպ երակ հատանելն, կամ արիւնառութիւն, ուժգին լուծողական, փսխողական և թքաբեր դեղորայքն կարեն պատճա-

ձեր զջղային դժուարամարսութիւն զայս։ Մարթ է ձա յառաջ գալ 'ի սասսիկ կրից ոգւոյ, 'ի տարապայման զբաղմանց յուսմունս։ Նաև չափազանց աշխատութիւքն մարմնոյ, օդ հրատապ 'ի ցերեկի և ինաստակար ցրտութիւն գիշերային, բազում անգամ պակասութիւնքն առողջարար և սնուցիչ կերակրոց, և աղտաղտին և անմաքուր ջուրք։ այդ ամենայն պատճառք են անվրէպ թշնամի առողջութիւն մարդոյ, թէպէտև յաղթանդամ և զօրաւոր ոք իցէ։ Դարձեալ մարթի ևս յառաջ գալ 'ի յանշարժական կեանս վարելոյ, և 'ի խոնաւութիւն օդոց։

Նշան ջղային դժուարամարսութեան։

Մարթ է ճանաչել զախտս զայս 'ի յանկարգութիւն սխորժակի, և մարսողականութիւն, 'ի յօժարութիւն 'ի ժայթքել, կամ 'ի նողկութիւն արտի, 'ի ստէպ ստէպ յօրանջմանէ, և 'ի ձգտումանէ, 'ի զարմանալի ինն խառնակութենէ վրոց, 'ի կարի ինն այտուցմանէ և ծանրացմանէ ստամոքսի, և սորին որովայնի։ որում երբեմն զուգընթացեան ցաւ խայթիչ, ժայթքումն, և մղումն բռնական, և գրեթէ ցնցական, որ կոչի քօնվուլսիվա։ Անդէն նոյնհետայն սկսանին 'ի վեր երևիլ այլևայլ ամբոխմունք 'ի պաշտամանն ստամոքսի և սորին որովայնի։ հետ զհետէ նուազութիւն, և եղծումն մարսողութեան, և զգայումունք օդեղէն հոսանուտից։ քանզի 'ի մեղկիլ ստամոքսին և 'ի թուլանալն՝ կերակուրքն ոչ ևս զօրեն մարսիլ և տրորիլ՝ ոչ փութանակի, և ոչ իսկ անագան, այլ կան մնան 'ի պարկի ստամոքսին իբրև 'ի քիմիական ինն քայքայման, որպէս եթէ արկեալ իցեն յամանն ինչ անմասն 'ի կենսական շարժմանէ։ Հոսանուտն՝ որով լինին ասացեալ զգայումունքդ, մարթի բազում անգամ լինել մեծաքանակ յոյժ, մինչև շուիչս ներգործել յեղան իւրում ը որկորն, և որոտմունս 'ի ներքին որովայնի, և կերկերումն ձայնի։ մարթի ևս այնպիսի ամբոխումն 'ի վերայ ածել ճապաղիցն ջղաց, զի գլխոյն դեդեղիլ, քնոյն վրդովիլ կամ հատանիլ, և այլոց ինն յոլովից վշտագնիչ տառապանաց 'ի վեր երևիլ։

Յաղագս խնամապարուրեալ ջղային դիւաբամարուածոց։

Անձինքն ըմբռնեալք յախտէ յայսմանէ՝ պարտին անձնապահ լինել յայնմ ամենայնէ, որք տկարացուցանեն և դրգռեն զջիղս և զմանրաթելս մկանանց ստորին որովայնի. ոչ պարտին բնաւ ընդ երկար ժամանակ մնալ առանց կերակրոց։ Կերակրոց նոցա պարտ է լինել թեթև և սնուցողական, և դիւրամարսելի։ Արգանակքն և յոյժ պարարտագոյն միսն են ինաստբեր. պարտ է ընտրել զպատշաճողական կերակուրս ստամոքսի, զոր մարթ ելցէ դիւրաւ և առանց աշխատանաց մարսել. սակաւ ինչ հաց թաթախեալ՝ 'ի մէջ միոյ սկահակի գինւոյ՝ յամենայնումս աւուր չափաւորապէս՝ 'ի կիր արկեալ զօրացուցանէ զստամոքսն և զմանրաթելս մարմնոյ, և դիւրացուցանէ զմարսողականութիւն. ուստի պատշաճ է ախտակրին գործածուիլ ջրախառն աղնիւ գինւոյ յայդպիսի դիպուածս։ Իսկ եթէ փուքն նեղիցէ զախտակիրն, յայնժամ յոյժ բարիոք է գործածուիլն ջրախառն օղւոյ։

Իսկ 'ի դիպուածս, յորում քամիաւոր անձինքն ունին զստամոքսն տկարագոյն, և զմարսողականութիւնն թուլագոյն, ասէ գուշէն հեղինակն՝ եթէ փորձիւ փորձեալ է զի յայդպիսի դիպուածս բաժակ մի աղնուագոյն գինի անապակ, նախ քան զշնաչն, կամ յորժամ ստամոքսն լինի գատարկ, է յոյժ յարմար և օգտաւէտ։ Արգելուլ պարտ է նմա ուտել զամենայն քամիաւոր և դժուարամարսելի ուտելիս, և զըմպելիս ջերմագինս, որպիսի են՝ ջայ, սուրճ, և ն. այսպիսի ըմպելիք թէպէտ համարին նպաստ ինչ լինել ախտակրին. բայց առաւել ևս զայրացուցանեն, և աճեցուցանեն զախտն, քանզի տկարացուցանեն զստամոքսն, եղծանեն զմարսողականութիւնն, և ըստ նմին մարսողութիւն նոյնպէս զմամացն։

Դարձեալ՝ 'ի դիպուածս յայս շարժողականուիլն է դեղ իմն աղնիւ և գերազանց, մանաւանդ եթէ լինիցի 'ի վերայ ձիոյ կամ ջորւոյ, որովհետև 'ի հեծելութիւն անդ բովանդակ մարմինն հանդերձ ամենայն անդամօքն շարժի։ Հողմն զովացուցիչ և ջոր, և ցուրտ ջրով բաղանիս առնելն 'ի դիպուածս յայս՝ են յոյժ յարմար և շահաւէտ. քանզի հողմն և ջուրն

ջերմագին հաստակօրէն թուլացուցանէն զՁիղա։ Իսկ անձինք, որոց տիար է ստամոքսն և փորոտիքն, պարտին անձնապահ լինել 'ի ցրտոյ։

Յաղագս դեղոցն զոր պարտ է 'ի վար արկանել 'ի դէպ պուածս Ջղային դժուարամարսութեան։

Եթէ այս ունի մեծագոյն ինն հաղորդակցութիւն եթէ 'ի խնամատարութիւն, և եթէ 'ի դեղոցս այս ամենն, որ ասի՝ մալաթիա տէր նէռվի ճէնէռալէ։ այսինքն ընդհանուր ախտ ջլաց, զորմէ լիովին խօսեցաք 'ի գլուխ ԺԳ։ յայն սակս միշտ կարևոր է 'ի դիպուածս ախտիս սկսանիլ 'ի զօրացուցանել զՁիղա, զստամոքսն, և զմանրաթելս մկանանց ստորին որովայնի 'ի ձեռն դառնագին և զօրատու դեղոցէն, որպիսի են՝ քինա քինա, ճէնցիանա, գուասիա, ռասէնցիս, սքօռցօ տի առանչիա, նա յաւէտ թինթուռա տի ֆէռռօ, և սպիտակ պղպեղն։ 'Ի դիպուածս, յորում ախտակիրն նեղն 'ի փքոյ, գործածուիթի էլիսսիռէի տի վիթռիօլօ՝ է յոյժ օգտաւէտ, զոր մարթ է 'ի կիր առնուլ 'ի 15 շիթէ մինչև 320։ և 330 շիթս՝ երկու կամ երեք անգամ յաւուրն 'ի մէջ միոյ բաժակի ջրոյ։ Առաւել քան զամենայն 'ի կիր արկանեմք ագուա մառցիալէ տի սփա։ զոր կանխաւ գրեցի, տալով ախտաժեռաց ժամէ 'ի ժամ չորս ունկի, մինչև լցցի լիտր մի յաւուրն։ Ջնոյն զօրութիւն և ներգործութիւն ունի նաև թթու ածխային ջուրն՝ որ կոչի ագուա կազ աշիտօ քարպոնիքօ։

Սակայն և 'ի մէջ սոցա ես ընտրեմ 'ի սկզբանն զայնոսիկ, որք նուազ խնդիչք են, որպիսի ինն են ռատիչէ տի քօլօմպօ, և էսթռաթթօ տի ֆիէլէ տի պօվէ, որ այսպէս յօրինի։ Առ կէս տրամ՝ ռատիչէ քօլօմպօ, և նոյնչափ էսթռաթթօ տի ֆիէլէ տի պօվէ։ Կազմեալ աստի վեցեակ հապս, երկու առցին ընդ առաւօտն, երկու նախ քան զՃաշն, և այլ երկու ընդ երեկս։ Զօրաւոր է յոյժ դեղս այս 'ի դիպուածս Ջղային դժուարամարսութեան։ զի սովաւ արծարծանին ազդեցութիւք փորային հիւթոց, և միանգամայն մանրաթելից ստամոքսին, և ստորին որովայնին։ միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի 30 օր։ Բայց յայսոսիկ աւուրս արժան է և ախտակրին յամենայնում աւուր ըմպել երեք կամ չորս

ունկի՝ ադուա տի մէնթա բէբէռիթիտէ, և կանոնաւորել զկերակուրս իւր ըստ կերպին, զորմէ խօսեցաք վերագոյնդ։

Իսկ եթէ 'ի գործածութիւն եղնալեղոյ, որ ասի՝ Ֆիէլէ տի պովէ, պատճառի լուծումն որովայնի, որ պէս պատահի բազում անգամ, յայնժամ պարտ է վոխանակ սորա 'ի գործ արկանել զյեռապայ փոշի դեղս։ Ա՛ռ երեսուն կշիռ ցորեան՝ ամենանուրբ փոշին քօլօմբօ անուանեալ արմատոյ, և երկու կաթիլ օլիս էսէնցիալէ տի մէնթա բէբէռիթիտէ. 'ի փոշւոյ ասսի առցէ հիւանդն ըստ վերոցուցեալ կերպի, այսինքն երեք անգամ յաւուրն։

Բաց 'ի դեղորէից ասսի՝ շահաւէտ յոյժ եղիցի արբուցանել հանապազօր 'ի հինգ ունկիս՝ զերկաթախառն ինչ գինի՝ բաղադրեալ կինամոնաւ և օշինդրաւ, կոչեցեալ իտալական բարբառով՝ թինթուռա տի մառթէ քոմբօսթա. բայց առցի մի աւելի քան զերկու և կէս ունկիս առ մի նուագ, և տացի ութ ժամ միջոց ժամանակի ընդ մի և ընդ միւս արբումն այսր չափոյ։ Զգեսցի գինըմպուութիւնս այս ցերեսուն, և ցքառասուն օր, և տեսցի օգտութիւն սորա մեծ 'ի կազդուրել զթալկութիւն ստամոքսին, 'ի բարեկարգել զգործողութիւնս ստորին որովայնի, 'ի դարձուցանել զախորժակն, 'ի զարթուցանել զթառամեալ կենդանութիւն մանրաթելից մկանանց ներքին որովայնի, և 'ի հերքել զփուքս։

Ցերկարժամանակեայ ջղային գժուարամարսութեանս, որոյ նախնական պատճառն գտանիցի լինել խոռիթապիլիթա, այսինքն գրգռականութիւն ջղաց, առաւել գործունեայ դեղն է օասիսո պիանքօ կամ մաշիսթէռօ տի պիսմուութօ. յորմէ պարտ է 'ի գործ արկանել չորիցս անգամ յաւուրն հինգ կամ վեց ցորեան, կամ ևս առաւել՝ մինչև 312 կշիռ ցորեան. միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի 20 օր։ Դարձեալ՝ օգտաւէտագոյն է 'ի դիպուածս յայս՝ ցուրտ ջրով բաղանիս առնելն, և յարատևելն 'ի նոյն առ ժամանակ մի։ Իսկ եթէ լեարդն, կամ այլ ինչ յաղեացն վշտացեալ լիցէ, ո՛չ է յարմար բաղանիս առնելն ցուրտ ջրով։ 'Ի գարնանային և յամառնային եղանակի բարիոք ևս է, և պատշաճագոյն է մտանել 'ի բաղանիս ջրոյ ծովու։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս ախտի որ ասի՝ Բառաալիզիա. այսինքն անդամալուծութիւն կամ կաթուած:

Ախտս այս է լուծումն կամ եղծումն ջղաց, և զգայուն, և շարժման, պատճառեալ 'ի պակասութենէ հաղորդակցութենէ ջղային ոգեաց: 'Ի մէջ ամենայն ջղային ախտից՝ ախտս այս է առաւել վտանգաւոր, մանաւանդ լինի առաւել կամ նուազ վտանգաւոր նկատմամբ վշտացեալ մասանցն: Անդամալուծութիւն կամ կաթուածն սրտի, թոքոց, կամ այլ ինչ գործարանաց կարևորաց առ կեանս, է առանց կարծեաց մահացուցիչ. նոյնպէս է յոյժ վտանգաւոր ստամոքսինն, ստորին որովայնին, և փորոտեացն: Յորժամ աչքն ըմբռնի յախտէս, է նշան ինչ յուռեգոյն, որովհետև 'ի գիպուածս յայս արժան է հաստատել, եթէ ուղեղն ևս է վշտացեալ: Յորժամ անդամալուծեալ մասն լինի ցուրտ և անզգայ, և ախտակիրն սկսանի կորուսանել զկարողութիւն բանին, և յիշողութիւն, չիք բնաւ, կամ է յոյժ սակաւ յոյս ապաքինութեան:

Անդամալուծութիւս այս կամ անդամազօսութիւս բաժանի 'ի բազումս, ըստ զանազանութենէ մասանցն, որք ըմբռնին յախտէս. վասն որոյ կոչի՝ բառաբլէգիա, կամ բառալիզիս ունիվէրսալէ. այսինքն անդամալուծութիւն ընդհանուր, յորժամ վշտանայ այսու՝ բովանդակ զանգուած մարմնոյ: Իսկ եթէ վշտանայ մի կողմն մարմնոյ, ասի՝ էմիբլէգիա, կամ էմիբլէսիա, այսինքն միակողմութիւն, կամ կիսակաթուած: Այլ եթէ մի միայն մասն անդամոց եւեթ վշտանայ, որպէս բազուկն, սրունքն, կողքն ևն, յայնժամ յորջորջի բառալիզիս բարճիալէ, այսինքն մասնակուն կաթուած, կամ հաշմութիւն:

Յաղագս պատճառաց անդամալուծութեանն, կամ կաթուածոց։

Ընդհանրական պատճառն այսր ախտի է այն ամենայն, որ կարէ խոչ և արգել լինել առնելութեան կամ ներգործութեան ջլաց և միտանց, կամ միոյ մասին և եթ մարմնոյն։ Իսկ պատահական պատճառքն են յոյժ յոգնութիւն. որպիսի են հարուածքն կամ խոցն ուղղոյ, և ողնայարին, ճնշումն ուղղոյ կամ ջլաց, ակամայ շարժումն կամ ցնցումն միտանց, օդն ցրտագոյն և խոնաւագոյն, արբեալումն երիք սովորական հոսմանց, երկիւղն յանկարծօրէն, պակասութեն շարժողականութեան, և այլ ամենայն ինչ, որ թուլացուցանէ զհաստատութեան բնութեան, որպիսի են՝ առատօրէն արբումն ջայի, սրձոյ, և ն։ Դարձեալ, մարթ է յառաջ գալ 'ի շոգեաց և 'ի գոլորշեաց թունաւոր մետաղաց հանքաց, և հրահալեալեաց, որպիսի են՝ անդիկն, արճիճն, մինդեղն, և ն։ Ախտս այս յոլով անգամ պատահի յայլ ախտից, որպիսի են ախտքն էպիլէպսիա, այսինքն վերնոտութեն. քոնվուլսիոնէ, այսինքն անբնական շարժումն միտանց մարմնոյ. քօլիքա նէֆրիթիքա, այսինքն խէթն երիկամանց. բասսիոնէ իլիաքա. այսինքն խէթն փաթոյթ անուանեալ աղեաց. արիւնախտառն հոսումն որովայնի, ձեռնառութեն, յօդուածացաւութիւնն, քնապութիւնն, և ն։ Դարձեալ, կարէ յառաջ գալ յաղէորութէ, յախոնգանոտութէ, 'ի սեամաղէ, 'ի չափազանց իգամոլութէ, 'ի գաղղիական և 'ի սքօտպութեական ախտից, և 'ի վերաւորմանէ ջլաց։

Նշան բարեյաջող նկատելի 'ի դիպուածս ախտիս։

Եթէ աչքն, լեզուն, և բերանն չեցեն խանգարեալ և թիւրեալ, չինք երկիւղ և ոչ վտանգ մեծագոյն։ Եթէ ախտս այս ոչ ղրաւէ զախտակիրն փութով 'ի կենաց, մարթ է յերկարապէս տևել. խայթումն, մարմնոլումն, մղումն, և ցաւն, են բարեգոյն նշանք 'ի դիպուածս անդամալուծութեէ։ Ցոյնպէս և ջերմախտն 'ի վերայ եկեալ ախտիս։ Եթէ ախտակիրն սոսկապէս կորուսանէ միայն զշարժողականութեն, ոչ է այնքան երկիւղալի, այլ առաւել ապաքինելի։ Բաղում անգամ ախտս այս աւարտեալ

ֆոխարկի 'ի կարկամութեն ջլաց, և սովորաբար 'ի քաղցկեղ: Կրկնումն այսր սխտի է յոյժ երկնչելի քան զառաջին ըմբռնումն նորին: Ախտս այս երբ քեմն և ինքնին բնութեամբ փարատի առանց իրիք նպաստաւորութեան դեղորէից:

Յաղագս դարմանապրութեան սխտին:

Որ 'ի բարիոք կարգադիր լինել յընթացս խնամատարութեան սխտիս անդամալուծութեան, արժան է քաջ նկատել 'ի մասն կամ 'ի մասունս վշտացեալս, 'ի պատճառան յորոց յառաջ գան, և 'ի հասակն սխտակրին:

ՅՕԳՈՒԱԾ Ա.

Յաղագս խնամապարութեան սխտին, որ ասի Բատալիկիա ոնինվերսալէ, այսինքն ընդհանուր անդամալուծութեան, յերէ- փսորդս ուղիղս և կորովիս:

Յայսպիսի դիպուածս արժան է երակ հատանել, դնել վեշիքաթօռիս, և լոյծ պահել զորովայնն 'ի ձեռն կակղացուցիչ դրեխաց և լուծողականաց, որպէս խօսեցաք այլուր:

Յաղագս խնամապարութեան նոյն սխտի 'ի ֆաֆիկոռոն և 'ի փկարոկաղմ անյինս, և 'ի ծերունիս:

'Ի ծերունիս, և 'ի դիպուածս յորում յառաջ գայ 'ի թուլութեն և 'ի տկարութեն, հասարակօրէն պարտ է 'ի գործ արկանել հնարս ներհակականս. քայց ի որում այս անդամալուծութեն ունի համաձայնութեն ընդ սխտին շնչական անդամալուծութեն, որ ասի՝ աբօբլէգիա սիէռօզա, վասն որոյ յոյժ պատշաճ է 'ի գործ արկանել զփսխողական դեղն պատրաստեալ հետագայ եղանակաւս: Առ 3 կշիռ ցորեան թառ- թառս սդիպիաթս, և երկու տրամ սալ վէճէթապիլէ: Խառնեա իրերաց և լոսեա բարիոք. յոր յաւէլ գ12 ունկի՝ հասարակ ջուր, և յամենայնում չորս ժամս մատո սխտակրին զմի գրգալ սեղանոյ:

Եթէ 'ի ձեռն այսր փսխողական դեղոյ չլինիցի հնարաւոր ապաքինումն ախտիս, յայնժամ արժան է 'ի գործ արկանել զքրտնաբեր դեղորայս, որպիսի են՝ սիէռս տի լսթթէ վինօզս, ինֆուզիոնէ տի քառտս սանթս ևն։ Եթէ 'ի դիպուածս յայս ախտն անգամալուծութեան ոչ ունիցի զոյգ ընդ իւր սբազմս, այսինքն ցնցումն ջլաց, յոյժ յարմարաւոր և օգտաւէտ են հետագայ կառավարութիւնքդ. կերակրոցն պարտ է լինել ջերմ և անօսր, զորօրինակ մանանեխ, բոլկ, անանուխ, ևն։ Ըմպելին ազնուագոյն գինի, շիճուկն կաթին պատրաստեալ մանանխով, կամ օղեաւ, և կամ սոսկ ջրով։ Ճոշափելն կամ շփելն զվշտացեալ մասունս է յոյժ յարմարաւոր. նոյնպէս օգտաւէտ է գնելն վէշիքաթօռիս 'ի վերայ նոյն վշտացեալ մասանց։ Եթէ այսոքիկ դեղորայք անօգուտ ելանիցեն, յայնժամ պարտ է շփելով օծանել զվշտացեալ մասունս լէնիմէնթս վոլատիլէիս, կամ ունկուէնթ նէռվինօիս։

Բարեգոյնն 'ի մէջ արտաքին դեղորէից՝ է դեղն ասացեալ էլէթթռիչիթա, այսինքն էլէքտրական գործ. զոր պարտ է 'ի գործ արկանել քանի ինչ ժամանակս։ Փսխողականն է յոյժ օգտակար յայսմ դիպուածի. զոր ևս արժան է ըստ պատշաճին կրկնել յոլով անգամ։ Զկնի փսխելոյ կամ ործալոյ ախտս կրին մի կամ երկու անգամ, պարտ է խառնել ընդ ըմպելին քանի մի կշիռ ցորեան թաւթաւռ էմէթիքս, և միանգամայն պատրաստել գրեխս վինս էմէթիքս թօռպիտօիս։ Նոյնպէս օգտաբեր է ֆիօռ տի ծինքս և բօլվէռէ չէֆալիքս և մուսքիօն, և քանֆօրան, և ասսաֆէթիտան, և սբիրիթս տի մէլիսսէն և սբիրիթս տի քօռնս տի չէրվն, և լիգուօր անօտինօն, ևն։ 'Ի դիպուածս ախտիս անձանց արհեստագործաց, որք յոսկի, յարծաթ կամ յայլ ինչ և իցէ մետաղս գործութիւնս լինին աշխատ, ոչ է օրէն տալ ըմպել զայսոսիկ ջուրս. զորոյ զպատճառէն խօսեսցուք համառօտիւ 'ի հետագայդ։ Այլ զայսոսիկ ջուրս արժան է 'ի գործ արկանել նոցա արտաքուստ և 'ի բաղանիս։ Հուսկ յետոյ նկատել պարտ է 'ի կարողութեն ախտակրին, և այնպէս 'ի գործ արկանել զդեղորայս պատշաճականս վիճակի նորա։ Պատմէ պօէռհավէ անուանեալ հեղինակն, եթէ բաղումք յայսպիսի ախտակրաց ապաքինեցան շոգւով ոգւոյ

գինւոյ, յորոյ վերայ պարտ է ունել զախտակիրն նաեւալ մերկանդամ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս խնամապարտութեանն ախտին անդամալուծութեան որ 'ի վերայ երեսի 'ի դիանուանս մարմնոյ։

Ամենայն այս պատճառի անմիջապէս կամ 'ի պակասութենէ զօրութեան, կամ 'ի կծկելոյ մկանանց, կամ պատճառի ընդմիջապէս յախտաւորութենէ ջղաց. և կամ եւս յառաջ գայ յօդուածացաւութենէ, որք դիւրաւ ապաքինին գործածութեամբ ագուա թէռմալէի, այսինքն ջուր ջերմկաց, կամ հանքային։ Մեծապէս փոյթ ունել պարտ է յայսպիսի դիպուածս ջերմութեան. եթէ գուցէ դոյզն ինչ ջերմութիւն, պարտ է փութալ, զի մի բորբոքեսցի սառակապէս։ Իսկ եթէ իցէ յոյժ սառակացեալ, յայնժամ պարտ է չափաւորել զայն։ Բաղանիս առնելն հանքային ջրով, է յոյժ պատշաճողական 'ի դիպուածս ախտիս, կամ հասարակ ջրով. եթէ միայն բաղանիքն ոչ լինի բաւական, յայնժամ արժան է պատրաստել էլէթթռի չիթա, զորմէ խօսեցաք վերագոյնդ։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յաղագս խնամապարտութեան ախտին ասացեալ էմբլէոռիա, այսինքն մեկուսմութիւն կամ կիսակաթուած, և յաղագս այլ ինչ պնդական անդամալուծութեան, որ ասի՝ բռոռալիպիա լօտալէ։

Նախ արժան է գիտել, վերոգրեալ կառավարութիւնն կամ դարմանն, զորս եդաք ընդհանրապէս վասն անդամալուծութեան, բնաւ ոչ ունի տեղի յայսմ դիպուածի։ 'Ի դիպուածս յայս հասարակօրէն աչքն, լեզուն և բերանն լինին վշտացեալ. բայց ոչ է այն

քան երկիւղալի, եւթէ գլուխն ելեալ առողջ և զերծ. և այսպիսի դիպուած ուր ուրեմն է պատահական։ Եթէ յախտէս յայսմանէ լեզուն առաւելապէս լեցի վշտացեալ, պարտ է ախտակրին սովորաբար ողողել ստէպ ստէպ զբերանն օղով, և մանանխով, կամ աբիւրեթս տի լավանտաիւ. ևն։ Արմատն վայրենի վալէրիանայի (որ ժողովեալ եցէ 'ի լեռնային տեղեաց,) է յոյժ օգտաւէտ 'ի դիպուածս ախտիս. զոր պարտ է 'ի գործ արկանել ինֆուզիոնէ արարեալ արմատուն սէրբէնթարիա վիրճինիանայի և տերևօք սալվիայի, կամ փոշի արարեալ սոսկապէս առանձինն 'ի գործ արկանել մի արամ 'ի մէջ միոյ բաժակի գինւոյ երիցս կամ չորս անգամ յաւուրն։

Իսկ եթէ ախտակիրս ոչ կարէ 'ի գործ արկանել զայս արմատ, մարթ է պատրաստել զյետագայ դեղս։ Առ սալ վոլատիլէ օլիոզ, աբիւրեթս քոմբոսթոս տի լավանտա, և թինկտուրա տի քասթորիս, յիւրաքանչիւրոցն կէս և կէս ունկի. խառնեա իրերաց, և տուր ըմպել 30 կամ 40 շիթս 'ի մէջ միոյ բաժակի գինւոյ երիցս կամ չորիցս անգամ յաւուրն։ Մի դրդալ մանանեխն նմանապէս է բարեգոյն իմն դեղ 'ի դիպուածս ախտիս։ Պարտ է ախտակրիս միշտ ծաքել 'ի բերանն կինոմոնս, կոճապղպէղս, կամ այլ որպիսի և եցէ գոյացութիւն ջերմահամն։

Իսկ 'ի դիպուածս՝ յորում ախտս այս 'ի վեր երևի 'ի սրունս, յայնժամ պարտ է զհետ երթալ կանոնաց, և կառավարութեաց, զորս եդաք 'ի դիպուածն ախտի, որ ասի՝ բառալիզիա ճէնէռալէ, և միանգամայն մարթ է արտաքուստ 'ի գործ արկանել ֆոմէնթի պատրաստեալ 'ի տերևոց մէլիսսէի, օրիկանոի, բուլէճճիոի, սէրբիլլոի, թիմոի, ռամէռինոի ևն։ Իսկ յորժամ 'ի վեր երևի 'ի բազուկս, յայնժամ պարտ է շոշափել զախտացեալ մասունս մարմնոյ, և ստէպ շփել կաշւով, կամ սառաբ չուխայիւ. և միանգամայն օծանել լինիմենթս վոլատիլէիւ, կմ ունկուենթս նէրվինոիւ։ Եւ եթէ յայսոցիկ հնարից օգուտ ինչ ոչ երևի, յայնժամ արժան է դնել մի վէշիքատորիս 'ի ստորին ծագն քամակի։

Որքան առ ախտն անդամալուծութիւն, որ պատճառի յախտէ՝ որ ասի վիցիս պրոգրեսիվ, յայնժամ պատշաճ է դարմանն տանել ախտակրին 'ի ձեռն հետագայ դեղորիցս. այսինքն քոէմոռէ տի թատ-

թառս, էլիսսիռէ տի վիթռիօլս, աչէթս, այսինքն քացախ, սբիռիթս տի սալ տօլչէ։ Կոյնպէս յոյժ օգտակարք են 'ի դիպուածս յայս կապամբն, անմռուկն, կարոսն, սոխն, բողկն, եղերդն, ակրիմոնիա, լաթուքա, պէքասպունկա, քօքլէառիա, ռաֆանս ռուստիքանս, նասթուրցիս տ' ինտիա, թռիֆոլիա, սալսաբարիլիա, չէնթավռի մինօռ, սիէռս տի լաթթէ. են։

Իսկ եթէ պատճառեալ ի՞նչ 'ի գաղղիական ախտէ, յայնժամ արժան է դարման տանիլ 'ի ձեռն դեղոց էին, զորս ունիմք սահմանել ընդդէմ այսորիկ ախտիս 'ի գլ. լբ։ Դարձեալ, 'ի դիպուածս ախտիս շարժողականութենն է յոյժ կարևոր. բայց պարտ է ախտակրին անձնապահ լինել 'ի ցրտոյ և 'ի խոնաւ օդոյ. և եթէ հնարաւոր ի՞նչ է, փոխել զբնակութենն և երթալ 'ի քաղաքս, ուր օդն ի՞նչ է առաւել ջերմագին։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս ախտի որ ասի՝ Էբիլէսիա, կամ մալֆատոռս, այսինքն լուսնոտութիւն կամ վերնոտութիւն։

Ախտս այս լուսնոտութիւն կամ վերնոտութեան է յանկարծակի ելմն խանգարումն ամենայն զգայարանաց, յորում դիպուածի ախտակիրն անկանի 'ի մահիճս կամ յերկիր 'ի միում վայրկենի, և արձակէ ընդ բերանն կփրփուրս առատս. և ախտիս այսմիկ զուգընթաց լինի սաստկագոյն ինչ խեղաթիւրութիւն դիմաց, և ջղաց, և ցնցիւն մկանաց։ Երիտասարդք փափկակեացք առաւել են ենթակայ այսր ախտի, և հասարակօրէն տիրէ 'ի սեռս արանց՝ քան թէ կանանց, և է յոյժ դժուարաբուժելի։ Յորժամ մանկունք 'ի մատաղ հասակի ըմբռնին յախտէս, գոյ յոյս ապաքինութեան նոցին. իսկ եթէ անցեալ ի՞նչ են

զքսան ամօք, յայնժամ ապաքինութիւնն լինի յոյժ դժուարին: Այլ եթէ անցեալ իցեն զ40 ամք, յայնժամ պարտ է գլխովին լինել յուսահատ: Եթէ բորբոքումն կամ գրգռումն իցէ ցանցառակի և սակաւաւ, մարթ է յուսադիր լինել ապաքինութեան: Իսկ եթէ իցէ յոյժ երկարաւ և ստէպ ստէպ կրկնական, արժան է յոյժ երկնչել. քանզի այնուհետև ապաքինութիւն ախտակրին է գլխովին անկարելի: Այլ յաւէտ ևս դժբաղդագոյն նշան է, եթէ բորբոքումնս այս 'ի վերայ եկեսցէ ախտակրին 'ի քուն լինելն:

Յաղագս պատճառաց վերնոգութեանց կամ լուսնոգութեանց:

Ախտս այս երբեմն է ժառանգական: Մարթ է և յառաջ գալ յերկիւղէ, կամ 'ի սարսափոյ ինչ մօրն 'ի ժամանակի յղութեան. 'ի հատուածոց ինչ անդամոց, 'ի կարեվէր ինչ խոցմանէ 'ի գլուխն, 'ի կուտակմանէ ջուրց և արեան ուղղոյ, 'ի պողնպոդէ (որ է միս ինչ աճեցեալ 'ի ներքս անդ 'ի ռնգունս,) յարբեցողութէ, 'ի սաստիկ տուփանաց պագշոտ սիրոյ, 'ի սաստիկ ցաւոց ատամանց, յարգելականութէ երիք սովորական հոսմանց, յորդանց և 'ի ճճեաց որովայնի, 'ի բորբոքմանէ արգանդի: Հուսկ յետոյ 'ի կրից հոգւոյ, որպիսի են՝ տրտմութիւն, բարկութիւն, չափազանց ուրախութիւն ևն: Մարթ է ևս պատճառել յայլ ինչ ախտէ, որպիսի են պիսակն, և հարանիթն, կամ վարդախտն, ևն:

Յաղագս նշանաց այսորիկ ախտի:

'Ի գիպուածս ախտիս հասարակօրէն զուգընթաց լինի անկարգ ինչ եղկութեն և թուլութեն, ցաւ կամ ծանրութեն ինչ գլխոյ, մթագնութեն աչաց, շառաչումն ականջաց, բաբախիւն սրտի, դժուարութիւն ինչ 'ի շնչառութեն, քունն միջահատ, և փուք ինչ 'ի մէջ փորոտեաց. հոսումն միզի լինի յոյժ առատ, և ջինջ. ախտակիրն լինի ուժգին դեղնագոյն, և ցրտագոյն. և զգայ յանձին իբր ցրտագոյն հողմոյ ստէպ շնչել 'ի վերայ գլխոյ իւրոյ:

Իսկ արտաքին նշանքն այսր ախտի են՝ տրտմութեն, տրտունջն, արտասուքն, տյուսուցն աչաց, մանաւանդ

ջրթանց, երբեմն սաստիկ ինչ կարմրութիւն ունգացն, և 'ի մէջ երկուց յօնից, երբեմն ևս սաստիկ ուռոյցն երակաց ճակատու, տեսիլք սոսկալի և երկիւղալի, և երբեմն ևս ցաւ ինչ կրծոց և ստամոքսի. և 'ի վախճանի գլխովին կորուսանել զզգայութիւնսն և զբանն. այսոքիկ նշանք՝ զորս եդաք ցայս վայր, 'ի վերայ գան ախտակրին 'ի լինել նորա ըմբռնեալ 'ի վերոյասացեալ բորբոքմանէ. իսկ 'ի փարատիլ այսր բորբոքման, զգայութիւնքն առ սակաւ սակաւ վերադառնան. ախտակիրն որանչայ զանհանգստութենէ, զգայ ցաւ ինչ գլխոյ: Արդ՝ 'ի վերնագոյնդ յուսահատ արարաք զվերծանողդ, յասել մեր՝ եթէ անապաքինելի ինն է ախտս այս 'ի չափահասակս, որք անցեալ են զքառասուն ամաւք և ն. այլ 'ի վերայ այսր ամենայնի ոչ է օրէն անդարման թողուլ ևս զչափահասակ ախտակիրս:

Կառավարութիւն 'ի վար արկանելի 'ի դիպուածս լուսնապտութեանն յոմանց յոմանս հասակի եղելոց և ըմբռնելոց յանխափէս:

Հարկ է ախտակրիս՝ որքան մնրթ իցէ, 'ի մաքուր և յառողջարար օդս վայելել: Կերակրոցն պարտ է լինել թեթևագոյն, և սնուցողական. պարտ է հրաժարիլ 'ի գործածութենէ ոգեաւոր հեղանիւթոց, 'ի մսոյ ոչխարի, և ջրային կենդանեաց, և յամենակերպ քամիաւոր և 'ի պարսպրտ կերակրեղինաց, և 'ի խոտեղինաց, որպիսի են կաղամբն, ընկոյզն և ն: Հացն բարիոք եփեալ, և պտուղք հասունացեալք, և կաթն է պատշաճաւոր կերակուր 'ի դիպուածս ախտիս: Դարձեալ, արժան է ախտակրիս փոյթ մեծ ունել 'ի պահել զանձն 'ի զուարճութենէ, և 'ի փարատել զկիրս դժնդակս. որպիսի են երկիւղն, տրտնջանքն, տրտմութիւնն, և անսովոր ուրախութիւնն, և ն: Շարժողականութիւնն 'ի դիպուածս յայս՝ է յոյժ օգտակար, զոր պարտ է առնել ախտակրին յամենայն աւուրս ըստ տանելոյ կարողութենն. նոյնպէս արժան է անձնապահ լինել 'ի ցրտոյ, և 'ի սաստիկ տօթոյ:

Յաղագս դեղրէից, զոր պարտ է 'ի վեր արկանել 'ի դէ-
պուածս ախտից՝ անչանց որպիսի և ինչ հաւուցի եղելոց։

Կառավարութիւնք այսորիկ ախտի զանազանին ըստ այլևայլութեան պատճառաց, յորոց յառաջ գայ։ Եթէ ախտակիրն իցէ արիւնային իմն բնութեան, և խառնուածոց վիճակեալ, պարտ է երակ հատանել. իսկ եթէ ախտս այս իցէ պատճառեալ յարգելականութենէ իրիք սովորական ծորման կամ թորման, յայնժամ հարկ է վերստին շարժել զնոյն ծորուն կամ թորուն որքան մարթ իցէ. այլ եթէ անմարթ իցէ շարժելն զնոյն ծորուն կամ թորուն սովորական հոսման, յայնժամ արժան է ընուլ զտեղի նորա երակ հատանելով, ևն։

Իսկ յորժամ գուցէ պատճառ ինչ կարծելոյ, թէ ախտս այս իցէ յառաջ եկեալ յորդանց կամ 'ի ճանեաց, յայնժամ պարտ է 'ի կիր արկանել զդեղոցայս որդնահալածս, որպիսի են՝ եալաբբա, քալամելանս, ռապառպառս, լիմանթուռա տի ֆէռռս, սէմէ սանթս, ևն։ Այլ եթէ ախտս լինիցի պատճառեալ 'ի ցաւոց ատամանց, յայնժամ պարտ է լոյծ պահել զորովայնն 'ի ձեռն կակղացուցիչ գրեխաց, և ստէպ թանալ զոտս ախտակրին 'ի մէջ ջերմ ջրոյ։

Իսկ եթէ բորբոքումն իցէ յոյժ սաստիկ, յայնժամ պարտ է դնել վէշիքսանթռիս 'ի մէջն քամակին, և առ մնացեալսն՝ զնոյն կառավարութիւնս արժան է 'ի գործ արկանել։ Դարձեալ գիտելի լիցի զի եթէ ախտս այս գոյացեալ իցէ յարտաքին ինչ մասունս մարմնոյ, զոր օրինակ 'ի սրունս, յաղդերս, 'ի բազուկս, յուսս, ևն. մարթ է փութով փարատել զբորբոքումն զայն, պրկելով սնդագոյն իւղիք կապով յայն մասն զմի վէշիքսանթռիս։

Դարման 'ի ծամանակի, յորում յարտաքնոյ ճնայ բորբոքումն։

Որքան յարատև ճնայ բորբոքումս այս, պարտ է 'ի կիր արկանել զդեղոցայս յոյժ սակաւ քանակութեամբ. և զդոյշ լինել արժան է՝ զի մի ախտակիրն ինչս ինչ գործեսցէ. պարտ է դնել գործի ինչ 'ի մէջ ատամանցն, զի մի խածատեսցէ զլեզուն, որպէս

պատասխի յոլով անգամ։ Նոյնպէս զգուշանալ պարտ է շրջակայեցն, զի 'ի գիպուածս՝ յորում կարկամութիւն ջրոց 'ի վերայ հասանի ախտակրիս, մի բնաւ բուռն հարկանիցեն առ 'ի բանալ զձեռս կամ զոյլ կորացեալ և ծալեալ անգամն ախտակրին։ 'Ի գիպուածս՝ յորում սասականան նշանքն բորբոքման, այսինքն ուժգնութիւն և կարծրութիւն զարկի բազկերակին, կարմրութիւնն երեսաց, և այտուցն երակի ճակատու և պարանոցի ևն, յայնժամ ասէ Թիսսոթ հեղինակն՝ եթէ պարտ է երակ հատանել։

Դարման, զոր պարտ է 'ի գործ արկանել զկնի փարպեցոյ բորբոքման։

'Ի դադարել և 'ի փարատել կատարելապէս բորբոքման, զկնի չորից ժամուց, պարտ է 'ի կիր արկանել գրեթէ դաղջ ջրով, և ստէպ ստէպ տալ նմա ըմպել փոքրիկ բաժակաւ ջուր ցուրտ։ Այլ եթէ ախտակիրն չիցէ այնքան ամբոխեալ և խռովեալ, մարթ է և 'ի գործ արկանել քօռոխալս թեթևագոյնս, որպիսի են՝ ագուռատի մէլիսսէ, ջուրն ծաղկի նարնջոյ ևն։ Յորժամ ախտս այս լինի ժառանգական, կամ պատճառի 'ի խանգարմանէ ինչ ուղղոյ, յայնժամ չէք բնաւ յոյս ապաքինութեան։ Իսկ յորժամ պատճառի 'ի տկարութէ և յուժգին զայրացմանէ ջղաց, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զգեղորայս պատշաճագոյնս 'ի զօրացուցանել զջիղս։ որպիսի են՝ քինա քինա, թինթուռա տի մառթէ, ևն։

Դարձեալ, 'ի գիպուածս վերնոտուն յոյժ գովելի է ֆիօռ տի ծինկօ, զոր պարտ է 'ի կիր արկանել հապա արարեալ երիս և կամ չորս ցորեան՝ խառն ընէնթուսթիթօ տի օշնամուսի, կամ բարիոք ևս մէն մի ցորեան՝ յաւուրն չորս անգամ։ Նմանապէս պատշաճագոյն և օգտակարագոյն է 'ի գիպուածս ախտիս կիրառութիւն հետագայ դեղորէից։ Առ 10 կամ 12 կշիռ ցորեան՝ մուսքիօ, և նոյնչափ՝ չէնառօ առթէ ֆանթիթօ։ Հապա պատրաստեա բաւականաչափ շիլոբբօիս։ և տուր ախտակրին յառաւօտեան և յերեկոյեան պահու զնոյնաչափ հապն։ Բայց առաւել քան զամենայն դեղորայս օգտաւետագոյն և սեպհական դեղն 'ի գիպուածս լուանոտուն է արմատն վալէռիանա սիլվէսթռէի, զոր պարտ է 'ի գործ արկ-

կանել փոշի արարեալ երկու տրամն յաւուրն. զմի տրամն յառաւօտեան պահու 'ի ծոմուստ, և զմիւսն յերեկոյեան պահու լուծեալ 'ի մէջ հասարակ ջրոյ. յորմէ ըմպէ ախտակիրն. մարթ է և առաւելուլ զայս չափ՝ նկատեալ 'ի պարագայս հասակի և խառնուածոց նորա, և 'ի սաստկութենն ախտիս:

Եւ իբրև վերոգրեալ դեղորէիւք չպակասեցի սաստկութենն բորբոքման, ոչինչ արգելք կայ գործածութեանն քուբեռ ամմոնիաքալէի. որ այսպէս բաղադրի: Քսան կշիռ ցորեան՝ քուբեռ ամմոնիաքալէ, և քոնսէռվա տի ռոզէ քանինէ՝ որչափ պէտք իցեն առ կազմելոյ ըստ կանոնաց արհեստին. զզանգուածս զայս արարեալ 192 հապս, տացի անընդմիջաբար մէն մի հատ յառաւօտեան, և յերեկոյեան պահու. և զսոյն զայս հապ պարտ է առ սակաւ սակաւ առաւելելուլ, մինչև ցչորս կամ ցհինգ հատ: Երբեմն ևս դիմեմ 'ի գործածութեանն բիէթռա ինֆէռնալէի, կամ նիթռօ տ' արճենթօի: Զոր օրինակ. առ 20 կշիռ ցորեան՝ բիէթռա ինֆէռնալէ, և քոնսէռվա տի ռոզա քանինա՝ որչափ պէտք են վ՚ յօրինելոյ զ192 հապս. զորս շրջապատեալ փոշուն կինամոնի, տացի մի կամ երկու հատ յաւուրն. նոյնպէս մարթ է և առաւելուլ զայս չափ, նկատեալ 'ի պարագայս խառնուածոց ախտակրին:

Են և այլ դեղորայք սեփական ախտիս, որպէս են՝ քինա քինա, ֆէռռօ, քասթօռիս, տասա ֆէթիտա, ռութա, վինքօ գուէռչինօ, օբբիս, մէռքուռիս, անթիմոնիս, քանֆոռա, և՚ն: Այլ գիտել արժան է, զի 'ի գործ արկանելն զորպիսի և իցէ դեղորայս, պարտ է միշտ նախապատրաստել և բարեխառնել զբնութենն, որպէս զի եթէ 'ի գործ արկանիցի 'ի գիպուածի ինչ, յորում գտանի 'ի բնութենն պընդութիւն որովայնի, կամ բորբոքումն ինչ 'ի ծագն ստամոքսի, կամ փտախտութի, և՚ն, յայնժամ փոխանակ օգի պատճառեն զինեաս մեծամեծս: Զայս ախտ լուանոտութե նախնիք կոչէին՝ մալ էրքուլէս, կամ մալ քոմիցիալէ. զոր հիփոկրատէս անուանեաց՝ մալոնթիա սաքռա, կամ տիվինա:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս ախտից, որք ասին՝ Մելանխոլիա, այսինքն անառողջ ուրիշ, և յաղագս ախտից, որք կոչին՝ Փսիլիա, կամ մանիա, և կամ նօսթալգիա, այսինքն կապուրիշան կամ մոլեգնուրիշ։

ՍեամալՁուԹիս այս է խօԹուԹիւն ինչ պատՁառեալ՝ ի յուշաբարՁուԹէ կամ՝ ի տկարուԹէ ոգւոյ. որով արգելանի մարդն՝ ի վայելել զկեանս հաՁոյականս, և միանգամայն՝ ի վՁարել հաՁոյից բնուԹեան։ Այս է առաջին աստիՁան ախտիս՝ Փսիլիա. այսինքն յիմարուԹիւն. իսկ բազում անգամ ևս աւարտի՝ ի կատարեալ աստիՁանն յիմարուԹեան։ Եւ այս ախտ ևս ունի բազմապատիկ և զանազան աստիՁանս։ Առաջինն ասի՝ իմպէչիլլեթա, այսինքն տկարամտուԹիւն. յորում ոք չինի իբրև՝ ի հասակի նախկին մանկուԹէ։ Երկրորդ աստիՁանն ասի՝ Ֆուռօռէ կամ մանիա, այսինքն կատաղուԹիւն. յորում աստիՁանի հաղիւ ԹէՀ տոռամբ մարԹ ելցէ զսպել զախտակիրն. յայսմ աստիՁանէ բազում անգամ ախտակիրն հասանէ յաստիՁանն յետին՝ ասացեալ աչէասի, այսինքն ուժգնուԹիւն. յորում աստիՁանի խելագարն ունի զոյժ ինն հիանալի, մինչև անհնարին լինի յաղԹել այնմ, և տկարացուցանել զայն՝ ի ձեռն անսուաղուԹէ և ծոմապահուԹէ։ Յայսմ յետին աստիՁանի մարԹ է դասել զախտն ասացեալ նօսթալՁիա, որ և կոչի ախտ հայրենեաց, իբրև զի ասեն պատՁառիլ՝ ի բաղՁանաց առ տեսուԹի հայրենեաց, ազգականաց, և բարեկամաց։

Յաղագս պատՁառաց այսոցիկ ախտից։

Ախտս այս ասացեալ սեամաղՁուԹի՝ յառաջ գայ՝ ի ներքին կրից ոգւոյ, որ ասի՝ փսԹիմէնԹի քօչէնԹի ակլ՝ անիմա. այսինքն՝ ի սիրոյ, յերկիւղէ, ՝ի

տրտմութիւն, յուրախութիւն, 'ի սարսափումն սիգութիւն. ևն։ Գոյնպէս մարթ է պատճառիլ 'ի չափաղանց մտածութիւն, 'ի սաստիկ զգայական բաղձանաց, յանշարժական կեանս վարելոյ, յառանձնութիւն, յարդելականութիւն իրիք սովորական հոսմանց, 'ի դժնդակ ջերմախտէ, և կամ յայլ ինչ ախտից։ Գիտելի է, զի 'ի սաստկանալ այսոցիկ վերոյիշեալ ներքին կրից ոգւոյ, որպիսի են տրտմութիւն, ուրախութիւն, սէրն, երկիւղն ևն, և յելանելն ըստ չափ մարթին փոխարկել զախտն սեւամաղձութիւն յախտն սասցեալ՝ Փոլլիս, այսինքն յիմարութիւն։

'Դարձեալ, կարեն պատճառել զախտս զայս կերակուրք ջերմահամք, դժուարամարսելիք ևն. որով հետև յանմարսական մնալն կերակրոց 'ի մէջ սատմոքսի՝ պակասի խոնաւութիւնն պիտանաւոր, որով պահպանի ուղեղն։ Յաւելուլ մարթ է 'ի վերայ ոչ սոցիկ պատճառաց և զցնորական երևակայութիւս, որք խանգարեն զմիտս։ 'Դարձեալ անձինք, որք պարապին 'ի խոկմունս անչափս, և որք անձնապրաւ լինին յընթերցանութիւս նրբիմաստ գիտութեց՝ են յոյժ ենթակայ այսր ախտի։

Յաղագս նշանաց այսոցիկ ախտից։

Յորժամ սկսանի որ ըմբռնիլ յախտէս յայսմանէ, լինի երկչոտ, անհանգիստ, և ինդրէ միշտ զառանձնութիւն, սովորաբար լինի ընդվայրաքննին, կասկածոտ և անհամբեր։ Սատմոքսն և որովայնն լի փքով. զարկ բաղկերակին մանր և սակաւ։ Ունի զպնդութի որովայնի. հասարակօրէն և մէջ նորա լինի ջինջ, պարզ և սակաւաքանակ, և գոյն երեսաց գեղնագոյն. խանգարի գլխովին երևակայութիւն, այնպէս՝ մինչև ախտակիրն ձևակերպէ զանձն մեռեալ, կամ յանբան կենդանի ինչ փոխարկեալ, կամ յապակի ինչ գիւրաբեկանելի, ևն. յայսմ յետին դիպուածի պարտ է մեծապէս զգոյշ լինել 'ի վերայ անձին ախտակրիս, զի այդ օրինակ խանգարումն երևակայութիւն՝ գուշակ է անտարակոյս ապերջանիկ եղից նորին։

'Դարձեալ, այդպիսի ախտակիրք երբեմն էն ենթակայ ահի և սարսափոյ, շլանալոյ աչաց, և կրճտելոյ ատամանց. հեղուն սաէպ զարտասուս առանց պատճառի, անհանգիստ են 'ի քուն լինելն, և միշտ

տհացուցիչ և սոսկալի տեսլեամբ և երազք տաժա-
նին. կրեն սովորաբար զսաստիկ ինչ ծանրութիւն և
զցաւ գլխոյ, զշառաչիւն ականջաց, զգողդոջիւն
ջղաց, զբաբախիւն սրտի, զնեղութի կրծոց, և մաս-
նաւորապէս գաղտնի ինչ ցաւ 'ի ծագն ստամոքսի.
և սերթ երևի ուռոյց ինչ ստորին որովայնի. բա-
զումք 'ի նոցանէ կրեն զկրծուումն ինչ ստամոքսի,
որով շարժի քաղց ինչ անսովոր։ Մեծագոյն մասն
այդպիսի ախտաժետաց կրեն անհնարին երկիւղ ինչ
մահու, և ոմանք և ամենայն ձանձրացեալ 'ի կենաց, փա-
փաքին մահու առ 'ի ազատիլ 'ի տանջանաց իւր-
եանց։

Գոյ և այլ տեսակ ինչ այսր ախտի, բայց հաղիւ
երբեք է պատահական, որով ախտացեալն փախչի
'ի գիշերի 'ի բացօթեայս, 'ի դաշտս, և զօրէն անսա-
նոց ընթանայ այսր և անդր. այսպիսի ախտակիրք
կոչին՝ լիքանթռօբս, այսինքն գայլացեալ. (զի կար-
ծեն փոխեալ 'ի գայլ.) ոմանք և այդպիսեաց ա-
ռանց փախչելոյ՝ միշտ կամին փոփոխել զտեղի այսր
և անդր։ Բայց անձինք, որք ըմբռնին յախտէս նօս-
թալճիա, 'ի սկզբան անդ գլխովին անձնագրաւ լի-
նին 'ի սուգ, և 'ի տրտմութիս, և առ սակաւ սա-
կաւ անկանին 'ի թալկութի և 'ի պղերգութիւն։
Կորուսանեն զախորժակն, զարկ բազկին լինի ջեր-
մախտային. և վերջապէս անկանին յախտ ինչ մահա-
ցուցիչ։ Վերոյասացեալ ախտն մելանքոնիա, եթէ
յառաջ գայ յարգելականուէ իրիք սովորական հոս-
մանց, կամ յայլ ինչ ախտէ գործարանաց, առաւել
դիւրաբուժելի է քան զայն, որ յառաջ գայ 'ի կրից
հոգւոյ։ Հոսումն ինչ արեան 'ի ռնգացն, լուծողու-
թի ինչ որովայնի, հոսումն դաշտանի կամ թանչից
են, բազում անգամ արգելուն և խափանեն զախտն
վերահասեալ։

Յաղագս կանոնաց և կատարմանց, զորս պարտ է 'ի
գործ արկանել 'ի դիպուածս այսոցիկ ախտից։

Վերակրոցն պարտ է լինել բնութիւն զովացուցիչ
և կակղացուցիչ. պարտ է ախտակրին հրաժարիլ
յամենակերպ մսոյ աղածոյ կենդանեաց, նոյնպէս 'ի
ձկանց, և յայլ ինչ կերակրեղինաց սոխով և խստո-
րով պատրաստելոց, կամ յաղտաղտային իրաց, որք

խտացուցեալ թանձրացուցանէն զարիւնն։ Գործածուին ամենակերպ առողջարար մրգաց, պտղոց, և խաւարտից է անվնաս, մանաւանդ և օգտակար։ Պատմէ պօէտհավէ հեղինակն, եթէ կրօղ ոք զախտս զայս ընդ երկար ժամանակ գործածուլ սիէռս տի լաթթէի և պտղոց, ապաքինեցաւ կատարեալապէս։ Ընդնպէս հրաժարիլ պարտին յամենակերպ ոգիաւոր հեղանիւթոց, և 'ի ջերմահամ ըմպելեաց. յորմարաւոր ըմպելին է հասարակ ջուրն, կամ շինուկն կաթին, կամ թեթեւագոյն ինչ պիրրա։ Ընդնպէս յոյժ օգտաւէտագոյն է շրջադայուելն 'ի բացօթեայս որքան տանի զօրութիւն ախտակրին, և ընդ հակառակն յոյժ վնասակար է փակեալ թողուլն զնա 'ի մէջ սենեկի։

Յաղագս դեղոցն զորս մարդն է 'ի վար արկանել 'ի դիպուածս անամաղյուրեն։

'Ի դիպուածս յայս պարտ է փոյթ ունել մեծի գերզգօնութեամբ, առ 'ի վարիլ ընդ ախտակրին. յորժամ տեսանեմք զնա՞ նեղեալ և վշտացեալ, արժան է մխիթարել, և քաջալերել զնա, և միանգամայն զուարճացուցեալ ախոտիլ զբնուն նորին, գեղեցկայարմար երգաձայնութիւն, նուագարանօք, և ն։ Ընդնպէս պարտ է ախտակրին միշտ կենակցիլ ընդ անձինս, որք հաճոյական են նմա։

'Ի դիպուածս՝ յորում զարկ բաղկին լինի լի և զբեղ, հարկ է երակ հատանել. և զբնուն լոյծ պտղեալ գործածութիւն լուծողականաց, որպիսի են՝ ռապարարաս, մաննա, քուէմոռ տի թարթառս, կամ քուէմոռ սօլուպիլէ, որ 'ի դիպուածս յայս է առաւել ներգործիչ և օգտաւէտ. զոր պարտ է 'ի գործ արկանել լուծեալ 'ի մէջ ջրոյն ավէնայի կէս ունկի՝ յամենայնում աւուր քանի ինչ ժամանակս, որքան լինիցի հարկաւոր. զչափս զայս մարթ է յաւելուլ կամ նուազել՝ նկատեալ 'ի ներգործութիւնն, որ յառաջ գայ։ Փսիոզականն ևս է օգտակար. բայց պարտ է լինել ասատիկ և զօրաւոր. ապա թէ ոչ՝ այլազգ ոչ ներգործէ։ Ամենայն գեղորայք՝ որք են յաջողակ 'ի շարժել և 'ի լուծանել զմէզն և զգոլորշին, են յոյժ օգտաբեր 'ի դիպուածս ախտիս, նիլթռօն, և քացանն. զնիլթռօն մարթ է 'ի գործ

արկանել երեսուն ցորեան, յաւելցի նաև իբրև մի և կէս ունկի՝ քացախ թորեալ, և մի պօքքալէ՝ ջուր հասարակ, և տացի 'ի սեամաղձային ախտակրութիւն յիւրաքանչիւր ժամու կէս ունկի։

Նոյնպէս փորձիւ յայտ է օգուտն քանֆօռայի, զոր պարտ է 'ի գործ արկանել ըստ յետագոյ եղանակիս։ Առ 30 ցորեան՝ քանֆօռա, և նոյնչափ՝ աղնիւ նիթռօ. տրորեալ խառնեա զամենայն իրերաց յանկանի, և տուր ախտակրին զնոյն չափն երկու անգամ յաւուրն, կամ՝ եւ առաւել ըստ կարողութեան ստամոքսի։ Իսկ եթէ չկարիցէ տանիլ այդմ, պարտ է զնոյն չափ քանֆօռայի խառնեալ ընդ այլ հաւասարաչափ մասունս ասսաֆէթիտայի, և քասթօռիսի հապս պատրաստել և այնպէս 'ի գործ արկանել։ Նոյնպէս օգտաւէտ է գործածութիւն մուսքիսի, որ այսպէս բաղադրի։ Առ 20 կամ 25 կշիռ ցորեան՝ մուսքիս, պատրաստեա հապս բաւականաչափ շիլօբքիս, և տուր ախտակրին զայսոսիկ հապս երեք կամ չորս անգամ յաւուրն։ 'Ի վերջ քան զամենայն շահաւետագոյն է գործածութիւն երկաթոյ խառն ընդ խաշնդեղի, զորոյ զպատրաստելոյ կերպն լիովին ասացաք 'ի Ճառէն վասն դալկան. տես անդ։

Ցայս վայր խօսեցաք զներքին դեղորէից. աստէն դիցուք եւ քանի ինչ օգտարար արտաքին դեղորայս. որոց գլխաւորքն են՝ խարանն, եւ գաղջ ջրով բաղանիս առնելն. մարթ է դնել խարան, կամ խարել զորպիսի և իցէ մասն մարմնոյ հրաշէկ երկաթով. բայց բարիոք եւ է խարել 'ի քամակի։ Որքան առ արիւնառութիւն գիտելի է, եթէ ըստ կարծեաց ամենայն հեղինակաց, ոչ է միշտ հարկաւոր այն, բայց եթէ 'ի գիպուածս ինչ արգելականութիւն իրիք հոսմանց արեան։ Առ 'ի բանեցուցանել զնարանաւ բացեալ վերն՝ պարտ է 'ի գործ արկանել զուենկուէնթօ պալէլիքօ, և պարտ է թողուլ զայն բացեալ ամիսս ինչ։ Նոյնպէս օգտաւէտ է տզրուկս դնել, զորս պարտ է 'ի վերայ երաստանի մածուցանել։ Լուծողական դեղորայքն ոչ են այնքան յարմարաւորք։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դիպուածս ախտին՝ ասացեալ մոլեգնութեան։

'Ի դիպուածս ախտիս երակ հատանելն 'ի բազկէն և յոտից է առանց կարծեաց կարևորագոյն. եթէ յառաջ գայ ախտս 'ի յարգելականութէ դաշտանի կամ այլ ինչ հոսմանց, յայնժամ պարտ է ստէպ ստէպ կրկնել մինչև ցփոքրատիլ այդպիսի արգելականութէ։ Փսխողականքն և լուծողականքն 'ի դիպուածս յայս ոչ են այնքան ներգործիչք 'ի մաքրել զմարմնէն։ Լուծողական գրեթիքն են առաւել պատշաճողական և ներգործիչք, մանաւանդ եթէ լինիցին պատրաստեալք աղօէիւ. բայց զկնի լուծողականութեանն՝ կարևոր է գործածութիւնն բարեխառն և զովացուցիչ իրաց, որպիսի են ագուա ճէլաթա օրծաթա, շնճուկն կաթին, կաթն, ագուա մինէռալէ, երկաթն, և։ Նոյնպէս յոյժ օգտակար է 'ի դիպուածս յայս քանֆոռա, զոր պարտ է պատրաստել ըստ վերոյիշեալ եղանակին։ Նոյնպէս օգտակար է օբբիս և բաբավէռս և։ 'Ի դիպուածս յայս բաղանիս առնելն ցուրտ ջրով է յոյժ օգտաւէտ, մանաւանդ թափելն զցրտագոյն ջուրս 'ի վերայ գլխոյ ախտակրին։ Օգտակար է և յանկարծօրէն և փութանակի ընկենուլն զախտակիրն 'ի մէջ գետոց, կամ ծովու, և թողուլ մնալ անդ ըստ կարողութէ նորին։



ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս ախտի, որ ասի՝ ֆլեմոն, կամ ֆլեգմոնա. այսինքն ֆլեխոպոն, կամ ֆլեգոպոն։

Ամենայն անձինք՝ որք ըմբռնեալքն են 'ի ջղային ախտից, հասարակօրէն անխտիր են ենթակայ այսոր վնասատուէ 'ի սոսամոքսն, և 'ի փորոտիսն. և ախտս

այս յառաջ գայ յանգօրուէ այսոցիկ գործարանաց, որ և անուանի զանազան անուամբ ՝ տարբերութիւն քնակարանաց այսորիկ ախտի, ևս ըստ այլևայլութիւն պատահական գիպուածոց, որք զուգընթաց լինին ընդ այսմ ախտի։ Յորժամ փքոտուիս այս կամ քամիքն 'ի վերայ յարձակին ուրուք շառաչմամբ, և առանց ցաւոց դէպ 'ի պատատանս խողովակի փորոտեաց, յայնժամ ախտս այս կոչի՝ պօռպօթիւ, այսինքն շնչիւն։ Իսկ եթէ յայսմ գիպուածի փուքք յարձակին 'ի վերուստ, և 'ի ստորուստ մեծաւ ուժգնութիւն, յայնժամ ասի՝ քօլիկա սէրքա։ զորմէ խօսեցաք յայլուր։ Բայց 'ի գիպուածս, յորում փուքս 'ի մէջ ստորին որովայնի որընթաց և առանց շառաչման երթևեկս առնէ 'ի միոյ կողմանէ 'ի միւս կողմն, և անդէն իսկ և իսկ արգելեալ փակի 'ի մի կողմն աննդարար խողովակի, պատճառելով զսուր ինն և զդժնեայ ցաւս, յայնժամ ասի՝ քօլիքա վէնթօզա, զորմէ ճառեցաք 'ի գլ։ Ճ։ յօդ։ ա։ Իսկ յորժամ փուքս այս պատճառէ փոյթ ընդ փոյթ զընդլայնումն ինչ 'ի ստամոքսի, և 'ի փորոտիսն՝ մինչև երևելապէս 'ի վեր ամբառնայ ստորին որովայնն, մանաւանդ դէպ 'ի յախոնդանս, եթէ զայգ էցէ ընդ այսր այսուցի ցաւ ինչ, և թէ չէցէ, հասարակօրէն կոչի՝ մէթէօրիզմ։

Հուսկ յետոյ եթէ այսոքիկ փուքք առ սակաւ սակաւ կուտակեալ շեղջին 'ի նեբքս ստամոքաց և աղեացն, մինչև ցժամանել 'ի մեծաքանակ գումարումն, և յետ այնորիկ 'ի վեր երևի այսուց ինչ ընդարբոյս և հաստատուն 'ի ստորին որովայնի, մինչ 'ի հպիլն հնչել իբրև զթմբուկ։ յայնժամ ախտս այս մանաւոր անուամբ յորջորջի՝ թիմբանիթիտէ, կամ իտրօբիզիա վէնթօզա։ Գիտելի է, զի անձինք՝ որք ունին զախտս ջլաց և ցնցիւն մկանանց, են ենթակայ այդ ամենայն վերոյիշեալ պատահարաց։ զորոց իւրաքանչիւրան երբեմն 'ի մի և 'ի նոյն, և երբեմն յայլ և յայլ պահու կրեն։

Յաղագս պապճառաց այսորիկ ախտի։

'Ի գիպուածս ախտիս՝ անտարակոյս ՀԱՍԱԿԱՐ են ամենայն կերակուրք հումք և փքաւորք, որպիսի են կաղամբն, բակլայ, և։ Անձինք՝ որք վիճակեալք

են զօրաւոր և առողջագոյն կազմուածոց, ուր ուրեմն են ենթակայ այսր ախտի, մանաւանդ եթէ պահիցէ ոք միշտ զչափաւոր կանոնն 'ի կերակուրս և յըմպելիս, և զբարեխառնութիւնս օդոց. յորմէ քաջայայտ ճանաչի, եթէ պատճառն այսր փքախտութեան ծագի դլխաւորապէս 'ի կերակրոցն, և յանբարեխառնութենէ օդոցն, նա յաւէտ 'ի չափազանց ելդամոլութենէ:

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի վար արկանել ընդդէմ փոխոտութեան:

Պատշաճական և օգտաւէտ դեղոցայք յայսմ դիպուածի են այնք ամենայն՝ որք 'ի բաց հերքեն զքամիս, և զօրացուցանեն զանդամարար գործարանս խոզովակաց, որպիսի են պղպեղն և յաւէտ սպիտակն, կոճապղպեղն, հատապտուղն գիհւոյ, ծէտոռիա ա նուանեալ արմատն, քալամօ առոմատիքօ, սերմն անիսոնի և սամթի, գինձն, քառվի, ասսա ֆէթիտա, ափիոնն. և այս ոգիաւոր և ջերմահամ հեղանիւթքն, որպիսի են թինթուռա տի ֆիլիճճինէ, սբիռիթօ վօլատիլէ առոմատիքօ, էթէռէ վիթռիօլիքօ և ն: Վկայէ մուցցէլ հեղինակն, եթէ չիք դեղ ինչ առաւել զօրաւոր առ 'ի բաց վանել զփուքս, քան զդեղն անուանեալ էթէռէ վիթռիօլիքօ, և այս լաւատանօ լեգուիտօ, զորս պարտ է 'ի գործ արկանել խառն ընդ ջրոյն անանխոյ, ընդ թինթուռա տի քասթօռիօի, կամ սափիռիթօ տի նիթռօ տօլչիֆիքատօի: Երբեմն և այս պատշաճ է 'ի գործ արկանել օգտաւէտապէս զհապս յօրինեալս յափիոնէ, և յասսա ֆէթիտաէ, նոյնպէս շահաւէտ է ջուրն թթու ածխային, որ կոչի աչիտօ քառպոնիքօ:

Դիտելի է, եթէ յայսմ դիպուածի նոյնպէս օգտաւէտ է գործածութիւնն մեղմիչ և խաղաղիչ դեղոցէից. քանզի 'ի կիր արկանելով զայսոսիկ, թէպէտ ոչ ցնդին փուքքն, բայց մեղմեալ զատանին 'ի սատմոքսն կամ 'ի փորոտիսն. և յետ այնորիկ 'ի վար արկանելով զջերմ և զփքաչոյծ դեղոցայս՝ դիւրաւ արտաքս մերժին. քանզի հատարակօրէն ամենայն փքահան դեղոցայք ոչ զօրեն 'ի բաց հերքել զփուքս, եթէ չիցեն զկայ առեալ 'ի մէջ ատամոքսի: Ուրքան առ վերոյիշեալ դեղն անուանեալ էթէռէ, նոյնպէս

վկայէ նոյն հեղինակն եթէ յոյժ պատշաճական դէզ է 'ի դիպուածս ախտիս, չափն 'ի մի դրդալէ սրճոյ մինչև ցերկու հատարակ ջրոյ։ Եթէ ընդ փքոտութիւն զոյգ դտանիցի միանգամայն յօդուածացաւուն ինչ, յայդպիսի դիպուածի նոյնպէս դերահաչակ է էթէռէն. զոր պարտ է 'ի գործ արկանել ընդ օրոյ, կամ ընդ ջրոյն անանխոյ, ևն։

Յորժամ հարկ 'ի վերայ լինի ըստ պահանջելոյ պարագայից 'ի գործ արկանել զդեղորայս ջերմագինս 'ի նեղքուստ, յայնժամ ըստ հաւանական կարծեաց ամենայն հեղինակաց, օգտաւէտագոյն է գործածութիւն ևս արտաքին սպեղանեաց. յաւելու հեղինակն եթէ յայդպիսի դիպուածս պարտ է դնել 'ի վերայ որովայնի զլայնաբաց ինն սպեղանի, մինչև ծածկել զմեծագոյն մասն որովայնի. պատշաճագոյն է սպեղանին անուանել էմբիասթռոս անթիսթէռիքս, մածեալ 'ի վերայ կիւաէրի յորջորջեալ նուրբ մաշկի, որում և պարտ է մնալ ՝ի տանելոյ կարողութեամբ ախտակրին. այլ եթէ ախտակիրն կրեսցէ զվիշտ ինչ մեծագոյն, մարթ է բառնալ զայն, և փոխանակ նորա 'ի կիր արկանել զհետագայդ։ Այս ունկի մի՝ պալատամ անուտինս տի պաթէս, կէս ունկի՝ օլիս տի մաչիս, և երկու տրամ օլիս տի մէնթա, զորս բարիոք խառնեալ ընդ իրեարս, առ մի հատարակ դրդալ սեղանոյ, և շփեա զախտակիրն բարեպէս դէպ 'ի ծաղն ստամոքսի յերթալն նորա 'ի մահիճս։

Յաղագս դեղորէից՝ զորս պարտ է 'ի գործ արկանել քիրուրգոյ, առ 'ի ջերմացուցանել զոտամոքսն և զքիրուրգին։

Յայսմ դիպուածի առաւել օգտաւէտ և հզօրիչ ստամոքսի և փորոտեացն՝ է գործածութիւն քինա քինայի, և դառնագին իրաց. ևս գործածութիւն ամենայն հանքային նիւթոց, յորոց բաղադրութեան դտանի մասն ինչ երկաթոյ, ևս շրջելն 'ի զբօսանս. բայց նկատել արժան է, զի եթէ դտանիցի յայսմ դիպուածի ևս փուքն, յայնժամ պարտ է յաւելուլ 'ի վերայ քինա քինայի և այլ դառնագին իրաց՝ սակաւ ինչ նոչէ մօսքաթա, կամ կոճապղպեղ. մարթ է նաև ըստ պահանջելոյ հարկին յաւելուլ 'ի վերայ համեմային և ջերմահամ փոշիս խառն ընդ խորտածոյ երկաթոյ։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դի-
պուածս յորոմ ընդ փախուստն ցոյգ գոյանի նա-
պնդուն որոշեալն։

'Ի դիպուածս յայս առաւել շահաւետագոյն դե-
ղորայքն են հեռագայքդ։ Ա՛ռ երկու տրամ ասաս
ֆէթիտա, աղօէ սուքքօթռինօ, սալ տի մառթէ, և
զմիոշին կոճապղպեղի յիւրաքանչիւրոցն մէն մի տրամ.
և յաւէլ այնչափ էլիքսիռ բռօբռիէթամթէ՝ որչափ
պէտք իցեն առ կաղմելոյ զանգուած ըստ կանոնաց
արհեստին. զզանգուածս զայս յօրինեալ հապ՝ որ
կշռիցէ չորս ցորեան, տուր չորս կամ հինգ հատ
յամենայնում երեկոյի յերթալն 'ի մահիճս։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի վեր արկանել 'ի դի-
պուածս, յորոմ ընդ փախուստն գոյանի նա-
ւոցուն որոշեալն։

Յայսմ դիպուածի նկատեալ արժան է, եթէ որ-
վայնալուծութիւնն իցէ սաստիկ և առաւել, յայն-
ժամ պարտ է տալ սխտակրին 'ի միջահատութեան
երկու աւուրց 12 կամ 15 ցորեան՝ ռապառապառօ՝
ընդ 36 կամ 38 ցորեան՝ քոնֆէքցիոնէ տէլ Ճիսբբօ-
նէի, կամ տի քաչէուի, և է յոյժ օգտակար և շա-
հաւէտ։ Նոյնպէս յոյժ շահաւէտ է գործածութիւն
ռատիչէ տի քօլմպօի՝ խառն ընդ ցուքքէռօ առօմա-
թիձձաթօ տի մաչէռի, զորոյ պատրաստելոյ զկերպն
լիովին խօսեցաք 'ի Ճառէն վասն ընդհանուր ախ-
տից ջրաց. տես անդ։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դի-
պուածս փախուստն, որ սովորաբար 'ի վեր երևի 'ի
կանայս 'ի դադարումն պէռիոդական արեան։

Յայսմ դիպուածի ըստ թելադրելոյ բնութեան
քաջոյայտ Ճանաչի եթէ պարտ է սակաւ ինչ երակ
հատանել, որ առաւել քան զամենայն դեղորայս լի-
նի օգտաւէտագոյն և առողջարար։

Յաղագս ինամապարուելոց, զորս պարտ է 'ի գործ արկանել գիսածնպաց, եթէ 'ի դարմանել ախտին, և եթէ զկնի՝ առ 'ի խափանել զվերադարձն։

Յայսմ գիսուածի գործածութեան չայի, արձոյ, և այլ ամենայն վիքալեաց կերակրեղենաց՝ են վնասակարք. ոչքան առ ըմպելիս, գիտելի է եթէ ոչ է բնաւ օրէն ախտակրիս ըմպել զջուր և եթ. այլ սովորաբար խառն ընդ սակաւաքանակ օղւոյ, կամ գարեղւոյ. ևս յոյժ հարկաւոր և օգտաւետագոյն է յայսմ գիսուածի շրջիլն 'ի զբօսանս ըստ տանելոյ կարողութեանն ախտակրին, կամ պարապել յաշխատելի գործողութիւնս, որով բովանդակ մարմինն լինի 'ի շարժման։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս զանազան ասպիճանաց ուշագնացութեան, կամ նուաղման և կամ ելանելոյ սրտի, որ ասի՝ զվէնիմէնթօ։

Ախտս այս՝ զվէնիմէնթօ, ունի զանազան աստիճանս, որոց առաւել թեթևագոյնն կոչի՝ տէլիքուիս, կամ զվէնիմէնթօ. յորում ախտակիրն ոչ կորուսանէ զզգաստուն կամ զզգացողութեան, բայց ոչ կարէ խօսել. և ախտս այս յաճախակի պատահէ անձանց, որք կրեն զախտս ջղաց. յայսմ աստիճանի ոչ վիսուխի այնքան զարկն բազկերակի։ Իսկ 'ի գիսուածն, յորում ախտակիրն գլխովին կորուսանէ ներքսապէս զզգացողութեանն և զուշն, և զարկ բազկերակին լինի երևելապէս տկարագին, յայնժամ կոչի՝ սինքօբէ. որ է երկրորդ աստիճան ուշագնացութեան։ Այլ եթէ 'ի գիսուածս նուաղման սրտի՝ զարկ բազկին լինի բոլորովին դադարեալ, և շնչառութեանն սպառեալ, մարմինն ցրտացեալ, գէմքն թալկացեալ և դեղնացեալ, յայնժամ կոչի՝ յեռին աստիճան ուշագնացու-

թե, և յուն. ասֆիքսիա, որովհետև է ճշմարիտ կեր-
պարանք և պատկեր մեռելոյ։

Պատճառք ուշագնացութեան են յոգնութիւն. բայց
մեք յառաջիկայս խօսեացուք միայն զգլխաւորացն,
որոց առաջինն է յորդութեան արեան. բ, նուազուին
արեան. գ, երակ հատանելն կամ արիւնառութեին,
և վիսողականքն, և լուծողականքն. դ, անմաքրու-
թիւնն ստամոքսի, ե, հոտքն, մանաւանդ յանձինս
որք կրեն զախտս ջլաց. զ, ինչ ինչ ախտք և հիւան-
դութիւնք. է, ծնանիլն կանանց։

Յաղագս ուշագնացութեան, պատճառելոյ յառապուրեն
արեան։

Անձինք զօրեղք, և յաղթանդամք, և քաջառողջք,
որք ունին զյորդառատ արիւնս, յոյժ դիւրաւ և
յոլով անգամ անկանին յանկարծակի յախտն ուշա-
գնացութեան՝ քանիցս անգամ առնեն շարժողականութեի
ինչ տարժանելի, քանիցս անգամ ըմպեն առատօրէն
զհեղուկնիւթս ստատիկս, և ջերմահամն, քանիցս ան-
գամ կրեն զջերմուն ինչ ստատիկ, կամ ձեռնամուխ
լինին յընթերցմունս դժուարինս։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի կիր արկանել 'ի դե-
պուածս ուշագնացութեան պատճառելոյ յառապու-
րենէ արեան։

Յայսպիսի դիպուածս պարտ է տալ ախտակրին
հոտոտալ զբարկ քացախ. և խառնեալ 'ի նա նոյնչափ
ջերմագին ջուր՝ պարտ է շփել զձեռս, և զոտս, և
զճակատն. և եթէ կարիցէ կլանել, պարտ է և տալ
նմա ըմպել երկուս կամ երիս գրգալ քացախ ջրա-
խառն քառապատիկ անգամ ջրով. յայսպիսի դի-
պուածս առաւել ինքնաբերս են ստատիկ և ոգիաւոր
ըմպելիք։ Եթէ ուշագնացութեան յարատևէ, և վա-
խի 'ի սինքոպէ, այսինքն կորուստնէ զգայութեան և
զուշ (որպէս ասացաք վերագոյնդ՝) յայնժամ յոյժ
հարկաւոր է երակ հատանելն, և զկնի երակ հատա-
նելոյ 'ի գործ արկանել զգրեխս, և ապա պարտ է
թողուլ զախտակիրն 'ի հանգստեան, և յամենայնում
կէս ժամու միանգամ պարտ է տալ նմա ըմպել մի
բաժակ ինֆուզիոնէ տի ֆիօռէ տի թիլիս, կամ քա-

մօմիլլա ևն. կամ ուէքօցիօնէ տի օռծօ, խառնեալ շաքարիւ, կամ քացախով։ Պարտ է կերակրոցն ախտակրիս լինել յոյժ թեթև, և ըմպելին կամ հասարակ ջուր, և կամ թեթև պիռռա. պարտ է առնել ստէպ ստէպ շարժումն առանց աշխատ լինելոյ, և պարտ է սակաւ 'ի քուն լինել։

Յաղագս ուշագնացութեանն պատճառելոյ 'ի նուազութեանն արեան, կամ 'ի փոքրութեանն։

Ուշագնացութիւն յոլով անգամ է պատահական 'ի նուազուէ արեան. յայն սակս և բազում անգամ փորձիւ տեսանեմք, եթէ պատահի ուշագնացութիւն զկնի հոսման թանչից առատապէս, զկնի հսկման, և ընդհերկար ծոմապահութեան, կամ զկնի կորուսանելոյ զախորժակն ևն. յայսպիսի դիպուածի պարտ է միշտ 'ի գործ արկանել կառավարուն ինչ ընդ հակառակն վերոյիշեալ ախտին։ Դեղորայք այսր տեսակի ուշագնացուէ, են նախապէս՝ դնել զախտակիրն 'ի մէջ անկողնոյ, և ծածկել զնա, և ապա պարտ է շփել զսրունս, զկոզս, զբազուկս, և զամենայն մարմին նորա ջերմագին չուխայիւ. և սարկ է տալ նմա հոտոտալ ագուա տէլլա ռէձինա տի ունկէռիա, կամ աղքալի վօլաթիլէ Ֆլուիտօ, կամ այլ ինչ զօրաւոր հոտաւէտ խոտս, որպիսի են՝ սալվիա, մէնթա, ևն։ Դարձեալ, պարտ է դնել 'ի բերան ախտակրին քանի ինչ կաթիլ օղի, կմ ռում. և եթէ կարիցէ կլանել՝ պարտ է տալ նմա ջերմ գինի խառնեալ շաքարիւ, և կինամոնաւ. օգտակար է և դնել 'ի վերայ կրծոց ախտակրիս չուխայ ինչ թացեալ 'ի մէջ ջերմ գինւոյ, կմ օղւոյ. նոյնպէս ջերմ կղմինար 'ի ներբանն պարտ է դնել. և կերակրոյ նորին հարկ է լինել արդանակ, և թեթև և սնուցողական կերակուրք։

Յաղագս ուշագնացութեանն պատճառելոյ յերակ հատանելոյ, 'ի քիթողականէ և 'ի լուծողականէ։

'Ի դիպուածան, յորում ուշագնացութիւն պատճառի յերակ հատանելոյ, հասարակօրէն ոչ է բնաւ օրոգայթաւոր, և դադարի փութով 'ի դնելն զախտակիրն 'ի մէջ անկողնոյ, և 'ի տալն նմա հոտոտ

տալ զքացախ, 'ի սրսկելն 'ի վերայ երեսաց նորա սակաւ ինչ ջուր ցուրտ ևն: Իսկ 'ի գիպուածս, յորում ուշագնացութենն պատճառի 'ի սաստիկ փլուխողականէ կամ 'ի լուծողականէ, յայնժամ պարտ է մեծաւ զգուշութիւն խնամ տանել ախտակրին իբր թիւնաւորելոյ. վասն որոյ պարտ է 'ի գործ արկանել կաթն, ձէթն ձիթենւոյ, ջուրն գարւոյ, և ջերմ ջուր առաւօրէն ևն. միանգամայն պարտ է 'ի գործ արկանել գրեխս կակղացուցիչս, և զկնի դադարելոյ ուշագնացութեան՝ պարտ է տալ նմա զդեղորայս սեղմիչս, և խաղաղեցուցիչս:

Յաղագս ուշագնացութեան պատճառելոյ յանմտրութենէ պատմութի:

Ուշագնացութենն հաստատակօրէն յառաջ գայ յանմտրաղականութէ, որ երբեմն պատճառի յանչափութենէ կերակրոց, և երբեմն ևս յտպականութենէ կերակրոցն: 'Ի գիպուածն, յորում ուշագնացութենն յառաջ գայ յանչափութենէ կերակրոցն, պարտ է փութով 'ի գործ արկանել զվիսխողական ինչ, և առաւօրէն տալ նմա ըմպել թեթեւ ինչ ենֆուզիօնէ ոչ քամոմիլլա կամ քառաս սանթօ ևն. մարթ է առանց երկիւղի տալ նմա 12 կամ 15 կշիռ ցորեան իբէքսպրուանա փոշի արարեալ. այլ եթէ բնութենն շարժի առանց փսխողական դեղոյ, յայնժամ պարտ է նպաստել նմա ջերմ ջրով: Իսկ 'ի գիպուածս, յորում ուշագնացութենն պատճառի յտպականութենէ կերակրոցն, յայնժամ պարտ է դարման տանել ախտակրին ըստ կերոյն զորմէ խօսեցաք արդէն վերագոյնդ:

Յաղագս ուշագնացութեան պատճառելոյ 'ի հոգոյ:

Լն ոմանք իբր հոտաւէտք, բայց ծանրահոտք, որք յոմանս անձինս պատճառեն զուշագնացութի, մանաւանդ յայնոսիկ, որք կրեն զախան ջղաց. որպիսի են՝ մուսքիս, ձիաչինեթի ևն: Յայսպիսի գիպուածս պարտ է զսխտակիրն դնել 'ի բացօթեայ ինչ տեղւոջ. և պարտ է բառնալ 'ի միջոյ զպատճառս՝ յորոց յառաջ գայ ուշագնացութիւնն, և 'ի գործարկանել զհնարս զորս եդաք 'ի գիպուածն ոչխարի ջղոց ևն:

Յաղագս ուշագնացութեան, որ պատճառի 'ի ծննդեան։

Կանայք փափկակեաց եւ քնքուշք են առաւել են, թակայ ուշագնացուն զկնի ծնանելոյ, որում մարթ է դարման տանիլ դիւրաւ 'ի ձեռն քօռտիալաց, եւ մուտ տալով առողջարար եւ զովացուցիչ օդոյ 'ի սենեակ անդր։ Կառավարութեան եւ դեղն՝ այս է. 'ի դիպուածս, յորում ուշագնացութեան յառաջ գայ 'ի հոսմանէ արեան առատապէս եւ անչափօրէն, յայնժամ պարտ է մեծապէս փութալ 'ի դադարեցուցանել զայն։ Պարտ է եւս գիտել, եթէ յայսպիսի դիպուածի ուշագնացութեան յառաջ գայ հասարակօրէն 'ի տկարութէ եւ յաշխատանաց. վասն որոյ պարտ է ըստ մարթելոյ զօրացուցանել զախտակիրն, եւ յոյժ պատշաճ է 'ի գործ արկանելն զհնարս, զորս եդաք 'ի գլ. ՁԲ. երես 124։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս գլխացաւութեան, կամ ցաւոյ գլխոյ ընդ ասէն՝ էֆալալգիա, էֆալէա, էմիֆրանա, և փիօպո իոնէուիփօ։

Անթիւ են գլխացաւութիւնքն որոց ենթակայ է մարդն, ոչք եւ յառաջ գան 'ի բազմակերպ պատճառաց. ուստի եւ մարթին վերացուցանել զզանազան մասունս մարմնոյ. բայց մեք խօսեսցուք յառաջիկայդ զտառաւել ընդհանուր ախտից, ոչք սովոր են վերացուցանել զգլուխն, եւ ունին զայդ ընդ իւրեանս վտանգ ինչ երևելի։ Յորժամ ցաւն գլխոյ լինի թեթեւ, եւ զայրացուցանէ միայն զմի մասնաւոր կողմն գլխոյ, յայնժամ կոչի՝ էֆալալգիա։ Իսկ յորժամ լինի ցաւն սաստիկ, եւ տարածանի յամենայն մասն գլխոյ, յայնժամ կոչի՝ էֆալէա։ Այլ եթէ լինիցի սաստիկ, եւ շրջափակեսցէ միայն զմի կողմն

գլխոյ, յայնժամ ցաւն ասի՝ էմիքռանիա, այսինքն աբգար։ Այլ այն մասնաւոր ցաւն որ շրջապատէ միայն զձակատն, կոչի՝ քիսաս խալթէռիքս։

Դարձեալ, ցաւքն գլխոյ զանազանին բազում եղանակաւ. երբեմն ցաւն լինի ներքին, և երբեմն արտաքին, երբեմն իրական, և երբեմն միայն երևութական։ Դարձեալ, յանձինս որք վիճակեալ են մաղձային հիմն խառնուածոց, ցաւն գլխոյ լինի սաստկագոյն և սրագոյն, և վշտացեալ մասն գլխոյ լինի ջերմագին։ Իսկ 'ի նոսա, որոց խառնուածքն են ցուրտ և մաղասային, պատճառէ միայն զծանրութիւն ինչ գլխոյ, և վշտացեալ կողմն գլխոյ լինի ցուրտ։

Յաղագս պատճառաց զանազան հերպի գլխոյ։

Զայն ամենայն՝ որ արգելական լինի ազատօրէն շրջագայութիւն արեան 'ի մէջ երակաց գլխոյ, կարեն պատճառել զցաւս տյսորիկ մասին։ Գլխացաւութիւն յանձինս, որք են յոյժ պարարտագոյնք, և բնութիւն խոնաւագոյնք, յառաջ գայ սովորաբար յարգելակնութենէ իրիք սովորական հոսման, որպիսի են հոսումն արեան 'ի ռնգացն, 'ի թանչից, և քիրան ոտից, և։ մարթին եւ յառաջ գալ յայնմ ամենայնէ, որ պատճառէ առատօրէն զարիւն յերակս գլխոյ, որպէս ընկողմանիքն գլխիվայր են։ Դոյնպէս հնար է պատճառիլ յայնմ ամենայնէ, որ ընդդիմակալ լինին ընթացից արեան յերակսն և յանօթս գլխոյ. որպիսի են խստագոյն պրկելն զպարանոցն իւրեք թաշկինակաւ կամ երիզաւ։

Յորժամ ցաւն գլխոյ յառաջ գայ յարգելականութէ իրիք սովորական հոսման, ախտակիրն զգայ զծանրութիւն ինչ յառաջակողմն գլխոյ՝ այնպէս սաստիկ, մինչև համարիլ նմա եթէ քարձեալ ինչ զանտանելի բեռն ինչ 'ի վերայ գլխոյ։ Իսկ յորժամ յառաջ գայ գլխացաւութիւն յայլ ինչ ախտից, որպիսի են՝ ախտն գաղիական, և աքսուպութիւական, և ախտք, որք ասին՝ ռիսիբօյա, վաբօյս, ռոզօյիս, ռօնեայ են, յայնժամ այս տեսակ ախտի կոչի՝ էմիքռանիա, որ եւ հասարակօրէն պատճառի յապականութէ ստամոքսի, և յանմարսողականութէ. նաև միանգամայն մարթի է պատճառիլ գլխացաւութեան 'ի սաստիկ աշխատանաց, յանշարժական կեանս վարելոյ, 'ի գործածութենէ

ոգիաւոր հեղանիւթոց, 'ի դժուարամարսելի կերա-
կրեղինաց, 'ի կրից, որպիսի են՝ տրամութիւն, սաստ-
ակիկ բարկութիւն, երկիւղն, և ն: 'Ի վախճանի՝ յայնմ
ամենայնէ, որք պատճառեն զզայրացուցիչ 'ի ջիղս
և զոյսուց ինչ յերակս գլխոյ, յարգելականութէ
դաշտանի, թանչից, խարանի, կամ յայլ ինչ վերաց
և այլն:

Գոյ և սեռակ ինչ սաստկագոյն գլխացաւութէ,
որ է իբր անտանելի, և պատճառէ յախտակիրն
զտկարութիւն ինչ սաստկագին, բառնայ գլխովին
զախորժակն, և զքունն, մլծագնէ զտեսութիւնն,
պատճառէ զմարմանչուն ինչ 'ի մէջ աչաց, զպտոյտ
գլխոյ, զցնցումն մկանանց, զնոդկանս և զբաբախիւն
սրտի. երբեմն և ժայթքեցուցանէ, և տութէ ըզ-
ամենդութէ որովայնի: Գլխացաւութէնն հատարակո-
ւրէն է յոյժ յաճախ յոմանս արուեստաւորս, որպէս
'ի ձուլիչս, յոսկերիչս, և յայլ ամենայն արուեստա-
կանս, որք 'ի հրահալելիս և 'ի մետաղականս վաս-
տակին, և ն: Նոյնպէս հատարակօրէն զուգընթաց
լինի ցաւս այս գլխոյ 'ի ջերմախտս հանապազօրեայս,
'ի տենդս միջահատականս, մանաւանդ 'ի քառօրեայս.
'ի վախճանի՝ պատճառի և 'ի կալուածոց որովայ-
նի: Եթէ գլխացաւութէնն յարատևէ ընդ երկար
ժամանակս, և լինի յոյժ սաստիկ, բազում անգամ
աւարտի 'ի կուրութէ կամ 'ի խլութէ, և կամ յան-
դամալուծութիւն, 'ի լուանատութիւն, 'ի պատոյտ
գլխոյ, և ն:

Յաղագս նշանաց գլխացաւութէ:

Գլխացաւութէնն չունի այլ ինչ երևելի, և հաս-
տատուն նշանս, բայց եթէ զցաւն զոր զգայ ախ-
տակիրն: 'Ի դիպուածս չէֆալալգիայի, և չէֆալէակ
ախտակիրն զգայ միայն զծանրութէ ինչ և զսղդու-
թէ գլխոյ. 'ի դիպուածս քիստս իսթէռիքօի՝ ցաւն
լինի և սաստկագոյն, և ախտակիրն զգայ զնոդկանս
զփսխումն, և այլն: Եւ յայսպիսի դիպուածս պարտ
է գիտել, եթէ արմատ գլխացաւութէ է 'ի ստամ-
ոքսն: Իսկ 'ի դիպուածս էմիքռանայի՝ ցաւն զոր
զգայ ախտակիրն՝ լինի յոյժ սրագոյն, և զարկողա-
կան, և է սաէպ փոփոխական. երբեմն յաջակողմն,
և երբեմն 'ի ձախակողմն. երբեմն յառաջ կոյս, և

երբեմն 'ի յեռակոյս, և երբեմն և 'ի ծագն գագաթման. երբեմն լինի այնքան սաստկագոյն, մինչև ախտակիրն փախչի 'ի տեղւոջէ 'ի տեղի, և ինդրէ զհանգիստ, կորուսանէ զլխովին զախորժակն, ստէպ ստէպ կամի ուրծալ, և երբեմն և ուրծայ. նաև պատճառի արդելումն դաշտանի, և թանչից, զարկ բազկին լինի մանր. և 'ի վախճանի՝ բովանդակ մարմինն լինի թալկացեալ և վշատցեալ, և երբեմն և պատճառէ ուշադնացութիւն, և ցնցումն միանանց: Այլ 'ի դիպուածն՝ յորում գլխացաւութիւն պատճառի 'ի հանրային գոլորշեաց, և 'ի յածխային ծխոց, յայնժամ 'ի վեր երևի ցաւ ինչ բևեռեալ 'ի պարանոցն, 'ի յետին կողմն գլխոյ, և 'ի ճակատն, հանդերձ ծանրութիւբ ինն և թմբրութիւբ:

Յաղագս ևառավարութիւբ ցաւոց գլխոյ:

'Ի դիպուածս ամենակերպ գլխացաւութեց, պարտ է հասարակօրէն 'ի գործ արկանել զզովացուցիչս. և կերակրոցն պարտ է լինել բարեխառն և կակղացուցիչ: Ըմպելեացն հարկ է լինել մաքրողական. որպիսի են ջուրն գարւոյ, խաշուն թիլիէի, սալսաբարելիսի, մեսուտակի ևն: Ջոտս և զձեռս ախտակրին պարտ է ջերմագինս պահպանել, և ստէպ ստէպ թանալ միանգամայն ջերմ ջրով. և ջանալ պարտ է որքան հնարաւոր եցէ՝ 'ի կանգուն ունել զգլուխն, և ոչ բնաւ դնել զայն 'ի ցածագոյն կամ զառ 'ի վայր:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս դեղրէից գլխացաւութիւբ, պատճառելոյ ցաւոցպոութիւբ արեան, 'ի ջերմագին և 'ի մաղձային խառնուածոյ:

Յայտնի է դիպուածս պարտ է հարկաւորապէս երակ հատանել ախտակրին, և ըստ պահանջելոյ հարկին կրկնել զնոյն. օգտակարագոյն է միանգամայն դնել տզրուկս 'ի յետակոյս ականջացն. այլև 'ի գործ արկանել վէշիքաթօռիս, զոր և պարտ է դնել

'ի վերայ ծոծրակի, կամ յետակողման պարանոցի, կամ 'ի յետկոյս ականջացն, և կամ 'ի վերայ այն մասին գլխոյ, ուրանօր ցաւն է առաւել սաստկագոյն: Իսկ յանձինս մեղս, և 'ի պարարտագոյնս պարտ է գլխովին ծածկել զգլուխս նոցին վէշիքաթօռիօիւ. այլև պարտ է միշտ լոյծ ունել զորովայնն 'ի ձեռն կակղացուցիչ, և թուլացուցիչ դեղորէից:

ՅՕԳՈՒԱԾ Բ.

Յաղագս դեղորէից գլխացաւուն պատճառելոյ 'ի ջրոյ կամ յաւիշէ ապականելոյ, յորժամ ոչ դադարի երակ հատանելով և այլն:

Ի դիպուածս՝ յորում գլխացաւուն յառաջ գայ յառատութենէ ապականեալ ինչ ջրոյ ժողովելոյ 'ի ներքին կամ յարտաքին մասունս գլխոյ, յայնժամ ցաւն լինի խուլ, և ծանրութի գլխոյ յարատև, և ոչ դադարի երակ հատանելով, և ոչ 'ի գործ արկանելով զիրս բարեխառնս. պարտ է յայսպիսի դիպուածս 'ի կիր առնուլ զլուծողականս սաստկագոյնս, որպիսի են՝ բելլոլէ ալօէթիքէ, կամ բէզինատ ալ ճիալաբրա ևն: Երբեմն ևս յայսմ դիպուածի հարկաւոր է բոլորովին զգլուխն ծածկել վէշիքաթօռիօիւ:

ՅՕԳՈՒԱԾ Գ.

Յաղագս դեղորէից գլխացաւուն պատճառելոյ յարգելմանէ լրջյունաց ոնգաց:

Յայսպիսի դիպուածս պարտ է ախտակրին ատէպ ատէպ հոտոտալ սալ վօլաթիլէ, և 'ի գործ արկանել պնչագեղս, և այլ ամին նման գաւարկիչ դեղորայս, որպիսի են՝ փոշիքն էտէռա թէռէէսթռէի, լէնիս ոն լէնթիքաթի, սբիկս սալվաթիքաթի ևն. օգտաւետագոյն է ճանդամայն ձգել զշոգիս ջերմ ջրոյ 'ի

անգունս, որ անօսրէ զԹանձրամածուելս տողունից, և գատարկէ զլորձունս անգացն։

ՅՕԳՈՒԱԾ Դ.

Յաղագս դեղոցէն գլխոցաւութեանէ, որ ասի՝ էդիֆանիա։

Գլխացաւութիւնս այս անուանեալ աբգար՝ հաստակօրէն յառաջ գայ յանմաքրութէ ստամոքսի. յայսպիսի դիպուածս պարտ է 'ի գործ արկանել փսխողական, և լուծողականս կազմեալս ուսպառպառօքս, և զկնի բարիոք մաքրելոյ զստամոքսն և զփորոտիսն, պարտ է տալ ախտակրին զերս գառնագինս, նա յաւէտ աքուա ֆէռռուճինօզա առ 'ի գօրացուցանել զստամոքսն և զՔիղս։ Իսկ եթէ ցաւն ելցէ թեթեւագոյն, և չելցէ այնքան մեսասաբեր, յայնժամ բաւական է միայն դնել զոտս 'ի ջերմ ջուրս։ Այլ եթէ յառաջ գայ աբգարս այս յարգելականութէ դաշտանի, թանչից, խարանի և այլն, յայնժամ պարտ է երակ հատանել և 'ի գործ արկանել տզրուկս, և վեշիքաթորիս. բայց եթէ պատճառեալ ելցէ ցաւն 'ի դժուարամարսելի կերակրեղինաց, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զփսխողականս։

Այլ եթէ ոչ դադարի ցաւն 'ի ձեռն այսոցիկ դեղոցէից, յայնժամ պարտ է դնել 'ի վերայ վշտացեալ մասին գլխոյ լավանտա՝ խառն ընդ օրբիսի, և ընդ սբիռիթս քանֆորայի. և զկնի գագարելոյ ցաւոյս, պարտ է լուծողականս պատրաստել ըստ յետագայ եղանակին։ Առ երկու տրամ սէնա, մի տրամ՝ ռապառապառս, և երկու ունկի և կէս մանանա քռասսա։ Եռացն սակաւ ինչ զերկուան 'ի միասին 'ի մէջ 12 ունկի ջրոյ. և յետ այնորիկ արկ 'ի վերայ զմաննան, և թող լուծանել. և 'ի գործ արկցէ ախտակրին զայն։ Եւ զկնի երկուց կամ երից աւուրց վերսին կրկնեսցի ըստ պահանջելոյ հարկին։ Իսկ եթէ գլխացաւութիւնս այս ելցէ բէռիոսիքա. այսինքն պարբերական, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զքինաքինան ըստ եղանակին, զորմէ խօսեցաք 'ի դլ. ԺԳ, տես անդ։ Պատմէ պօէռհավէ

հեղինակն, եթէ բաղումք յայսպիսի ախտաժետաց բուժեցան յախտից իւրեանց խարանաւ։

ՅՕԳՈՒԱԾ Ե.

Յաղագս դեղոցն գլխացաւութեանն պատճառելոյ 'ի գաղղիական և աքօռպուլթական ախտից։

'Ի դիպուածս՝ յորում գլխացաւութիւնն յառաջ գայ յախտաւոր հիւթոց, որպիսի են հիւթքն գաղղիական և աքօռպուլթական ախտից, յայնժամ պարտ է 'ի վար արկանել զդեղորայս մաքրողականս, և քրտնաբերս ըստ կերպին զորոց ունիմք խօսել 'ի տեղիս իւրեանց 'ի Ճառէն զգաղղիական, և աքօռպուլթական ախտից։

ՅՕԳՈՒԱԾ Զ.

Յաղագս դեղոցն գլխացաւութեանն առնելոյ 'ի սուսկի աշխատանաց և 'ի ջերմութենէ։

Յայսպիսի դիպուածս պարտ է 'ի կիր արկանել զովացուցիչ դեղորայս, որպիսի են՝ բօցիօնէ սալինա խառն ընդ նիթռօի կամ լէմօնէա, և կամ էլիսիռէ աշիտօ տի հալլէռօ, և այլն։ Այլ և պարտ է խառնել զսբիռիթօ տի վինօ քանֆօռաթօն ընդ քացախի, կամ զքացախն ը վարդեջրոյ, և փոքր մի ջերմացուցեալ զայն շփել զգլուխն ախտակրին ստէպ ստէպ յաւուրն. կամ թացեալ այնու զդեղնչակն, պարտ է դնել 'ի վերայ գլխոյ նորին։

ՅՕԳՈՒԱԾ Է.

Յաղագս դեղորէից գլխացաւոցն պատճառելոյ 'ի հանապային ֆամ 'ի մեպաղային գոլորշեաց։

'Ի գիպուածս յայս նախ քան զամենայն պարտ է ջանալ ոչքան մարթ իցէ՝ 'ի բաց հերքել զհանգպային գոլորշիսն որ 'ի ներքս ուղղին, և պարտ է միանգամայն նպաստամատոյց լինել բնութեն 'ի ձեռն թեթևագոյն գրեխի յօրինելոյ սէնաիւ, և մաննաիւ։ Եւ զկնի երեք ժամուց պարտ է տալ նմա սակաւաչափ թիւրակէս։ Եւ յետ երկոտասան ժամուց 'ի պահ տուաւօտու պարտ է տալ երեք կշիռ ցորեան՝ թառթառս էմէթիքս. և օգնել ներգործութեն նորին տրարեալ թեթև ինչ ինֆուզիօնէ տի քամօմիլլս. բայց զի մի փսխողականն իշխեսցէ զայրացուցանել զփորոտիան, և զայլ ներքին մասունս մարմնոյ, նմին իրի տալ պարտ է յերեկոյեան պահու գրեխ ինչ կաղմեալ չորս ունկի գինեաւ, և նոյնչափ ձիթով. ոչք 'ի բաց վանեն զհանքային գոլորշիս ուղղոյ, և նուաճեն զցաւս գլխոյ, և միանգամայն խաղաղեն զփորոտիան։

Եւ իբրև վերոգրեալ կամ՝նոցին նման դեղորէիւք ոչ փարատեսցի ցաւն գլխոյ, ոչինչ արգելք կայ գործածութեն յետագայ լուծողական դեղորէիս։ Ա՛ռ երկու տրամ՝ սէնա, մի տրամ՝ ռաղառպառս, և մի և կէս ունկի՝ թամառինտի, և 'ի հասարակ ջրի է փեռ եռացմամբ իբր քառորդ մի ժամու։ Ապա զըտեռ, և մնասցէ եօթն ունկի. յոր յաւէլ երկու ունկի՝ մաննա, և երկու տրամ՝ սալ տի կլաուպէռս։ Եւ տպա տուր ախտակրին ժամէ 'ի ժամ մէն մի սակաւակ սրճոյ։

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Յաղագս դեղոյ դիրբերական գլխացաւոցն։

Պատշաճական և օգտաւէտ դեղն յայսմ գիպուածի է քինա քինան, զորոյ զպատրաստելոյ կամ զի կիր առնելոյ կերպէն լիովին խօսեցաք 'ի ճառէն վասն ընդհատ տենդի. տես անդ։ Եւս յոյժ հարկաւոր և շահաւէտագոյն է յայսմ գիպուածի՝ շրջելն 'ի զբօսանս ըստ տանելոյ կարողութեանն։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս ապտիացաւոցն, որ ասի՝ օփօնիալճիա, կամ փալսո փէի փէնիի։

Ապտիայն ոչ ճանաչէ զախտս զայս, և ունի մեծ հաղորդակցութիւն և նմանութիւն ընդ յօդուածացաւութեան։

Պատճառք դաւոց ապտանց։

Գլխաւոր պատճառք ատամնացաւութեան են որդելուն ապտաշնչութիւն մարմնոյ, չափազանց գործածութիւն քաղցրաւենեաց, նատիլն բաց գլխով հանդէպ հողմոց, մանաւանդ զկնի քրտնելոյ, մնալն ընդելիար թացեալ ոտիւք, խորտակումն կարծրակեղև պտղոց ատամամբ։ Բազում անգամ ևս պատճառի 'ի բորբոքմանէ արեան, 'ի աբօռպութիւն անուանեալ ախտէ, և յերկարատև գործածութենէ անդկի։

Յաղագս դեղորէից, զոր պարտ է 'ի կիր արկանել ընդդէմ ցաւոց ապտանց։

Դեղորայքն, որք սովորաբար 'ի կիր արկանին 'ի դիպուածս ցաւոց ատամանց, յայտնի և ծանուցեալ են 'ի բազմաց։ բայց մեք ասասանօր դրեսցուք զառաւել յարմարագոյնս և պատշաճագոյնս, զորս սովոր եմք 'ի վար արկանել։ Եթէ ցաւակիրն ելէ արիւնային ինն բնուն և խառնուածոց վիճակեալ, պարտ է երակ հատանել։ և 'ի հետևեալ աւուրն հարկ է տալ թեթև ինչ լուծողական դեղս։ Եւ 'ի վերայ ցաւագնեալ ատամանն՝ պարտ է դնել յաճախակի զիւղն մեխակի կամ ծոթրնի, որ օգտէ մեծապէս։

Նոյնպէս մարթ է պատրաստել դեղ ինն մեղմազդու հետագայ եղանակաւ։ Առ տասն կշիռ ցորեան ափիոն, և նոյնչափ իւղն մեխակի, և ուրթ շիթ՝ իւղ քափրոյ, և այնքան տրորեա, մինչև ափիոնն միասցի ընդ իւղոցն, և նովաւ թրմեալ գոյզն ինչ բամբակ՝ դիր 'ի վերայ ցաւագնեալ ատամանն։ միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի տասն անգամ։ Այլև պարտ է դնել ևս ստէպ զոտս ցաւակրին 'ի ջուր ջերմ մինչև ցծունկս։

Իսկ եթէ 'ի ձեռն այսոցիկ դեղորէից չլինիցի հընարաւոր դադարումն ցաւոց ատամանն, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զտասնևվեց կշիռ ցորեան՝ խբէքաքուանայ առ 'ի փխել, և գրգռել զարտաշընչութիւնն մարմնոյ։ Յոյժ օգտակար դեղ է ևս ողողել զատամունս 'ի կազդուրիչ և 'ի խաղաղիչ ոգեաց, որպիսի են՝ ոգին քափրոյ, և ափիոնի, և ստէպ ստէպ վերանորոգել զնոյն։ Այլ եթէ՝ այսու ևս ուժգնութիւն ցաւոց ոչ մեղմասցի, յայնժամ պարտ է դնել 'ի վերայ ծոծրակի կամ յետ կոյս ականջացն զվէշիքաթօռիս։

Իսկ եթէ 'ի բորբոքմանէ ցաւոյն՝ ընտերքն այտուցեալ լցեն, յայնժամ պարտ է միանգամայն դնել 'ի վերայ վշտացեալ ընտերացն զթուղ մի ջոր եփեալ կաթամբ, և 'ի գործածութիւն այսր թզոյ արժան է յարատևել յաւուրն երիցս, կամ ևս առաւել, մինչև բացցի այտուցն, և ելցէ շարաւն։ յետ որոյ զծաղիկն երիցկի կամ սամպուքի եփեալ ջրով՝ պարտ է տալ նմա առ 'ի ողողել զբերանն։ Եւ եթէ այտուցն

ընտերաց կարծը լեցէ և կարմրերանգ, յայնժամ պարտ է դնել քանի մի տղրուկս'ի վերայ վշտացեալ ընտերացն։ Արդ՝ եթէ անօգուտ եղցեն ասացեալ դեղորայքս, և եթէ արմատն ատամն խախտել կամ նեխեալ լցէ, յայնժամ առաւել օգտաւետագոյն գեղն է'ի բաց խլելն. և ապա սբիրիթօ քանֆօռա իւ պարտ է ողողել զբերանն։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս ցնցական ախտի երախայից կամ պղայոց, որ ասի՝ քոնվուլսիոնէ պէի ֆանէիուլէի։

Ախտս այս է ուժգին թօթափումն կամ ցնցումն և կամ բռնի շարժումն ջղաց և մկանանց։ Ըստ կարծեաց բազում հեղինակաց՝ վճարին 'ի կենաց առաւել քան զկէս մասն երախայից կամ ողայոց 'ի ձեռն այսր ախտի ցնցականի. նմին իրի մեծապէս կարևոր է ամենայն բժշկաց քաջ ճանաչել, և տեղեկանալ զպատճառսն՝ յորոց յառաջ գայ ախտս։ Երկեակ է տեսակ այսորիկ ախտի ցնցականի. մինն ասի՝ քոնվուլսիոնէ սինթոմաթիքա, այսինքն ցնցական ախտ արկածեան։ Իսկ միւսն կոչի՝ քոնվուլսիոնէ էսսէնցիալէ, այսինքն ցնցական ախտ էական։ Արդ՝ ճառեսցուք յառաջիկայդ նախ՝'ի վերայ արկածեան ախտի ցնցականի, և ապա էական ախտի ցնցականի։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս պատճառաց արկածէան ախտի ցնցականի։

Ընդհանրական պատճառքն այսր ախտի են այնք ամենայն, որք գրգռեն և զայրացուցանեն զջիղս և

զմիանուն մարմնոյ։ Մարթ է ևս յառաջ գալ 'ի տկար և յոռի կազմուածոց ջլաց և մկանանց, և այլ գործարանաց. և ևս յանկմանէ, յերկիւղէ, 'ի տապրապայման կրից ինչ մօրն 'ի ժամանակի յղութեան, 'ի հիւանդութէ և 'ի վատառողջութէ ծնողացն, յախտարծարծ նիւթոց և կաթանց սնուցչացն, որք խանգարեն զգործողութիւնն մարսողութեան, և զտրամաբաշխութիւնն բարեյարդար մամանցի, և բարեգոյն աւշկի։ Նոյնպէս 'ի դժուար ծագմանէ առամանց, 'ի սկզբնաւորութենէ պիսակի կամ ծաղկի, և վարդախտի, այսինքն խզամուխի. 'ի ճճեաց կամ յորդանց, որք բազում անգամ զայրացեալ լքեն զսեպհական կայանս իւրեանց, և անցեալ գնան 'ի ստամոքսն, և յայլ ընդերս մարմնոյ, և կռուին զնոքօք ոգւով չափ, յորմէ և անվրէպ պատճառեն զախտս զայս։

Դարձեալ, հնար է յառաջ գալ 'ի պնդմանէ հանգերձից, 'ի հանապազօր և յերկար լալեաց, 'ի սառուկ պնդութէ որովայնի, յընդերկար և 'ի չափազանց գործածութէ թմբրեցուցիչ գեղորէից. որպիսի են թիւրակէան, ափիոնն, տիասքօտիոն ևն։ Նաև 'ի շոգեաց և 'ի գոլորշեաց թիւնաւոր մետաղաց՝ հանքաց՝ և հրահալելեաց, որպիսի են սնդիկն, արճիճն, մինդէղն, ևն։ Այլև յոլովեցս պատճառի ախտս այս յորովայնալուծութենէ, 'ի յաճախակի ժայթքմանէ, յընդհատ տենդից, 'ի հանապազօրեայ և 'ի հրատապ ջերմախտից, և յայլ ինչ բորբոքեցուցիչ ախտից։ Յաւելուլ մարթ է 'ի վերայ այսոցիկ պատճառաց և զյոռութեն կլիմայից, և զանբարեխառնութէ օդոց երկրին յորում բնակեն։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի կիր արկանել 'ի դէպս ասածս այսոցիկ ախտից։

'Ի դիպուածս, յորում պատճառի ախտս այս 'ի լինութէ, կամ յանմարմոզականութէ, և կամ յորպիսի և ինչ տարիս և գրգռիչ նիւթոց, յայնժամ պարտ է նպաստամատոյց լինել բնութեն, մատուցանելով զերբք կշիռ ցորեան՝ իբրեքաքուանա փոշի արտրեալ, զոր և պարտ է միանգամայն կրկնել ըստ պահանջելոյ հարկին՝ նկատեալ 'ի պարագայս խառնուածոց, և արտաթորեալ նիւթոց. բայց մեք զայս փափուզ

կան դեղ եւեթ անբաւական համարիմք պատճառել զառողջութեան. յայն սակս կարեւոր դատիմք եւս կակղել զորովային սոսկապէս 'ի ձեռն մեղմ և թեթեւ լուծողականաց, որպիսի են՝ ռապարպառօն, և մակնէզիա ալպա. զքանակութիւն սոցա տեսցէս 'ի տառն՝ Ռ և Մ 'ի կարգի իւրեանց: Այլև միանգամայն նպաստամատոյց լինել բնութեան 'ի ձեռն թեթեւագոյն գրեթի յօրինելոյ կաթամբ, և կակղացուցիչ խոտեղինօք: Նոյնպէս զկնի գրեթի արժան է տալ նմա սակաւաչափ օքուլի քանքուի՝ խառնեալ ը փոքր ինչ մակնէզիա ալպայի, և 'ի նպաստել ներգործութեան նորին առնել թեթեւ ինչ արգանակ մսոյ, կամ ինֆուզիոնէ տի քամոմիլլա: Իսկ առ 'ի խաղաղեցուցանելոյ և հանգուցանելոյ զչիղս և զմկանունս, տացի երբեմն երբեմն փոքրիկ դրգալս ինչ 'ի ցնցահալած ասացեալ հեղուկէն թուինքավէլլեայ, զորմէ ունիս տեսանել 'ի բառն Լիգուորէ անթիքօնվուլսիվօ:

Եւ 'ի դիպուածս, յորում պատճառի ախտս այս 'ի սկզբնաւորութէ պիսակի, կամ ծաղկի, և վարդախտի, յայնժամ պարտ է վարել մեծաւ զգուշութիւն. զի յայսպիսի դիպուածս՝ փսխողականքն ոչ են պատշաճ. իսկ լուծողականքն ոչ են այնքան սպասհով, բայց եթէ լինիցի յոյժ թեթեւ, մեղմ, և սակաւաքանակ: Առաւել ճահողագոյն դարմանքն են՝ արիւն հանելն յուսոց, և յաղդերաց, և միանգամայն դնել վէշիքաթօռիս 'ի վերայ թիկնամիջի: Իսկ 'ի դիպուածս, յորում ախտս այս յառաջանայ 'ի դրժուար ծագմանէ ատամանց, պատշաճագոյն դեղն է թեթեւ լուծողականն. ութ կշիռ ցորեան՝ ռապարպառօ, կամ 12 կշիռ ցորեան՝ մակնէզիա ալպան, չափ են բարիոք և բաւական: Նոյնպէս օգտաւէտ է դնել վէշիքաթօռիս 'ի վերայ ծոծրակի: Այլ 'ի դիպուածս, յորում պատճառի ախտս այս 'ի ճանեաց կամ յորդանց մտելոց 'ի ներքս ատամոքսի և փորոտեաց, յայնժամ արժան է 'ի գործ արկանել զդեղորայս առ 'ի սատակել, և արտաքս վանել զորդունս. որպիսի են՝ բուլվիս տի ֆէռռօ, օլիո տի բալմաքրիսթէ են:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս էական ախտի ցնցականի 'ի վերայ երախայից կամ փղայոց, որ ասի՝ փօնվուլսիօնէ էսէնցիալէ։

Ախտս այս է խօթութիւն ինչ ուղղոյ, կամ գումարումն վնասաբեր հիւթոց 'ի սակատ գլխոյ՝ առանց ցաւոց աղեաց, և առանց վերոգրեալ պատճառաց և նշանաց զուգընթաց գտանելոյ, ևն։ Ախտս այս բաղում անգամ է գուշակ, և նախընթաց լինի իրիք վտանգաւոր խօթութիւն. զորօրինակ լուանոտութիւն, կամ վերնոտութիւն, մղձաւանջն. ևն։

Յաղագս գեղջէից, զոր պարտ է 'ի վար արկանել 'ի գեղ պոռածս այսորիկ ախտի։

Որչափ կարևոր է լոյծ ունել զորովայնն. բայց ըզդուշանալ պարտ է զի մի 'ի գործ արկցին ուժգին և զօրաւոր լուծողականքն, և զօրաւոր գրեխքն. ևս ինֆուզիօնէ տի սէնա, մաննա, ևն։ 'Ի գիսլուածս յայս ռապառապառօն, մակնէսիա ալպա, և թեթևագոյն գրեխքն են յոյժ օգտակարք և շահաւէտք։ Նոյնպէս պարտ և պատշաճ է դնել վէշիքաթօռիօ 'ի վերայ ուսոց, և կամ 'ի վերայ ծոծրակի առ 'ի դուրս ձգել զդումարեալ հիւթս կամ շնճուկս սակատի։

ԴԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս հէծիլպանաց որ ասի՝ ոէնիլիօղղօ։

Ախտս այս է կիրք ջղախտական, կամ ցնցումն ինչ սատամոքսի կամ սոծանուոյ, յառաջ եկեալ 'ի գրգռմանէ, կամ 'ի վայրացմանէ մանրաջլաց, կամ

մանրաթելից այսոցիկ գործարանաց. զոր և յորջորջեն զանազան անուամբ ըստ տարբերութեան նշանացն և սաստկութեանցն այսորիկ ախտի։ Յորժամ հեծկըլտանքս 'ի վեր երևի զկնի ուտելոյն, (որպէս ասէպ պատահի, մանաւանդ տղայոց, և երախայից,) յայնժամ կոչի՝ սէմբլիչէ կամ բասասաՃՃիէռօ, այսինքն սոսկ և կարՃատաւ։ Բայց 'ի դիպուածս՝ յորում ախտս այս ասէպ ասէպ 'ի վեր երևի, և զուգընթաց լինի ընդ փորհարութեաց, և թանչից, ընդ գՃնդակ տենդից, և ընդ ազգի ազգի բորբոքողականութեաց, զոր օրինակ ստամոքսի, ստօծանուոյ, լերդի, և այլ ընդերաց, որ է նշան վտանգաւոր և մահահրաւէր, յայնժամ ասի՝ սինթօմաթիքօ, այսինքն արկածեան։ Իսկ յորժամ ախտս այս ոչ նուաՃեալ 'ի դեղորէից՝ երկարատև է, բայց առանց համընթաց լինելոյ վերոյիշեալ ախտից, յայնժամ կոչի՝ քրոնթումաչիասիմս, այսինքն ըմբոստ կամ հեստ։

Իսկ որքան առ յարատևութիւն ըմբոստ ձայնեալ հեծկլտանաց՝ չիք ինչ որոշեալ կանոն. երբեմն տևէ մինչև 'ի 12 կամ 14 ժամ. երբեմն 'ի մի շաբաթ. երբեմն 'ի մի ամիս. երբեմն ևս 'ի մի տարի ամբողջ. և երբեմն ևս յարաձգի մինչև ցՅՕ ամս։ Գիտելի է, եթէ անձինք՝ որք ունին զախտս որկորոյ, և արբշռութեան, և զախտս ախոնդանաց, կամ արգանդի, են առաւել ենթակայ այսր ախտի հեծկլտանաց։

Պատճառք հեծկլտանաց։

Բ. Ախտս այս յոլով անգամ 'ի վեր երևի յորկորաժեռութենէ, 'ի վերայ ինչ 'ի վեր երևելոց 'ի ստամոքսն, 'ի թիւնաւոր նիւթոց, 'ի բորբոքմանէ և յայտուցմանէ ստամոքսի, և աղեաց, 'ի յարգելմանէ սովորական հոսմանց, 'ի քաղցկեղէ, և 'ի մահաբեր տենդից, ևն։

Յաղագս դեղորէից, զոր պարտ է 'ի վեր արկանել 'ի դէպս հեծկլտանաց։

'Ի դիպուածս յայս առաւել շահաւետագոյն դեղորայքն են՝ ցուրտ կամ գաղջ ջուրքն, նա յաւէտ սպիտակ և անարատ մեղրն։ Նոյնպէս օգտաւէտ է

յաճախակի ուտելն զմէջն հացի, և ստէպ ստէպ լմ-
պելն զջուր ցուրտ և զովարար։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի գործ արկանել ընդդէմ
արկածեան հեծկլպանաց։

Բայց որովհետև ախտս այս է վտանգաւոր և մա-
հաբեր, վասն որոյ հարկ է փութապէս 'ի գործ ար-
կանել զբարեգոյն նպաստս, և զհնարս։ Յորժամ
ախտս այս յառաջ գայ 'ի բուսական սննդոց, և 'ի
դժուարամարսելի կերակրեղինաց, յայնժամ պարտ
է տալ ախտակրիդ բաժակ մի ազնիւ գինի, կամ
այլ ինչ ոգիաւոր հեղանիւթս, առ 'ի զօրացուցա-
նել զստամոքսն և 'ի հանդարտեցուցանել զհեծկըլ-
տանքս զայս։ Եթէ պատճառեալ ցցէ ախտս այս 'ի
թիւնաւոր նիւթոց մտելոց 'ի ստամոքսն, յայնժամ
պարտ է տալ նմա առատօրէն կաթն կովու կամ այ-
ծեաց, կամ լուղն ձիթապտղոյ։ Եւ եթէ պատճա-
ռեալ ցցէ 'ի բորբոքմանէ ստամոքսի ևն, յայնժամ
ըստ թելադրելոյ բնութեն քաջայայտ ճանաչի, եթէ
արժան է երակ հատանել, և 'ի կիր արկանել զզո-
վացուցիչ դեղորայս, որպիսի են սբիուիթօ տի նի-
թռօ տոլչինֆիքաթօ, զոր մարթ է 'ի գործ արկանել
20 կամ 24 շնթ խառն ը մի սկահակ սիէռօ տի լաթ-
թէ վինօզօի երիցս անգամ յաւուրն, կամ ևս առա-
ւել՝ եթէ տանիցի ստամոքսն։ և պարտ է ստէպ
ստէպ թանալ զջուխայն ջերմ ջրով և դնել 'ի վերայ
ստամոքսի։ Յայսմ դիպուածի նոյնպէս շահաւէտ է
գործածութեն քինա քինայի, ևն։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի կիր արկանել ընդդէմ
ըմբոստ յայնեալ հեծկլպանաց։ կուլի նոա հեծկլպանի
էական։

Պատշաճական, և օգտաւէտ դեղորայք յայսմ
դիպուածի են այն ամենայն, որք խաղաղեցուցա-
նեն և հանգուցանեն զչիղս և զմանրաթելս ստամոքս-
սի և ստոծանւոյ։ որպիսի են՝ սբիուիթօ տի լաւան-
տա քամբօսթօ, թինթուռա վօլատիլէ արօմատիքա,
ագուա տի մէնթա, վալէռիանա, քասթօռիօ, և նոյն
իսկ ափիոնն չափով և զգուշութիւն ընծայեալ։ 'ի
վերս քան զամենայն՝ մուսքիօն, զոր մարթ է 'ի գործ

արկանել 15 կամ 20 կշիռ ցորեան՝ խառն ընդ շիլօք բօի ջրիցս անգամ յաւուրն։ Վկայէ լիէօթօտ հեղինակն՝ եթէ չէք գեղ ինչ առաւել զօրաւոր առ 'ի հալածել զհեծկլտանքս քան զմուսքիսն։ Ընդ նոյնպէս օգտաւէտ է մեղրն սպանիոյ, մանաւանդ դաղատիոյ։ զոր պարտ է ուտել առաւօրէն։

Շահաւէտագոյն է գործածութիւնն եւս արտաքին սպեղանեաց։ յաւելու վերոյիշեալ հեղինակն, եթէ յայդպիսի դիպուածս պարտ է դնել 'ի վերայ ստամոքսի և կրծոց՝ զմեծագոյն խիտ սպեղանի, մինչև ծածկել զմեծագոյն մասն ստամոքսի և կրծոց։ պատշաճագոյն է սպեղանին անուանեալ էմբիսթրոս սթոմաքիքս, կամ թանձրաթան թիւրակէսիս յօրինեալ՝ մածեալ 'ի վերայ կիւտէրի անուանեալ մաշկի, որում և պարտ է մնալ ըստ տանելոյ կարողութեան ախտակրին։



ԳԼՈՒԽ ԻԳ։

Յաղագս զանազան գէսակաց հաղից, որ ասի՝ ԲՕՍՍԷ։

Պառեակ է տեսակ այսորիկ հաղի։ ա։ ասի՝ թօսսէ տի բէթթօ։ այսինքն հաղ կրծոց։ բ։ Կոչի՝ թօսսէ սթոմաքալէ։ այսինքն հաղ ստամոքսի։ գ։ Անուանի՝ թօսսէ նէռվօզա։ այսինքն հաղ ջլաց։ Իսկ դ։ թօսսէ սինթոմաթիքա։ այսինքն հաղ արկածեան, զորոց իւրաքանչիւրոցն ուրոյն ուրոյն ճառեսցուք համառօտիւ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս հաղի կրծոց, կամ լանջաց։

Ընդ ոն երկարատև հաղ՝ որ 'ի կուրծսն, լինի որոգայթաւոր, և պահանջէ զառաւել գործունեայ և պատեհական նպաստս, յոյն սակս՝ զի հաղս այս յոլով անգամ երկարաձգեալ վոխարկի յախտն, որ ասի՝ Թիզնիքէցցա։

Պատճառք այսորիկ հաղի։

Հաղս այս մարթի յառաջ գալ 'ի վատ առողջուէ կրծոց, և 'ի տկարութէ թոքոց։ Հնար է և այս պատճառիլ 'ի ցրտառութէ, 'ի խոնաւութէ օդոց, և յանչարեխառնութէ կլիմայից՝ յորում բնակին։ Դարձեալ, ընկողմանիլն 'ի վերայ գէջ գետնի և անկողնոյ, մնալն քնդ երկար թացեալ հանդերձիւք և ոտիւք՝ պատճառեն զհաղս զայս։ Նոյնպէս մարթ է հաղիս այսմիկ և առաւել պատճառիլ յայնմ ամենայնէ, որք արգելուն զարտաշնչութիւն մարմնոյ։

Նշանք այսորիկ հաղի։

Թէթև հաղն լանջական՝ մարթի փարատիլ գլխաւվին յընթացս հնգից կամ վեցից աւուրց, կամ և սակաւ, յորում դիպուածի ոչ գտանի բնաւ ջերմութիւն։ Բայց 'ի դիպուածս, յորում հաղն երկարատևեալ հանապազորդէ, յայնժամ իսկ և իսկ զհետ գայ անախորժակութի, անմարսողութի, քնատուի, ճնշումն կրծոց, դժուարաշնչութիւն, տենդ յամր, տկարութի, թուլութի, և վհատութի։ Այսոքիկ նշանքս բաւականապէս բացայայտեն զախտացումն թոքոց։ Այլ գիտել արժան է, զի հաղս այս 'ի սկզբան անդ լինի չոր. և ախտակիրն զգայ յաճախաւկի զնոցուած ինչ թեթև 'ի ձախակողմն. և յետ այնորիկ սկսանի առ սակաւ սակաւ 'ի բաց վանել ըզթուքս հանդերձ նոյն հաղիւ։

Յաղագս դէղրէից, զոր պարտ է 'ի վեր արկանել 'ի դի-
պուածս յորոմ ընդ հաղի կրծոցն զոյգ գպանի և ջեր-
մուկիւն։

Յայսմ դիպուածի նկատել արժան է, եթէ ախ-
տակիրն լինիցի յարբունս հասակի երիտասարդութեան,
և արիութեան. եթէ հաղն իցէ յոյժ սասակի, եթէ ու-
նիցի ցաւ և ծանրութիւն գլխոյ, և եթէ զարկ բաղ-
կին լինիցի կարծր և սրընթաց, յայնժամ պարտ է
անվրէպ երակ հատանել։ Կերակրոցն պարտ է լի-
նել թեթև, և սակաւաքանակ. զորօրինակ արդա-
նակն որթոց, կամ պարանոցն ոչխարի են։ Եւ զկնի
երակ հատանելոյ պարտ է յամենայնում երեկոյի
դնել զոտս նորա 'ի մէջ ջերմ ջրոյ. և պարտ է լոյծ
պահել զորովայնն միջնորդութեամբ գրեխի։ Այսպէս
քաղցրացուցիչ ըմպելիքն են յոյժ պատշաճողականք
'ի դիպուածս հաղի կրծոց։

Յաղագս դէղրէից, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դի-
պուածս յորոմ ընդ անջերմ հաղին գպանի փողոնք կամ
մաղաս հոծ, և ոսպղային։

Պատշաճական և օգտաւէտ դեղորայք յայսմ դի-
պուածի են այնք ամենայն, որք զօրեն անօսրել զհո-
ծութիւնն տողունից, և կակղացուցանել զկուրծս և
զթոքս, որպիսի են՝ սգուիլլա, կօմնա ամմոնիակա,
են։ Այսպէս օգտաւէտ է սօլուցիօնէ տի կօմնա ամ-
մոնիակա, որ այսպէս բաղադրի։ Առկ երկու տրամ
կօմնա ամմոնիակա 'ի յանկան կամ 'ի սանդ, բարիոք
լեսեալ փշրեա, և ընդ այսմ խեժի խառնեա հետ
զհետէ և առ փոքր փոքր կէս քսեսա խաշու գաշուոյ,
յաւելլով 'ի նոյն չորս ունկի՝ ոքուա սթիլլատա տի
բուլեծձիս։ Յըմպելլոյ ասսի արբցէ հիւանդն եր-
կու դրդալ սեղանոյ չորիցս անգամ յաւուրն։

Այլև օգտաւէտ է 'ի դիպուածս յայս գործածու-
թեան մինսոխոյ. որ այսպէս յօրինի։ Առ երկու ուն-
կի՝ աչէթս շիլլեթիքս, կամ օսսիմել շիլլեթիքս և կամ
շիլօբբս շիլլեթիքս. և նոյն չափ՝ ոքուա տի չիննամ-
մս, մի ունկի՝ շիլօբբս պսլասամիքս, և նոյնքան՝ ջուր
հասարակ։ 'Ի խառնուրդէ ասսի 'ի չորս ժամս
միանգամ առնու հիւանդն երկու դրդալ սեղանոյ

առ. իւրաքանչիւր նուագ։ Դարձեալ, շահաւէտ են սերմն սերկևիլի, սաղմն ձկան, իւղն քաղցր նշոյ, շաքար վանի, անարատ մեղրն ևն։

Բայց առաւել օգտաւէտն 'ի դեղորայս ընդդէմ լանջական հազի՝ է ափիոնն խառն ընդ իբէքքուանայի. զորմէ վկայէ օտիէռ հելլենակն, եթէ բազում անգամ բազմաց 'ի գործ արկեալ է զայս, և ակնատես լեալ է բազմաց օգտաւէտութեց. որ այս է զանակաւ բաղադրի։ Առ 20 կշիռ ցորեան՝ օբբիո, որ այն ինքն է ափիոնն, և 40 կշիռ ցորեան՝ իբէքքուանա, ամ և շիլօբբո տի բաբավէռօ ալլպօ, որչափ ինչ պէտք են վասն կազմելոյ զհապս. որք մէն մի կշռիցեն երկու ցորեան. զբոս շրջապատեալ փոշւոյն կինամոնի, տացես հիւանդին մէն մի հատ յերեկոյեան պահու յերթալն յանկողին։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի վար արկանել 'ի դէպուածս յորոմ ընդ անջէրմ հազին զոյգ գպանի և զոնոյ ինչ անօր, և ջինջ։

Յայսմ գիպուածի առաւել օգտակար և պատշաճողական դեղորայքն են խաշուն բաբավէռօ ռօսսոյի, ռատիչէ տի ալթէայի, ֆիօռ տի թուասիլլաճինէի։ Նոյնպէս շահաւէտ են գործածութիւնքն կոմմս առապիքայի, և ամմոնիակքոի, և այլ ամենայն իւզային և խժային դեղորայքն։ Այլև օգտաւէտ և կարի շահաւէտ է՝ էլիսսիռէ բառէկօռիքօ, զոր պարտ է 'ի կիր արկանել դրդալ մի արձոյ, խառն ընդ բաժակ մի տղտոյ խաշուին։

Յաղագս դեղոցն, զոր պարտ է 'ի գործ արկանել 'ի դէպուածս, յորոմ ընդ հազի լանջոյն զոյգ գպանի և հիւրն պպիպ, ռիռռ, և կիռռ։

Նահաւորական և շահաւէտ դեղորայք յայսմ դէպուածի են այն ամենայն, որք զօրեն քաղցրացուցանել զհիւթս, որպիսի են՝ սուքքո տի լէկօրիցիա, ցուքքէռօ տ' օռծօ, բասթիկլիէ պալսամիքէ, բասթա տ' ալթէա, ևն։ Սակայն և 'ի մէջ սոցա ես ընտրեմ 'ի սկզբանն, որք առաւել քաղցրացուցիչ են և օգտաւէտք կրծոց. որպիսի ինն են ռատիչէ տի ալթէա, սէմէն բօմօ տի քօթոկնիա, լէկոռիցիա ևն։ Զորօրիւ

նակ. մի ունկի՝ ռատիչէ ա՛ալթէա, և նոյնչափ ոչ-մէն բոմքոթենիա, ա՛ռ և կէս ունկի՝ լէկոռիցիա, և վեց տրամ՝ կոմմա առապիքա, և նոյնչափ տռականթէ. և յաւէլ այնչափ աքուա տի ռոզա՝ որչափ պէտք էցեն առ թանալոյ կամ ծածկելոյ վերոգրեալ նիւթոց. թող զխառնուրդս զայս մարսիլ 'ի միմեանս ը միջոց երկոտասան ժամուց: Ապա վրդովեա՛ բարիոք դրդալիս, և զտեա՛ յայլ անօթ, և յաւելլ 'ի վերայ հինգ ունկի՝ փոշիացուցեալ շաքար վանի: 'Ի խառնուրդէ ասոի յերկուս ժամս միանգամ առնու ախտակիրն դրդալ մի սեղանոյ առ խրաքանչիւր նուագ: 'Ի գործ ածէմ ես բազում և բազում անգամ զսյս խառնուրդս 'ի դիպուածս ամենայն կերպ հազից կրծոց, արիւն թքանողաց, 'ի հոսմունս որովայնի, ցաւոց կրծոց, ևն: Այլ պարտ է ուշ դնել, զի այս խառնուրդ ոչ յարմարի 'ի հազս ստամոքսի, ջլաց, և արկածեան, և ոչ յայլ ինչ դիպուած ցնցական հազի:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս հազի սպամոփոխ:

Հազս այս ստամոքսի ունի մեծապէս տարորոշութիւն և զանազանութիւն եթէ 'ի պատճառսն, եթէ 'ի նշանս, և եթէ 'ի դեղորայս, զորոց համառօտիւ խօսեսցուք յառաջիկայդ: Եւ հասարակօրէն հազս այս յառաջ գայ և պատճառի 'ի տկարութենէ ինչ ստամոքսի, և բազում ևս պատահի 'ի խանգարեալ և 'ի նեխեալ նիւթոց ժողովելոց 'ի մէջ ստամոքսի. որք եղծանեն զգործողութիւն մարսողութեան, որով պատճառեն զհազս. յայն սակս գործածութիւն շարապի և այլ ամենայն իւղային և խժային դեղորէից են հիւսասակարք, և անյարմարք 'ի դիպուածս այսորիկ տեսակի հազի:

Յաղագս նշանաց հազի սպամոփոխ:

'Ի դիպուածս հազիս, հասարակօրէն զուգընթաց լինի ցաւ ինչ ստամոքսի և թիկանց, նողկանք սրտի.

և երբեմն ևս փսխուն. հաղն լինի առաւել մեծահնչիւն, և առաւել դաժան քան զհազս կրծոց, բայց ոչ երկարատև է որպէս զոյն։ Եթէ հազս այս պատճառեալ ելցէ 'ի տկարութէ ստամոքսի, յայնժամ լինի չոր, և թուքն նուազ, անօսր, և ջինջ։ Իսկ եթէ պատճառեալ լինիցի յապականեալ և 'ի նեխեալ նիւթոց գումարելոց 'ի ստամոքսի, յայնժամ ախտակիրն ժայթքէ։ Երիտասարդք վախտք, որք ունին զտկար ստամոքս, և զմարսողական զօրութիւնս անկարս, են առաւել ենթակայ այսր հազի, նա յաւէտ կանայք փափկակեացք, և աղնուական օրիորդք։

Յաղագս դեղոցն սպամոդական հազի պատճառելոց 'ի քաղաքէր նիւթոց ծողովելոց 'ի մէջ սպամոդի։

'Ի գիպուածս, յորում հազն յառաջ գայ 'ի խանգարեալ և 'ի նեխեալ նիւթոց, որ երբեմն պատահի 'ի տկարութէ մարսողական զօրութեցն և յանչափութէ կերակրոցն, և երբեմն ևս 'ի ցրտառութէ, և յապականութենէ կերակրոցն, պարտ է փութով 'ի գործ արկանել զ12 կամ զ15 կշիռ ցորեան՝ իբէքքուանս, և առատօրէն տալ ըմպել ախտակրին թեթև ինչ խաշու քամոմիլայի. և ըստ պահանջման հարկի մարթ է վերակրկնել զվերոյիշեալ փսխողականն 'ի գիպուածս ստամոքսական հազի։ Եւ զկնի փսխողական դեղոյ պարտ է 'ի գործ արկանել զ40 կամ զ60 ցորենաչափ՝ ռապառապառս։ Ապա 'ի բարուք յաջողել սոցին՝ կարգեսցի գործածութեն թինթուռա սաքռայի, ըստ չափու երկուց դրգալից սեղանոյ երկնցս անգամ յաւուրն։

Եւ իբրև վերոգրեալ կամ նոցին նման դեղոցիւք չփարատեսցի հազն ստամոքսական, յայնժամ ոչինչ արգելք կայ գործածութեան խարտաածոյ երկաթոյ, որ այսպէս բաղադրի։ Առ կէս ունկի՝ փոշիացուցեալ ռապառապառս, և նոյնչափ՝ վերոգրեալ խարտաածդ. և մի ունկի՝ էսթռաթթիս տի Հէնցիանա, և յաւել այնչափ շիլոբբս տի մէլառանչիա որչափ պէտք լցեն առ կաղմելոյ ըստ կանոնաց արհեստին զանգուած. զզանգուածս զայս արարեալ Հատ՝ որ կշռիցէ վեց ցորեան, տացին չորս կամ հինգ հատք, երկու անգամ յաւուրն։ Ոչինչ ընդհատ օգտաւէտ է և օրըստօրեայ հեծելութիւնն ձիոյ՝ եթէ հնար է

ցէ. բայց միայն զի մի լինիցի զկնի կերակրոյ՝ երբ ծանրացեալ լիցէ ստամոքսն։

ՅՕԳՈՒԱԾ Գ.

Յաղագս ջղական կամ ցնցական հոգի, որ ասի՝ ՌՕՍՈՒ ՓՕՆՎՈՒԼՈՒՆՎԱ։

Հազս այս է ախտ ինչ յոյժ տարափոխիկ՝ մանաւանդ ազայոց, և երախայից, և ունի զոյգ ընդ իւր զջերմուն, և զցնցումն։ Զկիր հազ ինչ այնքան սաստիկ և դաժան՝ իբրև զհազս զայս. որ երբեմն տեւէ մինչև 'ի չորս ամիսս, և երբեմն ևս առաւել։

Յաղագս նշանաց ջղական կամ ցնցական հոգի։

'Ի հասարակի նշանքն այսորիկ հազի են կարմրութիւնն երեսաց, այտուցն աչաց և բովանդակ մկանանց, անձկութիւն, ճնշումն կրծոց. և վերջապէս սխտակիրն ործայ, և անհնարին դժուարութիւն 'ի քաց վանէ զնուն ինչ հիւթ խժային, որով և դադարի հազն. բայց յետ սակաւուց վերստին գլուխ ամբառնայ, և 'ի յայտ գայ հազն երբեմն առաւել, և երբեմն սակաւ դժնէութիւն։ Յերկարաձգեալ մնալով այսորիկ հազն, և 'ի հասանիլ 'ի յեսին ասել ճան, սովորաբար փոխարկի յախտն կոչեցեալ՝ թիզկիքէցցա, կամ ֆէպրուէ լէնթա։

Յաղագս կառավարութեանց և դեղբրէից 'ի դիպուածս այսորիկ հազի։

Յայսմ դիպուածի առաւել պատշաճական և օգտաւէտ դեղն է փսխողականն, զոր պարտ է 'ի գործ արկանել ախտակրին. 'ի մէջ ամենայն փսխողականացն վասն այսր ախտի առաւել բարեգործն է իբէքքաքուանա, որ 20 կամ 24 կշիռ ցորեան փոշի արարեալ, բաւական է վասն միոյ չափահասակի. բայց հայեցեալ 'ի չափ հասակի ախտակրին, պարտ է երբեմն նուազել զքանակութիւնն. այլ իբրև սկսանի փսխողականն 'ի ներգործել, յայնժամ պարտ է ա-

ռատորէն ըմպել զԹեԹև ինչ խաշու քամոմիլլայի։ Երդ՝ զկնի միանգամ, և երկրորդ անգամ ըմպելոյ զփսխողականն, պարտ է 'ի գործ արկանել զափիոնն, զոր պարտ է 'ի սկզբան առնուլ սակաւաքանակ չափով։ զերօրինակ կէս կշիռ ցորենոյ, և ապա առ սակաւ սակաւ առաւելուլ զչափն մինչև յերիս կամ 'ի չորս ցորեանս յաւուրն։

Դարձեալ, գիտել արժան է, եԹէ ըստ վկայելոյ օտիէռ հեղինակին, մանաւանդ բժշկապետի վիէննա քաղաքի, գոն ինչ ինչ համբաւեալ դեղորայք 'ի գործ արկանելիք 'ի դիսլուծս սխտիս։ որոց առաջինն է էսԹռաԹԹօ սի չիքուԹա։ զոր պարտ է զգուշուԹիւն և չափով ընծայել, լուծեալ 'ի մէջ վարդի ջրոյ։ և 'ի գործ արկանել անդ զվերոյիշեալ ափիոնն, պարտ է հրաժարիլ 'ի խմորեղինաց, 'ի ԹԹու և 'ի կծու կերակրեղինաց, պարտ է միանգամայն շրջիլ 'ի զբօսանս ըստ տանելոյ կարողուԹեն։ նոյնպէս պարտ է հրաժարիլ յամենայն իրաց, որք պատճառեն զզայրացումն, և պահպանել զինքն 'ի ցրտոյ, և 'ի հողմոյ, այլև յամենայնում աւուր պարտ է Թանալ զոտան ջերմ ջրով։

ՅՕԴՈՒԱԾ Դ։

Յաղագս արկածէան հաղի։

Հազս այս դիւրաւ ապաքինի, եԹէ բուժեսցի նախ սխտն, յորմէ պատճառի, և յառաջ գայ։ Այս տեսակ հազի հասարակօրէն պատճառի յայսոցիկ սխտից։ որք են ծագումն առատմանց երախայից։ ՃՃիք կամ որդունք, յղուԹիւն, յօդուածացաւուԹիւն, հարբուխն, և։ վասն որոյ պարտ է նախ դարման տալ սխտիցս այսոցիկ, յորոց պատճառի, 'ի գործ արկանելով զկառավարուԹիւնս, և զդեղորայս սեփականս իւրաքանչիւր սխտից։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս պնդութեան, կամ կալուածոյ որովայնի, որ ասի սընիրնիրէեցոյ։

Ոչ են բանք մեր ասասանօր զայնպիսի կալուածոց ազգացն, որք ցուցակ են զանազան հիւանդութեց, զորօրինակ են ախտքն կոչեցեալք քօլիքս, և լիաքս, ևն. զայսցանէ խօսեցաք յայլ ուրեք. այլ խօսեսցուք ասասանօր յատկապէս զայնց տեսակաց անտրամադրութենն՝ որ նուազեցուցանեն զկարգ պիտոյից որովայնի, որպէս պատահի 'ի բազում անձինս, յորմէ և մարթի զհետ գալ ախտից։

Պապճառս պնդութեան կամ կալուածոյ որովայնի։

Ախտս այսմիկ մարթ է 'ի վեր երևիլ 'ի սասանիկ ջերմութեէ լերդի, 'ի գործածութեէ սասանիկ կարգիր գինւոյ, և այլազգ սեղմիչ ըմպելեաց. 'ի սարապայման աշխատանաց և 'ի շարժմանէ. մանաւանդ 'ի ձիավարութենէ, ընդ երկար 'ի գործ արկանելոյ զկերակուրս բնութեաբ ցուրտս, և անհամս, որք չեն յաջողակ ըստ պատշաճին ենօրինելոյ զպէտս աղեացն։ Երբեմն ևս պատահի յարգելեալ մնալոյ մաղձի 'ի փորոտիս. որպէս 'ի դիպուածս դալկան։ Երբեմն ևս նշան է այլևայլ հիւանդութեց նոյն իսկ փորոտեաց, զոր օրինակ անդամագօսութեէ, ջղացաւութեէ, այտուցից ևն։ Պնդութիւնս այս սասանանալով կարէ պատճառել զգլխացաւութեն, զփսխումն, զնէթ, զթանչ, զձնշումն և զծանրութեն որովայնի. յորմէ պատճառի երբեմն թիմբանիթիւսէ, անհամութեն և դառնութեն բերանոյ, անձկութիւն, պատյտ գլխոյ, բորբոքումն ատորին որովայնի, և փորոտեաց, փտախտութիւն։

Պնդութիւնս այս մասնաւորապէս է ինսասակար

տեսամաղձոտ անձանց • քանզի պատճառէ զփուքս, և զայլ վշտալի նշանս։ Յայսոսիկ դիպուածս պարտ է փոյթ ունել 'ի կանոնաւորել զդէտս որովայնի • թէպ զայսմանէ անհոգ լինիմք հանապազ, և գուն ուրեք ածեմք զմտաւ • որովհետև տեսանեմք զոմանս՝ որք մնան 10 կամ 12 օր առանց կատարելոյ զդէտս որովայնի, և տակաւին 'ի նոյն վայրկենի չկրելով անհանգստութի, հաճեալ են ընդ այն, և բնաւ ոչ կամին բարեխառնել զընթացս բնութենն, համարելով եթէ չէ այնչափ ինչ հոգալի։ Օրըստօրական գործածութիւնն և փորձն ցուցանէ, եթէ այդպիսի անձինք որք յարբունս հատակի կրեն զսխատս զայս, միշտ յապաւորայն ախտաժէտանան • և ախտս այս թուի թէ առաւել տիրապետէ 'ի սեռս կանանց, քան թէ արանց, մանաւանդ 'ի ժամանակի յղութենէ, և յաւարտ դաշտանի • և այս վասն նոյն պատճառի անհոգութենէ, զորմէ խօսեցաք արդէն։

Յաղագս խնամապարութենէ այսորիկ ախտի։

Ոչքա՝ որոց կազմուածքն են ջղային և զօրեղ, միշտ են ենթակայ սնդութենէ որովայնի • յայսպիսի դիպուածս քաջածանօթ է ամենայն ումք, եթէ զինչ պարտ իցէ առնել • այս է, պարտին նախ հրաժարիլ յամենայն սեղմիչ կերակրեաց և ըմպելեաց, և ևս պարտին 'ի գործ արկանել զսնանելիս թուլացուցիչս, և կակղացուցիչս որովայնի • որպիսի են՝ խնձորն, խաղողն, ուվա սբինան, կոդին, մեղրն, շաքարն, կաղամբն, շոմինն, մոլոշն, ցորեանն, սերն, կաթն, պարբատագոյն արգանակն մսոյ, թուզն, շլորն, փիստուզն դամասկեան, շինձուկն կաթին, և ն։

Յաղագս դեղոցէից պնդութենէ որովայնի՝ պատճառելոյ 'ի ջերմութենէ լերդի, կամ 'ի յոծեղութենէ սպամոքսի։

Յայսպիսի դիպուածս պարտ է ըստ կարի գուն գործել, և փութալ յարգելուլ զներհակ ընթացս բնութենէ • կարևոր է 'ի գործ արկանել թամարինտի, ռապառապառս, մաննա, թառթառս սօլուպիլէ, քռէմոռ սի թառթառս, քասսիա, կամ դրեխ առնել յամենայնում աւուր դաղջ ջրով, խառն ընդ աղի, և ընդ ձիթոյ։ Բայց եթէ 'ի գործ ածել անդ զվերո-

գրեալ բազմաձեւակ թեթև լուծողականս, չերևի նշան ինչ լուծելոյ որովայնին, յայնժամ պարտ է ձեռնամուխ լինել 'ի գործածութեան սասոիկ, և զօրաւոր լուծողականաց. որպիսի են՝ եալաբբա, սէնա, աշօք ռուքքօթռինս և ն:

Իսկ եթէ պնդուն այս պատճառեալ ցցէ 'ի սկսբութէ սոորին որովայնի, կամ աղեաց, յայնժամ պարտ է 'ի վար արկանել զհետագայ հապս: Ա՛ռ մի և կէս տրամ սաբօնէ պիանքս, մի սքռուբօլս՝ սակաբէնս, երկու սքռուբօլս՝ էսթռաթթս տի մաչէռօնէ, և մի սքռուբօլս աշօք սօքքօթռինս. խառնեալ զանգեա բարիոք զամենայնն, և արարեալ հապ՝ որ կըշռիցէ երեք ցորեան, տուր չափով յերեք հատէ մինչև ցինն:



ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս զանազան պէտակի յօդուածացաւութեանց, որ ասի՝ ռէումաթիզմս, կամ սուրէրիֆս:

Կրկնակի է տեսակ յօդուածացաւութեան. մինն ասի ռէումաթիզմս ինֆիամմաթօռիս կամ աքութս, այսինքն բորբոքողական, կամ սուր յօդուածացաւութիւն: Իսկ միւսն՝ ռէումաթիզմս քռոնիքս, այսինքն երկարատև յօդուածացաւութիւն. կամ որ նոյն է՝ ռէումաթիզմս քոն ֆէպպռէ, և ռէումաթիզմս սէնցա ֆէպպռէ. այսինքն ջերմով, և առանց ջերմոյ: Արդ՝ ճառեսցուք յառաջիկայդ նախ՝ 'ի վերայ բորբոքողական յօդուածացաւութեանն, և յետ այնորիկ 'ի վերայ երկարատև յօդուածացաւութեանն:

ՅՕԳՈՒԱԾ Ա.

Յաղագս բորբոքական յօգուածոցաւորեալ։

Այս տեսակ յօգուածացաւութիւն բազումք անուանեն սովորաբար նաև ռէումաթիզմ կօթթօղջ, այսինքն ոտնաւութիւն. և ունի մեծ նմանութիւն ընդ ախտին, որ ասի՝ կօթթա, այսինքն ոտնաւութիւն, և ձեռնաւութիւն։ Իսկ բնակարան նորա են սովորաբար շարժական յօգուածքն անդամոց, մանաւանդ այն անդամն որ կոչի՝ մէմպռանա, այսինքն թաղանդ կամ մաշկ։ Ախտս այս զոյգ ունի ը իւր զատակագոյն ցաւս, և երբեմն զուռոյցս, և զբորբոքումն, և տիշրատէտ հատարակօրէն 'ի գարնանայինն, և յաւարան աշնանային եղանակի։

Յաղագս պատճառաց այսորիկ ախտի՝ յոյժ համաձայն են պատճառաց բորբոքական տենդի, զորմէ խօսեցաք 'ի տեղի իւրում. ամին իրի արգելականութիւնն որ և ելեալ հոսմանց, անչափապէս գործածութիւնն ոգիաւոր հեղանիւթոց են, փոփոխութիւն օդոց և ամենայն տաժանաւոր փոփոխմունք 'ի տօթոյ առ ցուրան՝ կարեն պատճառել զախտս զոյս, որպիսի են արուեստաւորացն, որք զմասն ինչ աւուրն անցուցանեն վառատակելով 'ի հուր, և զմիւս մասն 'ի ջուր։

Դարձեալ, խոնաւութիւն հանդերձից, անկողնոյ, և ամենայն ագանելեաց, ընկողմանիլն 'ի վերայ գէՃ գետնոյ, մնալ ընդ երկար թացեալ ոտիւք, ճանապարհորդութիւն 'ի գիշերային պահու պատճառեն զախտս զոյս. նոյնպէս մարթ է ախտիս այսմիկ և առաւել պատճառիլ 'ի սատակութիւն կամ յարդելակոնութիւն սովորական հոսմանց. բազում անգամ և յառաջ գայ 'ի հնագոյն ախտից, որք ապականեն զկառնուածս, որպիսի են ախտն, որ ասի աքօռպութիւ, գաղղիական ախտն, և տենդն ընդհատ յաշնանային եղանակի, են։ Առաւել գտանի ախտս այս

'ի տեղիս ցածագոյնս և դէՀս, և այն առաւելապէս 'ի գիւղականս, որ աղքատին, և ցնցոտի զգեստիւք բնակին յայդպիսի խոնաւագոյն տեղիս, և ապրին թանձրասնունդ, և գժուարամարսելի կերակրեղինօք։

Յաղագս նշանաց այսորիկ ախտի։

Ախտս այս հասարակօրէն սկսանի յընդհանուր նշանաց տենդի, որպիսի են թալկութին, արագութին զարկի բաշկի, ցնորմունք, ծարաւ ևն։ Ախտակիրն զգայ յարատև զցաւ ինչ ստամանդական, և անկայուն, որ 'ի գոյզն ինչ շարժմանէ ստամանայ, և աՀն։ ցաւքս այսոքիկ 'ի վեր երևին մանաւանդ յանդամս այսուցեալս։ 'Ի դիպուածս ախտիս, եթէ երակ հատանի, հասարակօրէն արիւնն ունի զնշանս կշտացաւութեան կամ բորբոքման թոքոց։ այսինքն մաշկս, և պարուտակս ունի 'ի վերայ իւր։ Իսկ տենդն որ զուգընթաց լինի այսմ ախտի, սովորաբար լինի ընդհատ։ Անտանելի ինն ցաւ 'ի վեր երևի 'ի յօդուածս շարժականս, և ցաւս այս հասարակօրէն սկսանի 'ի ծնգաց, ուր և յարատևեալ մնայ զօր մի ոչՀոյն կամ զերկու, կամ աւելի, և կամ պակաս, և յետ այնորիկ եղեալ տարածանի 'ի զանազան մասունս թաղանթի, այսինքն մէմբռանայի, և առաւել ևս 'ի յօդուածս, որք միանգամ զառաջինն էին լքեալ և վշտացեալ։ և ցաւս այս լինի այնքան 'ի սաստկագոյն ասաՀմանի, մինչև եթէ ոք կամիցի թեթևապէս շօշափել զայն վշտացեալ մասունս, իսկոյն ախտակիրն զաղաղակ բարձեալ գոչէ բարձրաձայն։ բայց ոչ լինի միշտ 'ի մի և 'ի նոյն ասաՀմանի։ այլ առաւելանայ կամ նուազն ըստ եղանակի՝ որ պատահի 'ի դիպուածս տենդի։ սովորաբար զուգընթաց լինի այսուց ինչ անՀնարին 'ի վեր երևեալ 'ի ծունգըս, և 'ի ձեռս։

Զիք ինչ պայմանեալ սահման յապաղման այսր տեսակի ախտի, երբէք ուրեք մարթ է 'ի ձեռս բերել զկատարեալ ապաքինուն 'ի մէջ 14 կամ 15 աւուրց։ երբեմն յերկարաձգի մինչև ցքառասուն կամ ցվսեթսուն աւուրս։ և երբեմն դադարեալ բորբոքումն տենդի, ոչ փարատին ցաւքն յօդուածոց գլխովին։ և բազում անգամ ևս յերկարաձգեալ նեղեն զսխատա-

կիրն հանապազորդեալ ամիսս ինչ. և է երբէք զի 'ի սաստկութէ այսորիկ ախտի 'ի վեր երևեալ մնայ 'ի յօդուածս թանձրացումն ինչ հիւթաւէտ, որ յոյժ նեղէ, և բազում անգամ ևս բառնայ զշարժականութիւնն. մերթ դարձեալ 'ի վեր երևի կուտակումն ջուրց 'ի յօդուածս ծնդաց. ուռոյցքն որ 'ի վեր երևի 'ի յօդուածս յայս՝ 'ի սաստկութէ ախտին պատճառէ զգումարումն խժային հիւթոց 'ի պատառս յօդուածոց։

Գիտել արժան է, եթէ այսուցս այս յորժամ գոյանայ իսկ և իսկ զկնի դադարման տենդի, սովորաբար լինի դժուարաբուժելի։ Յերկարաձգեալ մնալով այսորիկ ախտի, և հասեալ 'ի յեսին աստճան, սովորաբար ուռոյցն ժամանէ 'ի մասունս յօդուածոց միջնողին, և 'ի յօդուածս ստորին ծամելեաց, և ուրեք ուրեք 'ի թոքս, և 'ի թաղանթս, և 'ի յօդս կարգեալս և վերաբերեալս յաճառս օդընկալաց, և յայնժամ իսկ և իսկ զհետ գայ ցաւ ինչ 'ի կուրծս, և դժուարութի 'ի շնչառութիս, հաղ, թքանել զարիւն. և համառօտիւ կամեցեալ խօսել, նշանք կշտացաւութեան, կամ բորբոքման թոքոց լինովին 'ի վեր երևին. երբեմն ևս ընդհատութիւն, և անհամաձայնութիւն զարկի բազկերակին։ Ընդարև յայդպիսի դիպուածի ախտակիրն գտանի 'ի մեծի որոգայթի. բայց 'ի վերայ այսր ամենայնի ոչ է պարտ հատանել զյոյս. քանզի փորձիւ քաջայայտ ճանաչեմք, եթէ նիւթն՝ որ պատճառէ զախտս զայս, 'ի բնութեան իւրում ոչ է տրամադրեալ 'ի յորտադրել զկղխայթումն, և զքաղցկեղ. բայց յարատեւեալ մնալ նշանաց շարժականութէն, իսկ և իսկ լքեալ թողու զկայան իւր սեպհական, այսինքն զկուրծս, և անցեալ գնայ վերատին 'ի յօդուածս անդամոց։

Ախտս այս անխտրաբար գտանի 'ի ծերունիս, և յերիտասարդս. բայց սովորաբար յարբունս ծաղկահասակի քան կամ 25 ամաց։ Պատմէ քուլլէն հեղինակն, եթէ ուրեք ակամաւես լեալ է գտանել այսորիկ ախտի 'ի պատանեակս 'ի հասակի 12 կամ 13 ամաց, բայց յոյժ ցանցառակի։ Դարձեալ, ախտս այս ունի զբազմազան անուանս պատշաճեալս ինքեան 'ի մասանցն՝ յորս պատաղի. սմին իրի յորժամ ծագի 'ի միանուանս որկորոյ՝ կոչի թօուչիքօլլօ. իսկ յորժամ յարձակի 'ի մէջս, կոչի՝ լումպաճՀինէ. այլ եթէ

գոյանայ 'ի յօգուածս ազգերն ընդ ոսկեր ինչ ա-
նուանեալ չիս, յորչորչի շնաթիքա։ Գիտել արժան
է, եթէ 'ի գիպուածս լսմպաՃՃինէի ցաւն լինի յոյժ
դժնեայ և ազդու. և երբեմն եւս գտանի ախտն կո-
չեցեալ քօլիքա նէֆրիթիքա. բայց յայսպիսի դէ-
պուածի բնաւ ոչ երևի փսխումն։ Դարձեալ՝ գի-
տելի է, եթէ ախտս այս հազիւ ուրեք լինի որոգայ-
թաւոր, յորժամ ոչ տուեալ լինի պատՃառ, կամ
արդելումն ինչ, եթէ 'ի կերակուրս, և եթէ 'ի կա-
ռավարութիս. և հասարակօրէն խօսելով, վախճան
առնու ախտս այս և եղերի սովորաբար Ճանապար-
հաւ քրտանց կամ այլ ինչ ցուկմանց. և բազում ան-
գամ եւս յորդառատ հոսմամբ միզի, կամ գաշտանի,
և կամ թթախտական արեանց, ևն։

Յաղագս կառավարութեան և դեղորէից բորբոքողական յօգուածացաւութեան։

Կառավարութիւնք և խնամատարութիք այսորիկ
յօգուածացաւութեանն գրեթէ նոյն են ընդ դարմանա-
տարութեան բորբոքողական տենդի, զորմէ լիովին խօ-
սեցաք 'ի տեղւոջ իւրում։ Եթէ ախտակիրն լինիցի
յարբունս հասակի երիտասարդութեան, և արիութեան,
յայնժամ պարտ է անվրէպ երակ հատանել, զոր և
մնրթ է կրկնել քանիցս անգամ պահանջիցէ հարկն։
Պարտ է լոյծ պահել զորովայնն միջնորդութիբ կակ-
ղացուցիչ լուծողականաց, գրեխաց, և զովացուցիչ
լմպելեաց. սմին իրի պատշաՃագոյն է 'ի գործ ար-
կանել յայնմ գիպուածի տէքօյիօնէ տի թամարինդ-
տի, սիէռօ տի լաթթէ խառն ընդ ֆիլօռ տի թաս-
թառօի, և ինֆուզիօնէ տի սէնա, ևն։ Կերակրոցն
պարտ է լինել թեթև և սակաւաքանակ, զորօրինակ
հրով եփեալ խնձորն, քռէմօռ տի ավէնա, արգանակն
որթու, կամ պարանոցի ոչխարի ևն։ Իսկ 'ի դէ-
պուածս, յորում ջերմութին լինի ընդհատ, և ցաւքն
յարատև, յայնժամ պարտ է անդորրել զախտակիրն
'ի մահճի, և 'ի գործ արկանել զլմպելիս պատշա-
Ճեալս առ 'ի դրդռել և 'ի շարժել զարտաշնչութիս
մարմնոյ. և այսպիսի պատշաՃական լմպելիք են շէ-
Ճուկն կաթին գինեխառն. յորոյ վերայ պարտ է յա-
ւելուլ և սրիռիթօ տի մինտէռէռօ ևն։ Եւ զկնի

հանգստանալոյ սխտակրիս աւուրս ինչ 'ի մահճի, պարտ է տալ նմա մի տրամ՝ քռէմոռ տի թառթառս, և կէս տրամ՝ կումին տի կուաեաքս փոշի արարեալ, արկեալ 'ի բաժակի՝ ընդ գինեիսառն շինուին կա-թին. և եթէ ցաւն լինիցի յոյժ սառակագոյն, յայն-ժամ պարտ է փոյթ մեծ ունել առ 'ի բարիոք ծածկել, և պահպանել զվշտացեալ մասունս սխտակրին, արկեալ 'ի վերայ զպատառակալ կամ զայլ ինչ ծածկարան. և այդպէս 'ի բարիոք խնամատարութեամբ պարտ է յուսադիր լինել միշտ, եթէ նոյն ինքն բնութիւնն կատարելագործեալ զինքն՝ սատանայ զապաքինութիւն առանց պէտս ունելոյ այլ իմն նպաստից, բնական իմն լուծմամբ որովայնի, կամ հոտամբ քրտանց, և միզի, կամ թթախտական արեանն 'ի ընդացն ևն:

Բայց գործ մեծ է յայդպիսի դիպուածի քաջ նկատել զհանգամանս բնութեանն, և ծանուցեալ զհակումն և զմիտումն բնութեանն, պարտ է նպաստամատոյց լինել նմին ըստ պահանջելոյ հարկի պարագայիցն, 'ի գործ արկանելով զթմբրեցուցիչ՝ կամ զխաղաղեցուցիչ դեղորայս. քանզի յայդպիսի դիպուածի եթէ խոհական ընտրանօք, և ուշիմութիւ'ի գործ արկցին այդպիսի թմբրադեղք, յառաջ բերեն զմեծագոյն օգտաւէտութիս, մեղմեն զսառակութիւն և զդժնէութիւն ցաւոցն, զորս կրէ սխտակիրն. եթէ զփոքր առցէ ոք միանգամ երիք կշռացաւութիւ, անվրէպ ունի կրել զնոյն յընթացս կենաց իւրոց՝ այլև եր կիցս և երիցս անգամ. նոյնպէս պարտ է իմանալ և վասն սխտի կոչեցելոյ ռէումատիզմոն, այսինքն յօդուածացաւութիւն: Արդ՝ 'ի գործ արկանել պարտ է նախ յամենայնում երեկոյի 15 կամ 20 շինթս լաւատնօ լիգուիտօ՝ արկեալ 'ի վերայ միոյ բաժակի սովորական ըմպելեաց, և զնոյն չափ մարթ է կրկնել ըստ պահանջելոյ հարկին:

Գիտել արժան է, եթէ 'ի դիպուածս սխտիս զինի լուծողականացն կամ դատարկման հիւթոցն (որք պարտին լինել յոյժ ցանցառակի, և 'ի սակել մեծագոյն հարկի, և այն դէպ 'ի յաւարտ սխտին), սովորաբար օգտաւէտ լինի գործածութիւնն բաղանեաց. պարտ է մուծանել զսխտակիրն 'ի ջերմ բաղանիս, կամ թացեալ զսպունգս 'ի մէջ ջերմագին ջրոյ արկանել 'ի վերայ վշտացեալ մասանց սխտակրիս, և զկնի սոցա պարտ է փոյթ մեծ ունել

առ 'ի պահպանել զախտակիրն 'ի ցրտոյ, և 'ի խոնաւ օդոյ։

Վասն միւս այլ տեսակի յօդուածացաւութիւն կոչեցելոյ լոմպաճինէ և շնաթիքա, գիտելի է՝ եթէ վերջինչեալ դեղորայք և կառավարութիւնք են յոյժ պատշաճողականք, որովհետև զուգընթաց ունին ը իւրեանց միշտ զնոյն ցաւ ասատկագոյն, և զդժնէութիւն։ Իսկ թօռչնքօլլօ անուանեալ տեսակն յօդուածացաւուն, սովորաբար ոչ լինի սաստիկ և ծանր իբրև զվերոյիշեալս. սմին իրի դիւրագոյն ճանապարհաւ մարթ է խնամ տանել նմա, միայն ջերմագինս պահպանելով զմասունս վշտացեալս՝ այսինքն զպարանոցն. և եթէ երբեմն յայդպիսի դիպուածի կից լինիցի ընդ ախտիս ջերմուն ինչ երևելի, ևս տաղկութիւն ինչ, յայնժամ պարտ է կանոնաւորել զախտակիրն զովացուցիչ, և լուծիչ կերակրեղինօք, և ը պահանջելոյ սասակութեն ջերմութեան կամ բորբոքութիւն՝ երակ հատանել։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս ախտի կոչեցելոյ ռէումաթիզմօ փոօնիքօ, այսինքն երկարատև յօդուածացաւութի։

Ընդ ախտիս այսմիկ հազիւ ուրեք զուգընթաց լինի ջերմուն ինչ երևելի. հասարակօրէն գոյանայ ախտս 'ի վերայ մասանց ինչ մարմնոյ, որպէս 'ի վերայ թիկանց կամ ուսոց, պարանոցի, կամ երիկամանց, ևն. նշանք այսուցիկ և բորբոքմանն յոյժ սակաւ կամ ոչ բնաւ երբէք 'ի վեր երևին 'ի վշտացեալ մասունս յայսմ դիպուածի։ Ընթակայ այսր ախտի են մանաւանդ ծերունիք, յորս սովորաբար լինի յոյժ դժնեայ, և բազում անգամ ևս անբուժելի. 'ի դիպուածս ինչ դէպ լինի ուրեք ուրեք՝ զի ախտակիրն անկեալ դնի զրկեալ 'ի շարժմանէ ամենայն անդամոց, և ժամանեալ 'ի յետին աստիճան նիհարութիւն, և մեղմօրինակ տենդի. յայնժամ բացայայտակի ծանօթ առնէ մեզ զդումարուն ախտարծարծ հիւթոց 'ի կուրծս։ Բազում անգամ ևս պատահի, եթէ ախ-

տակիրն մնայ գլխովին հաշմանդամ. պատմէ ուսի հէ-
ղինակն, եթէ ականատես լեալ է կաշկանդման միա-
նանց ձեռաց և բազկի՝ մինչև բառնալ շարժականու-
թէ յօդուածոց, և արմկան։

Յաղագս դարմանապարուրէից և դեղորէից երկարպա-
յօդուածացառուրէ։

Ի գիպուածս այսորիկ ախտի գրեթէ միշտ յամե-
նայն նուազս պարտ է 'ի գործ արկանել զնոյն դար-
մանս և զնոյնս, զորոց գրեցաք 'ի վեր անդր 'ի գի-
պուածի ախտին կոչեցելոյ՝ ռէումաթիզմ աքութս.
կերակրոցն պարտ է լինել զովացուցիչ և կակղացու-
ցիչ, պատրաստեալ մանաւանդ յուտելեաց՝ որք ու-
նին զաճողական զօրութիւն. զորօրինակ շլորն, խըն-
ձորն, հաղարջն եփեալ կաթամբ ևն, որք են կերա-
կուրք յոյժ պատշաճողականք 'ի գիպուածս ախտիս։
Վկայէ առպութնօթ հեղինակն, եթէ շինճուկն կա-
թին ևս անվրէպ է յոյժ պատշաճական կերակուր,
'ի ձեռն որոյ գործածութեան ասէ լեալ ականատես
ապաքինութիւնք բազում ախտակրաց. նոյնպէս օգտա-
ւէտ է 'ի գիպուածս ախտիս քուէմօռ տի թառթա-
ռս, զոր պարտ է 'ի գործ արկանել յաւուրս բա-
զումս ջրով ավէնայի, որ մեզմէ մանաւորապէս
զցաւս յօդուածոց, և յառաջ բերէ զբազում օգտա-
ւէտ ներգործութիւնս, մանաւանդ եթէ յաւելցի 'ի
վերայ սակաւ ինչ կոմմա տի կուաեաքս, որպէս գրե-
ցաք 'ի վեր անդր, կամ փոքրիկ գրգալիւ արձոյ՝ թին-
թուռա վոլաթիլէ տի կոմմա տի կուաեաքս, պատ-
րաստեալ բաժակ մի շինկաւ գինեխառն կաթին. և
զայսիս զայս պարտ է 'ի կիր առնուլ երկիցս յա-
ւուրն, ցորքան մնայ ախտակիրն 'ի մահճի, և 'ի գործ-
ածութիւն այսր գեղորէից պարտ է յարատեւել ա-
ւուրս ութ, կամ և ստաւել, նկատեալ զպարտ-
դայս նուազութիւն ցաւոցն, և կարողութեան ախտա-
կրին. բայց պարտ է միջահատել յաւուրս ինչ, և
յետ այնորիկ վերստին 'ի գործ արկանել։

Եւ ընդ գործածութիւնն այսր գեղոյ պարտ է միան-
գամայն 'ի վերայ վշտացեալ մասանցն դնել զազրուկս
կամ զվէշիքաթօռիս, և կամ զչերմագին սպեղանիս,
որոց գործածութիւնն բազում անգամ լինի շահաբեր
առաւելքան զազրուկս, և զվէշիքաթօռիսն։ Պատմէ

վերոյիշեալ հեղինակին, եթէ ականատես լեալ է օգտաւէտութեան իրիք սպեղանւոյ պատրաստելոյ կպրաձիւթով, և եդելոյ 'ի վերայ ցաւագնեալ մասանց 'ի դիպուածս սաստկագին ցաւոց այսորիկ ախտի. նոյնպէս վկայէ գոլ օգտաւէտ և այս թինթուռա տի քանթարէլա, զոր պարտ է նոյնպէս օծանել 'ի վերայ վշտացեալ մասանց:

Դիտել արժան է, զի եթէ գործածութիւն այսոցիկ դեղորէից ախտակիրն ոչ յառաջ դիմեսցէ 'ի լաւանդը, ոչ է պարտ իսկ և իսկ հատանել զյոյս. այլ յարատեւել պարտ է 'ի գործածութիւն: Երկարատև յօդուածացաւութիւնս այս ունի նմանակցութիւն ընդ ախտին կոչելոյ՝ կօթիթա, այսինքն ոտնաւութիւն. սոքին իրի մարթ է և ս 'ի գործ արկանել զդեղորայս ինչ պատշաճականս և սեպհականս նմին ախտի. եթէ ախտակիրն ունիցի զբաւական կարողութիւն, օգտաւէտ է նաև գործածութիւն բաղանեաց, և ջերմագին ջուրց վտակելոց 'ի ծծմբանիւթ հանքաց. մանաւանդ եթէ զուգընթաց լինիցի ընդ ախտիս և ախան կոչեցեալ աքօուպութիւնքս: Իսկ եթէ ախտս այս պատճառեալ ինչ յարգելականութենէ իրիք սովորական ծորման հիւթոց, յայնժամ յառաջ քան զամենայն ինչ պարտ է փոյթ մեծ ունել առ 'ի գրգռել և շարժել զհոսումն կամ զթորումն զայն սովորական. որ եթէ լինիցի, մարթ է անվրէպ ակն ունել ապաքինութիւն առանց պէտս ունելոյ այլ ինչ դեղորէից:

Դարձեալ, օգտաւէտ է 'ի դիպուածս յայս գործածութիւնն բուսականաց, որպիսի են՝ սպիտակ մանանեին, թռիֆօլիս բալուսթռէն. զոր պարտ է պատրաստել արկեալ 'ի մի բաժակ գինի կամ 'ի ջուր. նոյնպէս շահաւէտ է գործածութիւնն վայրենի բաղեղան, որ ասի ըստ իս՝՝ էտէռա թէռռէսթռէ, երկցկի, և այլ նման դառնահամ բուսոց. բայց սակայն 'ի գործածութիւն այսոցիկ բուսականաց պարտ է յարատեւել որքան մարթ լիցէ՝ ժամանակս յերկարաձիգս. ապա թէ ոչ՝ բազում անգամ լինի վայրապար և անօգուտ:

'Ի դիպուածս ախտիս պատշաճական են նաև կիզողական դեղորայքն. եթէ ցաւն 'ի վեր երևեսցի 'ի թիկունս կամ յուսս, պարտ է կիզողականացն լինել 'ի բազկի. իսկ եթէ ցաւն լիցէ 'ի մէջս, յայնժամ պարտ է 'ի վար արկանել զկիզողական դեղորայս 'ի

արունս, կամ յաղդերս։ Բայց գիտել արժան է, զի ախտս այս հատարակօրէն լինի խառն ընդ սքօռպուլթիւն ախտի, ուստի և օգտաւէտ է գործածութիւն դեղորէից՝ որք են բնութիւն դառն, և միանգամայն լուծիչ. ամին իրի քաջ նկատեալ զբնութիւն ախտակրին, մարթ է 'ի գործ արկանել զյեռագոյ դեղոյս։ Եւ մի ունկի՝ ազնուագոյն քինա քինա, և կէս ունկի՝ ընտրագոյն ռասպառպառս. և փոշի արարեալ արկ 'ի մէջ բաւականաչափ գինւոյ. և 'ի գործ արկ երկու կամ երիք բաժակս յաւուրն, հայեցեալ բարիոք 'ի պարագայս լուծման որովայնին. իսկ եթէ գործածութիւն քինա քինայի սոսկապէս զօրեսցէ զբաւականին 'ի լուծումն որովայնի, յայնժամ պարտ է 'ի բաց թողուլ զռասպառպառսն։

Հուսկ յետոյ գիտելի է, եթէ ցաւքն այսորիկ երկարատև յօդուածացաւութիւն՝ բազում անգամ գուշակէն զախտն դաղղիական. վասն որոյ յայսմ դիպուածի յորժամ չիցէ հնարաւոր այլազգ սատնալ զապաքինութիւն, անվրէպ պարտ է ձեռնամուխ լինել 'ի գործածութիւն անդկաւ պատրաստեալ դեղորէից։ Դարձեալ, 'ի դիպուածս ախտիս բազում անգամ օգտաւէտ լինի գործածութիւն բաղանեաց ցրտագին ջրով, մանաւանդ եթէ ջուրն լինիցի աղէհամ. նոյնպէս օգտաւէտ է շրջիլ 'ի ղբօսանս ձիով կամ 'ի հեռախոտս։

Յաղագս օգտաւէտ նպաստիցն, զորս պարտ է 'ի գործ արկանել ըմբռնելոյ ախտին։

Անձինք, որք ենթակայ են ստէպ ստէպ վերադարձման այսորիկ տեսակի յօդուածացաւութեան, փոյթ մեծ ունել պարտին առ 'ի բնակիլ 'ի տեղիս վիճակեալս ջերմ և չոր օդոց, և անձնասահ լինել որքան մարթ իցէ 'ի գիշերային օդոյ, 'ի խոնաւութենէ ոտից, և 'ի թացեալ զգեստուց. պարտ է նոցա զգենուլ բազում հանդերձս, մանաւանդ կրել զսասուեայ ինչ բաճկոն 'ի վերայ մերկ մարմնոյ։ Կերակրոցն պարտ է լինել բարիոք կանոնաւորեալ, քաղցրայինք. և թեթև և դիւրամարսելիք, և այլն ամենայն, որք պատշաճին 'ի դիպուածս ախտին կոչեցելոյ կօթթա։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Յաղագս ախտի կուէրելոյ՝ կօլԹա, որ ըստ մեզ ասի յօդացաւուԹի։

Ախտս այս ունի զերկեակ տեսակս, մին ասի կօլԹա ռէկօլառէ, այսինքն յօդացաւուԹի կանոնաւորեալ. և միւսն՝ կօլԹա ռիսալիԹա կամ իռռէկուլառէ, այսինքն յօդացաւուԹի ոչկանոն կամ վերադարձեալ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս կանոնաւորեալ յօդացաւուԹեան։

Ախտս այս 'ի մէջ ամենայն ախտից առաւել բացայայտակի ծանօԹ առնէ մեզ զվրիպակս և զպակասուԹի գեղորէից, և զօգտաւետուԹի բարեխառնուԹեան, և արհեստի. շուայտուԹին և անգործուԹիւնն են սեպհական սկիզբն և աղբերակն այսորիկ ախտի. վասն այսորիկ ապահովագոյն միջոց 'ի ձեռն որոյ մարԹ է անձնապահ լինել յախտէս, է վարել զգործունեայ և սԹափ կեանս, և վայելել 'ի բարեխառնուԹեան։

Յաղագս պատճառաց այսորիկ ախտի։

Թէպէտև անգործուԹին և անբարեխառնուԹին են գլխաւոր և սկզբնական պատճառք այսորիկ ախտի յօդացաւուԹեան, բայց են և այլ բազում ինչ ինչ պատճառք, յորոց մարԹ է յառաջ գալ, որպիսի են անխոնջ և անպայման պարապումն յընԹերցանուԹեան, յաճախ գործածուԹի ԹԹու և բարկ հեղանիւԹոց, հսկումն, տխրուԹիւնն կամ ճնշումն ոգւոյ, արգե-

ջուն կամ պակասութեն իրեք սովորական թորման կամ հոսման • զորօրինակ քրտանց ոսից, արտաշնչութեն մարմնոյ, գաշտանի, և ն: Անդործութեն, շուայտութեն, ոգիաւոր հեզանիութիւն, անկարգ կանանցաբարոյութեն՝ են առաւել սովորական պատճառք այսորիկ ախտի:

Գիտելի է, եթէ ախտս այս միօրինակ գտանի յերիտասարդս, և 'ի կանայս, թէպէտ և յոյժ ցանցառակի • բայց կանայք ամուլք, և որոց արգելեալ է հոսումն տեռատեսական արեան՝ են 'ի հասարակի ենթակայ այսմ ախտի • նոյնպէս մելամղձոտք, և որոց տիրապետէ առաւել ախտն թթախտական՝ են ենթակայ ախտիս • դարձեալ, կարէ ախտս այս տապրափոխիլ ժառանգապէս, այսինքն անցանել 'ի սերունդս: Ախտս այս հասարակօրէն 'ի վեր երևի յոտս, և յայնժամ կոչի՝ բօտակռա, կամ կօթթա սի բիէտի, այսինքն ոտնառութեն • և երբեմն յարձակի 'ի ծունգս, և կոչի՝ կօնակռա • և ուրեք ուրեք գոյանայ 'ի ձեռս, և յայնժամ յորջորջի քիռակռա, կամ կօթթա ալլէ մանի, այսինքն ձեռնառութեն: Հուսկ յետոյ յորժամ 'ի վեր երևի 'ի ծագն ազդեր, և 'ի գագաթան ոսկերն կոչեցեալոյ խաչիս, և 'ի մերձադիր մասունս, որք շրջապատեն զայն ոսկր, յայնժամ կոչի՝ շիսթիքա • նոյնպէս յօդուածք անցից արդանդի որ ասի՝ կուանիա, և ձգանք նորին են սեպհական բնակարան այսորիկ ախտի:

Յաղագս նշանաց այսորիկ ախտի:

'Ի հասարակի նշանք այսորիկ ախտի են անմարսութեն, թմբրութեն, փուքն, թեթևագին ցաւք գլխոյ, տաղտկութեն, և երբեմն և փսխութեն • ախտակիրն զգայ զթուլութեն ինչ, և զլքութեն • սովորաբար կրէ զցաւ ինչ 'ի մէջս, և զգայ յանձին զոյդ ընդ ցաւոցն միանգամայն և ցրտութեն ինչ, որպէս սովոր է պատճառիլ յընդերկար շօշափմանէ սառնամած ջրոց • բազում անգամ տարապայման ելն աճն ախորժակն սիաակրիս, և զկնի երկուց կամ երից աւուրց սաստկանայ յանչափս, և զգայ ախտակիրն զցաւ ինչ թեթև 'ի միզարանն, և հուսկ յետոյ 'ի վերայ յարձակի նմա ակամայ ելն հոսումն արտասուաց • և այդոքիկ

նշանք բազում՝ անգամ են յոյժ գժնեայ, և գուժաբերք, մանաւանդ եթէ զուգընթաց լինի ընդ նոսին և բորբոքումն ինչ։

Գիտել արժան է, եթէ ընդհանրապէս խօսելով, սաստակութիւն այսորիկ ախտի զուգակշռի ընդ ամենդի, որ զուգընթաց լինի ընդ նմին. ամին իրի եթէ ամենդն կամ ջերմութիւն լինիցի սուր և սակաւատև, նշանակ է թեթևութեան ախտին. բայց ընդ հակառակն՝ եթէ լինիցի յարատև, յամի և մեղմ, յայնժամ գուշակ է յերկարաձգութեան ախտիս։

Ախտս այս հասարակօրէն բացայայտի և ծագի 'ի գարնանային եղանակի, կամ 'ի սկզբան ձմերան յետագայ պայմանաւս։ Երկու կամ երեք ժամու զկնի հասարակ գիշերոյ՝ ախտակիրն զգայ զցաւ ինչ յանկարծահաս 'ի բթամատն ոտին կամ ձեռաց. երբեմն 'ի կրունկն, երբեմն ևս յոլոգն՝ որ իտալերէն ասի քավիլեա, կամ 'ի թամբն սրունկց. և ընդ այսր ցաւոյ միանգամայն զգայ յանձին զդացումն ինչ ցուրտ նման զդացմանն, զոր սովորաբար զգայ իւրաքանչիւր ոք 'ի հեղուլ անդ զջուր ցրտագոյն 'ի վերայ վշտացեալ մասանց, և զդացումն այս յարատևէ ըստ աստիճանի տենդին. և յետ այնորիկ իսկ և իսկ ցաւս այս աճի, և մնալ հաստատուն 'ի պատուածս ոտից, և յայնժամ ախտակիրն նեղի անհնարինս բազմակերպ ցաւովք, և համարի կիսեալ և տաշորեալ ոտիցն, եթէ կամեսցի կոխել յակամայս, կամ եթէ ոք հպեսցի 'ի նա շօշափմամբ ևն։ Հուսկ յետոյ այնքան սաստկանայ զայրացումն վշտացեալ մասին, մինչև ախտակիրն ոչ ևս կարէ տոկալ փոքու իմիք շօշափման, և ոչ իսկ գնալոյ ուրեք մերձ իւրոյ սենեկի. և զայս օրինակ սաստակութիւն ցաւոցն կրէ մինչև յընթացս 24 ժամուց զկնի սկսանելոյ ջերմութես. և վշտացեալ մասն ախտակրին սկսանի այտնուլ, և կարմրանալ. յորում և 'ի վեր երևի խոնաւութիւն կամ քիրան ինչ թեթևագին. և դէպ յառաւօտեան պահն 'ի քուն լինի ախտակիրն, և 'ի վերայ գայ նորա քիրան ինչ չափաւոր. ահա ըստ այսմ օրինակի սպառի առաջին բորբոքումն այսորիկ ախտի, որ և յարատևեալ մնայ առաւել կամ նուազ ըստ հասակի, ըստ կարողութեան, և ըստ տրամադրութեան ախտակրին։

'Ի գիպուածս ախտիս՝ հիւանդն սովորաբար յերեկոյեան պահու գտանի միշտ 'ի վիճակ յուռեգոյն. և

յառաւօտեան պահու՝ 'ի բարեգոյնն. և հասարակօրէն խօսելով, բորբոքումս այս օր քան զօր նուազի, և ախան զվախճան առնու Ճանապարհաւ նպաստից իրիք արտաշնչութիւն մարմնոյ, զորօրինակ միզի, քրտանց, կամ այլ ինչ դատարկման, յընթացս քանի ինչ աւուրց, կամ շաբաթուց, և կամ յընթացս քանի ինչ ամսոց, ըստ պարագայից կազմուածոց մարմնոյ և չափու հասակի ախտակրին. եթէ ախտակիրն ելցէ երիտասարդ, և վիճակեալ առողջարար կազմուածոյ, յարատեւէ ախտն մինչև 14 աւուրս. եթէ ելցէ ուժաթափ և ծերունի, յարատեւէ 9քանի ինչ ամիս. և 'ի հասարակի խօսելով, չիք ինչ պայմանեալ սահման յարատեւման այսորիկ ախտի. եթէ ախտս այս լինիցի հնացեալ, ցաւքն յարատեւեն և դադարին դիւրաւ և 'ի սուղ ժամանակի. քանզի 'ի հնանալ այսորիկ ախտի, նուազի նորա ուժգնութիւն, և բազում անգամ ևս բացեալ լինին այսուցքն իւրովի, յորմէ և ծորին արտաքս ախտարծարծ հիւթքն։

Գիտելի է ասէն, եթէ ըմբռնեալքն այսու ախտիւ լինին ենթակայ ձգռամանց, փքոյ, և պնդութիւն որովայնի, թթախտութիւն և այրեցողութիւն միզի են. եթէ ախտս այս ելցէ ժառանգական, կամ յոյժ հնագոյն, սովորաբար լինի անբուժելի։ Եթէ յառաջ եկեալ ելցէ 'ի պատահական ինչ պատճառէ, և դեռածին, յայնժամ լինի դժուարաբուժելի։ Դարձեալ գիտելի է, եթէ 'ի գիպուածի՝ յորում յօգացաւութիւն 'ի վերայ գայ, կամ զհետ գայ իրիք ախտի, զորօրինակ ջրգողութիւն, շնչարգելութիւն, և քառօրեայ տենդի, յայնժամ լինի անելնաս և դիւրաբուժելի. քանզի այդոքիկ ախտք հարկաւորապէս նպաստամատոյց լինին ապաքինութիւն այնորիկ ախտի. մինչ զի եթէ ոչ կայցին այսոքիկ ախտք՝ 'ի վերայ հասանէր մեծագոյն որոգայթ։ Քաջայայտ է ամենայն ումեք, եթէ աւարտն այսորիկ ախտի ոչ է այնքան երկիւղալի. և ընդ հակառակն՝ յոյժ երկիւղալի և որոգայթաւոր, եթէ ախտս այս 'ի վերայ յարձակի 'ի գլուխն կամ ընդմտանէ յաղիսն, և առաւել քան զամենայն ազեռալի է այն՝ յորժամ 'ի վեր երևի յուղեղն, 'ի սիրտն և 'ի փայծաղն. սակայն եթէ յընթացս այսոցիկ որոգայթաւոր պատահարաց զգրդռի փսխումն ինչ, կամ լուծումն որովայնի, յայնժամ չիք այնքան երկիւղ. և բազում անգամ մարթ է 'ի

ձեռն այդպիսի դատարկմանց կամ թորմանց ատ-
նալ զապաքինութիւն։

Յաղագս խնամոպարութեան և դեղրբէից այսորիկ ախտի։

Որովհետև 'ի գիպուածս այսորիկ ախտի չկք ինչ մասնաւոր և ազդու դեղ, սմին իրի պարտ է ձեռնամուխ լինել մեծաւ ժրաջանութեամբ 'ի բարիոք նկատումն խնամատարութեանց, զորս պարտ է 'ի գործ արկանել 'ի ժամանակի յորս տեսէ ախտս այս, և զկնի դադարման նորին։ Եթէ ախտակիրն ունի երիտասարդ, և զօրաւոր, կերակրոցն պարտ է լինել թեթև, զովացուցիչ, և լուծիչ. ցորքան յարատև մնայ ըմբռնումն ախտիս, պարտ է 'ի գործ արկանել զշիճուկն կաթին կամ շիռօբբօ ոչ քաբէլվէնէռէ գաղջ ջրով. և յաւուրն քանի ինչ անգամ պարտ է մատուցանել նմա սակաւաքանակ արգանակս. որովհետև ծոմապահութիւն կամ ժուժկալութիւնն ոչ է վասն այնպիսի ախտակրի՝ որ ունի ուժեղ։ Իսկ եթէ ախտակիրն ունի վիճակեալ տկար ինն կազմուածոյ, և սովորեալ ունի ժուժկալութիւն, յայնժամ չէ պարտ նեղել զնա, այլ արժան է թոյլ տալ նմա կալ յարատև յիւրումն սովորական ժուժկալութիւն, և մատուցանել պարտ է նմա սղնուագոյն դիտի, կամ այլ զօրաւոր ըմպելիս փոքրիկ բաժակաւ. նոյնպէս պատշաճ է յայնմ գիպուածի գինեխառն շիճուկն կաթին, որ շարժէ և գրգռէ զարտաշնչութիւնս մարմնոյ առանց բնաւ պատճառելոյ ջերմութի ինչ. օգտաւէտագոյն ևս լինի, եթէ յաւելցի 'ի վերայ շիճուկի կաթին տալ վօլաթիլէ օլիօզօ, կամ սբիռիթոսի քոռնօ սի չէռվօ. իւրաքանչիւրոցն չափու քանակութեն պարտ է լինել փոքրիկ գրգռալ ինչ սրճոյ՝ 'ի մի բաժակ շիճուկի կաթին, զորս պարտ է կրկնել երկիցս յաւուրն։

'Դարձեալ, յոյժ յարմարական և շահաւէտ է՝ ցորքան մնայ ախտակիրն 'ի մահճի, մատուցանել նմա փոքրիկ գրգռալ ինչ սրճոյ թինեթուռա վօլաթիլէ տի կուռեաքօ 'ի մի բաժակ ջերմ շիճուկի կաթին, և դեղս այս ունի զմտանաւոր ինն գործունէութի առ 'ի գրգռել զարտաշնչութիւնս 'ի գիշերի. որովհետև 'ի գիպուածս ախտիս առաւել ազդու և ապահով ճանապարհ՝ որով մարթ է նպաստամատոյց լինել ախ-

տակրին, է գրգռելն և շարժելն զարտաշնչութիւն մարմնոյ. ուստի և զայսմանէ և եթէ պարտ է փոյթ մեծ ունել, և պարտ է միանգամայն պատատել զոտս և զարունս մուշտակաւ, կամ այլ ինչ ասուեղէն ըստ գեսակիւք, և թողուլ մնալ ցութ կամ ցատան աւուրս. երբեմն և ս ցերկու կամ ցերիս շաբաթս, կամ և ս ըստ երկար ըստ յարատևութեան ցաւոց. վկայեն հեղինակքն եթէ 'ի մէջ արտաքին դեղորէից, զորս պարտ է 'ի վար արկանել 'ի դիպուածս յայս, չիք ինչ առաւել շահաւէտագոյն դարման առ 'ի մեղմել զբորբոքումն և զայտուցն քան զգործածութեան դեղման կամ բրդոյ, որում պարտ է լինել գզեալ, և թանձրատիտ:

Գ. արձեալ, պարտ է ախտակրիս՝ ցորքան յարատևէ ըմբռնումն ախտին, վայելել 'ի մեծի անդորրութեան, եթէ ըստ մարմնոյ, և եթէ ըստ հոգւոյ. հրաժարիլ պարտ է յամենակերպ իրաց, որք նեղեն և զայրագնեն զոգի, և յամենայն արտաքին գրից սպեղանեաց, որք պատճառեն զանդրադարձումն ախտի յօգացաւութեան: 'Ի դիպուածս ախտիս երբակ հատանելն, և լուծողականքն ոչ են բնաւ 'ի գործ արկանելի՝ բայց եթէ սակս մեծագոյն ինն հարկի, և այն և ս մեծաւ զգուշութիւն. քանզի ըստ վկայելոյ հեղինակաց՝ անթիւ անկարգութիւնք զհետ գան յայդմանէ, եթէ ոչ 'ի կիր արկանիցի 'ի պատշաճագոյն վայրկենի, այսինքն 'ի սկզբան ախտին, և այն յանձինս, որք վիճակեալք են արիւնային և հիւթաւէտ բնութեան. եթէ ախտակիրն իցէ երիտասարդ և ուժեղ, յայնժամ մարթ է լուծանել զորովայնն 'ի գործ արկանելով զկակղացուցիչ և զլուծիչ դրեխս, զորս պարտ է կրկնել ըստ պահանջելոյ հարկին՝ ցորվայր յարատև մնայ ըմբռնումն ախտին:

Դ. իտելի է, եթէ գտանին բազում միջոցք 'ի ձեռն որոց մարթ է կարճել զըմբռնումն ախտիս, կամ գլխովին հատանել, և անհետ առնել. բայց ոչ է մարթ ապահովապէս 'ի գործ արկանել. քանզի դեռ ոչ ոք 'ի գիտնականաց զփորձ էառ նոցին անվնաս շահաւէտութեամբ, և բազումք յանդէտս և յանզգոյշս գործածութիւն այդպիսի դեղորէից զրաւեցան 'ի կենաց. այլ առաւել ապահով և ըստ իրաց ինչ օգտաւէտ դեղն, զոր մարթ է 'ի գործ արկանել յայսմ դեպուածի յատուկն ասատկութեամբ և դժնեղութեամբ ցա-

ռոցն՝ է լաւագոյն լեգուիտոն, զոր պարտ է մատուցանել ախտակրին յերեկոյեան պահու յերթալն 'ի մահիճ 30 կամ 40 շիթս, կամ եւ առաւել, կամ նուազ ըստ պահանջելոյ ուստակութեան նշանացն։ Դեղս այս մեղմ զցաւս, և անդորրացուցանէ զախտակիրն, գրգռէ զարտաշնչութիւնն մարմնոյ, և առթէ ղՃգանս, որ ըստ իտալականին՝ քռիզէ։

Յաղագս խնամոպարութեանց և դեղերէից, զոր պարտ է 'ի վար արկանել ղՆի դիւրանալոյ ախտիս։

Յետ դադարման սիւռիս՝ պարտ է ախտակրին 'ի վար արկանել մի կամ երկու չափ թինթուռա ամառա ակ ռապառուպառս, կամ զայլ ինչ ստամոքսային լուծիչ և դառնագին դեղս, կամ զարմատս փոշիացուցեալ և լուծեալ 'ի մէջ թեթև գինւոյ կամ դարօղաւոյ, որպիսի են ՃԷնցիանա, քինա, հանգերձ կինամոնիւ, սէրբէնթառիա վիռՃինառիաիւ, կեղևով նարնջոյ ևն։ և յայնժամ պարտ է ախտակրին ըստ իրաց ինչ ծոմապահել, և չափաւորապէս շրջիլ 'ի զբօսանս ձիով կամ հեռիոտս։

Յաղագս հնարից որովք մարդ է արգելուլ զվերադարձումն ախտի յօդացաւոցն։

Դժուար է 'ի դադարման այսր ախտի գտանել ինչ ինչ հնարս, և միջոցս, 'ի ձեռն որոց հնար լցէ խափանել զվերադարձումն կամ զվերակրկնումն այսրիկ ախտի, կամ գէթ մեղմել զդժնէութեն նորին։ Բայց գիտել արժան է, եթէ այսոքիկ միջոցք բնաւոչ կարգին 'ի դասս դեղորէից։ Պատմէ պուքհան հեղինակն, եթէ ականատես լեալ է բազում անգամ բազմաց, որք գործածութեամբ քինա քինաի և այլ դեղորէից ստանային զսպաքինութեն, բայց զկնի քանի ինչ ամաց վերադառնայր 'ի նոսա ախտն եւ չարագոյն։ Արդ 'ի հասարակի խօսելով, թէպէտ դժուարին և վտանգաւոր լիմն է արգելուլ զվերադարձումն ախտիս 'ի ձեռն դեղորէից, բայց մարթ է ըստ իրաց նուազել զսաստակութեն, և զդժնէութեն նորին։ և այսմ հնար է լինել միայն բարեկարգութեամբ կերակրելոց, և զբօսանաց։ քաջայայտ է ապաքէն, եթէ մարթ է փոխել զհաւնուածս մարմնոյ ախտակրին 'ի

ձեռն պատշաճագոյն լինն կարգադրութեանն 'ի կեանս, և այդպէս հնար է գլխովին արմատաքի խլել զախտս զայս, միայն թէ ըստ բաւականին յարատև 'ի գործ դնիցին պայմանեալ կանոնագրութիւնքն 'ի կերակուրս, զորոց ընդ երկար ճառեցաք 'ի տեղւոջ իւրում: Այնպէս պարտ է 'ի գործ արկանել զչափաւոր վառտակս ըստ տանելոյ կարողութեանն ախտակրին. և անուամբս վառտակ՝ իմանամք առաէն զթեթև ինչ ճեմունն, 'ի ձեռն որոյ շարժի քիրտն. ահա այդոքիկ երկու միջոցք են գլխաւոր և առաւել օգտաւէտագոյն 'ի գործ արկանելիք 'ի գիպուածս ախտիս:

Դարձեալ, խրատեմք զախտակիրն կանխել յընթրիսն, և ոչ ամենապարել իսկ և իսկ զկնի ընթրեացն 'ի մահիճս. պարտ է հրաժարիլ յոգիաւոր հեղանիւթոց, մանաւանդ 'ի գործածութիւն սաստիկ գինւոյ. և 'ի գարնանային և յաշնանային ժամանակի 'ի գործ արկանել սակաւաչափ մակնէզիա պիանքա, և ռապառպառս, որոց գործածութիւնն է օգտաւէտագոյն ոչ միայն առ 'ի մաքրել, այլև առ 'ի բանալ և 'ի գրգռել: Ա՛ռ մի արամ՝ մակնէզիա պիանքա, և 24 կշիռ ցորեան՝ ռապառպառս փոշիացուցեալ. զորս արկեալ 'ի հեղուկս 'ի մէջ միոյ բաժակի ֆիօռ տի քամոմիլլայի, մատո՛ ախտակրին ըմպել միանգամ, և զայս չափս կրկնեա՛ միանգամ և երկիցս ընդ միջոց երկոտասան ժամուց, եթէ ոչ պատճառեսցի մեծ լուծումն որովայնի. և յետ այնորիկ 'ի գործ արկ զոմանս գառնագին առատաքաղցին գեղրայս, որպէսի են լինֆուզիօնէ տի թանաչէթօ, կամ թռիֆոլիօ բալուստռէ, կամ ճէնցիանա, կամ ֆիօռ տի քամոմիլլա, կամ պառտանս ևն: Գիտել արժան է, եթէ պատշաճագոյն ժամանակն յոր արժան է 'ի գործ արկանել ախտակրիս զայսոսիկ վերոյիշեալ գեղրայս կամ հեղուկս, է ամիսն մարտի, և հոկտեմբերի, յորս պարտ է յարատև 'ի գործ արկանել երկու կամ երիս շաբաթս երկու բաժակս յաւուրն: Դարձեալ 'ի գիպուածս ախտիս շահաւէտագոյն է գործածութիւն կիզղականի, և կամ վէշիքաթօռիօի:

ՅՕԳՈՒԱԾ Բ.

Յաղագս երիրորդ պէսակի յօդացաւուրէան, որ կոչի՝ կօրնա ռիսալիա, այսինքն անկանոն յօդացաւուրիւն, և յաղագս նշանաց նորին։

Ի դիպուածս, յորում յօդացաւութիւն 'ի վերս է լանէ 'ի գլուխն, ցաւն անդամոց դադարի, այտուցն փարատի, և 'ի վերս երևի դժնեայ ցաւ ինչ գլխոյ՝ զոյգ ունելով ընդ իւր զասատիկ ինն քնափութիւն, զպտոյտ գլխոյ, զբռնական ինն շարժումն մկանանց մարմնոյ, և զնեղացնորութիւն. և երբեմն ժամանեալ հասանէ 'ի թոքսն, և յայլ մերձագիր մասունս. և յայնժամ զգայ ախտակիրն զասատիկ ինն ճնշումն, զհազ, և զդժուարաշնչութիւն. բազում անգամ և պատճառէ զփողացաւութիւն, զբորբոքումն խցանաց, զթքումն արեան, զթոքաժեռութիւն, զընչսարգելութիւն, զանձկութիւն, և զնուաղումն, ևն։

'Ի դիպուածս, յորում ախտն ժամանէ 'ի ստամոքսն, յայնժամ զգայ ախտակիրն ստամոքապէս ըզստաղակութիւն, զփսխումն, զծարաւ, զվիշտս, և զցաւ ինչ 'ի ծագն ստամոքսի կամ մակորովայնի, և գըլխովին ուժաթափ լեալ լքանի։ Իսկ եթէ ընդմտանէ 'ի ստորին որովայնն, յայնժամ 'ի վերս երևի սըրտացաւութիւն, բորբոքումն, և ազդու ինն ցաւ 'ի ստամոքսն, կշտացաւութիւն, խէթ, երիկամնաժեռութիւն ևն. զգայ միանգամայն ախտակիրն զաղտկութիւն, զնոդկանք, զլուծումն որովայնի, և երբեմն և զարիւնախառն փորհարութիւն, մէզն թանձրացեալ, և գաճալից երբեմն։ Եթէ ախտակիրն ելէ անցեալ զաւուրքք, զգայ զվիշտս ախոնդանաց, և զցաւ ինչ ճնայուն 'ի փորոտիսն։ Գիտել արժան է ասելն, եթէ յոյժ դժուարին ինն է ծանօթութիւն այսր տեսակի յօդացաւութիւն, եթէ ոչ գտանիցի զոյգ ընդ նմա ըմբռնումն առաջին տեսակի կանոնաւորեալ յօդացաւութիւն։

Յաղագս դարմանապարուն և դեղերէից այոր պէտք յօդացուն։

Յորժամ տեսանեմք զախտ յօդացաւութեան յարձակեալ 'ի գլուխն կամ 'ի կուրծս, հարկ 'ի վերայ կայ բուռն հարկանել զամենայն հնարաւոր միջոցաց, և զհնարից, և փութալ ելուցանել զայն 'ի վայր յոտս։ ամին երբ պարտ է յոլով անգամ ընկողմանեցուցանել զախտակիրն 'ի մէջ ջերմ ջրոյ մինչև ցսրունս, և միանգամայն պարտ է դնել 'ի ներքանս ոտից զսպեղանիս յօրինեալս 'ի չոր թզոյ, և 'ի մանանխոյ։ Դարձեալ, 'ի գիպուածս մեծի հարկաւորութեան, պարտ է 'ի գործ արկանել վէշկաթօռիս, որոյ ներգործութիւնն է առաւել աղդու և շուտափոյթ։ նոյնպէս օգտաւէտ է դնել զտզրուկս, մանաւանդ 'ի վերայ վշտացեալ մասին մարմնոյ։ Պատմէ պուքհան հեղինակն, եթէ ակամատես լեալ է 'ի գիպուածս ախտիս մեծագոյն օգտաւէտուն գաղջ ջրոյ, յոր պարտ է յաւելուլ և սակաւաքանակ հասարակ օճառ, և 'ի ներքս դնել զոտս ախտակրին, որոյ գործածութիւն յօդացաւութեան վերնակողմանն ստորինքանէ յոտս։

Դարձեալ, պարտ է երակ հատանել յոտից, և 'ի գործ արկանել զատամոքային ջերմ լուծողականս։ Պիտոյ է ախտակրին մնալ 'ի մահճի, և անձնապահ լինել 'ի ցրտոյ, մանաւանդ եթէ 'ի վեր երևեսցին նշանք ինչ բորբոքման։ Բայց 'ի գիպուածս, յորում ախտս այս պաշարէ զատամոքսն, և տայ ախտակրին զգալ զթեթև ինչ ցրտութեան, յայնժամ պարտ է ձեռնամուխ լինել 'ի գործածութեան ջերմագին քօռտիալից։ այսինքն դեղորէից, որք զօրացուցանեն զսիրտն։ այսպիսի է ընտրագոյն գինին եռացեալ կինամոնիս, կամ սոսկապէս ջուր կինամոնի, անանխոյ, և օղի, կամ գարօղի։ Եւն։ Պարտ է փոյթ մեծ ունել առ 'ի շարժել զքիրսն գործածութիւն ջերմ ըմպելեաց։ Եթէ ունիցի զզղուանս կամ զնոզկանս, և զյօժարութիւն ինչ 'ի ժայթքել, պարտ է տալ նմա ինֆուզիոնէ տի քամոմիլա կամ այլ ինչ գաղջ ըմպելի առ 'ի գրգռել և դիւրացուցանել զժայթքումն։

Իսկ 'ի գիպուածս յորում ախտս այս ընդմտանէ 'ի փորոտիան, և պատճառէ զլուծումն որովայնի, յայնժամ պարտ է փոյթ ունել առ 'ի արդելուլ ըն-

լուծումն որովայնի 'ի ձեռն կակղացուցիչ դեղ-
բէից, որպիսի են՝ ռապուպառս, մաննա, և։ և միան-
գամայն 'ի վար արկանել զհնարս առ 'ի քարշել 'ի
ստոր կոյս զախտարծարծ հիւթս։ սմին իրի պարտ է
մատուցանել նմա զհեռեալ փոշիս։ Ա՛ռ բօլվէռէ
տէլլա քօնթէսսա տի ռէնթ, և չէնթաւռէա մի-
նօռէ, յիւրաքանչիւրոցն մէն մի տրամ, զորս խառ-
նեալ ընդ իրերաց բաժանեա յերկոտասան հաւասա-
բաչափ մասունս, և տուր ախտակրեդ յիւրաքանչիւր
երիս ժամս զմի մասն։

Յորժամ ախտս այս յարձակի դէպ յերիկամունս,
յորմէ և պատճառի խռովութիւն կամ ամբոխմունք 'ի
մէջ աղեաց, և ցաւ ինչ յաւազընկալ մասունս երի-
կամանց, յայնժամ հարկ է առատապէս ըմպել տէքս-
ցիօնէ տի ռատիչէ տի ալթէա, և միանգամայն սատ-
ծել ջերմագին ջրով զծագն երիկամանց, և 'ի գործ
արկանել զգրեխս կակղացուցիչս։ և յետ այնորիկ
պարտ է տալ նմա զդեղ ինչ մեղմիչ կամ խաղաղիչ։
Իսկ եթէ ցաւն լինի յոյժ սաստիկ և գժնեայ, մարթ
է տալ նմա 30 կամ 40 շիթս լավտանո լինգուիտո՝ ար-
կեալ 'ի մէջ մլոյ բաժակի սովորական ըմպելւոյ։

Գիտել արժան է աստէն, եթէ որք միանգամ զփորձ
առեալ են այսորիկ ախտի, պարտին մեծապէս ըզ-
գոյշ լինել յամենակերպ վշտաց, և 'ի ձանձրութեց,
որք մարթին պատճառել զվերակրկնումն ախտիս։
այլ նոքա, որք չեն բնաւ զփորձ առեալ այսորիկ ախ-
տի, բայց ըստ բերելոյ պարագայից կազմուածոյ նո-
ցին, կամ ըստ հանգամանաց վիճակի և վարուց նո-
ցին ենթակայ լինիցին առաջին ըմբռնման, յայնժամ
պարտ է փոյթ մեծ ունել 'ի պահպանել զոտս իւ-
րեանց ջերմագինս և անխոնաւս։ և սովորաբար պարտ
է նոցա դնել զոտս 'ի ջուրս ջերմագինս, մանաւանդ
յորժամ զգան զցաւ ինչ թեթև 'ի գլուխն։ և յայս-
պիսի դիպուածի օրէն է միանգամայն յաւելուլ 'ի
վերոյ ջրոյ զոճառն հասարակ, որպէս առացաք 'ի
վեր անդր։ Դարձեալ, շահաւէտագոյն է յայսմ դի-
պուածի գործածութիւնն շաքարի ընդ ջրոյ բաղա-
դրելոյ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Ի վերայ որովայնալուծութեանք կամ փորհարութեանք. զոր իբա-
լայիւ կոչէն՝ գիառռէա, կամ ՔԼՈՌՈՍՈ պի ՎԷՆԼՌԷ։

Ի ներքին կողման աղեաց՝ մաճեալ կամ ծեփեալ կան յորդ լորձունք, որք են սանձային և լպրծուն, կարգեալ առ՝ ի վայր սահեցուցանել զ՝ի ներքս եղեալ նիւթսն, և միանգամայն պահպանել զաղիս՝ ի տախտ, ՝ի սուր, յաղի, և՝ ի կծու հիւթոց. նմին իբրև երբ խանգարին կամ՝ քայքային այնք լորձունք, ապնքն խառովեալ թուլանան, յորմէ ծագին բուռն հոսմունք կամ լուծմունք այլևայլ եղանակաւ. վասն որոյ և որոշի ըստ նիւթոյն, որք արտաքս թորին. երբեմն լինի շՃկային, երբեմն մաղձային, երբեմն խժային, երբեմն որդնային, և երբեմն և սրիւնային են, որպէս տեսցի ստորև։

ՊապՃատ որովայնալուծութեանք կամ փորհարութեանք։

Որովայնալուծութիւն ծագի կամ յառաջանայ յայնմ ամենայնէ, որք հրապուրեն և բռնադատեն զթեղս և զերակս փորոտեաց կամ աղեաց, որպիսի են՝ մաղձային և խժային շոգիքն, և կուտակեալ ստամոքսային և խթիչ հիւթքն. և և այն ամենայն, որք առՃեցուցանեն զգայունական շարժումն և զդրդիռ աղեաց. որպէս շատ ուտելն զհատունացեալ պտուղս, զսունկս, զսեխ, զմեղրապոպ, զվարունգ, են։ Մարթ է և յառաջ գալ՝ ի խմորմանէ կերակրոց, ՝ի ՃՃեաց, ՝ի տախտ հիւթոց, ՝ի սուր մաղձէ, ՝ի պանկրատական հիւթոց, յուժգին լուծողական դեղոցէից, ՝ի դբժուարամարսելի կերակրոց, յոգիաւոր հեղանիւթից, ՝ի թիւնաւոր իրաց, ՝ի գրգռիչ և՝ զայրացուցիչ դեղոցէից, ՝ի ցրտոյ, ՝ի յարգելմանէ արտաշնչութեան մարմնոյ, ՝ի խցմանէ մեսենտրական մատանց, յերկա-

բատև հիւանդութէ, 'ի տկարութէ ջղաց և փորոտեաց, 'ի դժուար ծագմանէ ատամանց։ Այլև բազում անգամ պատճառի փորհարութիս այս 'ի բորբոքմանէ ստորին որովայնի և արգանդի, և յայլ բորբոքիչ ախտից։ Յաւելուլ մնրթ է 'ի վերայ այսոցիկ պատճառաց և գյոռութիւն կլիմայից և զանբարեխառնութի օդոց երկրին՝ յորում բնակին։

Նշան որովայնալուծութէ կամ փորհարութէ։

Դասարակօրէն զուգընթաց լինին ընդ ախտիս՝ թուլութի, ծնշումն աղեաց, անախորժակութի կերակրոց, այտուցն և կոնջիւն փորոտեաց, խստութի որովայնի, թեթև ինչ նոզկանք, և ցաւ 'ի փորոտիսն, և ստէպ ստէպ մղանք 'ի դատարկել զորովայնն, և երբեմն ևս խիթ երաստանի, որ ասի՝ թէնէզմօ։ Զարկ բաղկին երբեմն լինի ընդհատ։ Մէզն սովորաբար լինի թանձր և սակաւաքանակ. մորթն մարմնոյ ցամաք. դէմքն ոժգոյն. գողգոջումն սրունից, տաքութի ոտից, թօթափումն հերաց։ Նմանապէս զուգընթաց լինի ընդ սմա ջերմութի, նուաղումն, և հիւծումն, և ըստ յերկարելոյ լուծմանն առաւելու և տկարութին։

Հուսկ յետոյ եթէ ոչ բարիոք խնամ տարցի, փոխարկի 'ի ջրգողուն, կամ 'ի նեխուն, և երբեմն ևս 'ի վերայ գայ բորբոքումն և սուր ցաւ փորոտեաց հանդերձ փսխմամբ, և հեծկլտանօք, որ է նշան քաղցկեղային, և մահահրաւէր։ Բայց 'ի դիպուածս՝ յորում որովայնալուծութէն լինի ինքնեկ 'ի բնուստ շարժեալ, յայնժամ ոչ է այնքան վտանգաւոր, և ոչ է պիտոյ նպաստ դեղոցէից. այլ մանաւանդ բազում անգամ լինի օգտակար ինչ հոսումն. վասն որոյ և չէ պարտ արգելուլ զայն, բայց եթէ յորժամ յինաւցէ ընդ երկար ժամանակ, և տկարացի հիւանդն երևելապէս։

Յաղագս մասնաւոր նշանաց ազգի ազգի որովայնալուծութեանց։
և յաղագս խնամապարութեանն նոցին։

Ա։

Յորժամ հոսումն կամ լուծումն որովայնի պատճառի 'ի մաղձէ, յայնժամ ասի յիտալացւոց՝ տիառռէա պիլիօզա։ որոյ նշանքն են գառնութիւնն բերանոյ, նողկանք սրտի, թուլութիւնն վիրոռեաց, կանաչութիւնն կղկղանաց, սաստիկ ցաւն ազեաց, և սառրին որովայնի, և գրգռելութիւնն լերդի։ և դեղորայքն են՝ խաշուն թամարինտիի, շինձուկն կաթին, սակաւաքանակ քռէմոռ տի թառթառօն, և հասունացեալ պտուղքն, և եւ գրեթն որ պատրաստեալ իցէ գալջ ջրով խառն ընդ օսիմէլէի կամ շինձուկի կաթին։

Բ։

Եթէ որովայնալուծութիւնն պատճառեալ իցէ 'ի ճճեաց կամ յորդանց, յայնժամ կոչի՝ տիառռէա վէռմինօզա։ որոյ նշանքն են՝ յորդ հոսումն որովայնի, զազրահոտութիւնն կղկղանաց, հանգերձ գորշագոյն դրտիւ, վրդովումն սառրին որովայնի, արտելումն ճճեաց կամ որդանց 'ի սառրուստ, որոյ ոմանք են կենդանի, և ոմանք մեռեալ կամ նեխեալ։ Եւ դեղորայքն են՝ բօլվէռէ տի ստանեօ, օլիս տի բալմաքռիսթէ, և լուծողականքն պատրաստեալք խաշնդեղիւ, և քալօմէլանօիւ։ և յետ այսոցիկ օրէն է տալ հիւանդին զջուրն կրոյ՝ միայնակ, և կամ խառնեալ սակաւ ինչ խաշնդեղ, որով զօրանան աղիքն և արգելանի վերատին ծնունդն որդանց։

Գ։

Յորժամ հոսումն որովայնի յառաջ գայ 'ի ցրտոյ կամ յարդելականութէ արտաշնչուած մարմնոյ, յայնժամ կոչի՝ տիառռէա սիէռօզա։ որոյ նշանքն են՝ առատօրէն հոսումն որովայնի զօրէն ջրոյ, ցամաքութիւնն մորթոյ մարմնոյն, սաստկութիւն ցաւոց ազեաց, արտաքսումն ստէպ ստէպ փքոց, ուժգնութիւնն ծա-

քաւոյ, պակասութիւն միջի, ձգտումն որովայնի, կիզումն երաստանի, ևն. և գեղոցայքն են՝ թրմոցն սամպուքի, բոլվէռէ տի ռովէռ, էմուլսիոնէ առաջ պէքա, յաւելլով 'ի նոյն ցորենաջրի ափիոն, կամ թիւրակէս ևն:

Դ.

Եթէ որովայնալուծութիւնն պատճառեալ ելցէ 'ի խժային գոլորշեաց կամ 'ի մաղձային շոգեաց, յայնժամ կոչի՝ ռիսառէա մուքոզա. որոյ նշանքն են յորդառատ հոսումն սոսնձային հիւթոց, այտումն և ձգտումն որովայնի, արտաքսումն փքոց, ցաւն աղեաց, թուլութիւն փորուոտեաց. հիւթքն՝ որք ստէպ ստէպ արտաթորին 'ի ստորուստ, երբեմն լինին գեղին հարեալ 'ի գոյն մոխրոյ, երբեմն ջրային և ջերմ, երբեմն մածուցիկ և անհոտ. երբեմն ցուրտ և սպիտակ, և երբեմն էս սպիտակ և մրրալից. նաև երբեմն են կանաչագոյն և զազրահոտ, և երբեմն մսագոյն և անհոտ: Ցաւն՝ որպէս և ջերմութիւն երբեմն լինին սաստիկ, և երբեմն թեթև. հուսկ յետոյ եթէ ոչ բարիոք ինամ տարցի, գլխովին համաձայնի ըստ մասին նշանացն ախտին կոչեցեալոյ՝ ֆէպրէ լէնթա նէռվօզա. զորմէ խօսեցաք 'ի տեղւոջ իւրում, և գեղոցայքն այսորիկ հոսմանն են՝ արմատն առնիքաւ, և ոչուցիոնէ տի կոմմա առապիքա:

Է.

Եթէ որովայնալուծութիւնն պատճառի 'ի խթիչ և 'ի սաստիկ լուծողական դեղոցէից, 'ի մաղձէ, 'ի թունից, և յայլ ինչսակար հիւթոց, յայնժամ կոչի՝ տիսառէա կասթռիքա. որոյ նշանքն են՝ առատօրէն հոսումն մաղձի և մաղասի, սաստկութիւն ծարաւոյ և ցաւոյ, խէթն սրբանի, ձգտումն փորուոտեաց, նոպկանք ստամոքսի, ժայթքումն, ձգտումն, ևն. և գեղոցայքն են խաշուն երիցկի, կամ չայի, խաշընգեղն, և իբէքաքուանա, որ ոչ միայն մաքրէ զստամոքսն, այլ միանգամայն տայ ստամոքսին զմտանաւոր ինն ոյժ, և զօգնութիւն, որով զօրացեալ արտաքս վանէ զինչսակար նիւթս, և զինացեալս յոնմարսուցուցէ: Քան և չորս կշիռ ցորեան իբէքաքուանան

չափ է բարիոք և բաւական առ 'ի արտադրել զայ սոսկ ներգործութիւն. մի կամ երկու աւուրք զկնի փսխողականի՝ օրէն է տալ հիւանդին կէս տրամ կամ 40 ցորեան խաշնդեղ. զոր կ՚պարտ է կրկնել երկու կամ երեք անգամ, մինչև ցդադարիլ հոսման որովայնի :

'Ի դիպուածս, յորում հոսումն որովայնի ծագի 'ի սաստիկ լուծողական գեղոլէից և 'ի թիւնաւոր նիւթոց մտելոց 'ի ստամոքսն, յայնժամ օրէն է ախտակրին ըմպել առատօրէն պէվանտա տիլուէնթէ, այսինքն գեղ հեղեղիչ. որպիսի են՝ էմուլսիոնէ առապէքա, գաղջ կաթն, իւղն նշոյ կամ ձիթապտղոյ, և՝ : Եւ 'ի վախճանի մարթ է և ա տալ սակաւաչափ լաւտանս լիգուիտս, կամ տրամաչափ տիասքօռաիս առ 'ի խաղաղել զզայրացումն աղեաց :

Ղ.

Եթէ հոսումն որովայնի ելցէ արիւնաշաղախ, յայնժամ կոչի տիսառռէա քռուէնթա, որոյ գեղորայքն են՝ թրմոցն խաշնդեղի, կամ քասքառիլիսի, և յաւելուլ պարտ է 'ի վերայ նոցա ցորեան մի կամ երկու աղլուամէ :

Ճ.

Յորժամ որովայնալուծութիւն յառաջ գայ յուժեղութէ և 'ի բռնադատութէ, որ պատճառի յարգելականուէ իրիք սովորական հոսման, որպիսի են հոսումն թանչից, դաշտանի, և՝, յայնժամ ասի՝ տիսառռէա սթէնիքա. որոյ գեղ է երակահատութիւն, և 'ի չլինել այսմ կարելի, հարկ է հինգ կամ եօթն տզրուկս դնել 'ի վերայ երաստանի, և փութալ զամենայն յարմարագոյն հնարս 'ի վար արկանել իսկ և իսկ 'ի նոյն ժամանակի, առ 'ի դիւրացուցանել և շարժել վերատին զհոսումն զայն սովորական. որովհետև զայսմանէ կախեալ կան՝ ոչ միայն վնասատումն փորհարութէ, այլ միանգամայն կեանք ախտակրին :

Ը.

Յերկարաժամանակեայ որովայնալուծութիւնս ա-

առանց ջերմութեան, որոյ նախնական պատճառ գտանելի լինել տկարութիւն աղեաց կամ փորոտեաց, յայնժամ կոչի՝ տիսառուէա քռօնիքա. որոյ առաւել գործունեայ դեղորայքն են՝ իբէքիքուանա, տալով հիւանդաց երկու ժամէ յերկու ժամ մի կամ երկու կշիռ ցորեան, յաւելով 'ի նոյն մէն մի ցորեան՝ էլէօցուքքառօ տի մաչիա: Նոյնպէս երկար փորձառութեամբ՝ զի գերազանց դեղ է գործածութիւն փոշւոյ ինչ՝ որ այսպէս բաղադրի: Քսան կշիռ ցորեան՝ ռատիչէ տի քօլօմպօ, և տասն կշիռ ցորեան՝ ցուքքէռօ առօմաթիծծաթօ տի մաչէռ: Եւ զայս պարտ է առնուլ երիցս կամ չորիցս անգամ յաւուրն:

Բաց 'ի դեղորէից ասսի՝ օգտաւէտ յոյժ եղիցի արբուցանել հանապազօր արնիքա արմատն լոսեալ, բայց առցի մի աւելի քան զտասն ցորեանս առ մի նուազագ, և տացի չորս ժամ միջոց ընդ մի և ընդ միւս արբուն այսր չափոյ: Են բժիշկք, որք առնուն 'ի կիր զսերմն ջրախոտի, զկեղևն սիմառուպսի, զքասքառիլիա, զնօշի տի կիսանաէ, զլէնօ քամբէՃՃիօ, զկօմմա քինօ, զնէժն արաբիոյ, զթօռմէնթիլլա, և ն:

Թ.

'Ի գիպուածս, յորում որովայնալուծութեան լինի պարբերական, յայնժամ կոչի՝ տիսառուէա բէռիօտիքա. զայսպիսի լուծողութիւն չէ պարտ բնաւ արգելուլ. քանզի միշտ է ՃԻգն ինչ բնութեան, որով արտաքս վանէ յինքենէ զախտաբեր հիւթս. որ եթէ մնայցին 'ի ներքս, արդարև հիւանդակար լինէին բնութիւնք. և են ոմանք, որք կրեն զայսպիսի լուծմունս որովայնի 'ի սահմանեալ ինչ ժամանակս իւրաքանչիւր ամաց, որպէս 'ի գարնանային՝ մանաւանդ յաշնանային եղանակի, և այս է պարգև ինչ շնորհեալ բնութեան առ 'ի պահպանութիւն առողջութեան. և արդարև լինի վտանգաւոր արգելուլ զայսպիսի օգտաւէտ լուծումն. այլ միայն օրէն է յայսպիսի ժամանակս հրաժարիլ 'ի մսեղինաց:

Փոքրիկ մանկունք են յոյժ ենթակայ այսպիսի լուծման որովայնի, մանաւանդ 'ի ժամանակի, յորում ծագին ատամունք նոցին. բայց ուր ուրեմն հիւանդակար լինի նոցա, և բաղումք ևս 'ի նոցանէ զարդարին ատամամբք առանց կրելոյ ինչ վնասս: Դակ

եթէ տեսանի ինքնաբերբ լինել մանկանց այսպիսի լուծումն, յայնժամ պարտ է տալ նոցա մի փոքրիկ դրդալիս սրձոյ մակնէգիա պիանքա՝ ընդ ջորս կամ հինգ ցորեան ռապառապառօի. եթէ կրկնեացի դեղս երիցս կամ չորիցս, անտարակոյս լինի օգտակար:

Ժ.

'Ի դիպուածս, յորում հոսմունքն պատճառին 'ի բաստիկ կրից, և յուժգնագոյն տագնապէ բնութիւն, յայնժամ տուի՝ տիսառէա տէլլա բասսիոնէ, կամ աֆֆէցիոնէ տէլլ' անիմո: Պարտ է վարիլ մեծաւ զգուշութիւն յայսպիսի դիպուածս. փսխողականն ոչ է պատշաճաւոր, իսկ լուծողականքն ոչ են այնքան ապահով, բայց եթէ լինիցին յոյժ թեթև, և սակաւ քանակութիւն: Առաւել պատշաճաւոր դեղորայքն են՝ խաղաղացուցիչ կամ անթիսբասմոտիչի. վասն որոյ պարտ է տալ հինգ կամ տասն շիթ լաւանդ լիգուիտո 'ի մէջ միոյ բաժակի ինֆուզիոնէ տի վալ էրիանա, կամ տի բուլէնտիո՝ յամենայն ուրթ ժամս միանգամ, մինչև ցդադարիլ նշանացն:

Դարձեալ՝ զուարճութիւն սրտի և անգորրութիւն հոգւոյ 'ի դիպուածս յայս հարկաւորապէս պահանջի: Երբեմն սա 'ի հանդարտելոյ զլուծումն որովայնի, ես գիտեմ 'ի գործածութիւն յետագայ դեղորէից: Ա՛ռ կէս ունկի՝ տիսաքսառիս, և մեց ունկի՝ ջուր հասարակ, տուր հիւանդին երկու [illegible] մ՛երեք դրդալ սեղանոյ յաւուրն:

ԺԱ.

'Ի սոցին կարգ դասի և լիէնթէռիա ձայնեալ փորհարութիւն, որ պատճառի 'ի խանդարմանէ գործողութիւն մարսողութեան, և 'ի խափանմանէ առնելութեանց կաթնածու երակացն, որք բերանաբաց կան յաղիս, որով ի՛ջանեն կերակուրք անմարս: Բազում անգամ ևս ծագի յերկարատև և 'ի հնագոյն սոսկ փորհարութէ, և 'ի յարիւնռուշա որովայնալուծութենէ, ևն: Այս ունի մեծ հաղորդակցութիւն կամ ազդակցութի ընդ հոսման չէլիաքս անուանեալ շընչերակի, և 'ի պատահիլ ումեք, մանաւանդ ծերոց՝ յոյժ դժուարաւ ապաքինի. ուստի այնպիսիք զամ-

նայն ընթացս հիւանդութեան իւրեանց մեծաւ զգուշութիւն պարտին կենալ։

Ախաս այս երբեմն զոյգ ունի ընդ իւր զանախորժակութիւն կերակրոց, զծանրութիւն ստորին որովայնի, զտապ սահմանացն ախոնդանաց, զնոզկանք ստամոքսի, և զցաւ վիրոտեաց, և երբեմն ևս զշնչաղց։ (ականատես եղաք 'ի դիպուածս ախտիս հիւանդաց ոմանց՝ ուստել անյագաբար զկերակուրս վեց կամ եօթն անգամ 'ի մէջ քանի ինչ ժամուց։) Հատարս կօրէն թուլանայ զօրութիւն ջղաց, մանաւանդ այնց ջղաց որոց ստորակարգեալ են մեծ գործք մարդութիւն կերակրոց, յորմէ զհետ գայ անեփութիւն 'ի կերակուրս, և անբաւականութիւն 'ի սնունդ ջերմութեան կենաց, և այնպէս ծիւրեալ լքանին ընդերքն, և բոլոր մարմինն։ Կշանք առաւել ձախորդականք են՝ ատէպ ատէպ արտաթորումն որովայնի, սաստիկ ջերմութիւն, ուժգնութիւն ծարաւոյ, նուազութիւն միղի, վերքն որկորոյ, անախորժակութիւն կերակրոյ, դժուարութիւն 'ի կլանել ևն։

Ընդ այսոցիկ գիտել արժան է, զի եթէ գտանի զոյգ ընդ ախտիս դժուարութիւն ինչ 'ի շնչառութեան, և ցաւ կողմնական, յայնժամ ախտս այս աւարտի 'ի նեխութիւն։ 'Ի դիպուածս յայս առաւել պատշաճագոյն դեղորայքն են՝ հնագոյն քաղցրաւենին կարմիր վարդի, և աղնիւ թիւրակէսն, որ այսպէս բաղադրի։ Առ վեց ունկի՝ վերոյիշեալ քաղցրաւենին, բաղադրեա զայն [illegible] ընդ վեց տրամ թիւրակէսի, յաւելլով 'ի նոյն [illegible] լայլ բաւականաչափ քաղցրաւենի սերկևիլի։ յետ որոյ տուր ուստել հիւանդին մի կամ երկու անգամ յաւուրն՝ զկշիռ կիսոյ ունկւոյ։ Եւ ինձ իսկ ոչ այլազգապէս յաջողեցաւ դարման տանիլ, բայց եթէ տալով զառաւել հեշտընկալսն 'ի դեղոցէն ստոի, որպիսի է զանգուած ինչ հատագեղոյ բաղադրեալ 'ի 12 ցորեան՝ քօլօմպօ արմատոյ լոսելոյ, և 'ի բաւականաչափ շարապոյ սերկևիլի։ Յօրինեալ առուի վեցեակ հատիկս, երկու առցին ընդ առաւօտս, երկու նախ քան զճաշն, և այլ երկու ժամ մի յառաջ քան զընթրիսն, միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի քսան օր։

ԺԲ.

Երևելի է նոյնպէս և հոսումն լերդական, կոչեցեալ յիտալացւոց՝ Ֆլուսսո էբաթիքո. և կարի դժուարին իմն է սահմանել զնսկաբուն և զգործադիր պատճառն այսր հոսման. բայց զոր հաւաստեաւ մարթիմք ասորասել, է թուլութի, գանդաղութի, և պալարումն լերդի: Այդ ամենայն թէպէտ երևին լինել առաւել ընդհանուր պատճառ այսր հոսման, բայց յոլովակի ոչ պատճառեն զայն. որովհետև բազում անգամ ևս պատահին 'ի նեխութէ լերդի, առանց ուրեք բնաւ գտանելոյ անդ ախտիս, որ ասի Ֆլուսսո էբաթիքո: Բայց զնարդ և ևս է, հաւաստի համարեալ է թէ ոչ է մարթ այդմ ունել տեղի, բայց եթէ յարակցեալ ընդ լերդի. ամին իրի սահմանեմք զպատճառս այսորիկ հոսման լինել զամենայն անբարեխառնութիս կամ անկարգութիս լերդի, մանաւանդ զտկարութին ստամոքսի, և ստորին որովայնի, և զգանդաղութին փամփշտոյ, երիկամանց, փայծաղան, պարկի լեղւոյ, և արգանդի. ևս զառաւելութին կամ զկարի նուազութին դաշտանի և թանչից: 'Ի վախճան ամենայնի հոսումս այս ծագիլ կարէ նաև 'ի խցմանէ մեսենտրական երակաց, որ կոչի՝ օմթուուցիօնէ տէլլէ վէնէ մեսէնթէռիքէ: Եւ նշանքն են՝ անախորժակութիւն կերակրոց, տենդ թեթև, գառնութի բերանոյ, փուքսարկումն, դեղնութիւն միզի, առաւելութի կամ սակաւութի ցաւոց լերդի և դեղնութի մորթոյ, սաստկութիւն հազի, և ճընշումն լերդի, դժուարութին 'ի շնչառութէ: Բայց մասնաւորապէս գուշակի հոսումս այս այնու՝ զի հասարակօրէն զհետ գայ դալուկն, բորբոքումն, և այլ ախտք լերդի. ևս առաւել ճանաչի յարտաթորմանէ արիւնաշաղախ նիւթոց կամ կղկղանաց, և 'ի խեթից սրբանին երբեմնապէս պատահելոյ:

Այս հոսումն որոշի և զանազանի 'ի թանչից, որ ասի էմոռոիտալէ, ըստ որում 'ի դիպուածս յայս կղկղանքն կամ պէտքն որովայնի ոչ է այնքան խառն ընդ արեան, որպէս 'ի թանչքն: Սեամողձոտքն առաւել ենթակայ են ախտիս այսմիկ: Դարձեալ, հոսումս այս ոչ է այնքան վշտաբեր և տառապեցուցիչ, որպէս զախան՝ տիսանթէռիա. բայց է առա-

ուել դժուարաւ փարատելի, և հատարակօրէն աւարտի և փոխարկի 'ի ջրգողութեն, 'ի վատակրութեն և 'ի յեր կարատաւ խօթուն, որ ասի՝ քաքէասիա։ Այլ գարման սորա է ռատիչէ տի քօլօմպօ, զոր պարտ է խառնել գոյզն ինչ ափիոնիւ։ 'Ցոյնպէս օգտաւէտ է եթէ փութով և յաճախակի օծցի 'ի վերայ լերդի և փայծեղան ճարպով սնդկի։

Եթէ ախտակիրն ունիցի զմիզարգելութեն, յայնժամ պարտ է 'ի վար արկանել զոլորիթալէ բուսքուռէա, զոր պարտ է զգուշութիւն և չափով ընծայել։ Իսկ եթէ ունիցի զջերմութեն ինչ թեթև, յայնժամ օրէն է առնուլ 'ի կիր զէլիսիռէ տի վէթռիօլ, և զթրմոցն քինաի, ևս պարտ է գրեթէ տալ պատրաստեալ խաշուով քռուսքաի կամ օսսիքռաթօի։ Այլ եթէ ախտակիրն ունիցի ախորժակս յուտել, որպէս պատահի երբեմն, մարթ է թոյլ տալ նմա ուտել զհաւս, զճագս աղաւնեաց, զմիս թաղամնաւորեալ ոչխարի, և զմածուածն եղջերն եղջերուի, որ ասի՝ ճէլատինա տի քօռնօ տի չէռվօ։ Ամենք յախտաժեռաց ստացան մեծ օգուտս 'ի կաթանէ, ուստի եթէ լիցի օգտաւէտ, պարտ է յարատեալ 'ի գործածութեն կաթին, մինչև բարեռք ներգործեսցէ։ 'Իարձեալ, եթէ զուգընթաց լիցի ընդ ախտիս ցրտութեն ձեռաց և ոտից, նուաղուն, նուազութեն ձայնի, թուլութեն ջղաց և դժուարութիւն 'ի շնչառութեն, յայնժամ կոչի՝ ֆէպպռէ բէռնիչիօզա սուպքռուէնթա, որպէս տեսաւ գլ. ա. երես 18։

ԺԳ.

Այլ բաց 'ի ստացանէ՝ է և այլ տեսակ որովայնաջուծութեն, որ կոչի՝ ֆլուսսօ մէղէնթէռիքօ. այսինքն հոսուն մեսենտրական։ Սա է ահոկութեն մեսենտրական թելից կամ անօթոց. վասն որոյ 'ի գիպուածս յայս կղկղանքն լինի առաւել արիւնաշաղախ քան 'ի գիպուածս հոսման լերդի, և արիւնռուշտ հոսման որովայնի, որ կոչի տիսսէնթէռիս։ Երբեմն ևս պատահի՝ զի յանչափս հոսի արիւն ինչ կարմրերանգ առանց իրիք հոտոյ. բայց երբեմն սեաւ կամ նեխեալ և գարշահոտ, և յայնժամ անուանի՝ մօռպօ նէռօ, այսինքն ախտ սեաւ։ Սկսամաղձոտքն են առաւել ենթակայ ախտիս այսորիկ։ Այլ գարման

որա չէ ինչ տարբեր 'ի դարմանոց թանչահոսութենէ կամ փախման արեան, որպէս տեսցի իւրաքանչիւր յիւրում տեղւոջ. որովհետև ունի զմիջասահման տեղի 'ի մէջ միոյ, և միւսոյ։

Բայց մասնաւորապէս 'ի դիպուածս յայս պարտ է պատրաստել գրեխս կակղացուցիչս, 'ի ձեռն որոց արտաքսի և մաքրի արիւնն, որ փակեալ կայ 'ի փորոտիան. նոյնպէս մարթ է մատուցանել հիւանդին աչիտի անթիփուլթուիտի, որ ոչ միայն խափանէ ըզպատճառելի ցաւս, այլ և միանգամայն մասնաւորապէս ածապարէ և արգելու զթանչան։ Ջնոյն գործողութիւն ունի և խաշուն բրինձոյ՝ խառն ընդ շաբաթի լէմոնի, կամ ռապէլի։ Դարձեալ, յոյժ օգտակար է 'ի դիպուածս յայս 'ի վար արկանել զծաղիկն երիցկի՝ եթէ յըմպելիս, և եթէ 'ի գրեխս։

ԺԴ.

Խրատք ընդհանուր առ 'ի խնամատար լինել որպիսի և իցէ հոսմանց, և փորհարութեց։ Ախտքս այսոքիկ յորպիսի և իցէ պատճառէ յառաջ եկեալք, ըստ պարագայիցն պահանջելոյ, եթէ պարտ իցէ արդելուլ, պիտոյ է իսկ և իսկ կանոնադրել զկերակուրն հիւանդին, որպիսի է բրինձն եփեալ կաթամբ, և համեմեալ կինամոնիւ, կամ քռէմոռ տի ռիզո, այսինքն բրինձն եռացեալ կարմիր գինեաւ։ Ըմպելին քռէմոռէ տի ռիզէնա լուծեալ 'ի ջրոյ բրինձի, կամ թրմոցն խորովեալ հացի։ Գիտելի է ևս, եթէ չէ օրէն բնաւ ձեռնամուխ լինել 'ի դադարեցուցանել զորպիսի և իցէ հոսուն որովայնի, մինչև քաջահասու լեալ թէ յորոց պատճառաց իցէ յառաջ եկեալ։ Իսկ 'ի կարևոր դատելն զգործածութեն դեղոցն, յայնժամ պարտ է սկսանիլ նախ 'ի քաղցրացուցիչ և 'ի հեղեղիչ դեղոցն, և 'ի գրեխաց, և ապա անցանել 'ի գործածութեն դեղոցն, որք վերաբերին առ ստամոքսն, և յետ այնորիկ 'ի կերակրութենէ քինա քինաի, օշնդրի, տիսաքօռատիսի. նաև ազնուագոյն գինի է յոյժ օգտակար։

Որքան առ կերակուրս պարտ է հրաժարիլ 'ի տհաս մրգաց, 'ի դժուարամարսելի և յիւղալի կերակրեղինաց. ևս արժան է զգուշանալ 'ի ցրտոյ և 'ի խոնաւ օդոց, և յայլ ամենայն իրաց, որք մարթին արը-

գեղուլ զարուաշնչուլթիւն մարմնոյ։ Նմանապէս զգոյշ լինել պարտ է 'ի սասուիկ կրից, յերկիւղէ, 'ի տըրտմուլթէ եւն։ Ընդ այսոսիկ արժան համարիմ յուշ առնել և զայն, զի եթէ փորհարուլթիք կամ հոսմունք այսոքիկ երկարատեւեալ մնան, սովորաբար 'ի վերը երեւին կարծրուլթի և ցաւ ինչ թեթև 'ի լեարդն, և մերթ ևս 'ի փայծաղն։ յայնժամ հարկադրիմք դիմել 'ի գործածուլթի քալոմելանոյ, կամ մեռքուռիոս տոլչէի, և զկերպն կիրառուլթէ սոցին ունիս գտանել 'ի հատ։ ՁԲ։ 'ի տառն Ք և Ս՝, 'ի կարգի իւրեանց։

ԳԼՈՒԽ ԻԹ։

'Ի Վերայ արիւնուուցք փորհարուլթէ կամ արիւնախառն որովայնուլծուլթէ, որ ասի՝ պիսէնտերիա, կամ քլուսսս պիսէնտերիքս։

Ախտս այս է խօթուլթի ինչ դժնդակ և տարափոխիկ, որ կատաղաբար յարի 'ի փորոտիս մարդոյ, և առաւելապէս 'ի ստուար և 'ի թանձր աղիս, հանդերձ ջերմուլթիւ մարմնոյ, և ուժգին ցաւովք որովայնի և սրբանին։ Սա հասարակօրէն տիրապետէ յաշնան և 'ի գարնան եղանակի, և կարի հասարակ է յերկիրս տօթագինս և 'ի վայրս գիճայինս, ուրանօր եղանակն լինի ջերմ և խոնաւ։ և նոքա՝ որք բընակին 'ի սահմանս հարաւոյ և 'ի բնակուլթիս վիճակեալս ինասաբեր օդոց և ապականեալ ինն հողմոց, են առաւել ենթակայ այսր ախտի։ յայն սակս առաւել գտանի ախտս այս 'ի բանտս, 'ի բանակս, 'ի հիւանդանոցս, յանկելանոցս, և յայլ այսպիսի տեղիս։ Եւ ևս անձինք, որք վիճակեալք են սքօռպուլթային ախտից, են առաւել ենթակայ այսմ արիւնուուշտ փորհարուլթէ։

Պատճառք արիւնառուլոյ քորհարութիւն կամ արիւնախառն որովայնալուծութիւն։

Պատճառք այսորիկ ախտի գրեթէ նոյն են ընդ պատճառաց փոզացաւութիւն, զորմէ լիով ճառեցաք 'ի գլ. ԸԲ. երես 70։ Նոյնպէս մարթ է պատճառիլ սխտիս յայնմ ամենայնէ, որք կարեն արգելուլ զարտաշնչութիւն մարմնոյ, որպիսի են ցրտագոյն և մեսաստկար օդք և հողմունք, զգենուլ զթացեալ հանդերձս, 'ի քուն լինելն 'ի բացօթեայս, և։ Նոյնպէս և մարթ է ծագիլ 'ի սուր և 'ի խթիչ մաղձէ, 'ի ստորէջ սխտարծարծ հիւթոց, որք 'ի սաստմոքսէ յաղիս լճանան, և 'ի հասունացեալ պտղոց, և 'ի դրժուարամարսելի կերակրեղինաց. բազում անգամ և պատճառի փոփոխմամբ, վասն որոյ հարկաւորապէս պահանջի չառնել ստէպ ստէպ երթևեկութիւնս առայնպիսի ախտակիր անձինս. քանզի համարիմք եթէ միայն հոտն կղկղանաց սիտակրին պատճառել մարթի զախտս զայս։ Հուսկ յետոյ՝ մարթ է սիտիս յառաջ գալ 'ի յօդուածացաւութէ, և և 'ի ռիսքբօլա անուանեալ պալարէ, որով բազում անգամ ցաւի ուղղորդ աղիքն հիւանդին, յորմէ երբեմն ըզհետ գայ նախ վէրք, և ապա քաղցկեղ։

Նշան այսր ախտի։

Ախտս այս գուշակի 'ի լուծողականութէ որովայնի, ըստ որում զուգընթաց լինի և սրագոյն ելմն ցաւ 'ի փորոտիան, և 'ի մէջտաեռ արտաթորելոյ զկղկղանս որովայնի, և հասարակօրէն յառատ կամ 'ի նուազ լինչ արենէ, և 'ի խժայլն նիւթոց արտաքս հոսելոց ընդ ապաւառն, 'ի խեթից սրբանին, 'ի զգացմանէ աղեաց, 'ի դառնութէ բերանոյ, 'ի չորութէ որկորոյ և լեզուի, 'ի նոզկանաց, 'ի փսխմանէ, և 'ի սաստիկ ծարաւոյ։ Դարձեալ, որպէս 'ի դիպուածս այլոց հրատապ տենդից, նոյնպէս 'ի դիպուածս ախտիս՝ թուլանայ զօրութէ ջղաց և բոլոր մարմնոյ, զարկն ուժգին, և ջերմութէն սաստիկ։

Գիտել արժան է, զի 'ի սկզբան անդ ախտիս երբեմն զուգընթաց լինի դողդոջումն, և երբեմն և ցրտութէ ուժգին։ Սիւթն՝ որ անընդհատ 'ի դուրս

թորի, ոչ լինի բնաւ միօրինակ. զի երբեմն լինի սոնձային, և սպիտակ. երբեմն արիւնաշաղախ, և երբեմն եւս կանաչագոյն. այլ 'ի վերայ այսր ամենայնի միշտ ընդ նիւթոցս գտանի և հոտ զազրը և գարշ։ Սովորաբար մէզն լինի արգելական, ընդ նմին և քիրան։ Երբեմն հիւանդն ընուիթ շարժի 'ի փբսխումն առատօրէն, և երբեմն եւս մորթն բոլորովին ցամաքի և ձեւակերպի կապտագոյն։ 'Ի յարտաքսել հիւանդին զվերոյիշեալ նիւթքն որովայնի՝ զգայ ծանրութիւն և խէթ ինն 'ի սրբանն (որ կոչի՝ թէնէզմօ) մինչ համարիլ ամենայն աղեացն արտաքս թափիլ, և երբեմն եւս մասն ինչ փորոտեաց 'ի դուրս ելանէ, որ և պատճառէ զվիշտս անհնարինս, մանաւանդ երախայից։ Երբեմն 'ի վերայ հասանէ հեծկլտանք, խոնջութիւն, թուլութիւն, ցամաքութիւն մորթոյ, սաստկութիւն ծարաւոյ, միզարգելութիւն, ցնցումն մկանանց և այլ պատահարք, որք սովոր են 'ի վերայ հասանել 'ի դիպուածս ախտին որ կոչի՝ տենդ ջղային կամ փտախտութիւն։

'Ի դիպուածս արիւնռուշտ փորհարութիւնք, որոյ նախնական պատճառն գտանիցի լինել ուժգնութիւն բնութեանն, առաւել երևելի նշանքն են՝ ուժգին ցըրտութիւնն, որում արդէն զհետ գայ սաստիկ և անընդհատ ջերմութիւն, արագութիւն և լինութիւն, և խատութիւն զարկի բազկին, ուժգնութիւն ցաւոց, որ ընդ ժամս ժամս 'ի վեր երևի 'ի փորոտիս, և ախորժանք 'ի ժայթքել, և դժուարամիզութիւն։ Զկնի այս ամենայն նշանաց 'ի վերայ գան անընդհատ խէթք 'ի սրբանն, բորբոքումն ինչ թեթև 'ի միզանց խողովակս, ջերմութիւն միզի, ցաւ ինչ պորտոյ և աղդերաց, արագութիւն հոսման որովայնի, և։ Յայսպիսի դիպուածս երևին յաւէտ վնասակար դոլ՝ քան օգտակար՝ դեղորայքն սեղմիչ, խթիչ, և զօրացուցիչ կոչեցեալք, որպիսի են ոգիաւոր հեղանիւթքն, ափիոնն, տիասքօրտիոն, թիւրակէան և։ Տարբերի ախտս այս յախտէն՝ որ կոչի տիառռէա. ըստ որում ունի զոյգ ընդ իւր զսուր ինն ցաւ 'ի փորոտիսն, և ըստ որում կղկղանքն հասարակօրէն լինին մաղասախառն և արիւնաշաղախ։ Դարձեալ՝ զանազանի յախտէն՝ որ ասի մօռպօ քօլէռա. ըստ որում 'ի դիպուածս յայս փոխումն չէ այնքան դժնդակ, և ոչ իսկ կարի յաճախ և։

Կայ և տեսակ ինչ արիւնռուչտ փորհարութիւն, կոչեցեալ յիտալացւոց՝ տիսսէնթէռիա ասթէնիքա, որ պատահի 'ի թուլութիւն կամ 'ի տկարութիւն բնութեան. որոյ նշանքն են՝ թուլութիւնն կենսական զօրութիւն, փոքրութիւնն և անհաւասարութիւն զարկի բազկին, նուազութիւնն և ահասութիւնն միտի, դողութիւնն ջղաց, և ցնցականութիւն ձգանաց, ևս բռնի շարժողութիւնն միանանց, ուժգին ցաւն փորոտեաց, ցնորումն խելաց, և նուազումն սրտի: Զկնի այս ամենայն նշանաց 'ի վերայ գայ դժնդակ ցաւ ինչ աղեաց և սրբանին, հեծկլտանք, կարմրութիւն աչաց: Կըղկղանքն կամ յաւելուածքն որովայնի 'ի սկզբան անդ լինին խոշորակ, առատ և արիւնաշաղախ. բայց 'ի վախճանի սկսանին գլխովին արիւնոտիլ և դարշահոտիլ, և նրբագոյն թելանման նիւթս արտաքս հոսել: Երբեմն արտահանին յորովայնէ ճճիք կամ որդունք կամ 'ի ստորուստ և կամ 'ի վերուստ, և երբեմն 'ի վեր երևին խաղաւարտք և բիծք կապուտակ կամ սեաւ 'ի մարթս մարմնոյ, և վերք խժային 'ի խոռոչս բերանոյ, և այլք պատահարք, որք սովոր են 'ի վերայ հասանիլ 'ի դիպուածս ախտից՝ որք կոչին միլիաուէ, և թիֆօ, որք են ախտք ինչ վտանգաւոր և տարափոխիկ:

Այս տեսակ արիւնռուչտ փորհարութիւն հասարակօրէն պատահի ծերոց և փափկակեաց անձանց, և ևս նոցա՝ որք կրեալ են զախտան կոչեցեալ սքօռպութօ, և կօթեթա, և կամ զորպխի և իցէ այլ ախտս: Յորժամ դոյնն երեսաց ախտակրին լինի կապտագոյն, զազրատեսիլ, և գարշելի գիշահոտս արտաքս բուրէ, ցուցակ է մեծի տրտմալից վտանգի, որովհետև հաւաստեաւ գուշակ են փոսախտուն, և քաղցկեղի: Դարձեալ, երկիւղալի նմն նշան է, յորժամ հիւանդն իսկ և իսկ զկնի ընդունելոյ զգրեթն արտահանէ զնոյնս. բայց ամենաչար և առաւել երկիւղալի նշանն այն է, յորժամ գլխովին փակեալ լինին ճանապարհքն փորոտեաց, և անհնարին լինի մուծանել 'ի նեբքս զգրեխս: Դարձեալ, յանկարծօրէն դադարումն ցաւոց փորոտեաց և սրբանին, անընդհատ հեծկլտանքն, ժանկագոյն փսխումն, կարի ցըրտութիւն ձեռաց և ոտից և բոլոր մարմնոյ, ցուրտ քիրան, անձկութիւն, ցնորումն, սատակ ցամաքութիւն բերանոյ և որկորոյ, կարծրութիւն և չորութիւն

լեզուի, կերկերումն ձայնի, յաճախակի ուշագնացութեան, և դժուարութեան 'ի կլանել, են անշուշտ նշանակ մօտալուտ մահուան:

'Ի վախճանի, ախտս այս պատահեալ ծերոց, երախայից, և ծննդական կանանց՝ միշտ լինի վտանգաւոր: Բայց ոչ այսպէս 'ի դիպուածս ախտին, որ կոչի՝ տիսանտերիա պիանքա. քանզի յայնժամ հիւանդն ոչ արտաթորէ զկաթիլս ինչ արեան ընդ կղկղանաց. վասն որոյ զերծ լինին 'ի քաղցկեղային վտանգէ: Այլ գիտել արժան է, զի արիւնռուչտ փորհարութիս, և այլ հոսմունք որովայնի երկարատևութիւք կամ գործածութիւք ներհակական դեղորէից մարթին փոխարկիլ 'ի ջրգողութիւն և յապականուն:

Կառավարութիւն 'ի վար արկանելի 'ի դիպուածս արիւնռուչտ փորհարութիւ կամ արիւնախառն որովայնաւորութիւ:

'Ի դիպուածս ախտիս չկիք ինչ առաւել պիտանի և օգտակար քան զմաքրութիւն. քանզի 'ի ձեռն այսր մաքրութիւն մեծապէս նպաստ ընծայի հիւանդին, և ոչ սակաւ շահաւէտ լինի առողջութիւն նմին մերձակայից. վասն որոյ հարկ է ստէպ ստէպ փոխել զհանդերձս ախտակրին, և չէ պարտ բնաւ թողուլ 'ի սենեկի անդ զկղկղանս որովայնի. այլ հարկ է փոյթ ընդ փոյթ ընդ հողով ծածկել զսոյն: Օրէն է 'ի մէջ սենեկի նորին միշտ շրջշրջել զօդ. իմն զովացուցիչ և առողջարար, և ստէպ սրսկել զքացախ կամ զսուլիս տի չէտրս, և կամ զայլ ինչև իցէ սաստիկ հոտաւէտս: Արժան է զգոյշ լինել՝ զի մի անյոյս առնիցի հիւանդն զառողջութիւն իւրմէ, այլ բառնալ պարտ է 'ի մտաց զերկիւղ մահու:

Բազում անգամ փորձիւ ծանուցեալ է գերազանց ներգործութիւն ֆլանէլլայի, որ է ազգ ինչ ասուոյ, զոր սովոր են զգեցուցանել 'ի վերայ մերկ մարմնոյն, պատատեալ բուանդակ զկէս մարմնով, որով գրգռի և շարժի քիրտն և շոգին առանց իրիք մեծապէս ջերմութիւն պատճառելոյ: 'Ի դիպուածս յայս պարտ է հրաժարիլ 'ի մսոյ, 'ի ձկանց, 'ի խաւարտից, և յայնմ ամենայնէ, որք պատճառեն զնեխութիւն կամ զփտութիւն: Սերկևիլն, նուշն, և հիւթն քաղցր նարնջոյ, և այս թարմ կամ չոր զողալն՝ են պատշաճաւոր ուտելիք 'ի դիպուածս յայս: Բրինձն, բակլայն եփեալ

լոկ ջրով՝ են պատշաճաւոր կերակուրք. նոյնպէս և օսլայն և ալիւրն ցորենոյ, որք ոչ միայն են պատշաճաւոր կերակուրք, այլ միանգամայն և դեղք, զոր պարտ է 'ի վար արկանել յետագայ եղանակաւ։ Ա՛ռ հինգ կամ վեց բուռն օսլայ կամ ալիւր, ըստեա՛ 'ի փոշի մանրամաղ, և թող եռալ բաւականաչափ ջրով կամ կաթամբ իբր հինգ կամ վեց ժամս, մինչև 'ի ցամաքիլն. ապա առեալ 'ի սմանէ երկուս կամ երիս գրգալս եռացո՛ վերատին բաւականաչափ ջրով կամ կաթամբ, մինչև ցբարիոք մածանիլն, և լինի կերակուր հատարակօրէն յոյժ սնուցիչ և վայելուչ ախորժակի հիւանդին, զոր մարթ է առնուլ 'ի կիր կամ շաքարաւ, և կամ կինամոնիւ։

Առաւել պատշաճողական ըմպելիք 'ի դիպուածս յայս՝ են ջուրն կամ խաշուն բրնձոյ, և սիէռօ տի լաթէ՝ այսինքն շիճուկն կաթին, որոց գործածութեամբն յոլով անգամ եղև ապաքինութի ախտիս։ Դարձեալ, ջուրն խորովեալ հացի, կամ ավէնաի, և կամ ջուրն՝ յորոյ 'ի միջի շիջուցեալ է հրացեալ երկաթն, են ճահոլագոյն ըմպելիք։ Նոյնպէս թըրմոցն երիցկի, զոր ասեն՝ ինֆուզիօնէ տի քամոմիլլա, է դեղ իմն աղնուագոյն և կարի օգտաւէտագոյն 'ի դիպուածս յայս, եթէ ստամոքսն կարասցէ տանիլ. զի ունի մասնաւոր իմն զօրութի փարատելոյ զքաղցկէղն փորոտեաց։

Յաղագս հնարեց և դեղորեց այսորիկ ախտի։

Հնարք և դեղորայք այսորիկ ախտի հանապազ կշռելիք են ըստ պատճառացն, յորոց ծագի ախտս։ 'Ի դիպուածն, յորում նախնական պատճառն գտանիցի լինել ճիգն բնութեն, կամ կենսական զօրութեանն, պարտ է երակ հատանել ըստ պահանջելոյ հարկին 'ի սկզբան անդ հիւանդութե, և թոյլ տալ արեանն հոսիլ իբր չորս կամ հինգ ունկիս. բայց նկատել արժան է միշտ 'ի պարագայս անձին, զորբինակ 'ի սատկութիւնն ցաւոց, ջերմութե, և այլ նշանաց, 'ի հասակն, 'ի խառնուածն, և 'ի զօրութեն, ևս յուժեղութեն և 'ի յաճախութեն զարկի բազկին, յանզգայութեն ստորին որովայնի, և յուժգնութեն ցաւոց աղեաց և սրբանին։ Եւ յետ այնորիկ պարտ է առնուլ 'ի կիր խբէքաքուանա, որոյ

ներգործութեան դիւրացուցանի՝ պատրաստելով թէ թէ և ինֆուզիոնէ տի քամոմիլլա. բայց դուն ուրեք պահանջի 'ի դիպուածս սխտիս սաստիկ և զօրաւոր փսխողականն. առ ոչ բաւական է հասարակօրէն 24 կամ շատ ևս 30 կշիռ ցորեան խբէքաքուանա վասն միոյ չափահասակի: Իսկ երբեմն բաւական լինի 10 կամ 12 ցորեան միայն:

Յերկրորդում աւուր զկնի փսխողականի օրէն է տալ հիւանդին 'ի 30 կշիռ ցորենոյ՝ մինչև 48 ցորեան՝ ռասպառպառս 'ի պահ առաւօտուն: Եւ յետ այնր պարտ է մինչև ցքանի ինչ աւուրս տալ նմա սակաւաքանակ խբէքաքուանա, զորօրինակ երկու կամ երեք կշիռ ցորեան՝ յոր պարտ է խառնել դրդալ մի սիռուբ բաբավէռս պիանքօի, և յաւուրն երկու անգամ տալ հիւանդին, մինչև լիցի վեց ցորեան յաւուրն: Այս դարմանատարութիւն բաւական է հասարակօրէն 'ի պատճառել զառողջութիւն. բայց եթէ դէպ լինի երբեմն անբաւական լինել այդմ, յայնժամ պարտ է ձեռնամուխ լինել 'ի կիրառութիւն առաւել թուլացուցիչ և զովացուցիչ դեղորէից. որպիսի են թամառինտի, մաննա ևն: Ղոյնպէս 'ի գործ արկանել արժան է յամենայնում երեկոյի գրեխ պատրաստեալ օսլաիւ կամ բրնձով:

Իսկ եթէ գործածութիւն այսոցիկ դեղորէից չիցէ հնար ստանալ զբաղձացեալ ներգործութիւն և զօգուտն, յայնժամ օրէն է զսպունգ դաղջ ջրոյն մեղրի և կտաւատի թացեալ դնել 'ի վերայ այնր մասին որովայնի, ուր առաւել զցաւն: Յորժամ սխտս այս պատճառի 'ի ցրտոյ կամ յարգելականութէ արտաշնչութեան մարմնոյ, պարտ է սխտակրին պահել զանձն ջերմապէս, և ըմպել առատօրէն զնաչու սամպուքօի, և մէլիսսէի, և դնել զոտս և զձեռս 'ի մէջ ջերմ ջրոյ: Իսկ 'ի դիպուածս, յորում սխտս ծագի և յառաջ գայ 'ի թուլութէ բնութեն, յայնժամ կոչի՝ տիսէնթէռիա ասթէնիքա, որոյ առաւել պատճառագոյն և օգտաւէտագոյն դեղորայքն են՝ ափիոնն, և խէժն արաբիոյ, որ այսպէս յօրինի: Առ կէս ունկէ խէժ արաբիոյ, մի և կէս տրամ շաքար սպիտակ, և տրորեա զայս 'ի մէջ քարեայ անկանի, արկանելով 'ի նա և զհինգ ունկի հասարակ ջրոյ, յոր յաւէլ և 24 շիթ՝ լաւտանո լիգուիտո: Եւ զայս պարտ է առնուլ յերեկոյեան պահս 'ի մտանելն

յանկողին։ Ի դիպուածս յայս հրաժարիլ պարտ է ի թուլացուցիչ և ի զովացուցիչ դեղորէից։ Եւ յետ այնորիկ պարտ է զսպունգ ջերմ գինեաւ թացեալ դնել ի վերայ այնր մասին որովայնի, ուր առաւել զգայ զցաւն։ Պարտ է երկու անգամ յաւուրն գրեթէ պատրաստել օսլաւ, կամ արգանակաւ թաղամաւորեալ ոչխարի, յորոց վերայ յաւելուլ արժան է 30 կամ 40 շիթս՝ լաւատնօ լիգուիտոս։ Դաղջ բաղանիքն յոյժ օգտակար է, եթէ իցէ հնարաւոր։

Արդ՝ յորժամ այսոքիկ հնարք և դեղորայք լինին անօգուտ և անբաւական ի բուժել զախտն, յայնժամ օրէն է մատուցանել հիւանդին չորս անգամ յաւուրն մշկահոտ ընկուզաջուր՝ քոնֆէցիոնէ ճիաբբոնէզէ կամ տիասքորոտիօ, և զկնի տալ ըմպել սկահակ մի սրճոյ տէքոցիոնէ տի քամբաճճիօ։ Մարթ է և ս ի վերայ որովայնի դնել յաճախակի զսպեղանիս, որ ասի՝ սէնաբիղմօ։ Այլ եթէ ցաւն փորոտեաց կամ աղեաց չփարատի գործածութիւն վերոյիշեալ դեղորէից, յայնժամ պարտ է առնուլ ի կիր զվէշիքատիօռիս, դնելով ի վերայ ցաւագնեալ մասին որովայնի։

Յոլով ինչ կայ ասացեալ և գրեալ զընտրութենէ խթիչ և սեղմիչ դեղորէից, որոց պատշաճագոյնքն են մօքուս օռիէնթալիս, նօչէ մօքաթա, կինամոնա, խառն գինի, քափուրն, և ն։ և սակայն ճշգրիտ է, թէ չիք կանոն ընդհանուր, որ պատշաճեսցի զինչ և իցէ կլիմայի, գրից երկնից, աղգի և կամ ուժ և իցէ անհատի։ Ափիոնն, որ թէպէտ ուժգին խթիչ է և սեղմիչ բնութիւն, և առաւել ճանաչագոյն վասն այսր ախտի, սակայն ի ջերմագոյն գաւառս, որպէս ուսուցանէ մեզ փորձառութիւնն, փնասակար է ստէպ և առատ գործածութիւն նորին։ Բժիշկք անդրնոյ՝ կարի խակ քաջ նախագասեն քալօմէլանոն և մէռքուռիս տօլչէն վասն այսր ախտի, նաև վասն հոսման լերդի։ Նմին իրի քաջայայտ է, թէ չիք կանոն ընտրութիւն դեղոց՝ առանց ինչ ամենևին բացառութիւն, զոր առ ամենեսեան հաւասարապէս հնար իցէ մերձեցուցանել առ ի գործածութիւն։

Յերկարատևեալ մնալ այսոցիկ ախտից, և ի հասանիլ ի յետին աստիճան, յայնժամ ասի՝ սէասէնթէռիա քռոնիքա, որոց գարմանք չեն ինչ տարբեր ի

գարմանոց այլոց երկարատև սոսկ փորհարութեց, որ կոչի՝ ախառռէա քռօնիքա. տես երես 300։ Մա-կարդեալ և մածուցեալ արգանակն ոչ միայն պատ-շաճաւոր կերակուր է 'ի դիպուածս յայս, այլ միան-գամայն և գեղ. քանզի ականատես եղէ, եթէ յետ անօգուտ ելանելոյ այլ ամենայն դեղոցէ, 'ի ձեռն արգանակիս և ետ ապաքինուն ախտիս։ Կերպն կապմելոյ զարգանակս։ Առ զդլուխ և զոտս թա-զատմաւորեալ ոչխարի, հանդերձ մորթովն, և ըղ-բուրդն կիզեա հրով, թող եռալ մինչև արգանակն լինի մածուցիկ, և յետոյ յաւելլ 'ի նա սակաւ ինչ կինամոն, որով համեղանայ, և տուր ուտել երկից կամ երից անգամ յաւուրն սակաւ ինչ խորովեալ հացիւ։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս ախտի՝ որ կոչի էմոռոօիդք. այսինքն ԼԱՆԷՔ, կամ ՌԼԱԽՏՈՒԼԻ, որ Ի ասի էմոռոօիդք էիցէ, այսինքն կոյր ԼԱՆԷՔ։

ՅՕԳՈՒԱԾ Ա.

Ախտիս այսմ ենթակայ է բնութիւն մարդկային յոր և ելցէ հասակի, և ՅՕ բովանդակ անդամոց մարմնոյ. ուստի մարթ է 'ի վեր երևիլ 'ի ծածուկ անդամս, եթէ արուի, և եթէ իգի, 'ի արունս, 'ի նեարդս, և յերակս, 'ի նեղքոյ լեզուին, ևն. և ա-րեանն իսկ հոսել յաչաց, յականջաց, 'ի շրթանց, 'ի ընտերաց, և յայլ ամենայն մասանց բերանոյ, 'ի ստեանց, 'ի պորտոյ, յերանաց, յանթոց, 'ի ծայրից մատանց, 'ի ոնգաց, 'ի ստամոքսէ, 'ի փորոտեաց, և յայլ ընդերաց։

Բայց գիտել արժան է, նախ եթէ այդպիսի դէ-

պուսածք հաղիւ երբէք պատահին. և այն ոչ այնքան վտանգաւորք։ Երկրորդ գիտել արժան է, զի 'ի դէպուսածս սխտիս՝ մինչ հոսումն արեան չլինիցի այնքան սաստիկ և յորդառատ, չէ՛ օրէն արդելուլ զայն, մանաւանդ եթէ յառաջ գայցէ 'ի դիպուածս հրատապ ջերմախտից, կամ տենդից. ապա թէ ոչ՝ յարգելմանէ այնր հոսման բորբոքի ուղեղն, և պատճառեսցին այլևայլ սխտք վնասակարք և վտանգաւորք։ Ինչպէս դժուարին իմն է կանոնաւ որոշել եթէ մինչև ցեր՞ը պարտ իցէ թոյլ տալ հոսման այնպիսի արեան. որովհետև որպէս փութով դադարեցուցանելն, նոյնպէս և առատապէս հոսիլն է վնասակար. վասն որոյ պա՛րտ է նկատել, զի եթէ 'ի հոսմանէ արեան պատճառի նուազումն սրտի, յայնժամ օրէն է 'ի գործ արկանել զդեղս առ 'ի խափանել զայն։ Բայց զպարբերական թանչքն, այսինքն զայն որ բնութ՞ շարժեալ յորպիսի և իցէ մասանց մարմնոյ հոսեսցի, չէ՛ բնաւ օրէն գլխովին դադարեցուցանել. քանզի գլխովին դադարումն նորին՝ բազում անգամ վտանգաւորէ զկեանս. այլ պա՛րտ է մեծաւ զգուշութի՞ չափաւորել զառաւելութի հոսման նորին. որովհետև չափաւոր հոսումն նորին ապրուիէ և թեթևացուցանէ զբնութիւնն, և չէ՛ պարտ բնաւ նկատել 'ի պարագայս տկարութե՞, և զօրաւորութեան բնութե՞ն, որք չունին տեղի յայսմ դիպուածի, և են նշանք անստոյգք։

'Ի վախճանի գիտել արժան է, եթէ հոսումն թանչից սովորաբար 'ի տիս մանկութե՞՝ լինի 'ի ռնգացն. 'ի հասակի երիտասարդութե՞՝ ընդ բերանն եւանէ հանդերձ թքոտի. իսկ 'ի ծերութե՞ հասակի խառն ընդ միզի։ Առաւելապէս ենթակայ սխտիս, են անձինք որք վիճակեալ են արիւնային, և մաղձային խառնուածոց, և նոքա՝ որք բնութ՞ են զօրաւորք, բարկասէրք, գինեմոլք, և որք վարեն զփափկասէր կեանս, և կի՛ են ըմբռնեալք յախտէն՝ որ կոչի սքօրպութիւ, և 'ի սաստիկ աշխատանաց։

Պատճառք սխտիս։

Բազմակերպ են պատճառք սխտիս, երբեմն յառաջ գայ 'ի կազմուածոց մարմնոյ, մանաւանդ՝ եթէ լինիցի այն արիւնային խառնուածով յօդեալ, 'ի

թուլութիւն անօթոցն, ևն։ Երբեմն ևս 'ի սահմանաւորութիւն կամ 'ի հոսելոյ արեան 'ի մասն ինչ մարմնոյ. զորօրինակ 'ի գլուխն, յերակսն թանչից ևն։ 'Ի լուծողութիւն արեան, յախտիցն որք ասին՝ սքոռպութիւ, և պիսակ, յընդերկար գործածութիւն դեղոց, որք զարիւնն լուծանեն. որպիսի են քանթէրէլլէ անուանեալ ճանճքն, թռչակսն ալքալի աղքն, թթու և տաքդ կերակուրքն, և զօրաւոր և սաստիկ լուծողականքն, և փսխողականքն, որք զայրացուցանեն զփորոտիսն. նոյնպէս պատճառի ախտս այս 'ի սաստիկ կրից բնութիւն, 'ի հոսմանէ արեան 'ի ուրնգացն գլխիվայր 'ի կախ մնալոյ։

Դիպուածն, յորում ախտակիրն թքանէ զարիւն հոսեալ 'ի լերդէ, յերիկամանց, 'ի ստամոքսց, 'ի թոքոց, 'ի փամփշտէ, է յոյժ վտանգաւոր, և երկիւղալի։ Իսկ առ սեռս կանանց՝ եթէ հոսեցի 'ի յարգանդէ, և 'ի ռնգացն յառաջ քան զյղութիւնն, չէ՞ վնասակար, այլ առաւել օգտակար, և ազատէ 'ի ծանր հիւանդութեանց։ Իսկ դիպուածքն, յորում թթախտութիւնն պատսհմամբ յառաջ գայ 'ի հարկանելոյ, կամ յանկանելոյ, ևն, չեն այնքան երկիւղալից. բայց հոսումն տեռատեսական, որ 'ի ստամոքսէ, 'ի լերդէ, կամ յայլ ինչ ճանապարհէ, կարօտի խնամատարութեան. ապա թէ ոչ՝ յառաջ գայ ատի՝ ուռոյցն երեսաց, ախտն ջրգողութիւն, կամ ախտն ծիւրական և կամ նուրբ ախտն։

Յաղագս դարմանոյ և խնամապարութիւն այսորիկ ախտի։

Դարման այսորիկ ախտի միշտ պարտի լինել համեմատ պատճառացն, յորոց յառաջ գայ։ 'Ի դիպուածն, յորում թանչքն պատճառի 'ի յորդառատ հոսմանէ կամ 'ի բորբոքմանէ արեան, պարտ է երակ հատանել, և 'ի գործ արկանել թեթևագոյն լուծողականս։ Պարտ է ախտակրին հրաժարիլ յամենակերպ ոգիաւոր ըմպելեաց, 'ի թթու ջերմացուցիչ, և 'ի զայրացուցիչ կերակրեղինաց, և յաշխատանաց։ 'Ի դիպուածս, յորում յառաջ գայ ախտս յապականութիւն և 'ի լուծմանէ արեան, յայնժամ պատշաճ է ուտել զթթու միրգս բաղադրեալս կաթամբ, և ս սակաւ ինչ սալէպ, և 'ի գործ արկանել բարեխառն գինի, պատրաստեալ լեմնիւ, կամ սբի-

ռիթօ ոմ վիթրիօլօիւ։ Նոյնպէս յոյժ օգտակար է գործածութիւն չափաւոր քինաքինաի։

Այլ եթէ պատճառի ախտս 'ի գործածութենէ սաստկագոյն և զայրացուցիչ դեղոցէից, յայնժամ ընդ հակառակն պարտ է 'ի գործ արկանել զբարեխառն, զսխորժարար, և զքաղցրացուցիչ դեղոցայս, և ըմպել յաւուրն բաղում անգամ ըստ չափու միոյ հնգկային ընկուզի պալասամ լօքաթէլլի, կամ նոյն չափ սբէրմաչէթի։ Այլ 'ի դիպուածս, յորում թանչքն յառաջ գայ յարգելմանէ արտաշնչութեան մարմնոյ, յայնժամ արժան է 'ի գործ արկանել կակղացուցիչ ըմպելիս, և անձնապահ լինել 'ի ցրտոյ, և յաշխատանաց։ Թանալ զոտս ջերմագին ջրով, և 'ի գործ արկանել զնոյն վերոյիշեալ պալասամն կամ սբէրմաչէթին։

Գիտելի է եթէ բաղում անգամ յոմանս դիպուածքս առողջարար և շահաբեր լինի հոսումն թթախտական արեան, որպիսի են՝ դիպուածքն գլխացաւութիւն, լուսնոտութիւն, հրատապ և հանապազօրեայ ջերմախտից, բորբոքման թոքոց, փսյծեղան, և փամփշտի, մանաւանդ յօդուածացաւութիւն, և փողացաւութիւն։ Նոյնպէս առողջարար է և անձանց, որք վնասակեալք են արիւնային բնութեաց։ 'Ի վախճանի գիտել արժան է, եթէ յոր և իցէ դիպուածի՝ յորում հարկ լինի երակ հատանելոյ, հոսումն արեան 'ի ռնգացն բարիոք և օգտաւէտ է, եթէ հոսեսցի ըստ չափու արեանն՝ զոր հանդերձեալ էր հանել յերակացն։ Բայց 'ի վերայ այսր ամենայնի՝ մեծի խոհականութեան պէտք են առ 'ի քաջ ճանաչել, եթէ յորմէ դիպուածի արժան իցէ թոյլ տալ կամ արգելուլ զհոսումն արեան 'ի ռնգացն։ Հասարակօրէն պարտ է թոյլ տալ հոսմանն 'ի դիպուածս ախտի բորբոքողականի, և կամ ջերմախտի, և չէ՛ օրէն դադարեցուցանել զայն, ցորքան չէ՛ք ինչ նշան տկարութիւն յախտակիրն։ Այլ եթէ կայցեն այսոքիկ նշանք, այսինքն տկարութիւն կամ նուազութիւն, ցուրտ քիրտն, պտտումն գլխոյ և՛ն, յայնժամ պարտ է փութով արգելուլ զհոսումն արեան, թէ և իցէ յոյժ սակաւ։ Զհոսումն արեան 'ի ռնգացն՝ 'ի քաջառողջ և յարիւնային անձինս չէ՛ օրէն փութով արգելուլ, ցորքան չգտանին յեռագայ նշանքս։ այսինքն թուլութեն ախտակրին, դեղնութիւն շրթանց, պաղիլն ծայրից

մատանց, ևն։ Իսկ եթէ գտանին այսոքիկ նշանք, հարկ է անվրէպ դադարեցուցանել զայն։

Յաղագս ընդ որում էղանակաւ պարտ է դադարեցուցանել զհոսումն արեան 'ի ռնգոյն։

Յայսմիկ դիպուածի պարտ է զախտակիրն ընկողմանեցուցանել 'ի վերայ թիկնամիջին, և դնել զոտս և զձեռս 'ի մէջ ջերմ ջրոյ, կամ կաթին կովու, և կապել միանգամայն ամրապինդ զարեան երակսն, և իբրև սակաւանայ արիւնն, յայնժամ պարտ է թուլացուցանել առ սակաւ սակաւ զկապն։ Մարթ է և զբամբակ կտաւ մուծանել 'ի նեղքս 'ի ռունգն, կամ վիթրիօլը չէրուլէօ լուծեալ 'ի մէջ ոգւոյ գինւոյ կամ օղւոյ, և խառնեալ ընդ նմա զսպիտակուցն ձուոյ, թաթախեալ զկտաւն՝ և 'ի վերայ ցանեալ դոյզն ինչ նատրաթ շաքար, և վիթրիօլը չէրուլէօ, կամ կիզեալ պաղլեղ, մուծանել և զայն անդր, ուստի հոսի արիւնն։

Յայսմիկ դիպուածի չէն այնքան շահաբերք ներքին դեղորայք, որովհետև ոչ մնայ ժամանակ ներգործութեան նոցին. սակայն մարթ է և օգտակար իսկ է երբեմն պատրաստել կէս ունկի սալ տի քլաուպէռօ, և մի և կէս ունկի մաննա, չորս կամ հինգ ունկի գարւոյ ջուր՝ լուծեալ զայս, և 'ի գործ արկեալ միանգամ կամ երկիցս 'ի միւսմ ժամու. եթէ ոչ ցուցանէ զներգործութեան փութով, յայնժամ մարթ է տալ ախտակրին ըստ տանելոյ ստամոքսի նորին 12 կշիռ ցորեան նիթրօ՝ ըմպանակ մի ցուրտ ջրով, խառնեալ 'ի վերայ սակաւ ինչ քացախ։ Իսկ եթէ ախտակիրն կարիցէ ըմպել զայլ ինչ սաստկագոյն դեղս, տուր նմա ըմպել յամենայնումի ժամու մի բաժակ ջուր հասարակ, խառնեալ ընդ նմա երեք կամ չորս շիթս՝ էլիսիռէ աչիտօ տի հալլէռօ, և փոքր ինչ սիռուփ։ Նոյնպէս գործածութիւնն սբիրիթօ տի վիթրիօլը տօլչէի՝ է յոյժ օգտաւէտ, զոր մարթ է 'ի կիր առնուլ 'ի 20 շիթէ մինչև ց30 շիթս, 10 կամ 12 անգամ յաւուրն 'ի մէջ միոյ փոքրիկ դրդալի ոգւոյ վարդի. և 'ի պակասիլն այսոցիկ դեղորէից, 'ի գործ արկ փոխանակ սորա զաղի ջուր կամ զքացախախառն ջուր։

Դարձեալ, մարթ է դիւրաւ դադարեցուցանել

զՀոսու�արեան 'ի ռնգացն, եդեալ զծածուկ անդամանն՝ հանդերձ ամորձեօք 'ի մէջ բարկ քացախոյ, կամ ցրտագոյն ջրոյ. և այսմիկ հնարիցս ուր ուրեմն մարթի վրիպիլ։ Իսկ 'ի գիպուածս, յորում արիւնն դադարեալ արտաքուստ՝ սկսանի հոսիլ 'ի ներքուստ, պարտ է յոյժ երկնչիլ և զգոյշ լինել. մանաւանդ 'ի քուն լինելն, զի մի՛ ախտակիրն խեղդամահ լիցի։ Այլ եթէ գուցէ այդպիսի վտանգ խեղդման 'ի յորդութէ արեան հոսելոյ 'ի կոկորդն, յայնժամ պարտ է փութալ 'ի խնուլ զՃանապարհն զայն։ Ա՛ռ երկու թել, և կապեալ 'ի մի ծայրն սակաւ ինչ բամբակ, մի՛ յծ 'ի ռնգունս, և անցուցեալ զմիւս ծայրն 'ի բերանոյ, քարշեա՛ մինչև բամբակն 'ի ներքս երթիցէ, և այնգեալ կապեա՛ զերկու ծայրսն 'ի միմեանս. և երբ դադարի արիւնն, պարտ է նստուցանել զախտակիրն 'ի բարձր, թողեալ զգլուխն առանց իրիք աշխատանաց. և չէ՛ օրէն բնաւ լուանալ զարիւնն, որ ժողովեալ է 'ի ռնգունս. այլ պարտ է թողուլ, մինչև ինքնին անկցի բամբակն։

Իսկ անձինք՝ որոց սոէպ պատահի հոսու�արեան 'ի ռնգացն, պարտին միշտ լուանալ զոտս ջերմ ջրով, և ջերմ և չոր պահել զայնս. չէ՛ օրէն բնաւ կապել զոպարանոցն կամ գլխակոր նստիլ. կերակրոցն նոքին պարտ է լինել խոտեղէն, և այլ զովացուցիչք. գործածութիւն լուծողականացն երբեմնապէս է յոյժ օգտակար։ Այլ եթէ հոսուإ արեան 'ի ռնգացն յառաջ գայցէ 'ի լուծմանէ արեան, յայնժամ կերակրոցն պարտ է լինել սնուցողական. զոր օրինակ են պարարտագոյն արգանակքն, Ճէլաթինէ տէ քուէմօռի տի սակօռ, սակաւ ինչ գինեաւ, և շաքարաւ. և ինֆուզիօնէ տի քինաքինա 'ի մէջ գինւոյ. զոր պարտ է 'ի գործ արկանել ընդ երկար ժամանակ։

'Ի վախճանի գիտել արժան է, եթէ բացարձակապէս խօսելով՝ հոսուإ թթախտական արեան օգտաւէտ է քան զայլ ամենայն հոսմունս, և ո՛չ է այնքան երկիւղալի (բաց 'ի վերոյիշեալ գիպուածոց, յորում ասացաք, եթէ 'ի սատիկ հոսմանէ արեան պատճառին այլև այլ ցաւք ախտակրին. որպիսի են տկարութիւն, այտուցն երեսաց, նուրբ ախտն, և՛ն.) որովհետև գոն բազումք, յորոց յամենայնում աւուր հոսին երկու կամ երեք ունկի արիւն, և բնաւ ո՛չ

կորուսանեն զհանգստութիւնն։ Պատմի, եթէ յառնէ ումեմնէ յամենայնում աւուր հոսէր մէն մի լիսր արիւն, յարատևեալ մինչև 'ի չորս ամս, առանց բնաւ ինչ ինչաս գործելոյ։ Դոյնպէս ականատես եղաք հոսիլ յումեմնէ կնոջէ 'ի մէջ սակաւ աւուրց 25 լիսր արեան, առանց իրիք վշտի և վտանգի։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս էր կամ կոյր ևանչէոյ, որ ասի՝ Էմորոօիպէ սէրոս, կամ էրէրս։

'Ի դիպուածս այսորիկ թանչեաց՝ բնաւ ոչ հոսի արիւն, բայց միայն այսոցց ինչ 'ի վեր երևի յերասունս կամ 'ի թթախատական անգամս։ Սովորաբար յոյժ կարևոր և շահաբեր է երակ հատանելն յայսմիկ դիպուածի, զոր մարթ է և ևս կրկնել ըստ պահանջելոյ իրացն, հայեցեալ 'ի պարագայս բնութեան ախտակրին, զորօրինակ 'ի դիրս կազմուածոյ, 'ի խառնուածն, եթէ ինչ արիւնային, և ն։ Կերակրոցն պարտ է լինել թեթև, և լոյծ. իսկ ըմպելեացն զուվացուցիչ, և կակղացուցիչ։ Մարթ է և ևս առ 'ի կակղացուցանելոյ զորովայնն 'ի գործ արկանել սակաւ ինչ ֆիօռ տի սոլֆօ, և քռէմօռ տի թարթարօ, կամ մի ունկի ֆիօր տի սոլֆօ, և կէս ունկի սալ նիթռօ, և երեք ունկի էլէթթուարիս լէնիթիվօ խառնեալ իրերաց՝ տուր ըմպել մէն մի դրգալ սրձոյ յաւուրն, երեք կամ չորս անգամ։

Այլ եթէ երակքն երասանի լինիցին յոյժ սատակապէս ուռուցեալք, մինչև չհոսիլ արեան գլխովին. յայնժամ պարտ է զախտակիրն բաղմեցուցանել 'ի վերայ շոգեաց ջերմագին ջրոյ. մարթ է և ևս արկանել 'ի վերայ երասանի ախտակրին կտաւս թաթախեալս 'ի ջերմ սբիրիթօ տի վինօ, կամ յայլ կակղացուցիչ ամին 'ուման իրս։ Իսկ եթէ 'ի ձեռն այսոցիկ դեղորէից ոչ կակղանայ թանչքն, և չհոսի արիւնն, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զհեռագայ քաթարլազմաս։ Առ չորս կամ հինգ հատ կանանչ կանթիս պորինճանի, կամ փարթլիճանի, և սա-

կաւ ինչ ձէթն ձիթենեաց՝ խառնեալ իրերաց եւ ինեան բարիոք, և դիր 'ի վերայ վշտացեալ մասանցն։ Արդ՝ եթէ անօգուտ լինիցին ասացեալ դեղորայքս, և բաւականապէս ոչ փարատեսցի ցաւն և ուռոյցն, յայնժամ պարտ է փութանակի տղբուկս դնել, մանաւանդ 'ի վերայ ստեանցն երասանի, (որ ասի՝ մէմ.) որ լինի առաւել շահաբեր։ Այլ եթէ ոչ կռուի տղբուկն, յայնժամ հարկ է ծակել նշտարակաւ։ Գոն և այլ բաղում սպեղանիք, և դեղորայք 'ի գործ արկանելիք 'ի դիպուածս այսորիկ ախտի, բայց մեք ընտրանօք զառաւել շահաւէտականն միայն եդաք 'ի սակս համառօտութեան։

Իսկ 'ի դիպուածս, յորում ցաւն լինի յոյժ սաստիկ, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զյեսուգայ կակղացուցիչ սպեղանիս։ Առ երկու ունկի ունկուէնիթս բօքուլէս, և կէս ունկի՝ լաւտանս լիգուիտս, և զայսոսիկ ընդ միոյ գեղնուցի ձուոյ բարիոք խառնեա՛ ընդ իրեարս, և դիր 'ի վերայ թթախառեալ մասին։ Գիտելի է ասասէն, եթէ զվերոգրեալ կառավարութիս ոչ է պարտ 'ի գործ արկանել յամենայն դիպուածի թանչացաւութեան, յորում ոչ ելանէ արիւն. որովհետև գոն ինչ ինչ դիպուածք՝ յորս չիք բնաւ պէտք իրիք գեղոյ, որպիսի են՝ էմոռոիտաէ աբբասսիթա, այսինքն թանչք խամրեալ, որ բնաւ ոչ պատճառէ վնաս ինչ։ Եւ էմոռոիտաէ սէմբլիչէմենթէ թուիտա, այսինքն թանչք, յորում 'ի վեր երևի ուռոյց ինչ սոսկապէս, և ցաւ յոյժ սաստկաւ, որք և ոչ կարեն բնաւ լինել վտանգաւոր։ Իսկ դիպուածք յորս պէտս ունիմք գործածութեան վերոյիշեալ կառավարութեան, և դեղորէից, և արտաքին սպեղանեաց, են այնք, յորս ընդ թանչացաւութեան գտանի նաև բորբոքումն ինչ. քանզի յայնժամ բաց 'ի սաստկագին ցաւոց պատճառիլ մարթ է միանգամայն և տենդ ինչ դժնեայ, ուշագնացութեան, անդամագօսութեան։ և միանգամայն մարթ է այտուցեալն զայրացեալ փոխարկիլ 'ի քաղցկեղ։

ԳԼՈՒԽ Ա.

'Ի վերայ Լիֆման արբեան, որ յիպալացուոց կոչի՝ սբու�պի սանկուէ, և 'ի վերայ Քսիֆման արբեան, որ ասի՝ ջօրինօ պի սանկուէ։

ՅՕԳՈՒԱԾ Ա.

Թոքումն արբեան՝ է ախտ, կամ լսու էս թանչք ինչ թոքոց կամ արիւնակիր երակաց նորին. որ առ բժիշկս անուանի՝ բնէումնօռուաճիա, որ թարգմանի թոքաթանչք. և ունի համաձայնութիւն ընդ ախտին, որ կոչի սթօմաթօռուաճիա, որ ստուգաբանի ստամոքսաթանչք։ Անձինք նիհարք, ոքք ունին զերկայն պարանոցս և զլանջս անձուկս, և զմանրանօթս թոքոց թուլագոյնս՝ 'ի հասակէ հնգետասան ամաց մինչև ցյ5 ամս, են ենթակայ ախտին այսմիկ. և էս անձինք, ոքք վիճակեալք են սքօռպուութական ախտի և սեամաղձային խառնուածոց՝ են առաւել ենթակայ այսմիկ ախտի։ Գիտելի է՝ զի եթէ արիւնս այս արձակի 'ի մանր անօթոց կամ յարիւնակիր երակաց թոքոց՝ առանց ընթացակցութեան հազի, և այլ ինչ արտաքին ախտի, որպէս պատահի երբեմն, յայնժամ կարի դիւրաւ և փութով է դարմանելի և ապաքինելի։ Եւ եթէ արիւնս այս արձակի 'ի խուչափողէ, նոյնպէս մարթի դարմանիլ հեշտեաւ և առանց աշխատանաց։ Բայց եթէ ծագի 'ի թոքոց կամ յայլ խողովակաց նորին հանդերձ ստատկութիւն հազի, և տագնապաւ շնչառութիւն, յայնժամ ախտս այս լինի յոյժ որոգայթաւոր, և դժուարաբուժելի։ Ախտս այս հաստարակօրէն տիրապետէ 'ի գարնան եղանակի։

Մասնաւոր պատճառք ելման արէան։

Թոքուն արեան մասնաւորապէս պատճառի 'ի տկարութէնէ թոքոց, և 'ի վատառողջութէնէ գործարանաց շնչառութէնէ են։ Հնար է և ծագիլ յայնմ ամենայնէ, որք զայրացուցանեն զթոքս, որպէս 'ի չափազանց արբմանէ ոգիաւոր հեղանիւթոց, 'ի սաստիկ կրից և աշխատանաց, են։ Մարթ է և յառաջ գալ 'ի վիրաւորմանէ, 'ի ճմլեցմանէ և 'ի ճնշմանէ վերոյիշեալ գործարանաց, և և յարշաւասոյր ընթացմանէ, 'ի բարձրաձայն գոչմանէ, յերկարատև կարկաչմանէ և երգաբանութէնէ, 'ի սաստիկ և 'ի հնագոյն հազից, յուժգին տուփանաց պապշտ սիրոյ, յարգելականութէնէ իրիք սովորական հոսման, 'ի մեծաղական գոլորշեաց որք ընդմտանեն 'ի թոքն շընչառութիւն։ Դարձեալ, մարթ է և պատահիլ 'ի խոցէ և 'ի պալարէ 'ի վեր երևելոյ 'ի թոքս և 'ի խրոչափողս, 'ի բորբոքմանէ ոլտի, թոքոց, և ստոծանւոյ, 'ի թոքաժեռութենէ, և 'ի հարբզնոյ ինչելոյ 'ի կուրծս և 'ի թոքս։ և միով բանիւ ասացից, ախտիս այսմ մարթ է պատճառիլ յայնմ ամենայնէ, որք զգրգռեն զարիւնակիր երակս թոքոց, և արգելուն զշրջանս արեան։

Նշանք ախտիս այսորիկ։

Օդգնթաց լինի ընդ ախտիս խոնջութէ, կարմրութէ երեսաց, գժուարաշնչութէ, հազ չորագոյն, անձկութէ, գաղտնի ջերմութէ, ձգտումն, ցաւ գլխոյ, միջաց, և ստորին ոսկերաց կրծոց, ցրտութիւն ծայրից անդամոց, ժգնութէ միզի, բաբախիւն սրտի, սուլումն խռչափողի, ցնցումն միանանց կրծոց։ Արիւնն՝ որ ելանէ ընդ բերանն, երբեմն լինի կարմրակաւ, լոյծ, և ծիրանագոյն, որ է գուշակ յայտնապէս ցելման կամ հերձման մանր արիւնակիր երակաց։ և երբեմն ելանէ յորդ, որ է ցուցակ հերձման օդգնկալ խողովակաց։ Իսկ եթէ նոյն արիւնն լինի պղտոր, մաղտասախառն, և նեխեալ, նշան է խըղխայթման թոքոց։

Նշանք վատթարագոյնք և ձախորդականք՝ են ջերմութիւն անընդհատ, թուլութէ, տառապանք կամ

նեղութիւն կրծոց, հաղ երկարատև և սաստիկ, առաջ
ութիւն կամ նաև բոլորովին գադարու

պարտի լինել համաձայն զօրութեանն ախտակրին, և ուժգնութեանն ախտին։ 'Ի վերջ քան զամենայն կարի կարևոր է երակահատութեան 'ի դիպուածն՝ յորում ախտն յառաջացեալ ելցէ յոգիսաւոր հեղանիւթոց, 'ի մեծարշաւ ընթացմանէ, յաշխատանաց, 'ի սաստիկ կրից, յարգելականութէ իրիք սովորական հոսման, 'ի բորբոքմանէ արեան, և յուժգնութէ բնութեան։ Իսկ եթէ զկնի երակ հատանելոյ՝ ջերմութի և հոսումն արեան ոչ դադարի, և զարկն մեծ ընդարձակի և ամիսոիի սաստիկ, յայնժամ արժան է վերստին երակ հատանել, և սահեցուցանել զորովայնն 'ի ձեռն մեղմ և զովացուցիչ դրեխից, և դնել զոտս 'ի մէջ դաղջ ջրոյ, առ 'ի թուլացուցանել զճիգն բնութեան, և զգրգռումն արիւնակիր երակաց թոքոց։

Ըմպելին 'ի սկզբան պարտի լինել զով, և հետ զհետէ միշտ առաւել ցուրտ։ Եթէ զուգընթաց լիցի ընդ ախտիս հազ ինչ սաստիկ, որպէս պատահի բազում անգամ, յայնժամ օրէն է դիմել 'ի գործածութի աչիտս սոլֆոռիքոի խառն ընդ նոյնպքանակ կրկնահան ցքոյ, և ընդ ցրտագոյն ջրոյ։ Նոյնպէս գործածութեան մուչիլլաճինէի տի կոմիս առապիքա, կամ խաշուն սալեպի՝ է յոյժ օգտաւէտ, զոր պարտ է 'ի կիր առնուլ առատօրէն։ Եւ ևս ոչ սակաւ օգտէ գործածութեան ինֆուզիոնէի տի տիճիթալէ բուրբուռէա։ Զայս եթէ կամիս առնել, արկ զնոշոր փոշի տիճիթալէ կոչեցեալ տերևոյն ՝ կշռոյ քսան ցորենոյ, յերկու ունկի՝ ցուրտ ջուր։ զկնի երկոտասան ժամուց՝ քամեա զայն նուրբ կտաւով յանօթ ինչ ապակեայ։ ապա յաւել 'ի սոյն զ30 չիթա ջուր կինամոնի, և զ20 չիթա լաւանս լիգուիտոս, և զբաւականաչափ՝ շիռօբբօ։ և տուր ըմպել ախտակրին երեք կամ չորս անգամ յաւուրն՝ զկշիռ քառորդ տրամոյ, մինչև լցցի տրամ մի յաւուրն։

Եթէ շնչաւութենն չիցէ այնքան դժուարին, յայնժամ մարթ է և տալ ախտակրին ՝ տանելոյ սատմոքսի նորին էսթռանթեթօ տի քինա, զոր օրէն է քաղադրել ընդ բաւականաչափ շիճուկի կաթին, որ պատրաստեալ լիցէ պաղլեղաւ։ Եթէ թքումն արեան պատճառեալ լիցէ յարգելմանէ թանչից և տեռատեսական արեան, յայնժամ օրէն է փութանակի ուղղուկս դնել 'ի վերայ ոտական երակաց կամ 'ի վերայ ստեանցն երասատանի։ Յորժամ ախտս այս ծա-

գի 'ի սքօռպուԹեական ախտէ, կամ յայնմ տենդէ՝ որոյ նախնական պատճառն գտանիցի լինել ԹուլուԹիւն, յայնժամ պարտ է առնուլ 'ի կիր զնաչուն եղիճի կոչեցելոյ յիտալացւոյ՝ օւԹիքա, զոր պարտ է ըմպել առաւօրէն։ ՄարԹ է և սատուցանել հիւանդին գինի աղնիւ, բայց սակաւ քանակուԹեամբ։ Նոյնպէս գործածուԹիւն իբէքաքուանայի՝ լինի երբեմն օգտակար, զոր օրէն է 'ի վար արկանել յերեք ցորենոյ մինչև ցչորս՝ երեք կամ չորս անգամ յաւուրն։

ԵԹէ զուգընԹաց լինի ընդ ախտիս հազ սաստիկ, և ցնցումն մկանանց, ընդերաց, մանաւանդ կրծոց և շնչափողին, յայնժամ պարտ է 'ի կիր արկանել զիւղն կտաւատի, կամ քաղցր նշոյ, զէմուլսիօնէ առապիքա, որ բաղադրեալ ԹցԷ Ջրոմն Թմբրեցուցիչ խառոց։ Իսկ եԹէ ախտս այս յառաջացեալ ԹցԷ յօդուածացաւուԹէ, յորքիւնոյ, 'ի բորոտուԹենէ և ն. յայնժամ օրէն է դնել վէշիքաԹօռիս 'ի վերայ կրծոց կամ լանջաց, և զհիւանդն բազմեցուցանել 'ի վերայ շոգեաց ջերմագին ջրոյ։ Բայց յորժամ դադարի հոսումն արեան, ընդ նմին և հազն, և ախտս կիրն ունի տակաւին ջերմուԹիւն և վնչաս պատճառեալս յուժգնուԹէ բնուԹենէ, յայնժամ կարևոր է առնուլ 'ի կիր զշինուկն կաԹին, զնաչուն գարուոյ խառն ընդ բաւականաչափ մեղրի, առ 'ի Թուլացուցանել և ցածուցանել զուժգնուԹիւն բնուԹեան։

Դարձեալ, ախտս այս՝ որպէս ասացաք, բազում անգամ զոյգ ունի ընդ իւր զհազ սաստիկ և զջերմուԹիւն. յայնժամ մարԹ է և սահուլ 'ի կիր զյեղտագայ մածուցիկ մանձիւնս զկնի երակահատուԹեան։ Ա՛ռ ունկի մի՝ զարմատն ալԹէայի, և նոյնչափ՝ ըզսերմն սերկևիլի, վեց տրամ՝ զարմատն լիկուիրիցիայի, այլև ունկի մի՝ կօմմա առապիքա, և կէս ունկի՝ ԹռակաքանԹէ։ Զամենեսին զտասս պարտ է ջարդել յանկանի, և դնել Թրմոց 'ի լիտր մի ջուր վարդի ժամս չորս կամ հինգ, այլ խառնելի է անընդհատ դրդալիս՝ մինչև զանգիլ բարուոք ընդ միմեանս՝ և լինել մածուցիկ, և ապա քամեա զայն կտաւով յամանս ապիկած կամ ապակեայ։ Յետոյ արկ 'ի նա հետ զհետէ զերեք ունկի՝ շաքար վանի. և պարտ է առնուլ չորս անգամ յաւուրն, ըստ չափու միոյ դրդալի սեղանոյ։

Է և այլ դարման, որ առանց զայրացուցանելոյ արդելու զԹքումն արեան, և այսպէս բաղադրի։ Առ երեք ունկի՝ նուրբ փոշի արմատոյն կոչեցելոյ քոնսոլիտա մաեօր, և նոյնչափ՝ քոնսէռվա տի ռոզէ. յոր յաւելլ բաւականաչափ շիլօբբօ տի բոսքավէռօ պիանքօ, և պարտ է հիւանդին ընդունիլ յամենայնում ժամու մէն մի գրդալ սրճոյ։ Այլ գիտելլ արժան է, զի՝ի դիպուածս յայս չէ պարտ՝ի կիր արկանել զնԹիչ և զօրացուցիչ դեղորայս, բայց եԹէ ուր ուրեմն, որովհետև գրդռեն զարիւնակիր երակս Թոքոց, և բազում անգամ զայրացուցանեն զախտն։ Եւ իբրև վերոյիշեալ, կամ նոցին նման դեղորէիւք պակասեացի ուժգնուԹի բնուԹեն, եԹէ անկեալ ելցէ հիւանդն յուժոյ, ոչինչ արդելք կայ գործածուԹեան ինֆուզիոնէ տի քինաի. զոր բազում անգամ գրեցի՝ի բժշկարանի իմում, յաւելլով՝ի նոյն էմուլսիոնէ առապնքա, զոր պարտ է առնուլ չորս կամ հինգ անգամ յաւուրն, ըստ չափու միոյ ունկեոյ։ Եւ յայսոսիկ միջոցս մեծապէս փոյԹ ունելլ արժան է՝ի կանոնադրելլ զընԹացս հիւանդին, չափաւոր շարժումն առնելով յառաջարար և՝ի հովային տեղիս, բայց առանց աշխատ լինելոյ և ջերմանալոյ։ Դարձեալ գիտելի է, զի եԹէ զուգընԹաց լինին ընդ ախտիս նշանքն ԹոքախտուԹեան, յայնժամ պարտ է՝ի ձեռն առնուլ զնոյն դեղորայս և զկառավարուԹիւն՝ որք վասն ԹոքախտուԹեան, զորոց խօսեցաք՝ի գլուխ Ժ. երես 177։

ՅՕԳՈՒԱԾ Բ.

՝Ի վերայ ֆոխման արեան, որ ըստ բժշկոյ կուէ՝
էմոռէգիոի։

Փսխումն արեան հասարակօրէն լինի՝ի հերձմանէ խոռոչային փոքրիկ նեարդից ստորին որովայնի, կամ արիւնակիր ամանոց աղեաց, և կամ մեսենտրայական երակաց, որով ոգիք փորոտային ամբոխեալ ստիպեն զաղիան՝ի ստորուստ՝ի վեր բերել զանջատեալ արիւնն մինչ՝ի խախացոցն, յորմէ ծագին ըզդայումունք արեան բազմազան եղանակաւ. նմին իրի

որոշն էս յորակի արեանն, որ սրտաքս բղխի ըստ բնութեանն առանց հաղի. երբեմն լինի լոյծ և ծիրանագոյն, երբեմն մակարդեալ և սեաւ, երբեմն հասարակ և ջինջ, և երբեմն էս խառն ընդ այլեայլ նիւթոց: Ախտս այս ոչ է այնքան ընդհանուր, որպէս զթանչք, զորմէ փոքր ինչ յառաջ խօսեցաք. բայց է յոյժ որոգայթաւոր, և պէտս ունի մեծի զգուշութեան:

Պատճառք փսխման արեան:

Բաց 'ի վերոյհիշեալ պատճառաց, փսխումն աքեան կարէ էս յառաջ գալ 'ի չափազանցութէ կենսական ուժոյ, որ լինի յառողջութեան ուտելեաց և 'ի յոգիաւոր հեղանիւթից, 'ի սաստիկ բարկութէ, և 'ի բերկրութէ, յառատութէ արեան, և 'ի զօրաւոր գեղորէից՝ այլովքն հանդերձ. որք ճնշեն զնեարդս ստորին որովայնի, և զարիւնակիր ամանս աղեաց առ 'ի դուրս հոսեցուցանել զարիւնն ապաժոյժ: Նոյնպէս մարթ է պատճառիլ յայնմ ամենայնէ, որք սաստկապէս գրգռեն և վիրաւորեն զստամոքսն, և զներքին թաղանթս փորոտեաց, որպէս յուժգին լուծողական և 'ի փսխողական գեղորէից, 'ի դժբնդակ թիւնից, 'ի կարծրապինդ և 'ի սուր նիւթոց մտելոց 'ի խախացոցն: Երբեմն էս պատահի 'ի ինքնակար և 'ի լճային ջուրց, 'ի ճճեաց, և 'ի տզրկաց, որք ընդմտանեն 'ի ստամոքսն ջրրմպութէն: Բազում անգամ էս 'ի վիրաւորմանէ լերդի, աղեաց, և այլոց ընդերաց: Մարթի պատճառիլ էս յարդելականութէ երիք սովորական հոսմանց, և էս յարատաքին պատճառաց. որպէս 'ի հարուածոց, 'ի ճմլմանէ, 'ի բաղխմանէ, և յայլ նմանեաց, յորոց մարթ է յառաջ գալ երիք բորբոքման:

Դարձեալ, մարթի ծագիլ էս 'ի տկարութէ կամ 'ի թուլակազմութէ արիւնակիր ամանոց աղեաց և այլոց ընդերաց, նոյնպէս և 'ի իցմանէ նոյն ամանոց: Դարձեալ, մարթի լինել էս 'ի ջղային տենդէ, և յայլ երկարատև խօթութէ, որովք աղեաց բարեխառնութէն այլայլեալ, և կենսական զօրութէն նոցին լքեալ՝ պատճառէն զփսխումս զայս: 'Ի կանայս սովորաբար պատճառի այս յարգելականութէ դաշտանի, կամ թանչից: Ընդ ինքն, որք վիճակեալք

են սեամաղձային բնութիւն, մանաւանդ նոքա՝ որք վարեն զանշարժական կեանս, և ըմպեն զառատագոյն ոգիաւոր հեղանիւթս, են առաւել ենթակայ այսր փսխման։

Նշան փսխման արեան։

Ախտս այս նախ սկսանի 'ի թեթև ինչ թուլութիւն բոլոր մարմնոյ, 'ի նեղութենէ, և 'ի ձգտմանէ, որք սովորաբար յարատևեալ մնան քանի ինչ ժամանակս. և ապա բերեն ցաւ ինչ 'ի սահմանս ախոնդանաց, և յաղիս, որք մանաւորապէս պատահին յարգելմանէ թանչից և գաշտանի։ Դարձեալ, ախտակիրն զգայ զնողկանս, զյօժարութիւն ինչ 'ի ժայթքել, զբաբախիւն սրտի, զձգատումն, և զփսխումն։ Նիւթն որ արտաքս ելանէ ընդ բերանն՝ լինի լոյծ, ջրային, տսիպ, և երբեմն լորձունք, յորմէ զհետ գան հեծկլտանք և հեաղ։ Եւ յետ այսոցիկ նշանացս 'ի վեր երևի յորդառատ հոսումն արեան, որ ստէպ արտաթորի ընդ բերանն հանդերձ ջերմութիւն և ցաւովք մակորովայնի, և ճնշմամբ կրծոց և ստամոքսի։ Երբեմն զուգակից ունի ընդ իւր զնուաղումն սրտի, զծարաւ սաստիկ, և զցաւ գլխոյ. և երբեմն ևս ախտակիրն ստանայ զգոյն կանաչախառն դեղին. և արիւնն՝ որ ելանէ ընդ բերանն՝ լինի թթուահոտ, կամ գիսահոտ, որ է գուշակ յոռեգոյն ելից, և յայնժամ անուանի մծուռ նեռ։ Վասանգն այսորիկ փսխման ըստ մեծի մասին 'ի վեր երևի յայնմանէ՝ զի արիւնն հեղեալ, թէ յամեալ մնայ 'ի փորոտիս, ստանայ զնեխութիւն, յորմէ կարէ պատճառիլ փտախտութիւն, և քաղցկեղ։

Խնամապարութիւն և դեղարոյ 'ի կիր արկանելի 'ի դէպս փսխման արեան։

Խնամատարութիւնքն ախտիս գրեթէ մի և նոյն են ընդ վերոգրեալ խնամատարութիւնն Ջրման արեան։ Արժան է պահպանել զհիւանդն 'ի հանգիստ և յանդորր, հեռի առնել 'ի նմանէ զայն ամենայն, որք պատճառեն զնեղութիւն և զգրգռումն։ Կերակրոցն և ըմպելեացն պարտ է լինել բնութիւք զովացուցիչ և մեղմիչ, և ստիպաւ քանակութիւք 'ի գործ ածել արբ-

ժան է։ Երբեմն ցուրտ ջուրն և սառոյցն 'ի գի-
պուածս յայս լինին երբև զգեղ ազնիւ։

Յորժամ փսխումն արեան պատճառի յուժգնութիւն
բնութեան և յարդելականութիւն իրիք հոսման, որպէս
սի է հոսումն թանչից, և գաշտանի, ևն, յայնժամ
օրէն է երակ հատանել, և փութալ զամենայն յար-
մարագոյն հնարս 'ի վար արկանել խակ և խակ 'ի նոյն
խակ ժամանակի առ 'ի թուլացուցանել զուժգնութիւն
բնութեան, և շարժել վերատին զհոսումն զայն սովո-
րական. որովհետև զայսմանէ կոխեալ կայ՝ ոչ մի-
այն ապաքինումն ախտիս, այլ միանգամայն կեանք
ախտակրին։ Զէ պարտ 'ի վար արկանել զխթիչ և
զզօրացուցիչ դեղորայս, որովհետև գրգռեն զնեարդս
և զարիւնակիր ամանս աղեաց, և բազում անգամ
առաւել զայրացուցանեն զախտն։ Յայսմ վայրի կա-
բի կարևոր է առնուլ 'ի կիր զդրեխս կակղացուցիչս,
թուլացուցիչս և զովացուցիչս. և դնել զոտս 'ի մէջ
գաղջ ջրոյ։ Նոյնպէս օրէն է ազրուկս կուռեցուցա-
նել 'ի շրջակայս երաստանի, բաղմեցուցանելով զհի-
ւանդն 'ի վերայ շոգեաց ջերմագին ջրոյ. նմանապէս
պարտ է թոյլ տալ ախտակրին ըմպել զհիւթս հա-
սունացեալ պտղոց, որ իցէ լուծեալ ջրով։

'Ի գիպուածս, յորում փսխումն արեան յառաջ
գայ 'ի գրգռմանէ անօթոց արեան և թանչից, յայն-
ժամ պատշաճագոյն դեղն է էլիսսիր աչիտոտի հալ-
էռ, որ ոչ միայն հանդարտէ զգրգռելութիւն, այլ
միանգամայն բարեկարգէ զդրութիւն ստորին որովայ-
նի և աղեաց, և բարեխառնէ զնեղքին այլայլութիւն.
զկիրառութիւն սորա տեսցէս 'ի հատ. ՁԲ. 'ի տառն
Է. 'ի կարգի իւրում։ Եթէ փսխումն արեան իցէ
առատագոյն, յայնժամ օգտաւէտագոյն դեղն է՝ օս-
թիքա, այսինքն եղնձ, կամ եղինջ։ Եւ եթէ հիւանդն
անկեալ իցէ յուժոյ, պատշաճագոյն դեղն է ինֆու-
զիոնէ տի քինա խառն ընդ էմուլսիոնէ առատիքսի։
Նոյնպէս օգտաւէտ է աքուա մառցիալէ տի սիա,
տալով ախտակրաց ժամէ 'ի ժամ երեք ունկի 'ի պահ
առաւօտուն, մինչև լցցի լիսր մի յաւուրն. այլ
պարտ է քաշ խմել զանօթ նորին, և շրջուն պահել
յայլում անօթի՝ որ լի իցէ ցուրտ ջրով։

Բայց յորժամ գագարի փսխումն արեան, և հի-
ւանդն տակաւին ունի զվիշտս և զանձկութիւնս պատ-
ճառեալս յարդելմանէ արեան, որ լճացեալ մնայ 'ի

փորոտիան, յայնժամ կարևոր է 'ի վար արկանել լուծողականս ինչ մեղմագոյնս, և ախորժարարս, որպիսի են մանանա, Թամարինտի, և բոլբա տի քաս սիա։ Նոյնպէս և չահաւէտ է գիմել 'ի գործածուն գրեխաց պատրաստեալ շիճուկաւ կաթին, փոքր ինչ քացախիւ, և մեղրիւ, զոր պարտ է առնել երկու կամ երեք անգամ յաւուրն առ 'ի դուրս հոսեցուցանել զլճացեալ արիւնն, և դիմակալել փտութեան։ Զէ օրէն բնաւ 'ի վար արկանել զսաստիկ լուծողական գեղորայս՝ եթէ 'ի վերուստ, և եթէ 'ի ստորուստ, որովհետև գրգռեն զստամոքն, զնեարգան և զարիւնակիր ամանան; և բազում անգամ առաւել զայրացուցանեն զախտն։



ԳԼՈՒԽ ԼԲ.

'Ի Վերայ մրկման արեան, որ յէպաւլաց-ոց ասի՝ օ-ինա ան-կոինէա, և ա-ա Բ-ի-ելիս անուանի՝ Էմոռոռոիա։

Գիտելի է, զի արիւնն այն՝ որ 'ի դուրս վարի 'ի սերական անդամոց, երբեմն հոսի յարիւնակիր ամանոց փամփշտի, երբեմն 'ի միզանց խողովակաց, երբեմն 'ի գործարանաց երիկամանց, և երբեմն և-ս 'ի նոյն իսկ երիկամանց, ըստ պէսպէս տրամադրութեանցն։ Վասն որոյ և որոշումն է նորա ըստ հիւթոցն՝ որ 'ի դուրս վարին 'ի նոյն անդամոց. որ երբեմն լինի ոսկ արիւն և լոյծ. և երբեմն կարի լոյծ և տորտալից կամ մրրալից. երբեմն թուխ կամ սեաւ և մակարգեալ, և երբեմն գեղեցիկ կարմիր և թափանցիկ. երբեմն պողիպոդական, և երբեմն խառն ընդ միզի. և երբեմն և-ս յորդ, և երբեմն սակաւ, կամ նուազ։ Ա-յս ախտ գտանի նաև յերիտասարդս, բայց գուն ուրեք, և յոյժ ցանցառակի։ Իսկ ծերք, և որոյ տիրապետէ առաւել սեամուղձն և թանչախան, են 'ի հաստարակի ենթակայ այսմ ախտի։

Նոյնպէս և կանայք՝ որոց արգելեալ է հոսումն տեառատեսական, են յոյժ ենթակայ ախտից։

Դարձեալ, գիտել արժան է, եթէ վտանգ այսրիկ ախտի ըստ մեծի մասին 'ի վեր երևի յայնմանէ, զի սրիւնն՝ որ արտաթորի 'ի նոյն անդամոց, լինի նեխեալ և շարաւալից. յորմէ կարէ յառաջ գալ ջրգողութի, կամ փտախտութի, կամ ապականութի, և կամ տենդ ծիւրական։ Նոյնպէս և վտանգաւոր է, եթէ միզումն արեան պատճառեալ ինչէ 'ի խձից գոյացելոց յերիկամունս կամ 'ի փամփուշտս։ Եւ առաւել քան զամենայն աղեստալի է այն, յորժամ պատահի կամ ծագի 'ի ջղային տենդէ, 'ի ծաղկէ, և 'ի բորբոքմանէ երիկամանց կամ փամփուշտի։ Իսկ 'ի դիպուածս, յորում պատճառի յարգելականութէ իրիք սովորական հոսման, կամ 'ի խթիչ և յազդու դեղորէից, և կամ 'ի ձգտմանէ, յայնժամ չիք այնքան երկիւղ։

Պատճառք մղման արեան։

Առաւել ընդհանուր պատճառք այսր ախտի են թանչքն, տկարութիւն միզանց խողովակաց, երիկամանց, և փամփշտի, ուժգին շարժումն, բարձումն ինչ ծանրագոյն իրաց, անկանիլն, ևն։ Կարէ պատճառիլ ևս 'ի հարուածոց, 'ի տաժանաւոր ծննդոց, 'ի սաստիկ և յանընդհատ աշխատանաց, յընդերկար ձիավարութէ, յանչափ գործածութէ ոդիաւոր հեղանիւթոց, 'ի խթիչ և 'ի զայրացուցիչ դեղորէից. որպիսի են քանթառէլլէ, մէլօէ, ռանունքօլօ, ևն։ Մարթ է ևս պատահիլ 'ի խձից, և 'ի խոցից 'ի վեր երևելոց յերիկամունս, 'ի փամփուշտն, և 'ի միզանց խողովակս. յարգելականութէ թանչից, և դաշտանի, 'ի ապաւիտէ անուանեալ որդանց մտելոց կամ գոյացելոց 'ի փամփուշտն, յերկիւղէ, 'ի կրից հոգւոյ, 'ի սաստիկ տուփանաց պագշոտ սիրոյ։ Դարձեալ, մարթ է ևս պատահիլ յայլևայլ ախտէ, որպէս 'ի ջղային տենդէ, 'ի սքօռպութօ անուանեալ ախտէ, 'ի ծաղկէ, և 'ի բորբոքողականութէ։

Յաղագս ապգի ապգի նշանաց, 'ի յէառն որոց մաքրն է գոռ-
ղանէլ զհոսուսն արեան ո՛ր ի ինչ ընդերաց կամ մասանց։

Ախտս այս է կարի կամ նուազ վտանգաւոր նկատ-
մամբ արտահոսեալ արեան 'ի սերական անդամոց։
Արդ՝ յորժամ ծագի միզումն արեան յերիկամանց,
ճանաչի 'ի թեթևութէ ցաւոց, 'ի սաստիկ ջերմու-
թէ, 'ի ծանրութէ և 'ի ձգտմանէ միջաց, 'ի յորդու-
թէ միզի. և արիւնն՝ որ հոսի 'ի նոյն անդամոյ՝ լի-
նի ջինջ և կարմրերանգ, և երբեմն ունի զոյգ ջեր-
մութի ինչ թեթև, դառնութի և գարշահոտութիւն
բերանոյ, նողկանք սրտի, և յօժարութի 'ի ժայթ-
քել. 'ի դիպուածս՝ յորում միզումն արեան յառաջ
գայ 'ի միզանց խողովակաց, (որք են երկու երկայն
խողովակք, ընդ որս անցանէ մէզն յերիկամանց 'ի
փամփուշտն) գուշակի 'ի սաստկութէ անձկութէ,
'ի սակաւութէ արեան՝ որ 'ի գուրս վարի խառն ընդ
միզի, 'ի չափաւորութէ ցաւոց միջաց։

Բաղում անգամ և զուգընթաց լինի ախտիս բոր-
բոքումն. որ երբեմն պատճառի 'ի խձից կամ 'ի քա-
րանց մտելոց 'ի սոյն խողովակս, և յայնժամ ցաւքն
և նշանքն երկպատիկ առաւել սաստկանան, և մէզն
լինի արգելական, և արիւնն շարաւալից։ Իսկ 'ի դի-
պուածս, յորում միզումն արեան պատահեալ ելցէ
յարիւնակիր ամանոց փամփշտի, և կամ 'ի նոյն իսկ
փամփշտէ, այս ճանաչի 'ի զգայութէ փամփշտին, 'ի
սակաւ միզմանէ, 'ի նուազութէ զգացողական կա-
ղողութէ մակորովայնի, 'ի տուռապանաց, 'ի ձգտ-
մանէ, 'ի սաստիկ ջերմութէ և 'ի գարշահոտութէ
միզի, 'ի տորտոյ ելջելոյ յատակս անօթոյն, 'ի ցաւոց
թիկնամիջաց, մակորովայնի, և բէռինէօ անուանեալ
անդամոյ, որ է մասն մարմնոյն՝ որ ընդ սրբանն և
ընդ ամօթոյս, 'ի նուազմանէ, 'ի նողկանաց, 'ի
ժայթքմանէ, 'ի դժուարաշնչութէ։

Ընդ ժամս ժամս 'ի վեր երևին և ջերմութի, ա-
ղտագուն և ընդդիմութի զարկի բազկին, ուշադնա-
ցութի, և ցուրտ քիրտն։ Երբեմն և զհետ գայ ան-
ժուժութի միզի, երբեմն դժուարամիզութի, և խէթ
սրբանի։ Արիւնն, որ հոսի խառն ընդ միզի թէպէտ
չէ այնքան յորդ, բայց լինի մոյգերանգ իբրև ըղ-
սեաւ։ Մէզն երբեմն լինի պարզ և խուն ինչ արիւ-

նաշաղախ, բայց տորտաշէից, կամ լի պողիպոդական նիւթով։ Դարձեալ՝ են և այլ նշանք, որպէս քարշումն ամորձեաց 'ի բարձրագոյնս, ցաւն աղդերաց, դժուարաշարժութիւնն սրունից, չորութիւն մորթոյ բոլոր մարմնոյն, կերկերումն ձայնի, ցամաքութիւնն լեզուի և որկորոյ, բայց առանց ծարաւոյ. ձգտումն, հաղն, ցաւն մակորովայնի, հիւծումն մարմնոյ. Ջերմութիւն երբեմն լինի անընդհատ, և երբեմն ընդհատ, տորան՝ երբեմն լինի գորշագոյն, և երբեմն վարդագոյն, և երբեմն ևս սեւագոյն։ Եւ յետ այսոցիկ նշանացս փամփուշտն կամ միզանց խողովակքն սկսանին այտնուլ, յորմէ և պատճառի նեխութիւն, և քաղցկեղ. հուսկ յետոյ օր քան զօր սպառի ջերմութիւն բնական, և զկայ առնու զօրութիւն կենսական։ Քարագործք, բեռնակիրք, զօրականք, ձիավարք, որսորդք, փողահարք, և այլ սոցին նման տարժանելի արհեստաւորք՝ են նմանապէս առաւել ենթակայ ախտիս այսմիկ։

Յաղագս ֆանամպարուութեան դեղորդեան զոր պարտ է 'ի վերայ արկանել ընդդէմ մղման արեան։

Օրէն է մեծաւ փութով արգելուլ խակ և խակ զուտելիս և զբմպելիս բնութիւն խթիչս, զօրացուցիչս և ջերմացուցիչս։ Յորդութիւնն հոսման արեան 'ի սերական անդամոյ՝ կարէ պատրել զանհմուտ բժիշկըս, և շրջել զմիտս նոցա 'ի տալ զոգիաւոր հեղանիւթս, զթիւրակէս, զափիոն, և կամ զայլազգ խթիչ և սեղմիչ դեղորայս։ Բայց այդպիսի դեղորայք միշտ զայրացուցանեն զախտն, և սովորաբար 'ի վերայ ածեն զնեխութիւն, զքաղցկեղ և զերագահատ մահ։ Յորժամ միզումն արեան յառաջ գայ յուժգնութիւնք բնութեան, կամ յարգելականութիւնք իրիք սովորական հոսման, կամ 'ի սաստիկ աշխատանաց, և կամ յանչափ գործածութենէ ոգիաւոր հեղանիւթոց, յայնժամ պարտ է հարկաւորապէս երակ հատանել. բայց նկատել օրէն է միշտ 'ի պարագայս անձին. զբնակ 'ի հասակն, 'ի խառնուածսն, 'ի զօրութիւնն, 'ի սաստկութիւնն նշանաց, և՝։

Եւ պարտ է միշտ լոյծ ունել զորովայնն 'ի ձեռն կակղացուցիչ, թուլացուցիչ և զովացուցիչ դեղոց, որպիսի են շլանուկն կաթին, հիւթն թամա-

ռինոիկի, մանանայ լուծեալ 'ի ջուր։ Նոյնպէս պարտ է առնուլ 'ի կիր զգրեխս կակղացուցիչս մի կամ երկու անգամ յաւուրն, բայց պարտ է լինել ցուրտ, և ոչ ջերմ։ Դարձեալ, 'ի դիպուածս յայս յոյժ շահաւէտ է արիւն հանելն սրուակաւ, զոր պարտ է առնել յայն մասանէն միջաց, ուր առաւել զգայ ըզցաւն։ Նոյնպէս և օգտաւէտագոյն է միանգամայն դնել զտզրուկս 'ի շրջակայս սրբանին, կամ 'ի մերձագիր մասունս ուղղորդ աղեաց։

Եթէ ծագեալ իցէ 'ի խոցէ ինչ գոյացելոյ յերիկամունս, կամ 'ի փամփուշտն, և կամ 'ի միզանց խողովակս, յայնժամ մարթ է 'ի վար արկանել զբեաւգայ դեղն։ Առ երեք ունկի՝ ռատիչէ տի աղթէա, կէս ունկի՝ լիգուռիցիա, երեք տրամ՝ սէմէն բլանթակս, և 'ի հատարակ ջրի եփեա եռացմամբ իբր քառորդ մի ժամու. ապա զտեա, և մնասցէ երկուսաւանն ունկի, յոր յաւէլ մի և կէս ունկի՝ կոմմա առապիքա, և ապա առնուլ պարտ է սկահակ մի սրճոյ չորս կամ հինգ անգամ յաւուրն։ Այլ եթէ յառաջ եկեալ իցէ 'ի թուլութէ կենսական զօրութէ, կամ 'ի տկարութէ ընդերաց, յայնժամ օրէն է առնուլ 'ի կիր զէլիսսիռէ տի վէթռիօլս՝ խառն ընդ բաւական աչափ զով ջրոյ։ Նոյնպէս օգտաւէտ է բօլվէռէ տի տօվէռ, զոր մարթ է 'ի վար արկանել ըստ կանոնի և ըստ կերպի զորմէ լիով խօսեցաք 'ի գլ. ա. երես 27։ Զնոյն գործունէութի ունին և կոմմա քինօ, տէքօթթօ տի քինա քինա, վէթռիօլս տի մատթէ, շիճուկն կաթին, որ իցէ պատրաստեալ պաղլեղաւ։

Իսկ եթէ զարկ բազկին իցէ ուժեղ և խիստ, յայնժամ պարտ է դիմել 'ի գործածութի ինֆուզիօնէ տի տիճնիթալէ բուռբուռէաի, որ այսպէս յօրինի. արկ զնոշոր փոշի տերևոյս ըստ կշռոյ 12 ցորենոյ 'ի լիար մի ցուրտ ջուր. զկնի 12 ժամուց՝ հեղ զգուշութիւն զհեղուկն յայլ ապսկի անօթ, այնպէս զի մի խառնեսցի մրուրն ընդ պայծառ հեղանիւթոյն. ապա յաւէլ 'ի սոյն զկէս ունկի՝ թինթուռա տի չինամոմօ, և 60 շիթ լաւտանօ լիգուիտօ, և տուր ըմպել հիւանդին չորս անգամ յաւուրն՝ ըստ չափու միոյ փոքրիկ դրգալի։ Յոյժ օգտակար դեղ է և ֆոմէնթացիօնէ առնել ցուրտ ջրով, կամ սառուցիւ, և դնել 'ի վերայ ատորին որովայնի։ Նոյնպէս և օգ-

տաւէտ է գրեթէ առնել ցուրտ ջրով և քացախով։ Եւ եթէ պատճառեալ ելցէ 'ի ծաղկէ, 'ի ջղային տենդէ, յայնժամ պարտ է սկսանիլ զգործածութիւն քինաքինաի, և թթուաշ դեղորէից։ Իսկ եթէ ծագեալ ելցէ 'ի քանթառէլլաէ, կամ 'ի խթիչ դեղորէից, յայնժամ պատշաճաւոր դեղն է էմուլսիոնէն քաղցր նշոյ խառն ընդ կոմմա առապիքաի, և ընդ սալէպի, զոր պարտ է ըմպել առատօրէն։ Ոչինչ աւելի շահաւէտ դեղ է ևս գրեթէ առնել վերոյիշեալ էմուլսիոնէիւ և ջրոտն սալէպի. և եթէ գուցէ պնդութիւն որովայնի, մարթ է յաւելուլ 'ի վերայ սակաւ ինչ մանանայ։ Ո՛չ են բանք մեր աստանօր զմիզմանէ արեան, որ պատճառի 'ի խճից կամ 'ի քարանց մտելոց 'ի փամփուշտն և 'ի միզանց խողովակն. քանզի յայսպիսի գիպուածս քարահան վերահատից են գործք։



ԳԼՈՒԽ ԼԳ.

'Ի վերայ ղգայոտման կամ ծայրփման և կամ ֆոխման. որ յիպոլայոոց կոչի՝ վոմիթօ։

Կրկնակի է փսխումն, առաջինն մասնաւորապէս լինի 'ի ցնցմանէ ստոծանւոյ կամ մկանանց ստորին որովայնի. երկրորդն կրկնակի պատճառի, մի՝ 'ի խցմանէ սորոյ խախացոցին (որ է նեբքին ծակ ստամոքսի, յորմէ կերակուրք ելանեն յաղիս,) և ոգելից մանրաթելից ալեաց, որոց պաշտօն է ճնշել զփորոտիս առ 'ի վայր խաղացուցանել զ'ի նեբքս եղեալ նիւթքն. և միւս ևս՝ յուժգին գրգռմանէ ստամոքսի, և տուօտէնօ ձայնեալ ալեաց, և ևս յայլևայլ պատահարաց, որպէս յառաջիկայդ յայտնապէս տեսանես։ Գիտելի է, զի փսխումն 'ի բազում պարագայս է դեղ ինն ազնուագոյն քան թէ խօթութիւն. յայսպիսի գիպուածս՝ է բուռն ուժգնութիւն ինչ,

զոր առնէ բնութիւն՝ առ 'ի ազատել զինքն 'ի ծանրաբեռնութենէ ապականեալ և մահաբեր նիւթոց։ Վասն որոյ առաւել ճահոդագոյն է յայնժամ նպաստաստատոյց լինել բնութեան և շարժել զփսխու�՝ քան թէ արգելուլ զայն։ Սակայն ոչ ամենայն փսխուումն է միշտ այսպէս փրկարար և օգտակար, այլ զանազանի ըստ պատճառացն՝ յորոց յառաջ գայ և շարժի։

Յաղագս ընդհանուր պատճառաց փսխման։

Փսխուումն բաղում անգամ պատճառի 'ի գրգռմանէ և 'ի խանգարմանէ գործողութեան, և 'ի գալարմանէ ծորոյ ստամոքսի, ևս 'ի գեղոգական շարժմանէ փորոտեաց։ Դոյնպէս մարթ է ևս յառաջ գալ 'ի թուլութենէ ստոծանեաց, ստամոքսի, և փորային մկանանց և մանրաթելից, պատճառեալ 'ի սաստիկ խթողական հիւթոց։ Մարթ է ևս յառաջ գալ 'ի սուր և 'ի տոկոպ մաղձէ, և 'ի մածուցիկ մաղասոյ, նաև 'ի ստորէջ ճնաստակար հիւթոց, որք 'ի գլխոյ 'ի ստամոքսն լճանան, և պատճառեն զխմորումն կերակրոց և զնեխութիւն, խթելով զմանրաթելս ստամոքսի և ստորին որովայնի։ Երբեմն ևս 'ի ծծեաց, 'ի չափազանց կերակրոց և յոգիաւոր ըմպելեաց, ևս 'ի յօգելէն հոսանուտից։ Դարձեալ, մարթ է յառաջ գալ յայտուցից կամ 'ի վերաւորմանէ ներքին թաղանթոյ աղեաց, պատճառեալ 'ի ապթիթ ձայնեալ խոցէ։ 'ի սաստիկ և 'ի զօրաւոր փսխեցուցիչ և լուծիչ դեղորէից, 'ի թիւնաւոր նիւթոց, 'ի գժուարամարսելի և յիւղալի կերակրոց, որք դիւրաւ գնան յապակուելի։ Փոշտանկուին, տենդքն, բորբոքողականութիւնքն, ախտքն երիկամանց, փամփշտի, և այլ ընդ երաց, խէթն փաթոյթ անուանեալ աղեաց, և երկարատև հիւանդութիւնքն կարեն պատճառել զփսխուումն։ Այլև կարէ պատճառիլ փսխուումն 'ի սաստկագոյն կրից, 'ի շարժմանէ, որպէս պատահի 'ի նաւի, 'ի կառաց, 'ի ձեւակերպելոյ և յերևակայելոյ զանախորժելի առարկայս։ 'Ի վախճան ամենայնի՝ փսխուումն ևս է նշան ինչ յղութեան, որ հասարակօրէն սկսանի զկնի երկրորդ շաբաթուս արգելականութեան դաշտանի, և յարատևեալ մինչև ցերրորդ կամ ցչորրորդ ամիս առանինս։

Յաղագս ընդհանուր նշանաց քսանան։

Հասարակօրէն 'ի վեր երևի ձանձրութիւն ինչ 'ի բերանն, 'ի կոկորդն, և 'ի սաստմնքն. և յայնժամ իսկ և իսկ զհետ գայ նոզկանք սրտի, տապ, ճնշումն մակրովայնի, յորդառատ լորձունք, ձգտումն, հեծկլտանք, հազ, պնդուն որովայնի, ցուրտ քիրան, ամբոխումն աղեաց, ամփոփումն ստոծանեաց, հոսումն արտասուաց, կարմրութիւն երեսաց. երբեմն 'ի վեր երևի այտուց ինչ 'ի դէմս. և երբեմն ևս զհետ գայ նուազումն սրտի ևն։

Յաղագս մասնաւոր նշանաց և դեղոցն քսանան պատճառեալ 'ի ինքնաւոր նիւթոց և 'ի զօրաւոր քսաբոդել և լոծողական դեղոցն։

'Ի դիպուածս յայս բաց 'ի վերոգրեալ նշանաց, փսխումն լինի կարի յորդառատ և յաճախակի, և յայնժամ իսկ և իսկ զհետ գայ ցաւ և տապ սաստիկ 'ի փորոտիս, նուազումն սրտի, ցնցումն մկանանց ստորին որովայնի, և միզարգելութի հանգերձ ցաւմնքութիւբ բերանոյ, և լուծմամբ որովայնի. որոյ պատճաճաւոր դարման են փսխողական դեղորայքն, և գաղջ ջուրն, զոր պարտ է տալ ստէպ ստէպ առ 'ի դուրս վանել զթիւնն. հարկ է ևս նպաստամատոյց լինել նմա մատուցանելով զկաթն, զկոգի, և զայլ մածուցիկ դեղորայս։

Եթէ թիւնն անցեալ իցէ յաղիս, յայնժամ պարտ է առնուլ 'ի կիր զգրեխս մածուցիկս, առ 'ի լպրծուն գործել զաղիս։ Եթէ փսխումն յառաջացեալ իցէ 'ի շուայտութենէ և 'ի չափազանց արբեցութենէ, յայնժամ կոչի՝ քռաբուլա, որոյ նշանքն են փսխումն 'ի պահ առաւօտուն, անհամութիւն բերանոյ, ձգրտումն, ջերմութիւնն. և հիւթն որ ելանէ ընդ բերանն՝ լինի ջուր ջինջ և գառնահամ, և երբեմն ևս տոխոլ. և դեղն՝ է սակաւաքանակ իբէքքաքուանա, արբուցանելով ստէպ զթրմոցն երիցկի։

'Ի դիպուածս, յորում փսխումն պատճառի 'ի ճնշմանէ և յամփոփմանէ ներքին թաղանթոյ ստորին որովայնի, որ հասարակօրէն պատճառի 'ի խուլական ուռուցից, յայնժամ անուանի՝ վոմիթօ շիռօ

գо. որոյ նշանքն են՝ կարծրութիւն ստորին որովայնի, նիհարութիւն, անհաղութիւն կերակրոց, այլովքն հանգերձ. և գեղորայքն՝ են իւղն քաղցր նշոյ, կամ ձիթապտղոյ, և կամ կտաւատի. և սլիս տի ուիչինս, զոր պարտ է տալ ունկի մի յաւուրն: Գրեթն պարտի լինել ջրոմն մոլոշի, և իւղով նշոյ, և 'ի գործ արկանել երկու անգամ յաւուրն:

Եթէ փսխումն պատահեալ ի՞ցէ յընդդիմութենէ, կամ յոլորմանէ աղեաց, յայնժամ կոչի՝ վոլվուլոս. որոյ նշանքն են ցաւն փսխոյթ անուանեալ աղեաց, արտաթորումն կղկղանաց ի բերանն, այլովքն հանգերձ. և գեղորայքն են ջուր գաղջ, և սնդիկն, զոր պարտ է առնուլ երկու անգամ յաւուրն, ըստ չափու երեք ունկեաց, խառն ընդ իւղոյ քաղցր նշոյ: Գրեթն լինիցի կազմեալ օճառիւ, իւղով, աղիւ, և ջրոմն մոլոշի. զոր պարտ է 'ի կիր արկանել երեք անգամ յաւուրն և առաւել յաճախակի, եթէ յոյժ կարծրացեալ ի՞ցէ պնդութիւն որովայնի:

'Ի դիպուածս, յորում փսխումն ծագի 'ի թուլութէ կամ 'ի սակարութենէ փորոտեաց, ստամոքսի, և ստոծանեաց, պատճառեալ յոգիաւոր հեղանիւթից և յուժգին լուծողական և ործացուցիչ գեղորէից, յայնժամ կոչի՝ վոմիթոս տալլ՝ ամթօնիա. որոյ նշանքն են ցաւն և ծանրութիւնն մակորովայնի. փուքն որ եղանէ ընդ բերանն՝ լինի զազրահոտ. փսխումն կամ ժայթքումն՝ որ սովորաբար սկսանի զկնի քանի մի ժամուց կերակրոյն, լինի լոյծ շճկային և գարշահոտ, և երբեմն տոխպ և գորշագոյն: Զնոյն առնէ և այսուցն մակորովայնի և սորոյ ստամոքսի. և պատշաճաւոր գեղորայքն՝ են էլիսսիր սթոմաքիքոս, եզնալեղին, էսթռամթոս տի գուասսիա, կամ տի ՀԷնցիանս, և կամ տի ասսէնցիս. զոր պարտ է լուծանել ջրոմն կինամոնի: Նոյնպէս և շահաւէտ է փշիացուցեալ արմատն առնիքաի, կամ սակաւաքանակ մշկահոտ ընկոյզն, և կամ տասն ցորենաչափ սեռաւ պղպեղն: Երբեմն և պարտ է տալ նմա մի կամ երկու ցորենաչափ քանֆիրա: Կարի կարևոր է և առնուլ 'ի կիր զֆիսմէնթի, զօծանելիս, և զվէշեքաթօռիս:

Յերկարժամանակեայ փսխումն, որոյ նախնական պատճառն լինիցի այսուցն պանկրատի կամ մեզենտերի, յատկապէս կոչի՝ վոմիթոս կամ վիցիս տէլ բան-

քուէաս, և տէլ մէղէնթէռիքօ. որոց նշանքն են կարծրութիւն պանկրատի և միջընդերաց, հոսուն չորձուն աց, և տապութիւն մաղձի. և նիւթն որ ելանէ ընդ բերանն՝ երբեմն լինի թանձր, երբեմն լոյծ, և երբեմն ևս արիւնաշաղախ և զազրահոտ։ Երբեմն ևս զուգընթաց գտանի ընդ սա հեծկլտանք, ձգտումն, կոնջիւն և այտուցն որովայնի, հանդերձ ջերմութիւբ և ցաւով փորոտեաց. և դեղորայքն են էսթռաթթօ տի կրամինեա, տի թառասսաքօ, տի սաբօնատիա, և նոյն իսկ էսթռաթթօ տի շիքութան զգուշութիւբ և չափով ընծայեալ։ Նոյնպէս և օգտաւէտ է սաբօնէ մէտիչինալէն, և սնդիկն։ Դարձեալ, շահաւէտ է արգանակն մսոյ, հաւու, կրիայի, և խաչափառի։ Այլ և պարտ է 'ի վար արկանել յամենայնում երեկոյի զգրեթէ մի պատրաստեալ սնուցիչ դեղորէիւք։

Իսկ եթէ փսխումն ծագեալ ելցէ 'ի վատառողջութէ աղեաց, և յառաւելութէ զգայունութէ յոտուկ փորային բնաւորութեն, յայնժամ ձայնի՝ վօմիթօ տէլլա մօռպօզա սէնսիպիլիթա. որոյ նշանքն են՝ ուժգին թուլութին աղեաց, և բոլոր մարմնոյ, սաստիկ փսխումն, նուրբ տենդն ընդհատ, ցաւն կամ նաև պոռումն գլխոյ և հեծկլտանքն. և այս տեսակ փսխման հատաբակօրէն պատահի զկնի կերակրոց և ըմպելեաց. և դեղքն են ջուրն ցրտագոյն, սառոյցն, թրմոցն ազնիւ քինաի։

Իսկ 'ի դիպուածս՝ յորում նախնական պատճառն գտանիցի լինել ուժեղութի, յայնժամ փոխանակ թեթևանալոյ գործածութիւբ դառն իրաց, կեղևոյ քինաի, ոգեղէն և թռչական դեղոց, զգալաբար սաստկանայ փսխումն. նոյնպէս և մասունք մարդկային մարմնոյ ներքոյ անկեալք սաստիկ աշխատանի ցրտութէ, և արդէն ցրտահար եղեալք, եթէ դիցի 'ի վերայ նոցա ջերմ և ոգելից ֆօմէնթօ, անդէն առ նմին ձգեն յինքեանս զքաղցկեղ. իսկ ընդ հակառակն՝ եթէ լուսացին ցուրտ ջրով, և շփեսցին ձեամբ, 'ի միջոց սակաւ ժամուց անդէն հաստատին. նոյնպէս և սրսկումն քանի մի շիթ ցուրտ ջրոյ յերեսս առն զրկելոյ 'ի զգայութէց, անդէն վաղվաղակի զգաստացուցանէ զնա, ուր ոչինչ այլ արտաքին խթան կարող է ցուցանել զայսպիսի զարմանալի ներգործութի. նմին իրի արժան է առնուլ 'ի կիր զնրուաղ մղիչ դեղորայան, որպիսի են աշիտօ տի հալլէռ,

կամ մինչեւ խառն ջրոյն սառուցի և փոքր ինչ շաբաթաւ։

Երբեմն ևս ծագի 'ի զայրացմանէ մաղձի, կամ 'ի վերաւորմանէ ստամոքսի, աղեաց և այլ ընդերաց. և յայնժամ փսխումն լինի ուժգին, հանդերձ ջերմութեամբ և ցաւով մակորովայնի. և նիւթն զոր փսխէ ախտակիրն, երբեմն լինի սակաւաքանակ և սոխաս, և երբեմն ևս յորդառատ. երբեմն նաև շարաւալից կամ շարաւահիւթ, և գարշահոտ. որոյ դեղորայքն են խաշուն սալէբի, գարեոյ, բրնձոյ, և էմուլսիոնէ առապիքա, ևն։ Են և այլ ժայթքմունք մահաբերք. զորօրինակ է փսխումն կոչեցեալ 'ի նոցանէ առիթիաէ ֆիսսա, որ պատահի 'ի հաստատեալ յօդուածացաւութիւնէ. նախ բերէ անախորժութիւն կերակրոյ, ճնշումն, այտուցումն և ցաւ մակորովայնի, և ապա նոպկանք և չափազանց փսխումն. որ և բազում անգամ անվրէպ սպանանէ. և դեղն է ալնիւ դինի, էթէռէ սուլֆուրիքո, և ափիոն, և հուսկ յետոյ քինա քինա։ Ալյլ եթէ փսխումն յառաջացեալ ելցէ 'ի փոշտանկութիւնէ, կամ յաղեթափութիւնէ, յայնժամ ուրէն է փոյթ մեծ ունել առ 'ի ներքս մուծանել զփորոտիս 'ի ցոծագոյն աեղւոջ եդեալ զգլուխ ախտակրին, և թեթեւապէս շոշափմամբ ձեռօք և մատամբ տեղաւորել զանկեալ փորոտիսն։



ԳԼՈՒԽ ԼԳ.

'Ի վերայ կորեկոյին ախոփի, որ սիպալոցոց՝ էպանրեկմա մրլիառէ յայնի։

Ախտս այս է տեսակ ինչ տարրախոխիկ ջերմախտից, որով արտաքոյ բնութիւնէ 'ի վեր երեւին 'ի զանազան կամ 'ի բովանդակ մասունս մարմնոյ խաղաւարտք փոքրիկ, և գնատակերպ 'ի ձև կորեկաց, յորմէ կաշաւ և զանուն. իսկ դոյն խաղաւարտից

այլ և այլ է, այսինքն կարմիր, ապիտակ, մեխրա-գոյն, կապտագոյն, և սեաւ: Հասարակ է ախտս այս 'ի կողմանս Լեգալիոյ, և յարևելեան սահմանս արաբիոյ: Անձինք՝ որք անզգայ իմն են բնութեամբ, և մաղասային խառնուածոց են վիճակեալք, և ևս յղի կանայք՝ մանաւանդ որք մերձ են 'ի ծնանել, առաւել ենթակայ են այսմիկ խաղաւարտալից ախտի:

Պատճառք կրնկային ախտի:

Պատճառն այս ախտ 'ի կարի առատութէ կծու և տոկոպ հիւթոց մուրոց յանօթս աւիշկի և արեան, յարգելականութէ երիկ սովորական հոսման, 'ի սաստիկ ներքին կրից ոգւոյ, որպիսի են վիշտք, անձկութիք, նեղութիք, խորին մտածութիք, տառապանք, և ն. յերկարատև գործածութէ աղի և տոկոպ կերակաց, և տհաս մրգաց, 'ի փոփոխութենէ օդոց, 'ի նուազութէ և յապականութէ արեան. 'ի վեր քան զամենայն՝ 'ի կենակցութէ ը ախտացեալ անձանց, որովհետև ախտս այս է յոյժ տարափոխիկ: Բազում անգամ ծագի և ևս յախտարծարծ հիւթոց, որք ընկին յերկարատև խօթութեց կամ 'ի հիւանդութէ. և այս հիւթ ժանտալից և Ճասակաւ՝ երբեմն յարի 'ի ջիղս մարդոյ, յորմէ պատճառի տենդ ջղային: Ընդ ախտիս այսմիկ բազում անգամ զուգընթաց լինի տենդն ատամնքական կամ մաղձային, և բորբոքողական, զոր մարթ է ճանաչել 'ի ձեռն նշանաց:

Նշանք այսորիկ ախտի:

Ատանօր խօսիմք զառաւել գլխաւոր նշանաց միայն. քանզի գրեթէ բովանդակեն յինքեանս զնշանս ջղային կամ ատամնքային և կամ բորբոքողական տենդից, և ևս զնշանս ծաղկի և ռիսիբօլա անուանեալ պալարի. 'ի մի և 'ի նոյն անձն յոլով անգամ տարբերին և փոփոխին այլևայլ կերպիւ յայլևայլ ժամանակս նշանք այսորիկ ախտիս: Գլխաւոր նշանքն են թեթև ինչ ցրտուին, ուժգին ջերմութիւն, ցաւն գլխոյ. երբեմն 'ի վեր երեսի վիշտ ինչ յատամունս, յականջս, 'ի կուրծս, 'ի թիկունս, մանաւանդ 'ի մէջքն, հանդերձ հազիւ և տագնապաւ շնչառութէ: 'Ի դիպուածս յայս հասարակօրէն զուգընթաց լինի

պակասութիւն քնոյ, տխրութիւն, երկիւղ, ճնշումն կըրծոց, զարհուրանք, լքումն զօրութեան մարմնոյ, նուազումն սրտի, և նոդկանք. մէզն լինի ջրային և սրժգոյն. զարկն երբեմն հարկանէ խիստ և արագ, և երբեմն թոյլ և ընդհատ. լեզուն սպիտակ և ցամաք. ախտակիրն զգայ ցաւ ինչ խթիչ 'ի թիկնամէջս, 'ի սրունս և 'ի մատունս, հանդերձ թմբրութեամբ, և յօժարութեամբ փսխման։

Յետ այսոցիկ նշանաց 'ի վեր երևին խաղաւարտք փոքրիկ 'ի կուրծս, յորովայնս, 'ի բազուկս, և յայլ մասունս մարմնոյ հանդերձ մարմաջիւք, և գարշահոտ քրտամբք. այսոքիկ խաղաւարտք երբեմն երևին զկնի երկուց կամ երից և կամ չորից աւուրց տխտակրութեան հիւանդին. և երբեմն ոչ 'ի վեր երևին, բայց եթէ զկնի 11 կամ 12 և կամ 15 աւուրց։ Իսկ եթէ ընդ ախտիս համազոյգ գտանին և նշանքն ջղային տենդի, որպիսի են ցնցումն ձգանաց, թմբրութիւն ձեռաց և ոտից, անհանգստութիւն, սաստիկ տրտմութիւն, զառանցանք, մոլեգնութիւն, ճնշումն, տագ, ցաւ մորթոյն, ցամաքութիւն և գողումն լեզուի, գագաթումն քրտանց, խոնարհումն խաղաւարտից, անկանոնութիւն և խստութիւն զարկի բազկին, յորդութիւն միզի, և սկամոյ շարժողութիւն մկանանց, են նշանք յուռեգոյնք։ Ելոյնպէս և հոսումն որովայնի, գարշահոտութիւն կղկղանաց և քրտանց՝ են նշանք չարագոյնք և վտանգաւորք։

Կառավարութիւն և դեղարայ 'ի վեր արկանելի 'ի դէպս յայս։

'Ի կառավարութիւն այսր ախտի փոյթ մեծ ունել պարտ է ըստ կարի առ 'ի կշիռ պահել զներքին տրամադրութիւն հիւթոց, և զզօրութիւնս ախտակրին, և ստէպ ստէպ քաջալերել զնա, և յետ այնորիկ ըստ բնութեանն ցուցանելոյ՝ արգելուլ զպատճառս ախտին։ Արդ եթէ եցէ ախտս 'ի թեթևագոյն աստիճանի, օրէն է դնել զոտն 'ի ջուր ջերմ, և յաճախակի տալ ախտակրին ըմպել զխաշուն ֆիոս տի սամպուքի. և զգուշանալ զի մի արգելական մնասցէ օդն 'ի մէջ սենեկի հիւանդին. պարտ է բանալ զպատուհանս և զդրունս սենեկին առ 'ի զովացուցանել, և վերանորոգել զօդն. և արժան է պահպանել զհի-

ւանդն 'ի հանգիստ, և զգոյշ 'ի ցրտոյ, հեռի առ-
նել 'ի նմանէ զայն ամենայն, որք պատճառեն զվիշտ
և զտառապանս սրտի։ Կերակուրն լինելոց է թե-
թեւագոյն և սակաւ քանակութիւն։ ըմպելին զուարճ-
ճարար և զովացուցիչ, որպէս սիէռս ոչ լաթթէ,
և ջուրն գարեղոյ։

Ընդ ախտիս այսմիկ երբեմն զուգընթաց լինի բոր-
բոքողականութիւն։ յայնժամ օրէն է առնուլ 'ի կիր
զնոյն խնամս և դեղորայս 'ի դիպուածս բորբոքման
կոչեցելոյ՝ բորբոքումն լերդի։ զոր մանրթ է լինով
տեսանել 'ի գլ։ ԺԲ։ երես 107։ 'Ի դիպուածս, յորում
ընդ. ախտիս զոյգ գտանին և նշանք ստամոքական
տենդի, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զնոյն
հնարս և զդեղորայս որոնացուցիչս և լուծողականս
'ի դիպուածս ստամոքական տենդի։ որպէս տեսաս
'ի գլ։ ՃԾ։ երես 96։ Իսկ 'ի դիպուածս, յորում նշանք
ջղային տենդի 'ի վեր երևին, հարկ 'ի վերայ կայ
յայնժամ 'ի գործ արկանել զնոյն դարմանս և դե-
ղորայս, զորոց գրեցաք 'ի տեղիս իւրեանց 'ի դի-
պուածս տենդի կոչեցելոյ Ֆէպրուէ նէռվօզա։ Բայց
որովհետև 'ի դիպուածս՝ ոգիք ջղաց սովոր են լի-
նել յոյժ տկարագոյն և թուլագոյն, վասն որոյ օ-
րէն է խօթացելոյն 'ի կիր առնուլ առ ժամանակ
ինչ լինֆուզիոնէ տի քինաքինա։ զկերպն պատրաս-
տելոյ և զ'ի կիր առնելոյ սորա տես 'ի հատ։ Բ։ 'ի
տառն Ի, 'ի կարգի իւրում։



ԳԼՈՒԽ ԼԷ։

'Ի վերայ արգանդաբերութեան, որ 'ի լապինացաց կոչի՝ ֆառ-
ֆիալճիա։

Ֆառտիալճիա՝ անուն յունական, 'ի բառէն
քառտիա, որ նշանակէ՝ սիրտ, ըստ բժշկաց յայտ
առնէ զսաստիկ ցաւս ինչ կից սրտի զայրացեալս,

յորմէ 'ի մեր լեզու թարգմանեցաք՝ սրտախօթուն, կամ սասացուք, սրտակծութիւն, սրտախէթ։ Եւ սա խօթութիւն ինչ սոսկալի և դժնեայ, որ սովորաբար յարի 'ի վերին բերան ստամոքսի, կամ նաև 'ի կուրծս հանդերձ բուռն և խայթիչ ցաւով ստամոքսի, և առ չորմամբ սրտի։ Ընդ խօթութեաս այսմիկ երբեմն զուգընթաց լինին և ծարաւ ինչ սասակ, նողկանք սրտի, և զգայռմունք։ Զայս տեսակ խօթութիւն արդի բժիշկք անուանեն նաև բիւոզի, կամ ըստ իտալական բարբառոյ՝ պռուչիաքուօռէ, որ ստուգաբանի կիզիչ սրտի։ Անձինք, որք վիճակեալք են սեամոզ-ձայնին խառնուածոց, և որք ունին զախտս ախոնդանաց կամ արգանդի, են առաւել ենթակայ այսր խօթութեան։

Պատճառք սրտախօթութեան։

Սկզբնաբար ծագի այս խօթութիւն 'ի տկարութիւն ստամոքսի, 'ի խանգարմանէ գործողութիւն մարսողութեան, 'ի սուր և 'ի կծու մաղձէ, 'ի տոիպ և 'ի ճնասակար հիւթոց, յայլայլմանէ ներքին բարեխառնութեան, յանհասատատութիւն օդոց, 'ի դժուարամարսելի կերակրեղինաց, 'ի տոիպ և 'ի զօրաւոր լուծողական և փսխողական դեղորէից, 'ի թիւնաւոր նիւթոց մտելոց 'ի ստամոքսն, 'ի ճճեաց և յորդանց, 'ի յորդութիւն վիրոց, 'ի ճմլմանէ ամենեւին անուանեալ աղեաց։ Դոյնպէս և մարթ է յառաջ գալ 'ի ներքին կրից, որպիսի են տառապանք, ձանձրութիւնք, բարկութիւնք, վիշտք, երկիւղք, և ն։ Խօթութիս այս բազում անգամ է գուշակ իրիք հիւանդութեան, զորօրինակ խթից ստամոքսի, և աղեաց, ջղային տենդի, ոտնառութիւն, յօգուածոցաւութեան, արիւնռուշտ փորհարութիւն, մռռպոքոլէռայի, և ն։

Նշանք սրտախօթութեան։

'Ի սասակութիւն կամ յերկարատեւութիւն ախտիս բազում անգամ 'ի վեր երևին և փսխումն, ծարաւ սասակ, դժուարաշնչութիւն, անհանգստութիւն, բաբախիւն սրտի, սարսուռ, պակասութիւն ուժոյ և կենսական զօրութեաց, դժուարամիզութիւն, ցնցումն ջղաց և մկանանց, և ն։ Են և այլ ինչ նշանք վատթարա-

գոյն և մահահրաւէր • զորօրինակ ուժգին ջերմուն, առաւելութիւն ցաւոց սատմոքսի, ցուրտ քիրտն, պաղումն ծայրից անդամոց, բորբոքումն սատմոքսի, յաճախակի հեծկլտանք, անմիզութիւն, ուշագնացութիւն, և անդամոգօսութիւն :

Խրատ ի կառավարութիւն 'ի վար արկանելի 'ի դէպ պատճառս յայս :

Բայց որովհետև ախտս այս է վտանգաւոր, հարկ է փութապէս 'ի վար արկանել զբարեգոյն նպաստս և զհնարս : 'Ի վերոյեդեալ նշանաց այսորիկ ախտի քաջայայտ երևի, եթէ հարկաւորապէս պահանջի կառավարութիւն ինն, որով մարթ իցէ արդելուլ ըզնախնական պատճառս, և բարեխառնել զներքին այլ այլութիւնս • որպէս զի 'ի կշիռ պահեսցի ներքին համաձայնութիւն հիւթոց, և գործարանաց, ևն : Արդ՝ առ 'ի կատարիլ այսոցիկ ամենայնի հարկ 'ի վերայ կայ հիւանդին հրաժարիլ յամենակերպ թթու տտիպ իւղային և դժուարամարս կերակրեղինաց, և ոգիաւոր հեղանիւթից, և պիտի փոխել զբնակութիւնն, եթէ բնակեալ իցէ 'ի տեղիս ինչ ուրանօր օդն ապականեալ և փակեալ լինի • և պարտ է միշտ զուարթ և ուրախ լինել • չէ օրէն բնաւ գործել ինչ ընդդէմ կամաց նորին, այլ մանաւանդ ջանալ 'ի կատարել զախորժակս և զինդրուածս նորին • և հարկ է բարեխառն և չափաւոր լինել յամենայնի՝ եթէ 'ի անուանդս, և եթէ 'ի վաստակս, յամր շարժելով • և յետ այսոցիկ պարտ է 'ի բաց հերքել զախատն 'ի ձեռն յետագայ դեղորէից :

'Ասի՝ յորժամ սրտախօթութիւնս այս պատճառի 'ի տկարութէ կամ 'ի թուլութէ սատմոքսի, և 'ի խանգարմանէ գործողութէ մարսողութէն, յայնժամ առաւել գործունեայ դեղն է մի արամ ռապարապառն, զոր օրէն է կրկնել երկու կամ երիք անգամ • զնոյն ներգործութի ունի և ռատիչէ տի քօլամպոն, զոր պարտ է առնուլ նոյնաքանակ : Մի կամ երկու աւուրբք զկնի խաշնդեղի պարտ է տալ հիւանդին ինֆուզիոնէ տի քինա քինա, կամ տի դուասխա, զորս կանխաւ գրեցի : 'Ասոյնպէս օգտաւէտ է աքուա մառցիալէ տի ուխա, տալով ախտաժեռաց ժամէ 'ի ժամ չորս ունցի 'ի պահ առաւօտուն, մինչև լցցի

լիար մի յաւուրն։ Եւ իբրև վերոգրեալ կամ նոցին նման դեղորէիւք չապաքինեսցի ախտն, յայնժամ պարտ է դիմել 'ի գործածութիւն խարտաձոյ երկաթոյ՝ խառն ընդ խաշնդեղի. զորոյ զպատրաստելոյ կերպն և զկիրառութիւնն մարթիս գտանել երես 174։

Երկրորդ՝ եթէ ախտս այս յառաջ գայ 'ի սուր և 'ի կծու մաղձէ, և յայլ ինաստակար հիւթոց, յայնժամ պատշաճագոյն դեղն է դրդալ մի սրճոյ սբիռիթօ տի նիլթուս սուլչիֆիքաթօ, զոր պարտ է խառնել ընդ մի սկահակ հասարակ ջրոյ կամ նոյնաքանակ ջայի, և առեալ լինի ըմպելիս այս 'ի պահ առաւօտուն 'ի ծոմուստ, և այլ նոյնչափ ը երեկս։ Հիւթն կիտրոնի կամ լեմոնի յոյժ օգտաւէտ է 'ի դիպուածս յայս։

Երրորդ, յորժամ ախտս այս ծագի 'ի տոիպ և 'ի թթու հիւթոց ժողովելոց 'ի մէջ ստամոքսի, յայնժամ հասարակօրէն պարտ է առնուլ 'ի կիր զընկլուզիչ կամ ընկղմիչ դեղորայս, որպիսի են մակնէզիա պիանքա, քուէթա, ևն։ Զոր օրինակ. առ ունկի մի քուէթա, երկու տրամ՝ կոմմա առապիքա, և կէս ունկի՝ մաքուր շաքար. յաւելլով 'ի նոյն մի և կէս լիտր ջուր ցուրտ. զոր պարտ է առնուլ ջրոս կամ հինգ անգամ յաւուրն, ըստ չափու միոյ սկահակի գինւոյ կամ ջայի։ Իսկ եթէ տհաճելի է նմա գործածութիւն քուէթաի, փոխանակ նորա առնումք 'ի կիր զհետագայ ըմպելիս. իբր զի սա առաւել օգտակար է և նուազ խցանիչ։ Առ դրդալ մի սրճոյ օքքի տի կռանքի բուէբառաթի, յաւելլով 'ի նոյն սկահակ մի ջուր կինամոնի կամ անանխոյ, և տուր ըմպել հիւանդին 'ի պահ առաւօտու, միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև յութ օր։

'Ի վեր քան զամենայն օգտակար և կարի շահաւէտ դեղն վասն այսր ախտի՝ է մակնէզիա պիանքա. տալով հիւանդաց յառաւօտէ յառաւօտ նէս տրամ 'ի ծոմուստ։ Ոչինչ արգելք կայ գործածութեանն փրսխոլականի. զոր պարտ է առնուլ 'ի կիր նախ քան զամենայն 'ի սկզբան անդ հիւանդութեանն։ Քսան ցրեան իբէքսաքուանա չափ է բարուք, և բաւական առ 'ի մաքրել զստամոքսն, և 'ի դուրս վանել զախտարծարծ հիւթսն։ Իսկ եթէ ախտս այս պատճառեալ ի՞ցէ 'ի փքոց, և 'ի քամիաւոր իրաց, յայնժամ պարտ է ախտակրին պահել զանձն ջերմապէս, և ըմ-

պէտ ստէպ ստէպ փքահալած գէղորայս, որպիսի են անէսոնն, կոճապղպէղն, կինամոնն, սև պղպէղն, հիլն, հասն գիհոյ, սամիթն, երիցուկն, և ն: Այնպէս և օգտակար է թինթուռա մի ռապառապառօն, ռօմն, ցքին, աշնիւ գինին, և ն: Դարձեալ, եթէ ախտս այս պատճառեալ լցէ 'ի ճաշեաց, յայնժամ օրէն է զհետ երթալ կանոնի և դարմանոց, զորմէ խօսեցաք 'ի գլ. ա. երես 48:

ԳԼՈՒԽ ԼԱ.

'Ի վերայ ախտին որ ասի՝ սքօռպուռիս:

Ախտս այս է ապականագործ խօթութեան ինչ, որ սովորաբար գոյանայ 'ի փորոտիս մարդոյ, և անտի առ սակաւ սակաւ տարածանի ընդ բովանդակ անդամս մարմնոյ, և առաւելապէս 'ի ընտերս ատամանց, որ գլխովին կորուսանեն զառաջին գոյնս իւրեանց, և լինին մանուշակագոյն, և հետևապէս ատանան զնեխութեան. և երբեմն ևս բռնացեալ անհնարին հարուածս գործեն: Ախտս այս է յոյժ յաճախ 'ի կողմանս հիւսիսոյ քան յայլ մասունս աշխարհի: Գտանի ևս 'ի խոնաւուտ և 'ի ցածագոյն գաւառս, ուր ջուրք լճացեալ կան: Անձինք, որք վիճակեալք են սևամաղձային խառնուածոց, մանաւանդ նոքա՝ որք վարեն զանշարժական կեանս, են առաւել ենթակայ այսր ախտի:

Յաղագս պատճառաց սքօռպուռիս ախտին:

Ընդ երկար ժամանակս գործածուին աղի, տախպ և դժուարամարսելի կերակրոց, տարապայման տրխրութեան, հոգւոյ, մելancholիայի, անկարգութեան կենաց, երկիւղն, սրտմտութեան, տագնապքն, և այլ ամենայն կիրք՝ որք ապականեն զհիւթս և զգոլորշիս

մարմնոյ, և թուլացուցանեն զներքին գործարանն, հասարակօրէն պատճառեն զախտս զայս։ Արդեւ-լումն իրիք սովորական հոսման. որպիսի են թանչք, քիրան ոսից, ևն. խոնաւութիւնն հանդերձից, և մահճաց, և բնակութիւն, ևս օդն ապականեալ, և որ արգելեալ և փակեալ մնան 'ի տեղւոջ ուրեք, նաև երկարագոյն ճանապարհորդութիւն ը ծով, և ընդ ցամաք, կարեն պատճառել զախտս զայս։ Եւս կենակցութիւն ընդ ախտացեալ անձանց, որովհետև ախտս այս է երբեմնապէս փոխադրական։ Դարձեալ, ախտս այս բազում անգամ ևս լինի ժառանգական, և յայսպիսի դիպուածս հասարակօրէն լինի անբուժելի։

Յաղագս նշանաց սփոփումն ախտի։

Սեպհական նշանքն են անսովոր տկարութիւն, և ծանրութիւն ինչ, զոր ախտակիրն զգայ 'ի բովանդակ անդամս մարմնոյ, դժուարութիւն 'ի շնչառութեան, մանաւանդ զկնի շարժման կամ թեթև ինչ աշխատանաց։ Ընտերքն լինին ուռուցեալք, արիւնաթորք, և նեխեալք, որք երբեմն ևս ծախին գլխովին։ Ղունչն որ եւանէ ընդ բերանն՝ լինի զազրահոտ, և նոզկտալի։ Մէզն երբեմն լինի առաւել և դեղին, և երբեմն նուազ, և թխադոյն և մրրալից։ Բազում անգամ ախտս այս զեռեղի 'ի յօդուածս անդամոց, և յայնժամ վաղվաղակի զհետ գայ ուժգունութիւն ինչ 'ի դէմն և դժուարութիւն 'ի ծաքել. երբեմն այտոյցք և բիծք կապտագոյնք կամ դեղնագոյն 'ի վեր երևին 'ի սրունս, և երբեմն ևս վատութիւն յոյժ 'ի նոյն անդամն։

Յերկարաձգեալ մնալ այսորիկ ախտի, և 'ի ժամանել 'ի յետին աստիճան, սովորաբար վերոյիշեալ ուռոյցքն և բիծքն առ փոքր փոքր ժամանեն 'ի ծունգս, 'ի քունչս երանաց, 'ի բազուկս, ևն. և ուրեք ուրեք յերիկամունս, և 'ի փայծաղն. և յայնժամ իսկ և իսկ զհետ գան ճնշումն կրծոց, բաբախիւն սրտի, և սաստիկ ցաւ 'ի ձախակողմն, հազ ուժգին, անհամաձայնութիւն զարկի բազկի, երբեմն ևս յորդառատութիւն քրտանց։ Են և այլ ինչ նշանք անսովոր. այսինքն նեխութիւն, և ցաւ առատանց, յանկարծական և յորդ դառարկումն թանչից, 'ի

վեր երևումն վերաց կամ խոցից 'ի ընտերս, 'ի կուրծս, և յայլ անդամս մարմնոյ, փրփրախառն և զազրահոտ թորումն որովայնի, ևն: Յետ այդոցիկ անսովոր և զարհուրելի նշանաց՝ ախտս այս աւարտի երբեմն 'ի ջրգողութի, յորովայնալուծութի, յախտանդանոտութի, յանդամալուծութի, յախտն ծիւրակն, և 'ի ցնցական. և մերթ ևս 'ի նեխութիւն աղեաց, և 'ի քաղցկեղ:

Յաղագս կառավարութեան դեղրէից, զոր պարտ է 'ի վար արկանել 'ի դիպուածս ոչօրպութիւն ախտին:

'Ի սկզբան անդ ախտիս իսկ և իսկ արժան է փոխել զբնակութիւնն, եթէ բնակեալ ընդէ 'ի տեղիս ինչ ուրանօր օդն վատկեալ և խափանեալ լինի, յայնժամ հարկ է երթալ յագարակս, կամ 'ի բնակութիւնս ուր լինի օդն մաքուր, չոր և առողջարար, և միշտ շրջագայիլ անդ ըստ ախորժակի իւրում. բայց պարտ է ախտակրին անձնապահ լինել 'ի ցրտոյ յընթացս այսպիսի շարժողականութեանն, ևն, և պարտ է յարաժամ զուարթ և ուրախ լինել, և հրաժարիլ յաղի, 'ի տոիպ, և 'ի դժուարամարսելի կերակրեղինաց: Փոխանակ վերոյասացեալ կերակրեղինաց, և պարարտ մսոց, եղիցի ձագ հաւուց, կաքաւք, ծիտք, աղաւնիք, և կանթն. և խաւարտքն՝ որպիսի են կաղամբ, շոմին, շողգամ, փրփրեմ, քարոս, ճակնդեղ, կամ բանջար, թրթնջուկ, հազար, եղերդ, եղերդակ, կարոան, բոզկ, թէ ընտանի, և թէ վայրենի. և այլք, կիտրոն, կեռաս, բալ, եղակ, լեմոն, խնձոր, ևն: Սեպհական և անվրէպ ներգործիչ դեղորայքն 'ի դիպուածս ախտիս՝ են յետագայքդ: Ա՛ռ կէս ունկի՝ տերևն քոքլէառիսի, երեք տրամ՝ տերևն թռիֆոլիսի, և նոյնչափ՝ տերևն քուէշիոնէի. կէս ունկի՝ տերևն պէք.քապունկայի, և նոյնչափ տերևն նասթուռցիսի, և երկու տրամ՝ արմատն ռաֆանոս ռուստիքանոսի: Մանրեա զամենայնն 'ի միասին, և 'ի հատարակ ջրի եփեա եռացմամբ իբր քառորդ մի ժամու. ապա զտեա, և մնացեալ ուրթ ունկի, յոր յաւելլ երեսուն շնթս էլիուսիռէ տի վիթռիոլս: Յամպելլոյ ասատի ալրեցէ հիւանդն երկու ունկի չորս անգամ յաւուրն, միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի վեց ամիս: Բայց մեք զայս դեղորայս

եթե անբաւական համարիմք 'ի պատճառել զառողջութեան. վասն որոյ հարկաւոր դատիմք ևս սահեցուցանել զորովայնն՝ սոսկապէս 'ի ձեռն մեղմ և թեթև լուծողականաց, որպիսի են թամառինտի, և քռէմոռ տի թառթառս, այլև միանգամայն նպաստամատոյց լինել ներգործութեան այսոցիկ լուծողականաց 'ի ձեռն գրեխաց յօրինելոց կաթամբ, և խոտեղինօք, որպիսի են ալթէա, լաբացիս մաճճիսռէ, մոլոշն, ևն,

Եւ 'ի դիպուածս ախտիս ունին մասնաւոր իմն ներգործութեան դեղորայքս այսոքիկ. այսինքն տէքոցիսնէ տի ճէռմոկլի, և տի սաբինս. շնճուկն կաթին պատրաստեալ մանանիսով, աքուա տի քաթռամէ, ակռիմոնիա, էտէռա թէռռէսթռէ, ռուքէթթա, բանքուքուլս, մոսթս, չէնթաուռէա մինսռէ, և այլն: Արդ՝ յորժամ 'ի ձեռն վերոյասացեալ կառավարութեանց և դեղորէիցս ոչ փարատին նշանքն, և ինան տակաւին նոյն օրինակ, յայնժամ արժան է 'ի միտ առնուլ թէ յառաջ եկեալ է ախտս յապականութէ արեան, և 'ի տարապոյման թուլութէ ներքին գործարանաց. և յայսպիսի դիպուածս պարտ և պատշաճ է 'ի կիր առնուլ զսալսաբառիլիա, զպարտանա, և զայլն:

Ականատես եղէ, եթէ 'ի դիպուածս ախտիս զկնի 'ի գործ արկանելոյ զայլ ամենայն դեղորայս՝ ապաքինեցաւ ոմն կատաբէլապէս միայն գործածութեամբ երիք դեղորէից սալսաբառիլիսիւ պատրաստելոյ, զոր մարթ է պատրաստել յետագայ եղանակաւ: Առ. երեք ունկի՝ սալսաբառիլիա, երկու ունկի՝ սէռբէնթառիա վիռճինիանա, և նոյնչափ պառտանա, երկու և կէս ունկի քոքլէառիա, կէս ունկի ակռիմոնիա, և նոյնչափ սասաֆռաս: Թրմեա զամենայն 'ի մէջ միոյ հողեղէն անօթոյ, մինչև ցճ ժամ երեք բինթս հասարակ ջրով, և թող եռալ մինչև ցսպառիլ կիսոյ մասին ջրոյ, և ապա զտեա. յոր յաւէլ 'ի վերայ մի և կէս տրամ սբիռիթս տի սալ տօլէ, կամ էլիսէռէ տի վինթռիօլս, և տուր ախտակրին յիւրաքանչիւր երեք ժամու չորս ունկի:

Բայց 'ի դեղորէից ասսի օգտաւէտ յոյժ լինի արբուցանել հանապազօր չորս ունկի դեղոյն յօրինելոյ յետագայ եղանակաւ: Արդ՝ հէղ երեք բինթէ սպիտակ գինի յապակի անօթ, և ընդ այսմ գինւոյ խառնեա

բուռն մի տերևն քուէշիօնէ անուանեալ խոտոյ, և նոյնչափ՝ տերևն պէք.քասունկաի, և երեք ունկի՝ ռաֆանօ ռուստիքանօի, և երկու ունկի՝ ճինէպրօ, և մի բուռն քոչլէառիա. քաջ խցեալ զանօթն վերը գրեալ. թող զնատնուրդս զայս մարսիլ 'ի միմեանս ընդ միջոց ութ աւուրց: Յետ այնորիկ փոխադրեա զհեղեղուկս զայս յայլ ապակի անօթ, քաջ խցեալ խփով: Բայց առցի մի աւելի ասոի քան զերկու ունկի՝ առ մի նուագ, և տացի բաւական միջոց ժամանակի ընդ մի և ընդ միւս արբումն այնր չափոյ:



ԳԼՈՒԽ ԼԷ.

Յաղագս դադարմանց կամ խցանաց խուլական ականջոց, որ ասի՝ օսլուուցիօնէ պէլ ղիուս, և յաղագս փաղցիէղի, որ կոչի՝ փանփէռօ:

ՅՕԳՈՒԱԾ Ա.

Երկեակ է տեսակ ախտի ականջոց. ոմանք աբիւնային, և ոմանք յառաջ եկեալ յոր և իցէ հիւթոց. զորօրինակ աւիշին, մաղձն, և ն: Խցանք աբիւնային են այնոքիկ, որք գտանին յերիսասարդս, և յարիւնային անձինս, որք պատճառին յարդելմանէ հոսմանն սովորական արեան, և յայլ ինչ լիութէ անօթոց: Ուրոյցս այս գլխաւորապէս տիրապետէ 'ի թոքս, և 'ի լեարդն, և հասարակօրէն 'ի վերայ յարձակի ուրեք մեծաւ խստիւ, և ցաւօք, և զուգընթաց ունի ընդ իւր զմասնաւոր իմն ջերմութիւն, զորօրինակ սովորաբար դէպ լինի 'ի դիպուածս հանապազօրեայ տենդից, և ուրեք ուրեք սաստկացեալ ջերմութիւս այս հասանէ յառաջին ասստիճան բորբոքութիւն:

Իսկ երկրորդ տեսակն խցանաց գտանի հասարա-

կօրէն յանձինս վիճակեալս մելամաղձային, կամ մա-
զաային ախտագնեալ և խուլական բնութիւն, ևս
յայնոսիկ որք ենթակայ են ախտի կոչեցելոյ սքօռ-
պութիւ։ Դարձեալ, մարթ է զհետ գալ իսկ և իսկ
զկնի դադարման կամ խցման արեանց, բորբոքող-
կանութիւն քառօրեայ տենդից, և այլ որ և իցէ հնա-
ցեալ ախտից։ Ի սկզբան անդ ցաւն է թեթևագին,
և պարզ, բայց առ սակաւ սակաւ մարթի յառաջա-
նալ և հասանել մինչև ցաստիճան ցաւոց կարծրա-
պինդ ուռուցից, որ կոչի՝ շիռռօ։ Այսր տեսակի
ուռուցից բնակարանն կամ կայանն սովորաբար է
մնանն, և աղիքն։ և սին իրի մարթ է՝ի վեր երևիլ
՝ի բերանն, ՝ի պարանոցն, ՝ի սինս, ՝ի քունջս է-
բանաց, յաղդերս ևն։ և ևս՝ի լեարդն, ՝ի փզանցս,
՝ի մեսենդերս, ՝ի փայծաղն, և յայլ ամենայն մա-
սունս սաորին որովայնի, և թոքոց։ Ուռոյցս այս
երբեմնապէս պատահի՝ի թոքն, և յայնժամ ցաւն
աւարտի յաստիճան կարծրապինդ ուռուցին կոչեցե-
լոյ շիռռօ, ըստ պայմանի հասակի ախտացելոյ։

Յաղագս պոպճառաց խցանաց խուլական ուռուցից։

Սաստկագին ջերմութիւն, ևս առատութիւն արեան,
անգործունեայ և առանձնացեալ վիճակն, կարի աշ-
խատանքն, և շնչարգելութիւն մարթին պատճառել
զուռոյցն վերոյիշեալ, նոյնպէս պարարտագոյն կե-
րակուրքն, ոգիալիր հեղանիւթքն, գործածութիւնն
ևս ոմանց սաստկագոյն գեղոյեից։ Եւ դարձեալ,
կարեն պատճառել զուռոյցս զայս արգելականութիւնն
և դադարումն, կամ անչափ յորդառատութիւնն որ և
իցէ սովորական հոսմանց։

Յաղագս նշանաց խուլական ուռուցից։

Նշանքն արիւնալին խցանաց նոյն են ընդ նշանաց
բորբոքողականութիւն, բայց դոյզն ինչ թեթև և հե-
զիկ։ Իսկ պարզ խցանքն կամ դադարումն մարթի
ցրուիլ գլխովին յընթացս երկուց աւուրց, ևս սա-
կաւ, յորում դիպուածի ոչ գտանի բնաւ բորբոքո-
ղականութիւն։ զի եթէ գտանիցի՝ ոչ կարէ ցրուիլ և
փարատիլ, բայց եթէ յընթացս վեց կամ եօթն ա-
ւուրց։ Իսկ նշանք երկրորդ աստիճանի խցանացն՝ են ա-

ռաւել դժնեայ. և եթէ իցեն առաւել 'ի խորագոյնս հաստատեալ, դժուարաւ ճանաչին, և չէ մարթ ի մանալ շշափմամբ, յորժամ ենթակայն է պարարտամարմին. բայց ոչ այդպէս, եթէ իցէ վոխտ, և նիհար. քանզի յայնժամ դիւրաւ ճանաչին որ 'ի լեարդն և 'ի փայծաղն խցանք, բայց որ 'ի պանկրատն, և 'ի մեղենդերս են, դժուարաւ ճանաչի։ Բայց գիտել արժան է, զի խցանքն և կարծրապինդ ուռոյցքն 'ի վեր երևեալք յաղիսն, մանաւանդ 'ի լեարդն, յոլով անգամ ևս ոչ ստուարացուցանեն, այլ առաւել անձկացուցեալ նիհարեն. և յայնմ դիպուածի մարթ է ճանաչել զայն 'ի նշանաց խորագոյն իմն ցաւոց, զոր ազդողագոյն ևս զդայ ախտակիրն 'ի շշափելն. և ևս 'ի նշանաց իրիք ծանրութիւն զոր յանձին զդայ ախտակիրն։ Իսկ եթէ 'ի յինչատակեալ նշանացս բաւականագոյն ոչ ճանաչի զիարդն խցանաց և կարծրապինդ ուռուցից, յայնժամ հնար է ճանաչել 'ի ցաւոց, և 'ի խոր իմն ծանրութիւն, զորս սովորաբար զդայ ախտակիրն 'ի վերայ վշտագնեալ մասանց. և 'ի վեր ամբարձմանէ բովանդակ որովայնի, 'ի դեղնութիւն, յայտուցից երեսաց, ևս ոտից, 'ի շնչարգելութիւն, և 'ի հազից։

Բայց 'ի գիպուածս, յորում ախան կամ ուռոյցն 'ի վեր երևի 'ի թոքն, 'ի լեարդն, և 'ի փայծաղն, յայնժամ պարտ է ուշադրութիւն նկատել 'ի նշանս անձկութիւն, դողդողանաց, և տաղտկութիւն անմարսողութիւն, ձգտմանց, այտուցից ստամոքսի, չորութիւն բերանոյ, անհանգստութիւն, և կորստեան քնոյ. 'ի գտանիլ այսոցիկ պարագայից, և զարկ բազկին գրեթէ միշտ հատանէ կամ հարկանէ որպէս 'ի գիպուածս հանապազօրեայ տենդից, և ախտակիրն իսկ և իսկ զկնի կերակրոց զգայ զգրգռումն ինչ, և բաղում անգամ ևս զլուծումն որովայնի, և զյորդաւատ հասումն այլագունեալ միզի. այսոքիկ նշանք բաւականապէս բացայայտին, յորժամ ախան 'ի վեր երևի 'ի ստորին որովայնի, և միանգամայն 'ի կուրծս։

Բաց յայսոցիկ նշանաց՝ են և այլ նշանք՝ 'ի ձեռն որոց մարթ է մատնաւոր իմն էզանակաւ ճանաչել զբուն բնակարանն ախտիս. դժուարութիւն 'ի կլանելն՝ ասայ մեզ իմանալ, եթէ դուռն որկորոյն, և որկորն առկցեալ են իրերաց։ Մղձկումն և ճնշումն նշանակէ զնցանս թոքոց։ Դեղնութիւնն կամ դալուկն

ցուցակ է խցանաց լերդի։ Նշանք ախտին կոչեցեալ՝ աքօռպուլթօ, և նշանքն ախտեղանաց դուշակեն զխցանս փայծեղան։ Հիւծութիւն և լուծումն որովայնի յայտ առնեն զխցանս մեզենդերական։ Փլուխումն կամ ժայթքումն սեւոզոական բացայայտէ զխըցանս սատմոքսի, և պանկրատի, և բիլօռօք։ Դրժնեայ ցաւք և գալարումն աղեաց՝ որք սովոր են պատահիլ 'ի գիսպուածս ախտին կոչեցեալ՝ բասսիոնէ իլիաքա, ցուցանեն զխցանս խողովակի փորոտեաց։

Գիտել արժան է ասել, եթէ խցանք, կամ կալուածք արիւնայինք մարթին ապաքինիլ կարի գիւրապէս. բայց 'ի վերայ այսր ամենայնի մեծաւ ըզգուշութիւն պարտ է խնամ տանիլ. ապա թէ ոչ՝ բազում անգամ զհետ գայ բորբոքումն, և և քաղցկեղ։ Դարձեալ, գիտել արժան է, եթէ քաղցկեղն փայծեղան ոչ է այնքան երկիւղալի. բայց լերդին, և մեզենդերականքն են յոյժ գժնեայ. իսկ որք պատճառեն զցաւ ինչ, մարթ է յայնժամ յուսադիր լինել ապաքինութիւն։ Հուսկ յետոյ քաղցկեղն՝ որ 'ի վեր երևի 'ի զաւակատան, և 'ի խոռոչս այլ ինչ աղեաց, հասարակօրէն են երկիւղալից. քանզի աւարտին յախտս ջրգողութիւն, և անասածութիւն, որ ասի՝ աթռօֆիա։ Բայց զնարդ և իցէ, պարտ է փոյթ մեծ ունիլ 'ի գիսպուածս այսոցիկ ախտից կամ խցանաց, մեծաւ ժրաջանութիւն 'ի սկզբան անդ. իսկ և իսկ յերևիլ առաջին նշանաց՝ նպաստամատոյց լինել ախտակրին, և դարման տանիլ. ապա թէ ոչ՝ յարմատանալ ախտիցս գրեթէ սովորաբար լինին անբուժելի, և անապաքինելի։

Յաղագս խնամապարութեան, զոր պարտ է 'ի կիր արկանել 'ի դիսպուածս խցանաց։

Սեպհական դարման այսորիկ ախտի՝ է ժուժկալութիւն կերակրոց. 'ի ձեռն որոց բազումք ապաքինեցան, առանց ինչ պէտս ունելոյ դեղորէից. ուստի պարտ է հրաժարիլ յամենակերպ ոգիաւոր հեղանիւթոց, և 'ի գժուարամարսելի կերակրեղէնաց. որպիսի են՝ մալեալ խոզենին, վարազն. և։ Սովորաբար պատշաճական կերակրեղէն ախտակրիս՝ է որթենի, և պարանոյն ոչխարի, և ըմպելին՝ զատագոյն շինճուկն կաթին, տեքօցիօնէ ան լաբայիս, էնօլա քամ՝

բանա, սրառաձիա, լինկուա չէռվինա, կամ սքօլօ-բէնտռիում, քռէշլիօնէ, ևն: Օգտակար է սաէպ սաէպ գործածութիւն բաղանեաց, ևս կակղացուցիչ իրաց, զորս պարտ է արկանել 'ի վերայ վշտացեալ մասանց. շարժողականութիւն կամ շրջիլն 'ի զրօսանս նոյնպէս է օգտակար: Բայց պարտ է լինել ըստ կարողութեան ախտակրին, միանգամայն անձնապահ լինելով յամենայն իրաց, որք առթեն զնեղութիս, զձանձրութիս, և զղայրացումն, այլ ջանալ միշտ յուրախութիւն, և 'ի զուարճութիւն:

Յաղագս դեղերէից, զորս պարտ է 'ի վեր արկանել 'ի դէպս ցաւոց խցանաց՝ իբրև անալիրոցն ուրոյն ուրոյն:

'Ի գիպուածս արիւնային խցանաց, հարկաւորապէս պահանջի երակ հատանել, զոր և պարտ է միանգամայն կրկնել ըստ ցուցանելոյ հարկին, նկատեալ 'ի պարագայս զարկի բազկի, և արիւնային և հիւթալից խառնուածոց, արգելման իրիք սովորական հոսմանց ևն: Իսկ 'ի գիպուածս աւշկական խցանաց կամ կալուածոց, չէ բնաւ օրէն երակ հատանել. այլ յայնժամ պատշաճական դեղորայք են գործածութիւնք լուծողականաց, և հանքային ջուրց: Բայց 'ի գիպուածս քաղցկեղային խցանաց և ուռուցից՝ երակ հատանելն հարկաւորապէս պահանջի, յորժամ 'ի վեր երևի արգելումն ինչ տեռատեռական կամ թթախատական արեան. բայց եթէ ոչ գտանիցին այդոքիկ նշանք, յայնժամ ոչ է պատշաճ երակ հատանել. այլ պարտ է ձեռնամուխ լինել 'ի գործածուն հեղեղիչ և կակղացուցիչ դեղորէից, ևս հանքային ջուրց զորս պարտ է ըստ պահանջելոյ հարկին 'ի գործ արկանել ջերմապէս կամ ցուրտ:

Այլ եթէ խցանքն կամ կալուածքն պատճառեալ լցեն 'ի տկարութէ ստամոքսի, կամ յանմարսողականութէ, յայնժամ հարկ է 'ի կիր արկանել զսեռագոյ ջուրս. այսինքն աքուա տի բասսի, կամ տի ֆօռճէս, և կամ տի վալս, և կամ տի կրանսուքս ևն: Իսկ եթէ պատճառեալ լցէ յանմաքրութէ և 'ի պղտորութէ արեան յառաջ եկելոյ յանմարսողականութէ, յայնժամ պատշաճագոյն է գործածութիւն դեղորէից, աքուա տի բլօմպիէռիս, կամ տի վէքի, կամ տի պօռպօնէ, կամ տի պառէձէ, և կամ տի

մենթէ տուռս, որոց գործածութիւնն յայսմ դիպուածի յոյժ դերահռչակ է. երբեմն և հարկաւոր է գործածութիւն մեղմ և թեթև լուծողականաց, մանաւանդ եթէ 'ի գործածութէ հանքային ջուրց ոչ է բաւական։

Իսկ յորժամ ըստ իրաց ինչ տեսանին նշանքն ապաքինութէ օր քան զօր 'ի լաւ անդր յառաջանալ, յայնժամ պարտ է ձեռն 'ի գործ մատուցանել 'ի կիրառութէ ջրացուցիչ դեղորէից, որպիսի են քինաքինա, խարտաճն երկաթոյ, մանաւանդ թառաթառս քալիպէաթս, որ յոյժ դերահռչակ է յայսմ դիպուածի։ Գիտել արժան է, եթէ պարտ է զառաջինն յերկար ինչ ժամանակ 'ի գործ արկանել զմիւս դեղորայս, և ապա ձեռնամուխ լինել 'ի գործածութէ յետին դեղորէից, և այն՝ սակաւաքանակ չափով. և յորժամ փորձիւ երևի դեղն՝ որ յաւէտ պատճառէ ըստ իրաց ինչ զապաքինութէ, պարտ է հանապազորդել 'ի նոյն. և եթէ հարկ 'ի վերայ կայցէ երբեմն 'ի փոխել զայն՝ սակս տաղտկանալոյ և ձանձրանալոյ բնութեան, (որովհետև 'ի դիպուած տաղտկութէ ընդունայն լինի գործածութիւն դեղորէից, կորուսանելով զնուրբանցն օգտաւէտ ներգործութիւն,) յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զայլատեսակ դեղորայս, բայց համեմատս բնութէ առաջնոցն։ Հուսկ յետոյ պատշաճագոյն համարիմ վերստին ծանուցանել, եթէ 'ի գործածութէ այդ ամենայն դեղորէից՝ պարտ է ախտակրին միշտ ունել զվայելուչ զգուշութիւն 'ի մասին կերակրոց. որովհետև որպէս ասացաք արդէն, զայդմանէ և եթէ կախեալ կայ այլն ամենայն։

ՅՕԳՈՒԱԾ Բ.

Յաղագս դաղտիէղի, որ կուի՝ դանդէռս։

Ի դիպուածս, յորում ուռոյցն կարծրապինդ և անցաւ՝ 'ի վեր երևի 'ի մասունս ինչ մարմնոյ, զորօրինակ ծոցոյ, անթոյ, լերդի, փայծէղան, մեռեզրի, և, կոչի շիռռս։ Իսկ յորժամ ուռոյցս այս լինի մեծաքանակ, և ոչ միագոյն, այլ հարկանի կապ-

ոտգոյն, թիսագոյն, և արձանագոյն, և զուգընթաց ունի ընդ իւր զցաւ իմն դժնեայ, և անհնարին, յայնժամ կոչի՝ քանքէռս օք քուլթս. այսինքն քաղցկեղ թագուցեալ։ Ալ 'ի գիպուածս, յորում այսուցս այս լինի բացեալ, ուստի ծորի հիւթ ինչ յատակ և շիճկալից, և գարշահոտ, յայնժամ յորջորջի՝ քանքէռս աբէռթս կամ ուլչէռաթս, այսինքն քաղցկեղ բացեալ կամ վիրալից։

Ալ յորժամ 'ի վեր երևի 'ի ատինս (որ է սեփական բնակարան այսր ախտի,) 'ի շրթունս, մանաւանդ 'ի վերին մասն շրթանց, և յայլ ամենայն մասունս երեսաց, յայնժամ կոչի՝ նօլիմէթանճէռէ, այսինքն մի հպիր կամ մերձենար յիս, և ըստ տճ''ասի, ինձինքն պէնի։ Իսկ յորժամ 'ի քունջս երանեաց, յամորձիս, և 'ի սրունս լինի, կոչի՝ լուբօ. այսինքն գայլ։ Դարձեալ, ամենայն աղիք, և այլ ներքին մասունք, մանաւանդ զաւակատուն են ենթակայ այսր ախտի։ Անձինք՝ որք անցեալ են ըզհասակաւ քառասուն և հինգ ամաց, մանաւանդ կանայք ևս՝ որք վարեն զանշարժական կեանս, են առաւել ենթակայ այսր ախտի։

Յաղագս պատճառաց այսորիկ ախտի։

Հեղձուցն կամ արգելուցն իրիք սովորական հոսման՝ հասարակօրէն առթէ զախտս զայս։ Նոյնպէս ոտէպ պատահի կանանց վնճակելոց արիւնային բնութեան, մանաւանդ աղջկանց անցելոց հասակաւ, և այրեաց, որոց դադարեալ է հոսուցն դաշտանի։ Դարձեալ, անչափ տրամուին, երկիւղն, սրտմտութին, ճնշեալ ախոնդանքն, և այլ ամենայն կիրք՝ որք մաքառին ընդ հոգւոյ, կարեն պատճառել զախտս զայս. ուստի անձինք՝ յորոց վերայ հասանեն աղետալի պատահարքս, և որք բնութիւնք մաղձային և գիւրագրգիռք են, առաւելապէս ենթակայ են այսմիկ ախտի։ Ընդերկար ժամանակս գործածուին անմարսելի և տոխպ կերակրոց, ամլութին, անգործուին, ցուրտն խոնաւադոյն, հարուածքն, ճմլուցն մարմնոյ, կամ ճնշուցն են, մարթին պատճառել զախտս զայս։ Դարձեալ, բազում անգամ ևս ախտս այս յառաջ գայ 'ի ժառանգութէ կամ յածանցմանէ։ Նոյնպէս վերոյիշեալ պատճառքն խցանաց կամ կալուածոց՝

եւ կարծրապինդ ուռուցից, մարթին պատճառել զախտս զայս։

Յաղագս նշանաց ախտին փաղցիեղի։

Զախտս այս'ի սկզբան անդ համարի յոյժ թեթեւ. 'ի վերս երեւի այտուց ինչ կարծրապինդ 'ի չափ կաղնոյ. և այդ է սովորական և առաջին նշան. բազում անգամ մնայ ընդ երկար ժամանակս միակերպ առանց մեծանալոյ, և առանց իրիք վնասու. բայց եթէ ախտակիրն իցէ վիճակեալ աղականեալ իրիք խառնուածոյ, կամ թէ ուռոյցս այս զայրացուցանի ճնշմամբ, կամ իւիք անբարեկարգութիւն, յայնժամ սկսանի առ սակաւ սակաւ տարածանիլ 'ի վերայ մերձադիր մասանց մարմնոյ, պատճառելով միանգամայն զայտուց ինչ 'ի նոյն մերձաւոր երակս արմատաձև, կամ մագլաձև շրջապատեալ բոլորակի, և յայնժամ յորջորջի անուամբս՝ քանքռօ, այսինքն խեցգեղէն, սակս ստապատճոյճ նմանակցութեան՝ որով ձեւակերպի ըստ օրինի մագլոյ, կամ խեցգեղնոյ։ Եւ իբրև փոյթ ընդ փոյթ այլագունի մորթն, և հարկանէ նախ 'ի կարմրերանգ, ապա 'ի ծիրանակերպ, և յետ այնորիկ յերկնագոյն, կամ 'ի կապտագոյն, և հուսկ յետոյ 'ի մթագոյն կամ սեաւ, զգայ ախտակիրն զջերմութիւն ինչ և զցաւ անհնարին և մնայուն. այսոյցն լինի յոյժ կարծրապինդ, և 'ի շոշափելն խորտաբորտ և անհարթ, ունելով և 'ի մէջն զցցուումն ինչ. և օր քան զօր առաւելեալ ճապաղի յերակս և 'ի մերձաւոր մասունս, և ընանի իբրև ընդհանդոյցս, և յայնժամ ունի զգոյն յոյժ սեւորակ. այդոքիկ նշանք գուշակեն զայն տեսակ քաղցկեղի, որ կոչի՝ քանքէռօ օք.քուլթօ։

Հուսկ յետոյ բացեալ լինի մորթն, և ելանէ հիւթ ինչ յատակ և տոխոտ, և զայրանան մերձակայ մասունքն, և իսկ և իսկ գոյանայ խոց ինչ դժնեայ և սոսկատեսիլ, և ընձիւղեալ բողբոջի 'ի բազումս 'ի մեծամեծս, և 'ի փոքունս առձգեալ յընդերակայ մասանս. ցաւքն և գարշահոտուքն աստականայ յոյժ, և նուազի ախորժակն 'ի կերակուրս, 'ի վերայ հասանէ տենդ ինչ ծիւրական, և հանապազօրեայ, որ և գլխովին ուժաթափ առնէ զախտակիրն. 'ի վերս երեւի նաև թթախտութիւն ինչ դժնեայ, զոյգ ունե-

լով ընդ իւր զցնցիւն ինչ և զթուլութիւն. և հասա-
բակօրէն ախտակիրն ժամանէ 'ի վիճակ յոյժ ալե-
տալի, և ապերջանիկ. յայդոցիկ նշանաց ճանաչի
քաղցկեղն, որ կոչի՝ քանքէռօ աբէռթօ։

Յաղագս կերակրոց և խնամապարութեանց, զոր պարտ է 'ի վար արկանել 'ի դիպուածս փաղցկեղի։

Կերակրոցն պարտ է լինել թեթև, բայց անդադ-
րար. ախտակրին պիտոյ է հրաժարիլ յամենատեսակ
զօրաւոր հեղձնիւթոց, և 'ի դժուարամարսելի հան-
դերձանաց, միանգամայն շրջիլ 'ի զբօսանս ըստ տա-
նելոյ կարողութեանն. նոյնպէս հրաժեշտ տալ յամե-
նայն իրաց, որք պատճառեն զզայրացուցիս, և մեծաւ
զգուշութիւն պահպանել զվշտացեալ մասունս 'ի ցըր-
տոյ, և 'ի հովմոյ։

Յաղագս դեղոցն՝ զոր պարտ է 'ի կիր արկանել 'ի դի-
պուածս ախտի փաղցկեղի։

Այս ախտ է մին յայնց ախտից, որոց դեռ ոչ գը-
տաւ դեղ ինչ սեպհական և մասնաւոր. և տակս
սոյն պատճառի երբեմն յերկարաձգի ապաքինութիւնն,
ըստ սաստիկ ինչ նշանաց եւեթ 'ի գործ արկանելով
զդեղորայս միայն արտաքուստ պատշաճեալս։ Մինն
'ի մեծագոյն վնասուց, որ միշտ կիցս գտանի այսմիկ
ախտի՝ է շօշափումն վշտացեալ մասանց ընդ երկար
ժամանակս, որպէս պատահի բազում անգամ բազ-
մաց, մանաւանդ կանանց, որք ախտացեալ են այ-
սու ախտիւ յարգանդի։ Սովորաբար մարթի է տես-
նալ զապաքինութիւն, եթէ 'ի գործ արկանիցին դե-
ղորայքն փոյթ ընդ փոյթ 'ի պատշաճաւոր ժամանա-
կի. բայց եթէ ախտն ժամանեսցէ յասաիճան ինչ,
հասարակօրէն անպտուղ և վայրապար լինին նպաստ-
քն ամենայն դեղորէից. սմին իրի իսկ և իսկ 'ի
սկզբան անդ 'ի վեր երևիլ իրիք կարծրապինդ կամ
խուլական ուռուցից, պարտ է ախտակրին անյապաղ
կանոնաւորել և բարիոք կարգադրել զինքն՝ որքան
'ի կերակուրս։

Եւս պարտ է 'ի գործ արկանել երկիցս կամ ե-
րիցս 'ի շաբաթու տակաւաքանակ հասարակ հապա
պատրաստեալս անդկաւ, այսինքն բիլլօլէ մէռքու-

ռիալի քոմմունի, մարթ է և սակաւ ինչ երակ հաստանել, և շփել երկիցս յաւուրն զվշտացեալ մասունս անգկաւ պատրաստեալ օծանելեօքն, որ է ունկուէնթօ մէռքուռիալէ, և զկնի շփելոյ պարտ է ծածկել մուշտակաւ կամ ասուով զվշտացեալ մասունս։ Կէրակրոցն պարտ է լինել թեթև. արբցէ յամենայն նում աւուր մի ֆոլիէթթա տէքոցիոնէ տի սալսաբարիլիա, կամ զայլ ինչ քրանաբեր իրս։ Վկայէ հօմէռ հեղինակն, եթէ բազում անգամ զփորձ առեալ անձամբ՝ միայն 'ի ձեռն այսոցիկ վերոյիշեալ կառավարութեց 'ի գործ արկանելով ընդերկար ժամանակս ապաքինեաց գլեռվին զբազում ախտակիրս 'ի գիպուածս կարծրանալնդ ուռուցիկ, որք քաջայայտ երևին 'ի նշանաց գոլ քաղցկեղ ինչ սկսեալ. այլ եթէ 'ի ձեռն այդոցիկ կառավարութեց ոչ ցրուի ուռոյցն, այլ ընդհակառակն առաւել զայրանայցէ և կարծրանայցէ, յայնժամ պարտ է փոյթ ունել 'ի խլել արմատաքի, խարուկեալ հրացեալ երկաթով, կամ այլ ինչ կիզողական դեղորէիւք։

Բայց գիտել արժան է, զի յամենայն անգամս յորում հարկն պահանջէ 'ի գործ արկանել զկիզողական դեղս զայս, պարտ է արագութիւն որչափ հնար է՝ և փութանակի գնել 'ի գործ. որովհետև 'ի կուտակել մնալ անդ ապականեալ կամ նեխեալ հիւթոց ընդ երկար ժամանակս, իսկ և իսկ դառնայ 'ի քաղցկեղ լրացեալ, և այնուհետև ոչ բնաւ ներգործէ դեղն կիզողական. և սակայն վեհերոտութիւնս այս գրեթէ ըստ մեծի մասին դէպ լինի 'ի բազում ախտակիրս, որք ոչ կամին հպատակիլ և 'ի վար արկանել զկիզողական դեղս, բայց եթէ յորժամ դէմ յանդիման տեսանեն զսպառնալիս մօտալուտ մահուան. քանզի եթէ 'ի կիր արկանիցի իսկ և իսկ, անվրէպ ոչ գոտանի բնաւ վտանգ ինչ մահուան, և մարթ է յուսադիր լինել կատարեալ ապաքինութիւն, և արմատաքի խլելոյ ախտին։ Թէպէտև սոորակտուր քանցու�ուռուցիկ է առաւել ապահովագոյն միջոց, և պարտ իսկ է 'ի գործ արկանել զայն 'ի գիպուածս ախտիս, բայց ոչ է կարելի միշտ. ամին երբ յանկարանալն յայս միջոց, փոյթ ունել պարտ է նախ քան զապականիլն խառնուածոց ⁊ կարի կանխապէս 'ի գործ գնել զվերոգրեալ միջոցս։ Եթէ ախտակիրն անցեալ ելցէ յոյժ հասակաւ, մարթ է

լինել կրճին և խափան յուսալի ապաքինութեանն. բայց զնարդ և իցէ, 'ի գործածութիւն հարկ 'ի վերայ կայ 'ի գործ արկանել զկիզողականս, 'ի դիպուածսն յորում տեսանի, եթէ հիւթն դեռ ոչ է ապականեալ. և ըստ պահանջելոյ հարկին՝ մարթ է և զկրկնել այլ անգամ:

Դարձեալ, գիտել արժան է, եթէ ըստ վկայելոյ հեղինակաց, գոն ինչ ինչ համբաւեալ դեղորայք 'ի գործ արկանելիք 'ի դիպուածս ախտիս, որոց առաջինն է սուպլիմատթ քորոսիվ, որ այսպէս բաղադրի: Ա՛ռ կէս կշիռ ցորեան՝ սուպլիմատթ, և լուծեա 'ի մէջ բաւականաչափ օղւոյ, 'ի գործ արկ յառաւօտեան, և յերեկոյեան պահու. դեղս այս գերահռչակ է 'ի մասնաւորի 'ի դիպուածս քաղցկեղի 'ի վերայ երևելոյ 'ի ունգունս և 'ի դէմս երեսաց: Նոյնպէս օգտաւէտ է ինֆուզիոնէ տէլլա մոռէլլա, եթէ 'ի վերայ երեսաց քաղցկեղն յարգանդի: Բայց առաւել հռչակաւորն 'ի դեղորայս ընդդէմ ախտիս՝ է չիքութա, զորմէ վկայեն հեղինակքն, մանաւանդ բժշկապետն վիէննա քաղաքի, եթէ բաղում անգամ քաղմաց 'ի գործ արկեալ է զայս, և ականատես լեալ է բազմաց օգտաւէտութեց. սակայն 'ի կիրառութենն պարտ է սկիզբն առնել սակաւաքանակ չափու, զորօրինակ յերկու կամ յերիս կշիռ ցորեան, և ապա առ սակաւ սակաւ աստիճանաւ առաւելուլ զչափն մինչև ցերկու կամ ցերիս տրամն յաւուրն. և յառնուլ անդ զդեղս զայս, պարտ է հրաժարիլ 'ի խմորեղինաց, 'ի տաքիպ և 'ի կծու կերակրեաց. պարտ է միանգամայն ըստ կարի վայելել 'ի խաղաղութենէ, և 'ի հանգստեան, և 'ի տեղիս վիճակեալս առողջարար օդոց. և եթէ ախտակիրն սովորեալ իցէ յարբումն գինւոյ, մարթ է 'ի գործ արկանել և սակաւաքանակ ընտիր գինի. և 'ի գործածութենէ այսր դեղորէից մարթ է յարատևել մինչև ցվեց ամիս, և աւելի ևս:

Դարձեալ, օգտաւէտ է ևս 'ի դիպուածս ուլչէռէ սօռտիտէ անուանեալ խոցի, արկանել 'ի վերայ արտաքուստ իբր քաթաբլազմա կամ իբր ֆոմէնթի. նոյնպէս հռչակաւոր է յայսմ դիպուածի քաթաբլազմա տի քառօթէ, այսինքն սպեղանի ատեպղնոյ կամ գազարի, որ մեղմ զցաւս, և վարատէ զգարշահոտութիւնս. զոր պարտ է երկիցս կամ երիցս կրկնել

յաւուրն։ Հուսկ յետոյ յորժամ 'ի գործածութենէ այս ամենայն դեղոցէ ոչ փարատին ցաւքն, յայնժամ պարտ է իբր վերջին ապաստան նպաստից դիմել 'ի գործածութեան ափիոնի, որ թէպէտ ոչ բուժէ զախտն, բայց նուազէ զցաւս, և զվիշտս՝ զոր կրէ ախտակիրն անհնարին սաստկութիւն։



ԳԼՈՒԽ ԼԸ.

'Ի վերայ գաղղիական ախտի, որ յԻպալիա՝ ասի՝ մօռպօ վենէռէօ, կամ սիֆիլիսէ, և 'ի վերայ վավաշոտական հոսման, կուլեղեալ 'ի նոցանէ լեռոտօռէա վենէռէա. և 'ի վերայ եընդոյ և խորին գաղղիականի, այլովքն հանդերձ։

Դեղեռնագործ ախտս այս՝ որ է տարափոխիկ իբրև զժանտախտ, հասարակօրէն ծագի յանառակ շաղաշարմանէ, որպէս և անուանն իտալական ցուցանէ յասելն՝ մօռպօ վենէռէօ, այսինքն ախտ ափրոդիտական. զի վենէռէ կոչի ափրոդիտէ, ջրածուին տուփանաց։ Այս ախտ ըստ գրելոյ ոմանց՝ իբր յամի տն 1493 մուծաւ յեւրոպիա յամերիկոյ, որ և էանց յայլևայլ տեղիս, ուր յառաջ քան զայն անծանօթ էր ամենևին։

Արդ՝ թէպէտ ախտս այս ըհանրապէս է պտուղ անկանոն և անզուսպ վարուց, սակայն փոխադրութիւն եթէ անմեղք, և եթէ ոճրագործք լինին ենթակայ այսմիկ ախտի. մանկունք և անուցիչք մանկանց, դայեակք, և կանայք՝ որոց արքն են անզուսպ վարուք ևն, սովորաբար անկանին յախտս յայս, և երբեմն ևս մահակործան լինին, եթէ 'ի պատշաճ ժամանակի ոչ 'ի գործ արկանիցին նպաստք կարևորք։ Այլև բժշկաց, որք կամին ձեռնամուխ լինել 'ի բուժումն ախտիս, հարկ 'ի վերայ կայ ոչ անընտրողաբար 'ի վար արկանել զդեղոցս յորպիսի և իցէ դիպուածս, այլ նկատել 'ի վիճակս ախտին, 'ի ոպա-

բազայս կաղմուածոց ախտակրին, 'ի յուժգնութեն նշանացն, 'ի չափն հասակի, և յայլ բիւրակերպ հարկաւորագոյն պարագայս: Զայսպիսեաց խօսիլ առատաւոր՝ հարկ առնէ կարգն և պաշտօն բժշկական գիտութեան. սակայն միշտ այնու զգուշաւոր պարկեշտութեամբ՝ որ վայել է 'ի գրել և յընթեռնուլ:

Ա

'Ի վերայ հոսման, որ 'ի լապինաց-ոց ելի՝ լեռ-ոտ-ռ-ա վենէ-ա, կամ լա-ա նա պլենոտ-ռ-ա-ճիա, և ըստ իտալական բարբառոյ՝ ոտ-ոլամենտ-ս. ըստ որոց և փառ-ճիերին ասի՝ պեռ-ոտ-ոլ-ռ-ա:

Ախտս այս է ակամայ հոսումն ինչ թիւնաւոր հիւթոց ճանապարհաւ սերական անդամոց. և այն հիւթ 'ի սկզբան անդ է կանաչագոյն, ապա դեղնագոյն, և հուսկ յետոյ սպիտակագոյն: Սա հասարակօրէն երևի զկնի ուռթ աւուրց ըմբռնման ախտին. բայց երբեմն ևս յերկրորդում կամ յերրորդում աւուր. իսկ երբեմն ոչ ճանաչի՝ բայց եթէ զկնի չորրորդ կամ հինգերորդ շաբաթու:

'Ղշանտ ժահրալից հոսման:

Ինչչէ հաւասարի ծանուցեալ վավաշ հոսման, իսկ և իսկ ախտակիրն զգայ զթեթև ինչ ցաւ 'ի սերմնանց խողովակս, կամ 'ի ներքս յանդամսն, և յետ այնորիկ սկսանի հոսիլ կամ ծորիլ 'ի նոյն անդամ՝ յ հիւթ ինչ ժահրալից և ապականեալ. յորմէ և պատճառի խատղումն կամ մարմանջումն հանդերձ թեթև ինչ ցաւով, մանաւանդ 'ի միզելն. և այն խատղումն առ սակաւ սակաւ ոճելով ածի, և 'ի վախճանի պատճառէ զցաւ իմն հաւասարի և ճըշդրիտ հանդերձ իւիք ջերմութեամբ, և առաւելապէս 'ի ծագն միզանց խողովակի, յորմէ փոյթ ընդ փոյթ սկսանի 'ի վեր երևիլ թեթև ինչ կարմրութիւն, և բորբոքումն: Եւ եթէ յարատևեալ մնասցէ ախտս այս, յայնժամ ցաւն, ջերմութիւնն կամ կիզումն միզի՝ և շարաւալից հոսումն հիւթոց սատականալով սատականան, և օր քան զօր նորանոր նշանս արտայայտեն. և ախտակիրն յարաժամ զգայ զցաւ

մեծագոյն, և զնեղութիւնս անհնարինս, առաւելապէս յընկողմանիսն 'ի մէջ ջերմ անկողնոյ. և ցաւն զոր 'ի սկզբան անդ զգայր միայն 'ի ծագն միզանց խողովակի, յայնժամ տարածանի 'ի բովանդակ մասն միզանց խողովակաց, և կարի սաստկապէս 'ի միզելն. և արտահոսեալ հիւթն գլխովին կորուսանէ զառաջինն գոյն իւր, և լինի դեղնաշորթ, և հետևապէս ստանայ զնշան նեխութեան: Եւ 'ի հասանիլ սխտիս յայս աստիճան, յայնժամ ամենայն նշանք առաւելեալ սաստկանան. կիզումն միզի լինի այնքան սաստիկ, մինչև սխտակիրն երկնչի 'ի միզել. քանզի դըժուարութեան մեծ կրէ 'ի միզել, և մէզն ելանէ կաթիլ առ կաթիլ, և ճղճկէն: Դարձեալ, սխտակիրն զգայ զցաւ, զջերմութեան և զծանրութեան ինչ դէպ յեռոյ կողմն: Եւ 'ի վար արկանելն զճահողսդոյն դարմանս, նուազիլ սկսանին առ սակաւ սակաւ սաստկութիւնք և ուժգնութիւնք վերոյեգեալ նշանացն, և ապականութեան հիւթոց:

Են և այլ սխտք, որք համանման են ընդ սխտիս. որպիսի են խոցն երիկամանց, և փամփշտոյ, և հոսմունք ինչ սպիտակագոյն 'ի սեռս իգաց ևն: 'Ի դէպուսածս խոցից երիկամանց և փամփշտոյ՝ հիւթքն ոչ ելանեն, բայց եթէ ընդ միզի, և միայն յորժամ լինի բացեալ ճանապարհն փամփշտոյ. բայց 'ի դէպուսածս վավաշ հոսման՝ հոսումն լինի յարտաքս: Այլ դժուարութիւն մեծ է զանազանել զսխտս 'ի դիպուսածս սպիտակագոյն հոսմանց, զոր ասացաք լինել 'ի սեռս իգաց. ուստի յայնժամ առ 'ի ճանաչել զայն, պարտ է նկատել գլխաւորապէս 'ի գործողութիւս նորա, որպէս 'ի ցաւն, զոր պատճառէ, 'ի փոխադրութեանն ախտին, որով հաղորդի և տարաբնոյն ևն:

Կատարութիւն 'ի վար արկանելի 'ի դիպուսածս նախասացեալ հոսման:

Իսկ և իսկ յորժամ ոք յերկբայս լինի վասն իրիք պատճառի, թէ գուցէ արդեօք ստացեալ իցէ զախտս զայս, պարտ է անձնապահ լինել, և կանոնաւորել զինքն զովացուցիչ կերակրեղինօք և միզաբեր ըմպելեօք: Հրաժարիլ օրէն է յամենայն իրաց, որք են գրգռիչ և ջերմացուցիչ բնութեաց. զոր օրինակ գինին,

օղին, ոգիաւոր հեղանիւթքն, սոխ, խաւոր, ընկոյզ, կինամոն, կոճապղպեղ, սև պղպեղ, ևն. և սովորաբար պարտ է'ի կիր արկանել բարեխառն և թուլացուցիչ կերակրեղէնս, որպիսի են կաթն և արգանակն թեթևագոյն մսոյ ևն: Ըմպելին պարտի լինել ջուրն գարեղոյ, շիճուկն կաթին, խաշուն կտաւատի խառն ընդ մատուտակի, կամ աղաղոյ, և կամ մոլոշի. և զայսպիսի ըմպելիս պարտ է ախտակրին առատօրէն 'ի գործ արկանել: Դարձեալ, պարտ է արգելուլ զորպիսի և իցէ ինաստարար և անբարեկարգ ընթացս, զձիավարութիւն և զաշխատաւոր շարժմունս, զանոպարկեշտ մտածութիւնս, զտուփանս, ևն: Այլև պէս արժան է անձնապահ լինել 'ի ցրտոյ, և փութապէս 'ի զայրանալն բորբոքման պարտ է դիմել յանկողին:

Յաղագս դեղոցն՝ զոր պարտ է 'ի կիր արկանել յորժամ այս ախտ լինի 'ի ներքև ասպիճանի:

Յաղիւ երբէք մարթ է ախտիս այսմիկ բուժիլ փութապէս և կատարելապէս՝ իբր յարմատոց. վասն որոյ ոչ ախտակրին արժան է անհոգանալ յուսով փութապէս առողջութիւն, և ոչ բժիշկն կարէ խոստանալ զայն նմա: Հապարակօրէն յորատուէ ախտս այս երկու կամ երեք ամիս, և երբեմն ևս հինգ կամ վեց ամիս: Արդ՝ առ 'ի փարատել զախտս զայս 'ի մէջ սակաւ աւուրց՝ 'ի լինել նորա 'ի թեթևագոյն աստիճանի, պարտ է զցաւակիր անդամն գնել 'ի մէջ գաղջ կաթին, և ստէպ յաւուրն վարել յայն անդամ սակաւ ինչ իւղ քաղցր նշոյ, և խաշու կտաւատի. և եթէ գործածութիւնք այսպիսի նպաստից չլինին բաւական 'ի խափանել զախտն և բուժել զլնտվին, սակայն միշտ նուազեն և պակասեցուցանեն զուժգնութիւն նորա:

Ոչ օրէն բնաւ առնուլ 'ի կիր զգրգռիչ և զզայրացուցիչ դեղոցայս՝ բայց եթէ մեծաւ զգուշութիւն, և զայն՝ յորժամ տիտն լինի թեթևագոյն և յոյժ նորոգ. քանզի եթէ ախտն լինի դժնդակ, բորբոքեալ և հնացեալ, յայնժամ այսպիսի դեղոցայք փոխանակ պատճառելոյ զբուժումն, առաւել ևս զայրացուցանեն զախտն և յերկարաձգեն զառողջութիւն: Բայց ուժգին դեղոցայք՝ զոր հմտագոյն և քաջափորձ

բժիշկք միայն մարթին յայժմուս ապահովապէս 'ի գործ արկանել 'ի գիպուածս յայս թեթեւագոյն հոսման, են յետագայքդ։ Առ 30 կշիռ ցորեան ցուքքէռս ոչ սաթուռնս, և վեց կամ եօթն ունկի՝ ջուր վարդի, խառնեա իրերաց, և ըստ պահանջելոյ պարագայից 'ի գործ արկ 'ի գէպ ժամանակի, ջեռուցեալ սակաւ ինչ լից 'ի գրեթէ փոքրիկ, զոր մարթ իցէ մուծանել յախտաւոր անդամն։ և յարատեւեա յայսմ հինգ կամ վեց անգամ յաւուրն, մինչև դադարեսցի հոսումն հիւթոց։

Այս գարման եթէ 'ի կիր արկանիցի, և եթէ ոչ, չէ ինչ փոյթ։ բայց լուծողական գեղորայքն միշտ հարկաւ պահանջին 'ի գիպուածս յայս։ վասն որոյ չէ պարտ սոպասել զայրանալոյ ախտիցն, և հասանել 'ի վերջին աստիճան ուժգնութեան և սաստկութեան, որովհետև ամենայն գեղորայք՝ որք գրգռիչք են բընութեաբ, աճեցուցանեն զբորբոքումն միզանց խողովակաց, և արմատացուցանեն զախտն 'ի խորագոյնս։ Արդ՝ յընթացս առաջին հնգետասան աւուրց, պարտ է պատրաստել երկու կամ երիս լուծողականս յերկուս կամ յերիս աւուրս միանգամ։ իսկ յընթացս միւս հետեւեալ հնգետասան աւուրց, յամենայն չորս կամ հինգ աւուրս միանգամ, որք հասարակօրէն բաւական լինին 'ի նուազել զհոսումն, 'ի շնչուցանել զբորբոքումն, և 'ի մաքրել զհիւթս։

Պատշաճագոյն լուծողական գեղքն 'ի գիպուածս յայս՝ են սալ կլաուպէռիանս, զոր պարտ է 'ի գործ արկանել վեց արամաչափ՝ լուծեալ 'ի ջուր գաղջ, յաւելլով 'ի նա մի և կէս ունկի՝ մաննա, և տալ հիւանդին զամենայնն 'ի մի անգամ 'ի պահ առաւօտուն 'ի ծոմուստ։ Ընդունելս օգտաւէտ է յետագայ լուծողական գեղս։ Առ երկու ունկի՝ սէնա ընտիր և մաքուր, և ունկի մի՝ թամառինտի, և գիր թըրմոց 'ի ջուր եռացեալ զժամն 12, կամ զգիշեր մի ողջոյն, և ընդ առաւօտն անցո՛ ընդ կտաւ, յոր յաւելլ կէս ունկի՝ սալէ տի կլաուպէռս։ և մատո՛ հիւանդին յամենայն քառորդ ժամու մէն մի սկահակ սըրճոյ, մինչև 'ի ներգործելն։ Եւ իբրև վերոգրեալ կամ նոցին նման գեղորէիւք չդադարեսցի հոսումն հիւթոց, յայնժամ ոչինչ արգելք կայ գործածութեան յետագայ գեղոյս։ Առ ունկի մի՝ սալ նիլթռս, և երկու ունկի՝ կօմմա առապիքա, լոսեա՛ 'ի վոշի մանր

բամաղ, և բաժանեա՛ 'ի 24 հաւասարաչափ մասունս, և մասն հիւանդին երիս կամ չորս անգամ յաւուրն՝ մի մասն տրորեալ մի սկահակ հասարակ ըմպելեաւն։ Իսկ եթէ 'ի պատճառս այսր գեղոյ վշտանայ և նեղի հիւանդն՝ սակս կարի սաստիկ միզելոյ, մինչև ցվաստակիլ և ուժաթափ լինել, յայնժամ պատշաճ է կամ սակաւաչափ, և առաւել յաճախ առնուլ, և կամ փոխանակ նիթռօի խառնել նոյնաքանակ՝ մանիշնէղեա պիսանքա։

Յաղագս դեղոյ զորս արժան է 'ի վար արկանել, յորժամ այս ախտ լինի 'ի ծայրագոյն ասպիճանի։

Յորժամ բորբոքումն միզանց խողովակաց լինի սաստկագոյն, և ցաւն գժնեայ, պարտ է միշտ 'ի սկզբանն երակ հատանել սակաւ ինչ. զնոյն պարտ է առնել և յայլ գիպուածս բորբոքմանց, և կրկնել, միանգամայն նկատեալ 'ի զօրութիւն և 'ի խառնուածն հիւանդին, և յուժգնութիւն նշանացն։ Սեպհական գեղբրայք առ 'ի գրգռել զհոսումն միզի, և 'ի շեջուցանել զբորբոքումն ախտի՝ են նիթռօ, և կոմմա առապիքա, որպէս նշանակեցաւ վերագոյնդ։ Բայց յորժամ բորբոքումն և ցաւն զեռեղեալ բնակի 'ի շրջակայս փամփշտոյ, յայնժամ պատշաճագոյն է հասարակօրէն պատրաստել գրեթս կակղացուցիչս, որք բաց 'ի տնօրինելոյ զպէտս որովայնի, ունին և զօրութիւն ներգործելոյ 'ի բորբոքեալ մասունս։ Քաթարլազմա ատոօլ չիթիվօ անուանեալ թանձրաթանն է յոյժ օգտաւէտ 'ի գիպուածս յայս, զոր պարտ է պատրաստել այսպէս։ Առ զմէջն հացի, որ է ներքին խմորն ընդ կեղևոյ նորա, և զկաթն կոգւով հանդերձ, կամ զձէթն ձիթապտղոյ, խառնեալ իրեարաց և ջերմացուցեալ՝ գի՛ր 'ի վերայ վշտացեալ մասանցն։

Արդ՝ եթէ անօգուտ լիցի ասացեալս այս թանձրաթան, և բաւականապէս ոչ փարատեսցէ զցաւս, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զմիւս իմն թանձրաթան, որ միշտ օգտակար եղև 'ի գիպուածս յայս. և է այս, մէջն հացի, և աքուա վէձէթօ մինէռալէ տի կուլարտ, զոր պարտ է նորոգել 'ի 3 կամ 4 ժամն, կամ գէ՛թ 'ի 6 ժամու միանգամ. և սովորաբար 'ի միում աւուր փարատին ամենայն ցաւք

և բորբոքմունք գործածութիւն այսր գեղորէից։ Իսկ եթէ անմարթ լցէ առնուլ 'ի կիր զայսոսիկ, յայնժամ պարտ է 'ի գործ ածել զսպունգս թացեալս ջերմ ջրով, որ կոչի՝ Ֆոմէնթի։ և բաղում անգամ ականատես եղաք ներգործութեան այսորիկ արտաքին գեղորէից 'ի դիպուածս ախտիս, որովք երբեմն ապաքինի հիւանդն իսկ և իսկ, և 'ի սուղ ինչ ժամանակի, մինչև ոչ իսկ ուշաբերել թէ արդեօք ճշգրտիւ առողջացեալ լցէ՝ կամ ոչ։ Բայց երբեմն և դէպ լինի, զի այսոքիկ դարմանք առաւել ևս զայրացուցանեն զախտն։ և յայնժամ օրէն է աներկբայ դիմել յայնուագոյն և 'ի վեհապանծ գեղն մեռքուռիս՝ այսինքն սնդիկն, որ բացարձակապէս հարկաւ պահանջի առ 'ի կատարելապէս բուժել յամենայն դիպուածս այսոցիկ ախտից։

Երիրորդ ասպիճան ծահրալէից հոսանն, յորում ծամ է յեռնամուխ լինել 'ի գործածութիւն սնդկի։

Յորժամ երակահատութիւն, լուծողականքն, և այլ ամենայն հնարք և միջոցք, զորոց արդէն խօսեցաք, փարատեն զցաւս, շինչուցանեն զկիզումն միզի, և զզարկն հատատեն 'ի սեպհական իւր առաջին բնական վիճակն, յայնժամ պարտ է սկսանիլ զգործածութեան սնդկի, ըստ կանոնի և ըստ կերպի՝ զորմէ խօսեացուք լիով 'ի տեղի իւրում ըստ ամենայն պարագայից։ Արդ՝ եթէ ըստ պահանջելոյ հարկին բացորոշեսցի տալ հիւանդին բիլլօլէ մերքուուիաթէ տէլ պուուկնաթէլլի։ (զորոյ տացուք զնուսխան 'ի հատ։ ՁԲ։ 'ի տառն Բ։ 'ի կարգի իւրում։) յայնժամ բաւական է տալ երկու հապս յերեկոյն, և մի ընդ առաւօտն։ այլ եթէ սնդիկն սաստկապէս վրշտացուցանէ զբերանն կամ զընտերս առամանց, յայնժամ պարտ է նուազեցուցանել զչափն։ իսկ եթէ ոչ վշտացուցանէ, մարթ է առաւելուլ զչափն մինչև ցհինգ և ցվեց հապս յաւուրն։

Եթէ ախտակրին ախորժարար և նախամեծար թուի ցի քալոմելանս, մարթ է զայն 'ի վար արկանել յամ երեկոյս կալով 'ի մահճի՝ երկու կամ երիս կշռոց ցորեան, զորոյ պատրաստելոյ զկերպն ասասցուք 'ի Ճառէլն վերն սնդկի, և վասն սնդկաւ կաղմեալ հապից։ Մինն 'ի սնդկաւ պատրաստեալ դեղորէից, որ հասարակ է

'ի գործածութեան, է այն՝ որ ասի սուպլիմաթօ քոռ-
ռոզիվօ, զոր մարթ է առնուլ 'ի կիր ըստ եղանա-
կին, զորմէ խօսեցուք 'ի ձառեալն 'ի վերայ տեսակի
ախտին՝ որ ասի սիֆիլիտէ քոնֆոռմաթա։ Դեղս այս
փաղաղիչ՝ եթէ 'ի գործ արկցի պահանջեալ զգուշու-
թիւն, թուի ինձ, եթէ առաւել ապահովագոյն է, և
ներգործիչ 'ի գիպուածս ախտիս։ Ախտակրին մարթ
է առնուլ 'ի կիր զդեղս զայս կամ յամենայնում ա-
ւուր, կամ յերկու աւուր միանգամ ըստ տանելոյ
ստամոքսի։ Զափն ոչ պարտի լինել այնքան առա-
ւել, մինչև պատճառել զլորձունս և զթուքս։ քանզի
եթէ անդիկն լինիցի սաստիկ վասն առատութեանն,
յայնժամ ոչ բուժէ զախտն փութով, և միօրինակ,
որովհետև յերկարապէս մնայ 'ի մէջ մարմնոյն, և ոչ
արտահանի՝ բայց եթէ առ սակաւ սակաւ։

Յորժամ անդիկն պատճառէ զլուծողութիւն բնու-
թեան, և զանհանգստութիւն 'ի գիշերի, յայնժամ պատ-
շաճ է ախտակրին առնուլ ինֆուզիօնէ տի սէնա,
կամ այլ ինչ լուծողական, և ըմպել առատօրէն թէ-
զանա տի ավէնա, որովք աճապարել և արգելուլ
մարթ է զլուծումն արիւնային, որ հաստարակօրէն 'ի
վերայ գայ այնոցիկ որք զցուրտ առնուն, կամ 'ի
գործ արկանեն զդեղ՝ որ ոչ է պատրաստեալ ըստ
պատշաճին։ Քանզի մեծագոյն վտանգն երկնչելի
յայս ախտ յառաջ գայ անտի՝ զի ոչ բարուք, և ոչ
ըստ կանոնի պատրաստեալ լինի անդիկն, և կամ
վասն ոչ պահելոյն զպատշաճաւոր չափն 'ի գործ ար-
կանելն զնոյն ևն։ Արդ՝ յորժամ 'ի գործածութիւն
անդկի կամ անդկաւ պատրաստեալ հապիոց վշտանան
փորոտիք, և կամ պատճառին այլ ինչ ախտք, յայնժամ
պարտ է յաւելուլ 'ի վերայ բովանդակ նախագրեալ
պատճենի գեղոց 30 կամ 40 կշիռ ցորեան տիաքօռ-
տիս կամ քոնֆիէցիօնէ եաբօնէսէ, և իսկ և իսկ զկնի
վերատին գործածութեան այսոցիկ հապիոց, պարտ
է տալ նմա զլուծողական ինչ առ 'ի արտահանել
զանդիկն, և ևս 'ի վայր մղել զլորձունս։

Դարձեալ, վասն խափանելոյ զվնասս՝ որք զհետ
գալ մարթին 'ի գործածութեան անդ անդկի, պարտ է
խափանել զայն ընդ լուծողսկանս։ և առ այս վախ-
ճան հնարեցան հապքն պատրաստեալք ընդ անդկի,
զորս առ 'ի խոհեմութիւն 'ի գործ արկանել, պարտ
է սկիզբն առնուլ 'ի մի հապէ, և հազիւ երբէք հա-

անել յերիս հապս յաւուրն։ Դարձեալ, մեծի ըզ-
գուշութիւն պէտք են առ 'ի վար արկանել զայսպիսի
հապս, և այն 'ի պահանջել հարկին միայն, այսինքն
առ 'ի արդելուլ զհոսումն լորձանաց. վասն որոյ 'ի
դադարիլ նշանաց լորձանաց, օրէն է վերատին դառ-
նալ 'ի գործածութիւն անդկի, որ չէցէ պատրաստեալ
խառն ընդ լուծողականի. քանզի ստէպ գործածու-
թիւն լուծողականաց 'ի դիպուածս ախտիս՝ չէ այն-
քան օրինաւոր։

Բայց և այն անձանց, որք ոչ կարեն կլանել, ոչ
է օրէն տալ զհապս, այլ պարզապէս զանդիկ հեղա-
նիւթ արարեալ ՝ի կերպին, զորմէ ունիմք խօսեալ յա-
ռաջիկայդ, որ է յոյժ օգտակար։ Առ տրամ մի՝
մաքուր և յատակ անդիկ, և երկու տրամ՝ կոմմա ա-
ռապիքա, և զերկոսեանն 'ի միասին տրորեալ հա-
րեա այնքան 'ի մարմարեայ անկանի, մինչև անհետ
լինիցին գնդակքն անդկի դլխովին. ապա յաւելլ 'ի
նա կէս ունկի՝ շիլոբբս պալսամիքս, և ութ ունկի՝
հասարակ ջուր կինամոնի, և 'ի գոր արկ յերեկոյս
և ընդ առաւօտն մէն մի դրդալ սեղանոյ. և դեղս
այս 'ի դիպուածս ախտիս է յոյժ օգտաւէտագոյն և
աղնուագոյն, և կարի պատշաճագոյն այնպիսի ան-
ձանց՝ որք վասն տկարութիւն, և կարի փափկութիւն
փորոտեացն ոչ կարեն ընդունիլ զանդիկն ներքսապա
այլազգ. քանզի ճշմարիտ է եթէ անդիկն 'ի վար ար-
կեալ առ ժամանակ մի տկարացուցանէ և ՝ի խասէ փո-
րոտեացն. վասն որոյ եթէ հարկն պահանջէ 'ի վար
արկանել զնոյն ընդ երկար ժամանակ, պարտ է ըստ
վերոգրեալ կերպի 'ի վար արկանել, որ է յոյժ պատ-
շաճագոյն։

Դարձեալ, սպեղանին, զոր պատրաստեն անդկաւ
վասն օծանելոյ զվշտացեալ մասունս, զորմէ խօսեա-
ցուք 'ի հատ. ՃԲ. 'ի տառն Ռ, 'ի կարգի իւրում,
է յոյժ պատշաճագոյն 'ի դիպուածս ախտիս։ Սեպ-
հական ժամանակն օծանելոյ՝ է երեկոյն, որ պարտ
է լինել 'ի ներքսագոյն մասունս երանաց։ Արդ՝ 'ի
ժամանակի՝ յորում 'ի կիր արկանի օծումնս այս,
եթէ սերական անդամն, և միզանց խողովակքն սկսա-
նիցին բորբոքիլ, և ջերմուն և տենդն 'ի վեր երևին,
եթէ բերանն սկսանի կեղեքիլ և խոցոտիլ, և ընտերքն
հերձանիլ կամ ջլատիլ, և կուրծքն վշտանալ և ծան-
րանալ, յայնժամ պատշաճ է առալ նմա մի կամ եր-

կու չափ սալէ տի կլաուպէռս, կամ այլ ինչ զովացուցիչ լուծողական, և միշահատել զօծումն։ Բայց իսկ և իսկ յորժամ լորձունք և այլ նշանք սկսանին սակաւանալ կամ նուազիլ, և ախտն տակաւին կատարելապէս չլինի ապաքինեալ, յայնժամ օրէն է վերսին 'ի գործ արկանել զօծումն։

Որպիսի և կերպիւ սկսանիցի գործածութիւն անգլին, պարտ է յարատևել 'ի նոյն 315 աւուրս, և առաւել ևս, մինչև իսպառ անհետ լինել նշանացն, յորոց կասկածել մարթ է, թէ արդեօք յարատևացեալ իցէ մասն ինչ յախտից, թէ ոչ։ Արդ՝ ցորքան 'ի գործ արկանիցի անգլին, կերակրոցն պարտ է լինել թեթև և դիւրամարսելի. չէ օրէն ըմպել այլ ինչ, բայց եթէ սակաւաչափ գինի աղնիւ, և այն խառնեալ բաւականաչափ ջրով. հրաժարիլ պարտ է հարկաւորապէս յամենակերպ ոգիաւոր հեղանիւթոց. բազում անգամ ականատես եղաք, եթէ վասն սակաւ ինչ անբարեխառնութիւն յըմպելիսն վերադարձան միւսանգամ նշանքն բորբոքողականք, և հոսմունք հիւթոց յախտացեալ անդամոցն, և հուսկ յետոյ ախտն եղև առաւել վտանգաւոր, յերկարաձիգ, և դժուարաւ բուժելի։

Երրորդ, Ի վերջին ապրիճան անմոռոր հոսման։

Յորժամ 'ի ձեռն վերատացեալ կառավարութեց և դեղորէից փարատին կիզումն միզի և այլ ամենայն նշանք, որք 'ի վեր երևին յանդամանն և 'ի միզանց խղովակս, և հոսումն հիւթոց պակասեալ նուազի. ցաւն դադարի, և ուռոյցն ցրուի գլխովին յախտացեալ մասանց, և այլ ամենայն նշանք կամ գլխովին, և կամ ըստ մասին մեղմանան և դադարին, յայնժամ ասի ախտիս հոսման հատանել յերրորդ կամ 'ի վերջին ատոիճան. իսկ եթէ հակառակն պատահիցի, երկնչելի է թէ ախտն չէ տակաւին բուժեալ կատարելապէս, և վասն այն պարտ է զմնացորդս հիւթոցն և ախտից մաքրել, 'ի գործ արկանելով զմաքրողականս, որպիսի են յետագայքդ։ Առ երկու ունկի էլէթթուարիս լէնիթիվ, երեք տրամ՝ քուէմոռ տի թառթառս, չորս տրամ՝ ռապառապառս, մի և կէս ունկի՝ պալսամ տի քոբբաիպա. ամ և չիլոբբս տի ռոզէ բալիսէ՝ որչափ ինչ պէտք են վասն չինելոյ

զմաճունս թանձր իբրև զմեղր։ Ի մաճունէ սատի տացի հիւանդաց երկու անգամ յաւուրն ընկուզաչափ մի առ իւրաքանչիւր նուագ։

Իսկ եթէ այսոքիկ դեղորայք անօգուտ լինին և ոչ ներգործեն, յայնժամ պարտ է ձեռնամուխ լինել 'ի դեղորայս՝ որք են առաւել ուժեղ և զօրաւոր, որպիսի են յետագայքդ։ Ա՛ռ տասն տրամ պալասմօ տի քօբբախպա, և նոյնչափ՝ թռէմենթինա վենէթա. ա՛ռ և հինգ տրամ՝ ռապառպառօ փոշիացուցեալ, և նոյնչափ՝ լիգուիրիցիա։ Ի խառնուրդէ սատի առցի դրգալ մի սրճոյ ընդ առաւօտս, և այլ նոյնչափ ընդ երեկս, միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի քսան օր։ Ալև մարթ է առաւելուլ կամ նուազեցուցանել զչափն նկատմամբ պարագայից ախտակրին։ Այլ եթէ դեղորայքս՝ նեղութիս կամ անհանգստութիս տան ստամոքսի, յայնժամ փոխանակ այսոցիկ 'ի կիր արկանել մարթ է երկու անգամ յաւուրն 15 կամ 20 շիթս՝ էլիսսիռէ տի վիթրիօլօ բաժակ մի կարմիր գինեաւ, կամ տէքօթթօ տի քինա քինա։

Եթէ զկնի գործածութեանն այս ամենայն դեղորէից մնայ տակաւին հիւթն նոյնօրինակ, բայց ոչ ունիցի զոյգ զմի 'ի նշանաց ախտին, որ կոչի միաղմա վէնէռէօ, այսինքն ապականուն գաղղիական ախտի, յայնժամ պարտ է պատրաստել գրեթէ ինչ զօրաւոր հետագայ եղանակաւ։ Ա՛ռ երկու տրամ՝ կօմնա ա՛ռապիքա, հինգ ունկի՝ ջուր վարդի, 12 կշիռ ցորեան ցուքքէռօ տի սաթուռնօ. հալեա զնէժն 'ի մէջ վարդի ջրոյ, և յաւելլ 'ի վերայ ցուքքէռօ տի սաթուռնօ, և ջեռացուցեալ սակաւ ինչ ած 'ի ներքս ընդ անդամն փոքրիկ գրեթեաւ երեք կամ չորս անգամ յաւուրն։ Եւ յայսոցիկ միջոցի մեծապէս փոյթ ունել արժան է 'ի կանոնաւորել զընթացս ախտակրին, չափաւոր շարժումն առնելով յառողջարար և 'ի զովային վայրս, բայց առանց աշխատ լինելոյ և ջերմանալոյ։ Կերակրոցն պարտ է լինել չոր և առողջարար, զորօրինակ պաքսիմաթ, բրինձ, կորեակ, մածուցիկ էղջերն եղջերուի, և այլ ամենայն զօրացուցիչք բնութեան։ Ջուրն կամ ըմպելին լինելոց է ջուրն պռիսթօլի, ազնիւ գինի սակաւ և ջրախառն. հրաժարիլ օրէն է յայնմ ամենայնէ որք թուլացուցանեն զՀիլս։ Արդ՝ յորժամ այդ ամենայն հնարք

և գեղրայք 'ի գերև ելանեն, և անպտուղ լինին, և թիւնաւոր հիւթն մնայ տակաւին նոյնօրինակ, յայնժամ ախտս այս ոչ այլ ինչ է, բայց եթէ կօնօռռէա, այսինքն սերմնակալթուիթն, զորմէ խօսեացուք 'ի հետեւեալ գլուխդ։

Բ

'Ի վերայ վալալ ենդոց, որ չիպուլացոց կուլի՝ պոռպոնք վէնէռէս։

Ելունդս այս՝ է ուռոյց ինչ կարծրագոյն զետեղեալ 'ի քունջս երանաց, պատճառեալ 'ի թիւնաւոր հիւթոց ասացեալ ախտին, որք գտանին յայսոսիկ մասունս. և են սորա կրկին տեսակք. մին գոյանայ 'ի թիւնալից հիւթոյ ինչ նորոգ պատահելոյ, և միւսն 'ի նոյն ախտէ՝ հաստատելոյ և հնացելոյ։

Դարմանագրութիւն ախտիս։

Ապաքինութիւն ախտիս նորագոյն պատահելոյ, այսինքն այն՝ որ անդէն զկնի ներգործութեանն 'ի վեր երևի, փորձելի է իսկ և իսկ 'ի ձեռն ցրման կամ լուծման. իսկ 'ի դիպուածն՝ յորում անհնարին լինի ցրումն, պարտ է փութալ 'ի գրգռել զշարաւումն։ Ենթադրեալ, թէ մարթ իցէ ցրուել զելունդն, յայնժամ հարկ է ախտակրին զհետ երթալ կանոնի և դարմանատրուէ, զորոց խօսեցաք յառաջին ասատիճանի հոմանն։ Պարտ է երակ հատանել, և 'ի գործ արկանել զլուծողականս զուվայուցիչս. զորօրինակ տէքօցիօնէ տի թամառինտի և ալ սէնա, սալ տի կլաուպէռս ևն։ Իսկ յորժամ 'ի ձեռն այսպիսի դարմանատարութեց 'ի գործ ածելոց՝ ուռոյցն և այլ բորբոքողական նշանքն լինին փարատեալ կամ ցրուեալք, յայնժամ մարթ է ապահովապէս սկսանել զգործածութեն անդկի, և յարատեալ 'ի նոյն մինչև 'ի սպառ բուժումն եղնդոցն, և 'ի մաքրումն թիւնոյ ախտին։

Բայց եթէ զոյգ ընդ եղնդոյ գաղղիականի գտանի և ցաւ ինն զարկուցիչ, և սաստիկ ինն ջերմութիւն, յայնժամ օրէն է փոյթ մեծ ունել 'ի գրգռել և 'ի շարժել զշարաւումն։ Եւ յայսպիսի դիպուած մարթ

է թոյլ տալ ախտակրին 'ի գործ արկանել զսովորականն կերակուր իւր, և միանգամայն ըմպել աղնուագոյն գինի փոքրիկ սկահակաւ։ Իսկ 'ի վերայ վշտացեալ մասին, այսինքն 'ի վերայ ելիգոց պարտ է ստէպ ստէպ դնել զքաթափլաղմայս կակղացուցիչս պատրաստեալս միջոցն հացի և կաթամբ, և բարեխառնեալ կոգւով կամ ձիթով ձիթապտղոյ։ Այլ եթէ ենթակայն վիճակեալ ի՝ էջ մաղասոտ ի՝ն խառնուածոց, մինչև հազիւ և տակաւ տակաւ գրգռիլ շարաւմանն, յայնժամ պարտ է յաւելուլ 'ի վերայ թանձրաթանից կամ սպեղանեաց զվինսոխս եփեալս, կամ զհասարակ սոխն անեփ խառնեալ ընդ բաւական նաչալի պազիլիքս Ճիաչլոի։ Յորժամ հասուանցեալ լինի ելունդն և կակղագին, յայնժամ պարտ է բանալ զայն խոհեմապէս, և դարմանել մինչև ցՅՕ կամ ցԴՕ աւուրս. և յայսոսիկ միջոցս պարտ է միշտ առնուլ 'ի կիր զանդիկն ըստ եղանակին, զորմէ ունիմք խօսել 'ի յետագայդ։

Գ

'Ի վերայ խոցից կամ վերաց առնելոց 'ի վաղաղ ախտէ, որ ոչիպալոյոց կոչի ուլէռաէ վէնէռէէ։

Այս տեսակք խոցից կամ վերաց են արտաքին, կիզանողական և խաղտիչ, որք մարթին գոյանալ և 'ի վեր երևիլ 'ի միասին ընդ չար ներգործութեան, որ ասի՝ լէուքօռռէա վէնէռէա, և երբեմն ևս առանձինն։ 'Ի սկզբան վերերևի խոցաւարտ կամ պալարինչ կարմրագին հանդերձ ջերմութեամբ, որ և կրծէ 'ի ներքուստ, և յետ բացեալ լինելոյն ձևանայ խոց ինչ կարծրագոյն դժնդակ և խորարմատ։ Այսպիսի վերք հասարակօրէն 'ի վեր երևին 'ի ծածուկ անդամսն, և 'ի շրջակայս նորին, այլև 'ի շրթունս և առ սահմանք։ և յայս դիպուած մարթ է տարափոխիկ լինել ախտին. որոյ վասն պարտին անուցիչքն և ատնտուք զգուշանալ յանձանց ախտացելոց։

Դարմանք այսոցիկ խոցից։

Ընդ՝ յորժամ խոցք այդպիսիք 'ի վեր երևին անդէն զինի անմաքուր գործոյն, կառավարութեան կամ

գարմանատարութիւն է նոյն իսկ ընդ կառավարութիւն, զորմէ խօսեցաք 'ի վեր անդր։ Պարտ է ախտակրին վարել կերակրեղէնս զովացուցիչս և թեթևս, և երակ հատանել, և 'ի գործ արկանել քանի մի տօղէ սալէ տի կլսուպէռօ, և մաննա։ Պարտ է թանալ յաճախակի զվէրս և զվշտացեալ մասունս, մանաւանդ լուանալ ջերմ և ջրախառն կաթամբ. և եթէ յոյժ բորբոքեալ իցէ, պարտ է դնել 'ի վերայ սպեղանիս կակղացուցիչս և զովացուցիչս։ Գործածութիւն այսոցիկ դեղորէից հասարակօրէն բաւական է 'ի փարատել զբորբոքումն, և տրամադրել զախտակիրն յընդունելութիւն անդկի։

Եւ իբրև վերոգրեալ, կամ նոցին նման սպեղանեօք ոչ բուժեսցին խոցքն, յայնժամ օրէն է առնուլ 'ի կիր զհետագայ սպեղանիդ։ Առ երկու տրամ՝ սուպլիմաթօ քօռռօզիվօ, և մանր լոսելով զայն 'ի մէջ քարեայ անկանի՝ լից յանօթ ապակեայ, և յետ այնորիկ առ զջուրն կրի, որ լիցի 'ի պատրաստի իբր 400 տրամ. և սկսեա՛ հեղուլ յայնմանէ առ սակաւ սակաւ 'ի վերայ վերոյիշեալ սուպլիմաթօ քօռռօզիվօի իբր լիտր մի, որ փոխարկի 'ի գոյն արեան. և ապա առ զձէթն ձիթապտղոյ իբր լիտր մի, և լից յանօթ ապակեայ կամ յապիկած անօթ հողեղէն, և զվերոգրեալ կարմրերանգ ջուրն գաւաթ առ գաւաթ հեղ 'ի վերայ իւղոյն ձիթապտղոյ. այլ խառնելի է անընդհատ ծայրիւ ցպոյ՝ մինչև 'ի զանգիլ բարուոք ընդ միմեանս, և լինել մի բաղադրութիւն։ Հուսկ յետոյ յաւելլ 'ի վերայ նորա յատակ և անաբատ ջուր կրի. և նոյնպէս խառնեսջիր ծայրիւ ցպոյ, զի փոքր մի թանձրասցի նովաւ. և յետ զիջանելոյ ջրոյն 'ի յատակ անօթոյն՝ պարտ է մեղմով հեղուլ արտաքս զջուրն՝ այնպէս զի մի թափեսցի իւղն ընդ ջրոյն. և յետ այնր պարտ է վերստին լուանալ այնու ջրով զիւղն՝ վեց կամ եօթն անգամ հետ զհետէ փոփոխելով զջուրն, մինչև ցթանձրանալ նորին իբրև զմածուն։

Բայց 'ի գործածութեանէ 'ի միտ առնուլ արժան է, զի եթէ 'ի վեր երևեալ իցէ աւելորդ միս ինչ սընկաձև 'ի վերայ նախագրեալ խոցից կամ վերաց, յայնժամ օրէն է բաժանել չորս տրամ 'ի վերոգրեալ սպեղանւոյ, յաւելլով 'ի նոյն և զկէս տրամ բռէչիբիթաթօ ռօսսօ, ընդ նմին և 20 կշիռ ցորեան՝ զկի-

զեալ պաղլեզ. և 'ի գործ արկ մինչև խստաւ անյայտ լինելոյ անկաձև մեղինաց. և յետ այնորիկ արկ 'ի գործ զնախայիշատակեալ սպեղանիս՝ մինչև 'ի կատարեալ ապաքինումն. և յամենայնում նուագի՝ յորում հարկ 'ի վերայ լինի փոխել զվէրս, պարտ է լուանալ ջրովն, որ ասի՝ աքուա վէՃէթօ մինէռալէ, որ է ջուր ինչ յոյժ հռչակաւոր 'ի մասին օգտի վէրս վերայ առնելոց 'ի վավաշ ախտէ։ Մեծապէս շահաւէտութիւն այսր նորագիւտ սպեղանւոյ զփորձ առեալ եմ յոլով անգամ. և որպէս կարծեմ, և համարձակիմ իսկ հաստատել, 'ի ներկայ դարուս չինք բնաւ հանդոյն սմին այլ ինն սպեղանի օգտակարագոյն ընդդէմ վերոյիշեալ վերայ կամ խոցից։

Դ.

'Ի վերայ վավաշոյ դիւաարամիզութեան, որ յիպալոյոց կոչի սրռանկուռիա։

Դիւաարամիզութիւնս այս լինի 'ի ջղացաւական ինն բռնադատութենէ միզանց խողովակաց, կամ 'ի բորբոքմանէ նոյն մասանց, և մասանց մերձակայ էղելոց միզարանին, պատճառեալ յանիւոյժ ախտէ, կամ 'ի գործածութէ ազդու և սաստկագին դեղորէից, որպիսի են քանթառիտէ, պիռռա ռէչէնթէ և ն։

Նշանք դիւաարամիզութեան 'ի դիպուածս՝ յորում ծագի 'ի բորբոքմանէ միզանց խողովակաց, և 'ի բռնադատութենէ նոյն խողովակաց։

Յորժամ դիւաարամիզութիւն յառաջ գայ 'ի բորբոքմանէ միզանց խողովակաց, ախտակիրն զգայ ըզջերմութիւն, և զցաւ ինն սաստիկ յայսոսիկ մասունս. կամի և ախորժէ հանապազ միզել, բայց ոչ կարէ, և միշտ նեղեալ տանջի պնդութիւն որովայնի, թէպէտ և կրէ զՃիգն։ Իսկ եթէ պատճառեալ ի՞նչ 'ի բորբոքմանէ միզանց խողովակաց, յայնժամ ախտակիրն 'ի միզել ոչ այնքան դիւաարի, բայց 'ի թանալ միզին զխոցոտեալ և զբորբոքեալ մասն միզանց խողովակացն, իսկ և իսկ պատճառէ զվիշտ և զբռնագաւութիւն։

Դարմանք գժուարամիզութիւն է, 'ի գիպուածս՝ յորոմ պատճառի 'ի բորբոքմանէ միզանց խողովակաց կամ փողոյ ֆամիշտին, օրէն է երակ հատանել, և հանել զարիւն առատօրէն, և ըստ պահանջելոյ հարկին կրկնել զնոյն. և եթէ զկնի երակահատութեան գժուարամիզութիւն յարատևեալ մնայ, յայնժամ պարտ է պատրաստել գրեխս մեղմականս, և տանիլ դարմանս կակղացուցիչս 'ի վերայ վշտագնեալ մասին մարմնոյ. և 'ի նոյն իսկ ժամանակի պարտ է ախտակրին 'ի գործ արկանել յամենայն չորս ժամու մի սկահակ սրճոյ 'ի յետագայ դեղոյս։ Առ լիտր մի՝ ջուր գարեոյ, վեց ունկի՝ շիլօբբօ տի աղթէա, չորս ունկի՝ իւղ քաղցր նշոյ, և կէս ունկի սալ նիթռօ։ Խառնեա զամենայն յիրեարս, և տուր 'ի գործ արկանել։ Եթէ գործածութիւն այսոցիկ դեղորէից ոչ հանգստանայ ախտակիրն, և գժուարամիզութիւն մնայ նոյն օրինակ, յայնժամ օրէն է վերստին երակ հատանել և ինչուցանել զհիւանդն 'ի մէջ ջերմ ջրոյ մինչև ցկուրծս. բայց յայնժամ պարտ է միջահատել զգործածուն վերոյիշեալ դեղոյն՝ զորմէ ասացաք յամենայն չորս ժամու մի սկահակ ըմպել. քանզի գործածութեն նորա յայսպիսի գիպուածի լինի մեծապէս հնարաւակար։

'Ի գիպուածս յայս երբեմն կարևոր է առ 'ի գըրգռել զմէզն՝ 'ի կիր արկանել քսթէթէռ կամ գրեխ փոքրիկ. բայց որովհետև հիւանդն հազիւ երբէք մարթի տանիլ ուժգնութեան նորա, վասն որոյ բարիոք ևս վարկանիմք զգործածութեն քանտէլէթէ ատտոլչէնթիի, որ լպրծեցուցանէ զանցս միզի, և գիւրապատրաստ յօրինէ մանաւորապէս զհոտումն միզի։ Բայց նկատել արժան է, զի եթէ գործածութեն սորա սկսանի վշտացուցանել և զայրացուցանել զախտակիրն, և պատճառել զցաւ լինչ, պարտ է յայնժամ իսկ և իսկ միջահատել։

Արդ՝ յորժամ փարատեալ ցրուին ամենայն նշանք, և հիւանդն սկսանի հեշտեաւ և գիւրապէս կատարել զպէտսն, եթէ հաւասատեաւ ատուգի թէ գոյ թոյն

վավաշ, պարտ է յայնժամ ձեռնամուխ լինել 'ի մաստակարարութեն, և 'ի գործածութեն սնդկի, ըստ եղանակին, զորմէ գրեցաք 'ի կառավարութեն երկրորդ աստիճանի ժահրալից հոսման: Իսկ եթէ պատճառեալ ելցէ 'ի ջղացաւական ինն բռնադատութէ մի զանց խողովակաց, յայնժամ պարտ է 'ի գործ արկանել զդեղորայս, որք մարթին բարեխառնել և թուլացուցանել զմասունս աղէհանս, յորմէ կազմի մէզն. այսպիսի են դեղորայք հեղեղկիչք և բացողականք. որպիսի են սէմէնցա տի լինս, լիգուիրիցիա, ալթէա, և: Եթէ գործածութիւն այսոցիկ դեղորէից ոչ ներգործի օգուտն բաղձացեալ, պիտոյ է յայնժամ երակ հատանել, և դարմանս կակղացուցիչս դնել 'ի վերայ ախտացեալ անդամոյն:

Ե

Յայս վայր խօսեցայք զնշանաց գաղղիական ախտին, յորս թիւնն ներգործեալ էր յայն մասունս միայն, որք զգածեալ էին այնու ախտիւ: Այլ առ տէն խօսեսցուք զնոյն ախտէ՝ ըստ որում հատատեալ և հնացեալ, այսինքն ըստ որում ներգործեալ յարիւնն և տարածեալ ընդ բովանդակ մասունս մարմնոյ, և ճարակեալ ընդ ամենայն յօդուածս նորին, և վերջապէս՝ ըստ որում առպականարար ամենայն խառնուածոցն:

Յաղագս նշանաց գաղղիական ախտի:

Նշանք ախտիւ՝ ըստ որում հնացեալ, են երկունդն կամ խոյլն քնջոց երանաց, ցաւն առնի անդամոյն, և առաւելապէս 'ի գիշերի, և յորժամ ախտակիրն ընկողմանի 'ի ջերմ մահճի. և մինն 'ի գլխաւոր նշանաց այսորիկ ախտի՝ է զգաստութիւն հիւանդին զառաջին գիշերն, և յետ այնորիկ երբ ուժաթափ լեալ 'ի խորագոյն քուն լինելն: Դարձեալ, են և այլ նշանք, որպէս քոսոտութիւն, ցուկուն գեղնագոյն խաղաւարտից, և կեղոց, որք 'ի վեր երևին և տարածանին 'ի զանազան մասունս մարմնոյ, և մասնաւորապէս 'ի գլուխն, խոց. ք ինչ կրծողականք, դժպհիք և ղզուականք, որք սկսանին 'ի վեր երևիլ 'ի կոկորդն, և առ սակաւ ուսկուս հատանին սփռելով 'ի քիմս, 'ի ծադն

ընչաց, և ուռճացումն ինչ ճղաձև ընդ մէջ մարմնոյ և ոսկերաց, որք երբեմն լինին կարծրագոյն և 'ի բազում մասնիկս բաժանեալք, և երբեմն կակղագոյնք իբրև զմեղրամոմ: Սոսանք, որք գնոտակաձև կուռակին 'ի պարանոցն, յանուրթս, 'ի քունչս երանաց, և յանցս միզի, են կարծրագոյնք, և ոլորկք, նոյնպէս և այտուցք կամ ուռոյցք ինչ աչքեայլ որակութիւն, և տարբեր կերպիւ 'ի վեր երևին յաւիշկեան անօթս, 'ի ձգանս, 'ի յօդուածս, 'ի ջիղս, մանաւանդ 'ի կծիկս ջղաց ևն:

Աչքն լինին մարմանջոտք և ցաւալից, և երբեմն ևս կուրանան գլխովին: 'Ի ներքին կողմն ականջաց 'ի վեր երևին վէրք ինչ ցաւալից, և մարմանջոտ, յորմէ բազում անգամ գէհետ գայ խլութիւն. գէմքն լինին դեղնաշորթ, կապարագոյն, և բովանդակ մարմինն նիհար և վոսիտ: Եւ վերջապէս ախտացեալոյն գործողութիւնքն կենսական, կենդանական, և բնական խանգարին, և հուսկ յետոյ միով բանիւ ասացից, թըշուառականն՝ եթէ յանցանօք ատացեալ է զախտն, իբրև առ 'ի պատիժ՝ լինի գլխովին անընդունակ իրիք շարժողականութեան, և անկեալ դնի 'ի վիճակ ինչ մահական:

Են և այլ նշանք սեպհականք սեռի կանանց, զորօրինակ առատութի կամ նուազութին և կամ արգելումն դաշտանի, հոսումն սպիտակ հիւթոց, ախտն արգանդի, գործողութիքն ամլութե, և բորբոքումն, խուլական ուռոյց, քաղցկեղ, խօլ խեցգետնի, և խոց իմն 'ի վեր երևեալ յարգանդ նոցին: Կանայք ըմբռնեալք յախտէս յայսմանէ՝ հաստաբակօրէն լինին ամուլք, կամ անծինք, և ենթակայ վիժելոյ զսաղմն. և եթէ երկարաձգեալ մնայ ոք 'ի սոսկատեսիլ ախտս յայս, լինի գլխովին վիրալից կամ խոցոտեալ և պալարալից:

Արդ՝ այս ամենայն զարհուրելի նշանք զուգընթաց լինին ընդ ախտիս այսորիկ, քանիցս անգամ հնանայ և հաստատի. վասն որոյ պարտ է ախտակրին իսկ և իսկ 'ի կասկածելն թէ թիւնն ներգործեալ է ցէ յարիւնն, կանոնաւորել զինքն և բարեկարգել. ոչ է մարթ նմա պարտիլ 'ի գործս տաժանաւորս, և աշխատալիս. ապա թէ ոչ՝ կարի ևս սաստկանայ և զայրանայ: Ախտս այս լինի դժուարաւ փարատելի, յորժամ հնանայ և անցանէ 'ի փորոտիսն, և ևս

յոյժ երկիւղալի 'ի մանկունս և 'ի ծերս։ Նոյնպէս եթէ ընդ ախտիս զուգընթաց լինին և ախտն սքօռպուրթօ, և խոյլք կամ խոզք, կոչեցեալ յիտալացւոց ոքուօֆօլէ, յայնժամ ախտն լինի կարի դժուարաբուժելի և վտանգաւոր։ Կանոյք կարեն դիւրանալ՝ ցորքան յարատև մնայ արիւնն տեռատեսական. իսկ եթէ դադարիցի, յայնժամ կրեն վիշտս անհնարինս. և ախտն բազում անգամ գնայ 'ի ջրգողութիւն կամ 'ի վտտակրութիւն։

Զ

'Ի վերայ դարմանապրութեան, և դեղերէից այսորիկ ախտի։

Սեպհական դեղն՝ զոր սովորաբար առ 'ի բուժումն ախտիս 'ի վար արկանեն բժիշկք ընդ բոլոր եւրոպիս, է անգիկն միայն, պատրաստեալ ըստ հետագայ եղանակին և կերպին։ Երբեմն համարէին նոր անհնարին և անկարելի զբուժումն այսր ախտի գաղղիականի հնացելոյ, և հաստատելոյ՝ առանց 'ի գործ արկանելոյ զայլ դարմանս լուծիչս լորձանաց։ Բայց 'ի ժամանակի մերում հասարակ գործածութիւնքն փորձեալ է, զի անգիկն է յոյժ օգտաւէտ, աղգու, և ներգործիչ դեղ 'ի փարատել, և յարմատաքի խլել զթոյնս ախտիս, եթէ 'ի վար արկանիցի ըստ հարկաւորապէս պահանջեալ եղանակին։ Յայլ և յայլ դարս՝ այլ և այլ բժիշկք արկանէին 'ի գործ զայլ և այլ կերպս, և եղանակս 'ի պատրաստել զանդիկն. բայց յաջորդութիւնքն ժամանակաց քաջայայտ ծանուցաւ, եթէ առաւել պարզագոյն, ճահողագոյն, և դիւրին կերպն պատրաստելոյ զանդիկն՝ եղև յոյժ օգտաբեր և շահեկան, քան զմանրազանին քիմիական կերպն պատրաստելոյ զնոյն։ Քանզի հատագեղքն, և օծանելիքն պատրաստեալք կենդանի անդկաւ կամ ճարպով, կամ ռէտնիւ, ևն, բուժեն առանց կարծեաց զառաւել դժնդակ կերպն դաղղիական ախտի, միայն թէ յարատև 'ի գործ արկանիցի ընդ բաւական ժամանակ, և կազմուածքն չլինիցին անընդունակ ապաքինութիւնք վասն իրիք պատճառի։

Յորժամ՝ ախտն լինի նորագոյն, մարթ է բուժել զայն գործածութիւնքն միոյ և եթէ եղանակի. բայց մի-

ոյն՝ օրէն է քաջ ընտրութեն առնել, և կանոնաւորել զախտակերն, նկատեալ 'ի ծանրութեն նշանացն ախտին, 'ի խառնուածս, և 'ի կազմուածս ախտակրին, և 'ի ներգործութենն անդկաւ պատրաստեալ դեղորէից, զորս մարթ է 'ի գործ արկանել: Սնդիկն անլուծանելի, և կամ հատագեղքն անդկաւ պատրաստեալք, և 'ի գործ արկեալք 'ի ներքուստ, և օծանելիքն նմանապէս անդկաւ պատրաստեալք կարեն ապաքէն բուժել, և բուժեն իսկ ներգործութիւն զառաւել հնացեալ և արմատացեալ ախտն: Բայց որովհետև ոչ կարեն միշտ և հանապազ պատճառել զայսպիսի բուժումն, վասն որոյ կարևոր համարիմ յառաջիկայդ որոշաբար և ուրոյն ուրոյն ծանուցանել զպարագայսն, յորս արժան և պարտ է 'ի վար արկանել զայսպիսի դեղորայս:

Ի

'Ի վերայ գլխաւոր փրամագրութեանց և հերպիոց, որով մարմն է դարման պանիլ գաղղիական ախտին, և 'ի վերայ եղանակին՝ որով մարմն է և հարկ 'ի գործ արկանել զսնդիկն անլուծանելի, կամ զհատագեղս պապրաստեալս անդկաւ:

Ընդհանուագոյն 'ի մէջ ամենայն դեղորէից պատրաստելոց անդկաւ, են բիլլօլէ մէրքուրիալի տի բլէնք, և բիլլօլէ անթիսիֆիլիթիքէ տ' ալիպէռթ. որք ըստ վկայելոյ ամենայն հելլենակաց ունին զմասնաւոր իմն ներգործութիւն 'ի դիպուածս ախտիս քան զայլ ամենայն դեղորայս: Արդ՝ նախ քան 'ի կիր արկանելն զհատագեղքս զայսոսիկ, կամ զայլ հատագեղս անդկաւ պատրաստեալս, (զորոց տացուք զնուսխայս 'ի հատ. ՁԲ. 'ի տառն Բ. 'ի կարգի իւրեանց) պարտ է երակ հատանել, հայեցեալ 'ի հարկաւորութիւնս նշանաց, որք ցուցանեն զնոյն, և ևս 'ի գործ արկանել տէքոցիոնէ տի սալսաբարիլիա. զորմէ ունիմք խօսեալ 'ի հատ. ՁԲ. 'ի տառն Տ. 'ի կարգի իւրում: Նոյնպէս օրէն է ստէպ ստէպ բաղանիս առնել ջերմ ջրով, նկատեալ 'ի կարողութեն ախտակրին, ևն:

Եւ յետ պարսոցիկ կառավարութեց 'ի գործ արկանել զհատագեղս զայսոսիկ ըստ պահանջեալ հարկին ջրս հատ ընդ առաւօտն 'ի ծոմուստ, և ջրս հատ

ընդ երեկոյն, և առ սակաւ սակաւ պարտ է առաւելուլ զչափն մինչև ցհինգ կամ ցվեց հատս անընդմիջաբար յերեկոյն, և ընդ առաւօտն. իսկ յորժամ ընտերքն սկսանին այտնուլ, պարտ է յայնժամ միջահատել զգործածութիւնն նորին, և իսկ և իսկ տալ հիւանդին վեց կամ ութ հատագեղս մաքրողականս կամ լուծողականս անդկաւ պատրաստեալս, որ կոչի բիլլօլէ տի պէլլօսթէ: Զայս եթէ կամիս կաղմել, առ ունկի մի՝ զտեալ և պայծառ անդիկն, և կէս ունկի՝ քուէմօռ տի թառթառօ, ունկի մի՝ տիակուիտիոծօլֆիօռաթօ, և փոքր ինչ շիլօբբօ տի քաբէլ վէնէռէ. և զայսոսիկ հարեալ տրորեա 'ի միասին յապակեայ կամ 'ի մարմարիոնեայ անկանի՝ այնքան մինչև գլխովին անհետ լինիցին գնտակքն անդկի. և ապայաւէլ 'ի նա ունկի մի փոշեացուցեալ շիարաբբա, այլ և շիլօբբօ տի քաբէլ վէնէռէ՝ որչափ ինչ պէտք են վասն շինելոյ զհատագեղս զայս, որք մէն մի կշռիցեն չորս ցորեան, շրջապատեալ փոշուովն՝ որ կոչի փօլվէռէ տի լիգուուիցիա: Եւ զայս պարտ է առնուլ յուրթ կամ 'ի տասն աւուրս միանդամ, որք հասարակօրէն բաւական լինին 'ի նուազել զգրգռումն թքոց, և 'ի վայր սահեցուցանել զլորձունս: Բայց յայսոսիկ աւուրս պարտ է ախտակրին յամենայն աւուր ըմպել սկահակ մի դինւոյ տէքօցիօնէ տի սալսաբառիլլա, և կանոնաւորել զկերակուրս իւր ըստ կերպին, զորմէ յիշատակեցաք վերագոյնդ 'ի Ճառէն զախտէ հոսման:

Ը

'Ի վերայ կերպի արիանելոյ 'ի կիր զանլոյծ անդին 'ի միասին ընդ քաղաղիւ անդնի, որ ասի՝ սուպլիմաթօ քօռռօղիվօ:

Յորժամ հարկ 'ի վերայ լինի 'ի գործ արկանել զդեղորայս թուլացուցիչս և թափանցիկս, որ երբեմն կարի կարևորէ առ 'ի թուլացուցանել զուժգնութիւս մանրաթելից մարմնոյ, որք խոչ ընդ ախտն լինին, ևս՝ յորժամ դէպ լինին միանգամայն ցրուել և սպառել զախտարծարծ հիւթս և զշոգիս, որք արգելական լինին թիւնաւոր բնութիւն իւրեանց ապաքինելոյ գաղղիական խոցից և կեղոց հնացելոց, յայն

ժամ պարտ է զհապս անդկաւ պատրաստեալս, և զփաղաղէչ անդիկն 'ի գործ արկանել ըստ յետագայ եղանակին։ Զկնի կառավարելոյ զհիւանդն ըստ նախագրեալ կանոնաց, պարտ է սկիզբն առնել գործածութեան սուպլիմաթոյ քառոզիվոի, որ այն ինքն է անդիկն փաղաղէչ, յամենայնում աւուր զչափ քառորդ մասին ցորենոյ լուծեալ 'ի մի սկահակ գինւոյ տէքօցիոնէ տի սալաբարիլիա, և զայս չափ օրէն է յարատև մատուցանել ախտակրին մինչև ցութ աւուրս։ և յետ ութ աւուրց պարտ է տալ նմա կէս կշիռ ցորեան լուծեալ նոյնաչափ թիզանաիւ, մինչև ցայլ եւս ութ աւուրս։ և հուսկ յետոյ արժան է առաւելուլ մինչև ցմի կամ ցերկու կշիռ ցորեան, և յարատև առնուլ 'ի կիր զայս չափ՝ մինչև ցփարատիլ նշանացն։

Արդ յայսոսիկ աւուրս, յորս 'ի կիր արկանի վերոյիշեալ դեղն սուպլիմաթոյ քառոզիվոյ, պարտ է տալ միանգամայն ախտակրին վեց ցորեան բիլլօլէ մէռքուռիալի, այսինքն հապ անդկաւ պատրաստեալ, ակսեալ յեօթներորդում աւուր զկնի գործածութեան վերոյիշեալ սուպլիմաթոյ քառոզիվոին, և մարթ է առաւելուլ զչափս զայս մինչև ցեռ կշիռ ցորեան։ Եւ եւս օրէն է 'ի մէջ ութ աւուրց միանգամ լուծողականս տալ նմա քանի ինչ հապս լուծողականս անդկաւ պատրաստեալս, և յաւուրն՝ յորում տուեալ լինի լուծողականն, չէ՛ օրէն 'ի վար արկանել ոչ զսուպլիմաթոյ, և ոչ զմիւս անդկաւ պատրաստեալ հապն։ Իսկ որքան առ կառավարութեն կերակրոց 'ի մէջ այսոցիկ աւուրց, պարտ է վարել ըստ կանոնի, զորմէ յիշատակեցաք վերագոյնդ։ Եւ զկնի ԺԵ աւուրց փարատելոյ ամենայն նշանացն, պարտ է կրկնել քանի ինչ լուծողականս ըստ վերոյիշեալ եղանակի։

Թ

'Ի վերայ կերպի Ե լաֆու'ի գործ արկանելոյ զանլոյծ անդիկն 'ի մասին ընդ գրեթէ, որ ասի՝ փլիորէսի անրիվէնէռէի։

Լրթէ ստամոքսն և այլ պարագայք գիմակալ լինին ներգործութեն սուպլիմաթոյ քառոզիվոին, որ-

պէս պատահի բազում անգամ, յայնժամ պարտ է միանգամայն ընդ անգկաւ կազմեալ հապից 'ի գործ արկանել զվերոյիշեալ գրեխս, որք գոլով ևս միանգամայն պատրաստեալք անդկաւ, ունին մեծ համաձայնութիւն ընդ սուպլիմաթօ քօռռօզիվօի։ Արդ՝ պարտ է առնուլ 'ի կիր զդրեխս կոչեցեալս անթիվէնէռէի ըստ յեռադայ կերպի։ Դախ սկսանիլ ըզգործածութեն հապից ըստ վերոցուցեալ կերպի, և յետ այնորիկ 'ի վար արկանել յաւուրն երկու անգամ զնոյն վերոյիշեալ գրեխս, և պարտ է կրկնել զայնս յամենայնում աւուր մինչև ցլ5 աւուրս զկնի դադարելոյ գլխովին ամենայն նշանաց։ Եւ յայսոսիկ միջոցս՝ յորում 'ի գործ արկանին գրեխքս, պարտ է տալ ախտակրին 'ի վեց ցորենոյ մինչև ցլ2 ցորեան հապս անդկաւ պատրաստեալս յերեկոյն, և ընդ առաւօտն։ Եւ ևս՝ տալ հատագեղս լուծողականս անդկաւ պատրաստեալս մինչև ցութ աւուրս, որ պէս ասացաք վերագոյնդ։

Բայց պարտ է գիտել, զի պատահի բազում անգամ եթէ ախտս այս 'ի հնանալն և յարմատանալն՝ դժուարաւ ապաքինի գործածութեամբ բազմակերպ անդկաւ պատրաստեալ դեղորէից. բայց և երբեմն փուքթապէս բուժի անդէն 'ի գործ արկանելն զայլ ինն տեսակ դեղորէից անդկաւ պատրաստելոց, որովհետև իւրաքանչիւր տեսակ ունի զայլ և այլ հանգամանս նկատմամբ էնթակայից. վասն որոյ յոմանս դիպուածս պարտ է փորձել զմին զկնի միւսոյ, չափաւորապէս կանոնաւորելով ըստ պահանջելոյ հարկին. ապա թէ ոչ՝ յաճախութենն այսպիսի բազմակերպ դեղորէից կարէ երբեմն վնասակար լինել։ Բայց եթէ 'ի գործ ածել անդ զվերոյիշեալ բազմակերպ տեսակս անդկաւ պատրաստեալ դեղորէից, չէրևի նշան ինչ նուազելոյ ախտին, յայնժամ պարտ է ձեռնամուխ լինել 'ի գործածութեն իրիք օծանելեաց։ Արդ՝ յառաջիկայդ խօսեսցուք զեղանակէ 'ի գործ արկանելոյ զօծանելիս առանձինն, կամ խառնեալ ընդ այլ անդկաւ պատրաստեալ դեղորէից։

Ժ

Ի ՀԵՐԱՅ ՀԵՐԱՊԻ Ի ԳՈՐԾ ԱՐԿԱՆԵԼՈՅ ՊՆԴԻԿՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՍ ՕԺԱՆԵԼԷԱՑ :

Յորժամ թիւնն վավաշ ախտին լինի նորոգ, ընդ մէջ մորթոյ մարմնոյն միայն, և ընդ մէջ մսանցայ զեռեղեալ, ուստի և ոչ պատճառէ ի ներքուստ ըզբորբոքումն ինչ սաստիկ, յայնժամ ի գործ արկանելն զանդկաւ պատրաստեալ օծանելին (որ կոչի յէտալացւոց՝ ունկուէնթօ մէդքուռիալէ, զորոյ տացուք զնուսխայն ի հատ. ք. ի տառն Ո, ի կարգի իւրում.) խոհականութիւնք և զգուշութիւնք՝ լինի օգտաւէտ և շահաբար. որովհետև անդիկն մուծեալ ի մորթն, ի մսանս և ի մանրաթելս մարմնոյն, այսու ճանապարհաւ պատճառէ զներգործութիւն ինչ պատրաստական, և բնականապէս դիմամարտ առ միազմս, այսինքն յապականութիւն տուփական : Բայց նկատել արժան է՝ զի յորժամ օծանելիքն ի գործ արկանին, պարտ է մորթոյն լինել կակղագոյն և թուլագոյն, և ևս պարտ է չգտանել ինչ հոտումն անմանքուր. ապա թէ ոչ՝ լինի մեծապէս վնասակար քան թէ օգտակար :

Ապրդ՝ յորժամ ի պարագայիցն քաջայայտ ճանաչեմք, եթէ օգտաւէտ լինի գործածութիւնն օծանելեաց, յայնժամ պարտ է նախ երակ հատանել ըստ ցուցանելոյ նշանաց. և յետ այնորիկ բաղանիս առնել ջերմ ջրով յաւուրն երկու անգամ՝ յերեկոյն և ընդ առաւօտն, և տալ նմա քանի ինչ լուծողականս, ըստ վերոյիշեալ եղանակի : Եւ յետ այսոցիկ ամենայնի մարթ է ի գործ արկանել ախտակրին նախ՝ երկու տրամ օծանելիս անդկաւ պատրաստեալ, և յարատևել պարտ է ըստ այսմ օրինակի յերկու աւուր միանգամ օծանելով. բայց յառաջին անգամն սկսանել պիտոյ է յօծանելոյ զգարշապարս կամ զներբանս միոյ ոտին, յերկրորդ անգամն զգարշապարս միւսոյ ոտին, յերրորդ անգամն զմի սրունս, և ի չորրորդ անգամն զմիւս սրունս, իսկ ի հինգերորդումն՝ զծունկրս ևն. և այսպէս սատիճան քան զսատիճան մարթի հասանիլ յօծանել զաղդերս, զմէջս, զքամակս, և զուսս :

Եթէ զկնի օծանելոյ զայս ամենայն մնասունս՝ յա-
ղագաւ ապէս ախտակիրն մնասցէ տակաւին միօրինակ
անբուժելի՝ ի ցաւոց իւրոց, յայնժամ պարտ է վերա-
տին սկսանել զօծումն՝ ի նոյն վերոյիշեալ անդամս,
միանգամայն՝ ի կուրծս և յորովայնն։ Բայց յորժամ
նշանքն Թէպէտ և նորագոյնք՝ լինին յոյժ սաստիկ և
ծանրագոյն, յայնժամ պարտ է առաւելուլ զչափն
օծանելեաց մինչև 34 արամ։ Իսկ եթէ բերանն կամ
ընտերքն սկսանին բորբոքիլ, և լորձունքն գրգռիլ,
յայնժամ օրէն է փուլթով միջահատել զօծանելիս,
և պատրաստել զլուծողականն, և յետ այնորիկ
կրկին՝ ի վար արկանել զօծանելիսն ըստ վերոցու-
ցեալ կերպի։

ԺԱ

՝Ի ՔԵՐԱՅ ԿԵՐՊԻ Ի ՀԱՓՈՒ՝ Ի ԳՈՐԾ ԱՐԿԱՆԵԼՈՅ ԶՄԵՌՔՈՒՌԻՈ
ՍՈՒՊԼԻՄԱԹՈ ՔՈՌՈՉԻՎՈ։

Ա՛ռ մի կշիռ ցորեան՝ մեռքուռիո սուպլիմաթո
քոռոչիվո, և երկու ունկի՝ աքուավիթէ տի ֆուան-
չիա։ Լուծեա զսուպլիմաթոն՝ ի մէջ այսքան ցքոյ,
կամ սբիռիթո տի ֆուումէնթոյ, և՝ ի գործ արկ
զայն միով հասարակ գրգաչիս, կամ կէս ունկի՝ եր-
կու անդամ յաւուրն։ Ա՛յլ նուսխայ՝ ի կաղմել
զնոյն դեղ։ Ա՛ռ վեց կշիռ ցորեան սուպլիմաթո քոռ-
ոչիվո, և կէս ունկի՝ սբիռիթո տի վինո, և զերկո-
սին եդեալ՝ ի մէջ ապակեայ կամ մարմարիոնեայ
անկանի հարեալ լուծեա, յաւելլով՝ ի նոյն և զմի և
կէս լիտր ջուր ջինջ, և պարզ. և տուր ըմպել հի-
ւանդին երկու անդամ յաւուրն, ըստ չափու միոյ
գրգաչի սեղանոյ, և յարատեւել պարտ է յայս մինչև
գլխովին փարատիլ նշանացն՝ ի ներքուստ։ Իսկ եթէ
ստամոքսն չկարէ տանիլ զդեղորայս զայս պատրաս-
տեալ ըստ այսմ եղանակի, յայնժամ մարթ է պատ-
րաստել ըստ յետագայ եղանակի, որ առաւել ախոր-
ժելի է, և կարի շահաւէտ։ Ա՛ռ մի և կէս արամ՝
սոլէ ամմոնիաքո, և կէս ունկի՝ ջուր ջինջ, լուծեա
՝ի մարմարիոնեայ անկանի, յաւելլով՝ ի նոյն և ըզ-
կէս արամ՝ սուպլիմաթո քոռոչիվո, և զայնչափ
մէջն կամ փորն հացի՝ որչափ պէտք եցեն առ կազ-
մելոյ ըստ կանոնաց արհեստին զզանգուածս զայս,

արարեալ հապա 288 թուով։ 'Ի հապից կամ 'ի հաստատդեղոց ասի մէն մի առցի ընդ առաւօտս, և մէն մի ընդ երեկս։ և զայս չափ պարտ է յարատև մատուցանել հիւանդին մինչև ցվեց օր, և զկնի վեց աւուր պարտ է տալ նմա երկու ընդ առաւօտն, և այլ երկու ընդ երեկս։ և յետ երկուց կամ երից աւուրց պարտ է առաւելուլ մինչև ցութ հատ յաւուրն, և յարատև 'ի կիր արկանել զայս չափ մինչև ցբուժիլ նշանացն։

Բայց գիտելի է, զի զդեղս զայս պատրաստել եթէ ըստ եղանակի ըմպելւոյ, և եթէ ըստ եղանակի հապի, չէ օրէն բնաւ 'ի սկզբան անդ 'ի վար արկանել, բայց եթէ սակաւաչափ քանակութիւն, զորօրինակ զքառորդ մասն միոյ ցորենոյ միանգամ եւեթ յաւուրն։ և չէ մարթ առաւելուլ զչափ այսր սուպլիմսթօի, բայց եթէ տակաւ տակաւ, յորժամ տեսանեմք՝ եթէ մարմինն ոչ զգայ բնաւ զխռովութիւն ինչ կամ զնեղութիւն, և օր քան զօր յառաջադէմ նկրտի 'ի լաւագոյն ևս վիճակ։ վերջապէս մարթ է առ սակաւ սակաւ յառաջանալ 'ի քառորդ մասնէ ցորենոյ մինչև ցմի կամ ցերկու ցորեան յամենայնում աւուր։ Իսկ առաւելն ևս քան զայս չափ՝ արգելեալ է գլխովին։ քանզի այս չափս փորձիւ բաւական համարի վասն ամենեցուն, իսկ առաւել շատն՝ վնասակար լինի բազմաց։

Ամենք 'ի բժշկաց ուրանան վնասակարութիւն և զզջութիւն սուպլիմսթօ քառոզնիվօի 'ի դիպուածս գաղջական ախտի։ բայց փորձիւ հաստատեալ է՝ զի քանիցս անգամ խոհեմապէս 'ի կիր արկանի դեղս այս, միշտ լինի օգտակար և առողջարար։ բաց յոմանց դիպուածոց՝ յորս եթէ 'ի վար արկանի, գէթ լինի անպիտան և անօգուտ։ որպիսի է քաղցկեղն, բորբոքումն, իսկանքն խուլական, ուռոյցքն ևն։ Նոյնպէս ոչ է օրէն 'ի կիր արկանել զդեղս զայս 'ի դիպուածս, յորում տեսանեմք՝ զի հիւանդն ունի յօժարութիւն ինչ 'ի փսխել, կամ ունի ստամոքս ինն յոյժ տկարակաղմ, և կամ ունի զայլ ինչ և ինչ ախտս զոյդ ընդ գաղջականին։ Գիտելի է ևս, զի 'ի դիպուածս յայս կարի կարևոր է բաղանիս առնելն ջրոքն սալսաբարիլիաի, լէնո կուսեաքօի և սասսոֆռասսօի ևն, որ կոչի յիտալացւոց՝ պանեի անթիվէնէռէի։

ԺԲ

Խրատ ընդհանուրք 'ի վերայ կառավարութեան ախտին գաղղիականի։

Այսպէս քան 'ի գործ արկանել զանդիկն՝ որպիսի և իցէ կերպիւ, պարտ է միշտ փոյթ մեծ ունել, և զգուշանալ 'ի պնդացուցանել և 'ի կազդուրել զախտակիրն։ Այնպէս բնաւ ոչ է օրէն, և է գլխովին վտանգաւոր 'ի գործ արկանելն զնոյն 'ի դիպուածս՝ յորում ոք ըմբռնեալ լինի իւիք ախտիւ, որպիսի են ֆէպպրէ փուլթուիտա, կշտացաւութի, տկարութի կրծոց և փորոտեաց, և ախտք կրծոց, և ևս ջրգողութի, խուլական ուռոյցք ևն։ Եթէ կրօղ ոք ախտիս գտանիցի 'ի տկարագոյն իմիք վիճակի պատճառելոյ կամ 'ի հիւանդութէ, ինչ կամ յաշխատանաց, կամ 'ի ժուժկալութէ որկորոյ, կամ յայլ ինչ ստոյին նման պատճառէ, յայնժամ պարտ է յապաղել զգործածութին անդկի, մինչև 'ի ձեռն սնուցողական կերակրոց, և հանգստեան առ ժամանակ մի զօրացի ախտակիրն, և կարողանայցէ 'ի տանիլ այնմ։ և այս հարկաւորապէս պահանջի։

Դարձեալ, պարտ է մեծապէս զգոյշ լինել, և մի բնաւ 'ի գործ արկանել զանդիկ՝ կանանց 'ի ժամանակի դաշտանի, կամ 'ի ժամանակի յորում կրելոց են զնոյն, և ևս 'ի վերջին ամիսն յղութէ նոցին։ Բայց եթէ զկնի յղութէ կնոջն անցեալ իցէ միայն քանի ինչ ամիս, յայնժամ ըստ պահանջելոյ պարագայիցն մարթ է առնուլ 'ի կիր զանդիկն, բայց յոյժ սակաւ քանակութիւ, և առաւել երկարագոյն միջահատութիւ։ 'ի ձեռն այսոցիկ զգուշութեց բազում անգամ ապաքինի կինն, և ևս երախայն, զոր կրէ յարգանդի։ Իսկ եթէ ևս ոչ ապաքինի ախտն գլխովին, գէթ ոճնապարեալ արգելանի, և ոչ ևս արմատանայ և մեծանայ՝ մինչև 'ի ծնանիլ կնոջ։ Իսկ զկնի ծնանելոյն, և տատանելոյն զբաւական զօրութի և կարողութի, մարթ է գարման տանիլ նմա 'ի վար արկանելով զապահովագոյն ինն կերպ անդկաւ պատրաստեալ գեղոցէից, որ բաւական լինիցի հաւանականապէս առ 'ի բուժել զկինն և զերախայն, զոր գիւեցուցանէ։ Պատմէ աքիպէրթ հեղինակն, եթէ կին ոմն 'ի հին

գերորդում ամիսն յղութիւն իւրոյ ապաքինեցաւ կա-
տարեալապէս յախտէ ասսի, 'ի գործ արկանելով մի-
այն զդրեխան, որ ասի՝ քլինթէռի անթիվէնէռէի, զոր-
մէ խօսեցաք արդէն վերագոյնդ։

Իսկ որքան առ մանկունս և ողայս, գիտելի է,
եթէ չէ՞ բնաւ օրէն 'ի գործ արկանել առ նոսա
զսնդիկն, որովհետև կազմուածքն նոցին է յոյժ փա-
փուկ և քնքուշ, և ոչ կարեն տանել զայնմ։ նոյնպէս
իմն և վասն ծերոց ըմբռնելոց յայսմ ախտէ։ Դար-
ձեալ, պարտ է մեծաւ զգուշութիւն 'ի կիր արկանել
զսնդիկն առ այնոսիկ, որք են ամուլք և սեամաղ-
ձոտք, և եւ՝ որք ունին զախտս փորհարութիւն և ա-
րիւնռուշտ որովայնալուծութիւն, են։ Ժամանակն ա-
ռաւել ճնհոդագոյն և պատշաճողական է գարունն
և աշունն, յորս եղանակն լինի բարեխառն և չափա-
ւոր ջերմ։ Բայց 'ի պահանջել հարկին մարթ է 'ի
գործ արկանել արտաքոյ այսոցիկ ժամանակաց եւ։
այլ յայնժամ պարտ է մեծապէս փոյթ ունել 'ի
պահպանել զախտակիրն ջերմ կամ գաղջ ըստ պա-
հանջելոյ եղանակին։ Իսկ որքան առ կառավարու-
թիւն՝ որ պահանջի յախտակիրն նախ քան զգործա-
ծութիւն սնդկի, ասացաք վերագոյնդ, եթէ պարտ
է լուծողականս պատրաստել, երակ հատանել, են։

Բայց ասատանօր յաւելումք 'ի վերայ ասել, եթէ
պարտ է կրկնել զայսոսիկ դեղորայս նկատեալ 'ի
չափն հասակի, 'ի կարողութիւն, և 'ի խառնուածն
ախտակրին ըստ ցուցանելոյ խոհականութիւն։ Հուսկ
յետոյ գիտել արժան է, զի թէպէտ յոյժ դժուա-
րին և իբր անհնարին իմն է բացարձակապէս և յայտ-
նապէս ճանաչել զբուն զաստիճանն թիւնաւորութի՝
որ զուգընթաց լինի ը ախտիս, բայց 'ի վերայ այսր
ամենայնի յոյժ ապահովագոյն է միշտ հանապազոր-
դել զդեղորայս ընդ երկար ժամանակս, և բնաւ չէ՞
օրէն զանց առնել կարի փութով։ և այսպէս հա-
ւասատեաւ մարթ է ապաքինել և բուժել զորպիսի և
ինչ կերպ գաղղիական ախտ։ Քանզի ըստ վկայե-
լոյ ամենայն հեղինակաց ուսումնականաց՝ չէ՞ բնաւ
վտանգաւոր, և է միշտ փարատելի, միայն թէ հի-
ւանդն վարեսցի ըստ խորհրդոյ բժշկին, և զգուշա-
նայցէ 'ի վերստին ախտանալոյ իւրով անժոյժ մոլու-
թեամբն։ ապա թէ ոչ՝ զի՞նչ շահ 'ի դեղոց կամ 'ի
բժշկաց, յորժամ ախտակիրն լինի դահիճ ոնձինն։

ԺԴ

Կամեցեալ դուշնաբանել և յաղագս բորբոքման ամորձեացն 'ի դիպուածս՝ որ պատճառի յախտէն կոչեցելոյ՝ միազմա վէնէռէօ, այսինքն ապականութիւն վավաշոտական, Դիտելի է, զի ուռոյցն ամորձեաց յառաջ գայ 'ի ժահրալից հոսմանէ, նաև 'ի հիւթոց ապականելոց՝ որք 'ի միզանց խողովակաց 'ի յամորձիս լճանան, և պատճառեն զցաւս սաստիկ. զի և 'ի դիպուածս ախտին ժահրալից հոսման, որ ասի՝ պլէնօռռաճիա վէնէռէա, կամ լէուքօռռէա վէնէռէա, պատահի երբեմն յառաջին և յերկրորդ աստիճանի ուռոյցն ամորձեաց, մանաւանդ յորժամ հոսումն հիւթոց լինի արգելեալ կարի փութապէս, կամ պատճառաւ ցրտառութեան, կամ սակս ըմպելոյ զոգիաւոր ինչ հեղանիւթս, և կամ վասն առնելոյ կարի սաստիկ և զօրաւոր լուծողականս ևն, կամ վասն գործելոյ զշարժումն ինչ աշխատալից և տարժանաւոր. և վերջապէս սակս 'ի գործ արկանելոյ սովորաբար որպիսի և ինչ դժնդակ և զայրացուցիչ դեղորայս։ Դարձեալ, մարթ է երբեմն և սպատահիլ բորբոքումն, և ուռոյց ամորձեաց՝ առանց բնաւ ընթացակից լինելոյ վերոյասացեալ թունից։ Հարուածք, հարատահարումն, ուժգնութիւնք, և բռնութիւնք կարեն պատճառել զնոյնս. և երբեմն զոյգ գտանին ընդ այսոցիկ պատճառաց փսխումն, ցնցումն մկանանց, և այլ պատահարք ծանուցեալք, 'ի ձեռն որոց դիւրաւ ճանաչի և զանազանի։

Կատարութիւն ուռուցի, և բորբոքման ամորձեաց, յորժամ լինի պատճառեալ 'ի վավաշութենոյ։

'Ի դիպուածս ուռուցի և բորբոքման ամորձեաց, հարկաւորապէս պահանջի երակահատութիւն, զոր և պարտ է ստէպ ստէպ կրկնել ըստ պահանջելոյ հարկի նշանացն։ Կերակրոցն պարտ է լինել թեթև, և ըմպելեացն զովացուցիչ. և ախտակիրն պարտի հրաժարիլ 'ի մսոյ, 'ի դժուարամարսելի հանդերձանաց, 'ի գինւոյ, և յայնմ ամենայնէ, որք են բնութեամբ գրգռիչ և ջերմագին։ Ֆոմէնթի, նաև քաթաբլազմա որարեալք միջոցաւ հացի կամ աղերով բակլայի, և

կաթամբ, են յոյժ օգտակարք 'ի դիպուածս յայս։ Արդ՝ զքաթաբլազմայն օրէն է կրել 'ի վերայ ախտացեալ անդամոյն՝ ցորքան լինի ընկողմանեալ 'ի մահճի, և յորժամ յոտս կանգնի՝ պարտ է պահպանել զայն ջերմ. այլ 'ի դիպուած ախտիս յոյժ կարևոր և օգտակար է մնալ միշտ 'ի մահճի, և ոչ բնաւ ելանել՝ մինչև ուռոյցն, և բորբոքումն, և ցաւն լինիցին գլխովին փարատեալ։

Իսկ եթէ գործածութիւնք այսոցիկ զովացուցիչ և ցրուիչ իրաց ոչ յաջողեսցի փարատել զուռոյցն, պարտ է յայնժամ 'ի գործ արկանել զնախապրեալ դարմանն, այսինքն զծծումն սպեղանւոյն պատրաստեալ անդկաւ, որպէս խօսեցաք 'ի վեր անդր, յախտաւոր մասն առնելով զծծումն, եթէ ոչ տայցէ ինչ ցաւ. իսկ 'ի ցաւիլն՝ հարկ է օծմանն լինել 'ի վերայ ազդերն։ Եւ յայսմիկ դիպուածի պարտի ախտակիրն ըստ պահանջելոյ հարկին մնալ 'ի մահճի համբերութիւնք հինգ կամ վեց շաբաթս, և ըմպել առատօրէն տէքօցիօնէ տի սալսաբարիլիա, բայց զուռուցեալ անդամն ունել պնդեալ կապով խիք։

'Ի վերայ կառավարութեան, զոր պարտ է առնել 'ի դիպուածն, յորում ընդն վավաշական լինի փարատեալ, բայց մնայ ինչ կուսած տիպին՝ ասացեալ փաղդիեղ։

Արդ՝ յորժամ այսոքիկ դեղորայք լինին տկար և անբաւական 'ի բուժել զախտն, և լինի կասկած 'ի վերայ հասանելոյ քաղցկեղային ինչ ապականութեան, և ամենայնքն լինին կարծրացեալք և պնդացեալք, յայնժամ օրէն է օր ըստ օրէ տածել և ջեռուցանել զվշտացեալ մասունս, արարեալ տէքօցիօնէ տի ջիքութա, և քաթաբլազմա տի ջիքութա, և 'ի նոյն իսկ ժամանակի պարտ է 'ի ներքուստ տալ նմա էսթռաթթօ տի ջիքութա, զորոյ զկերպն 'ի կիր արկանելոյ՝ մարթիս լիով ուսանել 'ի գլ. լէ. եր. 362։ Դեղս կամ հապս այս հրատարակեալ է մասնաւորապէս 'ի ներհուն հեղինակաց 'ի դիպուածս քաղցկեղի, և ես ակնառաւս եղեալ վկայեմ և հաստատեմ, եթէ ապաքինեցաւ ոմն 'ի դիպուած ասացեալ քաղցկեղիս, զոր կրէր յերկուց կամ յերից ամաց հետէ։

'Ի վերայ կատավարութեան ուռուցի և Բորբոքման ամորձեացն 'ի դիպուածն՝ յորում ոչ է 'ի վավաշական ընտանոյ։

'Ի դիպուածս յայս՝ բաց 'ի յերակ հատանելոյ, բաց 'ի ցրուիչ և 'ի կակղացուցիչ թանձրաթանից, բաց 'ի պնդելոյ ամորձեացն, և յընկողմանեալ մնալոյ 'ի մահճի, որք հարկաւորապէս պահանջին, պարտ է միանգամայն 'ի գործ արկանել զգրեխս կակղացուցիչս, և երբեմն և զսպեղանիս հասուցանացուցիչս, եթէ ուռոյցն չիարատի գործածութիւն վերոյասացեալ դեղորէից։ Իսկ եթէ 'ի վչտացեալ անդամն երևի նշան ինչ քաղցկեղի, յայնժամ օրէն է 'ի վար արկանել զվերոյիշեալ կերպն չիքութիւն։ Բայց բորբոքումն ամորձեացն յորմէ պատճառէ իցէ յառաջ եկեալ, պատահի երբեմն՝ զի գործածութիւն դեղորէիցն վոխարկի 'ի խոց ինչ, կամ յախտս, որք զհետ գան, որպէս քաղցկեղ, ջրգողութիւն ամորձեաց, և ն։ Եւ այսպիսի դիպուածք միշտ են վտանգաւոր, և պէտս ունին մեծի զգուշութեան և հմտութեան. վասն որոյ և պարտ իսկ է իսկ և իսկ յերևիլ նշանացն՝ կոչել զփորձ, և զհմտագոյն ոմն բժիշկ, և վարիլ ըստ խորհրդոց նորա։

ԳԼՈՒԽ Խ.

'Ի վերայ ախտի սերմնակաթութեան, որ յիպալացոյց յայնի՝ կոչնոռեա։

Այս ախտ սերմնակաթութիւն՝ այլ է 'ի վավաշ հոսմանէ անտի, զորմէ լիով ճառեցաք 'ի նախընթաց գլուխդ։ Քանզի սա երբեմն ծագի և յառաջ գայ 'ի տկարութենէ ներքին ծննդական գործարանաց, կամ 'ի թուլութենէ անօթոց սերման, և զորութենէ ջղաց, և երբեմն և սա 'ի ժահրալից վավաշ հոսմանէ՝ որում ոչ

բարիոք խնամ տարեալ, կամ անդարման թողեալ, սովորաբար փոխարկի 'ի սերմնակաթուն: Զոյն պէս երբեմն պատճառի յայլ ինչ խոցէ, որ ծածկեալ կայ 'ի ման ինչ ծննդական անդամոց:

Զանազան սերմնակաթութիւն:

'Ի դիպուած այսր ախտի հասարակօրէն զուգընթաց լինի անսովոր տկարութիւն, պակասութիւն զօրութեաց ջղաց, և զգայութեաց, բոլորական զրկումն ախորժակի կերակրոց, տկարութիւն նեղբին ջերմուեաց, և կենսական ոգեաց, ճնշումն ստամոքսի, ատէպ ձգտումն, փքախտութիւն, ծանրութիւն և պտտումն գլխոյ, մլձումն կրծոց, պակասութիւն քնոյ, անկարգութիւն երևակայութեան, ցամաքութիւն լեզուի և որկրոյ, մոռացկոտութիւն, շառաչիւն ականջաց, ծանրատաղտուկ տքնութիւն, գիշերային ակամայ գիճութիւն, տժգունութիւն դիմաց, նուազութիւն տեսութեան, բաբախիւն սրտի, դողդոջիւն ձեռաց, թախծութիւն, մելամաղձութիւն, և հոսումն ոլովայնի: Եւ եթէ յերկարաձգեալ մնասցէ սերմնակաթութիւնն, յայնժամ այսոքիկ նշանք սաստկանալով սաստկանան, և օրքան զօր այլևայլ նշանս արտայայտեն, և հիւանդն յարաժամ զգայ զցաւ ինչ միջաց, ծոծրակի, գլխոյ, և փամփշտոյ: Զարկն լինի մանր և երագ, և քիրան յորդառատ: Զկնի այս ամենայն նշանաց առ սակաւ սակաւ 'ի վերայ դայ նեխութիւն ողին, կոչեցեալ յիտալացւոց թապէ տոռսալէ, և թոքթափումն հերաց, և այլ բազում սարսափելի արկածք կամ երևոյթք ջղային բնութեան: Եւ և բազում ախտակիրք, որք 'ի սոյն օրինակ վիճակի՝ կրեն զծանրատաղտուկ պնդութիւնս ոլովայնի, և յոլով նեղութեամբ արտաթորեն զկղկղանս պինդս, գնդակախիտս, և բազում անգամ այտուցաւ, ձգտմամբ և ցաւով թանչից, և երբեմն ընդ հակառակն տանջին սպառեցուցիչ և բազմատանջ թորմամբ ոլովայնի:

Ո՞վ աղցաւոր՝ ցաւոտ մարմին,
Լցէ՞ հընար՝ զախտից արմին,
զընեալ չափեալ՝ ըզմի առ մին.
Յոր ըմբռնիս՝ իբր 'ի վարմին:

'Ի վերայ կառավարութեան դեղերէից սերմանաւորութեան, յորժամ յառաջ գայ 'ի փարութիւն ծննդական գործարանաց, կամ 'ի ուռուցք անօրէն սերման, և զչրութիւն ջղաց։

'Ի դիպուածս յայս փոյթ ունել պարտ է 'ի զօրացուցանել և կազդուրել զոկարացեալ և զթուլացեալ անդամս, գործարանս և անօթս. վասն որոյ հարկ է ձեռնամուխ լինել 'ի դեղորայս զօրացուցիչս, և սեղմիչս, որպիսի են տէքօթթօ ոչ քինա քինա, զոր ուրեք ուրեք գրեցի, յաւելլով 'ի նոյն բաւականաչափ էմուլսիոնէ առապիքա, և ջուր կինամոնի. զոր պարտ է առնուլ երեք կամ չորս անդամ յաւուրն, ըստ չափու երկու ունկեաց։ Եւ լինած իսկ ոչ այլազգ յաջողեցաւ դարման տանիլ, բայց եթէ տալով զառաւել աղուականն 'ի դեղորէից աստի (որպիսի է էլիսիռէ տի հալլէռս, և երկիցս անդամ յաւուրն լուանալ տալով զբոլոր թիկունս, 'ի սկզբան զով ջրով, և հետ զհետէ միշտ առաւել ցուրտ ջրով՝ յոր եգեալ էր հեղուկս այս). ապա 'ի բարբոք յաջողել սոցին, կարգեսցի գործածութիւն թինթուռայի տի մառթէ բռէբառաթս քոլ սուկս տէի բոմի, կամ նրբագոյն խարտաճք նոյն իսկ երկաթոյ՝ յաւելեալ յոյն զկեղևն նարնջոյ. և ապա տացի հանքայինն և մառցիալէ ջուրն ոսիայի, որ բարեխառնեալ լիցէ կաթամբ՝ ըստ չափու չորից ունկեաց երիցս անդամ յաւուրն, կամ ևս առաւել։

Իսկ 'ի ժամանակի յորում հիւանդն ընդունի զայսոսիկ դեղորայս, արժան է 'ի գործ արկանել ըզցուրտ բաղանիք, յորմէ բազում անդամ զհետ դայ մեծագոյն օգուտ՝ քան յայլ ամենայն դեղորէից։ Ուրդ՝ հարկ է ախտակրին ամբողջապէս ընկողմանիլ 'ի ջուրն ցրտագոյն մինչև ցդլուխն յամենայն առաւօտու 'ի ծոմուսա՝ մինչև չորս կամ հինգ շաբաթս առանց միջահատուածի. բայց չէ պարտ մնալ 'ի մէջ ջրոյն յերկար ժամանակս, և զկնի ելանելոյ 'ի ջրոյն՝ իսկ և իսկ փոյթ ունել պարտ է 'ի սրբել և 'ի ցամաքեցուցանել զմարմինն։ Թէպէտև երբեմն մարթ է յայսմանէ ծագիլ մեծաս ինչ ակարագոյն փորոտեաց ախտակրին ևն, բայց նկատել արժան է 'ի արամադրութիւն կազմուածոց նորին, և 'ի չլինել այսպիսի վտանգի՝ արժան է 'ի գործ արկանել զնոյն ցուրտ

ջուրն։ Կերակրոցն պարտ է լինել արդանակն մեղ խաչափառի և կրայի, ըմպելիքն ռակաւ ինչ աղնիւ գինի ջրախառն ևն։

Ընդ այսոցիկ գիտել արժան է, զի 'ի դիպուածս յայս չէք ինչ առաւել պիտանի և օգտակար քան զժուժկալութի մերձաւորութե կամ զուդաւորութե։ քանզի բազում անգամ անժուժկալութին է պատճառ այսր ցաւոյ. ուստի բառնալով զպատճառն ժուժկալութիւ թուլանայ ախտն, և դիւրանայ ախտաժէտն։ Այլև պարտ է ախտակրին երթալ 'ի յաղարակս, և 'ի բնակութի ուր լինի օդն մաքուր և առողջարար, և շրջագայիլ անդ ըստ ախորժակի իւրում. բայց անձնապահ լինելով 'ի ցրտոյ և 'ի տօթոյ յընթացս այսպիսի շարժականուե ևն. և պարտ է 'ի զուարթութե և յանդորրու պահել զոգին, և հրաժարիլ յաղի և 'ի գժուարամարսելի կերակրեղինաց։

'Ի վերայ կոռավարութե և դարմանոյ սերմնակալութե՝ յորժամ պատճառեալ լինի 'ի խոցէ։

Արդ՝ եթէ գործածութիւ այս ամենայն հնարից և դեղորէից՝ ոչ դադարեսցի հոսումն սերմանն կամ հիւթոց, յայնժամ արժան է 'ի միտ առնուլ թէ յառաջ գայ ախտս 'ի խոցէ ինչ 'ի վեր երևելոյ 'ի ներքին մասն անդամոց. և յայսպիսի դիպուածս պարտ է 'ի վար արկանել զանդիկն կամ զայլ դեղորայս, որպիսի են սալսաբարիլիա, չինա, պարտանա մաճճիօրէ, սասսաֆրասսս, ևն։ Ակաւատես եղէ՝ զի 'ի դիպուածս ախտիս զկնի 'ի գործ արկանելոյ զայլ ամենայն դեղորայս ապաքինեցաւ ոմն կատարելապէս գործածութիւ իրիք դեղորէից անդկաւ պատրաստելոյ, զոր մարթ է պատրաստել յեռագայ եղանակաւ։ Առ կէս ունկի՝ թռէմենթինա տի վենեցիա եռացեալ մինչև ցբաւականապէս պնդանալն. և կէս տրամ՝ քալոմելանս, խառնեալ զանգեա յիրեարս բաւականաչափ շիռօքով, արա 60 հատադեղս, երեք առցին ընդ առաւօտս, և այլ երեք ընդ երեկս։ Արդ 'ի յարատևել անդ 'ի գործածութի այսորիկ հապի՝ եթէ բերանն սկսանի այտնուլ, և ընտերքն խոցոտիլ, և կուրծքն զայրանալ, յայնժամ օրէն է մինչ-

հատել զգործածութեն այսորիկ հատագեղոյ, մինչև ցփարատիլ այսոցիկ նշանաց։

Վերջին դեղն կամ նպաստն, զոր պարտ է 'ի վար արկանել 'ի դիպուածս խոցից անդամոցն, է քանտէլ լէթթա սուբբուռաթիվա, այսինքն պատրոյգ շարաւսցուցիչ, զոր մարթ է պատրաստել բազմազան եղանակաւ, վասն որոյ և ոչ կամիմ առատաւոր խօսիլ ըզկերպէ պատրաստելոյ զայն։ քանզի իւրաքանչիւր վերասոյ ունի այլ և այլ եղանակ պատրաստելոյ զպատրոյգս զայս ըստ խոհեմական իւրումն դատողութեան։ բայց զայս միայն ասեմք, եթէ պարտ է նախ քան զմուծանելն զպատրոյգն յախտակիր անդամն՝ թաթախել զնոյն 'ի մէջ իւղոյ քաղցր նշոյ, որով լինի առաւել դիւրապատրաստ և շուտափոյթ 'ի ներգործել, և պարտ է թողուլ զայն մնալ 'ի ներքս վեց կամ ութ ժամն ըստ կարողութեան ախտակրին։ Այլև յաւելումք ասել, եթէ 'ի ձեռն այսր պատրուգի բուժին ոչ միայն խոցքն, այլև մսեղութիւնքն, որք գտանին յայն անդամն, և այն ամենայն, որք արգելական լինին ճանապարհին միզելոյ են։

'Ի վերայ հատաւարութեան և դեղրբէից սերմնահանութեան՝ յորժամ յատաջ գայ յայլ ինչ պատճառաց։

Պատքէն քաջայայտ երևի, զի ախտս այս կամ հիւթս՝ ոչ կարէ բացարձակապէս, և միշտ կախեալ լինել յիգական խառնից, և հասարակօրէն բազում անգամ ևս չունի զոյգ ընդ իւր ցաւ ինչ, և կիզումն, և հիւթն որ հոսի՝ լինի սպիտակ և դոյզն ինչ թանձր։ Այլև երբեմն յառաջ գայ լոկ 'ի խառնուածոց՝ նկատմամբ նոցա, որք են ամուրիք և այրիք, թող զայնոսիկ որք յանառակութէ որկորոյ և 'ի զաղիր խորհրդոց անկղեանան յայս ախտ, և 'ի դիպուածս յայս ոչ ախտն է երկնչելի, այլ անկարգութեն։ Բայց եթէ պատճառի 'ի նեխութենէ ինչ պատահելոյ 'ի սերմնարանին, որ բազում անգամ դէպ լինի 'ի բարձրաձայն կարկաչողս, և 'ի ցասմնոտս, յայնժամ է կարի վտանգաւոր։ որովհետև 'ի յամենալն և յերկարագիլն, մարթի փոխարկիլ 'ի վատակրութի և 'ի վհատութի։ նմին իրի պարտ է 'ի գործ արկանել զդեղրայս աղդուս և զօրաւորս, զորոց խօսեցաք վերագոյնդ։

ԳԼՈՒԽ ԽԱ.

'Ի ՎԵՐԱՅ ՎԵՐՈՅ, ՈՐ ՅԻՊԱԼՈՅՈՅ ԿՈՒԻ՝ ՈՒԼԷՌԷ։

Զամենայն վէրս և զամենայն խոցս, յորոց հոսի նիւթ ինչ, և 'ի վեր երևի 'ի կակղագոյն մասունս մարմնոյ, անուանեն անուամբս՝ ուլչէռէ։ Վէրքս այս ոչ միայն 'ի խոցոտմանէ, 'ի հարկանելոյ, 'ի հարուածոյ ևն, այլ միանգամայն յապականեալ հիւթոց մարմնոյ, և 'ի խառնուածոց, և յայս դիպուած փոյթ ունել պարտ է իսկ և իսկ տանիլ դարման. ապա թէ ոչ՝ բազում անգամ մահակործան լինի տառապեալ վիրակիրն։ Ենթակայ այսր վիրի են ծերունիք, և նոքա որք անշարժական կեանս վարեն, և որք սնուցանեն զանձինս իւրեանց պարարտագոյն կերակրովք։ Վէրս այս կոչեցեալ իտալ. ուլչէռէ՝ տարբերի 'ի վերոց, որ ասի բիակայ, ըստ որում հոսէ բազմագոյն հիւթս, երբեմն մաքուր, և շճկային, երբեմն խժային, և մածուցիկ, և երբեմն և տոիպ և կծու. 'ի նշան բորբոքման մորթոյ, ծագն 'ի վերուստ է կարծրագոյն, իսկ 'ի ստորուստ կարակնաձև, և ուղղաձիգ։

'Ի ՎԵՐԱՅ ԴԱՐՄԱՆՈՅ ՎԻՐԻՆ ՈՒԼԷՌԷ։

Մեծի գիտութեան և հմտութեան պէտք են առ 'ի զանազանել 'ի դիպուածս վիրիս, թէ երբ լինի առողջանալի, և երբ ոչ. հասարակօրէն ամենայն վէրք որք պատճառին յապականեալ խառնուածոց, պահելի են բացեալ դէթ այնքան, մինչև առ սակաւ սակաւ դարման տարցի խառնուածոցն 'ի ձեռն կառավարութեամբ կերակրոց, և դեղորէից։ Իսկ վէրքն, որք ղհետ գան անընդհատ տենդից, կամ այլ ինչ հիւանդութեաց՝ անշուշտ են տապաքինելի յետ առ ժամանակ մի հանդատեան վիրակրին, որովհետև չէ պարտ փութով ձեռնամուխ լինել 'ի դարմանել զայնս. այլ

նախ պարտ է 'ի ձեռն լուծողականաց և մաքրողականաց, և պատշաճագոյն կառավարութեցն պատրաստել զնա յառողջութի. իսկ վերքն, որք պատճառին 'ի հարուածոց և 'ի խոցոտմանէ, եթէ ենթակայն իցէ քաջառողջ կազմուածոց վիճակեալ, հաստատակօրէն է բուժելի. յորժամ վերքն զուգակից լինին երկարատև ախտից, ոչ կարեն բուժիլ՝ բայց եթէ մեծաւ զգուշութբ:

'Ի վերայ Ներտին Նպասպից՝ որ է Հարի Հարնոր 'ի դեպոուածս վերի:

Առաւել պատշաճողական կառավարութիւն՝ որով մարթ իցէ օգնական լինել ապաքինութիւն վերի, է արգելումն ամենակերպ կծու, տաքիպ, թթու, և աղի կերակրոց, և ուժգին ոգիաւոր ըմպելեաց: Նոյնպէս և օգտակարագոյն է՝ կարի սակաւ, կամ բնաւ իսկ ոչ ուտել զմսեղէնս: Պարտ է վերակրին միշտ լոյծ և բարեխառն ունել զորովայնն 'ի ձեռն զովացուցիչ և կակղացուցիչ ուտելեաց, որպիսի են խոտեղէնքն, կաթն, կոգի, շինուկն կաթին և ն: Նոյնպէս և օդաւաւէտ է լինելն միշտ ուրախ, և զուարթ, և առնելն շարժումն ըստ տանելոյ կարողութեց:

Իսկ եթէ վերքն ելանեն 'ի վերայ սրունից, (որպէս պատահի բազում անգամ) յայնժամ պարտ է միշտ շարժումն առնել, և չէ օրէն բնաւ նստիլ անշարժ. ապա թէ ոչ՝ դառնայ վերն իբր անբուժելի: Դարձեալ, քաջ վերաբոյժք խրատեն 'ի դիպուածս յայս 'ի գործ արկանել սուպլիմատթօ քոռոզիվօ լուծեալ յօղի, և վկայեն եթէ բազում անգամ ակնատես լեալ են շահաւէտութիւն այսր դեղոյ, եթէ արկցի 'ի կիր ըստ կանոնի և ըստ կերպի, զորմէ լիով խօսեցաք 'ի գլ. լթ: Նոյնպէս և խրատեն առնուլ 'ի կիր տէքօթթօ տի սաշսաբառիլիա ն:

'Ի վերայ արդաւէն Նպասպից և դարմանոց 'ի դեպուածս վերոյ:

Յորժամ վերքն լինին նորոգ, կամ պատահին 'ի խոցէ ինչ հնացելոյ, և յանկարգ խնամ ստանելոյ, յայնժամ շատ է լուանալ զայն և մաքրել ջրոտն սամպուքօի, և պարտ է առնուլ 'ի կիր զպալասամօ տի

ՃԷՆԷՎԼԷՎԷ, զոր օրէն է մածուցանել 'ի վերայ քըրքաճ քաթանի, և դնել 'ի վերայ վերին. և յաւուրն երկու անգամ փոխել։ Յորժամ ծայր վերին 'ի վերուստ կամ 'ի ստորուստ կողմանէ երևի լինել կարծրագոյն, և մնամոլեալ, յայնժամ պարտ է երկու անգամ յաւուրն ցանել փոքր ինչ բռէչիբիթաթօ ռօսսօ 'ի վերայ վերաց, առ 'ի ծախել զաւելորդ մասունս մնամոլաց, և յետ այնորիկ դարմանել սպէղանեաւս՝ որ ասի պազիլիքօ Ճիալլօ. բաղում անգամ փորձիւ ծանուցեալ է գերապանց օգտաւէտութիւն ջերմ ջրոյ, և աքգուա վէՃէթօ մինէռալէի 'ի դիպուածս՝ յորում վէրքն լինին քաղցկեղային։ Զոյն պէս ըստ պատմելոյ հմտագոյն վիրաբուժի՝ 'ի դիպուածս յայս համարի դեղ ինն աղնիւ և օգտակար սուպլիմաթօ քօռռօզիվօ, լուծեալ 'ի մէջ օղւոյ, զոր պարտ է լուանալ կամ լաւ ևս օծանել երկու անգամ յաւուրն, և ըստ այսմ յարատևաբար 'ի կիր առնուլ պարտ է, մինչև հաւասարեսցին վէրքն, և առողջասցին։ Յորժամ վէրքն ածանցեալ լցեն 'ի տուփանն ախտէ, կամ 'ի քաղցկեղէ, ևն, յայնժամ օրէն է միշտ 'ի գործ արկանել զդեղորայս Ճահոզագոյնս այսոցիկ վիրաց. զորոց գրեցաք լիով 'ի տեղիս իւրեանց։

Ընդ վախՃանել՝ ցաւոց Ճառից,
  լցէ՞ թէ գոյր՝ վախՃան ախտից։
Բըժըշկաց ձեռք՝ մինչ 'ի մարմին.
  ոչ հասանեն՝ յանկիւթ հոգին.
Բայց սա ընդ նիւթն՝ եղեալ շաղկապ,
  ըստէպ վառէ՝ զախտիցըն տապ։
Եղուկ մարմինն՝ հեծէ ընդ նովաւ,
  բարւոյն փոխան՝ ում յուսացաւ.
Զոյն արձակէ՝ զայս բան աղերս.
  թէ ես 'ի բնուստ՝ ունիմ ինձ վէրս.
Է՞ր դու տնախտ՝ և զօրաւոր,
  ցաւոտ մարմնոյ՝ գոս զուգաւոր.
Քո՛ է խընուլ՝ զախտիցն աղբիւր,
  կըտրել զարմատսըն բազմաբիւր,
Ցառաքինի և յիմաստուն
  վառեալ 'ի պէտս՝ ըզմարմնոյդ տուն.
Թէ ոչ, բըժիշկ՝ և կամ բնութիւն
  ոչ յիս մաքրեն զախտիցըն թիւն։